Գիրքը լուսապատճենվել և համացանցում է տեղադրվել Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը ձեռնամուխ է եղել մի նախաձեռնության, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կտեղադրվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

«Գրքամոլ»-ը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com էլ. հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2016 © Grqamol. All Rights Reserved.

URL: *www.grqamol.am*, e-mail: *grqamol@gmail.com*

ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ

ՄԵՌԿԻՆ

ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ

ՀՄԱՅԱԾՈ ՀՈԳԻՆ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

«Սովետական գրող» հրատարակչություն Երևան

ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ԼԱԽԱԳՈՒՇԱԿԸ

«Սովետական գրող» հրատարակչություն Երևան 1978

И(Фр)
Ռ 65

Ռուսերենից թարգմանեց ԳԵՎՈՐԳ ՎԻՐԱՊՅԱՆԸ

Ռ $\frac{70304\ (213)}{705\ (01)}$ 77 190 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1978

Սի
Աստարհի
Վախճան

ՅՈԹԸ ԹԵԲԵԻ ԴԵՄ

Նրանք ստիպված եղան փակել պատշգամբի ապակյա դուռը։ Փողոցում հուզմունքը գնալով ծավալվում էր, ինչպես ծովի մակընթացությունը։ Երբեմն-երբեմն լսվում էին հանկարծական պոռթկումներ։ Ճիչեր, ծղրտոցներ, քրքիջի պայթյուններ։ Լռության պահերին ականջի էր հասնում վիթխարի չերևացող զանգվածի դոփյունը։ Գազանը շունչ էր առնում։ Հետո նրա որովայնից դուրս էր պրծնում ցուլի բառաչ։

Սիլվիան չէր կարողանում տեղում մնալ նստած։ Ռունգները լայնանում էին։ Նա դուրս փախավ։ Ուզում էր քրոջ տղային տանել, և ասում էր, որ իսկապես էլ այսպիսի օրը չի կարելի տանը նստած մնալ։ Դրան կարելի է վերաբերվել ինչպես ուզում ես, բայց տեսնելն ու զգալը հարկավոր է։ (Իսկ Սիլվիան երբեք ոչինչ չէր «զգում» կիսատ-պռատ...)։ Սակայն Մարկը հրաժարվեց— ճիշտ է, այնպիսի ջղայնությամբ ու զզվանքով, որոնք միայն մատնում էին նրա սարսափն ու գնալու ցանկությունը։ Ամբողջ օրը նա մնաց մոր հետ նստած տանը, ուր շուտ էր թափանցել նոյեմբերյան աղջամուղջը։ Փողոցի աղմուկը ժամ առ ժամ ավելանում էր։ Մարկը նստել էր մահճակալին և եղունգներն էր կրծում։ Աննետան ուշադրությունը շեղելու համար ջանում էր զբաղվել մի ուրիշ բանով։ Նա նստել էր լուսամուտից ամենահեռու անկյունում և ճրագի լույսի տակ կար էր անում։ Բայց, նկատելով որդու անհանգստությունը, ձեռքի գործը մի կողմ դրեց և նստեց մահճակալին, Մարկի կողքին։ Նա բռնեց որդու ձեռքը, և որդին ձեռքը ետ չքաշեց,— միայն համառորեն դեմքը շրջում էր դեպի պատը։ Աննետան կարեկցանքի ժպիտով նայեց Մարկին, համբուրեց նրա երիտասարդ վիզը՝ ականջի հետևը և շշնջաց.

— Գնա, տղաս...

Մարկը կտրուկ օրորեց գլուխը.

— Ոչ...

Բայց ուշ երեկոյան, աղքատիկ ընթրիքից հետո, որի ժամանակ նրանք խոսում էին կողմնակի բաների մասին, Մարկը հիշեց, որ իրեն հարկավոր է մինչև վաղը անպայման ինչ-որ շտապ պատասխան տեղ հասցնել։ Աննետան ականջ էր դրել որդու ոտնաձայներին, երբ նա սանդուղքով ցած էր իջնում։ Մայրը սարասափում էր Մարկի համար, բայց մտածեց. «Թող ավելի լավ է գնա և զղջա, որ տանը չմնաց, քան մնա տանը և զղջա, որ չգնաց...»։ Աննետան վերադարձավ լամպի մոտ, և նրա բերանի անկյուններում գծագրվեց Աննետայի իմանտուն ժպիտի ծաղրական ստվերը... «Թերևս, ամենավատ չարիքն այն է, որն ուզում ես գործել և չես գործում...»։

Մարկը երեք քայլ էլ չէր արել, երբ հորձանուտը նրան իր մեջ առավ։ Նրա խելքին փչեց անցնել փողոցը, որպեսզի ընկնի բուլվարի մյուս կողմը։ Մի ակնթարթում այդ հորձանուտը նրան սեղմեց, ճզմեց դարձրեց մի գունդ և սկսեց մի հոսանքից մյուսը նետել, մերթ առաջ, մերթ ետ։ Նա չէր հասցրել ուշքի գալ, երբ հոսանքը նրան քշեց-տարավ հիսուն մետր հեռու։ Այդ հոսանքի մեջ ընկած, տրորվելով ու փոշի դառնալով, ոռնացող մարմինների կույտին շաղախվելով, նա իրեն այնպես էր զգում, կարծես շորերը հանել էին, գրտնակել ու հունցել այդ ամբոխի հետ և դարձրել մի մարդկային խմոր, որը ճգվել էր բուլվարի ամբողջ երկարությամբ։ Գազազած գործի դնելով արմունկները, կողերը և ծնկները, նա այնուամենայնիվ դուրս պրծավ, բայց նույն րոպեին ընկավ հանդիպակաց հոսանքի մեջ, և նրան ամուր սեղմեցին գրգռված կանանց մի խմբի։ Այդ կանանց կոպտորեն հրմշտում էին, նրանք նույնպես դիվոտած հրում ու գոռգոռում էին հաճույքից ու սարսափից։ Նրանցից մեկին, ապիտակամորթ ու նիհար մի կնոջ, որ թափառող բիբեր ուներ, լայնորեն բացված բերան (երևում էր նույնիսկ նրա լեզվի հիմքը), ինչ-որ տղա կոպտորեն գրկել էր և կարծես աքցանով սեղմում էր ազդրերը։ Կինը նետվեց Մարկի վրա և

փրփրած շուրթերով հպվեց նրա բերանին։ Մարկի մեջ արյունը բռնկվեց, նա ճանկեց իր կողքով սլացող մի ուրիշ էգի և բերանը սրբեց նրա շրթունքներով։ Եվ այսպես, մերթ ինքը գրկելով, մերթ ընկնելով ուրիշի գիրկը, այդ խելագար փոքրիկ որձը որսի ժամանակ ձեռքից ձեռք էր անցնում, իր ճանապարհին հանդիպած բոլոր կանանցից տուրք պոկելով։ Եվ գտնվելով նույնպիսի զառանցանքի մեջ, ինչպես և ամբողջ այդ ամբոխը, որը «Մադլոն» էր բղավում, նա մտածում էր.

«Խաղաղություն։ Ի՜մ խաղաղություն։ Սա որսի իմ բաժինն է»։

Նա ավելի կրթված էր, քան մյուսները, և այդ պատճառով ինքն իրեն է՛լ ավելի կոպիտ կեղծիք էր կրկնում։

«Համբույրների մեջ ձուլվիր, օ աշխարհ»։

Սակայն վա՜ղ կլիներ, եթե աշխարհը հրաժարվեր այդ համբույրից։ Մարկը դեմ առավ մի ուրիշ աքլորի։ Նա շատ բարձրահասակ էր և Մարկի կտուցից որսը պոկեց-տարավ։ Սկզբում Մարկն այնքան էլ չէր կառչում որսից, բայց հետո գազազեց։ Կզակին հասցրած հարվածը շշմեցրեց նրան և շպրտեց մարդկային ծովը, որն այդ թափից հետ քաշվեց։ Մարկն անջրպետված մնաց այն մարդուց, որը նրա ատամների վրա էր թողել իր բռունցքի համը։ Իզուր էր Մարկը կատաղում, ջանալով հասնել նրան...

Ատելությունն այրում էր նրան և պահանջում վրեժ լուծել հենց այդ րոպեի՛ն, տեղո՛ւմ, թե չէ կպայթե՛ր։ Առիթը վայրկենապես ներկայացավ—և Մարկը այդ առիթից օգտվեց ամենաանգթությամբ ձևով։ Պատանին առանց տատանվելու կառչեց դրանից։

Նրա կողքին մի աղջիկ ամեն կերպ պաշտպանվում էր բազմության հրմշտոցից։ Աղջկա վրա նայելուն պես, նա հասկացավ ,որ դա գավառական քաղքենի է. ինչպես երևում է, հյուրանոցից դուրս գալով, նա մոլորվել է, ընկել է հորձանուտի բերանը, որը և նրան ներս է քաշել։ Աղջիկը կլոր, միամիտ և մոլորված դեմք ուներ։ Նա ջանում էր դուրս պրծնել դեպի կողքի փողոցը, բայց մարդկային հեղեղը խաղում էր նրա հետ։ Աղջիկն անպաշտպան էր կեղտոտ մտադրությունների դեմ, նրա խելագար աչքերը օգնության էին կանչում։ Մարկը ճուռակի նման նետվեց նրա վրա։ Բայց

մինչ Մարկը ճանապարհ էր բացում դեպի նա, կաքավը կարողացավ դուրս պրծնել։ Կողքի վեր գնացող մութ և նեղ փողոցով փախավ։ Մարկն ընկավ աղջկա հետևից և հասնելով գրկեց նրա ազդրերը։ Նա իր մազիներում զգաց աղջկա քնքուշ դողահար մարմինը, գրկեց նրան իր բոլոր շորս թաթերով և փորով սեղմվեց նրա մեջքին։ Աղջիկը քիչ մնաց ընկներ, նրա ծնկները ծալվում էին։ Սարսափից կիսամեռ, նա վախեցած վիզը ներս քաշեց ուսերի մեջ և գլուխը կախեց։ Ինչ-որ տան լուսամուտներից ընկած լույսի տակ Մարկը տեսավ աղջկա սպիտակ նուրբ պարանոցը և կծեց այն։ Ձոհը տնքաց ու ձեռքերով ծածկեց երեսը։ Մարկը նրա երեսից պոկեց ջղաձգությունից կծկված մատները (ծակ ձեռնոցի միջից դուրս էր ցցվել մատներից մեկը), իր կողմը շրջեց աղջկա գլուխը, կզակից բարձրացրեց և կոպտորեն կպավ նրա շուրթերին։ Այդ վայրկյանին Մարկը տեսավ աղջկա գթությունն աղերսող աչքերը։ Հայացքն այդ ակնթարթորեն, նիզակի նման, խփեց նրա սրտին, բայց պատանու ագահ կտուցը արդեն սեղմվել էր աղջկա թարմ շրթունքներին և նրանց վրա իր կնիքն էր թողնում։ Մարկը լեզվի վրա արյուն զգաց։ Եվ նույն վայրկյանին նրա աչքերի մեջ մխրճվեց աղջկա հայացքը։ Մարկը ետ ցատկեց, բաց թողեց որսին, և նա, մամլակներից դուրս պրծնելով, շրմփաց գետին։ Ծնկաչոք, երեսը ձեռքերով ծածկված, կորցրած ձայն հանելու կարողությունը, կախարդվածի նման անշարժացած, նա պահպանում էր լոկ այնքան ուժ, որքան պետք էր աչքերը չբացելու համար։ Փողոցն ամայի էր։ Տների կորացած գիծը ծածկում էր մոտակա զբոսայգին։ Այնտեղ մռնչում էր մարդկային հեղեղը։ Բայց ինչպես խավարն է թանձրանում էլեկտրական լուսարձակի բոցկլտացող փայլի շուրջը, այնպես էլ լռությունն էր խտանում այդ մռնչացող հեղեղի շուրջը։ Բոլորովին խաղաղ էր այնտեղ, որտեղ կանգնած քարացել էին շոնը և նրա որսը,— երկու երեխա։ Մարկը շփոթահար հայացքը գցեց իր ոտքերի առաջ փռված մարմնին, և, մտքով էլ չանցկացնելով բարձրացնել նրան, փախավ...

Նա մոլորված թափառում էր փողոցների լաբիրինթոսում, սուրբ Ժենևեվայի բլրալանջին, հանկարծ, որևէ կտրուկ ոլորանի վրա, նորից էր հանդիպում հարբած Հաղթանակի

գոմոցին—և փախչում էր, ինչպես առնետն է փախչում կոյուղու խողովակի միջից։ Արդեն ուշ էր, երբ նրան վերջապես հաջողվեց տուն հասնել։ Սանդուղքը սուզված էր խավարի մեջ։ Վեցերորդ հարկում գտնվող բնակարանի մութ միջանցքում մոր սենյակը տանող դռան տակից երևում էր լույսի մի շերտ։ Մարկը սահեց անկողնու մեջ, առանց լույսը վառելու։ Սառը սավանների վրա տկլոր պառկած, նա, վերջապես, նորից գիշերային խավարի մեջ գտավ իր անարգված հոգին։ Նա բռնել էր Մարկի կոկորդից, նա գոռում էր. «Այդ ի՞նչ արեցիր դու ինձ»։ Չէ որ Մարկը մինչև հիմա դեռ մտածում էր միայն իր մասին, և ոչ թե այն, ուրիշի, աղջկա մասին։ Նա բերանքսիվայր ընկած էր ներքնակին, երեսը թաղած բարձի մեջ։ Եվ հանկարծ նա իրեն տեսավ փողոցում, կռվի բռնված իր զոհի հետ. նուրբ պարանոցը, աղջկա վիրավորված մարմինը, բռունթյունը... Եվ նրանցից, երկուսից ավելի շատ անարգվածն ինքն էր... Եվ այդպես, ուրեմն, այդ բոլոր բարձրագոչ խոսքերից հետո, ցերեկները մոր հետ ունեցած այդ վեհ հպարտությամբ համակված զրույցներից հետո, բոլոր այդ ասպետական ճամարտակություններից հետո, պատերազմի բոլոր այդ աղվեսներին ու գայլերին խարազանելուց հետո, որոնք աշխարհը պատառների են ծվատում, օգտվելով ուժից ու խորամանկությունից և քողարկվելով ունեցած իրավունքով,— այդ բոլորից հետո նա ինքը նույնպես օգտվեց ուժեղի իրավունքից, իրեն պատառ պոկելու համար, և դեռ՝ ամենաստոր ձևով... Մարկը նորից տեսավ սալարկը և այնտեղ չոքած այդ աղջկան։ Կտրուկ շարժումով նա վերմակը վրայից մի կողմ նետեց. այն միտքը, որ ինքը փախավ գողի նման, այրում էր նրան։ Մարկը ուզում էր վազել այնտեղ, որտեղ թողել էր աղջկան... Ինչի՞ համար։ Նրան տեղից վեր կացնելո՞ւ։ Հիմարությո՞ւն... նա շարունակում էր ներքնակի ծայրին տկլոր նստած մնալ։ Միջնորմի մյուս կողմում մայրը մահճակալի վրա շուռումուռ էր գալիս։ Մարկը շունչը պահեց ու նորից պառկեց... Նա հիշեց աղջկա չորացած բերանի համը... Կրկին զգաց այդ շրթունքը... Եվ դաժանությունը նորից տիրեց նրան։ «Միևնո՞ւյն է... Ես քո վրա նշան եմ թողել։ Եվ եթե մենք հանդիպենք, ես կճանաչեմ քեզ, իսկ դու ինձ՝ ոչ... Նա կենդանի է և դատա-

պարտում է ինձ...»։ Այդ միտքը, այդ մտքով ապրելը Մարկի համար անտանելի էր։ «Երանի այդ աղջիկը մեռներ...»։ Չդադարելով պտույտ գործելուց միևնույն բանի շուրջը, նրա անդադրում միտքը իր վրայից թռավ աշխարհի վրա, և վերջ ի վերջո Մարկը հասկացավ, թե ինչո՞ւ մարդը, մի մատը դիպցնելով հանցագործությանը, նրա մեջ է սուզում ամբողջ ձեռքը, որպեսզի չտեսնի այն... Հետո՝ կարեկցության ալիքը... «Թող աղջիկն ապրի, թող նա երջանիկ լինի...»։ Մարկը նրա կլոր ծնկների քերծվածքները համբուրելու ցանկություն ունեցավ։ Բայց այդ ժամանակ նա կրկին իրեն շատ մոտ զգաց այն կենդանական կրքի բռնկումին, որն իրեն ստիպեց բռնել այդ աղջկան, և նա պատրաստ էր կրկնել իր վազքի այրող պտույտը... Այդպես նա գիշերվա ամբողջ մնացորդը մի վիճակից մյուսն էր անցնում. կարեկցությունն ու դաժանությունը, ատելությունն իր հանդեպ և աղջկա նկատմամբ, խղճի խայթը, զղջումներն՝ արածի համար, և ափսոսանքը՝ չարածի... Վազք և վազք՝ առանց կանգ առնելու։ Իսկ վերջում՝ պարտություն։ Դա քառասի մեջ միակ պարզ կետն էր։ Ծեծվա՞ծ է... Նա չդիմացավ հենց առաջին փորձությանը։ Նա ոչ մի իշխանություն չունի իր արարքների և մտքերի վրա։ Առաջին մեծ ալիքը—և նրա կամքը լողացրիվ եղավ, ինչպես մեդուզան։ Նա չգիտի, թե կյանքը ինչ կդարձնի իրեն մի տարուց հետո... Եվ այդ խայտառակ խոստովանությունը ինքն իրեն հասցրած մի ապտակ էր... Ո՛չ։ Ո՛չ։ Ավելի լավ է հանցագործությունը։ Նա նորից նստեց մահճակալին և սկսեց բռունցքներով ծեծել իր կուրծքը.

«Ես ուզում եմ, ես ուզո՞ւմ եմ... Ինչ եմ ուզո՞ւմ... Լինել այն, ինչ ուզում եմ...»։

Մոր քնքուշ ձայնը մյուս սենյակից շշնջաց.

— Ինչո՞ւ չես քնում, տղաս։

Մարկը չպատասխանեց։ Ձայրույթ. «Նա ինձ հետևում է...»։ Սիրո պոռթկում. «Նա ինձ հասկանում է...»։ Վրդովմունք, երախտագիտություն, կշեռքի նժարները տատանվում են... Ոչ մեկը, ոչ մյուսը։ «Ես միայնակ եմ և միայնակ էլ ուզում եմ մնալ...»։

Գլուխը բարձին իջեցնելով, Մարկն այլևս չշարժվեց։

Պատի երկու կողմերում մայր և որդի խավարում պառկած էին բաց աչքերով։ Աննետան նույնպես մտածում էր.

«Իզուր նրա հետ խոսակցություն սկսեցի։ Դա նրա անձնական գործն է։ Նա ինքն էլ թող վճռի»։

Բայց նրանց մտքերը հոսում էին մի ուղղությամբ և ալիքներով փոխանցվում էին մեկից մյուսին։ Եվ կամաց-կամաց երկուսն էլ հավասարակշռություն վերստացան։ Երբ պատուհաններում առկայծեց առավոտվա լույսը, նրանք երկուսն էլ պատրաստ էին ոտք դնել ամեն տեսակի պատրանքներով, թակարդներով և պայքարով լի այդ նոր օրը։ Մի պարտություն ևս կրելով, մայր ու որդի նայում էին ուղիղ այդ նոր օրվա երեսին և այրվում ամեն ինչ նորից սկսելու ցանկությամբ։ Այդ Ռիվիերնե՞րն է՞լ... Պարտությամբ մռայլված ի՞նչ առավոտ կարող է նրանց հարկադրել շրջվել դեպի ետ։

Բայց, անքուն գիշերից հետո կանգնելով սառը ջրով լցված լագանի մեջ, դողալով ու նորից զգալով իր մարմինը, պատանին հայացքով տնտղում էր դարաշրջանի և աշխարհի անդունդը, ուր նետված էր ինքը, իր ծայրահեղ թուլությունը և իրեն հետամտող անհաջողություններն ու անկումները։ Եվ նա հառաչում էր.

«Հասնել մինչև վե՞րջը...»։

«Հասնել մինչև վերջը»— այսինքն՝ ճանապարհին չընկնել։ Թող նույնիսկ ընկնի։ Բայց վերջում։ Անհաջողություններ ու անկումնե՞ր։ Թո՞ղ լինեն։ Բայց անցնել,— ինչ գնով էլ ուզում է դա լինի... Անցնե՞լ։ Տե՞ր աստված։ Անցնե՞լ... Մարկը ձգվեց, նախապես վայելելով հավիտենական հանգիստը... Այլևս չլինե՞լ... Դա հնարավոր է միայն այն բանից հետո, երբ դու եղար...

Նա գործվածքե պատյանը քաշեց իր երիտասարդ մաշկի վրա, որը կարմրել էր մազե ձեռնոցից... Եվ կոփված մարմնով, ատամները սեղմած, երիտասարդ գայլը նորից դուրս գնաց կյանք որսալու։

Իսկ ուրիշ ժամանակներն այդ որսը ինչքա՞ն էր հրապուրիչ։ Զնայած բնության կողմից դրած բոլոր թակարդներին և այն ամենին, ինչ հասարակությունն է հնարել՝ երիտա-

սարդությունը թունավորելու համար, գամելով նրան տաժանակրական նստարաններին (լիցեյը, բանակը), այնուամենայնիվ, ինչպիսի՞ անքանչելի անհանգստություն կա քսան տարեկան մարդու մեջ։

Բայց 1918 թականին քսան տարին նորմալ կյանքի չափանիշներով չէր չափվում։ Դա կարող էր հավասարվել և տասնչորս, և ութսուն տարու։ Նրանց հավաքել ու հարմարեցրել էին տարբեր հասակների իրար վատ կպցրած մասերից ու կտորներից այնպիսի չափով, որը միաժամանակ և չափազանց լայն էր և չափազանց նեղ, կարերը քանդվում էին առաջին իսկ շարժումից. պատռվածքների միջից երևում էին մերկ մարմինն ու ցանկությունները։

Երեկվա մարդիկ, մարդիկ, որոնք նրանց կյանք են տվել, չէին ճանաչում իրենցից ելած ծիլը։ Եվ որդիներին, որոնք իրենց հայրերին կորցրել էին, երեկվա մարդիկ թվում էին օտար, գրեթե ատելի, արհամարհելի։ Այդ պատանիները նույնիսկ իրար հետ համաձայնության գալու ոչ մի հնարավորություն չէին գտնում։ Ամեն մեկն իրենից մի տեսակ «գլուխկոտրուկ» խաղ էր ներկայացնում... Եթե կյա՞նքն էլ գոնե խաղ լիներ... Որպեսզի իրենք դրան հավատային, շատերը ջանում էին մյուսներին համոզել, որ իբր դա հենց այդպես էլ կա։ Բայց նրանք հիանալի գիտեին, որ եթե կյանքը խաղ է, ապա խաղ է սարսափելի, խենթերի խաղ է... Ամեն ինչ ավերված էր, և այդ երակների մեջ փոթորկող քամին բերում էր սպանդանոցի գարշահոտությունը։ Որտե՞ղ կառուցել նոր աշխարհը։ Եվ ի՞նչ քարից, և ի՞նչ հողի վրա, և ի՞նչ հիմքերի վրա։ Նրանք ոչինչ չգիտեին, ծխացող քաոսի միջև նրանք ոչինչ չէին տեսնում։ Միակ բանը, որի պակասությունը չէին զգում, դա բանվորական ձեռքերն էին։ Բայց քսան տարեկանում դժվար է դատապարտել իրեն, իր արագ անցնող giovinezza-ն[1], որին բոլոր կողմերից վտանգներ են սպառնում, կդատապարտի առանց որևէ ղեկավարության աշխատող հողեփորների հոգնեցուցիչ աշխատանքին։ Նրանք վա՞տ էին արդյոք, որ նոր երկրաշար-

---

[1] Երիտասարդություն (իտ.)։

ժը պատերը չի կործանի ավելի շուտ, քան իրենք կհասցնեն այդ պատերը կանգնեցնել երերուն հիմքի վրա։ Ո՞վ կարող էր հավատալ կայունությանը այն աշխարհի, որը կառուցված էր հանցագործ և անմիտ պայմանագրերի վրա։ Ամեն ինչ երերում էր, հաստատուն ոչինչ չկար, կյանքը վաղվա օր չուներ, վաղը կարող էր անդունդը լայն բացվել. պատերազմ, արտաքին և ներքին պատերազմներ... Վստահելի էր միայն այսօրվա օրը։ Եթե բոլոր տասը մատներով, քսան մատներով, ձեռքերով ու ոտքերով չկառչել նրանից—կործանում է։ Բայց ինչպե՞ս կառչել դրանից, այսօրվա այդ օրից։ Ո՞ւր խրել եղունգները։ Նրանից հնարավոր չէ բռնել, նա ձև չունի, նա հսկայական է, նա տարածվում է և սահում-փախչում։ Բավական է մոտենաս այդ պտտվող զանգվածին—և քեզ կշպրտի, ինչպես պարսատից ելած քար, և կամ ներս կքաշի, ու դու կգնաս դեպի հատակ։

Բայց եթե դու Մարկն ես և քսան տարեկան (նա քսան տարեկան էլ չկա, հազիվ էր տասնինը լրացել), ապա կատաղում ես, դու չես ուզում ոչ դուրս շպրտված լինել, ոչ գնալ դեպի հատակ, դու բռնում ես այսօրվա կոկորդից և խուժում նրա ներսը... Տիրանալ։ Իսկ հետո թեկուզ սատկես, ինչպես միջատների որձերը...

Եվ ինչպիսի՜ հոգնածություն կա ջղաձգված ձեռքերի այդ տենդում։ Ի՜նչ հրեշավոր բեռ տղայի ուսերին։ Անհավատալի՜ դժվարին խնդիր։

Երջանիկ են նրանք, ում կյանքը գոնե սահմանափակ է, ով միայն մի ճանապարհ ունի, ով պետք է միայն մի պահանջ բավարարի։ Բայց Մարկը չորս թե հինգ պահանջ ուներ, և դրանք սոված գազանների նման ծվեն-ծվեն էին անում նրա փորոտիքը։

Նա պետք է ճանաչեր, նա պետք է վերցներ, նա պետք է վայելեր, նա պետք է գործեր, նա պետք է լիներ... Եվ այդ աղվեսի ճուտերը, որոնց նա, ինչպես սպարտական տղա, թաքցրել էր իր հագուստի տակ, կուվում էին միմյանց հետ և կծում էին նրան։ Նրանք չէին կարողանում միասին հաղթեն։

Ի՞նչն էր ավելի շտապ.վայելելը թե՞ ճանաչելը։ Ամենից առաջ ճանաչե՞լ։ Փոքրիկ Ռիվիերին անտանելի էր թվում այն

միտքը, թե ինքը առանց տեսնելու, առանց ճանաչելու կյանքից կարող է հեռանալ։ Նրան պատկերանում էր, որ իր հավիտենական գոյության ամբողջ մնացորդը նա թափառելու է հուսաբեկության խավարում, որն ավելի վատ է, քան մարդկանց կողմից հնարված դժոխքի բոլոր տառապանքները։ (Քանի որ կարելի է ինչքան ուզում եք հավատալ, որ կյանքից անդին ոչինչ չկա։ Քանի տարեկան սրտի համար ոչինչը ամենաանգութ հավիտենականությունն է)։

Ինչպե՞ս իմանալ։ Եվ ի՞նչ իմանալ։ Ոչինչ հայտնի չէ։ Եվ, ամենից առաջ, ինչից սկսել։ Ամեն ինչ հարցականի տակ է և ամեն ինչ քեզ միանգամից պաշարում է։ Պատերազմի տարիներին ստացած կրթությունը վիթխարի թերություններ թողեց, որոնք երբեք չի լրացվի։ Բանականությունը թափառում էր ուրիշ տեղերում։ Իսկ երբ նա դպրոցական նստարանին իր նիհարիկ հետույքը դնելու պատվին էր արժանացնում, ապա այդ նիհարած գայլաձագի աշխույժ ու խիստ աչքերը տարօրինակ փայլով էին վառվում, մռայլ պատերի միջով նա ուրիշ որս էր փնտրում և ոչ թե ուսման հին հիմքեր։ Հազվադեպ պահերին ուսուցչի ինտոնացիան և կամ որևէ բառով խթանելը մերկացնում էին կյանքի անծանոթ կտորի ջերմ ուրվագծերը, և նա նետվում էր այնտեղ։ Բայց նա ընդունակ չէր վիթխարի Իրականության մեջ տեղ գտնել այդ կտորին, ըմբռնելու համար նա չուներ այն ամբողջ նախընթացը, որը բաց էր թողել անուշադրության պատճառով. որսը փախչում էր, և դրան հաջորդող ամեն ինչ խափանվում էր։ Եթե գծագրվեր գիտելիքների ուղածդ բնագավառում նրա պատկերացումների քարտեզը, կստացվեր Աֆրիկայի հին քարտեզների նման մի բան, որտեղ սպիտակ բծերն ավելի բազմաթիվ են, քան հետախուզված բնագավառները, իսկ մեծ գետերը մասնատված են անապատում կորչող օղակների, ինչպես կատվի բերան ընկած մողեսի պոչը։ Երևակայությունը լրացնում էր այդ քարտեզները, այստեղ ու այնտեղ տեղադրելով հեքիաթներից ու ավազից ստեղծված քաղաքներ ու լեռներ։ Պատմական ամբողջ դարաշրջաններ կային, թեորեմների ամբողջական շարքեր, գրեթե ամբողջական բնագավառներ՝ կլասիցիզմի

նեղլիկ թագավորության մեջ, որտեղ alma mater[1]-ի դասախոսները երկչոտորեն փակում էին իրենց սանտերին ինչ-որ հնամենի, թեև ոսկեզօծ, բայց խունացած, ցեցը տված բնակարաններում։ (Alma mater-ը նրանց համարում է աշխարհում լավագո՞ւյնը)։ Մտքի ուղիներն ընդհատվում էին, Մարկի ուղեղում ոչինչ չէր մնում։ Այնուամենայնիվ նա ավարտական քննությունները հանձնեց, ինչպես և մյուս թեռուսները, որոնք նրանից ավելի չգիտեին, բայց որոնց աչքերում չէր այրվում, ինչպես Մարկի աչքերում, մտքի հանդուգն կրակը։ Այն ժամանակ ներողամտորեն էին վերաբերվում հերոսների որդիներին ու եղբայրներին (եթե նրանք անգամ հերոսներ չէին, ապա կարող էին լինել)։ Բայց մա՛ռ, Մարկը, ոչ մի ներողամտություն չէր ցուցաբերում նրանց նկատմամբ, ովքեր ներողամիտ էին իր հանդեպ։ Լավ ձին չի ներում հիմար հեծյալին, որը խնայում է նրան և մոռանում է մտրակ հասցնել։ Այդ տարիների ընթացքում կործանվել էր և մարդկանց, և գրքերի հեղինակությունը, որոնք իշխում էին նախընթաց սերնդի մտքերի վրա։ Այն, ինչ նրանց մեջ տեսնում էին, այն, ինչ այդ գրքերի մեջ կարդում էին (քի՛չ և վա՛տ), համահունչ չէր այժմեականության հետ։ Ինչքան էլ ջանում էին բոլոր երդվյալ ստախոսները, բոլոր խաբված խաբեբաները թաքցնել պատերազմի և խաղաղության մասին ճշմարտությունը,— այդ երիտասարդները օժտված էին բնազդով և ընկալման դեռ չվատնված թարմությամբ։ Նրանք իրենց ուսուցիչների մեջ զգում էին պետության առաջ ցուցաբերվող մտքի քծնողությունն ու հռետորության ծերունական թուլությունը։ Ինչ վերաբերվում է այն իսկական և ազատ ուժերին, որոնք պահպանվել էին Ֆրանսիայում կամ նրա սահմաններից դուրս, ապա այդ պատանիները ոչինչ նրանց մասին չգիտեին. միջոցներ էին ձեռնարկված այն բանի համար, որ այդ ազատ ուժերին նախապես վարկաբեկեն, և պատանիները ոչ մի ցանկություն չունեին վերա-

---

[1] Լատինական արտահայտություն, որը նշանակում է դպրոց, համալսարան։

նայել անարդարացի դատավճիռները. նրանց վստահությունը խախտված էր։ Նախընթաց կեսդարյա (համարյա թե բոլոր մնացած ժամանակների) ամբողջ միտքը նրանք համախմբեցին մի ընդհանուր արհամարհական խորագրի տակ. «Բարբաջա՜նք։ Խոսքերից փքված փուքս...»։ Նրանք չէին էլ կասկածում, որ իրենց սեփական երիտասարդ փուքսերը նույնպես կփքվեն, միայն թե ուրիշ խոսքերից. այդպիսին են մարդկային մտքերի ինը տասներորդը, եթե նրանք չեն ուզում դատարկ մնալ, իսկ դատարկությունը նրանց խուճապի է հասցնում. ճիշտ է ասված, որ բնությունը դատարկություն չի հանդուրժում։ Նա չի կարողանում հաշտվել «ես չգիտեմ»-ի հետ։

Պե՜տք է գիտենա՜լ։ Այլապես մա՜հ է։

Բայց նախ և առաջ պետք է ուտել։ Իսկ եթե չորոնել, ապա հացի կտորը իրեն-իրեն չի ընկնի այդ Մարկ Ռիվիերի բերանը։ Բայց այդ հացը նա կարող է թոցնել միայն մո՜ր բերնից։ Իսկ հպարտությունը նրան ասում էր. «Բավակա՜ն է։ Այսուհետև դու ուտելու ես այն հացը միայն, որն ինքդ ես վաստակում»։

Այս առավոտ Մարկը երկու գործ ունի։ Երկու լապտեր մշուշում, որ դեռ կանգնած է նրա ուղեղի մեջ, ինչպես և քաղաքում։ Խոսակցական լեզվի դասը Վիլսոնի պատվիրակությունից մի շիկահեր, վարդագույն աչքերով ամերիկացու հետ, որն ապրում է Լա-Մյուետ թաղամասում։ Եվ Սորբոնի մոտերքում ապրող ռիոնցի մի դեղին պարոնի հիմարագույն-բանաստեղծությունները, որոնցում Մարկը ստիպված էր կատաղաբար մաքրել բրազիլական ձևերով աղավաղված ֆրանսերենը։

Ամերիկացու դուռը փակ էր։ Հարևանն ասաց, որ աստղավոր վերնաշապիկով մարդը դեռ չի վերադարձել, և, իմանալով, թե նա հատկապես ինչու է պետք, քմծիծաղով ավելացրեց, որ Մարկն անհանգստանալու կարիք չունի. նրա աշակերտը հենց այս րոպեին ամենաճիշտ մեթոդով ֆրանսերեն լեզու է ուսումնասիրում։ Մարկը կատաղությամբ նետվեց դեպի համար երկու կլիենտը։ Դռնապանուհին նրան կանգնեցրեց. սերկևլագույն մաշկով պարոնը հենց նոր իս-

պանկայից մահացավ։ Ոչ մի հասցե նա չի թողել։ Բանաստեղծությունները Մարկի մոտ մնացին որպես ժառանգություն։

Մահը ոչ ոքի այլևս չէր զարմացնում։ Սակայն հաջորդ օրը զինադադար ավետող հրանոթային համազարկերից հետո այդ դեպքը անհաջողության աղոտ զգացում առաջացրեց։ «Կնշանակի, ոչինչ չի՞ փոխվել...»։ Բայց Մարկի վրդովմունքը ուղղված էր մեռածի դեմ, որը նրա վզին փաթաթեց անհեթեթ մի աշխատանք և, առանց վճարելու, ծլկեց։

Մարկը քայլում էր նոթոտ, կատաղած, մռայլ, ինչպես ամպը։ Հանկարծ նրան խոցեց մի վճիտ աղջկական հայացք։ Նա ճանաչեց համակուրսեցու՝ թխահեր, փայլատ մաշկով աղջկա մոխրագույն աչքերը։ Այդ աչքերի ծաղրական ժպիտը ցրեց նրա գարշելի տրամադրությունը։ Աղջիկն արդեն հեռու էր։ Նրա բարալիկ ոտքերը հանդարտ ու արագ քայլերով գնում էին Սորբոնի կողմը։ Մի փոքր տատանվելուց հետո Մարկը գնաց նրա հետևից։ Այն ժամանակ համալսարանական գրադարանը որոշ երիտասարդների շտաբկայանն էր. նրանք այդտեղ էին գալիս հայտնելու իրենց կասկածները։ Մարկը աստիճանների վրա հասավ Հենրիետտա Ռյուշին։ Խորամանկ աչքերը ուսումնասիրում էին տղային.

— Նկուն հայացք։ Հողագույն դեմք։ Մռայլ կերպարանք... Եվ դա տոնակատարության հաջորդ օ՞րը։

— Ձեզ այդ տոնակատարությունն, ըստ երևույթին, ամենևին չի վերաբերվել։ Դուք հանգստացած տեսք ունեք։

— Այո, ես լավ քնել-կշտացել եմ։ Շնորհակալ եմ։

— Եվ դուք ցանկություն չունեցա՞ք դուրս հանել ձեր սրածայր քթիկը։

— Լուսամուտից։ Ես շատ բան տեսա։ Գազաններ։

— Ես նրանցից մեկն եմ։

— Այդ էր պակաս չլինե՞ք։

— Շնորհակալ եմ,— նեղացած ասաց Մարկը։

Աղջիկը քրքջաց.

— Դուք կարծում էիք, ես դրանում կասկածո՞ւմ եմ։

— Ավելի վա՞տն էի կարծում։

Նրանք կանգնած էին գրադարանի շեմին։ Աղջիկը մաղերն ուղղեց, նայելով դռան ապակու մեջ։

— Մի գաղան ավել, մի գաղան պակաս։ Չարժի, որ դա այդքան մոտ ընդունեք ձեր սրտին։

Աղջիկը մտավ ընթերցարան։

Մարկն իր բարեկամներից ոմանց տեսավ։

«Բարեկամներ»— շատ ուժեղ է ասված։ Այդ տղաների միջև մեծ բարեկամություն չկար։ Ամեն մեկն իրենով չափազանց շատ էր զբաղված։ Եվ, մասնավորապես, երիտասարդ Ռիվիերն իրեն հեռու էր պահում իր հասակակիցներից։ Նրան այնքան էլ չէին սիրում իր մռայլ, ինքնամփոփ բնավորության համար, այն բանի համար, որ նա չափազանց հաճախ էր շուրթերը արհամարհական քմծիծաղով ծռմռում, այն բանի համար, որ նրա կարծիքները խիստ էին լինում, ինչպես և սովորելու մեջ և քննությունների ժամանակ նրա ունեցած ակնհայտ գերազանցության համար։ Բայց հենց այդ նույն պատճառներով էլ ակամայից ընդունում էին նրա հեղինակությունը։ Արտահայտվում էր նաև մոր ազդեցությունը. ամեն տեսակի ազդեցություններից առաջ մոր ազդեցությունը Մարկին դարձրել էր կոլեկտիվ հիմարության վարակին անընկալունակ։ Նա ուրիշների նման չէր սպասում պատերազմի վերջին, որպեսզի հասկանա համընդհանուր խաբեությունը և այդ մասին հայտարարի ի լուր ամենքի։ Նրանց հանդեպ ունեցած այդ առավելությունը, որի պատճառով Մարկը ժամանակին խորթ էր շատերի համար, նրա նկատմամբ որոշակի վստահություն էր առաջացնում հիմա, երբ նրանց աչքերը բացվեցին։ Նրանք բավական արդարամիտ գտնվեցին խոստովանելու համար, որ այդ համառ վարազ Մարկը իրավացի էր։

Այն ժամանակ նրանց ամենից շատ պետք էր ոչ թե որևէ մեկը,— տղամարդ կամ կին,— ում կարելի է սիրել (սերը, ինչպես և ատելությունը, այն ժամանակ էժան էր),— նրանց անհրաժեշտ էր պայծառ մտքով մի մարդ, որին կարելի էր հավատալ։

Այսպիսի չորս թե հինգ տղաներ կային։ Նրանց միջև ընդհանուր ոչինչ չկար, բացի նրանից, որ բոլորն էլ հայտնաբերել էին սարսափելի խաբեությունը, և այդ հայտնագործությունը նրանցից յուրաքանչյուրի երեսին շրխկացել էր, ինչպես ապտակ։ Ամոթն ու զայրույթը այն բանի համար, որ

իրենք խաբնվել են, վրեժխնդրության և հատկապես ապագայում խաբեություններից պաշտպանվելու պահանջը ակամայից նրանց հարկադրում էին մնացած նախրից մի կողմ քաշվել։ Նրանք պետք է վերջ տային բոլոր տարաձայնություններին ու հակակրանքներին՝ իրենց թուլություններն ու իրենց ուժերը համախմբելու համար։ Նրանք ոչ թե բարեկամներ էին, այլ դաշնակիցներ։ Նրանք միասին էին ճանապարհ փնտրում, ինչպես կույր միջատներ, որոնք իրենց շոշափուկներով պրպտում էին խավարը։ Եվ ջանալով այդ ցույց շտալ, յուրաքանչյուրն սպասում էր, որ մեկ ուրիշը կարտաբերի այն բառը, որը խթան կհանդիսանա և ճանապարհ դուրս կբերի։

Նրանք բոլորն էլ միանման վատ գիտեին, թե ինչ պետք է անել։ Բայց նրանք ծագումով հասարակական տարբեր խավերից էին, այդ պատճառով էլ յուրաքանչյուրը մտցնում էր տարբեր տեսակի անձնական հատկություններ և որոշ փորձ, ինչը մյուսներին պակասում էր։

Ադոլֆ Շեալիեն, փոքրամարմին, հանգիստ, լավ սնված, երիտասարդ գավառական բուրժուա էր։ Նա ծագում էր հնամենի մի ընտանիքից, որն ավանդաբար պատկանում էր դատավորական խավին և Բերրիում հիանալի կալվածք ուներ։ Նա շատ ուսյալ մարդ էր, սերված նույնքան բարձր կուլտուրայից, որքան նրանց դաշտերի և խաղողի այգիների կուլտուրան, հինգ տղաներից ամենա-«կարգինը» (այդ բառի հնաոճ, կլասիկ իմաստով)։ Խելքով իսկական ֆրանսիացի, նա խոսում էր սահուն, պեդանտիկ էր և դրականորեն խճողված էր սովորություններով։ Քայլելիս այդ սովորությունները խճճվում էին նրա ոտքերի տակ։ Բայց և այնպես նա քայլում էր ոտքերը լայն-լայն դնելով, ոչ շատ արագ, ծանրաբարո։ Մյուսները ձեռ էին առնում նրան, ակնարկելով Բուրժ քաղաքի գերբը. «Ավանակը բազկաթոռին...»։

Ֆերնան Վերոն-Կոկարը նրան ճնշում էր իր ծանրամարմնությամբ, ձայնով ու արհամարհական վերաբերմունքով։ Բարձրահասակ, հաստ ու մսեղ, դուրս ցցված կրծքով, այնպիսի հսկայական ոտքերով, որ հատակը դողում էր նրա յուրաքանչյուր քայլից, զիլ ձայնով, որի դղրդյունից ապակիները զնգզնգում էին, ինչպես զանգի զողանջից, Վերոնի

դեմքը թվում էր միայն մսից պատրաստված և պատերազմի ժամանակ հայտնված այն լայն դեմքերից, որոնք կարծես կաթի փոխարեն այդ պատերազմի արյունն էին ծծել։ Այդպիսի դեմքին նայելիս չգիտես, թե դա ավելի շատ ում է հիշեցնում Նապոլեոնի դքսերին, որոնք ծագում էին ձիապաններից, թե՞ Կոկլենին[1], երբ նա Սկապեն-տրիումֆատորի դերում փողհարում է։ Նա պատերազմի հաշվին հարստացած արդյունաբերողի որդի էր և, ամենևին չամաչելով, այդ մասին ասում էր բացեիբաց, «առանց թաքցնելու», ինչպես ինքն էր արտահայտվում։ («Գողացողի տանը, — ընդգծում էր նա, —չեն խոսում այն մարդկանց մասին, ում թալանել են»)։ Ոչնչացնող արհամարհանքը, որը նա զգում էր իր հոր և նրա ամբողջ շայկայի նկատմամբ, Վերոնի միջից դուրս չէր մղում որդիական սերը և առանձնապես նրա մեջ ամենափոքր ցանկություն անգամ չէր առաջացնում հրաժարվել իրեն բաժին ընկած յուղոտ պատառներից։ Նա կողոպտողի և կողոպտվածի միջև ընտրություն կատարելիս չէր տատանվում։ «Ավելի վատ հիմարնե՞րի համար։ Եվ ավելի լավ, սատանան տանի, ինձ համար։ Եթե նրանք իմ ուժերն ունենային, վաղուց այս հասարակությունը պայթեցրած կլինեին։ Գուցե նրանք հենց այդպես էլ կանեն։ Եվ ես նրանց կօգնեմ։ Իսկ առայժմ ես ուտում եմ։ Եվ դրանից չեմ հրաժարվի ի օգուտ ինչ-որ մեկի, ում համար ուտելը այնպիսի բավականություն չէ, ինչպիսին ինձ համար է։ Մենք թքե՞լ ենք իրավունքի վրա։ Գիտենք, թե դա ինչ է, շա՞տ ենք տեսել։ Մեզ համար պատվի, մեր այսօրվա պատվի միակ գործը այն է, որ չստեղնք։ Եթե ես սրիկա եմ, ես դա գիտեմ, և դա ասում եմ։ Առաջինը, ինչից պետք է սկսել աղբահորի մաքրումը,— դա հիմար ստախոսության, ամեն տեսակի իդեալիզմի փորը թափե՞լն է։ Վիլսոնին աղբակո՞ւյտ նետել»։

Ադոլֆը խեղդվում էր։ Դա խոսակցության այն հազվադեպ առարկաներից մեկն էր, երբ նրան լքում էր բնածին վեհությունը։ Սիմոն Բուշարը թուքը շաղ էր տալիս, աչքերը

---

[1] Կոկլեն (1848—1909)—ֆրանսիական նշանավոր կոմիկական դերասան, որը խաղում էր Մոլիերի պերսոնաժներին։

ճակատն էին թռնում։ Նա դժվարանում էր խոսել, բառեր էր փնտրում, բայց երբ այդ բառերը պոկվում էին, ասես ուժով դուրս շպրտված, նրանք կշիռ էին ստանում, դառնում էին ամուր ու հյութեղ, և դա ստիպում էր ներել նրանց անպարկեշտությունը։ Թվում էր, թե նա մահացու թշնամության մեջ էր Վերոնի հետ, բայց նրանց միշտ կարելի էր միասին տեսնել։ Նրանք ստեղծված էին, որպեսզի միշտ ուժերով չափվեն միմյանց հետ։ Բուշարը, ֆերմեր-վարձակալի որդին, լիցեի թոշակառուն, մեծ աշխատավորը, որը դպրոցական նստարանի վրա էլ աշխատասեր եղ էր մնացել, չկոտած պերշերոն, ցիկլոպի կազմվածք ուներ և հանգամանորեն ընտրված ու լավ սերտած փաստարկներից կազմված խելք։ Նա և արտաքնապես, և ներքնապես հաստ էր, ծանր, կոպիտ և անտաշ։ Նա անսասան հավատ ուներ պատերազմի գաղափարի նկատմամբ։ Հիմա նա պակաս հաստատ չէր հավատում ամերիկյան մեսիայի անձեռնմխելի «տասնչորս կետերին»։ Նրան միշտ, միշտ պետք էր, որ քթից բռնած իրեն քարշ տային։ Բայց նրանք, ովքեր այդ անում էին, հետո թանկ էին վճարում դրա համար. խաբեությունը բացելով, Բուշարը երբեք այդ չէր ներում, և անողոք ատելությունը կուտակվում ու կուտակվում էր նրա մախաղում։ Իսկ այդ մախաղը նա ձեռքից բաց չէր թողնում, երբ սովորական մոլեգնությամբ նետվում էր դեպի նոր ճշմարտության որոնումները։

Սենտ-Լյուսը (Ժան-Կազիմիրը) իրեն չէր ծանրաբեռնում ոչ այդպիսի ուղեբեռով, ոչ (էլ ավելի պակաս) այդպիսի նպատակով։ Մեծաշուք անունը նրա միակ impedimenta[1]-ն էր և այդ պատճառով ծիծաղելի էր թվում։ Սենտ-Լյուսը հաստատորեն որոշել էր առաջին պատեհ առիթի դեպքում բաժանվել դրանից։ Նա այդ անունով պարտական էր իր լեհ հոր առատաձեռնությանը։ Բայց դրանով էլ հայրը սահմանափակեց իր շռայլությունը այն բանից հետո, երբ որդուն սերմանեց ֆրանսիական մի կինոաստղի մետաքսյա արգանդում։ Նա Անտիլյան կղզիներից մի կրեոլուհի էր և պարծենում էր գեղեցկուհի պոռնիկ Ժոզեֆինա I-ի հետ ունեցած

---

[1] Ուղեբեռ (լատ.)։

աղգակցությամբ, որին անմահացրեց Պրյուդոնը։ Սենտ-Լյուսը մորից ժառանգել էր նուրբ կազմվածք, խումար աչքեր և այտերի քնքուշ փոսիկներ։ Դա սնդիկի նման շարժուն, նրբագեղ ու կրակոտ պատանի էր։ Անընդհատ շարժման մեջ գտնվելու համար նա դրդապատճառի կարիք չուներ։ Ոչինչ չէր զսպում նրան, բարոյական կամ մտավոր կարգի ոչ մի պայմանականություն։ Նա ժամանակ չէր վատնում՝ նիզակներ փշբելու վրա։ Բայց նայում էր, թե դա ինչպես են անում ուրիշները, և ուրախ ծիծաղում էր, երբ հարվածը հաջող էր լինում։ Սենտ-Լյուսը հանդիսատես էր ծնվել, երբեք չէր հոգնում հանդեսներից և ոտք չէր խնայում հանդեսների հետևից ընկնելու համար։ Դա մի տեսակ Պեկ[1] էր, որը զբոսնում է երկրի երեսով և խուտուտ է տալիս նրա քիթը։ Վերոնը արհամարհանքով նրան անվանում էր Սուրբ լու[2]։ Պեկը կարող էր նրա մի խայթոցին տասը խայթոցով պատասխանել։ Բայց իր ուրախ անհոգության պատճառով նա համարում էր, որ այդ անասուն Վերոնը առանց դրա էլ շատ լավն է, նրան կարելի է խորովել իր խոզային մորթու մեջ. նա համեմունքների կարիք չի զգում...

Այդպես նրանք խմբված էին միասին, առանց մեկը մյուսի նկատմամբ սխալվելու և առանց չափից ավելի մեծ պատրանքների իրենց սեփական անձի նկատմամբ։ Հենց դա էր, որ ամենից շատ էր մտերմացնում նրանց։ Եվ նրանք նույն այդ հեգնանքով ու սրտակցությամբ իրենց շրջանակի մեջ առան գունատ, նիհար, արկոլյան անդադրում թմբկահար Մարկին՝ սոված շնիկի նրա անհանգիստ դնչիկով։ Նրանք այնքան էլ ջերմություն, գուցե հետաքրքրություն չունեին Մարկի անձնական տագնապների նկատմամբ, այն բանի նկատմամբ, ինչ ալեկոծվում էր այդ դիմակի տակ, ամեն մեկն իր տագնապներն ուներ, և ամեն մեկը դրանք պահում էր իր մեջ։ Ինքը՝ Մարկն, անձնապես կճնշեր դրանք, եթե որևէ բան առհասարակ ի վիճակի լիներ դրանք ճնշել։ Նույնիսկ իր անողոք հեգնանքում նա ամեն ինչ ընդունում էր

---

[1] Պեկ—էլֆ՝ Շեքսպիրի «Ամառային գիշերվա երազը» պիեսից։

[2] Ֆրանսերեն—Սենտ-Ֆյուա։

չափազանց լուրջ։ Նրանց դա թվում էր ժամանակի ոգուն անհամապատասխան (չափազանց շուտ թե՞ չափազանց ուշ։ Կարևոր չէ։ Ժամացույցը, միևնույն է, ստում էր)։ Բայց ընդհանուր գործի համար, ժամանակակից աշխարհի տակը փորելու և այնտեղից դուրս պրծնելու համար Մարկի սուր հայացքը և նրա տիրական բերանի անկյուններում գտնվող կոշտ ծալքը նրանց թվում էին օգտակար զորացնող ուժ։ Մարկը յուրային էր։

Եվ նրանց շուրջը մի մանրուք էլ կար. մի քանի հիանալի տղաներ, որոնք ուզում էին մտածել, բայց մտածում էին ոչ թե ինքնուրույն, այլ լսում էին նրանց և աշխատում իրենց խոսքը մեջ գցել։ Սակայն հնգյակը հազվադեպ էր այնքան բարեհաճ լինում, որ պատասխանի նրանց. հնգյակի անդամները միայն իրար մեջ էին խոսում։ Մյուսները կազմում էին շրջապատը։ Նրանք պետք էին գալիս միայն հնգյակի կամքը հաղորդելու և տարածելու համար։

Դահլիճի մյուս ծայրում հավաքվել էր մեկ ուրիշ, նույնքան բազմամարդ մի խումբ. դա «Ակսիոն ֆրանսեզ»-ի կողմնակիցներն էին։ Երկու խմբերն էլ ձևացնում էին, թե միմյանց չեն ճանաչում։ Նրանք մեկը մյուսի նկատմամբ տածում էին շատ խոր արհամարհանք, որը տաքդեղված էր մի պտղունց ատելությամբ։ Եվ քանի որ երկու ծայրում էլ շատ բարձր էին խոսում, չափազանց բարձր, չնայած վրդովված գրադարանավարի նկատողություններին, որի վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, գրգռիչ խոսքերը թռչում էին դահլիճի միջով, և եռացող ջուրը կարող էր բոպե առ բոպե թափվել կրակի վրա։ Հենց այդ էլ նրանք ուզում էին։ Եվ պետք եղած դեպքում միշտ գտնվում էր մեկը, որ կարող էր մի բանակից մյուսը տանել դեռ բոլորովին տաք մարտահրավերը։ Բարեբախտաբար, երիտասարդ խինդը դեռ չէր մեռել այդ մարտիկների սրտերում։ Եվ որևէ վիրավորական բառի սրամտությունը հազվադեպ չէր, որ զինաթափում էր հակառակորդին։

Իսկ ավելի հեռու, մի կողմ քաշված, բոլորովին առանձին, գերազանցության ժպիտը շրթունքներին, իրենց վրանն էին խփել նրանք, ովքեր անտարբեր էին հասարակական գործերի նկատմամբ, ում համար պատերազմը, խաղաղու-

թյունը և պայմանագրերը քաղաքականություն էր, որից ավելի լավ է, մարդ հեռու մնա, որպեսզի զբաղվի իր առևտրով, իր կարիերայով, իր զվարճանքներով, իր հոգևոր խոհանոցով. արվեստով, գիտությամբ, մասնագիտությամբ։ Դրանք տնային տնտեսուհիներ էին որ արհամարհում էին պարապ ու զեխ կյանք վարող կանանց։ Նրանց մեջ կային նաև իսկական մեծություններ. հաստ, կարճթաթ, կարճատես, վեր ցցված քթով պոզել, ապուշ կտրած տեսքով, նեղ ճակատով, կոշտ բաշով և բաց բերանով, որը, թվում էր, միշտ պատրաստ է բացականչել. «Է՞վրիկա...»։ Ժոկրիսը[1] Արքիմեդի[2] վաննայում... Ֆելիսիեն Լերոնը երջանիկ պատանի է. նա իսկական հակում ուներ դեպի գիտությունը։ Այդ հակումը նրան թույլ էր տալիս չմտածել այն մասին, թե ինչ է կատարվում շուրջը։ Իր մասնագիտությունից դուրս նա կատարյալ ապուշ կլիներ, եթե նրան չփրկեր ֆրանսիական գյուղացու խորամանկությունը։ Նրա կողքին կային նաև մանր գեղամոլություն անող կրետիններ, որոնք իրենց ոգու արիստոկրատներ էին կարծում այն հիման վրա, որ ստորացուցիչ էին համարում սոցիալական հարցերով զբաղվելը. ըստ երևույթին, այդ հարցերը այնքան էլ խիստ չէին կպչում նրանց։ Նրանք սիրում էին հավակնությամբ մեջբերել իմաստուն Վալերիի ասույթը. «Չի կարելի քաղաքականությամբ զբաղվել, առանց արտահայտվելու այն հարցերի վերաբերյալ, որոնց մասին ոչ մի ողջամիտ մարդ չի կարող ասել, որ ինքը ծանոթ է դրանց։ Հետևապես, միայն կատարյալ հիմարը կամ կատարյալ տգետը կարող է կարծիք կազմել այն պրոբլեմների մեծ մասի վերաբերյալ, որոնք առաջ է քաշում քաղաքականությունը...»։ Նրանք պարծենում էին, որ ոչ մի կարծիք չունեն, և խոր արհամարհանք էին տածում դեպի երկու թշնամի

---

[1] Ժոկրիս—հին ֆրանսիական ֆարսերի պերսոնաժ, հիմարության մարմնացում։

[2] Ըստ գոյություն ունեցող ավանդության, իր նշանավոր օրենքն այն մասին, թե հեղուկի մեջ սուզված մարմնի քաշը հավասար է այդ մարմնի կողմից դուրս մղած հեղուկի քաշին, Արքիմեդն հայտնագործել է վաննայում նստած։ Ուրախացած նա վազել է փողոց և բղավել. «Էվրիկա—գտա՞»։

լագերները, որին վերջիններս պատասխանում էին նույնպիսի արհամարհանքով։

Վերջապես, սեղանի մյուս կողմում, ուղղակի հնգյակի դիմաց, հանգիստ տեղավորվել էին Հենրիետտա Ռյուշի մոխրագույն աչքերը՝ երկար թարթիչների տակ, մազերով ծածկված մեծ ճակատը, նրբին, սուր քթիկը և ժպիտը։ Աղջիկն այդ գործարարորեն իր շուրջը փռել էր այն գրքերը, որոնք նկատի ուներ այսօր նայել։ Նրա երկար ու նիհար մատները, որոնց մեկի թե երկուսի եղունգները կրծած էին, վազում էին թղթի վրայով և ստույգ նշում այն, ինչ նա կարդացել էր։ Եվ դրա հետ միասին նրանից չէր սպրդում ոչ մի մանրուք շուրջը խոսվածից։ Նրա լավ կազմակերպված գլխում, որը չափազանց. լայն, մազերով ծածկված ճակատ ուներ, տեղ էր գտնվում նույնիսկ դատարկ գաղտնիքների հեղեղի համար, որոնք նրա ականջին շշնջում էր իր լայն հետևով սեղանին ծանրորեն նստած, թմբլիկ էլոդի Բերտենը, — ճիշտ է, Հենրիետտան դրանք մի ականջով լսում էր, մյուսով բաց թողնում։ Էլոդի անվան տերը դա ոչ ոքի առաջ չէր բացում, բացի առաջին հանդիպած մարդուց, և այն էլ՝ որպես գաղտնիք, քանի որ ինքը գաղտնիք պահելու ընդունակ չէր. նա իրեն վերակնքել, դարձրել էր Էլիզաբեթ, այնուհետև, մոդայի պատճառով, դարձրել էր Բաբետ և, վերջապես, կարճության համար կոչել էր Բետ[1]։ Այդ վերջին անունը—այդտեղ հնգյակը միասնական էր—նրան շատ էր սազում։ Նա խոսում էր, խոսում էր, խոսում։ Նրան միշտ կարելի էր տեսնել բերանը բաց և վեր·ցցած կզակով։ Կանանց այնպիսի ցեղեր կան, ինչպես, օրինակ, անգլուհիները, որոնք խոսում են, կարծես, առանց բերանը բացելու. սկսում են խոսել, դեռ բերանը չբացած։ Բայց Փարիզի Բետը, վախենալով, որ չի հասցնի ամեն ինչ պատմել, բերանն ավելի շուտ էր բացում, քան խոսելն սկսելը, բաց էր պահում, երբ խոսում էր, և չէր փակում, երբ կրկին խոսելն սկսելուց առաջ շունչ էր առնում։ Նա լավիկն էր, քնքուշ էր, կլորիկ, փափլիկ էր։ Նա պատիվ էր բերում այն

---

[1] Բետը (Bette) համահնչյուն է bête—հիմար բառին։

տանը,— Օդեսյան զբոսայգում գտնվող պարենային մեծ խանութներին,— որը նրան կերակրել էր և որի ժառանգորդն էր ինքը։ Նա մի փոքր ավելի քիչ պատիվ էր բերում Ռոբերտ Սորբոնի տանը, թեև իր գլուխն էր մտցրել,— աստված գիտե, ինչ հիման վրա,— որ այդ տանն ինքը գիտական աստիճան կստանա։ Գիտելիքները հրապուրում էին նրան, ինչպես մի հեռավոր երկիր։ Ճիշտն ասած, ինքը՝ երկիրը նրան ավելի քիչ էր հետաքրքրում, քան բնակիչները, և «աստիճան» բառը նրա մեջ պատկերացում էր առաջացնում ոչ այնքան դժվար և ձանձրալի քննությունների մասին, որքան ազատության աստիճանի, որը թույլատրելի է աշխարհի ամենաազատամիտ երիտասարդության հետ շփվելիս։ Երիտասարդ կոմերսանտուհուն այդ շփումը շշմեցնում էր։ Նա վայրի հիացմունք էր ունենում Հենրիետտա Ռյուշից, իսկ Հենրիետտան ընդունում էր նրա երկրպագությունը,— այն պայմանով, որ դա դրսևորվեր իր ժամանակին և իր համար հարմար ձևով,— և ներքաշեց նրան հնգյակի խմբակը։ Այնտեղ այնքան էլ ուշադրություն չէին դարձնում աղջիկների խելքին—դուր գալու համար խելքը հերիք կաներ։ Այդքան խելք ունենում է նույնիսկ ամենահիմարը, եթե նա իսկական փարիզուհի է։ Բայց աղջիկները չպետք է հույս դնեին երիտասարդների առանձնապես մեծ նրբակրթության վրա. ժամանակ չկար։ Սիրո հարցերում արդեն ընդունված չէր հապաղել։ Ինչպես Մորանն է ասում, կինը հիմա պետք է արձակի տուալետի ընդամենը երեք մասը։ Ուրեմն, ինչպես կամենաս։ Պարզ էր, որ Բետը կամենում էր։ Իսկ Հենրիետտան—ոչ։ Սակայն նրանք Հենրիետտայից չէին հրաժարվում, թեև նրա նիհարությունը, երկար քերծեի նման, ամենևին այդ երիտասարդ գիշատիչների ժանիքներին չի գալիս։ Վերոնը, որն, ըստ երևույթին, իր ատամները փորձել էր նրա վրա և մեկը ջարդել, պահել էր իր այրող շարությունը և աղջիկներին անվանում էր. Այլանդակ և Հիմար։ Բայց հնգյակից ոչ մեկը ընտրության մեջ չէր տատանվում։ Տարփանքի առարկան հենց ինքը այդ Այլանդակն էր (թեև նրանք այդ չէին խոստովանում)։ Եվ (այս մեկը նրանք նույնպես չէին խոստովանում) հիմա, իրենց քանավոր մրցախաղում, այդ տղաները, որ գրանցել էին «կնկա խելքը» արհամարհելի

իրերի դասում, խոսում էին բարձրաձայն և սեթևեթում էին հատկապես նրա համար։ Հենրիետտան դա հիանալի հասկանում էր։ Բայց ոչինչ ցույց չէր տալիս, բացի թեթև աղվամազով ծածկված շրթունքների անկյուններում հայտնվող հեգնանքից։ Թվում էր, թե նա ոչինչ չի էլ լսել, բայց և ամեն ինչ հիշում էր։ Նա ոչինչ չէր ասում, միայն երբեմն-երբեմն ցրված խրախուսանքի մի խոսք էր գցում Բետի շաղակրատող առվակը։ Աչքերով հետևելով իր մատներին, որոնք սահում էին թղթի վրայով, նա իջեցրած թարթիչների միջից մանրամասնորեն ուսումնասիրում էր հինգ տորեադորներից յուրաքանչյուրի գեմքի արտահայտությունը։ Միակը, ով անմիջապես որսաց թարթիչների ցանցով ծածկված նրա հայացքի սրությունը, դա Պեկն էր, որի անընդհատ շարժուն մանր աչքերը անվերջ ամեն ինչ տնտղում էին։ Գաղափարական վեճերը նրան զբաղեցնում էին միայն որպես վիճողներին հետևելու հնարավորություն, իսկ զննումներից կշտանալով, նա իրեն թույլ էր տալիս միանալ նաև հանդիսատեսներին։ Նա գաղթեց սեղանի մյուս կողմը և դատարկ զրույց սկսեց Հիմարի հետ, որն, այնուամենայնիվ, վերաբերվում էր Այլանդակին։ Շաղակրատող առվակը սուր խոսքերը մեկից մյուսին էր տանում։ Վերոնը, խանդելով, նկատեց Բուշարին. «Լուն հարձակվում է Կույսի[1] վրա»։ Բանն այն է, որ նրանք Ռյուշին Օրլեանի կույս էին անվանում։ Նա հենց այդպիսին էլ կար։ (Ես խոսում եմ ծննդավայրի մասին)։ Պնդում էին, որ նա դեռ պահպանել է նաև մյուս հատկությունը։ (Ես նկատի ունեմ կուսությունը)։ Սակայն այդ հանգամանքը նրանց համար վիճելի էր։ Նրանք դա ամենևին չէին թաքցնում, նույնիսկ Հենրիետտայից։ Իսկ Ռյուշը հոնքն էլ չէր շարժում։ Ոչ հա, ոչ չէ։ Կզակը ձեռքի մեջ առնելով, սառը և ծաղրասեր, նայում էր ուղիղ նրանց աչքերին։ Ուրեմն, բանն ինչպե՞ս էր։ Ինչպես էլ ուզում է լինի, բայց նրանք հիանում էին Ռյուշով։ Ռյուշը նրանց իր ձեռքի մեջ էր պահում (ձեռքի

---

[1] Բառախաղ. ֆրանսերեն «լու» (puce) և «կույս» (pucelle) բառերը հնչողությամբ մոտիկ են։

մեջ էր պահում նրանց գաղտնիքների բանալին), իսկ նրանք Ռյուշի գաղտնիքներից ոչ մեկը չգիտեին։

Եվ երբ փոթորիկը պայթեց (սկանդալ առաջացնելու համար, Վերոնը որոտաց. «Կորչի՜ Վագրը[1] վահանի վրայից։ Ցցի՜ հանել նրան։ Ես նրան ցցի կհանեմ...»— իսկ նրանք, մյուսները, «Ակսիոն Ֆրանսեզից», աղաղակ բարձրացրին և սկսեցին ցատկել տեղից, պատրաստ թշնամու վրա նետվելու, որից հետո՝ զրադարանավարը, որ բոլորից բարձր էր գոռում, հանդգնեց, վերջապես, դահլիճը մաքրել), երբ հնգյակը և նրա շքախումբը եզրակացության եկան, որ հետայսու նրանց չի հաջողվի այստեղ կազմակերպել իրենց նիստերը, սկսեցին մտածել, թե որտեղ հավաքվեն, և ոչ ոքի չզարմացրեց Բուշարի առաջարկությունը.

—Կույսի մոտ։

Ռյուշը դա ընդունեց հավուր պատշաճի։

Նա դատախազի աղջիկն էր, մի մարդու, որը մեծ խելքի և մեծ կրքերի տեր էր, շիտակ էր և տիրական, հպարտ էր, ցասումնալից, բռնակալ էր իր և իր տնեցիների նկատմամբ, իսկական «Օրլեանի կրետ»։ «Կրետի միտք,— նրա մասին ասում էր Լիգայի վետերաններից մեկը, որը մարդկանց լավ էր ճանաչում,— մռայլ, բծախնդիր, անզիջում»։ Եվ ահա սատանան դրդել էր նրան ի դժբախտություն իր՝ աղջիկ ունենալ։ Նա աղջկանը պաշտում էր, աղջիկն էլ սիրում էր նրան, բայց նա նույնպիսի «կրետ» էր, ինչպես և հայրը, և անգամ փոքրագույն հակում չէր դրսևորում նրան որևէ բանում զիջելու։ Այն ամենը, ինչ նա մտածում էր, ուղղակի այն բանի հակառակն էր, ինչ հայրն էր մտածում։ Նույնիսկ վստահորեն չի կարելի ասել, թե նա իր հայացքները չէր փոխի, եթե հայրն էլ իրենը փոխեր։ Սակայն չպետք է մտածել, թե նրա մեջ խոսում էր հակասության կանացի ոգին։ Նրան դա պետք էր ապրելու համար։ Երբ բռնակալը ձեզ

---

[1] Նկատի է առնված Կլեմանսոն (1841—1929), շովինիստ և ռեակցիոներ, որն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գլխավորում էր ֆրանսիական կառավարությունը և որին «Վագր» էին անվանում։

զրկում է օդից, երբ նա ձեր վզին է փաթաթում իր ճշմարտությունը, ապա եթե դուք ինքներդ էլ ընդունում եք այդ ճշմարտությունը, այն ձեզ ճնշում է, ձեզ խեղդում է, դուք ատում եք այդ ճշմարտությունը, և դուք հակառակ կողմը նետվելու ցանկություն եք զգում։ Դատախազը դաստիարակության, ընտանիքի, պետության, աղջիկների, կանանց, ամուսնության, բարոյականության վերաբերյալ ծայրեծայր ներծծված էր հին, օրենքների վրա հիմնված հայացքներով։ Իսկ Հենրիետտա Ռյուշը այդ բոլորը դեն էր շպրտում ինչպես մոդայից դուրս եկած քրջեր։

Նա ժամանակ ուներ այդ բոլորի մասին խորհրդածելու։ Բռնակալական իդեալիզմի թեփանքների միջով, որից բավականություն էր զգում ծեր հռետորը, նա պարզորոշ տեսնում էր, թե ինչ է իրեն սպասում,— աղքատ գավառական աղջկա գորշ, ձանձրալի և խղճուկ կյանք։ Այն քիչը, որ նրանք ունեին, հալել-գնացել էր պատերազմի վերջին տարիներին։ Դատախազական ոռճիկը հազիվ էր բավականացնում ընթացիկ ծախսերին։ Ի՞նչ է լինելու նրա մահից հետո։ Այդ մասին դատախազը կարծես չէր մտածում։ Գլխավորը, իր պարտքը կատարելն է։ Նրանք, ովքեր իրենից երկար կապրեն, պետք է նույն բանն անեն։ Որևէ գավառական երիտասարդ կամ ծեր դատական պաշտոնյա կգտնվի, ավելի կամ պակաս անբարեետես և աղքատ, ինչպես նա ինքն է, և կամուսնանա նրա դստեր հետ։ Իսկ աղջիկը մտածում էր այլ կերպ։ Անցել է այն ժամանակը, երբ կինը, իր մոր նման, հնազանդորեն սպասում էր, որպեսզի բարեհաճեն կին վերցնել իրեն։ Երբ հայրը դստեր վրա թափում էր իր «սկզբունքների» ամենօրյա հեղեղները, աղջիկը, ատամները սեղմած և դեմքին պահպանելով սառը-ծաղրական արտահայտությունը, լուռ լսում էր հորը, թեև ներսում ամեն ինչ եռում էր։ Բայց մի գեղեցիկ առավոտ նա հանգիստ, վճռական, պարզ ու հստակ ասաց.

— Այն, ինչ հնացել է, երբեք չի վերադառնա։

Հայրը սսկվեց։

— Իսկ ի՞նչն է հնացել։

— Դու,— պատասխանեց աղջիկը։

Զգվեցին տանջալից օրերն ու ամիսները, տան մթնոլորտը դարձավ անտանելի։ Սաստիկ քամին փոխարինվում էր մա-

ղող անձրևով։ Ամենից վատը մոր համար էր, որ անզեն էր երկու կրակի միջև։ Ամբողջ կյանքում նա տարել էր իր հոր, եղբայրների և ամուսնու պահանջկոտությունը։ Մոլորված, ոչ առանց վախի, բայց, գուցե և ոչ առանց գաղտնի ուրախության, նա նայում էր այդ ընդվզումին, որը նրա փոխարեն բարձրացրեց աղջիկը։ Դատախազի ամբողջ ավյունը փշրվում էր, կպչելով այդ երիտասարդ աղջկա՝ նրա դստեր ծաղրական անտարբերության պատին, աղջիկ, որը, լսելով հորը, ծակում էր նրան իր վճիտ և պաղ հայացքով։ Հայրը շփոթմունքի մեջ էր ընկնում։ Բառերը լռվում էին նրա կոկորդում։ Նա զգում էր, որ այդ խոսքերն անօգուտ են։ Դեռ ավելին,— դստեր հայացքը կաշկանդում էր նրան և ասում. «Դու ինքդ էլ քեզ չես հավատում»։ Հայրը կաշվից դուրս էր գալիս, միայն որպեսզի հավատա։ Բայց դա նպատակի չէր հասնում։ Իսկ աղջիկը երբեք կաշվից դուրս չէր գալիս։ Դատախազի համար ավելի հեշտ կլիներ չորս կամ հինգ գլուխ նվաճել փաստաբանների գթաշարժ պերճախոսությունից, քան միայն աղջկական այդ համառ գլուխը, որին խուզած մազերը կասկայի նման ծածկել էին։ Տանը մի ամբողջ ողբերգություն տեղի ունեցավ, երբ Հենրիետտան եկավ մազերը կտրած, վերցրած քթով, բաբախող սրտով, ազատագրված Դալիլա, որը մազերը խուզել է, որպեսզի փշրի Սամսոնի շղթաները։ Ծերունի բուրժուան քիչ մնաց կաթվածահար լիներ։ Այդ դոն Դիեգոն իրեն խայտառակված զգաց, տեսնելով վերջապես իր բանտից ազատված դստեր բարալիկ ոտքերը, որ հազիվ էին ծածկվում կարճլիկ, մինչև ծունկներն էլ չհասնող շրջազգեստով... O tempora, o mores[1]։ Հայրը չէր հոգնում որոտալուց, բայց աղջիկը շուտով հոգնեց նրան լսել։

Երբ ամպը գոռացել կամ դեռ գոռում է,
Խխունջը եղջյուրն իր բարձրացնում է,—

ասում է ժողովրդական իմաստությունը։ Օլեանի Ոյուշը

---

[1] O ժամանակներ, o բարքեր (լատ.)։

բարձրացրեց երկու եղջյուր։ Նա հանգիստ հայտարարեց, որ «վեճից գործը առաջ չի գնում», որ այդ ձևով իրենք միայն զուր ժամանակ են կորցնում, իսկ նրա համար ամենագլխավորը երիտասարդությունն է, որ ոչ ոք զորունակ չէ կենդանին զամել մեռյալի հետ և որ նա պաշտպանելու է սովորելու համար Փարիզ մեկնելու, անկախ կյանք սկսելու իր իրավունքը։ Ոչինչ չէր օգնում. ոչ մի խնդրանք, ոչ մի սպառնալիք, ոչ մի փաստարկ։ Հայրը թույլ չտվեց։ Ռյուշը գնաց։ Մի երեկո տեսան, որ թռչնակը բնում չէ։ Նրանից եկած նամակը լատինական թաղամասից էր։ Նրան զիջողություն արին՝ սկանդալային ասեկոսեներից խուսափելու համար։ Ռյուշը պայման էր դնում։ Դատախազը ներկայացրեց իր պայմանները։ Բանակցությունները տարվում էին նամակներում, խիստ և սառը։ Հայր ու աղջիկ սիրում և ատում էին միմյանց։ Հայրը դստեր ապրուստի համար չնչին գումար նշանակեց։ Ռյուշը հպարտությունից հրաժարվեց ընդունել։ Պահանջվեցին մոր աղերսանքները՝ որոշ modus vivendi[1] սահմանելու համար։ Մայրը «իշամեղվին» ապացուցեց, որ «կրետին» Փարիզում գոյության միջոցներ հայթայթելուն հարկադրելը վտանգավոր է։ Հայրը ցնցվեց. կատաղի համառությունը նրան ստիպեց մոռանալ, թե ինչ վճիռ կարող էր կայացնել նրա աղջիկը հենց նույն այդ համառության պատճառով։ Նա շտապեց պայմանագիրն ստորագրել։ Ապրուստի համար նշանակված խղճուկ գումարի դիմաց աշխատելու պարտավորության փոխարեն—քննությունները ստուգում կհանդիսանան։ Պարտավորությունը կատարվում էր. Հենրիետտա Ռյուշը, որը նախապաշարմունքներով իրեն կաշկանդված չէր համարում (իսկ այդպիսի նախապաշարմունքները նրա համար հին բարոյականության կանոններն էին), մի առաքինություն ուներ և մի արատ, որը նրա համար առաքինության էր փոխարինում. դա խտացած, եռակի թնդության, կանացի հպարտությունն էր։ Նրա և հոր միջև, նրա և փոքրիկ գավառական աշխարհի միջև, որը

---

[1] Կենսաձև, ապրելու եղանակ. տվյալ դեպքում՝ համաձայնություն (լատ.)։

դատապարտում էր նրան և լրտեսում նրա ետևից, գաղտնի մենամարտ էր տեղի ունենում։ Ռյուշը իրեն անկուն էր պահում։ Ոչինչ նրա վարքագծի մասին ասել չէր կարելի։ Համենայն դեպս արտաքուստ։ Նա իրեն պահպանում էր։ Ինչ վերաբերվում է նրա կյանքի էությանը, դա նրա անձնական գործն էր. նա ոչ ոքի պարտավոր չէր հաշիվ տալ։ Յուրաքանչյուրը կարող էր տեսնել, որ նա հաջողությամբ քննություն է տալիս, որ, դասախոսների կարծիքով, նրա հիանալի ունակությունները թույլ էին տալիս նրան անցնել իր լավագույն կոլեգաներից առաջ կամ ծայրահեղ դեպքում ետ չընկնել,— նրանց ուրիշ մտքեր էին շեղում։ Մինչդեռ լոկ բանականությունը չէր միայն, որ նրա կյանքին իմաստ էր տալիս։ Ռյուշն առեղծված էր մնում ուրիշների համար։ Գուցե, նաև իր համար։

Նա ապրում էր Վալ-դե-Գրասի մոտերքը, Սեն-Ժակ փողոցի ամենանեղ տեղերից մեկում, որը ս. Ժենևեվայի բլուրի ոլորանների և խաչմերուկների միջով ձգվում էր, ինչպես ջուրակի լարը հենափայտիկի վրա։ Հին տունը ծռվում էր, ինչպես աղեղի տակ, և ցնցվում էր, երբ կողքով ծանր ավտոբուսներ էին անցնում։ Ներքևի հարկից լսվում էր երկաթեղենի խանութից եկող շաչյունը և գինեվաճառի շշերի զրնգոցը։ Նեղ դուռը և հին, մութ քարե սանդուղքը փողոցից տանում էին դեպի անտրեսոլ, որը ճնշվում էր երկրորդ հարկի ցցունքի տակ։ Միջանցք չունեցող միակ սենյակը, որից բաղկացած էր ամբողջ բնակարանը, բացվում էր սանդուղքի վրա. նախկինում ուղղակի այդ սենյակից կարելի էր ներքին աստիճաններով գնալ ցածրի հարկում գտնվող խանութը։ Գավառից ուղարկված ծանր վարագույրները խլում էին վերջին լույսը։ Մինչդեռ այդ երկար ծուռկող սենյակը, որին տան ճակատում եղած ակոսը հղի կնոջ փորի ձև էր տալիս, երեք լուսամուտ ուներ, ընդ որում դրանցից մեկը, որ անկյունում էր, երկու աստիճանով բարձրացված ելուստի վրա, կլոր էր և նմանվում էր ջուրակի լարակապի։ Դա սենյակի միակ լավ լուսավորված մասն էր։ Ըստ երևույթին, առաջ այստեղ ալկովով մի ոչ մեծ բարձրություն կար, որը կարելի էր մետաղյա ձողի վրա հագցրած վարագույրով առանձնացնել։ Ռյուշն այստեղ իր համար հարմարավետ

անկյուն էր սարքել։ Նա սենյակի այս լավագույն մասում փռել էր պերճանքի միակ առարկան—իր Օղլեանի սենյակից բերած հին պարսկական գորգը, որն իրենց ընտանիքն էր ընկել, ըստ երևույթին, Հեղափոխության ժամանակներում որևէ եկեղեցու ավերումից հետո։ Այստեղ Հենրիետտան անցկացնում էր այն ժամանակը, երբ չէր վազվզում Փարիզի փողոցներով։ Նա ոտքերը ծալապատիկ նստում էր, ծխում էր սիգարետը սիգարետի հետևից և, երազանքներին տրվելով, մերթ նոթերը կիտում էր, մերթ անզուսպ ծիծաղում՝ հիշողության մեջ փայլատակող ու անցնող որևէ մտքից։ (Ռյուշի բարեկամներն այդ մասին ոչինչ չգիտեին. իր սուր ծիծաղն ու մտքերը նա պահպանում էր միայն իր համար)։ Եվ կամ, վազվզուկից հոգնելով, նա պառկում էր, բայց մարմինը չէր ձգում ամբողջ երկարությամբ (որմնախորշը պահանջվածի չափ մեծ չէր այդ քերծեի երկար մարմնի համար), այլ, աղեղի նման ծռվելով , ծնկները ձգում էր դեպի կզակը և ձեռքերով գրկում ման գալուց հոգնած ոտքերը։ Ռյուշն աշխատում էր նույնպես հատակին, պպզած, գրքերը շուրջը դարսած, ինքնահոսը ձեռքին։ Այդպես նա նստում էր, քանի դեռ կլոր լուսամուտից նրա անխոնջ, պողպատագույն աչքերին էին ընկնում լույսի վերջին կաթիլները, մինչև սենյակի խորքը արդեն սուզված էր լինում խավարի մեջ։ Չորս անկյուններում շիրմաները թաքցնում էին զգեստի, ուտելիքների և մյուս բաների զանազան տեսակի «անձնականը»։ Նա այդ անկյունները անվանում էր իր աշխարհի չորս կողմերը։

Կահույքը առանձին-առանձին կտորներից էր և ոչ մեծ քանակությամբ։ Մի քանի խնայողաբար սարքված օթոց։ Երկար, թղթերով ծանրաբեռնված սեղան, որի վրա կարելի էր նաև նստել։ Երկու-երեք աթոռ։ Փայտի համար մի արկղ (հաճախ չէին կրակ վառում. հին բուխարուց անընդհատ փչում էր)։ Մռայլ պատերին վառ գույնի կտորներ էին կախած։ Հենրիետտայի վարժված աչքը դրանք ճաշակով էր ընտրել, օրիգինալ զուգակցությամբ։ Գույները նրա ամենասիրած բանն էին, բայց, ժողովրդի միջից ելած հունգարական կանանց նման, որոնք իրենց ամենասքանչելի ասեղնագործությունները անդուկում են պահում, Ռյուշն, ըստ երևույ-

թին, ամենից շատ արևից բավականություն էր ստանում, երբ վերջինս գերի էր ընկնում նրա կիսամութ սենյակը։ Այստեղ ու այնտեղ կախված Գոգենի, Մատիսի, Ուտրիլլոյի կտավներից արված լուսանկարները այդ նկարների լուսային գամմայի երանգներն էին առաջացնում այն մարդկանց հիշողության մեջ, ովքեր գիտեին օրիգինալները։ Այցելուների մուտքի մոտ դիմավորում էր հին ֆաբլիոներից վերցրած նեղ աչքերով և խորամանկ քթով փոքրիկ միանձնուհու գլխիկը,— —գիպսե ծեփակերտ պատճենը, որը պատերազմից առաջ ընդօրինակված է եղել Ռեյմի տաճարի ճակատը զարդարող մի պատկերաքանդակից։ Փոքրիկ միանձնուհին ինչ-որ ընդհանուր բան ուներ տանտիրուհու հետ։ Այդ գալլական Ջոկոնդայի նուրբ ժպիտը այցելուների համար նախազգուշացման դեր էր կատարում։ Նրանց համակրանքը վերջնականապես շահելու համար (իսկ գուցե նաև հարկադրելու, որ զգուշանան), փոքրիկ շարժական գրադարանը, որ տեղավորված էր որմնախորշում, հայելու տակ,— կլոր լուսամուտով պատի մոտ, ամենաերևացող տեղը, և որը լավ լուսավորված էր, վկայում էր, ոչ առանց որոշ մարտահրավերի, տանտիրուհու ֆրանսիական ճաշակի մասին. Վիյոն, Վոլտերի հեքիաթները, Լաֆոնտեն։ Ընտրությունը զերծ չէր որոշ խորամանկ միտումնավորությունից, բայց դա համապատասխանում էր— ռուսայի իսկական, չկեղծված բնազդին։ Եթե Օդեանի դատախազը, որը կյանքում և դատարանում իր ստվարաթղթե շանթերն էր արձակում օրենքների ժողովածուի նկատմամբ ունեցած հարգանքի բացակայության դեմ, տեսներ իր դստեր սեղանին հանդուգն գալլական ոգու այդ իսկական գանձերը, նա, թերևս, իր թասակը սիրալիր թափահարելով ողջուներ դրանց։ Ինչքան էլ ուզում է Հռոմն ու Հրեաստանը ճգնեին փակել Ֆրանսիայի բերանը և խցել հիշողությունը, բայց չէ որ գլուխը գալլական էր, և այդ գլխում լավ բաներ կան,— լավ ֆրանսիացին միշտ դրանք տեսնում է ու հաճույք ստանում։ Եվ Ռյուշի գրադարակներին, ինչպես և պետք է լինի, կողք-կողքի դրված էին Ռասինն ու Վոլտերը և Դեկարտն ու Լաֆոնտենը—ֆրանսիական ընտանիքը։ Բայց քանի որ երիտասարդ, նորելուկ աշակերտուհու նախաճաշը մի պտղունց

պեդանտիզմի նման համեմունք է պահանջում, ապա նա դրանց ավելացրել էր Լուկրեցիոսին։ Սակայն թեև նա լատիներեն կարդում էր փոքր-ինչ ավելի լավ, քան իր ընկերները,—մեր մեջ ասած, ես համոզված եմ, որ նա Լուկրեցիոսին ամենևին չէր կարդում և որ ավելի հաճույքով նա աչքածում էր «Բաբելոնի արքայադուստրը»[1]։ Իսկ ավելի շատ սիրում էր կարդալ իր տղաների սրտերը։ Դա միշտ եղել է աղջիկների սիրած գիրքը։ Բայց բոլոր աղջիկներին չէ, որ վիճակված է այդ գիրքը ճիշտ կարդալ։ Ռյուշն այդ գործում հմտություն էր ձեռք բերել։ Նրանցից ոչ մեկը դա չէր էլ կռահում։ Իսկ Ռյուշն ինքը նրանց էությունը լավ էր հասկանում։

Նրանք գալիս էին և տեղավորվում։ Տղաներին հատուկ անքաղաքավարությամբ։ Նրանք չէին ամաչում, որ փողոցի ցեխը ներս են բերել, որ սենյակը լցրել են աղմուկով ու ծխախոտի ծխով (նրանցից հետո Ռյուշը ստիպված էր լինում բոլոր լուսամուտները ամբողջ լայնությամբ բացել, և այդ ժամանակ ներս էր խուժում գիշերվա սառցի նման պաղ շունչը)։ Նրանք տնօրինում էին Հենրիետտայի ժամանակն ու կացարանը, կարծես աղջիկը պարտավոր էր նրանց ծառայելու,— և այդ բոլորը առանց շնորհակալական որևէ խոսքի։ Բայց տանտիրուհին ինքն էր փոխհատուցում իրեն, նա գիտեր հարգանք ներշնչել իր նկատմամբ։ Եթե դա աչքի չէր էլ ընկնում, ապա լոկ այն պատճառով, որ նա ինքը դրանում համոզված էր և ուշադրության հատուկ նշաններ չէր պահանջում։ Ըստ երևույթին, նա նույնիսկ չափից ավելի էր համոզված—այդպիսին է երիտասարդ կանանց թերությունը։ Բայց Հենրիետտան ագահորեն ուզում էր իմանալ այն ամենը, ինչ կատարվում էր այդ պատանի արուների ուղեղում, և նա թույլ էր տալիս նրանց արտահայտել բոլորը, ոչ մի խոսքով, ոչ մի շարժումով կամ հայացքով չընդհատելով նրանց զեղումները։ Հանգիստ օրորվելով պարտեզի բազկաթոռ-ճոճանակի մեջ, սիգարետը երկու մատների արանքում, նա շաղակրատի նման միայն դիտում էր։ Բետը նրանց սուրճ է մատուցում (այդ երեկույթներին սպասարկման գործով զբաղվում էր

---

[1] «Բաբելոնի արքայադուստրը»—Վոլտերի (1694—1778) փիլիսոփայական վիպակներից մեկն է։

Բետը. նա սուրճը իր հորից էր թռցնում)։ Երբ Հենրիետտային հարցի էին արժանացնում կամ երբ նա ուզում էր՝ անկատելիորեն վեճերին իր համար ցանկալի ուղղությունները տալ, բորբոքել այդ վեճերը կամ, վերջապես, բոլորովին դադարեցնել դրանք թաթիկի մի անփույթ շարժումով, մի երկուերեք անսպասելի, բայց դիպուկ խոսքերով, Հենրիետտան հազիվ բացում էր իր ծաղրական բերանը։ Հետո նորից ամփոփվելով իր աթոռին անտարբերության մեջ, նա այնպիսի ցրված տեսք էր ընդունում, որ կարծես խոսողն ամենևին էլ ինքը չէր։ Բայց նրա կոպերի տակից, որոնք ծալքավորված էին, ինչպես դիպսե միանձնուհունը, փայլատակում էր զգոն հայացքը. հետևի ոտքերին կանգնող շուն... Բետը նրա համար օգտակար էր նրանով, որ հեռացնում էր ընկերների աչքերը և նույնիսկ ձեռքերը։ Սակայն Հենրիետտայի հայացքը թեև չէր խանգարում նրանց, բայց և թույլ չէր տալիս անցնել նրա կողմից լռելյայն հաստատված սահմանները։ Ամենաեզրին նրանք կանգ էին առնում։ Ռյուշի[1] օրենքն է։ Շեմքից այն կողմ նրանք բոլորը—այդ թվում նաև Հենրիետտան—նույնքան ազատ էին խախտելու տասը պատվիրանները, որքան նշանավոր անգլիացին Սուեզի ջրանցքից անդին[2]։

Բայց խոսքով նրանք պատվիրանները խախտում էին նույնիսկ Ռյուշի սենյակում։ Բանականությամբ և Իրավունքով կործանված աշխարհից ելք փնտրելով, նրանց համար անհրաժեշտ էր իրենց վրեժը լուծել։ Թքել երեք առաքինությունների վրա. հույսի, հավատի, սիրո։ Բայց դա նշանակում էր, որ յուրաքանչյուրը պետք է իր երեսը սրբեր։ Խե՜ղճ երեխաներ։

Բոլոր ժամանակներում մարդիկ կասկածել են։ Ամեն մի նոր սերունդ ժխտել է ավագների զառանցանքները։ Բայց էական տարբերություն է եղել խաղ-կոտորածի, որով բոլոր ժամանակներում զբաղվել են երիտասարդ ինտելիգենտ-

---

[1] Ռյուշ (ruch)—ֆրանսերեն նշանակում է փեթակ։

[2] Լորդ Կիտչեներին է վերագրվում «Կարմիր ծովի այն կողմը տասը պատվիրանները պարտադիր չեն» արտահայտությունը։

ները, ապագա պրոֆեսորները, դատախազները, փաստաբանները և եկող օրվա բարոյական ու իրավական հիմքերի պահապանները, և այդ նոր մեծ խաբեությունից, Իրավունքի համար տարվող պատերազմից դուրս եկած ճաների ջղաձգական բունտի միջև։ Նախկինում կասկածը համակերպվող էր. նա հաշտվում էր կյանքի և ողջամտության հետ. կասկածը նույնիսկ հաճելիորեն զուգակցվում էր «իսկ կյանքը լավ բան է» ֆորմուլայի հետ, որը ծերուկ Ռենանին ստիպում էր լպստել իր ճարպոտ շրթունքները։ Հիմիկվա կասկածը ավազի և հրի մի տայֆուն էր, որ ամեն ինչ մաքուր սրբում էր ու տանում։ Բայց այդ tabula rasa-ն, որն ամենևին չէր հուզի բրոնզե Դեկարտին կամ անոսկր Անատոլ Ֆրանսին, այս պատանիների համար մահացու տեսարան էր։ Ամեն բանի մեջ, ինչ նրանք կարդում էին, տեսնում, լսում, թույն էին զգում՝ խառնված քաղաքակրթության կերակրին. կրոնին, բարոյականությանը, պատմությանը, գրականությանը, արվեստին, փիլիսոփայությանը, հրապարակային պերճախոսության ընդհանուր տեղերին, առօրյա «իդեալիզմին»։ Նրանք այդ թույնը դուրս էին թքում նախընթաց սերունդների անմիտ հոգեկան անդորրի նկատմամբ ունեցած կատաղի և խեղկատակի արհամարհանքով։ Բունտի բոլոր տեսակների տակ—գրական, մտավոր, հասարակական—թաքնվում էր մարդկային ոգու, քառասուն հարյուրամյակների քաղաքակրթության, հենց կյանքի, կյանքի իմաստի արժեքի միևնույն ժխտումը... Բայց քանի որ այդ երիտասարդությունը բոլորովին հակված չէր ինքնասպանության, կյանքի բնազդը նրան մի ելք էր հուշում. կործանում։ Կործանման մեջ նրանք սատանայական մի վայրագություն էին մտցնում։ Նրանք ճայթյունն ու որոտը ողջունում էին երիտասարդ վայրենիների ցնծությամբ. որքան շատ ավերակներ, այնքան ավելի շատ ընդարձակություն նրանց անկանոն մտքերի համար։ Իսկ եթե նրանք որոշեին թողնել գանգամաշկերով այդ պարը և կանգնել պայքարի ուղու վրա, ապա նրանց համար շատ դժվար կլիներ այդպիսի ուղի ընտ-

րելը։ Երբ ամեն ինչ ժխտում ես, ինչի՞ համար գործել։ Այն բանի համար, որ ոտքերը, ձեռքերը, ամբողջ էությունը—այդ թվում գլուխը—առանց դրա չեն կարող։ Բայց, սատանան տանի, իսկ ինչպե՞ս գործել։ Ո՞ր ուղղությամբ։

Քսան տարեկանում միշտ շատ են խոսում գործելու մասին, բայց գործել մեծ մասամբ թողնում են ուրիշներին։ Իսկ 1918 թվին հեշտ չէր գտնել, թե ում վստահել գործելը—մահերը չափազանց շատ էին։ Հանգիստ դարաշրջաններում միշտ սիրեցյալների մեծ ընտրություն կա—գրողների կամ հռետորների,— որոնց վրա երիտասարդությունը կարող է հույս դնել։ Իսկ քանի որ այդ արշավաձիերը համարյա չեն արշավում և նրանք հարկադրված չեն լինում խոշընդոտներ հաղթահարել, ապա նրանց վրա կարելի է գրազ գալ երկար ժամանակ և առանց ռիսկի։ Սակայն պատերազմի ժամանակ գրեթե բոլոր քնձոտ ձիերը ընկան ցեխի մեջ։ Իսկ մի քանիսը, որ կենդանի էին մնացել, հենց որ խաղաղությունը վրա հասավ, սկսեցին սայթաքել։ Ոչ ոք հույսեր չարդարացրեց։ Մի քանի շաբաթում ամեն ինչ վերջացած էր։ Հին գվարդիան՝ վերացված։ Երկու թշնամական լագերներից զույգ կուռքերի—Կլեմանսոյի և Վիլսոնի—փորը թափված էր. մեկից թեփն էին թափել, մյուսից՝ արյունը—ուրիշի արյունը։ Կեղծ վագրը փոխվել—դարձել էր ոստիկանական շուն։ Իսկ ինչ վերաբերում է իսկական ամերիկյան բարոյախոսին, որը տասնչորս կետ էր քարոզում, ապա նրանից ոչինչ չմնաց։ Խաբված ժողովուրդների արդար անարդարության պատճառով հենց նրա դեմ էլ շրջվեց համընդհանուր զայրույթը։ Խճճված գլուխներն սկսեցին պայծառանալ։ Հիմա նրանք դատարկ էին, անսահման դատարկ... Անդունդ... Ինչով ուզում եք, բայց դատարկությունը պետք է նորից լցնել։

«Հինգով» (բացի Վերոնից) սպառեցին դեպի պրակտիկ գործողությունն ունեցած իրենց վերջին կարողությունները։ Սորբոնի առաջ Վիլսոնի պատվին տեղի ունեցած ցույցում, այն Վիլսոնի, որին նրանք երրորդ օրը ամոթից շպրտեցին աղբարկղը։ Հիմա նրանք զուր էին իրենց շուրջը փնտրում կենդանի դասեր և գործունեության օրինակներ, որոնցից կարելի լիներ կառչել։ Միակը, ում նկատմամբ նրանք դեռ պահպանել էին իրենց հարգանքը, որովհետև նրա խոսքերի

ազնվությունը գործողությամբ խստորեն ստուգվել էր պատերազմում և հաստատվել նրա կյանքի ստոիցիզմով, դա Ալենն էր։ Նա քարոզում էր ոչ բավականաչափ կոփված խառնը-վածքների համար սոկրատյան վտանգավոր ուսմունքը՝ ոգու ազատությունը քաղաքացիական հնազանդության պարտքից լիովին անջատելու վերաբերյալ։ Նա սովորեցնում էր—և իր ուսմունքը հաստատում էր անձնական օրինակով—մահվան գնալ, եթե դա պետք է, հանուն պետության, եթե անգամ դատապարտում ես նրան։ Բայց էներգիայի գիտակցական գործադրման այդ քարոզը դուրս չէր գալիս ինտելիգենտների ոչ մեծ մի խմբակի սահմաններից և ենթարկվում էր ռիսկի. թույլ հոգիները, որոնք շարժառիթներ էին փնտրում, որպեսզի խուսափեն գործունեությունից և նրա հետ կապված վտանգներից, կարող էին այդ քարոզը մեկնաբանել որպես խղճի պլատոնական բողոք, որը իրականում պատրաստ էր կոմպրոմիսի գնալ։ Ի՞նչ է նշանակում— «Հնազանդվել հրաժարվելով»։ Հնազանդվե՞լ։ Թե՞ հրաժարվել։ Գործողությունն անհամատեղելի է «այոյի» և «ոչի» միջև խաղի հետ։ Գործողությունը կացին է, նա կտրում և երկու մասի է բաժանում Janus bifrons[1], որպեսզի հասկացված լինել, Ալենի ուսմունքը պահանջում էր առնվազն կամքի տևական և համբերատար լարվածություն և անսահմանափակ ժամանակ։ Սակայն հենց դա էլ մեր տղաներն ամենից քիչ ունեին. ժամանակ և համբերություն։ Աշխարհը, որ դուրս էր եկել պատերազմի արգանդից, ինչպես Հովհանը կետի որովայնից, սլանում ու սլանում էր բոլիդի արագությամբ։ Շո՜ւտ, շո՜ւտ։ Ալենն արդեն չէր հասցնում նրա հետևից։ Մինչպատերազմյան սերնդի կենդանի մնացած բոլոր լավագույն ներկայացուցիչների նման նա սովոր է ապրել և մտածել հարյուրամյակների մասշտաբով։ Ամբողջ հնգյակից Ադոլֆ Շևալիեն միակն էր, ում խառնվածքը դեռ կարող էր հարմարվել այդ շնչի ռիթմին, հանդարտ ու խոր, ինչպես գյուղացու շնչառությունը։ Բայց, դժբախտաբար, Շևալիեն պատրաստված էր ոչ բավականաչափ ամուր բարոյական խմորից, որպեսզի

---

[1] Ծրկդեմ Յանուսին (լատ.)։

ընդուներ Ալենին և չաղավաղեր նրան։ Նա փորձում էր սոփեստությունների օգնությամբ Ալենի մոտ որևէ արդարացում գտնել իր փիլիսոփայության համար, որը խաղաղություն ու կոմֆորտ էր պահանջում։ Սիմոն Բուշարը իր չվատնված ուժով Ալենին, որպես մարդու, ավելի մոտ էր և սիրում էր նրա մեջ մարդուն ավելի շատ, քան նրա գաղափարները։ Ալենի կոպիտ, անկեղծ ազնվությունը Բուշարին ստիպեց շատ շուտ հեռանալ նրանից և նետվել փընտրելու մի որևէ ուրիշ ուսմունք, որը նրան գդրծելու հնարավորություն կտար։ Գործելու այնպես, ինչպես նա հասկանում էր,— բռունցքներով։ Հեղափոխությունը նրան իր կողմը քաշեց։ Բայց այդ առաջին, որոշող, վեց ամիսների ընթացքում, որոնք հաջորդեցին զինադադարին, այստեղ, Արևմուտքում, հեղափոխության մասին ունեցած պատկերացումը դեռ մի տեսակ անպարզ էր, անձև։ Կազմակերպող սկզբունքներից զուրկ պարտիաները դոփում էին տեղում, ինչպես ձեռնափայտով պատին խփվող կույրը։ Դեռ ոչինչ որոշակի հայտնի չէր Ռուսաստանի մասին, որը պաշարված էր Կլեմանսոյի զորքերով։ Միայն այդ զորքերի միջոցով և նրանց խռովության շնորհիվ կսկսի եկող տարվա ապրիլին տեղ հասնել ճշմարտությունն այն մասին, որ պետական գործիչներին, ֆրանսիական հեղափոխության ռենեգատներին, չհաջողվեց խեղդել իր շղթաները փշրող ժողովուրդ-հսկային։

Հաղթանակի-Պարտության այդ առաջին ամիսներին երիտասարդության բոլոր հիասթափությունների մեջ ամենաճնշողը (դա բարձրաձայն չէին ասում,— դրա ընդունելը չափազանց ծանր էր) բանակի վերադարձն էր,— նրանց ավագ եղբայրների վերադարձը։ Նրանց փորձից, միակ փորձից, որը երիտասարդությունը կասկածի տակ չէր առնում, քանի որ դրա դիմաց արյամբ էր վճարված, երիտասարդությունը պատասխան էր սպասում այն հարցին, թե ինչպես ապրել։ Միայն նրանց ներկայությամբ էր, որ երիտասարդությունն իրեն համեստ ու լուռ էր պահում։ Նա տագնապով սպասում էր, թե ինչ կասեն ավագները։ Բայց ավագները ոչինչ չէին ասում։ Նրանք նույնպես լռում էին։ Նրանք խուսափում էին հարցերի պատասխաններից։ Նրանք խոսում էին միայն նո-

րից ձեռք բերված կյանքի մասին։ Նրանք շտապում էին վերադառնալ առօրյայի ցանցը, իսկ ցանցը հյուսված էր այն նույն շղթաներից, որոնց միջից այդ պատանիները այնպես ձգտում էին դուրս պրծնել։ Ամենից վատն այն էր, որ մի քանի օր կամ շաբաթ հետո ոմանք արդեն հասցնում էին կրկին հարմարվել ստախոս և վախկոտ թիկունքի պայմանականություններին և, որպեսզի ավելի լավ ներգրավվեն նրա կյանքի մեջ, սկսում էին պարծենալ և ստախոսել։ Եվ միայն երկու ձակատային ընկերների վայրկենապես միմյանց հետ փոխանակվող հայացքն էր, որ կարող էր մատնել նրանց գաղտնի փոխըմբռնումը։ Բայց կրտսեր եղբայրներին, որոնք տանն էին մնացել և սպասում էին հիմա, աղերսում, որպեսզի մեկնումեկն իրենց ասեր խորհրդավոր խոսքը, ոչ ոք ոչինչ չէր ասում։ (Ավա՜ղ։ Գուցե նրանք ասելու բան էլ չունեին։ Նրանք խոսելուց ետ էին վարժվել։ Խոսքերից ի՞նչ օգուտ)։ Դա մեծ Դավաճանություն էր։ Թվում էր, նրանք վրեժ են լուծում իրենց հայրերի և եղբայրների դավաճանության համար, որոնք, թիկունքում մնալով, իրենց էին ուղարկում հանուն կեղծիքի մեռնելու։

Հնգյակը կամ, ավելի ճիշտ, յոթնյակը (եթե նրանց պտույտի շրջանակի մեջ ներառնել, ինչպես մեր արևային համակարգում, երկու կանացի մոլորակ) արդեն մի փորձ չէր, որ արել էր, բայց այդ փորձերից նրանց հոգում դառնություն էր մնացել։ Մի անգամ երեկոյան նրանք ավագներից մեկին բերին Ռյուշի մոտ։ Դա Բուշարի էպարժի տակ սպանված եղբոր բարեկամն էր։ Նա լիցեի հպարտությունն էր և այդ լիցեյը ավարտեց, պսակավորված աղմկալի (և շատ խաբուսիկ) հույսերով, որոնք ուսուցիչների և ընկերների միջավայրում սովորաբար առաջանում են որպես դասերի մեջ ունեցած հաջողության հետևանք։ Բայց այդ ժամանակ պատերազմը նրան վերցրեց և պահեց առաջին օրից մինչև վերջինը, եթե չհաշվենք հարկադրական հանգստի երեք շրջանները և վիրավորվելուց հետո հոսպիտալներում վերանորոգվելը։ Հեկտոր Լասսյուն ստացավ բոլոր հերոսական նշանաքուղերը, հետևապես կարելի էր հույս ունենալ, որ կրտսերների համար նա կլինի անվեհեր և հավատարիմ խորհրդատու։ Բուշարն իր կոմպանիային ցույց էր տալիս պատերազմի

առաջին երկու տարվա նրա գրած նամակներն իր եղբորը և եղբոր պատասխանները նրան, և այդ նամակներում երկու բարեկամներն էլ բարձրաձայն հայտարարում էին վերադառնալուց հետո տունը կարգի բերելու իրենց հաստատ մտադրության մասին։ Բայց հետո մեկը լռեց. նրան սպանեցին։ Իսկ մյուսը, որ կենդանի էր մնացել, այլևս չէր խոսում։ Նա ֆիզիկապես շատ չէր փոխվել. հասունացել էր, մեծացել, մաշկը կարմրել էր, ինչպես թրծված կավը, թերևս, ամրացած տեսք ուներ (նա ի ցույց չէր դնում իր դառնությունները, ճեղքերն օրգանիզմի, որը երերել էին երկրաշարժի տագնապներն ու սարսափները)։ Նա պարզ և սրտակից տղա էր, գիտեր ծիծաղել։ Նրա շարժումները մի քիչ կոպիտ էին առաջին օրերը, քանի դեռ չէր ընտելացել կենդանի մարդկանց աշխարհին, բայց դրանք շատ շուտ սովորական դարձան։ Հեկտոր Լասսյուն չէր դրսևորում անտառային բնակիչների այն ցինիկ կոպտությունը, որը շատերը ճակատից էին բերել և որով հաճախ զարդարվում էին նրա երիտասարդ ընկերները. նա քնքշագին հեգնանքով նայում էր, թե նրանք ինչպես են կատարում իրենց դերերը։ Մեղմ, հոգնած ժպիտը լուսավորվում էր նրա աչքերի խորքում։ Ոչինչ բաց չթողնելով, նրանք ննջում էին և երազում։ Վերականգնում էին իրենցից գողացված քնի ժամերը, մաքուր և պարզ կյանքի ցերեկներն ու գիշերները,— անմիտ, աննպատակ կյանքի, որը ոչ անցյալ ուներ, ոչ ապագա գիտեր, որը եզրեզր լցված էր ներկայով,— ափեր չունեցող այդ գետով։ Այդքան տարիների ընթացքում զազրելի գիրկ ունեցող մահվան հետ մշտական հարևանությունը նրանց զրկել էր լալկան ուռենիների ստվերից, ջրերի թարմությունից, կյանքի ամբողջ վիթխարիությունից, որը հոսում է, մշտապես փոխվելով ու մնալով միևնույնը, աշխարհների խաղաղությունից, որոնք գնում են, գնում են, գնում և շարունակ վերադառնում։ Նրա առջև պտտվող ու սեթևեթող այդ տղաներից ոչ մեկը դա նույնիսկ չէր էլ ենթադրում։ Նրանք երբեք զրկված չէին եղել այդ ամենից, նրանք սովոր էին ջրում չփչփացնել և չէին զգում այդ ջրի ազդեցության բարերարությունը։ Արդյո՞ք դա պետք է փորձել բացատրել նրանց։ Անչափ հոգնեցուցի՜չ է. Մի օր կհասկանան։ Թող ամեն մեկն իր վրա սովորի։ Չէ՞ որ իմ

դասի համար ես ինքս եմ վճարել... Այդ տղաներին, որոնք աչքերը հառել էին նրան, ինչպես ատրճանակն են դնում քունքին, և համառորեն ու զայրույթով հարցնում էին, թե նա ինչպես է պատկերացնում ապագան, ինչ է մտադիր անելու, նա ծաղրանքով ու հոգնած պատասխանում էր.

—Հեռանալ։

Նրանք վեր թռան.

—Ո՞ւր։

— Որևէ տեղ։ Իմ անկյունը, իմ սենյակը, իմ դաշտը։

— Եվ դու այնտեղ ի՞նչ ես անելու։

— Ապրելու եմ։

—Ո՞նց թե։ Եվ ուրիշ ոչի՞նչ։ Նույնիսկ չես էլ գրելո՞ւ։

— Ես ուրիշ ոչ մի ցանկություն չունեմ։

— Բայց արդյո՞ք դա ապրել է նշանակում։

— Այդպես է որ կա։ Հենց դա էլ կյանքն է...

— Բացատրիր։

— Դա հնարավոր չէ բացատրել։

— Եվ դա այն ամենն է, ինչ դու այնտեղից դո՞ւրս ես բերել։

— Ինձ համար բավական է։ Եթե ձեզ ավելի շատ է պետք, ստիպված պետք է լինեք ինքներդ գնալ այնտեղ։ Ինչ վերաբերվում է ինձ, ես իմ հասանելիքը վճարել եմ։

Երբ նա գնաց, յոթն էլ իրար նայեցին—գունատ, կարմրատակած, գազազած, ընկճված։ Բուշարը, աչքերը պտտելով, ասաց.

— Սրիկանե՜ր։ Պատերազմը կռտել է մեր բոլոր տղամարդկանց։

Ինչ վերաբերվում է քչերին, ովքեր պատերազմի ժամանակ դուրս էին գալիս այդ պատերազմի դեմ, ովքեր գոտեմարտի վրա բարձրացնում էին մտքի դրոշը,— պատերազմի տերերը դիվային անամոթությամբ կարողացան խարանել նրանց «պարտվողական» մականունով։ Եվ այդ ազատամիտ երիտասարդներից նույնիսկ ամենաազատամիտներդ, նրանք, ովքեր գիտեին այդ վիրավորական մականվան ամբողջ անհեթեթությունը, վախենում էին, չլինի թե հանկարծ իրենք արժանանան դրան։ Հոգու խորքում նրանք, գուցե, որոշ չափով նույնիսկ արհամարհում էին նրանց, ում այդ մակա-

նունը չէր վախեցնում։ Մինչդեռ պետք էր հանդուգն ու մարտական մի շարժումով, խիզախ համարձակությամբ այդ մականունը վերցնել որպես դրոշ, ինչպես այն ժամանակ վարվեցին նիդեռլանդական «գյոզերը»[1], բայց այդ պատանիների թուլությունը նրանց չափից ավելի ողջամտության մեջ էր, նրանք վախենում էին մտքի բռնի ներգործությունից, նրա ծայրահեղություններից։ Մինչդեռ ծայրահեղությունները հետպատերազմյան սերնդի երիտասարդների համար նորմա էր։ Եվ պատերազմով թունավորված Արևմուտքի աչքում, քանի դեռ նրան չէր կպել հնդկական Քրիստոսի[2] լույսը, բռնությունից հրաժարվելը նշանակում էր իմաստից հրաժարվել։ Այդ երիտասարդների համար տղամարդ լինելը նշանակում էր «բռնադատել», նշանակում էր «բռնադատում»։

Աշխարհի ավերված արոտավայրում, որտեղ նորից էր աճում փարթամ կանաչը, այդ դատարկապորտները, որոնք պարծենում էին նրանով, որ «եզներ չեն եղել», այդ ցլիկները, որոնց անհանգստացնում էր սկսվող հասունացումը, հորթեր էին փնտրում, որ նրանց հետ զուգավորվեն։ Եվ, սատանան տանի, երկոտանի հորթերի պակաս չէր զգացվում։ Բայց նրանք հաշիվ չէին. նրանք անչափ շատ էին։ Իսկ անչափ շատը—անչափ քիչ է։ Նրանք ուրիշ բան էին ուզում. նրանք ուզում էին բռնել գաղափար-ուժի, գաղափար-հորթի, գաղափար-բեղմնավորողի բաշից, որոնք կարող էին վերածնել Ֆրանսիան ու Եվրոպան։ Բայց որտե՞ղ գտնել նրանց։ Իզուր էին նրանց ձեռքերը պրպտում մթության մեջ, նրանք նողկանքով էին բաց անում իրենց մատները։ Նրանք ամբողջ ժամերով թափառում էին քաղաքական և մետաֆիզիկական հասկացությունների քաոսի միջև, քանի որ նրանք ամեն ինչ լցնում էին մի կույտի վրա, իսկ որովհետև նրանց մոտ ոչ մի հարցում պարզություն չկար, ապա նրանք մշտա-

---

[1] Իսպանական տիրապետության դեմ Նիդեռլանդների պայքարի ժամանակ (XVII դ.) նիդեռլանդական հայրենասերները, որոնց իսպանական արքունիքում արհամարհական ձևով կոչում էին «գյոզեր» (gueux բառից, որ նշանակում է մուրացկաններ), որպես մարտահրավեր սկսեցին իրենք էլ իրենց այդպես կոչել։

[2] Նկատի է առնված Գանդին։

պես ընկնում էին ընդհանուր տեղեր,— այնքան ընդհանուր, որ ամեն անգամ անխուսափելիորեն թաղվում էին մինչև ականջները։ Ինչպիսի հարց էլ որ նրանք փորձեին շոշափել, նրանք երբեք չգիտեին որ կողմից մոտենալ դրան, ինչից սկսել, նրանք ոչ մի բանից մինչև վերջը գլուխ չէին հանում. յուրաքանչյուրը մի քիչ ավելին գիտեր, քան մյուսները (մի քիչ ավելի քիչ է, քան ոչինչը), գիտեր որևէ մասնակիի մասին, որի մեջ մյուսների առաջ բացվում էր անհայտության անդունդը։ Նրանք սուզվում էին։ Նրանք թափառում էին։ Նրանց հաջողվում էր ճահճից դուրս մագլցել միայն աշխարհում ամեն ինչի ու իրենց նկատմամբ ունեցած հեգնանքի, ժխտման ու բռնության շնորհիվ։ Ամենաշատ լրջությունը Մարկն էր դնում վեճերի մեջ և ավելի անկեղծորեն խոստովանում, որ ոչինչ չգիտի։ Նա դառնությամբ էր այդ խոստովանում։ Բեսը դրա համար նրան ավելի քիչ էր հարգում, իսկ Ռյուշը՝ ավելի շատ, բայց գաղտնի։ Նա հետևում էր Մարկին։ Բուշարն արհամարհանքով ուսերը թոթվում էր. «Նախ և առաջ գործել։ Հետո կհասցնենք իմանալ»։ Շևալիեն շրթունքները սեղմում էր և լռում։ Նա չափազանց գիտակից էր՝ իր անգիտությունը չհասկանալու, չափազանց հպարտ՝ այդ անգիտությունն ընդունելու համար։ Վերոնը ոմբակոծում էր դատարկությունը։ Սենտ-Լյուսը ժպտում էր։ Նա ծիծաղում էր Մարկի և մյուսների վրա։ Դա նրան չէր խանգարում, այնուամենայնիվ, իր ընտրությունը կատարել նրանց միջև։

Սիրտը ուզածի չափ թափառելով անհայտության խորքերում,— աշխարհ, գործողություն, վաղվա օր,— այդ պատանի բուրժուական ինտելիգենտները վերադառնում էին ճանճերի նման դեպի մաթը, դեպի գրականությունը։ Դրա մեջ էր նրանց հույսի նշույլը։ Այստեղ նրանք փորփրում էին շաքարն ու թերմացքը։ Ամեն մեկն իր սիրելի անկյունն ուներ մրգաջրամանում և, կուշտուկուռ ուտելուց հետո, փառաբանում էր այն։ Վերոնը սյուրռեալիստ էր։ Շևալիեն խոնարհվում էր Վալերիի առաջ։ Սենտ-Լյուսը «հայտնագործեց» Պրուստին, Կոկտոյին և Ժիրոդուին։ Բուշարը՝ Զոլային և Գորկուն։ Մարկը՝ Տոլստոյին և Իբսենին... Մարկը ետ էր մնում։ Բայց նրանք, ովքեր այդ առիթով ձեռ էին առնում նրան, մեծ դժվարության առաջ կկանգնեին, եթե նրանց

առաջարկեին քննադատության ենթարկել Մարկի ընտրությունը. Տոլստոյին ու Իբսենին նրանք գիտեին միայն անուններով։ Այն տարիներին, պատանի ծովագնացներն իրենց հայտնագործություններն անում էին շատ հեշտ. նրանց համար ամեն ինչ Ամերիկա էր։ Ռյուշը հենց նոր շատ հանգիստ հայտնագործել էր Ստենդալին և պահպանում էր նրան իր համար։ Փոքրիկ «կրետը» չէր սիրում իր մեղրը կիսել։ Բետը ոչինչ չէր «հայտնագործել», բայց ուրիշի ասածից հաճույքով ամեն ինչ ընդունում էր. ամբողջ շաքարը և բոլոր համեմունքները։ Ճիշտ է, նրա սիրտը մեկ-մեկ խառնում էր, բայց նա անկշտում էր, համարձակ ամեն ինչ կուլ էր տալիս։

Գալիս էր մի պահ երբ նրանց բերնում անախորժ մի համ էր հայտնվում։ Նրանք թմրած, հագեցած սկսվում էին, դրժվարությամբ որոճալով ու մտավոր ործկոցից տառապելով, ծանր, անիմաստ հայացքով իրար էին նայում։ Բայց և այնպես նրանք պատրաստ էին այդ ձևով անցկացնել ամբողջ գիշերը, ալարկոտ ու թույլ նստած սեղանի շուրջը աղչկական սենյակում, որը նրանք այդքան ժամերի ընթացքում թունավորում էին իրենց սիգարներով, իրենց շնչով, իրենց դատարկությամբ։ Նրանք այդտեղ կնստեին ամբողջ գիշերը, որովհետև ուժասպառ վիճակում էին, որովհետև ի վիճակի չէին ոչ մի ջանքի։ Նրանք գամված էին աթոռներին այն բանի հավիտենական սպասումով, ինչը չէր գալիս, և թաքուն մի վախով, որ իրենք այդպես էլ ստիպված կլինեն միմյանցից հեռանալ՝ առանց որևէ բանի հասնելու։ Հենց այդպիսի րոպեներ էր Ռյուշն ընտրում հիշեցնելու համար, որ ինքն այստեղ տիրուհի է։ Նա կզակը բարձրացնում էր և հաստատորեն հայտարարում.

— Բավական է։ Ես իրավունք ունեմ ապրելու։ Դուք իմ ամբողջ օդը կերաք։ Ես բացում եմ դուռն ու լուսամուտները... Գազաններ, քնեցե՛ք։

Եվ ձեռքի վճռական շարժումով, որ երկար էր ու նիհար, ինչպես քուատրոչենտոյի կանանց ձեռքը, նա դուրս էր հանում նրանց դեպի սանդուղք։

Նրանք հայտնվում էին գիշերային ցրտում, մշուշի և ցեխերի մեջ։ Եվ այդտեղ նորից բախվում էին այն բանի հետ,

ինչն անջատում էր իրենց. նրանք սկսում էին շերտավորվել։ Ոմանք կարող էին պարզապես տուն գնալ և հարմարավետ պառկել անկողնում, ոմանք էլ պետք է մտածեին վաղվա հացի մասին։ Վերոնը և Շեալիեն գնում էին Բետի հետ։ Եթե տաքսի էր անցնում, Վերոնը կանգնեցնում էր տաքսին, Շեալիեին թողնում էր մայթի վրա և վերցնում Բետին, որպեսզի տուն տանի (ինչպե՞ս նա հավատացնում էր)։ Մյուս երեքը մի քանի րոպե քայլում էին միասին։ Սկսվում էր լուությունը։ Սենտ-Լյուսը քնքշորեն Մարկին թևանցուկ էր անում։ Մարկին դա ոչ մի բավականություն չէր պատճառում. նա սառնորեն թույլ էր տալիս վերցնեն իր անկամ թևը։ Սենտ-Լյուսը չէր կարողանում դիմադրել ևս որևէ անմտություն դուրս տալու պահանջին, որի մեջ, այնուամենայնիվ, ավելի շատ իմաստ էր լինում, քան թվում էր. նրան հարկավոր էր բեռնաթափել իր կապարճը, և նա մնացած նետերը բաց էր թողնում այս-օրվա խոսարանի և խոսողների վրա։ Բայց մյուս երկուսը մռայլ էին, և Սենտ-Լյուսի հրթիռները շպրտվում էին ցեխի մեջ։ Սենտ-Լյուսը զգում էր նրանց օտարությունը, բայց ամենևին դրա վրա չէր զայրանում։ Նա չափազանց հեռու էր նրանց բոլորից և իր համար լրացուցիչ զվարճանք էր գտնում իրենից գլուխներն ազատելու նրանց բուռն ցանկության մեջ։ Այնուհետև բոլորովին անսպասելի Սենտ-Լյուսը լքում էր նրանց, ճարպկորեն կտտացնելով յուրաքանչյուրի քթին. նրանք չէին հասցնում ուշքի գալ, երբ Պեկն արդեն անհետանում էր խավարում։ Բուշարը, կատաղած, միանգամից շրջվում էր և բախտաբերի բաց թողնում մշուշի մեջ սաստիկ հայհոյանքի լիցքը Կազիմիրի հասցեին։ Երբ, հոգին թեթևացնելով, նա հանդարտվում էր, Մարկի հետ, վերջապես, անցնում էին գաղտնի առարկային, իրենց այրող հոգսերի գլխավոր առարկային. «Ինչպե՞ս ազատ լինել, ինչպե՞ս դառնալ ազատ, եթե չգիտես ինչով կերակրվել»։ Բուշարը հազվադեպ էր ապահով զգում իրեն վաղվա օրվա համար, և երբեք՝ հետագա օրերի։ Մարկին կերակրում էր մայրը, և նա գիտեր, թե մոր համար դա ինչքան դժվար խնդիր է՝ երկուսի համար ապրուստ հայթայթելը։ Նա կարմրում էր այն մտքից, որ, չնայած միայն իր վաստակած հացով ապրելու վճռին, ինքը շարունակում է մոր հաշվին ապրել։ Այն, ինչ ինքը վաստակում էր, չէր

բավականացնում նույնիսկ կես ճաշի համար։ Նա մշտապես ստիպված էր լինում ուտելու բան ուզել այդ կնոջից, որն իրեն հյուծում էր ուժերից վեր աշխատանքով... «Բավակա՞ն է։ Ինչ էլ ուզում է լինի, պետք է նետվել ջուրը և լողալ սեփական ուժերով...»։

Ախ, ինչ անհեթեթ օպերային ներկայացում էին հիմա նրանց թվում բոլոր տեսակի մտավոր հոգսերը, արվեստի, գրականության, քաղաքականության և այն աշխարհի մասին բոլոր այդ վեճերը, բուտաֆորային սրերի այդ ամբողջ շաչյունը, որոնցով նրանք սուսերամարտում էին։ Գեղեցկությունից առաջ, գաղափարից առաջ, խաղաղությունից առաջ, պատերազմից առաջ, մարդկության ապագայից առաջ—ստամոքսն է։ Այդ ստամոքսն ուտելիք է ուզում... Լռեցրո՛ւ նրան։ Կերակրի՛ր այդ ստամոքսին։

Աննետան արդեն չէր կարողանում հաղթահարել իր կրկնակի ծանրաբեռնվածությունը. նրա ամբողջ ուժը դրան չէր բավականացնում։ Ապրուստի միջոցներ գտնելը այն միջավայրում, որի հետ ինքը կապված էր, գնալով ավելի էր դժվարանում։ Հին տիպի մի՛ջին աշխատավոր ինտելիգենցիայի մի ամբողջ դասակարգ—լիբերալ բուրժուազիայի լավագույն, ամենաազնիվ և ամենաանշահախնդիր մասը, այրվում էր մարմանդ կրակի վրա։ Նրան ավերեցին և կործանեցին պատերազմը, քողարկված սնանկությունը, դժվարությամբ կուտակած խնայողությունների կորուստը, չնչին վաստակը և նոր պայմաններին հարմարվելու անհնարինությունը, որոնք պահանջում էին ուրիշ տեսակի, գիշատիչների ցեղին պատկանող մարդկանց։ Ինչպես և նրա քույրերը. իրենից առաջ պարտված գերմանական և ավստրիական մտավորականները, նա ատոիկորեն, առանց զայրույթի աղաղակների դանդաղ մարում էր։ Արդեն առաջին անգամ չէր, որ պատմությունը գրի էր առնում նման աղետներ, որոնք ոչնչացրել էին հին մարդկային բազմության առավել ազնիվ մասերը։ Այդպիսի կործանումները անխուսափելիորեն տեղի են ունենում մեծ պատերազմներից և հասարակական ցնցումներից հետո։ Բայց պատմությունը նրանց վրա կանգ առնելու սովորություն չունի։ Պատմությունն ստեղծում են

կենդանի մարդիկ, և նրանք քայլում են մեռած մարմինների վրայով՝ նախապես թալանելով նրանց։ Ավելի վատ նրանց համար, ովքեր տապալվել են։ Թող նրանց գերեզմանները ծածկվեն խոտով, և—լռությո՛ւն։

Աննետան տապալվելու մտադրություն չուներ։ Նա ամուր ոտքեր ու ձեռքեր ուներ։ Ոչ մի աշխատանք նրան չէր սարսափեցնում։ Աննետան ուժեղ էր և ճկուն։ Նա գիտեր հարմարվել... Սակայն բացի այն բանից, որ նրա դասակարգի մարդիկ ապրում էին ծանր պայմաններում, Աննետան հանդիպում էր զուտ անձնական դժվարությունների, որոնք միայն ու միայն իրեն էին վերաբերվում։ Իր սեփական միջավայրում՝ միջավայրում բուրժուական ինտելիգենցիայի, որն ինքն էլ էր սուղ ապրում, Աննետան ամեն մի քայլում հանդիպում էր անբարյացակամ վերաբերմունքի։ Այնտեղ հայտնի էին նրա պատերազմական ժամանակի հայացքները և հենց դա էլ չէին ներում նրան։ Մանրամասնություններ ոչ ոք չգիտեր, միայն գիտեին, որ նա հաղորդակից է «միջազգային պարտվողականությանը» (երբ այդ երկու բառը կողքկողքի են գտնվում, ցույց են տալիս մի մեղք, որը քավության չի ենթարկվում)։ Աննետան հայրենիքի և պատերազմի սուրբ Ֆեմայից խուսափելու անզգուշություն ուներ։ Ի՞նչ անամոթություն։ Բայց ետդարձի ճանապարհ չկա։ Աննետան ինքն էր իր այդ ճանապարհը կտրել։ Նրա ծանոթները միմյանց հետ պայմանավորվածություն չունեին, բայց Աննետան ամենուրեք փակ դռների և անթափանցելի դեմքերի էր հանդիպում։ Նա տեղ չունե՞ր ոչ պետական դպրոցում, ոչ մասնավոր։ Ոչ մի դաս բուրժուական տներում, որոնք առաջ նրա համար բաց էին։ Նրա նամակներին չէին պատասխանում։ Մի պրոֆեսոր, որի դասախոսությունները նա, իր ժամանակին, լսել էր Սորբոնում և որը միշտ որոշակի մասնակցություն էր ունենում Աննետայի կյանքում, պատասխանեց նրան «P. P. C.»[1] այցետոմսով։ Աննետային բոյկոտի էին ենթարկել... Ա՜խ, հին, անուղղելի համալսարանական բուր-

[1] P.P.C.—Pour prendre congé, այսինքն՝ հրաժեշտ տալու համար։ Սովորաբար դա ուղարկվում է այն դեպքերում, երբ մեկնելուց առաջ չի հաջողվում անձամբ հրաժեշտ տալ։ Տվյալ դեպքում—ծանոթության խզում։

ժուազիայի այդ պինդ և համառ ճակատնե՞ր։ Նրանց համար բնորոշ են մեծ առաքինությունները։ Ինքնահրաժարման ոգին նրանց հարազատ է դարձնում Հռոմի ստոիկների և հին Ֆրանսիայի բարոյախոսների վեհ տիպարների հետ, որոնց նրանք անչափ լավ էին ուսումնասիրել։ Բայց նրանք իրենց համար ստեղծել էին մտածողության անդրդվելի անհանդուրժողության պաշտամունք և հերթականությամբ հավատարմության երդում են տալիս միայն իրենց Աստծուն, իրենց Թագավորին, կամ իրենց Օրենքին, իրենց Հայրենիքին։ Նրանց քթանցքները դեռ ներս են քաշում հերետիկոսների և ուխտադրուժների եթե ոչ մարմինների, ապա հոգիների հոտը, հերետիկոսներ և ուխտադրուժներ, որոնց խարույկի վրա այրում են իրենց հավատի խորհրդանիշը չընդունելու պատճառով։ Սակայն թող նրանց չդատեն այն բանի համար, ինչին իրենք հավատում են լոկ խոսքերով և խուսափում են իրենց հավատի բեռը տանելուց։ Մենք նրանց չենք խառնում այն շատ արտադրող գրչակների հետ, որոնք տունը, վառարանի մոտ նստած, իրենց Տիրտեյներ են ձևացնում, թաքցնելով հետույքները շրապնելից, որ կարող էր վայրկենապես փախուստի մատնել նրանց, և խրամատային բնակիչներից, որոնք վառվում են նրանց վրա կեղտոտ սապոգների իրենց կնիքը դնելու ցանկությամբ։ Այդ անդրդվելի բուրժուաները պատերազմին իրենց արյունն էին տալիս։ Նրանց միջև ոչ մի ընտանիք չկար, որ իր բաժինը ներմուծած չլիներ։ Աննետային դա հայտնի էր։ Նա դաժանության համար չէր դատապարտում նրանց։ Վշտի անմարդկայնությունը մարդկային է, անչափ մարդկային։ Հատկապես, եթե վիշտը վստահ չէ, որ չի սխալվել, որ խաբեբա-քրմերը զոհին չեն դրել կասկածելի զոհասեղանի։ Բայց քանի որ դա ընդունելը կնշանակեր հասնել ծայրահեղ հուսահատության, վիշտը ատամները սեղմում էր և ավելի շուտ պատրաստ կլիներ մահվան գնալ, քան ընդունել իր սխալը։ Վայ նրան, ով չի ենթարկվում համընդհանուր ոգևորությանը, ով հրաժարվում է հնազանդվել, ով մի կողմ է քաշվում նախորից և արդեն դրանով էլ վնաս է հասցնում նրա հավատի խորհրդանշին։

Աննետան նորից դուրս եկավ շաբաթավարձ կամ գոնե օրավարձ աշխատանքի որոնումների, ինչպես նա այդ անում

էր քսան տարի առաջ, երբ Մարկը դեռ պառկած էր օրորոցում։ Հիմա նրա քառասունն անց էր, և, թվում էր, դա նրա համար պետք է ավելի դժվար լիներ։ Բայց դուրս եկավ ուղղակի հակառակը։ Նա իրեն ավելի ճկուն էր զգում, քան քսանհինգ տարեկան ժամանակ։ Աննետայի այդ տարօրինակ ոգևորվածությունը բացատրվում էր, թերևս, ոչ միայն պատեբազմը վերջանալու շնորհիվ առաջացած հոգեկան թեթևությամբ։ Դա արմատավորված էր ֆիզիոլոգիական հավասարակշռության վիճակի մեջ, որ երբեմն բնորոշ է կյանքի այդ շրջանի համար և որը նման է երկու ուղղաբերձ գարիվերների միջև ընկած հարթության։ Մարդը երանություն է զգում իր վերելքից, գիրդության հաղթահարումից, անդունդների շրջանցումից, ուր կարող էր գահավիժել, լավ աշխատած մկանների առողջ հոգնածությունից, լեռնագագաթների թարմ օդից, որը նա ներս է քաշում ամբողջ կրծքով մեկ։ Ինչ լինելու է հետո, այդ մասին դեռ մտածելու ժամանակ կլինի։ «Ես չեմ շտապում։ Այն, ինչ ես ունեմ, իմն է։ Օդի այս ումպը իմն է։ Ուրեմն, եկեք մի լավ շընչենք։ Մղձավանջը, որը խեղդում էր Եվրոպային և ինձ, տառապանքների ամբողջ այդ կուտակը որոշ ժամանակ ցրվեց,— որոշ ժամանակ,— որը շատ արագ կանցնի,— չէ որ ամեն ինչ անցնում է, և ես նույնպես անցնելու եմ։ Իսկ այդ ժամանակից պետք է կարողանալ վայելք զգալ։ Եվ ես կարողանում եմ...»։

Աննետան կյանքի այն շրջանում է գտնվում, երբ մարդիկ, վերջապես, հասկանում են անցնող ժամի արժեքը։ Դա լավն է, այդ ժամը, եթե ամուր ատամներ ունենաս։ Դժբախտություն չէ, որ խոտի մեջ շատ փշեր կան,— այդ խոտը խիտ է և հյութեղ, և նրան խառնված դառնությունից խոտը դառնում է ավելի համեղ։ Աննետան արածում է իր մարգագետնում։ Նա գիտի. ուրախություն լինի, թե տրտմություն, ինքը երկար արդեն չի պոկելու, պռճոդելու այդ խոտերը։ Այդ պատճառով նա իրեն չի տանջում, ինչպես որդին, այն հարցով, թե ինչ է լինելու վաղը և աշխարհի վերջը գալուց հետո։ (Դա երիտասարդների ճակատագիրն է, նա հասկացավ այդ)։ Հոգու գաղտնարաններում որդին դատապարտում էր նրան։ Երբեմն դառնությամբ այդ ասում էին Մարկի աշ-

քերը։ Նա համարում էր, որ մայրը վարվում է ինչպես բոլոր հիմիկվա մարդիկ, բոլոր այդ էգոիստները, կարճատեսները, անհոգները, բոլոր այդ, «ինձանից հետո՝ թեկուզ ջրհեղեղ»— այն բոլորը, ում նա նզովում էր։ Բայց իր մորը հո չէր նզովում։ Ընդհանուր փորձությունների ժամանակ Աննետան մի տեսակ դարձել էր իր որդու մի մասը, և որդու զայրույթը նահանջում էր իր նոթոտ դեմքի վրա ծիծաղող երկնագույն աչքերի խորհրդավոր վճիռության առաջ։ Այն, ինչ Մարկը մոր մեջ չէր հասկանում, այնուամենայնիվ դա ընդունում էր, եթե անգամ այդ նույն բանը մերժում էր ուրիշների մեջ... Անարդարացիությո՞ւն է։ Թուլությո՞ւն է։ Հետո՞ ինչ։ Լավ է անարդարացի լինել նրա նկատմամբ, ում սիրում ես։ Արդարացիությունը հենց դրանում է։ Այդ մասին դատողություններ չեն անում։

Բայց ինչո՞ւ էին, այնուամենայնիվ, դրանք՝ այդ աչքերը, ծիծաղում նույնիսկ այն տառապանքների վրա, որոնց ստվերն ընկնում էր իր սիրելի որդու երեսին, իր իսկ ժամանակի դժբախտությունների վրա, նույնիսկ իր սեփական կյանքի դժվարությունների վրա։ Կյանքը, իսկապես որ, նրան առանձնապես շատ առիթներ չէր տվել ծիծաղելու համար։ Երբ այնպես էր պատահում, որ Աննետան մտածում էր այդ մասին, նա պատրաստ էր ինքն իրեն նախատելու... Բայց մի առիթ այնուամենայնիվ կար—գաղտնի, սարսափելի, այնպիսիներից, որոնք մարդ ինքն իրեն անգամ չի՞ խոստովանում, որովհետև դրանք սեփական անձին, սեփական սրտին հասցրած վիրավորանքի են նման,— վիրավորանքի, որն հասցրել է չգիտես որտեղից, ինչ մութ խորքերից հայտնված անողոք մի ուժ... Աննետան իր ուշ ամառն էր ապրում և զգում էր, թե ինչպես է իր մեջ սկիզբ առնում տարօրինակ մի անտարբերություն, միաձուլվելով դեպի ամենաթանկ էակներն ունեցած իր ամբողջ սիրո, իր կրքերի ամբողջ հեղեղի, իր անցած կյանքի ամբողջ վերակենդանացման հետ... Անտարբերությունը այն մարդկանց, որոնք և իրենց կրքերում, և տառապանքներում, և բերկրանքներում այնքան հաճախ են դիմել Պատրանքին, որ նրա կապանքները մաշվել են և թուլացել։ Եթե այնուամենայնիվ մարմնի վրա մնում են նրանց խոր հետքերը, ապա լոկ այն պատճառով, որ դա

բավականություն է պատճառում, և մարդ ինքն է թաքուն ձգում գոտիները։ Դրանք պահում են, որովհետև դու այդ սիրում ես, որովհետև դու այդ ուզում ես, որովհետև դու ուզում ես, որ նրանք պահեն... Իսկ եթե չուզե՞լ։ Գիտենք, գիտե՞նք։ Ավելի լավ է այդ մասին չմտածել... Բայց չմտածելն ի՞նչ իմաստ ունի։ Միևնույն է գիտես։ Ազատության վճիտ, ահեղ և ծիծաղող աչքերը...

Այդպիսի գաղտնիքները չեն վստահում երիտասարդներին, և ավելի լավ է, որ մարդ ինքն էլ չխորանա դրանց մեջ, եթե նա ուզում է գործել։ Բայց երբ այդպիսի շիճուկը արյան մեջ է լցված, նա ուժեղ և հավասարակշռված խառնվածքին չի վնասում, նա չի խախտում հավասարակշռությունը, այլ միայն դնում է ավելի ամուր հիմքերի վրա։ Եվ ակտիվությունը դրանից ոչինչ չի կորցնում. նա դառնում է միայն ավելի կարծր, ավելի բերկրալի, քանի որ ազատվում է և սարսափից, և հույսից։ Նման երևույթը դժվար է բացատրել, և դրա համար բավական իմաստուն մեկնաբան չկա, բայց միայն այդ շրջանից է մարդ սկսում լիովին բավականություն զգալ կյանքից ու գործունեությունից, քանի որ մարդու բոլոր տենդագին պոռթկումները նրա համար հետայսու ողողված են այդ կուրացուցիչ լույսով, այդ հայտնագործությամբ («Բայց միայն տես հա՞, ոչ ոքի մի հայտնիր քո գաղտնիքը»), որ «ամեն ինչ—խաղ է»։

Այդպիսին էր դարաշրջանի ընդհանուր ոգին—հետպատերազմյան ժամանակի տիպական հատկանիշը։ Գործունեությունն այնքան էր սարսափելի, նրա մեջ ներգրավված կրքերն այնքան էին հզոր, որ շարունակել կարելի էր միայն թուլացնելով ոգու բարձր լարվածությունը. «խաղում էին» կյանքի հետ, «խաղում էին» սարսափի հետ, ինչպես «խաղում էին» ուրախության հետ, ինչպես «խաղում էին» սիրո հետ, պատվասիրության հետ, ատելության հետ։ «Խաղում էին» բնազդորեն, նույնիսկ իրենց չխոստովանելով... Այդ էր դարաշրջանի մեծ վտանգը, որը ժամանակավորապես վատնել էր կյանքի արժեքների զգացողությունը և որի համար ամենանշանակալից արժեքները խաղալիքներն էին դառել։ Քչերը կային, որ,— մեկը՝ շատ, մեկը՝ քիչ,— համակված չլինեին «խաղի» այդ ոգով... Աննետան, որ շատ զգայուն

էր կողքից անցնող ամեն մի հովի նկատմամբ, նույնպես ենթարկվեց վարակին, միայն թե նա խաղի մեջ մտցրեց իր սեփական ոճը։ Հմայված հոգին, Աննետան, նախատրամադրված էր դրան...

Բայց, կյանք խաղալով, նա դադարել էր հետաքրքրվել միայն իր խաղաթղթերով. նա ավելի լավ գլուխ էր հանում իր խաղընկերների խաղաթղթերից,— ոչ թե նրա համար, որ նրանց տանի, այլ նրա համար, որ նրանց փոխարեն խաղա։ Եվ եթե նրանք տանեին, Աննետան կարող էր այնպես անել, որ իր համար էլ ամեն ինչ կորած չհամարվեր։ Երբ նրանց դաշտը արդեն հավաքված էր լինում և խրձերը կապված, Աննետան այնուամենայնիվ կարողանում էր իր համար մի քանի ծիծաղի և զվարճանքի հասկ հավաքել։ Նա ձեռքը գցում էր այն բանին, ինչը վիճակախաղում իրեն բաժին ընկած անդուր վիճակներում ծիծաղելի էր, և այն բանին, ինչը ծիծաղելի էր այն տանող երջանիկների մեջ, որոնք շահագործում էին իրեն։ Նրա բուրգունդյան արյունը հաղթեց։ Ուր էր կորել նրա ամբողջ պուրիտանությունը, նրա հակվածությունը դեպի պեսիմիզմը, որը կարող էր արդարացված լինել դարաշրջանի դառնություններով և նրա անձնական ձախորդություններով։ Աննետան գնում է իր ճանապարհով, որը զերծ է լծից, նա ոչ ոքի չի ուզում խելք ու խրատ տալ, նա ոչ ոքի հետ գործ չունի։ Նրա աչքերը ծիծաղում են, և նա ինքն իրեն ասում է. «Աշխարհն այնպիսին է, ինչպիսին որ կա։ Ես նույնպես այնպիսին եմ, ինչպիսին որ կամ։ Թող նա հանդուրժի ինձ։ Չէ որ ես էլ իրեն եմ հանդուրժում»։

Նույնիսկ այդ պաշտելի որդին, ամենաթանկ Պատրանքը («Իմ գա՜նձ։ Դու էլ ես այնպիսին, ինչպես մնացյալ բոլո՜ր։ Իմ աչքերի լույս... Առանց քեզ աշխարհն ինձ համար կխա՜վարի»)— Աննետան արդեն չէր պահանջում, որ նա, դառնա իր նմանակը, որ նա մտածի, ինչպես ինքն է մտածում, սիրի այն, ինչ սիրում է ինքը... Աննետան ծիծաղում էր, իր ազատ և հետաքրքրվող աչքերով նայելով որդու հոգու խորքը և այնտեղ շիկացած աշխարհ ու ծխի փոթորիկներ գտնելով։ Օ, ամեն ինչ չէր, որ այնտեղ գեղեցիկ էր, ամեն ինչ չէր։ Աննետան տեսնում էր, թե ինչպես են վխտում բավական գարշելի կենդանիները, դաժան ու ագահ. ատելություն, հպարտու-

թյունը, հեշտանքը, բռնության ոգուց ծնված բոլոր արատները, սակայն («Փա՜ռք աստծո... Բայց արդյո՞ք ես աստծուն պետք է փառաբանեմ։ Փա՜ռք իմ արգանդին, որը քեզ ծնել է») այնտեղ ոչ մի ստոր արատներ չեն եղել... Շատ գայլի ճուտեր կան... Ինչ կա որ, երիտասարդության անտառում առանց դրանց չի լինում։ Փա՜խեք։ Ես այնտեղ եգեր եմ դրել։ Թող սովորի իր գործը»։

Աննետան ժպտում էր իր սիրելի որդուն, իսկ որդին նրան պատասխանում էր ամպրոպային հայացքով... «Ի՜նչ անսիրտ մայր ունես դու,— ուրախ մտածում էր Աննետան։— Այդպե՞ս չէ, խեղճ իմ Մարկ։ Քեզ դեռ այնքա՜ն դժվարություններ ու ճակատամարտեր են սպասում։ Իսկ քո մայրը քեզ չի՞ էլ խղճում։ Բավական է, Աննետան գիտի (դու նույնպես գիտես), որ դրա միջով պետք է անցնել, և անցնել մենակ, և դու կանցնես,— ծեծված, տանջահար, գուցե վերքեր հասցրած, բայց կոփվա՜ծ։ Ի՞նչ օգուտ այն խիզախությունից, որը չգիտի ռիսկն ինչ է, որը պահվում է անվտանգության մեջ։ Ո՞իսկ արա։ Եվ կրակի մեջ նետվիր այնքան անգամ, որքան յոթ անգամ յոթն է։ Երբ դուրս պրծնես, դու ինձ շնորհակալություն կասես»։

Ահա թե ինչու էր Աննետան հասկանում, որ Մարկն ուզում էր լքել իրեն և իր տունը։ Թեև Աննետան նրան լրիվ ազատություն էր տվել և խելամտորեն իրեն զսպում էր հարց ու փորձ անելուց այն բաների մասին, ինչ Մարկն ինքը չէր ասում, բայց և այնպես կասկածամիտ և նեղացկոտ Մարկին թվում էր, թե մայրը հետևում է իրեն։ Նա իրեն կաշկանդված էր զգում, և դա զայրացնում էր իրեն, Մարկը դժվարությամբ էր զսպում դրանք մորը հայտնելու անսանձելի ցանկությունը։ Իսկ Աննետային պետք էլ չէր, որ որդին դրանք իրեն ասի։ Մարկի բռնկումներն ու նախաամպրոպային լռությունը նրա փոխարեն ասում էին։ Աննետան իրադարձությունները կանխեց... Ի դեպ, նյութական հանգամանքները նույնպես համատեղ կյանքը դժվարացնում էին։ Նոր բնակարանային վարձը հարկադրում էր բնակարանը փոխել, իսկ բնակարանային կրիզիսը թույլ չէր տալիս Փարիզում որևէ հարմար և նրանց համար մատչելի գնով բան գտնել։ Դրան ավելացրած այն, որ փող էլ չկար, և վաս-

տակի հետևից ընկնելու ապարդյուն ջանքերը պետք է որ, ըստ երևույթին, Աննետային ստիպեին վերջիվերջո թողնել Փարիզը։

Գուցե զարմանալի թվա, որ նա օգնության համար քրոջը չդիմեց։ Սիլվիան ի վիճակի էր նրան օգնելու և չէր մերժի։ Բայց պետք է այդ երկու քույրերի բնավորությունը հիշել, հիշել այն ընդհարումները, որոնք, չնայած նրանց փոխադարձ սիրուն, չէին դադարում այդ երկու ամբողջական և հակառակ բնավորությունների միջև։ Նրանք անկեղծորեն սիրում էին իրար, և ամեն մեկը մի որոշակի բնագավառում ընդունում էր մյուսի գերադասությունը։ Բայց (ինքնըստինքյան հասկանալի է) յուրաքանչյուրն իր բնագավառը ավելի բարձր էր դասում և բնազդորեն ձգտում էր կյանքում գերազանցել մյուսին։ Ոչ մեկը մյուսից մի քանի միավոր առաջ չէր խնդրի։ Նրանք խաղացողներ էին—երկուսն էլ, և ամեն մեկն ուզում էր, որ ինքը տանի։ Օ՜, բանը դրողչե՜քը չէր, բանը միայն շահելն էր։

Եվ այնուամենայնիվ, մի քանի ամիս սրանից առաջ Աննետան ստիպված եղավ ուրախացնել իր ինքնասեր և անկեղծորեն իրեն կապված քրոջը ու նրանից մի քանի հազար ֆրանկ պարտք վերցնել՝ ժամկետն անցած պարտքերը մարելու, Մարկի ուսման վարձը մուծելու և բնակարանի վարձը վճարելու համար։ Աննետան պահպանում էր հին բուրժուաների ավանդույթները, որոնք հանգիստ չէին կարողանում քնել, եթե որևէ մեկին պարտք էին լինում։ Բայց ի դժբախտություն իր, նա մի պարտքից դուրս եկավ, որպեսզի հենց նույն րոպեին մտնի մի ուրիշ պարտքի մեջ. նա ոչ միայն քրոջ փողերը շուտով վերադարձնելու հնարավորություն չուներ, այլև տեսնում էր, որ նրան կրկին դիմելու անհրաժեշտություն է վրա հասնում։ Սիլվիան ուրախ էր։ Նա մտադրություն ուներ Աննետայի գործունյա բնավորությունը օգտագործել իր ձեռնարկության մեջ։ Մի քանի տարի առաջ նա այդպիսի փորձ արեց, բայց առանց հաջողության։ Սակայն, չնայած անհաջողությանը, նա իր մտքից չէր հրաժարվում։ Սիլվիան, ինչպես և Աննետան, այն մարդկանցից էր, որոնք ամբողջ կյանքում կարող են լուել, եթե կյանքը

խանգարում է նրանց մտադրությունների իրականացմանը, բայց ոչ մի թիզ չեն զիջի հուսալու մեջ, որ կյանքն իր համաությունից ավելի շուտ կհոգնի, քան իրենք։ Հիմա հանգամանքները նրա համար նպաստավոր էին։ Ճարպիկ կնոջն օգնում էր համընթաց քամին, և նա արագ մանևրելու կարողություն ուներ։ Նա կարողացավ օգտագործել շքեղության, հաճույքների, պարերի, վայելքների համար սկսված կատաղի վազքը—Փարիզն համակած խենթ կրքերի ամբողջ բրոնկումը։ Մոդաների արհեստանոցը նրան վիթխարի եկամուտ էր բերում պատերազմի վերջին տարվա ընթացքում, և հիմա Սիլվիան որոշել էր այդ արհեստանոցն ավելի լայնացնել. նա բացելու էր սալոններ, որտեղ տեղավորվելու էին գեղեցկության կաբինետներ, ցուցահանդեսներ, գրական և երաժշտական երեկոներ։ Այդպիսի սալոններում պարում էին, թեյ էին խմում և նույնիսկ—խորհրդավոր ու շքեղորեն կահավորված նկուղներում—ափիոն էին ծխում։ Այդտեղ անում էին համարյա այն ամենը, ինչ կարելի էր անել, —լավ ճաշակի և լիակատար ազատության սահմաններում, քանզի սույն աբբայության մայրապետը Փարիզի իսկական դուստրն էր, ազատասեր, նրբաճաշակ, և նա չէր կարող թելեմայում քնություն և կոպտություն թույլ տալ։ Մնացած բաներում—իմաստուն կարգ գոյություն ուներ. «Արա, ինչ ուզում ես»։ Բարձր ոլորտներում նա բավական շատ պարտապաններ ուներ, և իրեն հանգիստ էր պահում, զգալով, որ այդ պարտապանները կհոգան իր մասին և թույլ չեն տա, որ իր ձեռնարկությանը չափազանց ուշադիր նայեն։

Ահա արդեն կես տարի էր, ինչ Սիլվիան իր գործերը վարում էր համատեղ ինչ-որ մի անձնավորության հետ, որը կրկնակի հատկության տեր լինելով,— կոմպանյոն և սիրեկան,— իրեն համարում էր անփոխարինելի։ Ճիշտ է, Սիլվիայի համար անփոխարինելիներ գոյություն չունեին, տեղակալ նա հեշտությամբ էր գտնում։ «Երբ մի կրոնավոր պակասում է, աբբայությունը անգործ չի նստում...»։ Բայց հատկապես այդ սիրեկանը և կոմպանյոնը անփոխարինելի էր. Սիլվիան նրանից և օգուտ էր ստանում, և բավականություն։ Utile dulci[1]։ Մոդայի ասպարեզում այդ շաղատանը հրաշք-

[1] Հաճելի և օգտակարի զուգակցում (լատ.)։

ներ էր գործում։ Մտքի հանճարեղ պայծառացման բոպեին նա հայտնագործեց, որ աշխարհը կարելի է կառավարել, միայն նրա քթից բռնած։ Նա արտակարգ արագությամբ նշանավոր ֆիգուրա դարձավ օծանելիքների բնագավառում, որոնք Ատլանտիկ օվկիանոսի երկու կողմերում հռչակ էին վայելում իրենց սրվակների ձևով ու պարունակությամբ։ Նրա փառքը մրցում էր Ֆոշի[1] փառքի հետ։ Այդ պարոնը նույնիսկ հեռու չէր այն մտքից, որ ինքը Ֆոշից ավելի պակաս համբավ չի բերել Ֆրանսիայի համար։ Վերջիվերջո հռչակվելու նրա ձևը Ֆրանսիայի վրա ավելի էժան է նստել։ Նա սիրում էր իրեն կոչել կանանց, այսինքն՝ մարդկության մի մասի Նապոլեոնը։ Մարդկության մյուս մասը նա թողնում էր Նապոլեոն Առաջինին։ Նա իր արտադրանքի վրա ստորագրում էր «Կոկի (Գի)» (նրա իսկական ազգանունը Կոկյու[2] էր)։ Ճիշտ է, ասում են, որ դա հաջողություն է բերում, բայց նման բաները ռեկլամելն ընդունված չէ. մեկ էլ տեսար Սիլվիան մի օր հոգ տարավ, որ արդարացնի այդ ազգանունը։

Առայժմ դեռ նրանք միասնական էին։ Նրանց կապում էր և ցանկասիրությունը, և բանականությունը, այսինքն՝ շահը։ Կոկին վերելք էր ապրում, և շնորհիվ որոշ զոհաբերումների, որոնք նա շրջահայացորեն մատուցեց ազդեցիկ մամուլը գլխավորողներից մեկին, նա առանց մի դժվարության կարողացավ զարդարել իր մակակարը մի ժապավենով[3], որն անմիջապես հիսուն տոկոսով բարձրացրեց նրա սրվակների գինը։

Սիլվիան նրա համար սքանչելի գործընկեր էր։ Քառասուն տարիների թարմ հասունությունը Սիլվիային Յորդանսի հավերժահարսերի պերճափայլ շքեղությունն էր տալիս։ Արյունն անչափ փոթորկուն էր ողողում նրա ճակատն ու կուրծքը, բայց Սիլվիան ոչինչ չէր անում, որպեսզի պաղեցնի այդ ար-

---

[1] Ֆոշ—մարշալ, որը 1914—1918 թվերի պատերազմում ֆրանսիական զորքերի հրամանատարն էր։

[2] Կոկյու (cocu)—ֆրանսերեն նշանակում է եղջրակիր, կոտոշավոր։

[3] Նկատի է առնված Պատվո լեգեոնի շքանշանը։

յունը։ դրանում էր նրա հմայքներից մեկը։ Նրա ամբողջ էությունից, ինչպես և նրա ցանկասեր աչքերից, հեշտանք էր տարածվում,— նա կարծես պերճափայլ մերկությամբ լողում էր այդ հեշտանքում։ Երբ Սիլվիան հայելու մեջ զննում էր իրեն—այդտեղ ևս ոչ մի մշուշ չէր լինում հայացքի մեջ։ Վերից ու վարից ածիլված հոնքերով աչքերը, որոնք վճիտ էին, սուր, զգոն, ինչպես իր զինվորների մեջ ստուգում անցկացնող «փոքրիկ կապրալի»[1] աչքերը, ոտից գլուխ ամբողջովին չափում էին նրան։ Նա առանց հեգնանքի չէր մտաբերում նախկին անկուրծք Սիլվիային, նիհար քսան տարեկան կատվիկի, և փորձում էր նրա ձևերը գտնել այդ փարթամ ուսերի մեջ, այդ կրծքի մրգատու այգում,— հիանալի բերքահավաք, լեփ-լեցուն զամբյուղներ. նա ի ցույց էր դնում այդ պտուղները, ամենևին չջանալով ծածկել նրանց հպարտ գիրությունը։ Ստեղծելով մի մոդա, որը կանանցից պահանջում էր հրաժարվել առջևի և հետևի կլորությունից, Սիլվիան, այնուամենայնիվ, բավական վստահ էր ինքն իր վրա և մարտահրավեր էր նետում այդ մոդային։ Մյուսներն ինչպես ուզում են։ Թող Վեներաներն անհետույք լինեն։ «Քեզ համար կստեղծեն, թանկագինս, ինչ որ ուզես»։ Միայն թե ոչ ձրի։ Տնային շորերից ամենահամեստը, որոնց առևտուրն էր անում նա, այնքան արժեր, որ այդ փողով կարելի էր մի ամբողջ ընտանիք հագցնել։ Աննետան քրոջն օգնում էր շորերի մոդելները զարդարել նշանավոր անուններով, որոնք փոխառնված էին Պրիմատիչչոյի՞ և Ֆոնտենբլյոում[2] եղած գեղեցկուհիներից (դրանից գինը բարձրանում էր)։ Հաճույքի համար Աննետան երբեմն նույնիսկ հիշողությամբ էր նկարում նրանց պորտրեները։ Սիլվիան չափազանցված գովասանքներ էր, որ շռայլում էր. նա հաստատում էր, որ Աննետայի իսկական կոչումը գեղարվեստական արվեստանոցի գլուխ կանգնելն է, և կամ—նրա կազմակերպվածությամբ, կարգ ու կանոն սահմանելու նրա կարողությամբ

---

[1] Նապոլեոն I-ի մականունը։

[2] Պրիմատիչչո—XVI դարի իտալացի նկարիչ, որը նկարազարդել է Ֆոնտենբլյոում գտնվող պալատը։

հանդերձ—Սիլվիային փոխարինելը այն նոր բաժանմունքներում, որոնք ֆիրման, լայնանալով, ենթադրում էր բացել Փարիզի տարբեր թաղամասերում։

Բայց Աննետան ամենևին Սիլվիայի աստղի արբանյակը դառնալու մտադրություն չուներ։ Ինչքան էլ ուզում է գերող լինեին համաստեղության բուրմունքները, միևնույն է, տուալետների և ցանկասիրության այդ քարվանսարան մի հոտ էր արձակում, որն Աննետայի համար անչափ սուր էր։ Նա Սիլվիային չէր դատապարտում հարստություն կուտակելու նրա եղանակի համար։ Բայց նա չէր ուզում այդ դրամից բաժին ունենալ։ Նրա հպարտության համար բավական զգալի էր հենց թեկուզ այն, որ նա այնուամենայնիվ ստիպված եղավ որոշ փշրանքներ ընդունել. նա հանգիստ չի ունենալու այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չի վերադարձրել։

Ավելացնենք (քրոջը նա, իհարկե, այդ չասաց), որ մի անգամ երեկոյան խանութի միջանցքում սրվակային Նապոլեոնը նրա նկատմամբ իրեն թույլ տվեց որոշ անպարկեշտություններ։ Ճիշտ է, նա չկարողացավ հեռու գնալ, որովհետև խկույն ևեթ ստիպեցին նահանջել։ Բայց եթե արհամարհանքը ջնջել էր այդ դեպքը Աննետայի հիշողությունից, ապա վիրավորված մարմինը դա չէր ներում։ Այն կինը, որը երբեք չի տրվում կիսով չափ, նրա մարմինը հպարտ է և ավելի հիշաչար, քան բանականությունը։

Մի խոսքով, Աննետան հաստատ որոշել էր քրոջից ոչ մի քան չընդունել։ Բայց որդուն ազատություն էր տվել։ Աննետան իրեն իրավասու չէր համարում խանգարել Մարկին, եթե նա ցանկություն ունենար ընդունելու Սիլվիայից եկած օգնությունը։ Այդ հասակում Մարկն ինքը պետք է պատասխան տար իր համար։ Աննետան այդպես էլ նրան ասաց, ջանալով ստվեր չգցել քրոջ վրա, որպեսզի չխանգարի Մարկի որոշմանը։ Բայց խորաթափանց Մարկը կռահում էր մոր մտքերը. դրանք մոտ էին իրեն։ Նա հասկանում էր, նա հոգու խորքում հավանություն էր տալիս մոր այդ խաղաղ անհաշտությանը։ Սակայն Մարկը տրամադրված չէր ընդօրինակել նրան. Համենայն դեպս ոչ հիմա։ Մարկը չէր պատկերացնում, թե ինչու ինքը պետք է հրաժարվի, եթե իրեն խնձոր են առաջարկում, ինչու չի կարելի ատամները խրել այդ

խնձորի մեջ, ինչու չճանաչել արկածներով լեցուն այս աշխարհը։ Նա հիանալի հասկանում էր, որ մի անգամ կծելը ոչինչ չի պարտավորեցնում։ Բայց կասկածամիտ տղան (նա մորից վատ չէր ճանաչում զավթիչ Սիլվիային, գիտեր, թե նա ինչ խորամանկություններ է ընդունակ, երբ իրեն հարկավոր է որևէ մեկին տիրանալ) նախապես իր համար կանոն էր դարձրել նրանից ինչքան կարելի է քիչ բան ընդունել. չէ որ իր մորաքույրը երբեք փողը մոռացության չի տալիս, եթե անգամ այդ փողը նրանց է տվել, ում սիրում է... Օ, իհարկե, նա ոչ թե փողն էր բարձր գնահատում, այլ որոշ բաներ նրա դիմաց ստանալու հնարավորությունը։ Նրա համար հաճելի էր մտածել, որ շնորհիվ պարտքի իրեն են պատկանում նրանք, ում ինքը սիրում է, նրանք, ովքեր իրեն պետք են։ Երբեք կյանքում ինքը նրանց չէր հիշեցնի պարտքերի մասին, բայց նա համարում էր, որ դա նրանք իրենք են հիշում։ Դա նրա հետ կնքած մի տեսակ գաղտնի համաձայնություն էր, և թող նրանք ընդունեն այդ պարտքերը գոնե լռությամբ,— ուրիշ ոչինչ նա չէր էլ ուզում։ Եվ միևնույն ժամանակ նա չափազանց շատ բան էր ուզում։ Հենց դա էլ ամենից քիչ էր հանդուրժում ամեն մի սանձից նեղվող տղան։ Նա մսուրք չի գնա։

Աննետան բոլորովին չէր անհանգստանում։ Նա հավատում էր, որ իր մտրուկին երբեք չի լքի անկախության ձգտումը։ Եվ նրա շարժուն բերանը նախապես խորամանկորեն ժպտում էր անտեսանելի կինոնկարին, որն ինքը բացում էր իր մտավոր հայացքի առաջ. փեշը քշտած, Սիլվիան ձուկ է որսում. նա կարթը նետում է, իսկ փոքրիկ ձուկը, որ հետաքրքրվող է, բայց և կասկածամիտ, քիթը քսում է կարթին և արհամարհանքով կորչում է հեռու։ Լողանը ցնցվում է։ Կարթաթելը ձգվում է։ Սպասողական ձեռքը կտրուկ շարժումով կարթը ձգում է։ Կեռիկը դատարկ է։ Խայծը կորավ-գնաց։ Ձուկը նույնպես կորավ։ Աննետան ծիծաղում է, պատկերացնելով Սիլվիայի կնճռոտված քիթը. նա գիտի բարկության ու զայրույթի այն դիմածռությունը, որը հայտնվում է քրոջ երեսին, երբ որևէ մեկը հակառակ է գնում նրա ցանկություններին։

Մարկը, որ որոշ ժամանակ հետևում էր մորը, հարցնում է.

— Մամա, ինչի՞ վրա ես ծիծաղում։

Աննետան նայում է որդուն, նրա երեսին, մտահոգ, մռայլ, մշտապես տագնապահույզ, կարծես ամբողջ աշխարհի ուշքն ու միտքը այն է, թե ինչպես կուլ տա նրան, և ասում է.

— Քեզ. վրա նույնպես։

— Նույնպե՞ս։ Իսկ է՞լ ում վրա։

Աննետան չի պատասխանում։

Ոչ, բոլորովին այդ մասին չէ, որ Աննետան անհանգստանում է, Մարկին միայնակ թողնելով Փարիզի ջունգլիներում։ Իսկ չէ որ նա մեկնում է, դա որոշված է։ Անսպասելի մի դեպք պատահեց, և Աննետան կպավ դրանից։ Փորձելով փող աշխատելու կես դյուժիններից ավելի տարբեր միջոցներ— գրագրություն, հանձնարարություններ կատարելու վազվզրտուք, պիտակներ՝ խանութների համար, գրադարաններում արված քաղվածքներ մի գրողի համար, որը կենսագրական վեպեր էր պատրաստում (Աննետան նրան փաստաթղթեր էր բերում, և գրողը դրանք խեզաթյուրում էր, որպեսզի հասարակությանը զվարճություն պատճառի հերոսի, ջղերը քայքայված այդ անառակի, շեքսպիրյան կրկեսի այդ ծիծաղելի ծաղրածուի հաշվին, քանի որ սպառողների նոր դասակարգը—անկիրթ և պարապ-սարապ բամբասողները—պատմությունն իրեն պատկերացնում էր հենց այդ ձևով. որպես կանանց բամբասանքների ժողովածու), Աննետան ապարդյուն կերպով տասնյակ անգամ Փարիզի այս ու այն ծայրը գնաց և ոտքերին կոշտոցներ արեց—ահա և ամբողջ օգուտը։ Բայց մի քանի շաբաթ առաջ էտուալ հրապարակի շրջանում, հյուրանոցներից մեկում նա, վերջապես, քարտուղարի և գանձապահի տեղ ստացավ։ Երկար նա չէր դիմանա այնտեղ. համոթ իր նա համոզվեց, որ իր ամբողջ կրթությունը բավական չէ՝ հաշվապահական գրքերի շթոփից գլուխ հանելու համար։ Բայց գրասենյակում նա ծանոթացավ մի ռումինական ընտանիքի հետ, որը սիրահարվել էր իրեն։ Դեռ մի քանի բառ Աննետայի հետ չփոխանակած, երեք օրիորդներն էլ կրքով բոցավառվեցին դեպի Աննետան. նրանք նույն բոպեին Աննե-

տային հայտնեցին իրենց սրտիկների բոլոր գաղտնիքները։ Մայրը նույնպես իր գաղտնիքները չէր թաքցնում և, բացի դրանից, Աննետայի հետ խորհրդակցում էր խանութների, արդուզարդի և կոսմետիկայի մասին,— դա Սիլվիայի թագավորությունն էր, ուր Աննետան նրանց ներս էր քաշել (նրման հարազատությունը քիչ փայլ չէր ավելացրել Աննետայի հմայքին)։ Եվ նույնիսկ հայրը իրազեկ դարձրեց նրան իր սիրային արկածներին և խորհուրդ էր հարցնում փարիզուհիներին դուր գալու արվեստի մասին։ Լինելով բավական երեսելի տղամարդ, կլոր գանգով, օխրայով ու մաղձով ներկված ընկույզի կեղևի գույն ունեցող մաշկով, անթափանցելի աչքերով, նման սև ճահճուտի, որի մեջ կարելի է թաղվել ու մնալ, նեղ ճակատով, կարճ կզակով և հզոր վզով, նա աչքի էր ընկնում սեթևեթող շարժուձևերով և «ռ»-ն արտասանում էր սոսկալի կոշտ։ Դա Վալախիայի խոշոր մի կալվածատեր էր, որ պատկանում էր երկիրը շահագործող ֆեոդալական բուրժուազիայի կլաններից մեկին։ Նա իր բանդայի կողմից Ռեպարացիոն հանձնաժողով էր ուղարկված որպես պատգամավոր։ Բայց տեղի ունեցան քաղաքականության հանկարծակի տատանումներ, և մսուրքի մոտ տեղերն ուրիշները գրավեցին։ Ֆերդինանդ Բոտիլեսկուն, բավական կուշտ կերակրված, դեռ ծղոտը շրթունքներին, ընտանիքով վերադառնում էր Բուխարեստ։ Հանկարծ նրանց գլխում միտք ծագեց քուրջ ու փալասի ճամպրուկի հետ միասին, որ նրանք Փարիզից էին բերում, հետները վերցնել նաև Աննետային։ Վերջինիս խելքը, փարիզուհու նրա անառարկելի ճաշակը, նրա բազմակողմանի կենսափորձը, նրա իրեն պահելու հմայիչ, անկաշկանդ շարժուձևերը, զրուցելու նրա բնածին հմտությունը,— այդ բոլորը նրանց գաղտնի հիացմունքի և նախանձի առարկան էր։ Մի շաբաթից էլ ավելի պակաս ժամանակում նրանք եկան այն եզրակացության, որ Աննետան իրենց համար մի գյուտ է, առանց որի նրանք չեն կարող յոլա գնալ։ Մի անգամ երեկոյան օրիորդները աղմուկով ընկան նրա վզով, միաժամանակ ծիծաղելով ու լաց լինելով, բարձրաձայն համբուրելով ու դայլայլելով, որ իրենք չեն կարողանում բաժանվել Աննետայից։ Հայրը առաջարկեց նրան ուղեկցել իր տիկնոջն ու աղջիկներին որպես տնային դաս-

տիարակչուհի, որպես ընկերուհի, ուսուցչուհի, որպես զրուցակից ընկեր։ Նրա պարտականությունները մի տեսակ պարզ չէին, իսկ նրան առաջարկված պայմանները թեև առատաձեռն, բայց նույնպես անորոշ էին։ Սակայն այդ ամենը մատուցվել էր այնքան սրտանց, որ Փարիզից հեռանալ ցանկացող Աննետան իսկույն կառչեց այդ առիթից։ Նա անտարբեր չմնաց այդ երեք վառվռուն աղջիկների սիրո բուռն դրսևորումների նկատմամբ, աղջիկներ, որոնք նրա առաջ մերկացնում էին իրենց հոգեկան փոքրիկ աշխարհները,— և պրիմիտիվ, և բարդ։ Նրանց ոչ չափավոր էքսպանսիվությունը երջանիկ հակադրություն էր կազմում Մարկի ծածկամիտ բնավորության և այն զսպվածության հետ, որն Աննետան ինքն էր ջանում պահպանել որդու հետ ունեցած հարաբերությունների մեջ։

Այդպես, ուրեմն, նա որոշում է Մարկին թողնել։ Աննետան գիտակցում է, թե դա ինչ ռիսկ է։ Այդ ռիսկը շատ մեծ է։ Բայց ոչինչ անել չես կարող։ Ռիսկից վախեցողը մարդ չէ։ Ով ասում է «կյանք», նա ասում է «մահ»։ Դա ոչ մի ակնթարթ չվերջացող մենամարտ է։

Աննետան ձեռքերը դնում է որդու ուսերին և հանկարծ նայում նրա հոգու խորքը, մինչև հատակը։ Մոր վճիտ աչքերի մեջ Մարկն իրեն տեսնում է մերկացած, նա բնազդաբար մի թափով շարժում է անում, կարծես ուզում է ծածկել իր մտքերի ամոթալի տեղերը։ Բայց Աննետան դրանք տեսավ... Արդեն անչափ ուշ է։ Մարկը զայրացած քթանցքներով օդը ներս է քաշում ու շտկվում։ Մայրը նրան ասում է.

— Իմ սիրելի տղա, ես բեռ եմ դառել քո ուսերին... Այո՛ ես այդ տեսնում եմ, ես հասկանում եմ քեզ, մի արդարանա։ Դու ինձ սիրում ես, բայց քեզ ազատություն է պետք։ Դա օրինական է։ Մշտական վկան քեզ նեղություն է պատճառում... Ես քեզ ազատում եմ։ Դու կարող ես ինքդ կյանքում փորձ ձեռք բերել։ Կողմնակի մարդկանց ներկայությունն ավելորդ է—թող նրանք տեղն ազատեն։ Սխալներն ավելի լավ է կատարել մարդկանց աչքից հեռու... Ուրեմն, այդպես, դնա և սխալներ կատարիր։ Դու ինձանից վատ չգիտես, որ կյանքի փորձի համար դու դեռ մի անգամ չէ, որ ստիպված կլինես վճարել... Միայն աշխատիր, որ դրա համար ուրիշ-

ները չվճարեն։ Այո, տղաս, ես ու դու զրուցում ենք, ինչպես հին ընկերներ։ Ես դա կարող եմ քեզ ասել. ես ավելի շատ հույսս քո սրտի շիտակության վրա եմ դնում, քան քո խելքի շիտակության... Եվ վերջ ի վերջո ես գերադասում եմ, որ դա հենց այդպես էլ լինի... Դու կատաղած ես, դու ամբողջական ես, դու ոչ մի բանի հետ հաշվի չես նստում, դու ամեն ինչի վրա նետվում ես թափով և հեշտությամբ կործանում... Ես չեմ կարող քեզ ետ պահել անարդարություններ և սխալներ գործելուց... Սակայն (և դա միակ բանն է, որ ես քեզ խնդրում եմ) դրանցից պաշտպանիր թույլերին, փոքրերին, նրանց, ովքեր չեն կարողանում պաշտպանվել։ Ինչ մնացածին է վերաբերվում—դա նրանց գործն է ու քո գործը։ Թող իրենցն ստանան։ Դու նույնպես։ Հացահատիկը հենց նրա համար է, որ կալսեն։ Թող քեզ էլ կալսեն։ Ըստ առածի. «Ամեն մի մահ իր կռիվն ունի, ամեն մի հացահատիկ՝ իր ծղոտը»։ Ես դեռ իմ ծղոտը չեմ կորցրել։ Դու իմ հատիկն ես։ Դո՛ւ էլ անցիր կալով։ Որպեսզի վերին տերը իր հացը հունցի... Da nobis[1]. Նա չէ, որ մեզ հաց է տալիս։ Մենք ենք տալիս նրան։ Այդ մենք ենք մեր վշտերի հետ մաղում նրա ալյուրը...

— Ես չեմ թողնի, որ ինձ ուտեն ավելի շուտ,— ասաց Մարկը,— քան կուտեմ իմ բաժինը։

Նա արտաքին խստության տակ թաքցնում էր այն հուզմունքը, որը նրա մեջ առաջացնում էին մոր խոսքերը։ Այդ խոսքերը խորը թափանցեցին նրա մեջ։ Պետք չէ բացատրվել։ Մայր ու որդի կես խոսքից հասկանում էին իրար։

Նրանք դեռ կանգնել ու իրար էին նայում, և նրանց քննքշության տակ մարտահրավեր էր թաքնված.

(— Ես քեզ սիրում եմ։ Բայց դա քեզ չեմ ասի։

— Իսկ ինձ քո խոստովանությունները պետք էլ չեն)։

Աննետան բռնեց նրա կզակից և ծիծաղեց.

— Էհ, ինչ կա որ, կե՛ր քո բաժինը, իմ փոքրիկ դայլ։ Իսկ ես իմ բաժինն ունեմ։

Աննետան համբուրեց նրան։

Նրանք համբուրվելու սովորություն չունեին։ Խուսափում

[1] Տուր մեզ (լատ.)։

էին զեղումներից։ Դրանից մոր հրաժեշտի համբույրը դարձավ միայն է՛լ ավելի նշանակալից։ Աննետայի շուրթերը Մարկին ասում էին. «Այրվիր, եթե կարող ես։ Բայց մի ապականիր քեզ։ Ես քեզ վրա դնում եմ իմ կնիքը»։

Համենայն դեպս դողահար պատանին այդպես հասկացավ այդ հրամանը, երբ մոր հետ զրուցելուց հետո գիշերն արթնացավ։ Եվ նա անչափ ճշմարտացի էր ինքն իր հետ, ու չէր կարող չիմանալ, որ այդ հրամանը կխախտի։ Բայց նա նաև գիտեր, որ դա դավաճանություն է լինելու հենց իր նկատմամբ. հրամանը գալիս էր հենց իրենից և ոչ թե մորից։ Եվ այն կնոջ նկատմամբ, որը հրամայում էր նրա փոխարեն, այդ վերջին գիշերը, որ միասին մի հարկի տակ էին անցկացրել, համակվեց այնպիսի մի հարգանքով, որն ավելի բուռն էր, քան սերը։ Մարկը չանում էր շունչ չքաշել որպեսզի լսի հարևան սենյակից եկող շնչառությունը։ Նրան պաշարում էին անորոշ ցանկություններ, ծանր մտքեր։ Նա ուզում էր մոր հետ բաժանել իր տառապանքները, բայց մորը նա համարում էր անչափ շիտակ, անչափ առողջ՝ իրեն հասկանալու համար, և նույնիսկ վստահությունը, որ մայրը ցուցաբերում էր որդու նկատմամբ, Մարկին ետ էր պահում մոր առաջ բացվելու ցանկությունից. Մարկը վախենում էր հիասթափեցնել նրան։

Աննետան քնած էր։ Նա հիանալի գիտեր, որ իր տղան կդավաճանի մորը, կդավաճանի հենց ինքն իրեն։ Ով ապրում է, նա դավաճանում է ուրիշներին և իրեն ամեն անգամ, երբ աքաղաղը կանչում է։ Բայց բավական է միշտ ընդունակ լինել լսելու աքաղաղի կանչը և ինքն իրեն ամեն մի նոր արշալույսին ասել. «Ես պարտություն կրեցի։ Կսկսեմ նորից...»։ Աննետան գիտեր, որ իր տղան երբեք զենքը ցած չի դնի։ Ավելին նա չէր էլ ուզում։ Նա քնած էր։

Ազատությունը չթեթևացրեց Մարկի կյանքը, դա ավելի շուտ նեղում էր նրան։ Ազատությունը միշտ ավելի թանկ է նստում, քան մնացած մյուս բարիքները։ Իսկ այն դարաշրջանում նա ավերիչ էր։ Պետք էր շատ հարուստ լինել՝ դրան դիմանալու համար։ Մարկը գիտեր, որ ձրի այդ ազատությունը իր ձեռքը չի ընկնի, բայց նա համարում էր, որ

ինքը կարող է դա իր ուժերով նվաճել։ Մեկնելուց առաջ Աննետան բավական ջանքեր գործադրեց՝ Մարկին ստիպելու համար, որ որդին մի փոքր դումար ընդունի, որը նրան թույլ կտար մի երեք-չորս շաբաթ յոլա գնալ, մինչև որ ձեռքը որևէ վաստակ ընկնի։ Աննետան ամենևին չէր մոլորվում Մարկի երիտասարդ ինքնապաստանության վերաբերյալ, բայց ինքը դեմ չէր, որ այդ ինքնապաստանության համար կյանքն ինքը խփեր որդու ձեռքերին. ջրափոսում խաղաղ չէր, նրա բադիկն օրորվում էր, բայց ջրափոսում բադիկները չեն խեղդվում։ Ինչևէ, մի բանում Աննետան չէր կասկածում—բավական է ինքը շրջվի, Սիլվիան իսկույն ևեթ կբուսնի այդտեղ, այդ ջրափոսի ափին, և կսկսի կանչել Մարկին. «Փոքրի՜կ, փոքրի՜կ...»։ Փոքրիկը նախազգուշացված էր։ Թող անեն, ինչ ուզում են։

Մարկը մտադիր էր յոլա գնալ առանց կողմնակի օգնության։ Նա անփութորեն մերժեց Սիլվիայի առաջին առաջարկությունը։ Սիլվիան բոլորովին էլ չէր համառում։ Նա վստահ էր, ոչ պակաս, քան քույրը, որ կյանքը շատ շուտ դաս կտա այդ պարծենկոտին։ Մարկին վիրավորեց այն ծաղրական անտարբերությունը, որով մորաքույրը վերաբերվեց քրոջ որդու մերժումին։ Բայց այդտեղ Մարկը տագնապի ինչ-որ անորոշ հիմքեր զգաց, իր ազատության դեմ ուղղված ինչ-որ դավադրություն։ Դա է՛լ ավելի էր դրդում նրան պաշտպանվել։

Իսկ պաշտպանվելը դժվար էր. թշնամին հայտնվում էր այնտեղ, որտեղ նրան չէին սպասում։ Մարկն ինքը դավադիր էր։ Բայց նա դավադրությունն անում էր միայն ինքն իր հետ։

Նա բոլորովին չգիտեր, ինչ անի իր կյանքը։ Մինչդեռ հարկավոր էր մի վճիռ կայացնել, և որքան կարելի էր շուտ։ Ժամանակակից կյանքը դա տեղի համար տարվող կատաղի մարտ է։ Այդ տեղը նրա՛ ձեռքն է ընկնում, ով առաջինը նետվի նրա վրա։ Բայց նետվելուց առաջ պետք է ընտրել։ Ոչ, առաջ ճանկի՛ր։ Այլապես, երբ դու գաս, ամեն ինչ սեղանից արդեն հավաքած կլինի... «Բայց եթե սեղանի վրա եղածներից ինձ ոչինչ չի հրապուրո՞ւմ»։ «Այն ժամանակ քո ձեռը կընկնի այն, ինչ սեղանի տակ է թափված։ Դու

շուն կլինես»։— «Ես կգերադասեի գայլ լինել, ինչպես ասում էր նա։ Բայց դա շռայլություն է։ Դա շահագործողների համար է, այսօրվա տերերի համար։ Իսկ մյուսների՝ փոքր մարդկանց համար—տաժանակրություն է»։

Հապա մարդ որտե՞ղ գտնի ուժերին համապատասխան մի բան։ Շոր վաճառողի մոտ ոչ մի քուրջ այդ երիտասարդ կազմվածքների վրա այլևս չի լինում։ Բարձրագույն կրթություն ստացած ինտելիգենտ ու ոչ հարուստ երիտասարդի համար համալսարանը իր հերթին դասատու դառնալու հասարակ ելք է ներկայացնում (ավելի ճիշտ, ներկայացնում էր դեռ երեկ)։ Բայց հիմա համալսարանը անկում է ապրում։ Համալսարանն աղքատացել է։ Եվ իր այդ աղքատությունը նա ընդունում է անտրտունջ։ Առաջվա ժամանակներում այդպիսի անտրտնջությունը ազնիվ հպարտություն էր կոչվում։ Իսկ հիմա երիտասարդ բերանները այդ բորբոսնած հացը դուրս են թքում։ Նրանք հեռու չեն այդ հացը անարդ վախկոտների հաց անվանելուց։ Մինչդեռ հենց այդ գնով էին մեր մեծ, անշահախնդիր գիտնականները ձեռք բերում այն ամենը, ինչով նրանք հարստացրել են մարդկությանը։ Այո, բայց այդ գնով նրանք պաշտպանում էին գոնե իրենց անկախությունը։ Այսօր նրանք պաշտպանում են ծառայի իրենց դրաղմունքը։ Պատերազմի տարիները ցույց տվին, որ գիտությունը իշխանության լավագույն սպասավորն է։ Միաժամանակ և աղքատ լինել և լակեյ, և անշահախնդիր և ստորաքարշ—դա արդեն այդ ծաղրասեր երիտասարդների աչքում չափազանց շատ է։ Նրանց համար հեշտ է արհամարհել «իդեալիզմը»։ Դրան հակառակ, նրանք «պարծենում են, որ իրենց հարկավոր է լինել հարուստ և ազատ, և որ նրանք իրենց ուզածին կհասնեն։ Կտեսնենք նրանց մի տասը տարի հետո։

Յոթ հոգուց երկուսը—ոչ թե կոչումով, այլ անհրաժեշտությունից դրդված—ընտրեցին համալսարանում դասավանդելու անուրախ ուղին. Բուշարը, որը կատաղությամբ ու զայրույթով կրծում էր լկամը և վրնջում, ինչպես պերշերոնը կողանքի ժամանակ, և Ռյուշը, որը սառն էր, ծաղրաբարո, վճռական և որը թաքցնում էր իր մտքերը—իր թախծի անծայրածիր տափաստանները. «Քայլիր և լռի՛ր։ Եթե կանգ

առնեմ, դու այլևս տեղից չես կարող շարժվել... Բայց ինչի՞ համար է այս բոլորը։ Ո՞ւր է նպատակը։ Չգիտեմ։ Որևէ նպատակ կա՞ արդյոք։ Գուցե, դա ի հայտ գա ավելի ուշ, ճանապարհին... Եթե չգա, առանց նրա էլ յոլա կգնանք...»։

Մարկը, տատանվելով, նրանց հետ անցավ ճանապարհի մի մասը, բայց հաստատ որոշեց նրանց թողնել հենց առաջին ոլորանին։ Մարկին աղատություն տալով, մայրն, այնուամենայնիվ, խորհուրդ էր տվել նրան օգտագործել իր ստացած պատրաստականությունը և ձեռք բերել լիցենցիատի աստիճան, անկախ նրանից, թե նա ինչ կորոշի իր հետագա կյանքի վերաբերյալ. դա մի փոքրիկ խաղաթուղթ էր, բայց երբ քեզ մոտ եղածը շատ քիչ է, ավելի խելամիտ է ոչ մեկը չգցել։ Բացի դրանից, որդու առաջ դնելով այդ նպատակը, Աննետան դրա մեջ տեսնում էր նաև,— ճիշտ է, առանձնապես չհավատալով դրան,— առողջ, զսպող մի սկզբունք, որը կարող էր բարերար ազդեցություն ունենալ Մարկի անկարգապահ բնավորության համար, համենայն դեպս գոնե մի քանի ամիս, մինչև որ նա սովորի ինքնուրույն անել իր առաջին քայլերը։ Այդպես էր Մարկը պատրաստվում քննություններին,— ոչ միայն չիմանալով, կտա՞ այդ քննությունները թե ոչ, այլև առանց վստահություն ունենալու, որ մի կերպ կհասցնի մինչև համալսարանական կուրսի վերջը։ Նրա ուշադրությունը բազմաթիվ բաներ էին գրավում։ Ինչպե՞ս մարդ իրեն փակի փոշոտ գիտելիքների միջև, որոնց այժմեականության ոչ մի շունչ չի հասնում։ Մանավանդ, երբ այնքա՞ն անհավատալի չափերով աճել է բանականության orbis terrarum[1]-ը։ Եթե մարդ ցանկանա այդ երկրագունդն ընդգրկել թեկուզ և մի թռուցիկ հայացքով, չի կարելի կորցնել և ոչ մի ակնթարթ, քանզի ոչինչ հաստատուն չէ, ամեն ինչ երերուն է, վաղվա օր գոյություն չունի։ Վաղն ինձ կարող է կլանել պատերազմի և հեղափոխությունների անդունդը։ Եվ ես ինքս ինձ կդատապարտեմ սխոլաստիկական ռեժիմի ասկետության։ Հանուն ի՞նչ հավատի։ Ես միայն մի հավատ ունեմ. ես հավատում եմ այն բանին, ինչը ես տեսնում եմ և զգում։ Մնացյալը—հետո։ Դա այսօրվա հա-

[1] Հողագունդը (լատ.)։

մար չէ։ Այսօր պետք է տեսնել ու տեսնել։ Եվ շոշափել այն ամենը, ինչ հաջողվում է ճանկել...

Այդ երիտասարդների միջև, որոնց լափում է անհավատության մարմաջը, Թոմաս առաքյալի այդ փոքրիկ անամոթ նամակների միջև միայն նա չէ, որ այդպես է։ Հոգևոր արկածներ որոնողները գլխապտույտ վազքով սլանում են նրա շուրջը... Խե՜ղճ որոնողներ, նրանք իրենց անհեթեթ «ես»-ի և նրա նախապաշարմունքների հետ թափառաշրջում են ժամանակի և տարածության բոլոր լայնություններով մեկ։ Նրանք ոչինչ չեն կարողանում տեսնել արտաքին աշխարհում՝ մինչև որ աչքները չգցեն իրենց ներաշխարհի, Կաղբայի[1], Փարիզի, «ի՞նչ կասեն իմ մասին»-ի վրա։ Դրանք կովարարներ են, որոնք ամբողջ երկրագնդի վրա՝ երկու թևեռներից մինչև հասարակածը, քսմսում են իրենց սֆաթները, որպեսզի գրավեն փողոցային ամբոխի ուշադրությունը... Հետպատերազմյան գրախանութները լցված են թարտացող խղճանքի անբարոյականությամբ, խղճանք, որից խորտկարանի և բենզինի, մեծ էքսպրեսների և ռադիոյի հոտ է փչում։ Նա պայթեցնում է միտքը, արվեստի, քաղաքականության, մետաֆիզիկայի ոտքերը շրջում է վեր և շրպպացնում է կրոնի հետույքին։ Նա թեթևորեն հարբած է, բայց թույլ չի տալիս, որ իրեն հիմարի տեղ դնեն։ Նա պատրաստ է ծաղրել այն ամենը, ինչ ինքը քարոզում է կամ պարսավում։ Նա անկեղծ է ամեն ինչ փոփոխելու իր պահանջում։ Նրա չբավարարված ագահությունը ատամներով խրվում է ամեն ինչի մեջ և ամեն ինչ դուրս է թքում երկրորդ կտորից հետո։ Նրա ձեռքերը քոր են գալիս, ոտքերը քոր են գալիս, նրա հետույքը կրակ ընկած այրվում է։ Աշխարհը, ամբողջ երկրագունդը փայլկտում է արվեստի մասին վարած նրա շաղակրատանքներում, թղթակիցների կաբլոգրամներում, որոնք ամեն ինչին նայում են թռչնաբարձունքից վեպի ձև տված հանրագիտարանի խայտաբղետության մեջ։ Ամեն ինչ իրար վրա է թափված։ Առանց նայելու վերցնում

---

[1] Արաբերեն՝ պալատ-ամրոց։ Հյուսիսային Աֆրիկայում այդպես է կոչվում մեծ քաղաքների հին, բնիկներին պատկանող մասը։

ես այդ կույտից, հապշտապ ձեռքդ խրում ես թևքի մեջ, ոտքդ՝ շալվարի մեջ—չափազանց կարճ է։ Չափազանց երկար է։ Շպրտում ես մի կողմ, ուրիշի մոքեր ես վերցնում և մի ժամ հետո չես հիշում, թե ինչ աչքեր ուներ այն աղջիկը, որի հետ դու գիշերն անցկացրիր։ Ո՞վ է իրեն նեղությո՞ւն տալիս ճանաչել կենդանի հոգին, որը թպրտում է անարգված մարմնի խորքում։ Աշխարհը սլանում է մտահայացքի առջևով, ինչպես կինոնկար։ Արա՜գ։ Արա՜գ։ Կերպարները գալիս ու կուտակվում են, լուծվելով մեկը մյուսի մեջ։ Մատները ոչինչ չեն կարողանում բռնել ու պահել։ Ամեն ինչ պլստում ու դուրս է պրծնում ձեռքերից։ Ամբողջ խաղողի այգին սարյակները կտցահարել են։ Այս տարի գինի չի լինելու։

Բայց սարյակները հարբած են։ Նրանց երամը անընդմեջ ճռճռացնում է։ Անմարդկային ճիգեր են պետք այս հորձանուտում որևէ միտք պահպանելու համար։ Բուշարը, կնճռոտած ճակատով, դրա վրա է վատնում իր ամբողջ ուժերը։ Աչքերի վերևում գտնվող ծալքերը արյունով լցվում են։ Նա մոլեգնորեն փորձում է իր բութ ուղեղի մեջ խցկել դասագրքերի պինդ կավը։ Նա ամենևին չի զգում, որ իր մանսարդում բևեռային ցուրտ է։ Նրա ուղեղը այրվում է։ Բայց հզոր ստամոքսը մոնչում է։ Հարկավոր է գայլի երախը մի բանով փակել, քանի դեռ ուղեղը այսօրվա համար տրված կավաբաժինները չի հաղթահարել։ Երբ նա դասը վերջացնում է, լեզուն բերանից դուրս է ընկնում։ Նա կատաղածի նման դուրս է թռչում փողոց։ Նա փնտրում է մեկնումեկին, որ իրեն կերակրեն, գտնում է Վերոնին և կոպտորեն ասում.

— Ես ուզում եմ քեզ օգնել վերադարձնելու թալանած փողերը։ Ժողովրդի անունից ես ետ եմ վերցնում այն, ինչ նրան է պատկանում։

Սկզբում Վերոնը ծիծաղում է։ Նա մտածում է արհամարհանքով գլուխն ազատել։

— Դու ոսկո՞ր ես ուզում։

—Ես միս եմ ուզում,— պատասխանում է նա։— Իսկ քո կմախքը կարող ես քեզ թողնել։

Վերոնը ծիծաղում է, բայց հպարտությունից փորձում է թաքցնել, որ իր ծիծաղը հարկադրական է։ Երբ քեզ Կատիլինա ես ձևացնում, պետք է խաժամուժին կերակրես։ Առայ-

ժրմ դեռ հայտնի չէ, ավերակների վրա բարձրացնելու համար նա ուժ չի՞ գտնի արդյոք։ Հասարակությունը երերված է։ Բավական է մի քանի եռանդուն և վճռական մարդիկ լինեն, որպեսզի ճեղքեն ու ներս խուժեն ավելի շուտ, քան պաշտպանները կհասցնեն խելքի գալ։ Բայց միակ իսկական առաջնորդները Ռուսաստանում են գտնվում, և նրանք մեկուսացված են, նրանք կապ չունեն ամբողջ աշխարհի չքավոր մասսաների հետ,— նրանք նույնիսկ չգիտեն դրանց գոյության մասին։ Կլեմանսոն ռումինա-ուկրաինական սահմանին փակցներ է դնում դաշնակից տերությունների զորքերից, որոնց աչքերը նրա ստախոս մամուլը փակել է։ Արևմուտքում «հասարակության սյուները» կհասցնեն իրենց ուժերն հավաքել։

Սակայն 1919 թվի այդ առաջին ամիսներին օդը հագեցած է էլեկտրականությամբ։ Վերոնը, որ շփվում է գործարարական շրջանների հետ և դրա շնորհիվ ուրիշներից ավելի լավ տեղյակ է, հոտոտում է օդը, ցանկանալով որոշել, թե որքան է մեծ պայթյունի հնարավորությունը։ Նրա խելքը կտրում է, որպեսզի այն ամենից, ինչ ինքն իմանում է, մոտիկ մարդկանց պատմի լոկ այն, ինչը նրան չի կարող վնասել,— այն, ինչն ավելի շատ դրդում է խոսել, քան գործել։ Նա ամենևին խաբեբա չէ և ոչ էլ վախկոտ (ինչպես և այդ երիտասարդներից ոչ մեկը. նրանցից ոչ ոք իր մորթը չէր ափսոսի, բայց պայմանով, որ իրենց չխաբեն, ինչպես խաբեցին իրենց ավագ եղբայրներին, այդ դժբախտներին, այդ իրենց արտահայտությամբ, «հիմարներին»)։ Բայց Վերոնը չի ուզում խաբված լինել ոչ հեղափոխության կողմից, ոչ ռեակցիայի։ Նա միանգամայն համաձայն է հասարակությունը շրջել տակն ի վեր, եթե դրա համար նախադրյալներ կան։ Եթե այդ նախադրյալները չկան, Վերոնը խառնակիչների հախից կգա։ Ավելի վատ նրանց համար։ Թող գրողի ծոցը գնան պարտվածները։ Արհամարհանք դեպի թույլերը—ահա Վերոնի բարոյականությունը։ Թող թույլերը նրանց ոտքերի տակ չընկնեն։

Վերոնը սպասում է։ Նա ուզում է նայել, թե կհաջողվի արդյոք մոսկովյան հսկաներին իրենց համար ճանապարհ բացել։ Իսկ առայժմ նա Բուշարի օգնությամբ ականջը դնում

է Հեղափոխության և Փարիզի որովայնին։ Նրան շատ ժամանակ պետք չի լինի—նա շատ շուտ կհամոզվի, որ պատուղը մահացած է. նա զրկված է ամենակարևոր օրգաններից։ Այդ հեղափոխական, կամ իրեն հեղափոխական համարող, երիտասարդության անձև զանգվածում ոչ մի մարդ չկա, որը պատրաստված լիներ հեղոփոխական գործողության համար։ Ոմանք գործողությունը շատ պարզ են պատկերացնում, անչափ պարզ. նրանց համար դա նշանակում է դնգսել։ Դնգսել, առանց նայելու, թե ում է կպչում։ Մյուսների համար գործողությունը ներկայանում է տեսական վեճերի ձևով։ Միայն իրեն՝ տիրոջն է հայտնի, թե նրանք երբ կդադարեն վիճելուց. ասենք, նրանք, կարծեմ, դա չեն էլ ուզում։ Դոկտրինայի մաքրությունը պահպանելու պարտականությունը ամենամոլեռանդ դոկտրինյորներին ազատում է գործելու անհրաժեշտությունից. գործողությունը միշտ էլ մեծ թե փոքր չափով կոմպրոմիս է։ Բայց և սրանք, և մյուսները— և գործողության մարդիկ, և տեսաբանները ունեն միևնույն կոպիտ անտեղյակությունը կենդանի իրականության, ժամանակակից գիգանտ պետությունների օրգանիզմի, նրանց շնչողական և մարսողական ապարատի, նրանց ամենօրյա տնտեսական կարիքների և կյանքի օրենքների մասին, որոնց ենթարկվում են այդ Գարգանտյուաների որովայնն ու թոքերը։ Որտե՞ղ և ինչպե՞ս կարող էին խեղճ տղաները— ուսանողները, բանվորները, պատերազմի մասնակիցները— իմանալ այդ բոլորը։ Վերոնը լավ գիտե որովայնը. դրամը, բանկը, գործը, շահագործման շինարարական փայտամածների վրա մշտական իրարանցումը, հրեշավոր մեքենան, որն անկանգ ծամլմորում է բնությունը, բնության նյութերը դարձնելով սննդամթերք, կղկղանք, նորից սննդամթերք... Նա գայլաձկան իր երախով նայում է այդ պարզամիտներին և լսում նրանց։ Ծուռ քմծիծաղ, դաժան կարեկցանք։ Եվ այնուամենայնիվ Վերոնը նրանց չի լքում։ Մինչև որոշ ժամանակ։ Բարենպաստ հանգամանքներում նրա անվիճելի գերազանցությունը բոլոր այդ հարցերում կարող է նրա համար պարագլխի դեր ստեղծել... Բայց հանգամանքները կնպաստե՞ն արդյոք։ Մանավանդ որ նա վստահ չէ, թե այդ հիմարները կհամաձայնվեն այն ժամանակ ընդունել իր գե-

բաղանցությունը։ Հետո կտեսնենք։ Առայժմ դեռ նա կուլ է տալիս Մարքսին և Բուշարին մանր բուրժուա է անվանում, որովհետև Բուշարի բերանը լցված է Պրուդոնով, իսկ Պրուդոնը բռի է։ Բուշարը զուրկ է հումորի զգացումից։ Սկզբում նա կատաղությունից խեղդվում է, հետո սկսում է բղավել, և, վերջապես, նրանք ի զվարճություն գալլորկայի, մեկը մյուսի վրա են հարձակվում, և երկուսը միասին՝ հասարակության վրա։ Կողքից կարելի է կարծել, որ նրանք իրենց Դանտոն և Ռոբեսպիեր երևակայեցին Կոնվենտում, գլուխների համար սակարկում էին, և նրանցից յուրաքանչյուրը մյուսի գլուխն է պահանջում։ Բայց Վերոնը այդ աստիճան հիմար չէ։ Պետք է Բուշար լինես, որպեսզի ամեն ինչ լուրջ ընդունես։ Եվ որքան ավելի շատ է Բուշարը խոսում ու փրփրում, այնքան ավելի խորն է նա սուզվում իր լրջության անդունդը։ Արտաբերված բառը ամենևին չի թեթևացնում նրան, ինչպես շատ-շատերին, որոնց մոտ կրակը ծխի հետ անցնում է։ Բուշարին խոսքը պարտավորեցնում է։ Նրա համար այդ խոսքը ճիշ է, որից պրկվում են մկանները և բարձրանում է բռունցքը,— ինչպես նախնադարյան բոլոր էակների մոտ։ Վերոնին դիվային բավականություն է պատճառում նայել, թե ինչպես Բուշարը, գազազած, դեմ է առնում պիկադորի նիզակին, և վերջինս ինչպես է գրգռում Բուշարին։ Եթե նրան հաջողվի միաժամանակ ցած գցել նաև պիկադորին, այդ խաբեբային, որը խճճվել է իր զրահի մեջ, դա ավելի լավ կլինի։ Հիանալի տեսարա՞ն է։ Վերոնը դեմ չէ իշնել խաղահրապարակ ավելի մոտիկից նայելու։ Նրան չի կարելի հանդիմանել վախկոտության համար։ Նա այն մարդկանց հետ է, ով ապրիլի սկզբում մոլեգնաբար ագիտացիա է անում ի շահ Ժորեսի պատվին ցույցի, և ինքն էլ մասնակցում է այդ ցույցին։

Բուշարը Մարկին քարշ տվեց սոցիալիստ-հեղափոխական ուսանողների Ընկերության ժողովին։ Մարկը չէր դիմադրում։ Մարկն այդ ժողովներին գնում է ոչ կանոնավոր, ավելի շատ հետաքրքրությունից, քան կարեկցանքից (նրա հետաքրքրասիրությունը վերածվելու էր կրքի, որը նա պարտք էր անվանում։ Նա փորձում է կարդալ Մարքսին, բայց կարդում է վատ։ Թերթում է։ Նրա անկարգապահ ինդիվիդուա-

լիզմը ծառս է լինում պատմական մատերիալիզմի անողոք անհրաժեշտության առաջ։ Զուր է նա փորձում, ասկետության պատճառով, սանձել իր ամենակուլ «ես»։ «Ես» չի ենթարկվում։ Մարքսիզմի մարգագետնում «ես» ամեն ինչին կպչում է միայն իր արհամարհական քթանցքների եզրերով։ «Ես» վրդովվում է «հոգեկանի» նկատմամբ ունեցած «տնտեսականի» այդ ստորացուցիչ գերազանցության համար։ Մինչդեռ Մարկը պետք է իմանար,— Մարկը և նրա մայրը,— ինչ է նշանակում բախվել «տնտեսականի» հետ և ինչպես է մարդ հարկադրված լինում հաշվի նստել նրա հետ։ Բայց և նա, և նրա մայրը այն ռոմանտիկներից էին (ինչպես է ավելի լավ նրանց անվանել. հնաճաշակ, հավիտենակա՞ն), որոնց համար կյանքի իսկական իմաստն այն է, որ պաշտպանեն իրենց անկախ հոգին ընդդեմ հանգամանքների անմիտ զուգակցության։ Դա չի նշանակում, թե ինչ-որ տեղ և երբեմն դա ինչ-որ մեկին հաջողվել է։ Բայց նրանց ուզածն այդ է։ Նրանք իրենք չէին լինի, եթե ձգտում չունենային դեպի այդ։ Եվ եթե այդ ձգտումն անգամ հաղթված է,— բավական է և այն, որ այդ ձգտումը կա նրանց մեջ։ Թող ճակատագիրն այդ ձգտումը ոչնչացնի, բայց, միևնույն է, նա պետք է դրա հետ հաշվի նստի. այդ ձգտումը իրականություն է, որը կարող է գոյություն ունենալ ճիշտ այնքան, ինչքան և ճակատագիրն ինքը... Մարկն այնպիսի հոգեկան վիճակում չէ, որ այնպիսի գրքեր կարդա, որոնք չեն արտացոլում նրա սեփական ցանկությունները։ Մարկը նրանց նայում է անբարյացակամ հայացքով։ Նա դեռ հեռու է այն բարձրաստիճան օբյեկտիվությունից, որը դրսևորվում է հասուն կոփված մարտիկների մոտ, երբ նրանք ընդհարվում են թշնամու հետ։ Նա հակառակորդին չի լսում մինչև վերջ։ Նա ընդհատում է հակառակորդին, նրան ասելով. «Ո՛չ»։

Եվ նույնիսկ ավելին. նա հրաժարվում է հետազոտել ոչ միայն օտար միտքը, թեև դա կօգներ նրան ավելի լավ իմանալ, թե այդ ինչի դեմ է, որ ինքը կռվում է, այլև ամեն մի միտք, որի յուրացումը պահանջում է նրանից որոշակի ճիգեր։ Նա չի կարողանում ոչինչ լրջախոհ կարդալ։ Նրա ուշադրությունը ակնթարթորեն հոգնում է։ Նա մտքի տենդ ունի։

Նա ընդունակ չէ ոչ մի բանի վրա կենտրոնանալ։ Նա սկսում է քսան գիրք միանգամից կարդալ և ոչ մեկը մինչև վերջը չի հասցնում։ Առաջին շրջադարձից նրա միտքը սլանում է նոր հետքով։ Այդ հետքերն այնքան շատ են, և այնպես են դրանք խճճված, որ նրա միտքը մերկ տեսնողը, միևնույն է թե կատաղած շուն տեսներ, որը պտտվում է անտառով մեկ, ծվատելով իր վրայի մորթին և ծառերին զարնվելով, մինչև որ ընկնի և նրա աչքերում սկսեն թռչկոտել արյունոտ պեծերը։ Մարկը նախանձում է Բուշարի զրգռված համառությանը և Ռյուշի կարգապահությանը, որը ամեն ինչի նկատմամբ անտարբեր է, որի մոտ, թվում էր, ամեն ինչ ուղիղ է, ամեն ինչ՝ տողված, ինչպես նոտայի թուղթը։ Նրանք անում են այն, ինչ անում են. թող մնացյալը սպասի իր հերթին։ Բայց նա չի ուզում նմանվել նրանց։ Բուշարը, որը տքնում է իր ակոսի վրա և ողողվել է քրտինքի մեջ, նրան կարեկցանք է ներշնչում։ Ռյուշի ծիծաղելի բծախնդրությունը նրան ջղայնացնում է։ Մարկը չի պատկերացնում Ռյուշին սիրո մեջ, բայց եթե երբևէ տրվի սիրո, ապա դա տեղի կունենա այն պահին, որը նախապես նշանակված է նրա ցուցակում, և ընդամենը նա կմնա նույնքան անտարբեր։ Մարկն ուզում է նրան դուրս շպրտել իր անկողնուց (չէ որ նա, մտածելով Ռյուշի մասին և իր մտքերում հասնելով մինչև հալյուցինացիաների, նրան դրեց իր անկողինը։ Փա՜ռք աստծո, Ռյուշն այնտեղ չէ)։ Բայց մահճակալը դատարկ է, իսկ երևակայությունը՝ լիքը։ Եթե մահճակալին աղջիկներ չկան, նրանցով լցված է ուղեղը։ Այնտեղ նրանց մոտ ծեծկռտոց է սկսվում մտքերի հետ։ Մարկին նրանք ցասումով են լցնում։ Պատերազմի ժամանակ իր բնազդներին թողնված, նա կնոջը ճանաչեց անչափ շուտ և անչափ կոպիտ։ Ոչինչ նրան չէր կանգնեցնում,— ոչ զսպվածություն, ոչ ծածկոցներ. նուրբ ու շիկացած, նա մարտի մեջ էր նետվել, ինչպես գալած կապարով տակառի մեջ։ Նա այդտեղից դուրս եկավ այրված, վիրավորված։ Նրա վերքերը չեն լավանում։ Մարմնի մեջ ցցվել է ցանկության նիզակը, բավականություն ստանալու սարսափից գլուխը պտտվում է։ Նրա պրկված ջղերը տնքում են, ինչպես ջութակը ամենաչնչին հպումից։ Իր ժամանակից շուտ հղկված մտքով նա հաշիվ

է տալիս իրեն սպառնող վտանգի մասին, բայց ոչ ոքի հետ այդ մասին չի խոսում։ Նա այնքան է միայնակ և այնքան երկար է եղել միայնակ, որ իսկական տղամարդու պարտականությունը համարում է իրեն սպառնացող վտանգների մասին լռելը և միայնակ պաշտպանվելը։ Ահա թե ինչու, Փարիզում մնալով մենակ, բարոյապես ոչ մի բանով չսանձահարված, նա կանանցից զգուշանում է, ինչպես կրակից։ Նա վախենում է ոչ թե կնոջից, այլ ինքն իրենից։ Նա չգիտի, կարո՞ղ է արդյոք հետո պահպանել իր նկատմամբ ունեցած իշխանությունը։ Ոչ, նա չափազանց լավ գիտե, որ չի կարող։ Եվ, ոչ մի հակում չզգալով դեպի ասկետիզմը, ներքնապես ծիծաղելով դրա վրա, նա հարկադրում, պարտադրում է իրեն դեպի այդ ասկետիզմը։ Եվ թաքցնում է։ Ոչ ոք դա գլխի չի էլ ընկնում (բացի Ռյուշի աչքերից)։ Եվ հետո նա հպարտ է և բռնակալ, ինչպես այն մարդկանց մեծամասնությունը, ովքեր խանդով են վերաբերվում իրենց սեփական անկախությանը և ովքեր միաժամանակ չեն հանդուրժում, որ շրջապատողները կախված լինեին իրենց քմահաճույքներից։ Մարկն ուզում է, որ այն, ինչ ինքը սիրում է, պատկանի միայն իրեն։ Նա այնքան միամիտ չէ, որպեսզի չիմանա, որ դա երբեք չի լինելու։ (Ասենք, նա ի՞նչ կարող էր անել, եթե այդպես լիներ)։ Նա ասում է. «Բոլորը կամ ոչինչ։ Ոչի՞նչ... Ոչինչ— մինչև Հաջորդ պայթյունը»։

Տոլստոյն ապացուցում է, որ մարմինը հաղթահարում է նրանց, ովքեր չափազանց կուշտ են կերակրում նրան։ Մարկը կարող էր նրան առարկել։ Հազվադեպ են այն օրերը, երբ նա կուշտ ուտում է։ Սակայն դատարկ փորին կրակն ավելի ուժեղ է այրում։

Նրա դրամային ողորմելի միջոցները հալվում էին շատ արագ, և, համոթ իր, նա ի վիճակի չէր դրանք լրացնելու։ Նա երևակայում էր, թե կարող է սեփական ուժերով դուրս պրծնել, թե զուսպ, եռանդուն, ոչ հիմար երիտասարդը միշտ էլ կարող է Փարիզում վաստակել գոնե մի քիչ այն բանի համար, ինչը նրան խիստ անհրաժեշտ է։ Բայց, պետք է ենթադրել, որ այդ «մի քիչը» այնուամենայնիվ չափազանց շատ է. Մարկն այդքան չի վաստակում։ Ասենք, նա գիտե՞ արդյոք բավականանալ միայն նրանով, ինչը խիստ անհրա-

ժեշտ է։ Նա հերոսաբար ամեն ինչում իրեն զրկում է—հինգ օր շարունակ, բայց վեցերորդ օրը ի վիճակի չէր լինում դիմանալ—եռուցիչը պայթում է. ընդամենը մի քառորդ ժամում նա ծախսում է այն, ինչը նախատեսվում էր ամբողջ շաբաթվա համար։ Անչափ շատ գայթակղություններ կան պատանու համար։ Նա այլանդակ կլիներ, եթե գայթակղություններ չունենար, նա գերայլանդակ կլիներ, եթե երբեմն չտրվեր դրանց։ Մարկն իհարկե, ոչ այլանդակ է և ոչ էլ գերայլանդակ։ Նա տրվում է։ իսկ հետո անխուսափելիորեն ընկճվում էր ոչ այնքան իր թուլության համար, որքան անհեթեթության։ Նրան մշտապես ապշեցնում էր այն բանի ավելորդությունը, ինչ ինքն ուզում էր։ Մեզ ի՞նչ է մնում,— լինի դա կենդանի էակ, թե իր,— նրան տիրանալուց մի ակնթարթ հետո։ Ոչինչ չի՞ մնում մեր ձեռքին։ Ոչինչ չի՞ մնում մեր սրտում։ Ամեն ինչ դուրս պրծավ-գնաց... Այն ժամանակ նա իրեն դատապարտում է (դա շատ վատ դեղ է) ինքնազսպման նոր շրջանի։ Իհարկե, նա միայն ավելորդ անգամ կպայթի։ Բայց եթե Մարկը գիտե փողերը զուր տեղը մսխել, ապա նա փող վատակելու ոչ մի տաղանդ չունի։ Նրա ողնաշարում ճկունություն չկա, որպեսզի ճանապարհ բացի դեպի փողերը։ Աննետայի որդին ի ծնե բնությունից չէր ստացել այդ շնորհը։ Նա կարծրամտացել էր մտավորականի սոցիալական արժեքի հնացած գիտակցության մեջ (կյանքից ստացած ապտակները դեռ չէին հասցրել նրան դարձնել ավելի հարմարվող)։ Եվ նրան անվայել էր թվում խախտել այդ տրադիցիան։ Նա ապարդյուն կերպով հետամուտ է ածում իր դիպլոմները և կիրառում է փնտրում իր փոքրիկ գիտելիքների համար։ Ո՞ւմ են դրանք պետք։

Բուշարը նրան ասաց.

— Ինձ նման վարվիր։ Վերոնից վերցրու։ Ինչո՞ւ ես ափսոսում հորթի կաշին։

Բայց Մարկը չափազանց հպարտ էր՝ իրեն այնպիսի վիճակի մեջ դնելու համար, երբ ողորմության հետ միասին մարդ ստիպված է լինում հանդուրժել վիրավորական գերազանցության դրսևորումները, գերազանցություն, որին կհավակներ պարտատերը։

— Նրա գերազանցությո՞ւնը։ Ես նրան խորհուրդ չէի տա

իմ քիթը խոթել իր գերազանցությունը։ Ես ոչնչով պարտական չեմ նրան։ Ես պարզապես նրանից վերցնում եմ,— մռնչում է Բուշարը, և հայտնի չէ, նա կատա՞կ է անում, թե ոչ։

Մարկը չոր առարկում է, որ գողից գողացող գողը նույնպես գող է։ Բուշարը, չարությամբ պտտելով աչքերը, պատասխանում է.

—Կյանքը գողություն է։ Գողացիր կամ սատկիր...

Այո, ապրել նշանակում է թաղել նրանց, ովքեր հավիտենական մարտում վիճարկում են շնչելու և երկրի երեսին տեղ գրավելու ձեր իրավունքը։ Ոչ մի էակ չի ապրում այլ կերպ, քան միլիոնավոր ուրիշների հաշվին, որոնք հավակնում են գոյություն ունենալ։ Մարկը դա գիտե։ Այդ դաժան տարինների երեխաների միջև չկա մեկը, որ դա չիմանա։ Բայց եթե բոլորը—բացի նրանցից, ում վրա դրված է մահվան կնիքը, — պայքարի մեջ են մտել, ապա դեռ կան (փա՞ռք աստծո) որոշ քանակությամբ և այնպիսիները, որոնք պայքարի մեջ ուզում են պահպանել ասպետականության ոգին։ Եթե նրանք լսեին այդ խոսքը, բողոք կբարձրացնեին. նրանք կվախենային ծիծաղելի երևալուց։ Բայց մոդայից դուրս էին եկել միայն խոսքերը։ Իսկ ոգին ամեն կարգի մոդաների պայմաններում պահպանում է իր մեծ խիզախությունների և մեծ արատների հավիտենական զենք ու զրահը։ Մարկը Մարկ կմնար նույնիսկ Մերովինգների[1] ժամանակ, և նա Մարկ կմնա մինչև դարի վերջը։

Ոչ, նա չի գնա այդպիսի Վերոնից փող խնդրելու—և անգամ պահանջելու—Վերոնից, որին նա հոգու խորքում արհամարհում է։ Հանդիպելով նրա հետ Ռյուշի տանը, Մարկը նույնիսկ չի համաձայնվում նրանից թատրոնի, համերգի կամ ցուցահանդեսի տոմսեր ընդունել, որոնցով միշտ լիքն են Վերոնի գրպանները և որոնք նրա համար ոչինչ չարժեն։ Մինչդեռ Մարկի ուրիշ ծրագրեր «ընդունելը» ենթարկում են փորձության, և նա զուր է դա փորձում թաքցնել,—

---

[1] Մերովինգներ—ֆրանսիական թագավորների առաջին դինաստիան (V—VIII դարեր)։

Ռյուշն ամեն ինչ տեսնում է։ Նրան զվարճացնում է անկախության հպարտ և խանդոտ զգացումի ու զվարճանքների մանկական ծարավի միջև տեղի ունեցող թաքուն պայքարը. իրեն Ռյուշին բնորոշ են այդ երկու զգացումները, և դրանից Մարկն ավելի է մերձենում նրան։ Մի անգամ Ռյուշը իրեն մայրական բավականություն է պատճառում (ևս մի հնացած խոսք, և նա Մարկին կհեռացներ իրենից). տեսնելով, որ Մարկի աչքերում Վերոնից համերգի տոմս վերցնելու ցանկություն առկայծեց,— ցանկություն, որը նա նույն րոպեին կատաղությամբ ճնշեց իր մեջ,— Ռյուշը տոմսը խնդրում է իր համար։ Իսկ երբ նրանք մենակ են մնում, աղջիկն իբր թե հիշում է, որ ինքը չի կարող տոմսից օգտվել և այն տալիս է Մարկին. Մարկը նրանից տոմսը կարո՞ղ է վերցնել, նա հրաժարվելու հիմք չունի։ Եվ միայն համերգում է Մարկի մոտ կասկածանք առաջանում. արդյոք իսկապե՞ս Ռյուշը տոմսը իր համար վերցրեց։ Չէ՞ որ Հենրիետտա Ռյուշին երաժշտությունն ավելի չի հետաքրքրում, քան պատուհանները թմբկահարող անձրևը։ Մարկի տրամադրությունն այնքան է ընկած, որ համերգից նրա ստացած ամբողջ բավականությունը թունավորված է։ Մի ուրիշը նրա փոխարեն Ռյուշին շնորհակալ կլիներ, մինչդեռ նա իր վրա զայրանում է, որ չկարողացավ Ռյուշից թաքցնել իր ցանկությունը։

Մարկն սկսում է մտածել, որ վերջ ի վերջո, եթե ուրիշ կերպ արդեն չի կարելի, ապա Սիլվիայից փող վերցնելը պակաս ստորացուցիչ է, քան ուրիշներից։ Բայց այն բանից հետո, երբ նա մի անգամ հրաժարվել է, այնքան էլ դեղեցիկ չէ հիմա գնալ և խնդրել։ Ու թեև դրամարկղը երեկ երեկոյից դատարկ է, բայց նա իրեն ամուր է պահում. նրա սիրտը կծկվել էր ավելի շատ, քան ստամոքսը։ Մարկի բախտից, Սիլվիան այդ օրը ավտոմոբիլով անցնում է նրա կողքով, ճյուղին նստած կաչաղակի իր աչքով նկատում է նրան, և ձայն է տալիս... Մարկը հավաքում է իր ամբողջ ուժերը, որպեսզի իրեն զսպի և չթռչի ավտոմոբիլի մեջ... Եվ այնուամենայնիվ թռավ։ Բայց գոնե Մարկը բավականություն է զգում, որ, ավտոմոբիլի մեջ նստած ու լսելով այդ շատախոսին, նա նորից ձեռք բերեց իր սովորական նե-

բողամիտ տեսքը։ Իսկ Սիլվիան, պատմելով իր գործերի մասին, հարցնում է, վերջապես, թե ինչպես են իր քրոջ տղայի գործերը։

— Գիտես ինչ, գրպանս լիքը փող է։ Վերցրու։ Միևնույն է, չգիտեմ ինչ անեմ։

Իսկ Մարկը պատասխանում է իր անկաշկանդ, մի քիչ սեթևեթող տոնով.

— Տե՛ր իմ աստված։ Էհ, եթե այդքան ուզում ես։ Ես կգտնեմ ինչ անել։

— Ավարա,— ասում է Սիլվիան։— Դու լավ կանեիր ինձ մոտ գայիր, կզվարճանայիր մի քիչ։

Եվ նա Մարկի գրպանները փող է լցնում։ Մարկն ուզում է նրան համբուրի—Սիլվիան այտի վրա տեղ է ցույց տալիս, որտեղ կոսմետիկան չի տուժի։ Հետո ճմկթում է Մարկի դնչիկը, գտնում է, որ նա գունատ է, մի քիչ նիհարել է, բայց գեղեցիկ է, հայացքը դառել է ավելի լուրջ, ավելի հետաքրքիր։ Նա, ըստ երևույթին, ժամանակ չի կորցնում այն պահից ի վեր, ինչ արածում է ազատության մեջ...

— Խոստացիր, որ կգաս։ Դե, խոստացիր։

Իսկ Մարկը պատասխանում է Կերուբինոյի[1] հանդգնությամբ.

— Խոստանում եմ։ Դու նախապես վճարեցիր...

Սիլվիան ետ է հրում Մարկի դնչիկը, նրա վրա թողնելով իր երկու մատների հետքը։

— Քրջո՜տ,— ծիծաղելով ասում է Սիլվիան։— Ոչ, դու արի՛։ Կտեսնես, ես երբեք նախապես չեմ վճարում...

Մարկն սպասում է, մինչև որ ավտոմոբիլը անհետանա, և գնում է մոտակա ռեստորանը մի կտոր արյունոտ միս ուտելու։ Նրա նրբակիրթ ստամոքսը այդ երեկո լրացնում է երկու բաց թողած ճաշը։ Եվ Մարկը մտածում է, որ այսօր Սիլվիան դիվային գեղեցկություն ուներ։ Ինչպիսի՜ խարույկ կա աչքերում։ Եվ ինչպե՜ս է բուրում... Մարկն իր շրթունքներից լիզում է այդ բուրմունքը...

---

[1] Կերուբինո—Բոմարշեի «Խելահեղ օր կամ Ֆիգարոյի ամուսնությունը» կատակերգության պերսոնաժ։

Բայց և այնպես նա չի շտապում կատարել խոստումը։ Նա խուլ է ձևանում, երբ երկու շաբաթից հետո մորաքրոջից հանկարծակի հիշեցում է ստանում.

«Զարահնի տղա։ Իսկ պա՞տքդ»։

Օ, ո՜չ։ Եթե այդ ձևով պահանջես, նրանից ոչինչ չես ստանա։ Բայց ամեն օր, և հատկապես երբ նա բնթերցում է պարֆյումեր-արքայի լրագրում, որ գեղեցկուհի պարֆյումերուհին իր սալոններում պարերով, երաժշտությամբ և ամենամոդայիկ պիեսով շքեղ տոնակատարություն է կազմակերպել ֆինանսական և քաղաքական աշխարհի տուզերի, նրանց էգերի և մամուլի ու արվեստի աշխարհից նրանց ուղեկցող ծաղրածուների համար, Մարկը այրվում է գնալնայելու ցանկությամբ։ Ինչո՞վ է իրեն վտանգի ենթարկում։

Նա շատ բան է վտանգի ենթարկում, միայն թե իրեն դա չի խոստովանում։ Չի ուզում խոստովանել։ Բայց չի կարող չզգալ։ Նրան վտանգ է սպառնում։ Երիտասարդ Հերկուլեսի նման նա կանգնած է ճամփաբաժանին։ Եվ եթե Հերկուլեսն ինքը ընտրեց ճախարակի և բարձի ճանապարհը, ապա շատ քիչ շանսեր կան, որ Փարիզի կորած մանկիկը բռնի հրաժարման ուղին, երբ գայթակղիչ Օմֆալան[1] կանչում է նրան ամեն քայլում։ Մարկը մտովի չափում է վայելքներն ու դժվարությունները, ցից կատարները, ուր պետք է բարձրանալ, և արդեն առաջին իսկ քայլից իրեն անչափ հոգնած է զգում։ Նրա գլուխը պտտվում է, ամբողջ մարմինը ցավում է, դավաճանական թուլությունը տարածվում է,— ոտքերով մեկ։ Ինչպես և բոլոր նրան շրջապատող երիտասարդների մոտ—ձգտումը դեպի ցած, մոռացության անդունդը, մոռացությունը—ցանկասիրության ամենաուժեղ խայծն է։ Փախչել սեփական անձից... խուսափել գործողությունից... «Ո՞վ է ինձ հարկադրում։ Մեր ոչ մարդկային ժամանակի ճակատագի՞րը։ Իսկ ես չեմ ասել, որ ուզում եմ ապրել հենց հիմա։ Ես ժխտում եմ նման ճակատագիրը։ Ես չեմ կարող... Ճակատագիրը ես ինքս եմ։ Ես ինքս եմ ինձ հրա-

[1] Օմֆալա—Լիդիայի լեգենդար թագուհին, որին մի քանի տարի ծառայում էր Հերկուլեսը (հուն. առասպ.)։

մայում հաղթահարել գիրդությունը... Բայց ես ի՞նչ երաշխիքներ ունեմ՝ կատարին հասնելու համար։ Եվ ես այնտեղ ինչ եմ գտնելու, երբ հասնեմ կատարին, իմ ճիգերից հյուծված, տանջված, կորցրած իմ էությունը։ Եվ կգտնե՞մ, արդյոք, որևէ բան։ Իսկ եթե լեռնանցքի այն կողմը— անէությո՞ւն է»։

Ամենուրեք անէություն է և մահ։ Պատերազմը, որը վերջացած են համարում (իսկ նա դեռ շարունակվում է), տարածությունը գոտևորել է հեղձուցիչ գազերի ղոնայով։ Նա պարուրում է հորիզոնը։ Նա՝ իրականությունն է, միակ իրականությունը, որ տնօրինում է բոլոր այդ երիտասարդներին։ Բոլոր գաղափարախոսությունները, որոնք այդ պատերազմը մերժում են կամ, չհամարձակվելով մերժել, փորձում են փառաբանել, բոլոր այդ գաղափարախոսությունները պոռնիկներ են, որոնց երեսին ապտակներ պետք է հասցնել։ Ես նրանց քիթոմռութը կչարդե՞մ։ Ահա նա՝ պատերազմը։ Նա իր ճանկերով բռնել է իմ կոկորդից, ես լսում եմ նրա գարշահոտ շունչը։ Եթե ես ուզում եմ ապրել, ես պետք է ազատվեմ ու փախչեմ կամ ճեղքեմ և դուրս գամ։ Ճեղքել և դուրս գալ, նշանակում է իմանալ, թե ինչ կա այն կողմում... Իմանալ, կարողանալ։ Կհաջողվի՞ արդյոք... Իսկ փախուստը նույնպես իմանալու ձև է, միայն թե ավելի ցածր. իմանալ, որ ճակատամարտը տանուլ է տրված։ Թող փրկվի, ով կարող է։ Բայց այնպիսիները, ինչպիսին Մարկ Ռիվիերն է, կարող են փրկվել, միայն ճեղքելով թշնամական շարքերը։ Փախչել առա՞ջ։ Նա անընդհատ այդ է կրկնում, որպեսզի ինքն իրեն համոզի... Բայց արդյո՞ք համոզված է։ Նրա շուրջը լիակատար փլուզում է, և երիտասարդությունը, և ծերունիները սրտապատառ փախչում են։

Բոլորը ելք գտան և նետվեցին դեպի այդ ելքը. դանսինգներ, սպորտ, ճանապարհորդություններ, ծխարաններ, էգեր— հաճույքներ, խաղ, մոռացություն—փախուստ, փախուստ...

Փախնելու քսան միջոց կար։ Բայց ոչ ոք աղնվություն չուներ խոստովանելու, որ այդ միջոցներից ամեն մեկը փախուստ է։ Պետք է մարդ շատ ուժեղ լինի, որպեսզի արհամարհի ինքն իրեն և այնուամենայնիվ պահպանի դեպի

կյանքն ունեցած ձգտումը։ Ամենանրբաճաշակները, այդ թվում Ադոլֆ Շեալիեն, առաջարկում էին հեռանալ դեպի արվեստը և քնությունը... Առաջին էկլոգան (երկրորդը նույնպես)[1]։ Ախ, ինչ հիանալի օրինակ է այդ քնքուշ հետպատերազմյան Վերգիլիոսը, այդ պարտված, ինչպես և նրանք, նոր հարուստների խնջույքի երգիչը, հարուստներ, որոնք պրոսկրիպցիաներ են ստորագրում... (Օ՜, ծաղր։ Եվ այդ ստվերի ուժասպառ ձեռքին էլ հավատ է ընծայել մռայլ Դանտեն)։ Մանտուայցին դեռ կարող էր ազդարարել. «Deus nobis haec otia...»[2]։ Բայց այսօրվա երիտասարդ Տիտիրներին և Կորիդոններին[3] ոչ մի Deus[4] չներկայացավ։ Նրանց անհրաժեշտ կլիներ ինքնախաբեության մեծ դոզա, որպեսզի երևակայեին, թե իբրև հին աշխարհի գալիք ցընցումը կխնայի նրանց, ովքեր, գլուխները վերմակի տակ թաղած, ջանում են ոչ մի բանի մասին չմտածել, Նրանց, ովքեր կավճեգծի առջև գտնվող հավի նման քարացել են արվեստի խաղասեղանների առաջ, որտեղ կրուպյեի դերը կատարում է քնքշացրած էսթետիզմը իր սպիտակ, բայց կեղտոտ ձեռքերով, որոնք միշտ խուսափել են գործունեությունից։ Գթություն չի լինելու նաև նրանց նկատմամբ, ովքեր հույս ունեն, թե փոթորկի գրոհից իրենց կպաշտպանեն հին օջախը, հին արյունը, ավանդույթները, կյանքի դարավոր տնական գյուղական կացութաձևը, որը պահպանել է նրանց հայրերին։ Կարծես թեկուզ մի պատ կարող է դիմանալ այդ գալիք փոթորիկներին։ Վայ նրանց, ովքեր ֆլեյտա են նվագում, եթե նրանք մարտադաշտից հեռանան ավելի շուտ, քան այդ մարտի ելքը վճռվելն է։ Ինչպիսին էլ ուզում է լինի ելքը, հաղթանակողը նրանց կտրորի ոտքերով։ Եվ նրանց երգերը ցաքուցրիվ կլինեն փոշու հետ միասին... Բայց, գուցե, նրանք մինչև Ջրհեղեղի իրենց քշելը-տանելը գաղտնաբար հույս ունեն, որ դեռ կհասցնե՞ն իրենց ավազ երևակայել։ Նրանց համար բավական է և քառորդ

---

1 Նկատի են առնված Վերգիլիոսի պաստորալները։

2 Աստված է մեզ այդ խաղաղությունը (տվել...) (լատ.)։

3 Տիտիր և Կորիդոն—Վերգիլիոսի էկլոգաների պերսոնաժներ։

4 Աստված (լատ.)։

երը, որ մնում է իրենց։ Նրանք իրենց կյանքը խաբում են այդ կյանքի մասին ունեցած հարատևության հույսերով։

Գոնե նրանք անկեղծ ցինիզմ ունենային հայտարարելու. «Վաղը ես մեռած կլինեմ։ Վաղը ես արդեն չեմ լինելու։ Միայն այսօրն է իմը։ Եվ ես ուտում եմ»։ Բայց նրանք ամբողջ ուժով ջանում են իրենց համար գտնել այս կամ այն (միևնույն է թե որ) գաղափարական արդարացումը... Ինչու. են նրանք իրենց խաբո՞ւմ։ Ահա թե ինչու. երբ մտավորականները որևէ բանից հրաժարվում են, նրանք պահանջ են զգում ծածկել իրենց հրաժարումը ամեն տեսակի փաստարկներով։ Ավելին, նրանք ամեն կարգի փաստարկներ են փնտրում, որպեսզի դրվատեն այդ հրաժարումը։ Առանց փաստարկների նրանք մի քայլ անել չեն կարողանում։ Նրանց բնազդը ինքնուրույն գործելուց ետ է վարժվել։ Թող դրանք լինեն վախկոտներ կամ քաջեր, նրանց միշտ պետք է որևէ «ինչու»։ Իսկ եթե ցանկանաս, միշտ կգտնես։ 1919 թվին փախստականները խոր և իմաստուն պատճառների պակաս չէին զգում՝ արանքը ճղելու համար։

Մարկը արհամարհում է նրանց, ովքեր փախչում են։ Մարկը նրանց արհամարհում է լցված ցասումով, որը նրան պաշտպանում է փախչելու գայթակղությունից։ Եվ քանի որ նա նախապես դողում է այն մտքից, թե ինքը չի կարող դիմադրել, արդեն պատրաստում է իր համար արդարացման ինչ-որ երևութականություն, նա պահպանում է իր անդրդվելիությունը միայն դատապարտելու համար այն փախստականներին, որոնք ստում են, որոնք ջանում են որևէ ֆլյորով թաքցնել իրենց դասալքությունը։ Յոթնյակի կլանի ճշմարտացիության օրենքը. «Եղիր ինչ ուզում ես։ Արա ինչ ուզում ես։ Եթե ուզում ես, փախիր։ Բայց ասա. «Ես փախչում եմ»։

Նրանք այդ չէին ասում։ Նույնիսկ յոթն էին սկսում պոչ խաղացնել։ Ադոլֆ Շևալիեն առաջինն սկսեց ore rotundo[1] ցույց տալ, որ պետք է «հարմարվել իրականությանը». նա պատրաստվում էր մնկնել իր դաստակերտը։ «Դասավորվիք, ինչպես կարողանում եք։ Ես դասավորվում եմ։ Ես ռեալիստ

[1] Ամբողջ ձայնով (լատ.)։

եմ...»։ (Այդ բառն այն ժամանակները մեծ հաջողություն ուներ։ Նա թույլ էր տալիս գործեր սարքել և պնդել, որ դա երկրի երակները քաղաքական պրագմատիզմի թարմ, առողջ, համարձակ արյուն է լցնում, պրագմատիզմ, որը կարող է հակազդեցություն ցույց տալ նախընթաց սերունդների սնամեջ գաղափարախոսությանը... Սակայն այդ սերունդների գաղափարախոսությունը երբեք ճարպիկներին չի խանգարել լցնելու իրենց քսակները...)։

Վերոնը և Բուշարը դիմակազերծ էին անում Շեալիեի առաքինի գեորգիկան[1] և ոչնչացնում այն իրենց սարկազմով։ Բայց նրանք իրենք էլ էին խաբեությամբ զբաղվում։ Նրանց բոլոր ճարճատյուն ճառերը Հեղափոխության մասին խաղ էր, որը նրանց ազատում էր գործելու անհրաժեշտությունից։ Երբ նրանք իրենց ընկերական միջավայրում, ժամեր շարունակ աղաղակելով, մոխիր էին դարձնում հասարակությունը, երբ նրանք որևէ վիթխարի ցույցի պլան էին կազմում, դա անագե զինվորիկների խաղ էր։

Միակը, ով ճիշտ էր գնահատում իրադրությունը և չէր աշխատում այն գունազարդել, դա նա էր, ումից Մարկը ամենից քիչ էր անկեղծություն սպասում. Սենտ-Լյուսը։ Նա պատրաստվում էր հյուպատոսական կարիերայի և սովորում էր երկու դպրոցում. Քաղաքական գիտելիքների և Արևելյան լեզուների։ Բայց նա իրեն կապելու մտադրություն չուներ։ Նա չէր թաքցնում, որ իր նպատակը փախուստն է։ Միայն ելքը մեքենայից դուրս փնտրելու փոխարեն, մեքենա, որի թոկերը և ատամնավոր անիվները միևնույն է շուտով ձեզ կճանկեն, Սենտ-Լյուսը մտադիր էր այդ ելքը գտնել ներսում։ Հարմարվել փոթորիկի ամենակենտրոնում և առանց որևէ բանով իրեն կապելու, այնտեղից նայել, ճանաչել, գործել և բավականություն ստանալ։ Ազատ մնալ, ամեն ինչ պարզորոշ տեսնել և իրեն չհանձնել ստրկության, որը համընդհանուր է դարձել։ Ցինիկորեն շահագործել կյանքի տերերի շահերը և խաղալ դրանց վրա, բայց առանց փառամոլության և շահի։ Որսալ ակնթարթը, բայց թույլ չտալ, որ նա քեզ

---

[1] «Գեորգիկներ»— Վերգիլիոսի պոեմը (I դ. մ. թ. ա.)։

արան։ Միշտ պատրաստ լինել հրաժեշտ տալու և նրան, և կյանքին, քանի որ նման մարդիկ իրենց ամեն ինչից և նույնիսկ իրենցից օտարացած են զգում։ Մենորիկ Թիթեռներ, որոնք պատվում են ակնթարթի մրրիկում...

Սենտ-Լյուսը կարևոր չէր համարում բացատրվել ընկերների հետ, և վերջիններս էլ ձեռ էին առնում նրան։ Վերոնը բարեհոգորեն և կոպիտ Սենտ-Լյուսին ասում էր.

— Դու վաճառվո՞ւմ ես։

Իսկ Բուշարը, դիմելով Վերոնին, ասում էր.

— Աղջիկը հավատարիմ է իր խառնվածքին։

Հարուստ Ադոլֆը արհամարհաբար լռում էր։ Նա չէր պատկերացնում, թե այդ ինչպես կարելի է զոհաբերել իր ապատությունը ի սեր պետության։ Եվ Մարկը նույնպես լռում էր, բայց նրա լռությունը վիրավորական չէր. նա մասամբ կռահում էր նրբամիտ, կատվի նման ճկուն պատանու ցանկությունները, որն իրեն նեղություն չէր տալիս պաշտպանվելու։ Ինչի՞ համար։ Բայց, գիտակցելով, որ Մարկը համակրանք է զգում դեպի նա (զզվանքի հետ խառնված), Լյուսը նրան ցույց էր տալիս երեք ավգուրներին և իր հաճելի ժպիտով, որից նրա այտերին փոսիկներ էին հայտնվում, ասում էր.

— Ձեզանից ո՞վ առաջինը կդավաճանի։

Եվ, մեղմ շարժումով իր ձեռքը Մարկի ձեռքին դնելով, խսկույն ևեթ ավելացրեց.

— Իսկ վերջինը դու կլինես։

Մարկը, փնթփնթալով, ձեռքն իրեն էր քաշում։ Այդ գովասանքը վիրավորում էր նրան։ Լյուսի աչքերը փաղաքշորեն նրան էին նայում։ Լյուսը գիտեր, որ Մարկը նույնպես նրան արհամարհում է, բայց Մարկի արհամարհանքը նրան չէր վշտացնում. այդ արհամարհանքի մեջ վիրավորանք չէր զգացվում։ Բոլոր ընկերներից Մարկը միակն էր, որին Լյուսը պատրաստ էր իրեն վիրավորելու իրավունք վերապահել. Լյուսը համարում էր, որ միայն Մարկն է ազնիվ և ազնիվ էլ կմնա մինչև վերջը։ Թերևս, մեկ էլ Բուշարը։ Բայց Բուշարի կոպիտ անկեղծությունը չէր հրապուրում Լյուսին։ Արիստոկրատական պատանին կարող էր իրեն «հավասար» համարել միայն նույնպիսի պայծառ, նուրբ մտքի տեր մար-

դուն, ինչպիսին ինքն էր, մի մարդու, որի մեջ կենդանի միտք է բխում։ Կարևոր չէ, որ Մարկը նրա հակապատկերն էր և նրան անբարյացակամ էր վերաբերվում։ Նրանք հավասար էին միմյանց։ Եվ Մարկը նույնպես դա զգում էր։ Նրան կատաղեցնում էր այն, որ Սենտ-Լյուսը իրեն բոլորից ավելի մոտ է, որ իր ընկերների մեջ դա միակ իրեն մոտ մարդն է։ Եվ նա թույլ էր տալիս Լյուսին թևանցուկ անել իրեն և հայտնել այն, ինչ Լյուսը ուրիշ ոչ ոքի չէր ասում. իր ամբողջ պատանեկան և անողորմ մաքիավելլիզմը, որը հիմնված էր ոչ հարուստ, բայց տարիքին անհամապատասխան սուր և հիասթափեցնող կենսափորձի վրա։ Եվ դա չէր վրդովում Մարկին։ Նա ինքն էլ ի ծնե շատ լավ գիտեր այդ սատանայական բնազդները։ Աննետայի արյունը նրա մեջ խառնվել էր Բրիսսոյի արյանը։ Մի՞թե արդարացի չէ—արհամարհելով մարդկանց, օգտագործել հենց՝ նույն այդ մարդկանց ու նրանց հիմար կուռքերին։ Բրիսսոն միշտ վարպետորեն էր խաղում այդ խաղը. դրանք այնպիսի նուրբ վարպետներ են, որ, թվում է, թե ահա ուր որ է իրենք կտարվեն։ Բայց ոչ, հենց բանն էլ դա է, որ նրանք ոչինչ ռիսկի չեն ենթարկում։ Բրիսսոների լեգիոնը կարողանում է ճիշտ ժամանակին խաղից հեռանալ, ետ քաշել ձեռքերը։ Իրենց անհամար ձեռքերը... Օ, Մարկը լա՜վ է ճանաչում այդ ձեռքերը։ Նրանք Մարկի արյան մեջ են։ Մարկին հաճախ է համակել Վոլպոնեի դեմ խաղալու կատաղի ցանկությունը... Բայց նա վատ կխաղար։ Նա միշտ ծայրահեղությունների մեջ է ընկնում, նա չէր կարող թունդ խաղի ժամանակ համառ պահանջկոտությամբ ցույց տալ նրանց իր արհամարհանքը և, տրորելով մյուսներին, կսկսեր ինքն իրեն էլ տրորել... Սենտ-Լյուսը—սա արդեն օժտված է արհամարհանքի խելամիտ դողայով ծիծաղող, սիրալիր, մարդկային դողայով—որը մարդկանց դուր է գալիս (չէ որ արհամարհանքը իսկապես էլ նրանց դուր է գալիս, եթե միայն դա մատուցվում է պատշաճ տեսքով և չափավոր դողայով)։

Ամենասարսափելին այն է, որ հակասության պատճառով, որը Մարկն ինքն իրեն բացատրել չի կարող, նա հոգու խորքում կատաղում է այն մտքից, որ ինչ-որ մեկին պետք է

փրկել։ Նա չի ուզում դա խոստովանել, և, երբ Լյուսն այդ մասին ասում է նրան, նա զայրանում է։ Բայց երբ Լյուսը ծաղրանքով և քաղաքավարի ավելացնում է. «Ո՞չ։ Էհ, ինքդ ավելի լավ գիտես։ Եթե դու ասում ես «ոչ», մենք էլ կասենք «ոչ»,— Մարկն իր արդարամտության շնորհիվ ասում է «այո»... Ի՞նչ հիմարություն։ Փրկել, փրկել ուրիշներին, երբ այնքան դժվար է սեփական անձը փրկելը և երբ ուրիշները ամենևին էլ չեն ուզում, որ իրենց փրկեն։ Մարկը դա Լյուսից վատ չգիտե։ Բայց նա ոչինչ անել չի կարող. այդ տեսակ մարդ է։ Նրա բնավորության հակասական ուժերը են դրսևորվում այդպես։ Գուցե մորից ժառանգած ուժի մեջ իսկապես էլ ինչ-որ անճիշտ բան կա, բայց մայրը դա նրան է տվել իր արյան հետ միասին։ Եվ թող Մարկը անկեղծ լինի, այդ ուժը նա բարձր է գնահատում։ Նրա համար անհարմար է դա ի ցույց դնել, որ ծաղրեն, բայց հոգու գաղտնարաններում Մարկը դրանով հպարտանում է։ Այդ անճշտությունը նա դասում էր որոշ ճշմարտություններից ավելի բարձր, որոնք այն հերքում էին։ Այդ անճշտությունը նրա բերանը ապրելու համ է գցում։ Դա թույլ է տալիս նրան գլուխը բարձր պահել փորփրող մակերևույթից։ Առանց անճշտության, Մարկը ոչինչ ունենալ չէր կարող, բացի իր անձից, միմիայն իր անձից, բացի իր նկատմամբ ունեցած հետաքրքրությունից... Իհարկե, կլիներ ճանաչելու ծարավ, տեսնելու, վերցնելու, լինելու ծարավ, բայց միայն իր համար... Միայնակ։ Դա սարսափելի է... Պետք է մարդ ավելի ամուր լինի, քան այդ քսան տարեկան տղան, որպեսզի առանց սարսռալու տանի իր միայնակության բեռը։ Լյուսը տանում է, որովհետև նա չի մտածում այդ մասին, նա իրեն արգելում է մտածել, նա կանգ չի առնում՝ խորքը նայելու համար. նա փախչում է, նա սահում է մակերեսի վրա...

Մարկը չի կարողանում փախչել—ոչ խնդությունից, ոչ տխրությունից։ Հատակը դուրս է ցցվում ծովի խորքից, ինչպես հրաբխային կղզյակներ, որոնք ստորգետնյա կրակով դուրս են նետվում և ապա փշրվում ու դառնում հավիտենական երերուն անդունդ։ Մարկն իր ճամբարը դրել է ականապատ դաշտում։ Ահա թե ինչու է նա իր շուրջը փնտրում աչքեր, ձեռք, մարդկային ձեռք, որից կարելի է բռնել...

Որպեսզի այդ ձեռքը փրկի՞ իրեն։ Ոչ, նա հիանալի գիտի, որ ինքը մարդկանցից սպասելիք չունի... Որպեսզի նրա՞նց փրկի։ Նույնիսկ եթե գիտես, որ դա պատրանք է, բայց այն միտքը, որ քեզ վրա է ծանրացած ուրիշ հոգիների հոգսը, լցնում է մեր միայնակությունը, և մեծահոգի խառնվածքներին տասնապատիկ եռանդ է տալիս։

— Խաղա քո դերը,— ներողամտորեն ասում է Նրան Լյուսը։— Ես քո խաղը դիտող հասարակությունը կլինեմ։

— Այնպիսի հասարակություն, ինչպիսին դու ես, պիեսը կտապալի,— դառնությամբ նկատում է Մարկը։

— Սակայն հասարակություն քեզ պետք է։

— Ես ինքս կլինեմ հասարակություն։ Ես և հասարակություն կլինեմ, և դերասան, և պիես։ Ես գիտեմ, ես գիտեմ որ ես միայն երազող եմ։

— Գիտենալն արդեն ինչ-որ բան է նշանակում,— համաձայնվում է Լյուսը, նրա հետ հասկացող հայացք փոխանակելով։— Դա մեր ընկերները երբեք չեն հասկանա։

Այնուամենայնիվ բոլորը որոշեցին մասնակցել ցույցին, որը տեղի ունեցավ ապրիլի առաջին կիրակի օրը։

Այդ օրերին մտածող մարդիկ մեծ հուզմունքի մեջ էին։ Մարտին տեղի ունեցավ Ժորեսի սպանողի հանցագործ արդարացումը—երկրորդ ապտակությունը։ Երիտասարդները դա ընդունեցին որպես ապտակ։ Գարնան հյութերի հետ միասին Փարիզի սիրտն էին լցվում նաև զայրույթի հյութերը։ Այդ ուսանողներից նույնիսկ ամենախաղաղները, քրիստոնեական անմեղ գառները, մկկալով, կանչում էին Հեղափոխության բարի հովվին։ Նույնիսկ բուկոլիք հովիվները իրենց սրինգներով մարտական ռիտուոնելներ էին նվագում. «Շուտ արեք, խտացեք շարքերով...»[1]։ Նույնիսկ Ադոլֆ Շեալիեն, որն իր համար այլ գործողություն չէր պատկերացնում (իսկ շար լեզուները հավաստում էին, որ կիրքը նրան նույնպես անմատչելի է), քան գրիչը ձեռքն առնելը, թանաքամանն առաջը քաշելով, նույնպես որոշեց խառնվել այդ ամբոխին,

---

1 Մարսելյոզայից։

որի հետ շփվելուց տանջվում էր նրա նրբությունը։ Հարկ չկար առիթ տալ մտածելու, որ դու խուսափում ես հենց առաջին անգամ, երբ մյուսները գործում են (կամ ձևացնում են, թե գործում են) և երբ դա կարող է վտանգավոր լինել։

Եվ այսպես, յոթնյակից վեցը (մեն միայն անտարբեր Ռյուշն էր, որ, ամեն ինչ նախապես իմանալով, մնաց տանը) հանդիպեցին իրար Հանրի Մարտեն ավենյուի վրա, որտեղ ժողովուրդը ցնծում էր։ Մեծ մարտիկի հիշատակի տարօրինակ մեծարում, մարտիկ, որը պարտություն էր կրել ոչ թե մեկ, այլ քսան միլիոն անգամ, պարտություն էր կրել ի դեմս միլիոնավորների, որոնց կոտորել էր պատերազմը, որոնց, ստորաբար, ինչպես և իրեն, սպանել էին թշնամիները և անաղնվաբար դավաճանել բարեկամները... Ժորեսի կիսանդրու առաջ անվճռականորեն կանգնած էր Անատոլ Ֆրանսը։ Առաջնորդվելով անսխալ բնազդով, Շեալիեն, Բետի ձեռքը բռնած, ամբոխի միջով մոտեցավ ծերունուն, որի ներկայությունը այդ թաղման տոնավաճառում օգնում էր նրան հասկանալ ու մտածել։ Ծերունին նույնպես շատ ուրախացավ, երբ այդ պատահական մարդկանց հուզվող զանգվածի միջև, որոնց դեմքերն ու ճիչերը նրան օտար էին և անհասկանալի, նկատեց վարդագույն, շողշողացող Բետին, որի շուրթերի վրա նա կարողացավ կանգնեցնել իր հայացքը։ Ծերունին Բետին տեսնում էր այնպես, ինչպես որ նա կար—թարմ ու քնքուշ, անսահմանորեն հիմար ու անդորրիչ ազդեցություն թողնող։ Իսկ ամենահուզված խմբերի մեջ, առաջին շարքում, Վերոնը բռնել էր հաչող Բուշարի կապից և հարմար պահի էր սպասում, երբ կարելի կլինի նրան բաց թողնել... Մի քանի քայլ այն կողմ Սենտ-Լյուսն ու Մարկը ծաղրական նկատողություններ էին փոխանակում, բաց չթողնելով պատկերից և ոչ մի մանրամասնություն։ Եվ, ինքն էլ այդ մասին չկասկածելով, Մարկը Լյուսի համար դարձել էր այդ պատկերի մի մասը. նրան համակում էր հուզմունքի ամեն մի նոր պայթյուն, որը ցնցում էր ամբոխին։ Նա կարող էր ինչքան ուզում է ծիծաղել ամբոխի վրա, ծիծաղել դառը ծիծաղով, բայց նա գտնվում էր այդ ամբոխի հունի մեջ, ամբոխի ցնցումները անցնում էին նրա միջով։ Սենտ-Լյուսը իր ընկերոջ դեմքի վրա նկատում էր

մկանների ջղաձիգ կծկումներ, անողորմ բռնկումներ, ուռուցների մոտ կատաղի ծալքեր, տեսնում էր իրար սեղմված նրա ծնոտները և կզակի տակ կուտակված զայրույթի հոսքը, որ Մարկը կուլ էր տալիս թքի հետ միասին։ Լյուսը եղբայրաբար ուշադրությունը լարեց, որպեսզի Մարկին ետ պահի տրևէ անզգույշ քայլից, և հմտորեն թուլացնում էր խտացած գոլորշիների ճնշումը, փականը բացելով մերթ ծիծաղի պայթյունով, մերթ անսպասելի սրախոսությամբ։ Նա իր մեջ նշում էր, որ այդ դեմքը ամբոխի միջով անցնող ստորջրյա հոսանքների օվկիանոսագրական քարտեզ է։ Այդ դեմքի վրա կարելի է կարդալ մի փոթորիկ, որը մի քանի վայրկյանից հետո պայթելու է...

Եվ հանկարծ Սենտ-Լյուսը նրա երեսին կարդաց վրա հասնող մրրիկը։ Նա աչքերը դեռ չէր թարթել, երբ ճարճատեցին ատրճանակային կրակոցները։ Ոստիկանությունը հարձակվեց անարխիստների վրա։ Վերջիններս, բացելով սև դրոշը, նետվեցին Գիշարի գործակալների վրա, փայտերով ծեծեցին նրանց ու շուգունե վանդակի ջարդված կտորներ տեղացին նրանց վրա։ Սենտ-Լյուսին ու Մարկին հոսանքը տարավ։ Մի վայրկյանում նրանք հայտնվեցին տուլուզմփոցի կենտրոնում։ Հրելով նրանց ավելի ու ավելի հեռու քշեցին. նրանք ճեղքեցին ոստիկանական շղթան ու դուրս եկան ազատություն։ Վազելիս նրանք փայլատակող դանակներ ու արյունոտված դեմքեր էին տեսնում։ Նրանց առջևում Բուշարը գլխով խփում էր ինչ-որ ոստիկանական Գոլիաֆի փորին։ Ելիսեյան դաշտերով իջնելով ներքև, խիստ նոսրացած ամբոխը նորից շարժվեց։ Բայց Շեալիեն այստեղ չկար... Նա ծլկել էր։ Նա կարողացավ շատ ճիշտ ժամանակին իր ուղեկցուհու հետ բարձրանալ ու նստել Անատոլ Ֆրանսի թառին, որպեսզի նրա մոտ թիկնապահի դեր կատարի։ Ելիսեյան դաշտերի ներքևի մասում ցուցարարներին սպասում էին նոր մարտեր, բայց այդտեղ արդեն դժվար էր դիմադրել թշնամու աճած ուժերին։ Ամբոխը հարկադրված էր ցրվել։ Բայց կողմնակի ճանապարհներով նա սկսեց մոտենալ Փարիզի կենտրոնին, որպեսզի հետո կրկին հայտնվի Օպերայի հրապարակում։ Մարկը տեսավ, թե ինչպես կոյուղու լյուկի կողքով անցնելիս Վերոնն ատրճանակը գցեց այնտեղ։

Որսալով Մարկի հայացքը, Վերոնը ծիծաղով ասաց նրան.
— Նա հանգստի իրավունք ունի։ Աշխատել-վերջացրել է։

Իսկ Բուշարը չցանկացավ բաժանվել երկար դանակից, որ ցցված էր գրպանում։ Բուշարը դանակն այդպես տեսանելի էր պահում խիզախության համար—նա լիովին կարող էր յոլա գնալ իր ծանր բռունցքներով։ Սենտ-Լյուսը Մարկի ձեռքը բաց չէր թողնում, բայց վերջինս չափազանց զբաղված էր՝ այդ անտանելի խնամակալությունը նկատելու համար։ Մարկը գունատ էր և հուզված, խոսում էր բարձր ձայնով և չէր նկատում, որ շրջահայաց ղեկակալը նավակը թեքում է և ավենյուի գազոններով տանում դեպի ինչ-որ ելք։ Նա երեխայի նման զվարճանում էր, ոտքերի տակ զգալով արգելված խոտը, և ուզում էր կանգ առնել՝ ծաղկող շագանակենու ճյուղը պոկելու համար։ Բայց ոստիկանությունը կանխատեսել էր ցուցարարների շրջանցելու շարժումը և միջոցներ էր ձեռնարկել՝ նրանց անկանոն փախուստը արագացնելու համար։ Արժանապատվության ընդհանուր զգացումը պետք է ակամայից նահանջեր յուրաքանչյուրի սեփական փրկության մտահոգության առաջ։ Ստիպված էին լինում փախչել ինչքան ոտքներում ուժ կար։ Սրբ. Մադլենայի տաճարի մոտ, նեղ փողոցի վերջում, չորս ընկերները, ուղեկցվելով մի քանի փրկված rari nantes[1]-ների կողմից, որոնք շարասյունից էին, հանդիպեցին քաղաքացիական զգեստներով ոստիկանական մի ջոկատի, որը կատաղությամբ հարձակվեց սրանց վրա։ Մարտը կարճ էր, բայց կատաղի։ Մարկը չհասցրեց աչքը թարթել, երբ Բուշարն արդեն նետվեց ոստիկանների խմբի վրա և սկսեց գետնին գլորվել, ճզմելով նրանցից մեկին։ Բայց մյուսը ճզմեց նրան և սկսեց ոտքերով խփել։ Վերոնի լայն կրծքավանդակը նրա վրա տեղացող հարվածների տակ բվվում էր թմբուկի նման... Ինչ-որ մեկը Մարկի թևքից քաշեց, և այնքան ուժեղ, որ նա օրորվեց ու քիչ մնաց ընկնի։ Նա տեսավ, թե ինչպես պողպատը—սրի երախակալը—փայլատակեց

---

[1] Հատուկենտ լողորդներ (լատ.)։

ուղիղ իր դեմքի առաջ ու քերծեց իրեն, և Սենտ-Լյուսի հետ միասին, որը դեռ շարունակում էր Մարկին բռնած պահել իր մոտ, ու հենց այդ վայրկյանին խափանեց նրա վրա եկող մահացու հարվածը, նրանք մի քանի քայլ նետվեցին հեռու։ Հետապնդումից փրկվելով, նրանք վազեցին փողոցների լաբիրինթոսով, որոնք սարդոստայնի նման պատում են Մեհզբոսայգիները։ Խանութների ցուցափեղկերը արագ փակվում էին։ Մարկը ոչինչ չէր տեսնում, արյունը հոսում էր նրա հոնքերի վրայից, գլուխը դոռում էր։ Նա լսում էր, թե իրենց հետևում ինչպես են աղաղակում հետապնդողները։ Մարկն իրեն հանձնել էր Սենտ-Լյուսին, և վերջինս նրան տանում էր առանց երկար ու բարակ մտածելու,— ըստ երևույթին, ինքը գիտեր ուր էր տանում։ Նրանք մեկ թե երկու շրջերթ կատարեցին, որից հետո անկյունում Լյուսը զգուշորեն թակեց կանացի գլխարկների արհեստանոցի ծածկված փակոցափեղկերը։

— Անի՜...— ձայն տվեց նա։

Իսկույն ևեթ բարձրացավ երկաթյա փակոցափեղկը և բացվեց դռան ներքևի մասը։ Հարկավոր էր անցնելու համար կռանալ։ Լյուսը Մարկին հրեց-անցկացրեց և շոքեշոր մտավ նաև ինքը։ Կանացի ձեռքերը բռնեցին երկուսի ականջներից էլ և քաշեցին ներս։ Երկաթյա փակոցափեղկը իջավ։ Ցորսկողմը խավար էր, նրանք շոքած էին։ Դռան դրսի կողմից բղավում էր ոստիկանը և թմբկահարում փակոցափեղկը։ Մարկը, փորձելով վեր կենալ, իր այտի կողքին ծիծաղող շշնջոց լսեց. «Ս՜ս»— և նրա ձեռքերը, հենարան փնտրելով, բռնեցին երկու կլոր ազդր, ծնկածալի մոտ։ Բոլորը լուռ քարացան, բայց աղջիկները ծիծաղից խեղդվում էին։ Տիրական սուլոցը ետ կանչեց այն մարդուն, որը ծեծում էր դուռը։ Նա հայհոյում էր, բայց սիտպված եղավ միանալ գլխավոր ուժերին. մարտը շարունակում էր թնդալ, ոստիկաններն ավելի կարևոր հոգսեր ունեին։ Լռությունը վերադարձավ փողոց։ Մարկի ջերմող ուղեղը սկսեց հանդարտվել, և նա նկատեց, որ ինքը դեռ խավարում շոքած է աղջկա առաջ, որը նույնպես շոքած էր։ Աղջկա տաք բերանը, որից անուշահոտություն էր բուրում, հանկարծ առանց

ամաչելու հպվեց նրա շրթունքներին, ասելով. «Բարև ձեզ»։ Մարկը պատասխանեց. «Բարի երեկո»։ Աղջիկը ծիծաղեց ու ասաց. «Իսկ հիմա մենք չնայե՞նք արդյոք իրար»։

Նրանք տեղներից կանգնեցին և վառեցին լույսը,— ոչ թե էլեկտրական, այլ մոմը,— ձեռքի ափը ծածկում էր մոմի երկար, ծուխ արձակող բոցը։ Ներկայացան միմյանց։ Նրանք երկու քույր էին—Ժինետտա և Մելանի,— տասնյոթ և քսան տարեկան։ Ավագը թխամաշկ է, կրտսերը՝ շիկահեր, կաթնագույն սպիտակ մաշկով։ Երկուսն էլ, իհարկե, ներկված են։ Փոքրիկ ծիծաղկուն ծալքեր կան նրանց աչքույժ, փոքր-ինչ դուրս պրծած աչքերի անկյուններում։ Գիշատիչ փոքրիկ գազանների նման առաջ ձգված դնչիկներ ունեն։ Մելանին Սենտ-Լյուսի սիրուհին էր։ Ժինետտան, հավանական է, նույնպես։ Բոլոր լավ բաները, ինչպես և բոլոր վատերը, այստեղ բաժանում էին տնավարի։ Շատ ծիծաղ ու շաղակրատանք կար։ Նրանք երկուսն էլ միևնույն բանն էին պատմում—և երկուսն էլ միանգամից,— կամ կրկնում էին միևնույն բանը, մեկը մյուսի հետևից, միևնույն արտահայտություններով, և շատ ավելի ուրախ էին ծիծաղում, կարծես կրկնությունից պատմածն ավելի զվարճալի է դառնում։ Նրանք կատարվածից սարսափելի գոհ, ծափ էին տալիս։ Եվ ի՞նչ երջանկություն, որ հենց այդ ժամանակ նրանք նստարանին կանգնած, անցքից նայում էին, երբ Լյուսը, հետապնդումից փրկված, ծեծեց փակոցափեղկը։ Իրենց բեքկրությանը մի քիչ սրամտություն տալու համար նրանք իրենց համոզում էին, որ «ոստիկանական շները» կվերադառնան և խուզարկություն կկատարեն։

— Քանի դեռ մեզ քաշ չեն տվել կառափնարան, վերջին անգամ եկեք խմենք,— ասաց Սենտ-Լյուսը։

Եվ երգեց.

Ի՞նչ քաղցրագույն բախտ է մեռնել Մելանիի համար...[1]

Իսկ Ժինետտան, որը դեմ չէր լինի, եթե իր համար նույն-

---

[1] Ֆրանսիացի կոմպոզիտոր Էտիեն-Նիկոլա Մեհուլի (1763—1817) հիմնի վրա գրած պարոդիա. «Ի՞նչ քաղցրագույն բախտ է մեռնել հայրենիքի համար»։

պես մեռնեին, հետաքրքրությամբ զննում էր Մարկին, բայց վերջինս վրդովմունքով շրջվում էր։ Շտապ-շտապ, կիսախավարում, կերան։ Եվ Մարկը այնքան փափկեց, որ վերջում թույլ տվեց իրեն ձեռքով կերակրեն և նույնիսկ լպստեց Ժիննետտայի շոկոլադ քսված մատը։ Բայց Ժիննետտան ծվաղ. փոքրիկ շունը կծե՞ց նրան։ Մարկը ամաչեց, նա ներողություն խնդրեց ու տեղից վեր կացավ, ասելով, որ տուն է գնում։ Բայց մյուս երեքն սկսեցին առարկել։ Դրսում դեռ չի խաղաղվել, դուրս գալը վտանգավոր է։ Ժիննետտան սահեց բացած դռան միջով և գնաց հետախուզության։ Վերադառնալով, նա սկսեց հավատացնել, որ ոստիկանությունը գրավել է թաղամասից դուրս տանող բոլոր ելքերը։ Մարկը համոզված չէր, որ Ժիննետտան ճիշտ է ասում,— նա համառորեն ուզում էր գնալ։ Բայց նրան չէին թողնում։ Այտի չանգվածքը նրան հենց առաջին հայացքից մատնում էր։ Եվ Ժիննետտան նկատեց, որ նրա պիջակի ուսը պատռված է։ Ժիննետտան նրան ստիպեց պիջակը հանել ու տալ, որ ինքը կարի։ Երբ Մարկը հանվում էր, բոլորը անցքի միջով տեսան նրա պատռված վերնաշապիկը, տեսան, որ նրա ուսը կապտականաչակարմրավուն գույն ունի,— պարզվեց, որ Նրան բավական խիստ վնասել են։ Իսկ ինչու էր նա լռում։ Ժիննետտայի և Մելանիի համար առիթ ներկայացավ ցույց տալու, որ իրենք կարողանում են խնամել վիրավորներին։ Նրանք գոհ էին։

Այսօր երեկոյան գնալու մասին արդեն խոսք անգամ լինել չէր կարող։ Զբաղվեցին գիշերելու տեղաբաշխությամբ։ Խանութի հետևը առանց լուսամուտների մի փոքրիկ սենյակ կար, որի մեծությունը երկու պատի պահարանի չափ էր։ Այնտեղ դրված էր մի թախտ, նրա վրայից վերցրին ներքնակը և փռեցին հատակին—դարձավ երկու... Պատերազմում պատերազմավարի...

— Իսկ հիմա ընտրիր, որին ուզում ես...

Մարկը սարսափելի ամաչում էր, ամեն ինչ նրան ջղայնացնում էր, ամեն ինչ նրա համար զզվելի էր, նա անընդհատ մտածում էր, թե ոնց ծլկի։ Բայց ծլկելը հնարավոր չէր։ Երկու տիրուհին էլ իրենց առաջարկում էին միանգամայն անկեղծ ու պարզ ձևով։ Ի՞նչը կարող է ավելի բնական լինել։ Հո նա չի կարող վիրավորել այդ հիանալի աղ-

ջիկներին և Հովսեփ Գեղեցիկի դեր կատարել (այդ դերը նրա ոգով չէր)։ Նրանց համոզելը անմտություն է։ Լյուսն արդեն իր ընտրությունը կատարեց։ Տեսնելով, որ Մարկը ամաչում է, նա, ինչպես բարի ընկեր, առաջարկեց.

— Ուզո՞ւմ ես, փոխվենք։

Մարկն ուզեց նրան ապտակել։ Ամոթից ու կատաղությունից այրվելով, նա ժինետտային օգնում էր ներքնակը շրջել։ Աղջիկը նրա ականջին շշնջաց.

— Դե լավ։ Եթե չեք ուզում, մենք միայն կձևացնենք— ամեն մեկն իր կողմը կքնի։

Մարկը զգացված էր։ Լույսը հանգցրին։ «Ամեն մեկն իր կողմը կքնի»,— ասելը հեշտ է։ Պառկել կարելի է միայն թախտին, կամ հատակին։ Եվ բավական է ձեռքդ մեկնես, որպեսզի կպչես մյուս անկողնուն, որտեղ մյուս երկուսը, առանց հապաղելու, ձեռնամուխ էին եղել գործին։ Ժինետտան երկչոտորեն ներողություն խնդրեց.

— Ես գեղեցիկ չեմ։

— Ո՞չ,— վճռականորեն առարկեց Մարկը։

Ոչ, իսկապես, բանը դրանում չէր։ Ժինետտան ջանում էր հասկանալ։ Նա ենթադրում էր, որ Մարկը ուրիշ աղջկա է սիրում և ուզում է հավատարիմ մնալ։ Մարկը չուզեց նրան հակառակն ապացուցել։ Ժինետտան համարում էր, որ դա շատ գեղեցիկ է,— ինքը սովոր չէ այդպիսի նրբանկատության։ Նա խոսում ու խոսում էր, բարձին պառկած, երեխավարի, սրտաշարժ, արատավոր, բայց դեռ մաքուր։ Մարկը, որ իրենից անկախ հպվում էր բերնով այդ շաղակրատող շրթունքներին, որոնք անընդհատ շարժման մեջ էին գտնվում, շնչում էր դրանց քաղցրավուն-դառը նշահամ բուրմունքը։ Եվ նրա ամենաչնչին շարժումը սանձազերծում էր երկրի ոգիներին։ Նա չէր համարձակվում շարժվել։ Եվ, հասկանալի է, հենց այն րոպեին, երբ նա եռանդուն պընդում էր. «Ոչ»— ոգիներն ասացին. «Այո»։ Իսկ հետո նա զայրացավ և զզվելի դարձավ ինքն իր համար։ Իսկ Ժինետտան, զմայլված, մինչև հիմա դեռ համոզված, որ Մարկը մտածում է իր խաբված սիրելի աղջկա մասին, աշխատում էր սփոփել նրան։ «Այդ աղջիկը չի իմանա»,— կրկնում էր Ժինետտան։ Բայց Մարկի համար դարձավ անտանելի։

Նա խեղդվում էր այդ բնում։ Ժինետտան հնազանդորեն տեղից ելավ, որպեսզի, քանի դեռ նրանք քնած են, կամացուկ ծերպ անի խանութի դուռը։ Սողեսող դուրս գալով տանից, Մարկը համբուրեց աղջկա ծնկները։

Մարկին համակեց ապրիլյան գիշերի ցուրտը, նրա երեսը քրտնքից թաց էր, խռովահույզ ուղեղը բոցկլտում էր։ Մարկն զգում էր, որ ինքն ի վիճակի չէ կռվել արթնացած և կանչող ցանկասիրության հետ։ Նրա մտավոր հայացքի առաջ քանդվում էին, ինչպես կինոժապավեն, երեկվա իրադարձությունները. առավոտյան ցույցը, ոստիկանության գրոհը, փախուստը, հետապնդումը...

Հետո, հաջորդ օրը, նա այդ խափանված ձեռնարկի նկատմամբ միայն դարշանք զգաց... Հիմար քաղաքական ցույցը, առանց պլանի, առանց ղեկավարության և առանց որևէ հետևողականության, կենդանու կոպիտ բունտի ձև ընդունեց, կենդանու, որն ի վիճակի չէ դուրս պրծնել առեղների միջից։ Այդ ցույցը ոչ մի արդյունք չտվեց, եթե չհաշվենք կապտոսկները։ Կենդանու ողնաշարը ջարդեցին, մնում է սպանդագործ կանչել...

Բուշարն անհետացավ։ Նրա համար անհանգստանում էր միայն Մարկը։ Մնացածներին նա բոլորովին չէր հետաքրքրքրում։ Բոլորը ման էին գալիս մռայլ, կատաղած։ Ամեն մեկը մտածում էր միայն այն մասին, թե ինչպես ամբողջ պատասխանատվությունը գցի ուրիշների վրա։ Բուշարը հայտնվեց մի երեք-չորս օր հետո՝ ուռած դեմքով և լրջորեն վնասված աչքով։ Ոստիկանատանը նրան դաժանաբար ծեծել էին, գցել էին նախնական կալանքի սենյակը, իսկ հետո, հարցաքննություն կատարելով, ժամանակավորապես ազատ էին արձակել։ Գործը հանձնվել էր ուղղիչ դատարան։ Նրան մի քանի տարի բանտարկություն էր սպառնում՝ անօրինականորեն զենք կրելու, ոստիկաններին հարվածներ հասցնելու, իշխանությանը վիրավորելու, անարխիստների հետ կապ պահպանելու և հանցագործական արարքներ կատարելու դրդման համար։ Այսուհետև նրա առաջ փակ էին դասատու դառնալու բոլոր հնարավորությունները։ Նրան մտցրին համալսարանի սև ցուցակները։ Ավելի զգուշավոր ընկերները նրանից մի կողմ էին քաշվում։ Իսկ նա սաստիկ կերպով

ուզում էր նորից ձեռնամուխ լինել քննությունների նախապատրաստմանը—տապալվա՞նը։

Ինչ Վերոնին է վերաբերվում, ապա նա թքել էր ամեն ինչի վրա։ Նրան ոստիկանատանը՝ նույնիսկ չծեծեցին։ Ընկերները հարցնում էին, թե դա ինչպես կարող էր պատահել։ Նա, ծիծաղելով, պարծենում էր, որ ոստիկան-ավանակների սմբակները յուղեց. կոմիսարիատում նրա բանկի մասին հիշատակելը նրան ավելի լավ էր պահպանում, քան եթե նա դեպուտատական մանդատ ներկայացներ։

— Իսկ Բուշարը, հիմարը, թակարդն ընկավ։ Մեղավորն ինքն՝ է։ Երբեք պետք չէ թակարդ ընկնել։ Ավելի վատ իր համար։ Պետք է իմանալ, ինչն ես ռիսկի ենթարկում...

— Իսկ դու ի՞նչն ես ռիսկի ենթարկում,— խստորեն հարցրնում է նրան Մարկը։

Վերոնը ծիծաղում է նրա երեսին և շպրտում, մի տեսակ պարծենկոտ իր ցինիզմով.

—Քո մորթին։ Երբ որ դու այդ ցանկանաս։

Սակայն, զգալով, որ չափն անցավ, բարեհոգորեն ավելացնում է.

— Վերջ ի վերջո նրան միայն ծառայություն են մատուցել, դուրս շպրտելով համալսարանից։ Ով վախկոտ չէ և ուզում է փող վաստակել, նա կարող է միայն կռանալ ու հավաքել։

— Պետք է ճկուն մեջք ունենալ,— չոր պատասխանում է Մարկը։

— Իսկ ում մեջքը ճկուն չէ, նրան կյանքը մահակով կսովորեցնի կռանալ,— ասում է Վերոնը։

Նրանք մեջքները շրջում են իրար։ «Մնաս բարով»։

Ոչ ոք այլևս Ադոլֆ Շեալիեին չտեսավ։ Բայց դրա համար անհանգստանալու կարիք չկա։ Նա մեկնեց իր դաստակերտը։ Կարդում է Մոնտենին։ Էլ ի՞նչ կարելի է նրանից պահանջել։ Աչքերը բաց են։ Բերանը՝ փակ։ Միտքն ազատ է—և ոչ մի ռիսկ։ Հեռուլքն էլ տաք տեղ՝ է... Այդ չինովնիկին ոչ ոք դավաճանության մեջ չի մեղադրի։ Թող ուրիշներն իրենց ազատ ոգին իջեցնեն մինչև որևէ գործունեություն։

Ռյուշի գազանանոցը դատարկվեց։ Երբ Մարկը գալիս է,

Նրանք նստում են երկուսով, և Մարկը չգիտի ինչի մասին խոսել նրա հետ։ Արմունկները դնելով սեղանին և կզակը ձեռքերին հենած, Ռյուշը տարօրինակ ժպտում է և հայացքով շաղափում նրան—երևում է, որ նա սպասում է... Ինչի՞։ Մարկը զայրանում է։ Բայց որքան նա խստանում է, այնքան ավելի սուր է դառնում Ռյուշի ժպիտը։ Մարկին չի հաջողվում մեղմացնել այդ փոքրիկ խիստ բիբերի լարվածությունը, որոնք տնտղում են նրա կալվածները։ Ռյուշը նրան շփոթմունքի մեջ է գցում։ Ինչ-որ բան նրա մեջ փոխվել կամ փոխվում է։ Բայց Ռյուշը այնքան էլ Մարկին չի հետաքրքրում, Մարկը ժամանակ չի կորցնի՝ Ռյուշից գլուխ հանելու համար։ Եվ նրան դուր չի գալիս, որ Ռյուշն իրեն թույլ է տալիս Մարկին ճանաչելու փորձեր անել։ Չէ՞ որ Մարկն ազատ է ինչքան ասես համոզել իրեն. «Ռյուշն իմ մասին ոչինչ իմանալ չի կարող։ Իմ դուռը նրա համար փակ է»,— բայց և այնպես Մարկը համոզված չէ, որ նա բանալու անցքից չի նայում։ Վերջապես, Մարկն իրեն ընդհատում է նախադատության կեսին, տեղից կանգնում է, Ռյուշի վրա զայրագին հայացք է գցում և, նույնիսկ առանց հրաժեշտ տալու, գնում է... Ռյուշը տեղից չի շարժվում։ Փողոցում Մարկն իրեն ասում է, որ եթե ինքը վերադառնա և բացի դուռը—միևնույն է երբ. այս գիշեր, մի՞ շաբաթ հետո,— իր աչքերը կհանդիպեն սեղանի մյուս կողմում գտնվող Ռյուշի կիսափակ կոպերի տակից երևացող բիբերի գայլիկոններին, ծիծաղելի կտուցին և նրա մատների արանքում այրվող սիգարետից բարձրացող կապույտ ծխի շիթին։ Մարկը ոտքը գետին է խփում։ Նա երդվում է, որ Ռյուշն այնքան էլ շուտ իր տանը նորից չի տեսնի Մարկին։ Բայց, ինչպես գրգռված երեխայի մոտ նրա մեջ հանկարծ խիստ ցանկություն է առաջանում կտրել ու բացել Ռյուշի, այդ անպատկառի ներսը, բացել նրա անամոթ հայացքը, ինչպես դանակով բացում են խեցին, և տեսնել, թե ինչ կա նրա ներսում...

Էլ ավելի միայնակ, քան առաջ, արյան մեջ հրդեհ, որը վառել էր այն գիշերային աղջկա դառնավուն-քաղցր մաշկը, Մարկը մի քանի օր անցկացրեց ֆիզիկական ու բարոյական ընկճվածության մեջ։ Նա կարծես ճանապարհը կորցրել էր։

Փորձում էր գլխովին սուզվել աշխատանքի մեջ,— այդպես ջուրն են նետվում,— բայց ջուրը դուրս էր շպրտում այդ բեկորը։ Այլևս ուժ չկա։ Այլևս սեր չկա որևէ բանի նկատմամբ։ Մի բա՞ն անել։ Մտածե՞լ։ Ինչի՞ համար։ Եվ անընդմեջ, ամեն ժամ, կամքի այդ խորխորատը գնալով լայնանում և ներս է ծծում նրան, ինչպես ծծում են սառնաշաքարը...

Կարծես Մարկից էին կպել ինչ-որ մեկի հաստ ագահ շրթունքները։ Նրա ամբողջ էությունը դուրս էր հոսում, հոսում-գնում էր նրա ամբողջ ուժը։ Թեք հարթություն, ոտի վրա հնարավոր չէ իրեն պահել... Փախուստ, փախուստ... Ո՞չ։ Նա ճանկերով կառչում է... «Եթե ընկնեմ, ես այլևս վեր չեմ կենա...»։ Ներքևում հեղեղ է։ Մարկը զուր է աչքերը փակում,— նա լսում է այդ հեղեղի դղրդյունը, իսկ ճանկերի տակ ճթճթում է փլվող ավազը, մերկանում է քարը... Նա կառչում է, բայց նրանից ոչ ոք չի կառչում։

Եվ ահա մի անգամ երեկոյան գալիս է Սիլվիան և, ոտքը թեթևակի գետնին խփելով, ցած է գցում և քարը, և քարից կախված սարդին...

— Գնա՛նք։ Շո՛ւտ արա։ Ես քեզ տանո՛ւմ եմ... Բավական է զուր ժամանակ կորցնես... Եվ չհամարձակվես ինձ ասել, թե դու աշխատում ես... Դու անգործ թրև ես գալիս, այո, անգործ թրև ես գալիս, ես քեզ բռնեցի... Ուրեմն, այսպես, ինձ մոտ անգործ թրև կգաս։ Գոնե զուր չի լինի։ Ջանքերիդ բոլոր ամենաթանկ, ամենանոր տեսակները, բոլոր չորս արվեստները (բայց ոչ, ոչ թե չորս, դրանք ամենաքիչը քսանչո՛ւրսն են),— ես իմ խանութում վաճառում եմ։ Իսկ արվեստագետնե՞րը... Եթե թատրոն ուզենաս գնալ (Tutt' é burla)[1], ես քեզ կտամ կուլիսների բանալին։ Ամենալավ կատակերգուները և ամենավատերը—նրանք չեն, ովքեր բեմի վրա են գտնվում։ Եթե դու ուզում ես երբևէ քո դերը ֆարսում խաղալ,— նայի՛ր, նայի՛ր, նայի՛ր։ Ով նայում է, նա էլ թագավորում է։

Սիլվիան նրան տարավ իր մոտ, Անտեն նրբանցքի վրա

[1] Ամբողջովին կատակ է (իտ.)։

գտնվող առանձնատունը, —իր փոքրիկ Լուվրը, որտեղ գահին բազմում էր արքա Կոկին։ Հակառակ սալիկյան օրենքի, թագուհիները մի անգամ չէր, որ իրենց ձեռքերում բռնել էին Ֆրանսիայի գայլոնը։ Սլիվիան բռնել էր գայլոնը, իր Կոկին թողնելով ճախարակը, և նա, պալատականներով շրջապատված, հանգչում էր իր պարֆյումերային փառքի մահճում։ Նա իրեն համարում էր իր դարաշրջանի ոգեշնչողը։ Նրան շրջապատում էին կանայք ու ինտրիգաններ։ Արվեստի մարդիկ քծնում էին նրա առաջ, ծանակում էին նրան և նրանից փող վերցնում, իսկ նա կարծում էր, թե նրանց գաղափարներ է մատակարարում, գեղարվեստական ճաշակ և գեղեցկության զգացում։ Նա խորհուրդներ էր տալիս արվեստագետներին, ովքեր նրա առաջ բացում էին գեբրերի նման շերտավոր իրենց կտավներն ու երկրաչափական թեորեմները։ Նրան կարելի էր տեսնել այգում՝ սուզված նեգրական կուռքերի հայեցության մեջ։ Նա կարողանում էր գտնել դեռ չհասունացած, բայց արդեն փչացած գեղեցկուհիներ, գերհասունացած տաղանդներ, ամեն կարգի անհաջողակներ, հնդկաստանցի պարոդներ, Մենիլմենտանից եկած գուշակներ կամ Մոնտոբանից հայտնված «սվամիներ»։ Նա քաղցր-մեղցր էր և յուղալի, ինչպես իր սեփական պոմադները, և լակեյաբար ընտանեվարի էր պահում իրեն հաճախորդների հետ—պատկառելի տիկնանց, որ չէին վճարում, և մի երկու-երեք թագադրված և գահընկեց անձնավորությունների հետ, որոնք, դրված լինելով գլխի և գլխարկի միջև ընտրություն կատարելու անհրաժեշտության առաջ, գերադասեցին պահպանել գլուխը։ Նա քիթը խոթում էր նաև քաղաքականության մեջ։ Խրախուսվելով շողոքորթների կողմից, որոնք նրանից փող էին գզլում, նա մտածում էր ձեռքը մեծ թերթ գցելու մասին, որտեղ կարող էր ասել իր հեղինակավոր խոսքը (ո՞ր խոսքը)։ Նա մեծ դժվարության առաջ կկանգներ, եթե ստիպված լիներ գրելու այդ խոսքը կամ թեկուզև իրեն հաշիվ տալու, թե դա հատկապես ի՞նչ պետք է արտահայտի։ Բայց այդ հոգսը իրենց վրա կվերցնեին նրա թանաքային սիրուհիները։

Ինչ թագուհուն է վերաբերվում, ապա նա իշխում էր արդուզարդերի և տոնակատարությունների բնագավառում,

որոնց արտասովոր խելագարությունը հաճույք էր պատճառում փարիզյան խրոնիկային։ Սիլվիան հաճույքով քրոջ որդուն կվերցներ իր մոտ հանգստի և զվարճանքների մինիստրի կամ, ավելի պարզ ասած, գեղեցիկ արվեստների գծով դեկավարի դերով։ Նա դրանք համարում էր Զվարճությունների բարձր արվեստից ավելի ցած, քանի որ գեղեցիկ արվեստներից նա քիչ էր գլուխ հանում—չէ որ նա բացի բնածին ճաշակից և բնազդից ոչինչ չուներ։ Դա այնքան էլ քիչ չէ. դա միանգամայն բավական է՝ այստեղ ու այնտեղ զվարճալի սխալներ կատարելու համար, որոնք, ի միջի այլոց, նրանով տարվելու համընդհանուր մթնոլորտում անցնում էին որպես սրամիտ շարաճճիություններ։ Բայց այսօրվա տարվածությունը վաղը կարող է փոխվել ծաղրուծանակի։ Սիլվիան սույն առարկայի նկատմամբ գայթակղություն չուներ, —նա զգում էր, որ հողը երերում է իր ոտքերի տակ։ Նա ուրախ կլիներ հենվել Մարկի վրա։

Մարկը Նրա մոտ եկավ թերահավատ, բայց գայթակղված։ Եվ, ինչպես և պետք էր սպասել, այդ վայելքների և սանձարձակության կատաղի կառնավալում, որտեղ արվեստը, սերը, խարդավանքը և խելագարությունը բոլորն իրար էր խառնվել, նա իսկույն գլուխը կորցրեց։ Մարկը փորձում էր իր հասակի համար անհնարին մի դեր խաղալ, դիտորդի դեր, որն ուզում է, առանց որևէ բանի ենթարկվելու, ամեն ինչ տեսնել կյանքի տերը դառնալու համար,— խաղալ, այսպես ասած, Ժուլիեն Սորելի դեր, որը երկարատև թերասնվելուց հյուծվել է և որի գլուխը երկու կում գինուց պտտվում է։ Հենց առաջին կաթիլներից նրա գլխում պար սկսվեց։

Սիլվիան այդ սպասում էր։ Նա ոչինչ չարեց, որպեսզի Մարկին կործանի, բայց ավելի քիչ բան արեց նրան փրկելու համար։ Սիլվիան թաքուն հետևում էր Մարկի պայքարին. դա Սիլվիային զվարճացնում էր, դա նրան դուր էր գալիս, նա Մարկի մեջ տեսնում էր իր հպարտ Աննետային։ Եվ հոգու խորքում նա որդուց գոհացում էր ստանում այն բաներում, ինչում չէր կարող ստանալ մորից. «Աշտարակ, զգուշացի՛ր...»[1]։ Հիանալի՜ փոքրիկ աշտարակ։ Նա փշաքաղվում

[1] Մանկական երգի խոսքեր։

ՀՐ իր զրահի մեջ։ Սիլվիան հեգնանքով խրախուսում է նրան։ Սիլվիան թերահավատորեն է տրամադրված։ Նա սպասում է, թե գործն ինչով կվերջանա։ Նա հիանալի գիտե, որ զրահը կճաքի, որ մի օր այդ պատերը մի ակնթարթում կփլվեն։ Եվ Սիլվիան մտածում է. «Ի՞նչ արած։ Ուզում ես թե չես ուզում, դուր է գալիս թե դուր չի գալիս,— միևնույն է, դա անխուսափելի է։ Թող երիտասարդությունն իմանա։ Եվ թող սովորի իր պատասխանատվությամբ ու ռիսկով։ Կտուժեն նրանք, ովքեր կկործանվեն։ Իսկ Մարկն ամուր է... Նա դուրս կգա... Բայց կարևոր է, որ նա ապրի դա։ Տղամարդ չէ նա, ով չի ապրել...»։ Դա Սիլվիային չի անհանգստացնում։ Դա Մարկի գործն է։ Եթե Սիլվիան Մարկի գործերն սկսի անել նրա փոխարեն, դա վատ ծառայություն կլինի Մարկի համար։ Սիլվիան իր գործն ունի, իր գործերն ունի,—իր գործերն ունի և իր հաճույքները։ Նա իրավունք չունի զուր տեղը ժամանակ կորցնել։ Ուշ ամռան թունդ շրջանն է ապրում նա։

Եվ այսպես, Մարկը պետք է մենակ դիմադրի այն ամենին, ինչը պաշարում է նրան. գեղեցիկ աղջիկներին, ավարաներին, խաբեբաներին,— ամբողջ խառնախորտիկին, որով լցված է սալաթի ամանը։ Իսկ նա ինքը խակ պտուղ է և միայն ներկած շրթունքով չէ, որ գայթակղում է։ Մանավանդ որ նա սուլթանուհու քրոջ որդին է, նրա մերձավորագույն ֆավորիտը, Մարկից օգտվում են, որպեսզի օգտագործեն սուլթանուհուն։ Մարկն այնքան հիմար չէ, որ դա չհասկանա։ Նա, այդ տղան, կասկածե՞լի է։ Նա հակված է մտածելու, որ իրեն ուզում են մշակել, որ նույնիսկ կանայք, ովքեր անամոթաբար հետապնդում են նրան, իր հետ շահադիտական ինչ-որ խաղ են խաղում, որը իրականում չկարպարզապես երիտասարդ վայրենին հուզում է նրանց։ Հուզում է նրա անտաշությունը, նրա խոսքի խստությունը, նրա կոպտությունները, որոնց հանկարծ լուսավորում է շփոթուն հմայիչ ժպիտը, և կիտած հոնքերի տակի վեհերոտ ու հարցական հայացքը, որը անսպասելի հանձնվում է, ինչպես աղջիկը, ինչպես խելագար աղջիկը, որին խմեցրել են և որի ուղեղը մթագնել է... Այսպիսի մի փոքրիկ

Լյուսիեն դե Ռյուբամպրե...[1]։ Իսկ փաստորեն դա նույն Մարկն է, նույն երիտասարդ վարազը. բռնվելուն պես նա իսկույն ևեթ որևէ վայրկենական և կոպիտ արարքի շնորհիվ դուրս է պրծնում... Դա նրան դարձնում է էլ ավելի հմայիչ։ Նրան դիպչողները ջարդվածք են ստանում։ Կրկնակի բավականությո՞ւն։ Որսը սկսվեց։ Եվ կենդանին ստիպված է ոչ միայն ցանցերից զգուշանալ, այլև սեփական արյունից, որը հանկարծ սկսում է փոթորկվել և հարկադրում է առանց մտածելու նետվել առաջ։ Մարկի համար շատ դժվար է դիմադրել։ Յուրաքանչյուր անգամ նա դառնում է ավելի ու ավելի թույլ։ Եվ նա կանխապես տեսնում է, թե ինչ է տեղի ունենալու։ Նա պետք է փախչի։ Քանի անգամ էր նա ինքն իրեն ասել. «Գնա...»։ Բայց նա չի գնում. այնուամենայնիվ շատ հետաքրքիր է։ Չափազանց շատ բան կարող է նրա՝ այդ հետաքրքրվող որձի հայացքը որսալ այդ արգելանոցում։ Որսն այստեղ արգելված է, բայց նա ինքն էլ է հետամուտ լինում և իր թաքստոցից հետևում է ամեն տեսակի որսերին, թե խոշորներին, թե մանրերին, թե թռչուններին, թե կենդանիներին։ Նա նույնիսկ անցողակի ընդգրկում է նաև մանր թռչնակներին։ Բայց դա վտանգավոր է. այդ ակընթարթներին նրա հայացքը պղտորվում է, նրան հենց իրեն կարող են բռնել... Նրան կբռնեն... Ո՛չ, չե՛ն բռնի։ Նա համառում է։ Փախչել՝ նշանակում է ընդունել սեփական պարտությունը... Նա մնում է, և օր-օրի վրա նրա որսորդական տոպրակը լցվում է փորձով։ Բայց դրանից Մարկն ավելի խելացի չի դառնում։ Հիմա նրա աչքերը բոլորովին հարբած են։ Գլխում նույնպես ջրապտույտ է... Բոլորը, ինչի մարդիկ հավատում էին կամ ինչի չէին հավատում, բայց և այնպես ընդունում էին, որպեսզի հնարավոր լիներ ապրել,— հասարակական կյանքի բոլոր հիմքերը,— բոլորը կործանվում է։ Երեկ չէ մյուս օրվա ամբողջ բարոյականությունը (երեկվանի մասին չխոսենք. երեկ պատերազմ էր),— ի՞նչ մնաց նրանից։ Հին մեղքեր, նախապաշարմունքներ, օրենքի կողմից դրված շղթաներ, օրենք, որը հասարակական զարգացումից միշտ

[1] Լյուսիեն դե Ռյուբամպրե—Բալզակի (1799—1850) մի քանի վեպերի հերոսը։

ետ է մնում... Քիչ է ասել, թե այդ օրենքները ոտնահարում են։ Դրա համար ճիգեր գործադրելու կարիք չի լինում։ Պարզապես դրանց վրայով քայլում են, նրանց մասին նույնիսկ չմտածելով։ Դա ի՞նչ է։ Մարդկային շենքի փլուզո՞ւմ։ Հասարակական դաշինքի խզո՞ւմ։ Եվ վերադարձ դեպի անտառնե՞րը... Ոչ, դա պայմանագրային ժամկետի անցում է։ Այդ ժամկետը վերականգնելուց առաջ, պայմանագրում մի շարք կետեր ջնջում են, մի շարք կետեր ավելացնում։ Հին, նեղ, անառողջ կացարանը փլվում է։ Այդ կացարանը պետք է վերակառուցել և դարձնել ավելի ընդարձակ։ Հասակային ճգնաժամերի նման շրջաններում հիվանդ մարդկության փչացած և ցամաքած արյունը հարկավոր է երիտասարդացնել, և նա, այդ մարդկությունը, կսուզվի իր նախնադարյան և ահեղ կենդանական ուժի վտանգավոր ակունքները։ Զգայուն հայրիկ-վախկոտները նվնվում են. «Ամեն ինչ անցավ...»։ Ամեն ինչ փրկված է կամ փրկվելու է։ Բայց ո՛չ մի բան ձրի չի տրվում։ Պետք է վճարել, և վճարել թանկ...

Մարկը պատրաստ է վճարել։ Բայց միջոցները կներե՞ն արդյոք։ Համարձակ, չափազանց համարձակ միտքը նրան քաշում-տանում է այն բանի սահմաններից դուրս, ինչին ի վիճակի է դիմանալ։ Կարևոր չէ, որ նա ամեն ինչ տեսնում է, ամեն ինչ հասկանում է, ամեն ինչի մասին համարձակ դատողություն անում. բանականությունը երկնային բարձունքներ չէ, նա իր բոլոր հյուսերով կապված է փորի հետ։ Նա անպաշտպան է, նա դավաճանված է և հանձնվում է թշնամուն...

Բայց առայժմ դեռ Մարկը պաշտպանվում է։ Նրա ուղեղն ու սիրտը ընդվզում են։ Որոշ պատկերներ նրա մեջ զայրագին արհամարհանքի բռնկումներ են առաջացնում։ Մարկն իրեն թույլ է տալիս անպատկառություններ, որոնցից պարֆյումերիայի արքան կատաղում է,— նա խեզդվում է իր խեցու[1] մեջ։ Բայց փոքրիկ կապրալ Սիլվիան թաքուն ծիծաղում է։ Նա ձգում է քրոջ տղայի ականջը և խորամանկորեն, շինծու զորանոցային խստությամբ ասում է.

---

[1] Բառախաղ. պարֆյումերիայի «արքայի» ազգանունը—Coguille ֆրանսերեն նշանակում է խեցի։

— Անկիրթ, ե՞րբ ես դու սովորելու հասարակության մեջ քեզ կարգին պահել։

Բայց Մարկը քացի է տալիս։ Նա մորաքրոջը ծեծում է դաժան ճշմարտություններով։ Մարկին հատկապես զայրացնում է այն անզուսպ շռայլությունը, այն վատնողությունը, որը Սիլվիան ցուցաբերում է իր տոնակատարությունները կազմակերպելիս։ Մարկը ուղղակի նրան ասում է, որ խայտառակություն է փողերը շաղ տալ մի այնպիսի ժամանակ, երբ հազարավոր մարդիկ ուտելու բան չունեն։ Սիլվիային դա ամենևին չի հուզում։ Երեկ չէ մյուս օրը նա ինքն էլ ուտելու բան չուներ։ Այսօր Սիլվիան կորցրածը ետ է բերում։ Նա ցինիկորեն պատասխանում է.

— «Չափազանց շատը» փոխհատուցում է «չափազանց քչի դիմաց»։ Ոմանք չափազանց շատ ունեն, ոմանք՝ չափազանց քիչ—ահա այստեղից էլ հավասարակշռություն է ստեղծվում։ Եվ հետո, սիրելիս, ի՞նչ ես ուզում։ Հեշտ եկածը հեշտ էլ գնում է։ Չէ որ փողը մի տեղ պետք է ծախսես...

Մարկը Սիլվիային ջարդուփշուր է անում, ինչպես նրա փող վաստակելու միջոցի, այնպես էլ այդ փողը մսխելու միջոցի համար։ Նրա պերճանքի առարկաների, կանացի պանտալոնների և քսուքների վաճառքով զբաղվելու համար, իր կլիենտներին շահագործելու և գների (իսկակա՞ն կողոպուտ) համար, որոնք նույնքան փոփոխական են, որքան խելագարված միջատների—այդ անուղեղ կլիենտների—քմահաճույքները։ Սիլվիան առարկում է. եթե վիճակված լինի ապրել ի հաշիվ մարդկանց իմաստության և ոչ թե ի հաշիվ նրանց իդիոտիզմի, մարդ հարկադրված կլիներ փորն իրեն քաշել։ Եվ, վերջապես, ինքը՝ Սիլվիան և նրա Կոկին կերակրում են ոչ միայն իրենց ու Սիլվիայի քրոջորդուն («Ստացա՞ր, փսլնքոտ»), այլև ծառայողների մի ամբողջ բանակ։ Մարկը, նեղացած, ամենահիմար տեսքով հարցնում է.

— Իսկ ինչի՞ համար է այդ բոլորը։

— Ինչը՞։

— Այն, ինչ դու անում ես։ Այն, ինչ անում են նրանք։

— Ոչ մի բանի։ Պարզապես ապրելու համար։ Մի՞թե ապրում են որևէ բանի համար։ Մարդը մոր փորից դուրս

է գալիս, ծնվում է—չգիտես ինչի համար։ Նա փորը լցնում է, ուտում է, սիրում է, դես ու դեն է ընկնում—չգիտես ինչի համար։ Հետո մեռնում է—վերադառնում է չգիտես ուր և չգիտես ինչի համար... Միայն մի բան կա աշխարհում անկասկածելի. դա թախիծն է։ Եվ այն բոլորը, ինչ արվում է այս աշխարհում, արվում է միայն նրա համար, որպեսզի մարդ չմտածի, թե ինչպես է իրեն տանջում թախիծը...

Մարկին ապշեցրեց մորաքրոջ խոսքերում անսպասելի հնչած դառնությունը։ Նա հանկարծ նկատում է, թե ինչպես է Սիլվիայի փոքր-ինչ ուռած կոպերում, տանջալիորեն ծռված շրթունքների անկյուններում երևում հոգնածությունը։ Կինը թուլության րոպեին մատնեց ինքն իրեն... Բայց Սիլվիան արագ իրեն տիրապետեց ու շտկվեց։ Նա գումակից ցած գցեց իր ամբողջ ծանր բեռը։ Եվահա նորից է ելնում արշավանքի, նրա երեսին գրգռիչ քմծիծաղ կա, զայրույթի կայծակներ են փայլատակում նրա աչքերում։ Այդ հիմար քրոջորդին իր զառանցանքներով նորից ստիպեց նրան դառնություն զգալ։ Մարկը սկսում է նրան կատաղեցնել.

«Կարող ես ինչքան ուզում ես փքվել, փոքրիկս։ Կարող ես քեզ Կատոն ձևացնել։ Առաջին հանդիպած պոռնիկը քեզ կճկռեցնի, երբ խելքին փչի, և հետդ կվարվի ինչպես ուզենա։ Դու լավ կանեիր զոռոզությունդ մի քիչ պակասեցնեիր...»։ Նա վերադառնում է իր խաղին և իր կատաղի գործունեությանը։

Մարկին չի կարելի կշտամբել, որ Սիլվիայի նկատմամբ անարդարացի է։ Նա հիանալի գիտե, որ Սիլվիան երբեք ձեռքերը ծալած չի նստում։ Մարկը տեսնում է, որ մորաքույրը հավասարապես զբաղված է և հաճույքներով, և աշխատանքով։ Սիլվիան ջերմեռանդորեն և ինքն է աշխատում, և իր ծառայողներին է ստիպում աշխատել։ Նա ոչ մի րոպե հանգիստ չունի։ Նա իսկապես հարգում է միայն աշխատանքը, ամեն մի աշխատանք, և արհամարհում է պճնազարդ անբան էգերին, որոնց ինքը շահագործում է։ Սիլվիան առանց խղճի խայթի շրջում է նրանց գրպանները։ Ինչպես փարիզյան ժողովրդի աղջիկներից շատերը, Սիլվիան նույնպես ինչ-որ բան ունի Կոմունայի «նավթավաճառուհիներից», նա ի վիճակի էր մի գեղեցիկ օր հրդեհել հասարա-

կությունը, վայրկենապես և առանց երկար մտածելու։ Բայց նա չնչին պատկերացում անգամ չունի կազմակերպված սոցիալական Հեղափոխության մասին։ Այնպիսի կինը, ինչպիսին Սիլվիան է, այդ մասին լսել անգամ չի ուզի։ Նրա մեջ խաղաղ կերպով գոյակցում են քաղքենին և «նավթավաճառուհին»։ Միևնույն նավթը կարելի է լցնել Հաշվիչ պալատի վրա և վառել խոհանոցային վառարանը։ Ինչ վերաբերում է մտքերի հետևողականությանը, ապա Սիլվիան այդպիսի հավակնություն չունի էլ։ Նա անարխիստ է խառնըվածքով, և ինքն է որոշելու, թե ինչն է իր արարքներում ճիշտ և ինչը՝ սխալ, առանց պետության կամ որևէ մեկի միջամտության։ Բարոյական է այն ամենը, ինչ նրան դուր է գալիս։ Նրա անամոթության դեպքում այն, ինչ նրան դուր է գալիս, հաճախ ավելի իրավացի է լինում, քան ինքը Իրավունքը։ Սիլվիան ատում է պաշտոնական կամ բարձրաշխարհիկ բարեգործական կեղծ բարեպաշտական երկերեսանիությունները։ Նա ինքն է զբաղվում բարեգործությամբ, և շատ լայն մասշտաբով, միայն թե այդ մասին ոչ ոքի ոչինչ չի ասում և ոչ ոքի վրա հույս չի դնում։ Նա խիստ է վարվում իր աշխատավորուհիների հետ, որովհետև անբան մարդկանց չի սիրում, բայց նա հոգատար է նրանց նկատմամբ, մտածում է նրանց առողջության մասին։ Սիլվիան նրանց համար Փարիզի մոտերքը հանգստի տուն էր դասավորել, Սիլվիան նրանց ամուսնացնում է, իսկ նրանք, ում ինքը առանձնացնում է, մեծ նվերներ են ստանում նրանից, որոնք հետագայում նրանց օժիտը կարող են հանդիսանալ։

Դա դեռ քիչ է. Սիլվիան նվաճել է նրանց վստահությունը, նա խորհուրդներ է տալիս, ղեկավարում է նրանց, ղեկավարում իր գիտեցած բարոյականությամբ կամ անբարոյականությամբ, բայց միշտ մարդկայնորեն, հասկանալով նրանց թուլությունները, բայց թույլ չտալով նրանց ենթարկվել այդ թուլություններին ավելի շատ, քան պետք է։ Հարկ էր, որ նա իրեն էլ նման խորհուրդներ տար և մի քիչ էլ զսպեր իր եռանդը։

Բայց նա համարում է, որ ինքը առանձնահատուկ իրավունք ունի։ Նա չափից ավելի է վստահում իր բնազդին ու իր ուժերին, որոնք ահա արդեն քսան տարի է, ինչ անպա-

տիժ կերպով չարաշահում է... Անպատժությունը չի կարող տևել հավիտյան։ Սիլվիան պետք է ուշադրություն դարձներ նախազգուշացնող սիմպտոմների վրա, որոնք ցույց էին տալիս, որ նրա առողջությունը խախտված է։ Սիլվիան դրանք զգում է։ Բայց նա սովորել է ռիսկի ենթարկվել.. Եվ հետո այդ կատաղի գործունեության մեջ, այդ վազքում՝ վայելքի հետևից՝ թաքնվում է, ինչպես որ դա մի վայրկյանում նկատեց Մարկը,— անտարբերության թաքնված մի դառնություն դեպի իր անզավակ կյանքը, զայրույթ գոյության դեմ, որի անօգտակարության մասին այնուամենայնիվ նա չի ուզում լսել այդ հիմար Մարկի շուրթերից... Ուրեմն թող ամեն ինչ կորչի, գնա։ Բայց մինչև վերջին շունչդ—չարչարվիր ու վայելիր։

Սիլվիայի մենատանը տոնակատարություններից մեկի ժամանակ—դանսինգ, ֆխարան, փոքրիկ լուպերկալիաներ—երբ տիրուհին ինքը փարթամամարմին, ծաղիկների մեջ կորած, յուր սեփական արտահայտությամբ՝ մինչև հետույքը դեկոլտեով և ի վերջո կոկտեյլներից՝ հարբած (շրջազգեստ հագած իսկական այծամարդ), ամեն ինչ իր շուրջը վառում է, Մարկը չի դիմանում։ Այն տենդի մեջ, որ անվերջ կրծում է նրան, շատ քիչ է պետք հարբելու համար։ Եվ նվաստացածության զգացումը, Մարկին ավելի զգույշ դարձնելու փոխարեն, երբեմն միայն մտրակում է նրան և ստիպում հոխորտալ։ Մարկը խմեց... Նրա աչքերը հածում են։ Նա այլևս ոչինչ չի տեսնում, այլևս ոչինչ չգիտի, նա ընկել է հորձանքի ամենակենտրոնը, որը վարում է այծոտն աստվածուհին։ Արյան աղմուկը որոտի նման արձագանքում է նրա ականջներում, ցանկությունը գվվում է, բթացած գիտակցությունը գայթում է և ընկնում։ Ֆարանդոլայի ժամանակ Մարկն արդեն չի զանազանում, թե այդում արնագույն կարմիր շրթունքներն են ծիծաղում ուզիղ իր բերանի կողքին։ Բայց նա ատամներով մխրճվում է այդ շուրթերի մեջ։ Եվ տարօրինակ, վայրի խանդը նրա ներսում հրդեհ է վառում... Մարկը գիտակցությունը կորցնում է և ուշքի է գալիս մառանում, հատակին։ Նա մենակ է։ Ինչ-որ տեղից նրան է հասնում ձայների աղմուկ, երաժշտություն, բայց՝ նա ոչինչ չի

հասկանում, մտքերը չի կարողանում ժողովել... Ի՞նչ տեղի ունեցավ... Մարկը չի կարողանում հիշել, չգիտի, դա հիշողություն է թե երևակայության խաղ... Եվ նրա երևակայածի մեջ սարսափն ավելի թույլ չէ, քան ցանկությունը... Ոչ մի սահման նրա միջև, ինչ կար և ինչ կարող էր լինել... Միևնույն է, նա իրեն զգում է միանման այրված, խայտառակված, նշավակված... և, գնալով, փախչելով այդ տոնավաճառից, որն այնտեղ, վերևում, անխոնջորեն միակցում և անջատում է իր օղակները, նա նկատում է արնագույն կարմիր շրթունքներն ու լսում սատանա Յորդանսի կրծքային ծիծաղը։ Մարկը սուզվում է գիշերային խավարի մեջ, ամբողջովին դողալով, ամբողջովին սառույց և բոց կըտրած, նրա բանականությունը մտրակում է իրեն և արյունածորում, ի վիճակի չլինելով ոչ հասու լինել, ոչ զղջալ։ Ատելություն և արհամարհանք, այո, ինչ էլ ուզում է լինի։ Կրակ, արյուն։ Միայն թե ոչ զղջում, նա խելագար է... Իրեն պատժելու համար նա սողում գնում է դեպի ետ, իր ուսանողական ետնախորշը, իր անապատը։ Եվ չի վերադառնում։

Սիլվիան ընդունակ չէ հասկանալու, թե ինչ փոթորիկ է ալեկոծվում Մարկի մեջ։ Սիլվիան ինքը գիշերային խրախճանքից հետո ոչ մի անհարմարություն չի զգում։ Նա պարզորոշ հիշում է, թե ինչ կատաղություն բռնկվեց տղայի աչքերում—խանդի հանկարծական պոռթկում, որից ճրթճրթացին Սիլվիայի ոսկորները և որը նրա շրթունքների վրա կծածի հետք թողեց... Եվ ուրիշ ոչինչ։ Սիլվիային դա և շոյում էր, և ծիծաղելի թվում... Ունենալով ինքնավստահ և թեթևաբարո, բայց ոչ խորապես արատավոր խառնվածք, Սիլվիան անտարբեր է պայմանականությունների նկատմամբ՝ և արդարացի, և անարդար։ Նա գալլական խելք ունի, նրա ծաղրասեր հայացքը միշտ որսում է ծիծաղելին ուզածդ վիճակում, և նա պնդզայուն է այն տագնապների նկատմամբ, որոնք թողնում է իր հետևում։ Մի ժամանակ նա «Ֆեդրայում» տեսել է պառավ Սարրային և հիմա հիշեց «Իպպոլիտին»... Ախ, դեղնակտուց փոքրիկ թռչնակ... Սիլվիայի «Իպպոլիտը» ամոթից փախավ։ Նրա հետևից Սիլվիան միայն փոթկացրեց... Ի՞նչ լրջություն։ Տեր իմ աստված, մենք ի՞նչ հիմար ենք լինում քսան տարեկան հասակում։

Եվ միշտ նրանք ճանճից փիղ են սարքում, այդ երազողները, որոնք աստղերի հետևից են ընկնում։ Իսկ արժի՞ արդյոք այդպես հուզվել վարդի մի թերթիկի համար, որը թռել ընկել է ձեր անկողինը, եթե այն, ինչ դուք սեղմում եք ձեր գրկում, իսկապես որ հավիտենական է։ Սիլվիան հայելու մեջ իրեն աչքով է անում։ Վարդ, որ ծաղկած է... Նա անաչառ կերպով ծիծաղում է և իր, և Մարկի վրա։ Այդ սիրելի անառակ կինը ծիծաղում է նաև իր թանկագին քույրիկ Աննետայի վրա. թե Աննետան իմանա՞... Երբեք նա չի իմանա։ Ավելի շուտ Իպպոլիտը, «հենց որ անցնի Տրեցինի դարպասները» թույլ կտա, որ իրեն կենդանի-կենդանի կուլ տան... «Բարի՞ ճամփա, Իոնա»։ Սիլվիան նրան բաց է թողնում։ Տղան կվերադառնա՞...

Բայց նա չի վերադառնում։ Մոայլ պատանու մեջ կուտակվում է զայրույթը։ Նա իրեն չի ներում այդ պարտությունը։ Ոչ միայն այդ գիշերվա պարտությունը, որի մասին նա երբեք չի իմանա ճշմարտությունը (և դա ամենից տանջալին է։ Որովհետև «Նա» գիտի... Սիլվիան ի՞նչ գիտի), այլ բոլոր այդ օրերի պարտությունը, որոնք նա վաճառեց թշնամական աշխարհին (մի՞թե Մարկը նրա հաշվին չէր ապրում)։ Իսկ ամենավատն այն է, որ այս աշխարհում նա ճաշակեց վայելքը։ Նա խառնվեց այդ բոլոր խուժանների, այդ բոլոր սպեկուլյանտների և պոռնիկների, որոնք ապրում են աշխարհի դառնությունների հաշվին։ Նա խայտառակությամբ է նշավակում ինքն իրեն. «Պոռնի՞կ»։ Ո՛չ մի արդարացում։ Թուլությունը ամենևին չի արդարացնում։ Մարկը այդ թուլության մասին գիտեր շատ ավելի լավ, քան որևէ մեկը։ Նա խաբում էր, երբ համոզում էր իրեն, որ ավելի ուժեղ դուրս կգա։ Նա իրեն այդ ասում էր հենց դավաճանության ժամին։ Նա դավաճանում էր, միության մեջ մտնելով այդ անառակ պերճանքի ծաղիկը, քայքայվող աշխարհի բոլոր այդ պտուղները վայելելու նրան այրող մութ ցանկության հետ։ Նա կեղծավորաբար արդարացման հիմքեր էր գտնում՝ բանականության իրավունքների ձևով ամեն ինչ տեսնելու և ամեն ինչ իմանալու համար, իբր թե այն նպատակով, որ պայքարում կոփված լինի։ Եվ ահա նա հիմա ամեն ինչ տեսնում էր, տեսնում էր նաև ինքն իրեն...

Իհարկէ, մի բան այդ ամենից զուր տեղը չի կորչում։ Նա վերադառնում է ավարներով բեռնավորված։ Բայց դրանց միջև ընկած էին սեփական «ես»-ի բեկորները. Մարկ-պոռնիկը... Նա ոտքերով տրորում էր դրանք, ինչպես տրորում էր այս ամբողջ աշխարհը, որի հետ խառնակված էր... Նա իրեն դատապարտեց պատժի։ Ասկետիզմի մոլեգին պոռթկման պահին նա երդվեց կրակով այրել, ոչնչացնել իր բոլոր բնազդները, որոնք նրան հարկադրեցին թշնամուն հանձնվել։ Նա իրեն դատապարտեց աշխատանքի խիստ կարգապահության, կանանց հետ կապերի մեջ մտնելուց լիակատար խուսափելու դաժան ռեժիմի։ Հաղթել իր բնությունը, փշրել ծանր մուրճով և նորից կռել։ Բռնադատվող թշնամու զայրույթը իր ներսում կուտակելու իսկական միջոցը։ Բայց այդ հասակում ոչ մարդկայինը հաճախ լինում է փրկության միակ միջոցը։ Այդ հասակում նման խառնվածքի պատանիները ընտրությունը կատարում են միայն ծայրահեղությունների միջև։ Մարկն ընտրեց «երկաթյա կողերը»[1]։ Նա իր երիտասարդ, նվազ մարմինը, որը տենդից ու թուլությունից ուժասպառվել էր, խրեց անողոք ինքնահրաժարման զրահի մեջ։ Նա այդ զրահը իր վրա կրում էր գիշեր ու ցերեկ։ Վրայից չէր հանում նույնիսկ, երբ պառկում էր քնելու—չէր հանում, որպեսզի չքնի (per non dormire—մեծ նշանաբան է), որպեսզի հարկադրի իրեն՝ աչքերը միշտ բաց պահել։

Սիլվիան, որը Լատինական թաղամասում իր լրատուներն ուներ, իմացավ, որ Մարկը նյութական դժվարությունների մեջ է։ Սիլվիան նրան փրկարար օղակ նետեց։ Մարկը ետ հրեց այդ օղակը։ Երկու-երեք ամսվա ընթացքում Սիլվիան դա կրկնեց մի քանի անգամ։ Մարկը չպատասխանեց մորաքրոջ և ոչ մի նամակին։ Սիլվիան նրան չեկ ուղարկեց, առանց որևէ բառ գրելու։ Ամենամեծ վիրավորանքը։ Եվ դեռ փո՞ղ է ուղարկել... Մարկը զայրագին «չի ընդունված» բառերով ջնջեց չեկը և վերադարձրեց ետ գնացող փոստով... Սիլվիան այնպե՞ս էր ուզում գնալ նրա ականջները ձգել։ Տխմա՞ր։ Սիլվիան պատկերացնում էր, թե ինչպես կբացի Մարկի խցիկի դուռը և կմոտենա նրան, իսկ

[1] Այդպես կոչում էին Կրոմվելի զինվորներին։

Մարկը կշրջվի, հուզմունքից գունաթափ, աչքերում կատաղություն և ատամները սեղմած... Ավելի լավ է, թերևս, փորձ չանել։ Դեռ հայտնի չէ, թե ում ատամները կսեղմվեն։ Գուցե, նրանք այնպիսի կոպիտ խոսքեր փոխանակեն, որ հետո երբեք չես կարող ուղղել...

Բայց, բարեբախտաբար, Սիլվիան ներս էր քաշված իր կյանքի հորձանուտի մեջ։ Մեքենան հոնդում էր։ Արդեն հնարավոր չէր կանգնեցնել։ Իսկ արժեր, որ կանգնեցվեր։ Արդեն երկու թե երեք անգամ նրա մոտ ուժեղ արյունալցումներ էին եղել։ Բայց նա սովոր չէր իր «բոբո»-ների նազերը տանել... Պարել, պարել... Եվ, հազիվ կպչելով գետնին, նա նորից սկսեց ֆարանդոլայի պտույտներ անել։ Բայց հիմա ֆարանդոլայի հնչյունները լսվում էին հեռո՞ւ-հեռու ինչ-որ տեղ—կես տարվա ընթացքում Մարկը տիկին Կոկիի մասին իմանում էր միայն լրագրերից։

Իսկ տիկին Կոկին Մարկին մոռացել էր վերջնականապես։

Եվ ահա Մարկը նորից միայնակ է։ Հենց այդ էլ նա ցանկանում էր։ Եթե նա այդքան ուզում է ապրել առանց կողմնակի օգնության, ինքն է ուզում դուրս պրծնել բոլոր դժվարություններից,— ինչ կա որ, խնդրե՛մ։ Հիմա նա ոչ ոքից ոչ մի կոպեկ սպասել չի կարող։ Մայրը հեռու է, նա փող չունի՝ որդուն ուղարկելու համար։ Մայրն ինքն էլ դժվարանում է պոկել իր հասանելիքը։ Նրանք հազվադեպ են միմյանց նամակ գրում։ Մայրն ապրում է խուլ գյուղում, որի հետ կապը շատ վատ է, և նամակները տեղ են հասնում անբնականալի ուշացումով։ Աննետան իր արտաքսման ամենածանր ժամանակն է ապրում—նա թաղվել, մնացել էր այդտեղ։ Աննետան այդ ամենի մասին կպատմի, եթե առհասարակ ուզենա պատմել, երբ Նրան հաջողվի դուրս պրծնել այնտեղից։ Իսկ մինչ այդ կարծես բերանը ջուր առած լինի, ինչպես և նրա որդին, երբ նա որևէ պատմության մեջ է ընկնում։ Նրանք երկուսն էլ միանման համառ են, թե՛ մայրը, թե՛ որդին. «Դա վերաբերվում է միայն ինձ։ Ոչ ոք իրավունք չունի քիթը խոթելու իմ տհաճությունների մեջ»։ Նրանք երկու շաբաթը մեկ անգամ իրար մի քանի տողանոց անա-

բոշ բովանդակության, բայց միշտ առույգ նամակ են գրում,— կարծես միայն նրա համար, որպեսզի ասեն. «Ես այստեղ եմ»։ Դա ավելի շուտ երկու ընկերների նամակներ են, քան նամակագրություն որդու և մոր միջև։ Պայծառ աչքերով կնոջ հաստատուն ձեռքը սեղմում է տղայի շարժուն, միշտ ջերմ մատները։ «Ո՞ղջ եղիր։ Ես քեզ հետ եմ...»։

Մարկն այլևս ոտք չդրեց Ռյուշի տուն։ Կոմպանիան կազմալուծվեց։ Ամբողջովին ցրվեցին այս ու այն կողմ։ Ամեն մեկն իր համար։

Նա վերջ ի վերջո հասկացավ, որ մտավոր աշխատանքով իր համար մի կտոր հաց չի վաստակի։ Եթե նա ուզում է ապրել, պահանջները պետք է նվազեցնի։ Միևնույն է, թե ինչ աշխատանք է, միայն թե ապրել... Դա արդեն շատ բան է—այդպիսի վճռի հանգելը։ Եվ միևնույն ժամանակ դա ոչինչ է։ Այդ նշանակում է համաձայնվել այն բանին, ինչը ձեզ ոչ ոք դեռ չի առաջարկում։ Աշխարհը ծիծաղում է ուղղակի ձեր երեսին. «Դու կարող ես քեզ թողնել քո ամբողջ մեծահոգությունը։ Իմ ինչի՞ն ես դու պետք...»։ Նրա նման հարյուրավորներն են սպասում, թե իրենց երբ մի կտոր ոսկոր կշպրտեն։ Մարկը միշտ շատ ուշ է դալիս։ Եվ ուրիշների հետ իր այդ առաջին ընդհարումների ժամանակ նրան դեռ որոշ նրբանկատություն զսպում է. նա բաց է թողնում նրանց, ով առջևում է կանգնած, և նրանց, ովքեր միայն հերթի մեջ խցկվել են,և նրանց, ովքեր թվում են թույլ և գութ են շարժում կամ, ընդհակառակը, չափազանց լկտի են։ Այդ դեպքում պետք էր բռնել նրա կոկորդից, իսկ նրա համար զզվելի է ձեռքերը կեղտոտել ճարպոտած օձիքներով. երբեմն կատաղությունից նրա արյունը գլուխն է խփում. նա ոչ թե ուրիշներից է վախենում, այլ ինքն իրենից... (Պարծենկո՞տ։ «Բռնե՞ք ինձ...»։ Ոչ, հեգնանքը բոլորովին չի սազում այդ տղային։ Նրան շպրտում են ներքին ալիքները, նրան տագնապ էր պատճառում այն գիտակցությունը, որ այդպիսի պահերին նա կարող է անզոր գտնվել, որ նրան կարող են քշել-տանել այդ ալիքները։ Միայն ժամանակի ընթացքում, միայն մի քանի վտանգավոր զզվառոցներից հետո նա կսովորի ոչ թե այդ ալիքները հնազանդեցնել,— դա նրան կործանումով կսպառնա,— այլ գոնե ուղղություն

տալ նրանց, օգտագործել դրանք որպես էներգիայի աղբյուր, որպես շարժող ուժ... նրան ժամանակ տվեք։ Եթե նա կենդանի մնա, դա նրան մի օր կհաջողվի։ Բայց՝ ապրե՞լ։ Սմբողջ հարցը հենց դրանում է։ Կարո՞ղ է արդյոք նա ապրել։ Ինչքա՞ն ժամանակ և ինչպե՞ս)։

Մարկը անցավ մի շարք հրատարակչություններ և գրախանութներ։ Քսան անարդյունք փորձերից հետո նրան ստուգելու համար ընդունեցին լրագրային տպարան՝ գիշերային հերթափոխի։ Անփորձ նորեկին խեթ էին նայում աշխատանքային ընկերները, որոնք նրա մեջ անմիջապես փափկասունի տեսան։ Օգնելու փոխարեն, նրան ոտք էին դեմ անում։ Երեք գիշերից հետո նրան վճարում են. ու հաշիվը փակում։ Երկու թե երեք անգամ նրան մեծ դժվարությամբ հաջողվել էր ռեկլամների և առևտրական գրագրությունների թարգմանություններ գտնել։ Ոչ մի հեռանկար. Գրականության նրա իմացությունը ոչինչ չարժի, պետք էր իմանալ գործարարական տերմինալոգիան։ Մի անգամ Սենտ-Լյուսը հանդիպում է Մարկին, երբ նա, քաղցած, թափառում է փողոցներով, և ժամանակավորապես նրան տեղավորում է որպես կինոյի մուտքի տոմս ստուգող։ Բայց, մշտապես տաք սենյակից անցներով ցուրտ սենյակը և հակառակը, Մարկը, ի դժբախտություն իր, գրիպ է ընկնում, սկզբում տանում է ոտի վրա, և հետո, վերջապես, անկողին է ընկնում մի քանի օրով։ Դրանից հետո տեղն, իհարկե, զբաղված էր, իսկ ուրիշ տեղ նա չէր գտնում։ Սենտ-Լյուսը մի ամբողջ երեկո վատնեց, որպեսզի Մարկին տեղավորի, բայց նա սովորություն չունի երկար ժամանակ կանգ առնել որևէ բանի վրա։ Մի անգամ Մարկին օգնություն ցույց տալով, Սենտ-Լյուսը նրան մոռացության է տալիս, և հայտնի չէ, թե որտեղ հիմա փնտրել Սենտ-Լյուսին։ Աստված միայն գիտի, թե նա ինքն ինչպես է ապրում։ Այն գիշերը, որը նրանք միասին անցկացրին (կինոյից հետո Սենտ-Լյուսը նրան քարշ տվեց դանսինգից, որտեղ նա ծառայում է, տարավ ընդհատակյա խորտակարանի մի մեկուսի անկյուն և այնտեղ, ուժասպառ ու տենդագին բորբոքված, նրանք մինչև լույս խոսեցին), Մարկը ցնցվել էր, իմանալով, որ էլեգանտ Լյուսը գրեթե նույնպիսի մուրացկան է, ինչպես և

ինքը։ Նա տարօրինակ հարաբերությունների մեջ է մոր, գեղեցկուհի կինոաստղի հետ։ Նա մորը Ժոզե է անվանում և նրա մասին խոսում է անհասկանալի անպատշաճությամբ։ Մայրը մշտապես ուղևորությունների մեջ է։ Հազվադեպ հանդիպելով, նրանք միմյանց ողողում են քնքշություններով և միասին թափառում դիշերային դինեռներում։ Մայրն անընդհատ նրա բերանը կոնֆետներ է լցնում, անհարկի նվերներ է տալիս ու դոլլարներ, եթե իր մոտ որևէ բան մնացած է լինում։ Իսկ որդին այդ դոլլարները մսխում է փոխադարձ նվերների վրա—թանկարժեք բաների ու ծաղիկների և նույնիսկ թանկ սենյակային շնիկների, կապիկների և թութակների կամ զիզիպիզիների վրա, որոնք մայրը չգիտի ինչ անի, բայց որոնք միշտ հաճույքով է ընդունում, և դրանցից նրանք երկուսն էլ սքանչանում են։ Իսկ հետո մայրը նորից անհետանում է ամբողջ ամիսներով, որդուն թողնելով Փարիզում առանց մի սուի, և նրանք երկուսն էլ արդեն դադարում են միմյանցով հետաքրքրվել։ Հանկարծ մայրը հիշում է որդուն. որդին խոշոր կամ որևէ չնչին գումարի չեկ է ստանում (սովորաբար դա լինում է այնպիսի օրերին, երբ նա նույնիսկ ճաշելու փող չի ունենում)։ Սենտ-Լյուսը ծիծաղում է. այդպիսի անակնկալները փաստորեն նրան զվարճացնում են։ Նա ոչ միայն չէր զայրանում մոր վրա, նա երախտապարտ էր մորը այն բանի համար, որ նա այնպիսին է, ինչպիսին որ կա։ Սենտ-Լյուսի համար շատ ավելի հաճելի էր գիտակցել, որ ինքը ծնվել է այդպիսի գեղեցիկ աղջկանից, քան որևէ լուրջ և միանգամայն խելամիտ մորից։ Մի կերպ նա ինքն էլ կարող է կյանքը դասավորել։ Նա ակրոբատ էր ծնվել և հազար ձևեր գիտեր՝ ընկնելիս թռթռերի վրա կանգնելու։ Իսկ տատմոքսը՝ ինչքա՞ն է հարմարվող։ Պաս օրերը նրան ամենևին չէին վախեցնում։ Այդ թռչնակին բավական էր ափի միջից կոցած մի քանի փշրանքը, միայն թե ձեռքը գեղեցիկ լիներ։ Գեղեցիկ ձեռքերի պակասություն նա երբեք չէր զգում։ Այդպիսի ձեռքերն իրենք էին Սենտ-Լյուսին գտնում։ Եվ հայտնի չէ, նա չէ՞ր ընդունում արդյոք պատեհ դեպքում, ճաշի և դիշերելու միջև, մի քանի օրով այդ գեղեցիկ ձեռքերից։ Այն դիշեր Սենտ-Լյուսը դա Մարկից չթաքցրեց, երբ վերջինս զարմանք հայտնեց,

հիշելով, թե Լյուսն որքան նրբակիրթ էր լինում նույնիսկ իր սև օրերին։ Հիանալի ցինիկը Մարկին ասաց.

— Նրանք իմ շորերը հանում են, և հենց իրենք էլ հագցնում են։ Բավական է, որ դու այդ ուզես...

Մարկի շունչը կտրվեց—նա չգտավ, թե ինչ պատասխանի։ Զայրանա՞լ։ Դա անմտություն կլիներ, նա հասկանում էր, որ այդ սագի վրայից ջուրը կթափվի, ոչ մի կաթիլ չի մնա։ Չէր կարելի նրան չափել նույն չափով, ինչ Աննետայի որդուն։ Այն ժամանակներում, երբ դեռ անդրշիրիմյան կյանք գոյություն ուներ և Ահեղ դատաստանից հետո մարդկային հոգիները տեղավորվում էին երեք առանձին փարախներում, Լյուսի համար տեղ չէր գտնվի նրանցից և ոչ մեկում. նա կընկներ այնտեղ, ուր գնում են անասունների հոգիները—հավիտենության ոլորտները... Մարկն այնքան էլ համոզված չէր իր մարդկային հոգու առավելության մեջ։ Բայց եթե ցանկանա—իսկ նա ցանկանում էր—դիմանալ, չկորցնելով ոտքերի տակի հողը, ավելի լավ կլիներ հավատալ այդ առավելությանը։

Համենայն դեպս նա չէր կարող մոռանալ, որ մի անգամ երեկոյան Լյուսը, առանց երկար մտածելու, նրան առաջարկեց այն բոլորը, ինչ կար իր պայուսակում, և բոլոր բարեկամներից Լյուսը միակն էր, որ այդպես վարվեց։ Նաբոբ Վերոնը, հանդիպելով նրան, որ մի տեսակ ուժասպառվել էր վաստակ փնտրելու հոգսից, սահմանափակվեց նրանով, որ նրա առաջ բացեց իր պորտսիգարը։ Նաբոբի մտքով չանցավ էլ հարցնել, թե Մարկն ինչպես է ապրում։ Նա թքած ունեի դրա վրա։ Եվ Մարկը, Վերոնի նկատմամբ ունեցած իր ամբողջ ատելությամբ հանդերձ, նրան երախտապարտ էր այն բանի համար, որ Վերոնը փորձ էլ չի անում թաքցնել իր էգոիզմը։ Իսկ ինքը Մարկը ստիպված է մեծ ճիգեր գործադրել, որպեսզի Վերոնից թաքցնի իր զգացումները։ Վերոնն այդ օրը սարսափելի տրամադրության մեջ էր։ Նրա մի ձեռքը վիրակապված էր։ Մարկը ծաղրանքով հարցրեց, թե չլինի՞ նա պատերազմում է վիրավորվել։ Վերոնն սկսեց հայհոյել, ինչ-որ բան փնթփնթաց շիբանի վերաբերյալ, մեկին, հայտնի չէ ում, պոռնիկ կոչեց և դադարեցրեց խոսակցությունը։ Բաժանվելիս Մարկը նրան առաջարկեց մոտակա

երեկոյին հանդիպել Ռյուշի մոտ։ Նույնպիսի հաջողությամբ նա կարող էր հանդիպում նշանակել «անձրևից հետո հինգշաբթի օրը»,— նա մտադրություն էլ չուներ գնալ այդ ժողովներին։ Վերոնը վիրավորական ու անզուսպ ծիծաղեց, կատաղությամբ թքեց և Ռյուշի հասցեին նողկալի հայհոյանքներ թափեց։ Իսկ երբ Մարկը, որին այդ ցասումի պոռթկումը ապշեցրեց, հարց տվեց, թե այդ ինչ ճանճ է նրան կծել, Վերոնը միանգամից ընդհատեց խոսակցությունը, նրա վրա նետեց կատաղի մի հայացք և մեջքով շրջվեց դեպի Մարկը։

Մարկը շարունակում էր վազվզել աշխատանք գտնելու համար։ Նա գոյության պայքարի համար դեռ անփորձ էր. հպարտությունը վատ օգնական է, երբ հարկավոր է լորտուի նման ճեղքից սողալ, որպեսզի ընկնել մթերքի պահեստը։ Սակայն դրա փոխարեն հպարտությունը դիմադրության կատաղի ուժ է տալիս ամենածանր բոպեներին, երբ մարմինը համակում է թուլությունը, իսկ ոգին ուժասպառված է կասկածից։ Ինչքան էլ Մարկն ուզում է կրկներ իրեն. «Ես պարտված եմ, և պարտվելու եմ»,— բարձրաձայն նա այդ երբեք չի ասի։ Ասել այդ բարձրաձայն կնշանակեր պայքարից հրաժարվել։ Ոչ մի բոպե նրա գլուխը ինքնասպանության միտք չէր գալիս։ Մի՞թե մարտի դաշտում են ինքնասպան լինում։ Այնտեղ գործը մահվան հարցում կանգ չի առնի։ Նույնիսկ ընտրել էլ պետք չի։ Մահն ինքը ամեն ինչի մասին հոգ կտանի։ Ոչ, մեզ իսկապես պետք է միայն կյանքը... «Չէ որ բոլորը, ինչ ինձ շրջապատում է, բոլոր այդ կանայք, տղամարդիկ, ամբողջ այդ ջրապտույտը, բոլոր այդ տուրուդմփոցները, այդ զուգավորումները,— դրանք ոչ թե կյանք է, այլ բորբոս։ Բայց ինչպես հասնել իսկական կյանքին,— որտե՞ղ այդ կյանքը գտնել։ Եվ արդյո՞ք նա գոյություն ունի։ Չգիտեմ։ Մինչդեռ հյուսիսը անդիմադրելիորեն ինձ ձգում է, կողմնացույցի սլաքի նման... Ի՞նչ է հյուսիսը։ Լողացող սառո՞ւյց։ Անկո՞ւմ դեպի անդունդը, որ գտնվում է հավերժական սառույցների միջև։ Ես ոչինչ չգիտեմ։ Բայց հյուսիսն այնտեղ է։ Եվ ես պետք է գնամ հյուսիս։ Կույր ուժը տեսնում է իմ փոխարեն։ Նա ուզում է իմ փոխարեն։ Իմ ամբողջ ազատությունը նրանում է, որ ուզեմ այն, ինչ նա

է ուզում։ Արդարացի է այդ թե անարդարացի, ինձ համար դա օրենք է»։

Վերջին հաշվով նրա ամբողջ այն ժամանակվա իմաստությունը բնորոշվում էր հին դալլական ասույթով.

«Քանի դեռ ապրում ես, չհամարձակվես մեռնել»։

Ցերեկը Մարկն աշխատում էր Կոմարտեն փողոցի նպարեղենի խանութում. նա մայթի վրա վաճառող գործակատարի դեր էր կատարում։ Հունվարյան գորշ շաբաթներին նա կանգնում էր խանութի դռան առջև, օձիքը վեր բարձրացրած և ցրտից զնգզնգացող ատամներով։ Գիշերները նա իրեն հարկադրում էր մի քանի ժամ կարդալ, գրել, խորհրդածել, աշխատում էր որքան կարելի է խոր ըմբռնել կեցության հանելուկը։ Բայց դա դուրս էր սողում Մարկի կուցումած մատներից և քնելու ցանկությունից նրա գլուխն օրորվում էր։ Երբ հնարավորություն էր լինում, նա իր համար թունդ սուրճ էր պատրաստում, որպեսզի չքնի։ Իսկ հետո սովորեց ամենևին չքնել։ Նա կորցրեց բարերար մոռացությունն տվող լճի բանալին։ Օրերն ու գիշերները ձգվում էին համատարած հալյուցինացիաների մեջ—անսկիզբ, անվերջ։ Նրանք բացվում ու կծկվում էին, ինչպես օձի օղակները։ Մարկը ման էր գալիս բորբոքված աչքերով, ամենուրեք հետևից քարշ տալով սաստիկ հոգնածությունը, ստամոքսի ջղակծկումները և սևեռուն մտքերը։ Նա բնակարանի վարձը չէր վճարել։ Նրան կարող էին վռնդել։ Մարկը վաճառել էր բոլորը, ինչ հնարավոր էր։ Մի քանի իրեր, որոնց վրա նա դողում էր, ման էր ածում հետը, իր ուսանողական պորտֆելում, իսկ հետո—պորտֆելից նույնպես ստիպված եղավ բաժանվել—գրպաններում. նա վախենում էր, չլինի թե իր բացակայության ժամանակ գողանան։

Հունվարյան մի օր, երբ քաղաքը պարուրված էր խոնավ ու սառը մառախուղով, Մարկը, գլուխը ուսերի մեջ քաշած, կանգնած էր, ինչպես ձկնկուլ, իր խանութի վաճառասեղանի առաջ։ Անքնությունը նրան հասցրել էր հիմա կիսաուշաթափ վիճակի։ Նա նայում էր ուրվականների շտապողական շարժումներին, նրանց չտեսնելով, նկատելով նրանց, երբ արդեն անցած էին լինում, և զգալով, թե ինչպես ինքը,

նույնպիսի ուրվական, լողում և լուծվում է ընդհանուր շարժման մեջ։ Հանկարծ նրան թվաց (չափա՜զանց ուշ), որ ինչ-որ մեկի գունաթափ դեմքը իր վրա գցեց մի տագնապալից, զգուշավոր հայացք, իսկ ձեռքը արագ շարժումով ինչ-որ բան ճանկեց և թաքնվեց թիկնոցի տակ... Մարկը դուրս պրծավ իր ընդարմացումից, իրենից մի քանի քայլի վրա տեսավ մի կնոջ, որի կերպարը տպավորվեց նրա հոգնած աչքերում. այդ կինը քարացավ վաճառասեղանի առաջ, նրա ձեռքերը թաքցրած էին թիկնոցի տակ։ Մարկը համոզված էր, որ այդ կինն իր վրա զգացել է Մարկի հայացքը. կինը կծկվել էր, ինչպես կաքավ, որի գլխավերևում շուն է կանգնած, և նույն այդ ակնթարթին թիկնոցի տակ անհետացավ կնոջ ավարը,— մի քանի պոմիդոր, որոնք նա գողացել էր։ Կինն սպասում էր, թե ինչ է լինելու դրանից հետո... Իսկ թե ինչ է լինելու դրանից հետո, Մարկն ավելի լավ չգիտեր, քան կինը։ Մարկը քայլեց դեպի կինը։ Արդեն մոտիկ էր կնոջը, Մարկի ձեռքերը, ինչպես և այդ կնոջ ձեռքերը, սեղմված էին իրանին։ Մարկն ու այդ կինը համարյա կպչում էին իրար։ Երկուսն էլ մոտավորապես նույն բոյն ունեին, և Մարկի բերանը գտնվում էր կնոջ նիհար այտի բարձրության վրա, և այդ այտին ջղաձգորեն ցնցվում էին մկանները։ Կինը տեղից չէր շարժվում։ Բայց և այնպես պետք էր մի բան որոշել։ Նա հաղթահարեց իրեն և խեղդված ձայնով ասաց.

— Ե՛տ տվեք։

Բայց այդ րոպեին նա խանութի դռների մեջ տեսավ ավագ գործակատարին։ Վերջինս նրանց էր հետևում։ Մարկը շտապողաբար կաքավին շշնջաց.

— Ոչ, չշարժվեք։ Մեզ հետևում են...

Ի՜նչ անզգուշություն։ Մարկը շրթունքը կծեց... էհ, ի՜նչ արած։ Alea jacta...[1] Նա ետ ու առաջ արավ, որպեսզի իրեն տիրապետի։ Կինը ձևացրեց, թե ուրիշ ապրանքներ է նայում։ Ավագ գործակատարը թաքնվեց խանութում։ Մարկն ավելի մոտեցավ կնոջը և մի հայացքով ընդգրկեց նրա նիհար մեջքը, կլոր գլուխը, նոթերը կիտած դնչիկը—քաղցած կա-

[1] Վիճակը նետված է (լատ.)։

տու։ Կտրուկ շարժումով Մարկը նրա կիսամաշ շալի տակ մտցրեց մի քանի բանան և, սեղմած ատամները չբացելով, ասաց.

— Սա ավելի աննդարար է... Վերցրեք, հեռացեք...

Կինը գլուխը բարձրացրեց և Մարկի վրա նետեց իր սուր հայացքը—երախտապարտություն այնքան մեծ չէր, որքան զարմանքը. «Ախ, կնշանակի դու մերոնցի՞ց ես...»։ Բացատրվելու ժամանակ չկար։ Կինը անհետացավ փողոցային հեղեղում... Մարկը մտածեց. «Ես շուն եմ, որը կրկին դայլ է դառնում։ Ես ֆերմա եմ բացում դատարկ ստամոքսների համար...»։ Տարօրինակ խա՜ղ է։ Մարկը առանց տատանվելու կկրկներ այն, ինչ հիմա արեց։ Լավ արարք էր։ Բայց ինքը վատ էր զգում իրեն։

Մարկը վերադառնում էր տուն։ Ճանապարհին նա հանդիպեց Բետին։. Մարկին զվարճալի թվաց նրան պատմել այդ պատմությունը։ Նա նախապես գիտեր, թե դա ինչ տպավորություն կգործի Բետի վրա։ Բետն իսկույն մոռացավ իր բոլոր ռոմանտիկ գաղափարները բուրժուազիայի դեմ պատրաստվող բունտի վերաբերյալ։ Նպարավաճառուհու արյունը խփեց նրա գլուխը, և նա զայրույթով բղավեց.

—՝Դա արդեն չե՞ղավ։ Դա արդեն չե՞ղավ... Դա արդեն չափն անցնում է... Այդպես չեն անում...

Մարկը նրա երեսին ծիծաղեց։ Բետը լքեց Մարկին վիրավորված վեհության տեսքով։

Խանութ Մարկն այլևս չվերադարձավ։ Նա նույնիսկ ստիպված չեղավ հրաժարվել։ Նրան պարզապես ազատեցին։ Թեև նրա դեմ չկարողացան ոչ մի որոշակի մեղադրանք հարուցել, բայց նա կասկածելի թվաց։ Շները նրա բրդից անտառի հոտ էին առել։

Մարկն ավելի խորը գնաց սովյալների եղբայրության մեջ։ Ոչ մի աշխատանք, ոչ մի տեղ։ Եվ գրպաններում ոչ մի բան, որ կարելի լիներ վաճառել։ Մի անգամ երեկոյան տեղի ունեցավ այն, ինչից վախենում էր. նա իր սենյակի դուռը փակ գտավ, Մարկին դուրս էին արել։ Նրան որոշել էին տանջել մինչև վերջը։

Փետրվարյան ցուրտ գիշեր էր, հյուսիսային պոռթկացող

քամին սրբում էր փողոցները, խոնավ ձյունը, պտույտ գործելով, հալվում էր սալարկի վրա։ Մարկը կուչ էր եկել իր վերարկուի մեջ և, գլուխը կախ գցած, լարվում էր՝ քամուն դիմանալու համար։ Թրջված, ուժասպառված նա մտածում էր.«Հիմա ես կընկնեմ...»։ Եվ հենց այդ ժամանակ նա դիպավ կողքով անցնող ինչ-որ կնոջ, բայց չնայեց նրան։ Մեկի ձեռքը Մարկին թևանցուկ արեց։ Մարկը սթափվեց...

— Ռիվիե՛ր...

Ձեռքը նրան բաց չէր թողնում։ Մարկը բարձրացրեց իր հածող աչքերը... Ռյո՛ւշ... Զբոսայգու աղմուկի և քամու կատաղի ոռնոցի մեջ Մարկը չէր լսում, թե նա ինչ է ասում։ Ռյուշը Մարկին քարշ տվեց դեպի հանգիստ, պաշտպանված մի անկյուն։ Նա չէր հասկանում, թե Ռյուշն ինչ է հարցնում իրեն, ինքն ինչ է պատասխանում նրան։ Բայց Ռյուշի համար առանց այդ էլ ամեն ինչ պարզ դարձավ։ Եվ նա Մարկին տարավ։ Մարկը չէր դիմադրում։ Նա թույլ տվեց, որ Ռյուշը քարշ տա իրեն մինչև դուռը, և ոչ մի բառ չարտասանեց... Հա՛, դա Ռյուշի տունն է...

—Բարձրացե՛ք...

Մարկը սանդուղքով բարձրացավ։

— Նե՛րս մտեք։

Մարկը ներս մտավ... Սենյակի ջերմություն, խոնջանք, քաղց... Մարկի գլուխը պտտվեց... Ռյուշը հրեց նրան դեպի միակ բազկաթոռը։ Մարկն զգում էր, թե Ռյուշն ինչպես է սրձակում նրա խոնավությունից ուռած վերարկուի կոճակները և ազատում նրա ձեռքերը վերարկուի թևքերից։ Ռյուշն ինչ-որ բան էր ասում, բայց Մարկը չէր հասկանում, նրա ձայնի հնչյունները միաձուլվում էին սպիրտայրոցի վրա դրված թեյնիկի խլխլոցի հետ։ Ռյուշը ետ ու առաջ էր քայլում, բայց Մարկը նույնիսկ նրա շարժումներին հետևելու փորձ չէր անում... Մարկի աչքերը փակվում էին... Մի պահ նա բացեց աչքերը։ Նրա շրթունքների մոտ մի ձեռք էր գտնվում, որը Մարկի բերանը ինչ-որ գոլ, կաղդուրող բան էր լցնում, և քնքուշ մի ձայն նրան ասում էր. «Խմի՛ր, փոքրիկս...» Մարկը ուժ չուներ այդ ձեռքից վեր նայել, բայց ձեռքը ամուր նստել է նրա հիշողության մեջ։ Շատ ժամանակ անց, երբ Մարկը մտքով վերադառնում էր դեպի բարի

սամարիտուհին, նրա առաջ հառնում էր ոչ թե սամարիտուհու դեմքը, այլ ձեռքը։ Այդ կիսաուշաթափ վիճակում նրան թվում էր, որ իր հետ խոսում է հենց ձեռքը... Կաթի շիթը լցվեց նրա մեջ, նրա գլուխը ետ ընկավ բազկաթոռի մեջքատեղին և կախվեց, վիզը հոգնել էր, բայց Մարկը չէր շարժվում։ Նա ամբողջ մարմնում ցավ էր զգում, իսկ ներսում— ի՞նչ ջերմություն էր... Բարձ ձեռքերը բարձրացնում էին նրա գլուխը, բայց գլուխը նորից էր ընկնում... Եվս գիտակցության մի առկայծում, և նա սուզվեց ինքնամոռացության մեջ...

Երբ մի քանի ժամ անց նա դուրս լողաց դեպի մակերես, տեսավ, որ ձգված պառկած է, իսկ շուրջը մութ է։ Առաստաղին, խավարի մեջ, խաղում էր փողոցի գունաթափ ցոլքը։ Կամացուկ, անվստահ, առանց շարժվելու, ինչպես անտառում արթնացող գազանը, Մարկը ջանում էր մտքերը ժողովել։ Նա դանդաղորեն ոտքերը պտտում էր իր շուրջը։ Պառկած էր ներքնակի վրա, շորերը հանած, վերմակի մեջ փաթաթված։ Ներքնակի տակ հատակի սալերն են։ Վերևից շոնչն է, սավանների խշխշոցը և Ռյուշի ձայնը.

— Արթնացա՞ր։

Այդ ժամանակ նա բոլորը հիշեց և փորձեց վեր կենալ, բայց ձեռքերն ու ոտքերը թմրել էին, իսկ Ռյուշն ասաց.

— Ոչ, չշարժվե՛ս։

Մարկը հարցրեց։

— Բայց ես այս որտե՞ղ եմ։ Որտե՞ղ ես դու։ (Նա ուշադրություն չդարձրեց, որ Ռյուշին «դու»-ով է դիմում)։

— Մի անհանգստանա։ Դու անվտանգության մեջ ես... Մարկը շարունակում էր շուռումուռ գալ.

— Ոչ, ես ուզում եմ նայել...

— Ուզո՞ւմ ես, ես լույսը կվառեմ։ Մի բոպե...

Ռյուշը անջատիչը պտտեց։ Մարկը իր դեմքի վրա տեսավ Ռյուշի դեմքը։ Ռյուշը աչքերը թարթում էր։ Պարզվում է, նա Մարկի անկողինը գցել էր իր մահճակալի կողքին։ Մարկը նստեց, և նրա ճակատը հավասարվեց Ռյուշի մահճակալի բարձրությանը։ Մարկի աչքերն սկսեցին այս ու այն կողմ դառնալ։ Ռյուշն անկողնու մեջ է, պատ, սեղան, իրեր... Ռյուշն աբդեն լույսը հանգցրեց...

— Ոչ, սպասի՛ր...

— Բավակա՞ն է։

Մարկը նորից պառկեց։ Բայց բոլոր տեսածը շարունակում էր մնալ աչքերի առաջ, և հիմա նա աշխատում էր ամեն ինչ հասկանալ։ Լուռ էր։

— Օ՜յ,— գոռաց Մարկը։

— Ի՞նչ եղավ։

— Շորս...

— Ես այն հանել եմ վրայիցդ։

— Ախ, Ռյուշ...

— Շորդ ամբողջովին թրջվել էր... Ի՞նչ կարող ես անել։ Պատերազմում պատերազմավարի է...

— Ես ամաչում եմ։ Ես քո վզին եմ փաթաթվել, խանգարում եմ քեզ, ես աղջնակի նման անճարակ եմ...

— Դե՛, դե՛,— ասաց վերևից ծիծաղող ձայնը։— Դու կարող էիր, այնուամենայնիվ, աղջնակների մասին նողկալի բաներ չասել։ Երբեմն նրանցից էլ է օգուտ լինում։

— Այո, քեզանից։ Բայց քեզնմաններին գտնել է պետք։

— Բավական է միայն մի հայացք գցել Վալ-դե-Գրաս։

Մարկն իր երեսին զգաց վերևից կախված երկար ձեռքը։ Գտնելով նրան, այդ ձեռքը շոյեց նրա ճակատը, կոպերը, աչքերը, իսկ հետո շարաճճիորեն ճմկթեց քիթը։ Մարկն աշխատում էր ձկան նման բերանով բռնել այդ ձեռքը, վերմակի տակից չհանելով իրենը։ Ռյուշն ասաց.

— Ես համոզված եմ, որ դու մեր Օլեանի մի ասացվածք չգիտես։

— Ի՞նչ ասացվածք։

— Ով Օլեանում չի գիշերել, նա չգիտի, թե կինն ինչ է։

Մարկն անհանգիստ շարժվեց.

— Ես ուրախ կլինեի իմանալ...

Ձեռքը շպպացրեց նրան և չքացավ...

— Ոչ, բարեկամս։ Ոչ, բարեկամս։ Հիմա որևէ բան իմանալու ժամանակ չէ։ Հիմա պետք է քնել։ Հանգցնել բոլոր լույսերը։

— Բոլո՞ր։

— Բոլո՛ր։ Որ վառվում են վերևում և ներքևում։ Արդեն շեփորել են լուսածագը։ Քնի՛ր։

Մարկը լռեց մի քանի րոպե, հետո նորից սկսեց խոսել.

— Ռյո՛ւշ։

— Ես քնած եմ...

— Միայն մի բառ։ Դա ի՞նչ էր։ Մի բա՞ն փայլեց քո սեղանին։

—Ոչ մի բան։

— Ատրճանա՞կ։

— Այո։

Ռյուշը ծիծաղեց։

— Քո դեմ չէ, հիմարի գլուխ։

— Հուսով եմ։ Դու ինձ վրա պակաս վստահ չես, քան քեզ վրա։

— Դա դեռ այնքան էլ շատ չէ,— կարծես ինքն իրեն դիմելով, ծիծաղով առարկեց Ռյուշը։

Բայց Մարկը լսեց միայն նրա խուլ ծիծաղը և նորից շարժվեց.

— Մի՞թե դու ինձ չես վստահում, Ռյուշ։

— Վերջ տուր։ Քնի՛ր։ Վստահում եմ, բարեկամս։ Այնքան, որքան կարելի է վստահել տղամարդուն...

— Կամ կնոջը։

— Կամ կնոջը... Եվ գիտե՞ս ինչ։ Մի՛ բողոքիր։ Ես առանց այն էլ շատ բան քեզ ասացի... Բայց, ընդհանրապես, ձեր ցեղի կենդանիներին ավելի լավ է վստահել, երբ ձեռքիդ զենք ես բռնել։

— Para bellum![1] Ա՜յ քեզ պացիֆիստուհի։ Գրազ կգամ, որ դու երբեք չես խաղացել այդ խաղալիքով։ Եվ առհասարակ գիտե՞ս, թե ինչպես են բանեցնում այն։

— Այ թե ինչ, սիրելիս, եթե դու գրազ ես եկել, ուրեմն տարվել ես։ Ինչի՞ վրա ես գրազ եկել։

— Ինչի վրա ուզես։

— Լավ։ Կհիշենք։

— Ե՞րբ ես դու խաղացել։ Եվ ո՞ւմ հետ։

— Գտիր։

— Ես նրան ճանաչո՞ւմ եմ։

---

[1] Պատրաստիր պատերազմ (լատ.)։

— Միայն դու ես որ նրան ճանաչում ես։

— Ո՞վ է այդ։

— Ես ձեզ այս օրերին միասին եմ տեսել, անկյունում, Սուֆլո սրճարանի մոտ...

Ուղեղի մեջ փայլատակեց. վիրակապված ձեռքը...

— Վերո՞նը։

Ռյուշը խեղդվում էր ծիծաղից, գլուխը բարձի մեջ թաղած։

— Վերո՞նը։ Վերո՞նը։ Այն կոտած չաղ խո՞զը[1]։

— Այո։ Նա համարում է, որ եթե գործ ունես էգի հետ, ապա ամենահամոզիչ փաստարկը ուժն է։ Եվ նա փորձեց այդ ինձ ապացուցել մարտական կռվում։ Այն ժամանակ ես որոշեցի համոզել նրան, որ միանգամայն բաժանում եմ նրա հայացքները, և նրա ուսը արճիճով գիրուցեցի։ «Հը, բարեկամս, ո՞վ է ավելի թույլ»։ Եթե դու նրան տեսնե՞իր։ Նա ապուշ էր կտրել։ Բերանը բաց նայում էր... Բայց թե հետո ինչ եղավ...

—Նա դեռ հայհոյում է,— փոթկացնելով, ասաց Մարկը։

Նրանք երկուսն էլ ծիծաղում էին երեխաների նման։

— Իսկ հիմա քնի՛ր,— ասաց Ռյուշը, աչքերը սավանով սրբելով։ Մարկը հնազանդվեց։ Նրանք արդեն սկսեցին նընջել... Հետո Մարկը, դուրս գալով թմրությյան վիճակից, տեղից փոքր-ինչ վեր բարձրացավ և ասաց խեղդված, բայց կրքոտ ձայնով.

— Ռյո՛ւշ։ Ռյո՛ւշ։

— Ախ, դու ձանձրացրեցիր ինձ,— պատասխանեց քնաթաթախ Ռյուշը։— Ես այլևս չեմ կարող, ես մեռնում եմ... Ինձ հանգիստ թող։

Բայց Մարկը գլուխը քսում էր Ռյուշի փաթաթված ոտքերին։

— Ռյո՛ւշ։ Ռյո՛ւշ։ Ես հիանում եմ քեզանով... Ես քեզ խորը հարգում եմ...

Ռյուշը հուզված էր։

— Անխելք։ Ձայնդ կտրի ու քնի,— ասաց Ռյուշը։

Նրանք քնեցին մինչև առավոտ։

---

[1] Բառախաղ. verrat—ֆրանսերեն նշանակում է կոտած խոզ։

Հին փողոցում մոլորված արևի շողը իր նետը բաց թողեց Մարկի փակ աչքերի վրա, Մարկն աչքերն սկսեց թարթել և լսեց, թե Ռյուշն ինչպես է շիրմայի հետևում կոնքի մեջ լվացվում։ Շիրմայի հետևն անցնելու համար Ռյուշն ստիպված էր Մարկի վրայով լոք տալ։ Ռյուշը դեռ ծիծաղում էր այդ առիթով, սպունգը քսելով իր երկար սրունքներին, որոնց վրայով հոսում էր ջուրը։

— Ռյո՛ւշ։

— Ժամանակ չկա։ Ես զբաղված եմ...

Շիրմայի հետևից մերկ ձեռքը ողջունում էր Մարկին։

— Ինչի՞ վրա ես այդպես ծիծաղում։

— Քեզ վրա։

— Ծիծաղիր։ Իրավունք ունես։

Բնազդական շարժումով Ռյուշը շրթունքներին սեղմեց թաց սպունգը, շիրմայի հետևից Մարկին օդային համբույր հղելով։

— Ա՜խ, քեզ նման մի հիմարն էլ ես եմ...

— Ինչո՞ւ։

— Քո գործը չէ...

Մարկը ոչ վիճել էր ուզում, ոչ շարժվել։ Ի՜նչ հիանալի գիշեր է, ի՜նչ սքանչելի արթնացում, ի՜նչ երանություն։ Մարկը դեռ ամբողջովին թմրած էր... Բայց ո՛չ։ Ամո՛թ է։ Նա եղեգի նման ուղղվեց...

— Ես վեր եմ կենում...

— Ոչ, ոչ, սպասիր։ Քիթդ խրիր բարձի մեջ։ Ես դուրս եմ գալիս։ Նայելն արգելվում է...

Իհարկե, Մարկը նայեց և այդ հավերժահարսին տեսավ ոտից գլուխ։

Ռյուշը սենյակի խորքից նրա վրա նետեց ձեռքի տակ ընկած ամեն ինչ. բարձերը, սրբիչները, Մարկի շալվարը, որը գիշերվա ընթացքում չորացել էր։ Նա պառկել էր, իրերի կույտի տակ թաղված։

— Ջրի տակն անցիր ու խեղդվիր...

Մարկը չէր հասցրել ազատվել, երբ Ռյուշը ձեռնածուի արագությամբ հագնվեց և Մարկին օդ ու լույս վերադարձրեց։

— Իսկ հիմա հագնվիր։ Ես գնում եմ մթերք բերելու....

Մենակ մնալով, Մարկը հագնվեց։ Ռյուշը վերադարձավ, հետը կաթ, հաց և մի քանի կտոր խոզապուխտ բերելով։ Նրանք միասին նախաճաշում էին և զրուցում։ Ռյուշն իր չինուհու աչքերով, որոնց մեջ նորից օտարություն էր բուն դրել, նայում էր պատանի դեմքին, որ գիշերն իր ոտքերին էր քսվում։ Անխե՞լք։ Նրանք ժպիտ փոխանակեցին, որ հասկանալի էր միայն իրենց։ Առանց բարձրաձայն այդ ասելու, երկուսն էլ, ամեն մեկն իր մեջ, հանգեցին միևնույն բանին. «Նման գիշերը կրկնել չի կարելի...»։

— Ահա ինչ,— ասաց Ռյուշը։ —Դու ոչ մի աշխատանքից չե՞ս վախենում...

— Նրանք բոլորն էլ անիմաստ են,— պատասխանեց Մարկը։— Բայց մենք ինքներս էլ ավելի լավը չենք։ Այնպես որ քմահաճակություն անելու կարիք չկա։

— Հենց դա էլ ես քո մեջ սիրում եմ, դու հպարտ ես, դու ենթարկվում ես անհրաժեշտությանը, բայց համարում ես, որ նրան պատիվ ես անում։ Դու չես խորշում։

— Ես արդեն չեմ խորշում։

— Այո, դու փոխվել ես այս կես տարվա ընթացքում։ Քեզ այդպես ավելի է սազում։

— Ասենք, չէ՞ որ դու էլ քմահաճակներից չես։

— Մենք երկուսս էլ լավ փայտից ենք, այդ փայտից նետեր են պատրաստում...

— Բայց նետն ո՞ւր է նշան բռնում։

— Այո, ես անցած տարի շատ էի վախենում, որ քո նետը կկպչի գոտկատեղից ներքև։

— Դու ինձ ստիպում ես կարմրել... Դա ինչ բան է, դու պայծառատես ես։ Ինչպե՞ս գլխի ընկար։

— Դու այնպիսի տեսք ունեիր, կարծես թե քեզ ճահիճն սկսել էր ներս քաշել։

— Ես դուրս պրծա։

— Դա արդեն քիչ չէ։ Հենց այդ ժամանակից էլ ես սկսեցի քեզ հարգել։

— Ինչո՞ւ դու ինձ չասացիր։

— Իսկ ինչի համար ասեի։

— Դա կարող էր ինձ օգնել այնպիսի օրերին, երբ մարդ ինքն իրեն չի հարգում։

— Կես տարի առաջ դա քեզ համար ոչ մի նշանակություն չէր ունենա։

— Դրա փոխարեն այսօր նշանակություն ունի։

— Խե՜ղճ տղա։ Երևում է, լրիվ հալից ընկել ես։

— Դու այդպիսի բան ինձ մի ասի մի այնպիսի օր, երբ ես սկսում եմ նոր կապիտալ դիզել։

— Եվ ես, իհարկե, նրա վրա դնում եմ առաջին դրամը... էհ, ինչ կա որ, քո ապագա միլիոնի կենացը։ Իսկ առայժմ, մինչև ավելի լավ բան գտնելը, չէի՞ր գնա ուսանողական ճաշարան, որպես մատուցող։

Մարկը թուքը կուլ տվեց և համարձակորեն պատասխանեց.

— Եթե դու երբեմն այնտեղ գան ճաշելու։

— Ինչի՞ համար։

— Եթե ես քեզ նույնպես ծառայեի, դա ինձ կօգներ։

— Լավ, կօգնենք...

Ռյուշը նրան ներկայացրեց վարիչին, որի հետ ինքը ծանոթ էր, և Մարկը, քաջալերված Ռյուշի հայացքից ու խորհուրդներից, նույն օրը ձեռնամուխ եղավ աշխատանքի։ Դա քիչ է. երբ հաճախորդների ալիքը ետ հորդեց, Ռյուշը Մարկին նստեցրեց սեղանի մոտ և ինքը ճաշ մատուցեց նրան։ Դրանից հետո ամեն ինչ ավելի պարզ դարձավ։ Ռյուշը նրան պարտք տվեց, և Մարկը կարողացավ իր համար սենյակ վարձել փոքրիկ հյուրանոցում, հենց այնտեղ, Լատինական թաղամասում։

Թվում էր, թե այդ բոլորից հետո նրանք պետք է հաճախ հանդիպեին։ Ոչ մի նման բան տեղի չունեցավ։ Սկզբնական շրջանում Մարկը մի երկու թե երեք անգամ երեկոյան դեռ մտնում էր Ռյուշի մոտ, բայց Ռյուշը տանը չէր լինում։ Իսկ գուցե նա տանն էր և, կոսչ եկած իր անկյունում, սիգարեթը ատամների արանքում, ոտքերը ձեռքերով գրկած նստած էր։ Այդ տարօրինակ արշիկը ապրում էր իր կյանքով, որը միանգամայն փակ էր կողմնակի մարդկանց համար, և համակրանքի պրոթկումը, որն այդ գիշեր նրան մտերմացրեց Մարկի հետ, ոչ մի արտոնություն չստեղծեց նրա համար։ Ավելի շուտ հակառակը, բնազդը հուշում էր Ռյուշին.

«Ահա։ Նա սողնակը ե՞տ քաշեց։ Ուրեմն կողպեքը կախենք»։

Ռյուշի աչքում ոչ մի հաճույք անկախություն չարժեր... Լավ բան էր դա, Ռյուշի անկախությունը, ի՞նչ ասել կուզի։ Եվ Ռյուշն ինչպե՞ս էր վարվում դրա, այդ անկախության հետ։ Ռյուշն ինքն էր իր վրա ծիծաղում, ոտքերի մատները ճմկթելով. «Հիմա՞ր... էհ, թող հիմար լինեմ։ Ես հիմար եմ և հիմար էլ ուզում եմ լինել։ Իմ ոտքերի մատներն ինձ են պատկանում։ Եվ իմ մաշկն էլ է իմը։ Եվ իմ ամեն ինչը իմն է։ Ես ամբողջությամբ, վերից վար, ինձ եմ պատկանում, միայն ու միայն ինձ։ Եվ ուրիշ ոչ ոքի։ Ոչինչ, սպասիր մի քիչ, սիրելիս։ Լավ է ծիծաղում նա... Օհո՞։ Մենք դեռ կծիծաղենք։ Արի գրազ գանք...»։

Այդպիսի խաղ ուներ նա, գրազ գալ իր հետ։ Այդ դեպքում հաստատ կտանես։ Հատկապես եթե խարդախություն արվի... Իսկ ամաչել պետք չէ։

Մարկն ընդունակ կլիներ հասկանալ Ռյուշի ինքնապաշտպանության բնազդը։ «Ես զգուշանում եմ։ Զգուշացիր և դու...»։ Բայց Մարկին բավական էր իր սեփական գաղտնիքները, նա չէր կարող հետաքրքրվել Ռյուշի գաղտնիքներով։ Եվ հետո Մարկի տղամարդկային նախապաշարմունքները ներշնչում էին նրան, որ աղջկա գաղտնիքները ավելին չարժեն, քան կատվի կճիրը։ Ճիշտ է, նա կատուներ սիրում էր։ Բայց կատուն կատու է։ Իսկ տղամարդը մարդ է։

Ռյուշը թաքուն հարցուփորձ էր անում Մարկի մասին, մինչև համոզվեց, որ նա վերջնականապես դուրս է լողացել։ Դրանից հետո Ռյուշը դադարեց հետաքրքրվելուց։ Միայն մի անգամ նա շատ անսպասելի եկավ Մարկի մոտ։ Դա համարյա գիշերվա կեսին էր։ Մարկը իր զարմանքն արտահայտեց, որ Ռյուշը տանիքների վրայով վազվզում է այդքան ուշ ժամին։ Իսկապես որ, նրա աչքերի մեջ պեծին էին տալիս ինչ-որ կատվային կրակներ։ Ռյուշն ուրախ էր, իրեն պահում էր անկաշկանդ, և այնուամենայնիվ նրա հայացքում ինչ-որ օտար, անորսալի, անտառում անաղմուկ թռչող գիշերային թռչունների աչքերին նմանվող բան կար։ Հնարավոր չէ կռահել, թե որտեղ են լինելու նրանք մի ակնթարթ հետո... Գիշերվա ժամը մեկին բուն թռավ-գնաց,

և Մարկը փորձ չարեց նրան պահել։ Նրանք կրկին հանդիպեցին միայն մի քանի ամիս հետո։

Եվ հենց այդ ժամանակ—ապրիլի սկզբին—չվող թռչունների երամների հետ Մարկի մոտ վերադարձավ մյուս թռչունը. Աննետան, որ թռել-եկել էր դանուբյան ճահիճներից։

Մասն երկրորդ

ԱՆՆԵՏԱՆ ԶՈՒՆԳԼԻՆԵՐՈՒՄ

Աննետան քիչ մնաց այնտեղ թաղվեր ու մնար։

Փարիզում նա թույլ տվեց, որ իրեն հակի նման փաթեթավորեն և տանեն։ Գլխից ժամանակավորապես բոլոր հոգսերի դուրս շպրտելը թեթևություն էր... Ժամանակավորապես... Բայց դա երկարատև չեղավ։ Աննետան սովոր չէր ոչինչ չանել։ Նրանք ճանապարհորդում էին Հյուսիսային Իտալիայի և Վենետիկի մարզի պերճաշուք պալատներում (ննջավագոններ, առաջնակարգ հյուրանոցներ, ավտոմոբիլներ և այլք)։ Բայց ամենահստակ տպավորությունը, որ Աննետայի մեջ մնացել էր մանկությունից իրեն ծանոթ ու սիրելի այդ գեղեցիկ վայրերից, դա սառնության և ձանձրույթի տպավորությունն էր։ Սկզբում դա զարմացնում էր Աննետային։ Հետո նա հասկացավ. ճոխությունը մեկուսացրել էր նրան, զրկել էր հողի հետ ունեցած կոնտակտից։ Աննետան այդ կոնտակտը նորից գտնում էր լոկ այն հազվադեպ պահերին, երբ նրան հաջողվում էր դուրս պրծնել և ոտով անցնել փոքրիկ նեղ փողոցներով կամ դաշտերով։ Երբեմն նրա մարմինը փշաքաղվում էր, երբ ոտքը թաղվում էր հյուրանոցային փափուկ, միանման, մեկը մյուսից չտարբերվող գորգերի մեջ, որոնք մեծ ջանադրությամբ ծածկում էին պարկետն ու հատակի քարերը։ Աննետան այրվում էր մերկ գետնի վրայով բոբիկ քայլելու ցանկությունից։ Բայց նրան ոչ մի բոպե հանգիստ չէին թողնում։ Երեք թութակների շաղակրատանքը, որ չէր լռում ոչ ցերեկը, ոչ գիշերը, նրան հացնում էր բթացման։

Բուխարեստում առաջին օրերին թոհուբոհ էր և վիթխարի թռչնանոցի խլացուցիչ աղմուկ ,ինչպես Փարիզի կեն-

դանաբական այգում. հսկայական ընտանիքը, հարազատները, ծանոթները—մի ամբողջ ցեղ էր հավաքվել անջատումից հետո։ Բացականչությունները, զեղումները, գրկախառնություններն ու համբույրները նրանց կբավականացներ բազմաթիվ օրեր ու գիշերներ։ Բոլոր դռները կրնկի վրա բաց էին։ Ամեն ինչ աչքի առաջ էր։ Բոլոր գաղտնիքները։ Զամբյուղներով ինտրիգներ, ֆլիրտներ և ավելին, քան ֆլիրտն է, և ամեն ինչ տեղի էր ունենում բացեիբաց, ուղղակի աչքի առաջ, ամեն մի սենյակում, միջանցքներում։ Տղամարդիկ կանանց հետ հազվադեպ էին խոսում այնպիսի բաների մասին, որոնք չպտտվեին կարմիր լապտերի շուրջը։ Աննետան իրեն պարտավոր էր զգում հետևել իր սանուհիներին, նա ևս բազմաթիվ հոգսեր ուներ այդ շիկացած մթնոլորտում։ Աննետան ինքն էլ հետապնդումներից պատնեշված չէր. նա այդ նկատեց սրտնեղած, բայց, թերևս, ոչ առանց ծաղրական բավականության (օհո՜, քառասուներեք տարեկան հասակո՜ւմ)։ Որպես փարիզուհի, նա, չնայած իր տարիքին, տղամարդկանց համար ուշադրության և տարփանքի առարկա էր։ Նույնիսկ Ֆերդինանդ Բոտիլեսկուն, որը դեռ ճանապարհորդության ժամանակ էր իր ծանրակշիռ նրբակրթությամբ ձանձրացրել Աննետային, սկսել էր նրան մի քիչ անհանգստացնել։

Սակայն, քանի դեռ նրանք քաղաքում էին ապրում, վտանգը մեծ չէր. տեղամասը, որտեղ որսորդություն էին անում, այնքան էր հարուստ որսով, որ միանգամայն կարող էր կշտացնել այդ Նեմվրոդներին։ Եվ Ֆերդինանդը ուրիշ կատվիկներ ուներ, չհաշված քաղաքականությունը, գործերը, պատիվների ու փողի հետևից ընկնելը։

Բայց երկու ամիս անց նրանք փոխադրվեցին Բոտիլեսկուի կալվածքը, որը մոռացության էր մատնված ինչ-որ տեղ մերթ տապից խանձվող, մերթ՝ սառնամանիքից, Վալախիայի մռայլ հարթավայրի լճակների և անտառների միջև։ Աշուն էր։ Թանձր մշուշը լողում էր ճահիճների վրա, որտեղ բլբլացնում էին շամբահավերը։ Ծանր ավտոմոբիլը մերթ թաղվում էր քանդված ճանապարհների աղուրների մեջ, մերթ սաստիկ ցնցվում, և ապա հինգ կանանց, նրանց տիրոջն ու տիրակալին ծածկում ցեխի ցայթքերով։ Բայց միայն Աննե-

տայի՝ ցնցումներից ջարդված մեջքն էր, որ ծանր տնքում էր, և նա զարմանում էր ռումինացիների դիմացկունության վրա. դա, ըստ երևույթին. նրանց վեջը չէր, նրանք պատրաստված էին պղնձից, հատկապես օրիորդների կոկորդները, որոնք ոչ մի բոպե չէին դադարում բլբլալուց։

Ընդարձակ, բայց խարխուլ տունը, ոչ այն է դղյակ, ոչ այն է՝ ֆերմա, կանգնած էր բլրակին, որը հազիվ նկատելի բարձրանում էր հարթավայրի տաղտուկ միապաղաղության վրա։ Այդ տունը կառուցել էին մաս-մաս, և չկար մի հարկ, որն ամբողջությամբ մի մակարդակի վրա լիներ։ Օձագալար միջանցքները բարձրանում և իջնում էին ամեն մի ոլորանի վրա, մաշված քարե աստիճանները շարժվում էին ոտքերի տակ։ Պատերազմի մի քանի տարիների ընթացքում տանը ոչ ոք չէր ապրել, և բնությունը նվաճել էր նրան։ Վայրի խաղողը, որ աշնանային արևի տակ կարմիր էր, ինչպես արյուն, և ճաղատացած բաղեղը, որը ծածկում էր տան ճակատը, պատերի ճեղքերի, լուսամուտների որդակեր շրջանակների միջով խցկվում էին տուն և իրենց հետ բերում ականջամտուկների ու մրջյունների հսկայական բազմություններ։ Տան հապշտապ ու մի կերպ մաքրելը, որ տեղի էր ունեցել տերերի ժամանումից քիչ առաջ, շատ քիչ տագնապեց սարդերին, որոնք տեղավորվել էին մութ անկյուններում ու ծանր վարագույրների ծալքերի մեջ։ Մողեսները վազվզում և ննջում էին միջանցքներում, իսկ ներքևի հարկում երբեմն կարելի էր լսել լորտվի սուլոցը։ Ոչ աղջիկներին, ոչ նրանց մորը դա չէր անհանգստացնում։ Նրանք սովոր էին Արևմտյան Եվրոպայի շքեղությանը, բայց տանը իրենց հիանալի էին զգում կեղտի և թափթփվածության մեջ, փոշով ծածկված բազմոցների և թախտերի վրա։ Աննետան ամաչում էր խոստովանել իրեն, որ դա զզվանք է առաջացնում իր մեջ, և նա որոշեց ամեն ինչում տեսնել ծիծաղելին։ Առաջին երեկոն Աննետան աշխատում էր չնայել իր սենյակի անկյունները,— նա շտապեց հանգցնել մոմը, որը ծխում էր և այրված խոզաճարպի հոտ արձակում։ Հոգնությունից ջարդված, նա մեկնվեց կոշտ ու ճռճռան, հին փայտե մահճակալին, որի վրա ռոմանտիկ և ճակատամարտեր պատկերող տեսարաններ էին նկարած և ամուրներ։ Այդ

մահճակալին կարող էին բոլոր հարմարություններով տեղավորվել երկու զույգ գիշերակացներ։ Նրանց չլինելու պատճառով այդ մահճակալը բնակեցրել էին ուրիշ, ոչ պակաս ձանձրալի բնակիչներ։ Աննետայի հենց առաջին քունը խախտվեց. նրա ամբողջ մաշկը այրվում էր. Աննետան ստիպված էր թողնել սույն պատմական հուշարձանը և նրա մեջ պատսպարվող քաղցած բնակիչներին,— գիշերվա մի մասը նա անցկացրեց աթոռի վրա։ Դա նշանակում էր խարիբդայից ընկնել Սցիլլան։ Նրա բացած լուսամուտներից ներս խուժեցին մոծակների թևավոր էսկադրոնները։ Լճակում կռկռում էին գորտերը, իսկ լուսաբացի առաջին շողերի հետ ինչ-որ տեղ հեռվում սկսեցին ղողանջել վանքի թրթռուն զանգերը։

Հաջորդ գիշերները, մինչև (Բուխարեստից) նոր մահճակալի տեղ հասնելը, Աննետան քնում էր հատակին, ներքնակի վրա, և դա ոչ ոքի չէր զարմացնում։ Ճիշտ է, օրիորդները նրան առաջարկում էին պառկել իրենց հետ միևնույն անկողնում։ Նրանք քնում էին հարեան հակայական սենյակում, քնում էին մեռելի նման, բերանները բաց, համաչափ ու կամաց խռխռացնելով, այս ու այն կողմն ընկած նավանների տակ ծնկները ծալած։ Նրանց մերկ սրունքներն անխոցելի էին միջատների համար։ Առավոտյան նրանք կատակում էին այն բանի վրա, որ Աննետայի այտերը, քիթը, ճակատը ուռել են, որ ուռել են ոտքերի կոճերը։ Աննետան նույնպես ծիծաղում էր, գազանի պես ճանկռելով ամբողջ մարմինը. նա օտարերկրացիների վրա դրվող հարկ էր վճարում։ Հենց որ այդ պարազիտները բռնագանձեն հարկը, իսկույն ևթ իմունիտետ կստանաս։ Չկա չարիք, առանց բարիքի. թերևս, դա խելամիտ էր—կանգնել տանտիրոջ պարապ աչքերի առաջ անհրապույր տեսքով։ Բայց Աննետան մոլորության մեջ էր ընկնում, եթե կարծում էր, թե կարող են տանտիրոջ առաջն առնել այդպիսի դատարկ բաներ։ Նա չափազանց շատ էր պտտվում Աննետայի շուրջբոլորը։ Անընդհատ ջանում էր ծառայել Աննետային, անընդհատ ցույց էր տալիս նրա նկատմամբ իր չափազանցված և ձանձրացնող ուշադրությունը, շատ ընդգծված էր դիմում նրան, ինչպես հյուրի։ Սակայն տանտիրոջ ծանր կոպերի տակ Աննետան

տեսնում էր արագ հանգչող, բայց և այնպես չարագուշակ կայծակների փայլատակումը։ Այնպիսի բոպեներ էին պատահում, երբ տանտիրոջ հետ մենակ մի տեղ գտնվելը կարող էր անվտանգ չլինել։ Մեծ արժեք չէր ներկայացնի նրա այդ ամբողջ արտաքին ակնածանքը։ Նա Աննետայի հետ կվարվեր, ինչպես մատակ ձիու հետ։ Հենց այդպես նա իր կալվածքում վարվում էր գեղջկական աղջիկների հետ, երբ գոմում հանդիպում էր նրանց կով կթելիս կամ լճակի մոտ, երբ նրանք, ցեխի մեջ կանգնած, կոտորած եղեգներից խրձեր էին կապում։ Հետո նրանք իրենց կարգի էին բերում, կատաղած ու բավարարված կչկչալով, ինչպես հավերը։ Ըստ երևույթին, տիրոջ և տիրակալի ոչ կնոջ, ոչ աղջիկների համար դա գաղտնիք չէր ներկայացնում. նրանք դրան կարևորություն չէին տալիս։ Գուցե և նրանք հոգու խորքում հպարտանում էին իրենց սուլթանով։ Գյուղական քիչ• երեխաներ չկային, որոնք անչափ նման էին նրան։ Գազանը միշտ սոված էր։ Ծանր, համարյա բացառապես մսեղենից կազմված սեղանը (Աննետայի մեջ դա զզվանք էր առաջացնում), թանկ գինիները և «ցուիկան» (տալորի օղի) չէին կարող լցնել այդ ստամոքսի խորխորատը. մաքուր օդն ու պարապությունը այդ ստամոքսը անտակ էին դարձրել։ Տիկին Բոտիլեսկուն ամբողջ օրեր անց էր կացնում ննջելով և անգործության մեջ, Աննետայի վրա թափելով տան հոգսերը։ Ֆերդինանդն իր ուժերը վատնում էր ոտքով ման գալու, ձիով շրջելու և որսորդություն անելու վրա։ Երբեմն նա իր հետ վերցնում էր ամբողջ կոմպանիան՝ ձիերով կամ ավտոմոբիլով զբոսնելու։ Բայց Աննետան սկսել էր զգուշանալ այն բանից հետո, երբ մի օր, աղջիկների հետ ճահճային թփուտներում ծաղիկ հավաքելիս, հանկարծ զգաց, որ մենակ է մնացել, և նրա կանչին արձագանքեց ինքն՝ արու սագը։ Աննետան տուն գնաց ուրիշ ճանապարհով։ Տեսնելով անմեղ դեմքերն այդ աղջիկների, որոնք նրա վզով ընկան, իրար ընդհատելով ու գոռալով, որ իրենք բոլոր տեղերում փնտրել են նրան, Աննետան նույնիսկ զղջաց իր կասկածների համար։ Բայց ինչքան էլ վանում էր իրենից այդ կասկածը, այնուամենայնիվ, դա չէր հեռանում։ Այդ կասկածը շան նման պառկել էր դռան մոտ, փոռցի վրա գունդուկծիկ եկած։ Աննետայի կող-

մից բռնած այդ փոքրիկ երկրպագուների հայացքները նրան ստիպում էին մշտապես զգաստ լինել։ Ֆրանսուհու հետաքրքրամտությամբ նա էլ իր հերթին էր փորձում որոշել, թե ինչ մղումներ կարող են լինել այդ փոքրիկ հոգիներում, միամիտ ու բարդ։ Աննետան կուահում էր բնազդական, գուցե ծածուկ, անբարյացակամությունը, որը նա կարող էր առաջացնել նրանց մեջ Բուխարեստում, խանգարելով նրանց ֆլիրտել։ Հատկապես ավագ քույրը, որը նրան ծածկում էր ամենանքնքուշ համբույրներով, պետք է նրա հետ հաշիվ ունենար,— հենց նա էլ Աննետայի վրա սրել էր մեկը երիտասարդ աղվեսի իր գեղեցիկ ու սուր ժանիքներից, որոնք բացվում էին, երբ գայթակղիչ ժպիտի ժամանակ բարձրանում էր նրա լիքը՝ աղվամազով ծածկված շրթունքը։ Ուրեմն ի՞նչ, կնշանակի, աղջիկները խաբո՞ւմ էին։ Ոչ, եթե ստում ես—կնշանակի ասում ես այն բանի հակառակը, ինչ մտածում ես։ Նրանք էլ հենց մտածում էին այն, ինչ ասում էին, իսկ ասում էին այն, ինչ մտածում էին։ Նրանք անկեղծ էին և միևնույն ժամանակ՝ խորամանկ։ Նրանք սիրում էին Աննետային, և այդ նույն ժամանակ նրանց հաճույք էր պատճառում Աննետային հրել դեպի իրենց հոր ցանցերը։ Ամենաերիտասարդը դրա մեջ ոչ մի վատ բան չէր տեսնում. նրա համար դա միայն զվարճանք էր։ Նույնիսկ երկրորդը, ամենափորձվածը, միայն ուզում էր տեսնել, թե ինչ զայրացած տեսք է ունենալու տնային դաստիարակչուհին, երբ նա բռնվի։ Բայց ավագ քույրը, Ստեֆանիկան, գիտեր, ինչ է անում։ Նա կրկնակի հաճույք էր ստանում այն բանից, որ սիրելով Աննետային, վրեժ լուծի նրանից, մղելով նրան իր հոր գիրկը։ Հոր արկածները, գուցե, արգելված զգացմունքներ էին արթնացնում հենց իր՝ դստեր մեջ։ Այդ զգացմունքները նա թաքցնում էր և նույնիսկ իրեն չէր խոստովանում, թե ինչ խաղ է խաղում, բայց նախապես արդեն ըմբռշխնում էր հաջողությունը։ Աննետան չէր ուզում դրան հավատալ, թեև նրա մեջ երկու թե երեք անգամ կասկածներ էին առաջացել։ Բայց նա զգուշացավ։

Մի անգամ երեկոյան, պատրաստվելով պառկել քնելու, նա նկատեց, որ իր սենյակի բանալին չքացել է բանալու

անցքից։ Ընդամենը մի քառորդ ժամ առաջ նա տեսել էր այդ բանալին։ Աղջիկները նրա տենյակում էին։ Նրանք բարի գիշեր մաղթելով Աննետային, քիչ էր մնացել իրենց գրկում խեղդեին նրան։ Աննետայի մեջ ոչ մի կասկած չէր մնում։ Էգ գայլի մազերը բիզ-բիզ կանգնեցին։ Նա իրեն հանդիմանում էր. «Ես հիմար եմ։ Աննետա, սիրելիս, դու հնարում ես։ Դու անչափ ներվային ես։ Բանալին ընկել է։ Եվ եթե անգամ աղջիկներն այն տարել են, ապա տարել են պարզապես կատակելու համար։ Դրան ուշադրություն դարձնելու կարիք չկա»։ Աննետան պառկեց։ Բայց երեք րոպեից հետո մահճակալից վեր ցատկեց։ Հարևան սենյակից նրան հասավ երկու ավագ քույրերի խլացած ծիծաղը։ Աննետան գնաց նրանց մոտ,— բոբիկ, գիշերանոցով։ Նա հազիվ էր ներս մտել, մոմը հանգավ։ Աննետան նորից այն վառեց։ Աղջիկները քնած ձևացան։ Իսկ երբ Աննետան ցնցեց նրանց և սկսեց զայրացած տոնով խոսել նրանց հետ, նրանք ձևացրին, թե քնից հենց նոր արթնացան և անմեղ աչքերով երդվեցին բոլոր սրբերով, որ չեն հասկանում, թե իրենցից ինչ են ուզում. նրանք ոչինչ չգիտեն։ Աննետան ժամանակ չկորցրեց վիճաբանության վրա։ Նա սառնությամբ ասաց Ստեֆանիկային.

— Գնա այստեղից։ Ես եմ մնում այստեղ։ Գնա պառկիր իմ մահճակալին։

Աղջիկը տեղից թռավ։

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ, —սարսափով բղավեց նա։

Աննետան նայեց նրա աչքերին, չհամառեց և պառկեց նրա կողքին։ Նորից մթնեց։ Բոլորը լուռ էին։ Անցավ մի ժամ, և միջանցքում ինչ-որ մեկի քայլերի տակ սկսեցին ճռճռալ հատակի երերուն տախտակները։ Կողքի դուռը բացվեց, մեկը մտավ Աննետայի սենյակը։ Արմունկին հենված բարձրանալով, Աննետան ականջ դրեց։ Ստեֆանիկան իրեն քնած էր ձևացնում, բայց նույնպես ականջ էր դնում. տագնապալից շնչառությունը մատնում էր նրան։ Պատի հետևում գրգռված տղամարդը (նա համարյա ամեն գիշեր կիսահարբած էր լինում) անհաջողությունից կատաղել էր։ Նա շպրտում էր սավանները, բարձերը և մռնչում էր փղի նման։ Աննետան նույնպես կատաղեց։ Բռնելով Ստեֆանիկայի

ուսերից, նա շշնջյունով պահանջեց, որ Ստեֆանիկան խոստովանի. Աննետան ռումիներեն աղջկա երեսին անպարկեշտ խոսքեր էր շպրտում (բոլոր լեզուներով այդ խոսքերն ամենից շուտ են սովորում, սովորում են այն խոսքերի հետ միաժամանակ, որոնք հարկավոր են ուտել խնդրելու համար)։ Ստեֆանիկան, իրեն կորցնելով, շարունակում էր համառորեն ժխտել, մինչև որ վեճի ժամանակ հատակին չընկավ բանալին, որը Ստեֆանիկան թաքցրել էր բարձի տակ։ Հիասթափված կնամոլը դուրս գնաց սենյակից, զայրույթից շրխկացնելով դուռը, և միջանցքով սկսեց քայլել, ոտքերը դոփելով, ինչպես գոմեշ։ Երկու օրիորդներն էլ, ամոթահար և հուզված (նրանք նոր միայն սարսափով զգացին իրենց դավաճանությունը), հեկեկալով ծնկի եկան Աննետայի առաջ,— նրանք համբուրում և արցունքներով ողողում էին Աննետայի ձեռքերը, նրանից ներողություն էին խնդրում։ Նրանք անկեղծ էին։ Ստեֆանիկան ընկավ աղմկալից հուսահատության մեջ, բռունցքներով թնդաձայն խփում էր իր ամուր կրծքին, նա հայտարարեց, որ գիշերվա մնացորդը ցանկանում է մնալ Աննետայի ոտքերի մոտ։ Վերջապես, հեծկլտալով ու քթները վեր քաշելով, ինչպես երեխաները, որոնց ծեծել են, աղջիկները քնեցին։ Անհնար էր նրանց վրա զայրանալ։ Բայց վատահել նրանց նույնպես անհնար էր։

Աննետան ուզում էր հենց հաջորդ օրը մեկնել։ Բայց աղջիկներն աղաղակով, բուռն կերպով արտահայտելով նրա նկատմամբ իրենց սերը, աղաչում էին Աննետային մնալ։ Իսկ շփոթահար Ֆերդինանդը, ոչ մի խոսք չասելով իր գիշերային անհաջող ասպատակության մասին, իրեն պատկառելի տարածության վրա էր պահում, դրսևորելով զղջման բոլոր արտաքին նշանները։ Աննետան փոխեց իր որոշումը։ Ասենք, դրա իրականացմանը խանգարում էին լուրջ նյութական պատճառներ. Աննետան փող չուներ։ Երբ նա պահանջում էր այն, ինչ իր հասանելիքն է, տերերն ամեն տեսակի պատրվակներ էին գտնում, որպեսզի ձգձգեն և չվճարեն նրան։ Վրա էր հասնում ձմեռը և կարվածքը կտրում մնացյալ աշխարհից։ Տեղից տեղ փոխադրվելը տարվա այդ եղանակին դժվար էր։ Չէր կարելի մեկնել այն ժամանակ, երբ ուզում ես։

Աննետան որոշեց սպասել մինչև գարուն։ Ապրած տագնապները կարծես բոլորին ստիպեցին լռչանալ։ Վրա հասավ քնկոտ հանգստի շրջանը։ Դաշտերում փռված ձյունը իր թեթև բմբուլով ծածկեց նաև սրտերը։ Լուսնկա գիշերներին սառած լճակը շողշողում էր ինչպես ադամանդ։ Զբոսնում էին զանգուլակներով տահնակներ նստած։ Քամուց կարմրում էին այտերը, տաքուկ գլխարկների տակ վառվում էին ականջները, մարմինը, որ պարուրված էր մորթիների մեջ, իրեն երջանիկ էր զգում թարմացած արյան հոսքից։ Ձմեռային ծածկույթի անբիծ ճերմակությունը քողարկում էր եղեգով ծածկված հյուղերի կեղտը և ճահիճների գարշահոտությունը։ Աննետան ոչ առանց հաջողության էր ջանում իր թռչնակների ուշադրությունը դարձնել գյուղացիների աղքատության վրա, որոնց քրջերը աքողում էին գայլային մազերը։ Գյուղացիներն Աննետային հմայում էին իրենց սքանչելի երգերով, շարխաքաշ երեսներով, վայրենիների շողշողուն զարդերով, որոնք տոն օրերին հագնում էին նրանք, հին սովորություններով և իրենց առողջ դատողությամբ։ Աննետան փորձում էր խոսքի բռնվել նրանց հետ, և նրանց անվստահությունը հալչում էր։ Նրան հաճելի էր տեսնել, թե ինչպես է Տրայանոսի զորասյանը գամված Դակերի մռայլ կերպարանքի տակ բռնկվում բուրգունդական Կոլա Բրունյոնի հեգնանքի ուրախ կրակը, այն Բրունյոնի, որը լավ է հասկանում ամեն ինչի արժեքը և ծիծաղում ամեն ինչի վրա։ Երբեմն կարելի էր լսել նաև ամպրոպի որոտներ։ Դրանք գալիս էին հեռվից. խոսք, շարժում, ձայնի բարձրացում։ Դարերով կուտակված բունտ՝ տիրոջ դեմ... Տերը դա գիտեր, բայց դա տևում էր դարեր շարունակ (ժամանակ առ ժամանակ պայթելով)։ Եվ նա համարում էր, որ այդպես է բնական օրենքը, որից պետք է օգտվեր և օգտվում էր ուժեղագույնը, այսինքն նա։ «Դու ծնկներով սեղմում ես ձիու կողերը։ Եթե նա քացի է տալիս, սանձով ճղիր նրա բերանը...»։ Աննետան նկատեց այդ լուռ մենամարտը և (Աննետային ճանաչողների համար ավելորդ է այդ մասին խոսել) դրողչեկը դրեց ձիու վրա։ Արդյոք ե՞րբ է ազատելու նա իր մեջքը հեծյալից։ Աննետան չէր ափսոսում, որ մնացել է։ Նախնադարյան ուժերին, այդ հին հողին հպվելը լավ էր։ Նրա գլխով անցնում էին

ձմեռային փոթորիկները, նրանց հանկարծական պոռթկումները ձյան մրրիկների հետ միասին վեր էին հանում տեսիլքները Մարկ Ավրելիոսի ճակատամարտերի և մյուս, գալիք մարտերը, որոնք առայժմ դեռ ննջում էին գետերի սրտերում։

Խիստ կլիման և թարմ օդում կատարած զբոսանքները կազդուրեցին Աննետային։ Նրա ամբողջ մարմինը լցված էր այնքան ծաղկող, ցնծացող առողջությամբ, որ դա մարտահրավեր էր թվում, և ավելի խելամիտ կլիներ թաքցնել այդ. Աննետան չէր էլ ենթադրում, որ դա գայլաձկան երախի առաջ նետված խայծ է դարձել։ Աննետան ամբողջովին բռնկված էր իր վաղ աշնան բոցով։ Նա մարմնական բերկրանք էր զգում և հոգեկան անդորր. նա գիտեր, որ Մարկը գտնվում է Սիլվիայի տաքուկ թևի տակ։ Աննետան խանդավառությամբ էր մասնակցում ժողովրդական տոներին։ Օրիորդ Բոտիլեսկուները իրենք զուգվում էին և Աննետային էլ զարդարում գյուղական ծանր, ճոխ զգեստներով (տերերի և ծառաների հարաբերությունները թեև աչքի էին ընկնում կոպտությամբ, սակայն զերծ չէին ընտանեվարությունից)։ Բայց համեմատությունը երիտասարդ կալվածատիրուհիների օգտին չէր, և տղաները ընտրության մեջ չէին տատանվում. Աննետան պարում էր բոլոր պճնամոլների, գյուղական բոլոր աքլորների հետ։ Նա չէր նկատում իր կատվիկների նոթոտ դնչիկների խանդոտ կատաղությունը։ Ճիշտ նույն ձևով էլ նա ուշադրություն չէր դարձնում տանտիրոջ բոցավառվող աչքերին, մինչև որ այդ տերը մի անգամ Աննետային չխլեց գյուղական ինչ-որ պարողի ձեռքից և ինքը չգրկեց նրա գոտկատեղը։ Այդ ժամանակ Աննետան ասաց, որ հոգնել է, և պարից հետո տուն գնաց։ Դրանից մի քանի օր հետո Աննետան պահպանում էր նախկին զգուշությունը։ Բայց հետո տագնապը նրան իզուր թվաց։ Եվ նորից ամեն ինչ քնեց։

Դա տեղի ունեցավ մարտի վերջին։ Դանդաղորեն սկսում էր խփել արթնացող հողի զարկերակը։ Խոր ձյունը ծածկվում է կնճիռներով, նրա տակով անցնում էր թաքնված դողը, լճակի վրա ջարդվում էր սառույցը։ Գիշերները լսվում էր, թե ինչպես է լուռ երկնքով սլանում չվող թռչունների երամը։ Պասը վերջացավ, և կալվածատերերն անընդհատ մեկը մյու-

սի տուն հյուր էին գնում։ Օրիորդ Բոտիլեակները իրենց մոր հետ մեկնեցին հարևան կալվածքը՝ ընթրիքի և պարի։ Հայրը մի քանի օր բացակայում էր։

Ասում էին, որ նա Բուխարեստում է։ Աննետան իր սաների հետ չմեկնեց. թեթևակի դողը, գլխացավը—գրիպի սկիզբը—նրան պահեցին տանը։ Իջնում էր երեկոն, հետո վրա հասավ գիշերը։ Աննետան պառկած էր իր սենյակում և ծուլանում էր լույսը վառել։ Նա լսում էր, թե ներքևում, հյուրասենյակում, ինչպես է տկտկացնում հին, ժանգոտած, կաղին տվող ժամացույցը, իսկ ինչ-որ տեղ՝ խավարով պարուրված դաշտում ճռճռում էին գյուղական սայլի չմազութած անիվները։ Աննետան քնեց։ Նրան արթնացրեց բանալու անցքում պտտվող բանալու շրխկոցը։ Աննետան դրան ուշադրություն չդարձրեց։ Բայց նրա մեջ ինչ-որ տհաճ զգացում առաջացավ, որը նման էր ուռած լնդի բութ տնքոցի։ Աննետան դա վերագրեց գրիպին։ Հետո լինդն սկսեց ծակծկել, և հիվանդ տեղը որոշակի դարձավ. վտանգը ոչ թե ներսում էր, այլ դրսում։ Նա հիշեց, որ Ստեֆանիկային հեռախոսի մոտ տեսավ, երբ վերջինս խորհրդավոր տեսքով, շտապելով ու հուզվելով, խոսում էր ինչ-որ մեկի հետ։ Աննետան այդ ժամանակ չհասկացավ, թե խոսակցությունն ինչի մասին էր, բայց հիմա ամեն ինչ նրան հասկանալի դարձավ։ Նա հիշեց, որ ինքը կալվածքում մենակ է մնացել ստորաքարշ, խուլ ու համր, հնազանդ և ամեն ինչի ընդունակ ծառայի հետ։ Եվ հանկարծ մահճակալի վրա վեր թռավ, հիշելով իրեն արթնացնող բանալու շրխկոցը։ Նա վեր կացավ, մոտեցավ դռանը և հայտնաբերեց, որ դուռը բանալիով փակած է, բայց դրսից։ Հենց այդ րոպեին նա լսեց բակը մտնող ավտոմոբիլի աղմուկը։ Կասկած չէր մնում։ Տանտերը գողի նման թաքուն տուն էր մտնում։ Աննետան գցեց ներսի փակը, որը ժամանակին ինքը պատրաստել էր տվել անվտանգության համար։ Նա շուտով կգա, Աննետան դրանում համոզված էր։

Եվ նա եկավ։ Դուռը հրեց, բայց դուռն անշարժ մնաց։ Աննետան լուռ կանգնած էր, համակված կատաղի չարությամբ, ինչպես թակարդն ընկած առնետը։ Նա ծանրությեթն էր անում իր վիճակը և, վերջապես, որոշեց, որ փակը երկար չի դիմանա։ Աննետան ջանում էր ժամանակ շահել։ Սառը

և ընդհատուն պատասխանում էր դռան հետևում գտնվող ձայնին, որը խոսակցություն էր սկսել։ Միևնույն ժամանակ նա շրջում էր սենյակում, ինչպես այն առնետը, որը ճեղք է փնտրում։ Այդտեղ միայն մի ելք կար—լուսամուտը։ Աննետան բացեց այն։ Սենյակը երկրորդ հարկում էր, իսկ լուսամուտը կլոր պատշգամբով կախվում էր ուղիղ փոքրիկ մի բլրի լանջին։ Աննետան կախվեց ճաղաշարքից և հայացքով չափեց բարձրությունը։ Նա շոշափեց հին, չորացած գլիցինիայի հանգուցավոր ցողունը, որն օձային օղակներով փաթաթված էր ճաղաշարքին, և մտածում էր, թե ինչ անի։ Հետո հագնվեց, ոտները մտցրեց գյուղական վալենկաների մեջ, թաթմանները ձեռքերին քաշեց, բայց և նույն րոպեին հանեց, որպեսզի ձեռքերով ազատ գործի։ Մի ակնթարթում նա հավաքեց իր ամենաանհրաժեշտ իրերը և նույնիսկ այդպիսի րոպեին կանացի բնազդին տուրք տալու ժամանակ գտավ ու նայեց հայելուն, ականջներին քաշելով տաք կարակուլե գլխարկը։ Նա տեսավ զայրույթից աղավաղված իր բերանը, որ արհամարհական «այո» և «ոչ» էր պատասխանում մոլեգնած անասունին, որը թափ էր տալիս դուռը, սպառնալով ծղխնիներից պոկել այն։ Վերջապես Աննետան հայացքը մի անգամ ևս շրջեց սենյակով մեկ և վճռեց։ Արդեն պատուհանի մոտ նա, ըստ երևույթին, ինչ-որ բան մտաբերեց, վերադարձավ, վերցրեց Մարկի լուսանկարը, որը գնդասեղով, պատին էր կպցրած, իր մահճակալի գլխավերևը, և թաքցրեց ծոցում։ Հետո լոք տվեց պատշգամբի ճաղաշարքի վրայով և սկսեց իջնել։ Ձեռքը գցելով գլիցինիայի հանգուցավոր ցողունին, նա մերթ ծանրորեն ցած էր սահում, մերթ կանգ էր առնում ամեն րոպե փորը ճղելու կամ աչքը ճյուղերի սուր կողերով հանելու վտանգին ենթարկելով իրեն, ճյուղերը խիստ ցավեցնելով խփում էին նրա երեսին։ Հանկարծ նա այնպիսի սուր ցավ զգաց նախաբազկում, որ մատները բաց արեց։ Բարեբախտաբար, նա արդեն հասցրել էր տարածության երկու երրորդը տղղալ, և ձյան բարձը մեղմացրեց նրա անկումը։ Աննետան գլորվեց բլրակի ստորոտը։ Լուսինը թաքնվեց կալվածատիրոջ տան հետևը, բոլորովին մթնեց։ Աննետայի շորը ամբողջովին ճղճղվել էր, ձեռքերն ու ոտքերը քերծվել էին, և այնուամենայնիվ Ան-

նետան ողջ էր և անվնաս։ Նա շունչ առավ և սկսեց դաշտերով փախչել, շտապելով օգտվել մայր մտնող լուսնյակի վերջին լույսից, որպեսզի չմոլորվի։ Բայց լուսինը չհապաղեց անհետանալ։ Խավարը վրա հասավ։ Աննետայի համար այդպես ավելի հեշտ էր փրկվել հետապնդումից, բայց, մյուս կողմից, դա խանգարում էր նրան, քանի որ մթի մեջ նա ճանապարհը կորցնում էր։ Աննետան ուզում էր գնալ Բուխարեստ, որտեղ ֆրանսիական հյուպատոսը նրան կօգներ մեկնել հայրենիք։ Բայց Աննետան տեղանքը վատ գիտեր։ Մանավանդ, որ խիստ խավարը նրան թույլ չէր տալիս կողմնորոշվել։ Աննետան գնում էր, գնում էր, աչքերը գետնին գցած, ինչպես հետք որոնող շունը, բայց լույսը, որ ճառագայթում էր հողը, մերթ Աննետային դուրս էր բերում ճիշտ ճանապարհ, մերթ մոլորեցնում էր նրան։ Աննետան թաղվում էր ձնակույտերի մեջ, չփչփացնում էր ճահիճների միջով, խրվում էր ցեխերը և նորից էր դուրս գալիս այնտեղից, մրրսում և դողում էր ինչպես տենդի ժամանակ։ Այդպես նա քայլեց ամբողջ գիշերը և, խաբված գորտերի անլռելի երգչախմբից, չնկատեց, որ ամբողջ ժամանակ պտտվում է միևնույն մեծ լճակի շուրջը։ Վաղորդյան արշալույսի առաջին շողերի հետ Աննետան նկատեց, որ ինքը գտնվում է ճահիճների միջև ընկած խճուղում։ Եղեգների միջից, շատ մոտիկ, երևում էր անիծյալ կալվածքը, որտեղից Աննետան փախչում էր։ Հոգնությունից ուժասպառ, նա նորից ճանապարհ ընկավ։ Աննետան տեսավ գյուղացի մի փոքրիկ տղայի, որը եղեգ էր կտրում։ Տղան չոր տիղմից սևացած դնչիկը շրջեց Աննետայի կողմը, նայեց և փոխանակ պատասխանի Աննետայի հարցերին, շպրտեց կտրած եղեգների խուրձը և փախավ՝ ինչքան ոտքերում ուժ կար։ Աննետան որոշեց, որ իրեն հետապնդում են, և տղան վազեց, որպեսզի մատնի նրան։ Աննետան սկսեց գյուղական ճանապարհներ փնտրել, որոնցով կարելի կլիներ հեռանալ, բայց այդպիսի ճանապարհներ չկային. անվերջանալի ուղիղ խճուղին պատնեշի նման ձգվում էր երկու ճահիճների միջև—և ոչ մի ոլորան չկար, որի հետևում կարելի լիներ թաքնվել։ Ջուր էր Աննետան քայլերն արագացնում։ Հեռվում երևացող ավտոմոբիլի փնչոցը նրան նախազգուշացրեց, որ հետապնդումը մո-

տենում է։ Հետապնդողը նույնպես նկատեց Աննետային։ Եվս երեք րոպե, և նա արդեն այստեղ կլինի։ Ոչ մի վայրկյան չտատանվելով, Աննետան նետվեց ճահիճը։ Սառույցի կեղևը ջարդվեց։ Աննետան ընկավ սառը մածկան տիղմի մեջ և ձեռքերը դցեց ուռենու արմատներին։ Խճուղուց նրան էր հասնում Ֆերդինանդի խռպոտած ձայնը։ Ֆերդինանդը տագնապած էր և գրգռված, նա պաղատում էր Աննետային վերադառնալ։ Բայց Աննետան մի կերպ բարձրացավ ցեխով ծածկված ծառաբնի վրա և գոռաց Ֆերդինանդին. «Ո՛չ»— հետո համառորեն նորից իրեն գցեց թփուտների մեջ և կորավ։ Խճուղուց միայն երևում էր, թե ինչպես են շարժվում եղեգներն ու ճահճային խոտերն այնտեղ, որտեղով անցնում է հալածական էգ գայլը։ Այդ վայրի համառությունից կատաղության ալիքը խփեց որսորդի երեսին։ Ամբողջովին կարմրատակած Ֆերդինանդը բղավում էր, որ եթե Աննետան անմիջապես չվերադառնա, ինքը կկրակի։ Աննետան գոռաց. «Կրակի՛ր»։ Նա նույնպես համբերությունից դուրս էր եկել։ Նա կատաղությունից հարբել էր։ Մինչև կուրծքը Աննետան թաղված էր ցեխի մեջ, նրա վրայով սողում էին սև տզրուկների նման կպչուն գարշահոտ ջրիմուռները։ Պղտոր երկնքում մլավում էր ճահուկը։ Աննետան մտածեց.

«Չե՛մ տրվելու։ Ավելի լավ է կերակրեմ ճահճային առնետներին ու սարդերին»։

Բայց Ֆերդինանդը սարսափեց։ Նա իր տոնը փոխեց։ Նա աղերսում էր։ Երդվում էր իր պատվով (Աննետան թքած ուներ այդ պատվի վրա), որ հարգում է Աննետային, որ ինքը պատրաստ է ծառայելու նրան, որ նախապես ընդունում է Աննետայի բոլոր պայմանները։ Աննետան ոչ մի բանի չէր հավատում, այժմ նրան հնարավոր չէր խաբել... Նա համառորեն շրթունքները սեղմում էր, որպեսզի չպատասխանի և կուլ չտա գարշահոտ խյուսը, որի մեջ ինքը թրպըրտում էր։ Աննետան ոչ մի դեպքում չէր հանձնվի, եթե ճահիճը բոլոր կողմերից նրան չշրջապատեր և չլատեր նրա շարժումները։ Փորձելով դուրս պրծնել, նա ավելի ու ավելի էր խճճվում ջրիմուռների մեջ, որոնք խեղդում էին նրան։ Բոտիլեսկուն որոշեց Աննետային օգնել։ Նա ինքն էլ

էր թաղվելու ոտքի դիմում, բայց վերջ ի վերջո հասավ Աննետային։ Ֆերդինանդին հաջողվեց բռնել նրա թևատակերից, նա դժվարությամբ դուրս հանեց Աննետային տիղմի միջից և տարավ ափ։ Աննետան ամբողջովին սևացել էր— ոտից մինչև գլուխ, բայց դեռ շարունակում էր նույն անվախը մնալ։ Նա Բոտիլեսկուին մարտահրավեր էր նետում։ Սակայն Ֆերդինանդը դա չէր ուզում ընդունել։ Նա հիանում էր Աննետայով։ Նա արդեն հարգալից տոնով էր խոսում նրա հետ և ափսոսում էր, որ հարկադրել է նրան փախչել։ Նա աղաչում էր Աննետային ներել իրեն և վերադառնալ կալվածքը։ Բոտիլեսկուն խոսում էր և՛ ստորացած, և ճոռոմ, բայց և այնպես՝ անկեղծորեն, և դա ժպիտ էր առաջացնում Աննետայի դեմքին, որը կատաղությունից և նրան կպած ցեխից մռայլ էր թվում։ Աննետան ասաց.

— Դե լա՛վ, եկեք մոռանա՛նք։ Դա մեր երկուսին էլ պետք է... Բայց վերադառնալ—ոչ։ Այդ մասին խոսք անգամ լինել չի կարող... Ես մեկնում եմ։

Բոտիլեսկուն զարմանք պատկերեց, բայց միայն քաղաքավարությունից ելնելով,— նա այնքան էլ զարմացած չէր։ Նա կանխատեսում էր այդ վճիռը և նույնիսկ իր հետ բերել էր Աննետայի ճամպրուկն ու նրա թողած բոլոր իրերը։ Նա առաջարկեց Աննետային տանել մինչև մոտակա կայարանը, որտեղ կանգ էր առնում միջազգային էքսպրեսը, և շարություն արած մեծ աշակերտի ողորմելի տեսքով խնդրում էր միայն, որ Աննետան մեծահոգաբար ազատի Ֆերդինանդին անախորժություններից և կալվածքը նամակ գրի, իր հանկարծակի մեկնումը բացատրելով որդու մասին ստացած լուրերով, որոնք շտապ պահանջում էին նրա վերադարձը Փարիզ։ Աննետան համաձայնեց և նստեց ավտոմոբիլ։

Նրանք կանգ առան ամենամոտ գյուղակում և մտան ամենից քիչ կեղտոտ մի հյուղակ, որպեսզի Աննետան լողանա և շորերը փոխի։ Մի կաթսա ջուր տաքացրին, և Աննետան ոտից գլուխ լվացվեց ու փոխեց սպիտակեղենը։ Ֆերդինանդը երեխաներին ու տանտերերին քշելով տնից, առաքինությամբ և կատաղորեն հսկեց դուռը, շրջված ու մեջքը դեպի դուռն արած։ Աննետան կանգնած էր մերկ, շփումից նրա մաշկը կարմրել էր, ատամները չիչխկում էին ցրտից,

և հանկարծ նրան համակեց վայրի մի քրքիջ. նա հիշեց Սեն Սիմոնի պատմվածքը մի դքսի մասին, որը սուրը ձեռքին այս ու այն կողմ էր քայլում այն եկեղեցու առաջ, որտեղ այդ ժամանակ իր սրտի թագուհին թեթևանում էր։ Գրիպը և մինչև ոսկորները թափանցող ճահճի ցուրտը նրա ամբողջ ներսը շուռտումուռ էին տալիս, և նա, որպես խակական բուրգունդուհի, շտապանվեց, իր խիզախ ասպետի հանդուգնության տակ, փոքրիկ բակում անել նույնը։ Թող ամաչի նա, ում համար դա վատ նշան է։ Նույնիսկ Կլեոպատրան է ստամոքսի խանգարումներ ունենում...

Նրանք նորից նստեցին ավտոմոբիլ։ Մինչև մոտակա կայարանը հեռու էր, իսկ հալոցքը ճանապարհը փչացրել էր։ Բայց երբ նրանք, վերջապես, տեղ հասան, պարզվեց, որ լուրջ աղետ է տեղի ունեցել և արևելաեվրոպական էքսպրեսսի շարժումը դադարեցված է մի քանի օրով. Կարպատներից դուրս գալու ելքի մոտ հեղեղումները պաստառը քշել-տարել են։ Բոտիլեսկուն Աննետային առաջարկեց նրան տանել Բուխարեստ, որտեղ Աննետան կարող էր սպասել հյուրանոցում՝ մինչև որ երթևեկությունը վերականգնվի։ Բայց Աննետան վճռականորեն հրաժարվեց—նա շտապում էր մեկնել։ Իհարկե, ավելի խելամիտ կլիներ մրսածությունը բուժել, նստելով սենյակում, բայց տենդը, որը թափառում էր նրա ամբողջ մարմնով մեկ, և հուզմունքը, որի պատճառը փախուստն ու հետապնդումն էին, նրան ստիպում էին ձգտել որքան կարելի է շուտ մեկնել այդ երկրից։ Աննետան գրգռվել էր և համբերությունը կորցրել, նրան հետապնդում էր այն սարսափը, թե ինքը կարող է այստեղ մեռնել։ Երբ Աննետան թարտում էր ճահճում, նա տարսափի մասին չէր մտածում։ Իսկ հիմա նոր սարսափում էր. տիղմը հասնում էր մինչև կոկորդը (նեխահոտը նրան գիշերները հետապնդում էր, այդ հոտը նա առնում էր իր մատներից)։ Աննետան սոսկումից դողում էր, թե ճահճային խյուսից կխեղդվի, նա շնչահեղձ էր լինում։ Նրա ցանկությամբ, Ֆերդինանդը նրան տարավ Կոստանցա, և այնտեղ Աննետան նստեց հենց առաջին շոգենավը։ Դա իտալական նավ էր, որը բավական երկար երթուղով գնում էր Բրինդիզի։ Բայց Աննետան լսել անգամ չէր ուզում Բոտիլեսկուի հորդորները։ Նա փակվեց

խցիկում, և այնտեղ նրան տապալեց սաստիկ հոգնածությունը։ Աննետան մենակ էր իր տենդի հետ և ոչինչ չտեսավ ամբողջ ճանապարհի ընթացքում։ Նա միայն մի բան էր մտածում։ Կենդանի թե մեռած, բայց վերադառնալ։

Աննետան վերադարձավ Փարիզ։ Նա ավելի շուտ եկավ, քան Մարկին ուղարկած հեռագիրը, որն ընկել-մնացել էր դրոնապանուհու մոտ։ Մարկն այդ ժամանակաընթացքում մի քանի անգամ ճամբարը փոխել էր, և Աննետան չէր հասցրել ստանալ նրա հասցեն։ Մարկին գտնելը պարզվեց, որ այնքան էլ հեշտ չէ։ Սիլվիան չգիտեր, թե նա որտեղ է ապրում։ Աննետան գժգոհ էր քրոջ անտարբերությունից և նրանից դա չթաքցրեց։ Սիլվիան հասկացավ, բանն ինչումն է, և պատասխանեց, որ ինքը դայակ չէ։ Նա ինքն էլ հոգսեր ունի։ Աննետան նույն լոպեին հեռացավ։ Նա նկատեց, թե քույրը որքան շատ է փոխվել. ամբողջովին լայնքին է տվել, երեսն ուռել է, կարմրել, աչքերի տակ պարկեր են գոյացել։ Եվ Աննետան իրեն հանդիմանեց այն բանի համար, որ նույնիսկ չհետաքրքրվեց էլ քրոջ առողջական վիճակով։ Սիլվիան նույնպես իրեն մեղավոր էր զգում։

Աննետային հետքի վրա գցեց Սենտ-Լյուսը։ Բայց, որպես լավ ընկեր, նա Աննետային չասաց, որ Մարկը հիմա գիշերային մի գինետնում ծառայում է որպես ցրիչ։ Նա գիտեր, թե իր ընկերը որքան է ինքնասեր, և նրան զգուշացրեց մոր գալու մասին։ Աննետան ամբողջ գիշերը որդուն սպասեց նրա սենյակում, սեղանատանը, սպասեց և չպառկեց քնելու։ Մարկը եկավ լուսադեմին և ծեծեց դուռը։ Նա պակա՛ս անհամբերությամբ չէր ուզում տեսնել մորը, քան մայրը նրան։ Բայց երբ նրանք տեսնվեցին, ոչ մի զեղում չեղավ։ Նրանք երկուսն էլ անմիջապես ինչ-որ սառնություն զգացին։ Նրանք միմյանց գտան ոչ այնպիսին, ինչպիսին եղել էին անջատման պահին։ Ամեն մեկն իր ցնցումներն էր ունեցել, և ամեն մեկն այդ ցնցումները տարել էր իր ձևով։ Մանավանդ որ երկուսն էլ անքուն գիշերվա պատճառով խիստ լարված էին։ Աննետան վատ էր թաքցնում որդուն տեսնելու իր բավական գրգռված անհամբերությունը և այն կասկածները, որոնք նրան ներշնչում էր Մարկի գիշերային

կյանքը։ Իսկ Մարկն այդ զգում էր և նույնպես զայրանում։ Չէ՞ որ Աննետան եկել էր անսպասելի, հենց այնպիսի ժամանակ, երբ Մարկի նյութական վիճակը առանձնապես ծանր էր, և նա վստահ չէր, թե Սենտ-Լյուսը չի պատմել իր ստորացուցիչ աշխատանքի մասին։ Մարկը հարցրեց ավելի շուտ չոր, քան քնքուշ, թե ինչու չի Աննետան պառկել քնելու։ Աննետան, գուցե, մեղմ, քան կուզեր, պատասխանեց հարցին հարցով.

— Իսկ դո՞ւ, տղաս։

Նա համարձակ կարող էր մորը պատմել, որ ինքը նույնպես չի զվարճացել, բայց բացատրություն տալու համար նա չափազանց հպարտ էր։ Աննետան կարծես նրանից հաշիվ էր հարցնում։ Իսկ Մարկի մտքով չէր էլ անցնում, թե որևէ մեկի առաջ պարտավոր է հաշիվ տալ։ Մարկը նրան չարժանացրեց պատասխանի։ Աննետան ուշադիր նայում էր որդուն, նրա դեմքի գունատությանը, հոգնատանջ գծերին, անժամանակ հայտնված կնճիռներին, որոնք գոյացել էին ռունգների շուրջը և խոսում էին ժամանակից շուտ մաշվածության և կյանքի նկատմամբ ունեցած զզվանքի մասին։ Նրա սիրտը կծկվում էր, նա ենթադրում էր, որ որդին անառակ կյանք է վարում, և մտածում էր, թե դա ինչ հետք է թողնում... Մարկը նրան թույլ էր տալիս մտածել, ինչ ուզում է։ Նա նույնպես իր հերթին զննեց մորը և նույնպես գոհ չմնաց։ Աննետան անչափ առողջ, չափազանց պարարտ և շատ փթթուն տեսք ուներ, նրա աչքերում, նրա բոլոր շարժումների մեջ շողշողում էր, գուցե իր կամքից անկախ, կյանքի բերկրությունը։ Ոչ ոքի մտքով չէր անցնի, թե նա հենց նոր է մի կերպ դուրս պրծել ռոմինական ճահճից և ծանր գրիպ տարել։ Գույները նրա դեմքին խաբուսիկ էին։ Նրա մոտ դեռ կրկնվում էր դեմքի արյունալցումը։ Բայց մի բան անվիճելի էր. չնայած իր բոլոր անհաջողություններին, Աննետան համարում էր, որ կյանքն այնքան էլ վատ չէ։ Ոչ, իսկապես էլ, տարիների ընթացքում նա սկսել էր կյանքի համը ավելի ու ավելի զգալ։ Խոր հուզմունքները, անակնկալները, նույնիսկ աղետներն ու անվստահությունը վաղվա օրվա հանդեպ, —դրանք բոլորը կյանքը դարձնում էին էլ ավելի լիակատար։ Դա շատ ավելի ախորժելի էր, քան նրա

երիտասարդության անգույն տարիները, քան 1890 և 1900 թվականների միջև ընկած ֆրանսիական քաղաքենիության կյանքը։ Աննետան ուժեղ խառնվածքի տեր էր։ Շատ ավելի ուժեղ, քան Մարկը, —նա ինքը դա պարզ տեսնում էր։ Բայց ի՞նչ անես։ Նա հո չէր կարող իսկապես էլ հենց միայն նրա համար, որպեսզի դուր գա Մարկին, բողոքել սատամոքսի մարսողությունից կամ դալկախտից։ Իսկ Մարկը նիհար էր և ներծծված դառնությամբ, նա կատաղած էր հասարակության վրա, որի անմիտ խրախճանքները և անզոր արատները ոչ միայն առիթ էր ունեցել շատ մոտիկից դիտել, այլև դրանց սպասարկել էր։ Այդ հարբած ապականոցներից հետո նա առանց սրտխառնոցի չէր կարողանում ուտել նույնիսկ այն մի կտոր հացը, որն ինքն այնտեղ վաստակում էր. հացից քարշ եկող պոռնիկների քրտինքի հոտ էր փչում։ Նա ցանկություն էր ունենում ամբողջ աշխարհի հետույքի տակ դինամիտային պայթազանիկ դնել։ Եվ այդ ցանկությունն ավելի ուժեղանում էր իր հետ լուծ քաշող ընկերների և բանվորների հետ առնչվելուց, որոնց հետ նա մտերմացել էր վերջին ժամանակներս...

Նրանցից մեկը Մարկի վրա որոշակի ազդեցություն էր ունենում, որքան որ կարելի էր ընդհանրապես ազդել այդպիսի մռայլ պատանու վրա, ինչպիսին Մարկն է։ Էժեն Մասսոնը շատ քիչ բանով էր այդ տեսակետից տարբերվում նրանից։ Նրանք ծանոթացել էին մետրոյում գիշեր ժամանակ, հետո հաճախ էին աշխատանքից միասին վերադառնում, գիշերները ժամը երկուսին, երեքին, և ոտով քայլում էին, անցնելով ամբողջ Փարիզը։ Մասսոնն աշխատում էր լրագրային տպարանում և հենց այդտեղ էլ Մարկին տեղավորեց, երբ վերջինիս ազատեցին իր գիշերային հաստատությունից այն բանի համար, որ չէր կարողացել թաքցնել իր արհամարհանքը դեպի հաճախորդները (նրանցից մեկի հետ նա կռվեց)։ Լրագիրը, ճիշտ է, ուլտրաշովինիստական էր, պրոպագանդում էր գործարար աշխարհի իմպերիալիստական ծրագրերը և հարձակվում էր Մարկի և Մասսոնի բոլոր իդեալների վրա։ Բայց դիրեկցիային չէր հետաքրքրում, թե տպարանից դուրս ինչ իդեաներ են գալիս բանվորի գլուխը, և առհասարակ դալիս են թե չէ։ Դիրեկցիայի համար

կարևոր չէր, թե նրանք ինչ են—կենդանի մարդիկ մտածելու իրավունք ունեն։ Կատարիր քո աշխատանքը։ Դրա համար քեզ վճարում են—և կարգին։ Դա այն ամենն էր, ինչ Մարկը և Մասսոնը կարող էին դիրեկցիայից պահանջել։ Ապստամբությունը դեռ ամենևին չէր հասունացել։ Եվ ավելի քիչ էր հասունացել համագործակցությունից հրաժարվելու գաղափարը, որին կոչ էր անում Դանդին։ Դա ո՞ւմ կարող էր Փարիզում հետաքրքրել։ Եվ ո՞վ կարող էր ինքնահրաժարման հերոսության, հացից հրաժարվելու կոչ անել, եթե հացը պետք է վաստակվի այնպիսի աշխատանքով, որի հետ խիղճը չի հաշտվում։ Մինչդեռ Փարիզի ժողովրդի մեջ թաքնված է շատ ավելի չվատնված հերոսություն, քան այդ ենթադրում են նրա ճլորած ղեկավարները և նույնիսկ նա ինքը։ Իր համար կիրառում չգտնելով, այդ հերոսությունը փոխվում է դառնության։

Մասսոնի դառնությունն այն առավելությունն ուներ Մարկի դառնության նկատմամբ, որ առաջինի դառնությունը արդարացնում էր առավել դաժան կենսափորձը։ Երիտասարդ բանվորը պատերազմում թունավորվել էր գազով. մահը նստել էր նրա արյան մեջ։ Եվ նա ամբողջովին ատելությամբ էր լցված դեպի նողկալի էգոիզմը, դեպի ֆրանսիացիների ապատիան, որոնք անցան այնպիսի սոսկալի փորձությունների միջով և ոչինչ չարին, որպեսզի կանխեն դրանց կրկնումը։ Նա հատկապես թշնամաբար էր տրամադրված Մարկի կատաղի դեմ, բուրժուական պատանի ինտելիգենտների դեմ (նույնպես և ծերերի դեմ։ Բայց նրանց մասին խոսել անդամ չարժեր։ Մահն ինքը կհոգա այդ ծեր յաթուների մասին...)։ Նա կրքոտ հեգնանքով խոսում էր նրանց մտավոր գեղոնիզմի մասին (նա կարդացած էր), աշխարհի տառապանքների նկատմամբ նրանց անտարբերության մասին, նրանց կեղծ ընտրյալների մասին, որոնք դավաճաններ դուրս եկան, այդ ոչ մի բանի պետք չեկող պարազիտների մասին, այդ նեխանքի մասին, որը լափում է կողոպտած բարիքի մնացորդները... Մարկը բոլոր հիմքերն ուներ ընդունելու այդ մեղադրանքների արդարացիությունը։ Նա ինքն էլ էր (դեռ վերջերս) ապրում փշրանքներով։ Այդ ատորացուցիչ

հիշողությունից նորից էր նրա մեջ բռնկվում կատաղությունը Սիլվիայի հանդեպ։ Բայց և այնպես ելնելով համերաշխության բնազդական զգացումից,— որը, ճիշտ է, արդեն ժխտվում էր նրա ապստամբած գիտակցության կողմից,— Մարկն սկսում էր թվարկել ինտելիգենցիայի ծառայությունները, պաշտպանում էր նրա գոյության իրավունքը։ Բայց երբ իբրև Մասոնի շար և թունոտ ծաղրի պատասխան Մարկը ջանում էր դուրս քաշել ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներին նրանց հարմարավետ նեյտրալիտետից, որը պաշտպանվում է գրքե ամրոցներով, երբ նա փորձում էր ստիպել նրանց գործել, նա հարկադրված եղավ վերջ ի վերջո համոթ իր ընդունել, որ ինտելիգենտական ցեղի նկատմամբ ամենախիստ խոսքերը չափազանց մեղմ են թվում։ Համարյա բոլոր այդ ինտելիգենտները հնարավորություն ունեին ավելի պարզ և ավելի հեռուն տեսնելու՝ քան մյուսները։ Շատերը նաև ժամանակ ունեին դրա համար։ Եվ ժողովուրդը երախտագիտությամբ կգնար ուղածդ անշահախնդիր առաջնորդի հետևից։ Բայց նրանք ամենից շատ վախենում էին հենց այն բանից, որ այդպիսիների հետևից կգնա վճռականությամբ գործելու պատրաստ մի բանակ, իսկ այդ բանակը նրանց հետևից կհրի և կդնի դժվարին կացության մեջ։ Նրանք ձևացնում էին, թե ուրիշ կողմ են նայում. «Ես ոչինչ չեմ տեսել...»։ Պատասխանատվության վախից նրանք խայտառակորեն խուսափում էին։ Հարկ էր, որ դա խարանեին նրանց ճակատին շիկացած երկաթով... Նույնիսկ Մարկին-հայտնի այդ երիտասարդ գրողները, որոնք պատրաստ էին մասնակցել քաղաքական գործունեությանը՝ հանուն այն բանի, որ փայլեն իրենց «հումանիզով»,— նույնիսկ նրանք էլ ինչպես հարկն է ոչ մի կուսակցության չէին հարում։ Նրանք նստել էին մի քանի աթոռների վրա միաժամանակ, լինի դա ռադիկալիզմ, սոցիալիզմ, ինտերնացիոնալիզմ, թե նացիոնալիզմ։ Ժամանակ առ ժամանակ, ֆրանսիական հին կլասիցիզմի պաշտպանության տակ, նրանք նույնիսկ անցնում էին ռոյալիստական գրականության շարքերը, քանի որ այդ գրականությունը մամուլում և ակադեմիայի ընտրություններում տիրուհի էր։ Ամենատարբեր փողոցներում անցորդ-

ներին երկիմաստ աչքով անելու որոշակի ստաժ ձեռք բերելով, նրանք գործի էին անցնում ըստ այդ մասնագիտության սովորույթների. բոլոր դեպքերում, առանց բացառության, ամեն մեկն իր համար հարմար տեղ էր գտնում։ Փարիզն ամեն աստիճանի ինտելեկտուալ պոռնկության տեսարան էր ներկայացնում—սկսած լրագրային հասարակական տնեբից, որտեղ շառլատաններն առատ վարձ էին ստանում՝ խորություն չդնող լայն հասարակությանը իրենց նողկալի կեղծիքով թունավորելու համար, ընդհուպ մինչև ակադեմիայի և գրական սալոնների թանկարժեք կոկոտկաները, որոնք վարպետորեն «կամավոր», բայց ոչ անշահախնդիր ստրկության և ընդհանուր կաթվածի վիրուսներ էին բազմացնում։ Կարճ ասած, նրանց թաքնված ֆունկցիան ուշադրություն շեղելու, գործունեությունից հեռացնելու մեջ էր։ Իսկ այդ նպատակին հասնելու համար բոլոր միջոցները լավ էին։ Նույնիսկ միտքը։ Նույնիսկ գործունեությունը... Քանի որ, որքան էլ դա պարադոքսալ թվա, դեպի սպորտն ունեցած կիրքը վերջին հաշվով հանգեցնում էր անգործության։ Ֆիզիկական ակտիվությամբ և շարժումը շարժման համար հասկացությամբ արբենալը եռանդի ամենափոթորկուն հեղեղները հեռացնում էր նրանց բնական հունից, դրանք սպառում էր ստադիոնում և կամ էլ, նախքան նրանց կատաղի վազքի ընդհատվելը, թափում էր ջրատար խողովակների մեջ։ Այդ վարակին ենթարկվեց նաև ժողովուրդը։ Երբ Մասսոնը ծանակում էր բուրժուական ինտելիգենցիայի նողկալիությունը, Մարկի համար դժվար չէր նրան պատասխանել բանվորներին ծաղրելով, որոնք նույնպես սպորտից բթացել էին։ Սպորտն ավարտի էր հասցնում լրագրերի կործանիչ աշխատանքը։ Նա թունավորված և անօգտակար մարդկանց մի ամբողջ բանակ էր ստեղծում։ Մեծ ակումբները գնում էին ինչպես ձիեր են գնում, պրոֆեսիոնալների ամբողջական ախոռներ, պրոֆեսիոնալների, որոնց նրանք սիրողներ էին անվանում, և նրանցից ֆուտբոլային թիմեր էին կազմում։ Հազարավոր աշխատավորներ իրենց ուժերի ծաղկման շրջանում անամոթաբար իրենց մկաններն էին վաճառում։ Որպես միջազգային ֆուտբոլիստներ, նրանք օգտվում էին փարթամ կյանքի բոլոր բարիքներից, առաջ-

նակարգ հյուրանոցներից, ննջավագոններից, օգտվում էին ընդհուպ մինչև այն րոպեն, երբ անժամանակ կորցնում էին իրենց մկանների ճկունությունը։ Այդ ժամանակ նրանց շուկայական արժեքն ընկնում էր, հասնելով մինչև զրոյի, և նրանց աղբակույտն էին շպրտում, ինչպես վարվում էին հին Հռոմում լեշ դառած գլադիատորի հետ։ Բայց գլադիատորները գոնե արդեն մեռած էին լինում։ Իսկ իրենց կյանքը ժամանակակից արենաներում կործանած մարդկանց անունները նրանցից շատ ավելի երկար էին ապրում։ Տեսարանների սիրահար ամբոխը նրանցով հետաքրքրվում էր ոչ ավելի, քան հռոմեական խաժամուժն էր հետաքրքրվում գլադիատորներով։ Այդ ամբոխն անընդհատ նորանոր ատլետներ էր պահանջում։ Եվ այդ տեսարաններում նա վատնում էր իր ամբողջ կիրքը, ամբողջ ցասումը, որոնք անհրաժեշտ հոնի մեջ դնելու դեպքում կարող էին շրջել սոցիալական կեղեքման այդ աշխարհը։ Ամբոխն այդ միջազգային մատչերի մեջ մտցնում էր կործանարար շովինիզմ. խաղերը վերածվում էին մարտերի։ Լինում էին սպանության դեպքեր։ Ռեգբիի ժամանակ հարձակվողներն իրենց այնպես էին պահում, կարծես խուժած լինեին թշնամական խրամատը։ Ահա, բանից պարզվում է, հանուն ինչի Հաղթանակի կամարի տակով անցան նրանք, ովքեր ճակատում չէին սպանվել։ Ահա ինչով վերջացան պետության ղեկավարությունն իրենց ձեռքը վերցնելու և հասարակության վերափոխման համար տված նրանց երդումները։ Նրանք նույնիսկ panem et circenses[1] չստացան։ Հացը նրանք հարկադրված էին վաստակել։ Իսկ circenses-ի համար նրանք պետք է վճարեին։ Մենենիուս Ագրիպպայի ժամանակներից տեսարանասիրության և մարդկային հիմարության շահագործումը շատ առաջ է անցել։ Ոչ, Մասսոնը նույնպես քիչ հիմքեր ուներ բանվոր մարդկանցով հպարտանալու համար, ինչպես Մարկը՝ իր բուրժուաներով։ Երբ Մասսոնը սկսում էր խրատ կարդալ տպարանի իր ընկերներին, նրանք պատասխանում էին հայհոյական խոսքերով, իրենց նեղություն չտալով՝ վեճի բռնվել նրա հետ։ Հին ճակատային ընկերը, միակ մարդը,

[1] Հաց և տեսարան (լատ.)։

որը դեռ նրան պատասխանի էր արժանացնում, ուսերը միայն վեր էր քաշում.

— Ուզածդ ի՞նչ է։ Որ մենք մի անգա՞մ էլ գլուխներս վտանգի ենթարկենք։ Դարձյա՞լ ուրիշների իրավունքի համար։ Բավակա՞ն է։ Ինձ այդ էլ է հերիք։ Հիմա ես արդեն այդքան հիմար-չեմ, չե՞մ մտածի ուրիշների մասին։ Ես իմ մասին եմ մտածում։ Ամեն մարդ թող իր մասին մտածի։

Նրանք երկուսն էլ, և Մարկը, և Մասսոնը, որ դառնությամբ նշավակում էին իրենց դասակարգի էգոիզմը, վճռականություն, այնուամենայնիվ, չունեին, որ իրենք հրաժարվեին ազատություն խաղալու բնածին հակումից, ազատություն, որը իրենից լոկ էգոիզմի հատուկ ձև էր ներկայացնում և իմաստազրկում էր նրանց ամբողջ բունտարությունը։ Ֆրանսիացուն, նույնիսկ երբ նա հրաժարվել է առավել տարածված նախապաշարմունքներից, շատ մեծ ջանքեր են պետք, որպեսզի իրեն դնի որոշակի շրջանակների մեջ, իրեն ենթարկի որևէ կուսակցության կարգապահությանը։ Ֆրանսիական մինչպատերազմյան սոցիալիզմի թուլությունը ներքին ո՞չ ամուր կապերի արդյունք էր, որոնք կուսակցության անդամներին համախմբում էին սոսկ պայմանականորեն և վճռական պահերին չէին կարողանում սերտորեն միացնել նրանց։ Պատերազմը Մասսոնին ցանկություն էր ներշնչում երբեք, ոչ մի տեղ, ոչ մեկին, ոչ մի տիրոջ, ոչ մի կուսակցական կարգապահության չենթարկվելու, պատկանելու միայն ու միայն իրեն, բացարձակապես իրեն... Իսկ այդ դեպքում ինչպե՞ս հույս դնել ուրիշների վրա։ Ենթադրել, որ ուրիշները, նույնիսկ իր սեփական դասակարգում, նույնիսկ իր նման կեղեքվածները կգործեն համերաշխորեն, ամեն մեկն իր համար մնալով ինքնուրույն, չհրաժարվելով իր «ես»-ից՝ որևէ հրամանի, որևէ կուսակցության դիկտատուրային կամավոր կերպով ենթարկվելու համար, կլիներ բոլոր հնարավոր հույսերից ամենացնորալին։ Ամենահախուռն կոլեկտիվ պոռթկումները կարճատև են,— նրանց ուժասպառում է հենց իրենց հախուռն լինելը։ Եթե նրանց չի զսպում որևէ ամուր ձեռք, նրանք մինչև նպատակին հասնելը, թուլանում են, և այն ժամանակ տեղի է ունենում էլ ավելի խոր անկում. նետված քարը միշտ ավելի ցած է

ընկնում, քան այն մակարդակն է, որտեղից նետվել է։ Բայց հեղափոխական Ֆրանսիան շա՞տ վաղուց էր կորցրել պրակտիկ գործողության փորձը։ Իսկ պատերազմը նրան ամենախոր զզվանք էր ներշնչում դեպի մարտի բոլոր տեսակի կանոնները։ Այն ամենը, ինչը ազատ մտքերին զինվորական մուշտրա էր հիշեցնում, նրանց մեջ ատելություն էր ծնում և մերժվում։ Միայն պահպանողականներն ու շովինիստներն էին, որ օգտակար դաս ստացան այդտեղից։ Դրությունը ձեռնտու էր Ռեակցիայի համար։ Ազատությունը իր համար լկամ էր կռում, բայց միևնույն ժամանակ թույլ չէր տալիս, որ ընտրյալ առաջնորդը թամբեր նրան և տաներ դեպի հաղթանակ։ Մասսոնը չկարողացավ դիմանալ և ոչ մի արհմիութենական բանվորական կազմակերպության մեջ. այն կազմակերպությունները, որոնք գոյություն ունեին մինչպատերազմյան ժամանակներից, մեծ դժվարությամբ վերակառուցվում էին, իսկ նորերի արածը միայն այն էր, որ մեկը մյուսին խանգարում էին... Ինչ Մարկին է վերաբերվում, ապա նա «ինքնին» սկզբունքի մարմնացումն էր։ Այստեղից էլ բխում էր նրա ամբողջ թուլությունը։ Բայց նաև ամբողջ ուժը։ Թվում էր, թե նա այդպես էլ չի կարողանա հրաժարվել իր թուլությունից, առանց իր ուժից հրաժարվելու և առանց կորցնելու սեփական գոյության խմաստը։ Փակուղուց դուրս գալու ոչ մի ելք չէր երևում, փակուղի, ուր երկու ընկերներին բերել էր հասարակական կառուցվածքի խիստ քննադատությունը։ Ասենք նրանք ընկերներ էլ էին սոսկ իրենց անզոր ժխտման պատճառով։ Թեթևություն բերող գործունեությունը նրանց անծանոթ էր։ Եվ դեռ հայտնի չէ, թե նրանք անհրաժեշտ զիջումներ կանեի՞ն արդյոք միմյանց, որպեսզի կոորդինացնեին իրենց գործողությունները, եթե անգամ նրանք գործելու ընդունակ լինեին։ Այդ սովորել է պետք։ Իսկ ո՞ւմ մոտ նրանք կարող էին սովորել։ Ֆրանսիայում ոչ մի դպրոց չկար, որտեղ գործել սովորեցնեին։ Միայն խոսելու վարպետներ կային։ Այդ բնագավառում ամեն մի ֆրանսիացի բավական բան գիտի՝ մյուսներին սովորեցնելու համար։ Մարկն ու Մասսոնը զզվանք էին զգում դեպի բառերը։ Բայց և այնպես նրանք խոսում էին։ Գործունեության բացակայության պատճառով։ Նրանք ան-

ընդհատ խոսում ու խոսում էին մի գործողության մասին, որը չէին կատարում, որը չէին կարող կատարել։ Դրանից հետո նրանք իրենց ամայացած էին զգում, ամեն մեկը նողկանք էր զգում իր և մյուսների նկատմամբ... Գործունեությո՜ւն։ Գործունեությո՜ւն։ Օ՜ արգանդ, որ բեղմնավորման է սպասում...

Հասարակությունը ոչ բավականաչափ պարզ է իրեն հաշիվ տալիս, որ հասունացած կամքի այդ չհագեցվածությունը պակաս վտանգավոր չէ, քան հասունացած սեռի չհագեցվածությունը։ Առողջ ժողովուրդը միշտ էլ կարիք է զգում այնպիսի նպատակի, որի համար կարող է գործադրել իր ուժերը։ Եթե նրան ազնիվ նպատակի հնարավորություն չտան, նա կգտնի զազրելի նպատակ։ Հանցագործությունն ավելի լավ է, քան անպտուղ և սմքեցնող գոյության սիրտ խառնող դատարկությունը։ Որքա՜ն մեզ ծանոթ երիտասարդներ 1914 թվին գլխապատառ իրենց պատերազմի մեջ գցեցին միայն ու միայն նրա համար, որպեսզի փրկվեն կյանքի ստորացուցիչ ձանձրույթից։ Բայց եթե սրանք իրենց արյունալի գինարբուքից հետո տանջալից խումար են ապրում, ապա պատերազմից հետո եկան ուրիշները, որոնց նույնպես տանջում է գործունեության կատաղի, գրեթե ֆիզիոլոգիական ծարավը։ Էգ չգտնելով, նրանք իրենց ճակատները ջարդում են, խփելով վանդակի ճաղերին, ինչպես գազանանոցում գազանները, որոնց լիովին դեռ չեն ուժասպառել անազատության տանջանքները։ Մարկը և Մասսոնը պատույտ էին տալիս իրենց փոսում ու մրթմրթում։ Հարյուրավոր ուրիշներ նույնպես այդ վիճակում էին, և ամեն մեկը միայնակ մրթմրթում էր իր փոսի մեջ, ամեն մեկը ցավից ու ցասումից ոռնում էր միայնակ։

Բայց հենց այստեղ էլ Աննետայի որդուն օգնեց նրա առողջ արյունը։ Գուցե, նույնիսկ ոչ թե նրա տոհմի արյունը։ Կարիք չկա Ռիվիերների տոհմի պատմության շատ խորքերը գնալու։ Այնտեղ շարն ու բարին իրար էր խառնված։ Բայց իր կյանքի ընթացքում ամեն մեկը թարմացնում է իր արյունը։ Մարկի արյան մեջ դրոշմված էր նրա մոր հպարտ կամքը։ Թող Մարկը շատ վատ տղա լիներ, ինչպես բոլոր փոքրիկ քսան տարեկան արուները, եթե նրանց վերցնենք

բնական վիճակում, առանց կեղտը մաքրելու, առանց քամոցելու։ Զգալով մաքի խորին խլրտումը, մարմնական և հոգևոր խլրտումը, ապրելով այսպիսի դարաշրջան, այսպիսի զարհուրելի—բարոյական տեսակետից—պայմաններում (առանց մարդկանց նկատմամբ հավատ ունենալու, առանց հավատի որևէ բանի նկատմամբ, առանց որևէ հենարանի), նա երբեք չէր նահանջում հաղթահարելու իր բնազդական, իր անհեթեթ, իր հերոսական կամքից... «Ինչը՞ հաղթահարել։ Իրե՞ն։ Ո՞վ է այդ ինքը։ Իմ «ե՞ս»-ը։ Նա ավելի փոքր է, քան ոչինչը։ Ես արդյոք վստա՞հ եմ, որ նա իսկապես գոյություն ունի, այդ «ես»-ը, որն ինձանից խույս է տալիս, որին ես անծանոթ եմ... Բայց ես վստահ եմ, թե վստահ չեմ, ես ուզում եմ, ուզում եմ, ուզում եմ։ Ես նրան հաղթահարում եմ։ Ես ինձ թույլ չեմ տա մեռնել նրա հետ միասին...»։ Այդպիսի բոպեներին նա իր մասին խոսում էր, ինչպես կողմնակի մարդու մասին։ Բայց այդ կողմնակի մարդուն նա պաշտպանում էր։ Եթե անգամ այդ կողմնակին դուրս էր պրծնում նրա ձեռքերից, օրորվում, ընկնում, պոռնկաբար վազառում էր իրեն, Մարկը լիակատար ուժով պահպանում էր (նրա դեմ, նրա համար, այն բանի համար, որպեսզի նրան դատի, դատապարտի և նորից բարձրացնի), հպարտ զգացումները, որոնց նրա թունոտ հեգնանքը միևնույն ժամանակ ծաղրում էր որպես մի բրածո քարացածություն. պատիվը, բարոյական հպարտությունը, հավատարիմ մնալու հաստատ վճիռը... «Հավատարիմ ո՞ւմ։ Հիմա՞ր։ Հիմա՞ր։ Վախկոտ բուրժուային, որն ինձ ստեղծեց ու փախա՞վ։ Թե՞ այդ արգանդին, որը տրվեց և հետո ինձ դատապարտեց այս սոսկալի կյանքին, ուր ես ոտք դնել անգամ չէի ուզում... Հիմա՞ր։ Թող այդպես լինի... Ուզում էիր ոտք դնել կամ չէիր ուզում, բայց դրեցիր։ Նա ինձ Մարտի մեջ է նետել։ Եվ ես չեմ հանձնվի»։

«Նա (այդ արգանդը) չի հանձնվել,— շարունակում էր Մարկը դատողություններ անել։— Իսկ ես, ինչ է, կհանձնվե՞մ։ Ես կնոջից թո՞ւյլ եմ գտնվելու»։

Այդ երիտասարդ արուն իրեն անսահմանորեն բարձր էր դասում կնոջից... Բայց նրա հոգու խոր, ջանադրությամբ թաքցրած գաղտնարաններում հնչում էր ինչ-որ չգիտակց-

ված. «Ave mater... Fructus ventris...[1]» Պտուղը երբեք չի դավաճանում իր ծառին...

Բայց հիմա դավաճանում էր ծառը...

Մարկը խստահայաց հետևում էր այդ կնոջը, իր մորը, որը նրա մոտ էր վերադարձել Արևելքից և հիմա տարօրինակ կերպով փոխվում էր փարիզյան հուզումների մթնոլորտում։ Աննետան որդուն կասկածելի էր թվում։ Նա այնպես խիստ չէր վրդովվում այս աշխարհից, ինչպես այդ կուզեր Մարկը, աշխարհ, որը Մարկի համար անձնական թշնամի էր դարձել։ Չլինի՞ թե մայրն ընդունում էր այդ աշխարհը։ Մարկը չէր կարողանում նրա սիրտը կարդալ։ Բայց Աննետայի շրթունքներին, նրա աչքերում, նրա ամբողջ էության մեջ Մարկը ինչ-որ մի անհոգություն էր տեսնում, մի գործունյա, երջանիկ, խաղաղ անհոգություն, որ ոչ մի բանի համար խղճի խայթ չէր զգում։ Եվ ի՞նչ խայթ կարող էր լինել։ Ի՞նչի համար։ Չլինի՞ այս աշխարհի, այս մարդկանց դառնությունների և խայտառակության պատճառով, այն պատճառով, որ նա ինքն էլ է այդ բոլորին մասնակցում։ Դա պատշաճ կլիներ Մարկին, այդ անուրախ խաղի մեջ մտած նորեկին, խաղ, որի մեջ ծծում ես կյանքի ամբողջ դառնությունը, կարծես այդ ամբողջ դառնությունը հենց միայն քեզ համար էլ պատրաստված է։ Իսկ Աննետան ժամանակ ուներ հաճելի կամ տհաճ համին ընտելանալու. «Ամեն սննդի մեջ էլ դառնություն կա։ Բայց դա ուտելուն չի խանգարում։ Չէ՞ որ առանց ուտելու չի լինի։ Եվ ես ընդունում եմ կյանքը։ Ուրիշ ընտրություն ես չունեմ...»։

Մարկը նույնպես կյանքն ընդունում էր։ Բայց վրդովմունքով, չարությամբ, թաքցրած կատաղությամբ։ Եվ նա չէր կարողանում հաշտվել այն բանի հետ, որ իր մայրը հարմարվել է այդ կյանքին այնքան բնականորեն, որ կարծես նույնիսկ դրանում ինչ-որ ամոթալի բավականություն է գտնում։ Բայց Մարկն ի՞նչ իրավունք ուներ այդ արգելել մորը։ Այդ իրավունքը Մարկը թաքուն ինքն էր շնորհել իրեն։ Դա որդու իրավունքներից վեր էր։ Դա տղամարդու իրավունք

[1] «Սուրբ աստվածածին (հրեվիր)... Պտուղն արգանդի (լատ.)։

էր։ Կինը նրա սեփականությունն էր... Եթե Մարկն այդ ասեր Աննետային, մայրը կքրքջար նրա երեսին։ Մարկն այդ գիտեր։ Նա գիտեր, որ մայրը իրավացի կլիներ։ Եվ դա Մարկին կատաղեցնում էր ավելի շատ։

Եվ այսպես, հազար ու մի փորձություններ տարած, Աննետան նորից մնաց նույն վիճակում։ Ռումինիա մեկնելու համար նա քիչ էր մնում շատ թանկ վճարեր, և Աննետայի փոխարեն մեկ ուրիշը այնտեղ կկորցներ և իր, և կյանքի նկատմամբ ունեցած հավատի կեսից ավելին։ Բայց Աննետան ուրիշ խառնվածքի կին էր։ Ինչ հավատին է վերաբերվում, ապա նա ամենևին հավատը կորցնելու վտանգ չուներ, քանի որ երբեք հոգ չէր տանում, որպեսզի իր համար որևէ հավատ ստեղծի։ «Հավատա՞լ։ Ո՞ւմ։ Ինչի՞։ Ինքն իրե՞ն։ Կյանքի՞ն։ Ի՞նչ անհեթեթություն։ Ես ի՞նչ գիտեմ այդ բոլորի մասին։ Եվ այդ ի՞նչ է, որ ինձ անհրաժեշտ է իմանալ... Կառուցում սկսել այն բանի վրա, ինչը դեռ առջևում է, կնշանակի կառույցը վերևից սկսել... Դա տղամարդկանց է սազական։ Իսկ ինձ հողն էլ է բավական։ Ես միշտ կարող եմ ոտքերս դնելու տեղ գտնել։ Տեղ գտնել իմ ամուր, մեծ ոտքերի համար։ Իմ ոտքերը միշտ և ամենուրեք քայլելուց միևնույն հաճույքն են ստանում...»։

Աննետայի առողջ օրգանիզմի վրա թոքերի բորբոքումը (գրիպի հետևանքը), որը նա տարել էր Իտալիայում, տուն վերադառնալու ճանապարհին, ոչ մի հետք չթողեց։ Եվ ոչ մի բանից չէր երևում, որ նա քառասունհինգ տարեկան է։ Սիլվիան, որը թեև նրանից երիտասարդ էր, արդեն զգում էր իր հասակը և չէր հաշտվում դրա հետ, իսկ շրջապատի մարդիկ դա զգում էին ավելի ուժեղ, քանի որ տարիների ընթացքում նրա բնավորությունը չէր լավացել, այլ գնալով դարձել էր ավելի անհանգիստ ու անտանելի։ Սիլվիան թունոտ զուգահեռներ էր անցկացնում. նա կարծես քրոջը հանդիմանում էր նրա երիտասարդ տեսքի համար։ Աննետան ծիծաղով ասում էր.

— Ահա՞ թե ինչ է նշանակում չափազանց շուտ սկսելը։ Առաքինությունը միշտ էլ փոխհատուցվում է։

Սիլվիան մրթմրթում էր.

— Լավ առաքինություն է։ Եվ հիմա քո օգուտը դրանից ո՞րն է։

— Այ հենց դա է, որ դու չգիտես...

Ոչ, առաքինությունից Աննետան ոչ մի օգուտ չէր քաղել։ Արատներից նույնպես։ Նա իսկապես էլ տարօրինակության հասնող անտարբերություն ուներ և առաքինության, և արատի նկատմամբ։ Երբ Աննետան առիթ էր ունենում այդ մասին մտածելու, նա ամոթի նման ինչ-որ բան էր զգում։ Նա նույնիսկ կուզեր, որ ինքն ապրի այդ, բայց, անկեղծ ասած, դա նրան չէր հաջողվում։

«Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ։ Ես նույնիսկ անառա՞կ լինել չեմ կարողանում... Չեմ կարողանում անբարոյակա՞ն լինել... Ինչպիսի անկում։ Կարմրի՜ր։ Կարմրի՜ր... Ո՜չ, հերիք է։ Ես առանց այդ էլ բավական կարմիր եմ... Իհարկե, ո՜չ այնպես, ինչպես խեղճ Սիլվիան, իր սիրոկկոյի պոռթկումներով, որոնցից ճակատը, այտերը, վիզը նմանվում են կակաչ ցանած դաշտի... Ի՞նչ անպատկառ առողջություն ունեմ ես»։

Իսկապես, Աննետան ամենևին կարեկցանք չէր առաջացնում։ Մինչդեռ նա փայլուն վիճակի տեր չէր։ Նա հազիվհազ ծայրը ծայրին էր հասցնում, և ետ գցած այնքան փող ուներ, որ կարիքի դեպքում կկարողանար խիստ տնտեսելու պայմաններում մի քանի շաբաթ յոլա գնալ։ Նա ուտում էր օրը միայն մի անգամ, և այն էլ էժանագին ռեստորաններում, որտեղ կերակուրները ոչ առատ են և ոչ էլ ընտիր։ Բայց, ասված գիտե ինչու, ամեն ինչը նրան օգուտ էր տալիս։

Աննետայի աչքից չվրիպեց, որ իր առողջ տեսքը խիստ ուսումնասիրության առարկա է հանդիսանում որդու համար, ամեն անգամ երբ նրանք հանդիպում են։ Մարկը պատրաստ էր մորից բացատրություն պահանջել նրա վրդովեցուցիչ հանգստության համար։ Մարկը դա անտարբերություն էր կոչում, քանի որ ոչ մի բան և ոչ ոք չէին կարող մոր մեջ բուռն կրքեր առաջացնել։ Աննետայի դուրս պրծած և փոքր-ինչ կարճատես աչքերը ամեն ինչի վրա նայում և ամեն ինչ տեսնում էին, բայց ոչ մեկի կողմը չէին պահում։ Սակայն նա ոչինչ չէր կորցնում այն ամենից, ինչ

տեսնում էր։ Նա խնամքով ամեն ինչ պահպանում էր իր հիշողության մեջ։ Կգա օրը, նա բոլորը հանրագումարի կբերի... Միայն թե ոչ այսօր։ Աննետան գնում էր իր ճանապարհով և ներծծում էր այն ամենը, ինչ տեսնում էր։ Եվ շարունակում էր բավականություն ստանալ տարօրինակ, չընդհատվող հոգեկան վերելքից (արդյո՞ք դա երկար կբավականացնի), որը նա ոչ փնտրում էր և ոչ էլ ջանում պահպանել։ Ամենազարմանալին այն չէր, որ Աննետան դրանից մի քանի ամիս կամ մի քանի տարի բավականություն էր ստանում այն ժամանակից ի վեր, ինչ վերջացավ պատերազմական ժամանակի ջղաձգական լարվածությունը և վրա հասավ թեթևացումը, —այդպիսին էր դարաշրջանը, կյանքի բնական հաղթանակը մահվան նկատմամբ։ Բայց դարաշրջանն այդ հաղթանակին վերջ տվեց ընդամենը մի երկուերեք տարում, այդ հաղթանակն այրվեց, ինչպես ծղոտը, և խրձանոցն էլ այրվեց ծղոտի հետ միասին, չորս պատը մնացին, ասենք այդ պատերը նույնպես խարխլված էին, դրանք ցնցել էր քամին և թրջել անձրևը։ Բայց ահա Աննետայի խրձանոցը փրկվել էր. այդ խրձանոցն ամուր էր կառուցված, կառուցված էր լավ կավից, և Աննետան այնտեղ էր դրել իր ամբողջ ունեցած-չունեցածը։ Այնտեղ տեղը հերիք էր և անցյալ տարվա բերքի, և եկող տարվա բերքի համար։ Հենց դա էլ զարմանալի՞ էր. Աննետայի մոտ վերելքը շարունակվում էր նաև այն ժամանակ, երբ բոլորին, ինչպես ափիոնից հետո, արդեն համակել էր հոգնածությունը կամ զզվանքը։ Կնշանակի Աննետան ուրի՞շ խմորից էր։

Ամենևի՞ն։ Նա ամեն ինչով պարտական էր միայն իր անսպառ էներգիային և իրեն պահպանում էր մշտական գործունեությամբ։ Ո՞չ մի թմրադեղեր։ Գործել... (Բայց մի՞թե դա էլ յուրատեսակ թմրադեղ չէ)։ Հաջող էր Աննետայի գործունեությունը, թե անհաջող էր, դա արդեն այնքան էական չէ։ Եվ այդ, և մյուս դեպքում Աննետան շահողի դերում էր լինում։ Ամեն մի քայլին, թեկուզ և կեղծ, նա բռնում էր տիեզերքի անվերջ նորանոր մասնիկները, տիեզերքի, որը թպրտում էր մահվան—թարմացման,— ջղաձգությունների մեջ)— բռնում էր փարթամ, աշխարհի նեխումով պարարտացվող մարգագետնի մասնիկները։

Բայց ինչո՞ւ միլիոնավոր ավելի երիտասարդ և ավելի աշխույժ, քան ինքը, մարդիկ այդպիսի բավականություն չէին զգում։ Ինչո՞ւ այդ երիտասարդներին, ընդհակառակն, համակում էր ինչ-որ գլխապտույտ, սոսկում, հալյուցինացիաների հասնող ցասում և սարսափ։ Մարգագետնի կանաչի մեջ նրանք տեսնում էին սոսկ դիակնային կանաչ։ Բայց մի՞թե Աննետան այդ չէր տեսնում... Տեսնում էր։ Նա տեսնում էր և այն, ինչ գտնվում էր մակերեսին, և այն, ինչ ծածկված էր։ Այստեղ առանձնահատուկ ի՞նչ կա։ Դա սովորական բան է։ Որքան մահ, այնքան էլ կյանք։ Եվ մեկը մյուսի դուստրն է... Կնշանակի, Աննետան այլևս չէ՞ր դատապարտում պատերազմը։ Նա միշտ պատրաստ էր վերսկսել պայքարը պատերազմի և ատելի մարդկանց դեմ, որոնց համար պատերազմի արհավիրքը ֆանատիզմի, փառամոլության և շահույթի խաղ էր... Բայց ինչպե՞ս էին Աննետայի մեջ այդ բոլորն ապրում միաժամանակ։ Նրանից բացատրություն մի՛ պահանջեք։ Դա գիտե նրա բնությունը, այդ խոր, կույր և հուսալի կանացի բնությունը, որը ենթարկվում է նույն այն մեծ օրենքներին, ինչպես և ամեն բնություն։ Բայց Աննետայի դատողությունն այդ չգիտեր, եթե չհաշվենք գիտակցության որոշ առկայծումներ, որոնք վերջերս նրան լուսավորեցին։ Միայն թե այդ առկայծումներն այնքան կարճատև էին, որ Աննետան չէր կարող հասկանալ նրանց պարզ իմաստը[1]... Այո, ամբողջ բնության հետ միասին նա կրքոտությամբ կռվում է այն ամենի դեմ, ինչն սպանում է։ Բայց, ինչպես և ամբողջ բնությունը, նա վառվում է կրքով ամեն ինչի նկատմամբ, ինչն ապրում է, նա վառվում է այն ամենով, ինչն ապրում է, նոր կյանքի բոլոր կրակներով, որոնք հառնում են մահվան դաշտերի վրա։ Եվ Աննետայի աչքերը, նրա ձեռքերը, նրա շարժումները, նրա կյանքի ամբողջ բնական ընթացքը պարզապես մարմնավորում են

---

[1] Ընթերցողը հաջորդ հատորում կգտնի Աննետայի գիտակցության մեջ առկայծող հիշողություններ Ռոմինիայից Իտալիայով վերադառնալու վերաբերյալ և այն հանդիպումների մասին, որոնք նա այնտեղ ունեցել էր։ Հիմա ժամանակը չէ դրանց մասին պատմելու. նրանց հետքերը կարծես թե ջնջվել են։ Կերպարները ենթադրում են։ Բայց նրանք կարթնանան։—Ռ. Ռ.։

կյանքի և մահվան այն հարմոնիան, որի օրենքները նա չի հասկանում։

Աննետան սիրում է տեսնել և սիրում է ապրել։ Եվ այդ նոր մարգագետնի կյանքում, որ ծաղկում է մեռյալների արյան շնորհիվ («Իսկ մի՞թե ես ինքս չեմ մեռել։ Եվ ահա հարություն եմ առնում...»), նրան հետաքրքրում է ամեն ինչ, նույնիսկ ամենավատը։ Բուրգունդուհու ախորժակը փոքր չէ։ Եվ նա դժվարահաճ չէ։ Ազնիվ ու շիտակ, նա, հասկանալի է, իր տակ ամուր հող է զգում։ Դա բնորոշ է ազնիվ մակարդով ամեն մի առողջ մարդու։ Բայց դա ոչ մի իրավունք չի տալիս ուրիշներից պահանջելու. «Եղիր այնպիսին, ինչպես ես եմ ուզում»։— «Էխ, բարեկամս, ավելի լավ է եղիր այնպիսին, ինչպիսին կարող ես։ Ես կկարողանամ հարմարվել... Ես, իհարկե, չեմ ասում, թե քեզ վրա չեմ ծիծաղելու... Դա կյանքի ուրախություններից մեկն է... Բայց թող դա քեզ չճնշի ավելի, քան դու ճնշում ես ինձ։ Ապա, ցույց տուր քեզ, ինչպիսին ես դու բնական տեսքով, մերկ կամ հագնված։ Գեղեցիկ լինես թե տգեղ, միևնույն է դու ինձ հետաքրքրում ես։ Սննդի բոլոր տեսակները չեն, որ միանման համեղ են։ Բայց այն ամենը, ինչն ինձ սնում է, ես ընդունում, եմ։ Ես սոված եմ...»։

Ահա հենց այդ էլ Մարկին հանում էր համբերությունից... Համբերությունից հանում էր այդ անչափավոր ախորժակը, որն անտարբեր էր, ինչպես կարելի էր մտածել, կերակրի համի նկատմամբ... Եվ այնուամենայնիվ նա ոչինչ չէր կարող հակադրել այդ հանգիստ, ուժեղ, զուտ կենդանական խնդությանը, որով Աննետան կլանում էր և՛ կյանքը, և՛ այն ամենը, ինչ կենդանի է։ Նո՛ւյն ձևով, ինչպես և այն մարդկանց մեծամասնությունը, ովքեր նրա հետ շփվում էին։ Նույնիսկ եթե նրանք այնքան խելացի էին լինում, որպեսզի Աննետայի վճիռ, նրանց շոշափող աչքերում որսան խորաթափանց հեգնանքի շանթերը, միևնույն է, դարձյալ նեղանում էին։ Նրանց բոլորի համար, չբացառելով նաև ամենավատերին (որոշ ծեր երեխաներ չէին կարող դա բացատրել, բայց նրանք այդ զգում էին), Աննետայի աչքերի խորքում նշողվում էր չգիտակցված մի մայրություն։

Աննետան հմտորեն էր իր համար երեխաներ ընտրում։

Ոչ, նա չէր ընտրում։ Նա վերցնում էր նրանց, ում ճակատագիրն ինքն էր տալիս նրա ձեռքը... Բայց այս միայն այդպես ասվում է։ Թեև Աննետան հիանալի, լիքը, մկանուտ ձեռքեր ուներ, այնուամենայնիվ, ես վատ եմ պատկերացնում, թե նա կարող էր զսպել այդ օվերնյան մարդակերին, կամ ասորական ցուլին, այդ լրագրային ծովահեն Տիմոնին։ Ճիշտ հակառակը. Տիմոնն էր, որ նրան իր բռում էր պահում։ Աննետան ի՛նքը թռավ նրա թիանավի մեջ։

Մի անգամ, երբ Աննետան աշխատանք չուներ, նա պատահեց պանսիոնի իր հին ընկերուհուն, որին մոտ քսանհինգ տարի չէր տեսել։ Այդ կինը սերում էր բուրժուական ընտանիքից, որ պատերազմից առաջ ունևոր էր և ապահով։ Բայց հիմա, իր դասակարգի մարդկանց շատերի նման, նա դատապարտված էր բավական համեստ կյանքի, որը ամիս առ ամիս դառնում էր ավելի ու ավելի համեստ՝ սեյֆից անհնշան կապիտալի շիթերի դուրս գալու հետ։ Իր ժամանակին այդ կինը սառնորեն շրջվել էր նախկին ընկերուհուց,— երբ Աննետայի «անպարկեշտ» կյանքը և սնանկացումը կրկնակի սկանդալ առաջացրին բարեվարք բուրժուական շրջանում։ Բայց երբ պատերազմն այդ կնոջը այրի դարձրեց, սնանկացրեց նրան և խնամքի տակ թողեց մորը և երեք երեխայի, նա ստիպված եղավ իջնել իր հարմարավետ բարեվարքության բարձունքից և զբաղվել ապրուստի միջոցներ հայթայթելով,— որտեղից պատահեր և ինչ պատահեր։ Խստականոն սկզբունքները, դիպլոմներն ու բարի անունը նրան շատ քիչ էին օգնում։ Նա արդեն կյանքի առաջ ոչ մի պայման չէր դնում։ Նա հարկադրված էր համաձայնել այն պայմաններին, որոնք կյանքն ինքն էր դնում նրա առաջ։ Եվ դեռ երջանիկ էր համարում իրեն, երբ կյանքը դրանք ներկայացնում էր։ Չէ՞ որ կյանքը չի հոգում բեկորների մասին։ Սակայն խեղճ կինը, թեև գլուխը կախ չէր, բայց իր ճակատագրի հետ ոչ մի կերպ չէր կարողանում հաշտվել։ Նա իրեն պահում էր նախկին խստաբարոյությամբ։ Ամուր ձգող կորսետը մաշվել էր, բայց դեռ շարունակում էր սեղմել մարմինը։ Խստաբարոյությունը մի տեսակ դարձել էր ժառանգական գիծ. նրա հետ ծնվում են, նրա հետ մեռնում։

Եվ դա ծանր բեռ էր հանդիսանում այն դժբախտների համար, ովքեր արդեն ապրել էին իրենց բարեկեցությունը և հանապազօրյա հացի համար հարկադրված են որսորդություն անել հետպատերազմյան ջունգլիներում։

Հենց այդ օրը տիկինն իր տեղից զրկվել էր։ Երբ նա Աննետային տեսավ, նրա առաջին շարժումը հետապնդվող կենդանու այն շարժումն էր, որով նա նետվում է ամենամոտ ապաստարանը։ Նա, իհարկե, այդ րոպեին չհիշեց, որ մի ժամանակ դատապարտել է Աննետային։ Կար ժամանակ, տիկինն այդ նստած էր հանգիստ ափին, իսկ Աննետան թպրտում էր ջրում։ Հիմա տիկինն ինքն էր ընկել ջուրը, ու հոսանքը տանում էր նրան։ Եվ ահա նա հանդիպեց այդ լոզորդ-կնոջը, որը կարողացել էր քսան տարի ջրի վրա մնալ։ Տիկինը հուսահատությունից ձեռքը գցեց Աննետային։ Համենայն դեպս այդպիսին էր նրա առաջին շարժումը... Բայց ի՞նչ կարող էր անել նրա համար Աննետան։ Տիկինն անմիջապես այդ զգաց։ Աննետան ինքն էր փնտրում։

Աննետան նկատեց նրա շփոթվածությունը և ստիպեց զրույցի բռնվել։ Անցյալի մասին երկուսն էլ լռում էին։ Այդ անցյալը լրիվ մոռացության տալու համար, պարզվեց, որ ընդամենը մի քանի խոսք է պետք։ Ամեն ինչ կլանողը ներկան էր։ Մարդկային բեկորը դեռ ցնցվում էր քիչ առաջ ստացած հարվածից և ծածկված էր փրփուրով։ Տիկինը չէր կարողանում ուրիշ ոչ մի բանի մասին մտածել... Նա ընդհատուն ձայնով, շնչահեղձ լինելով վրդովմունքից ու արցունքներից, պատմեց, վերջին, հենց նոր տարած փորձության մասին։ Նա, ինչպես երևում է, մեքենագրուհու տեղ էր գտել խոշոր տիրաժ ունեցող մի մեծ թերթի խմբագրությունում։ Թերթը ճշմն թերթ էր, նրա գերառողջ կոկորդը խլացնում էր Փարիզին։ Ուզածդ մարդը այդ խեղճ կնոջ փոխարեն գլխի կընկներ, որ այդ երախի մեջ մարդ իրեն հանգիստ զգալ չի կարող։ Բայց այդ միամիտ հոգին ոչ մի բան գլխի չէր ընկնում։ Նա պատկանում էր այն դարաշրջանին, երբ բուրժուազիան դեռ հարգանք էր տածում դեպի հպագիր խոսքը, երբ դեռ վերջնականապես չէր չքացել միֆը (ճիշտ է, արդեն բավականաչափ քնձոտված) լիբերալ մամուլի մասին, որի հետ գործակցելը սրբազնագործու-

թյուն էր համարվում։ Տիկինը երկնքից ընկավ և գլորվեց ուղիղ Քառասուն Ավազակների քարայրը, որտեղ էֆրիտները խայթում էին լեզուներով ու խոցում՝ նիզակներով։ Եվ այդ ամբողջ շայկան գլխավորում էր էֆրիտների արքան, էֆրիտներից ամենասոսկալին, մինոտավրը, որի ոռնոցը միլիոնավոր ընթերցողների մարմինը դող էր գցում,— Տիմոնը (նրան ավելի շատ կսազեր Յուբյու[1] անունը), որ միշտ պատրաստ էր իր միզամանը թափել ում գլխին։ պատահի։ Խմբագրությունը, որ կանգնած էր տիրոջ և արտաքին աշխարհի միջև, պարտադիր կերպով ստանում էր իր բաժինը։ Նա արդեն ընտելացել էր այդ սուրբ ջրին։ Եվ վերից-վար, սանդուղքի յուրաքանչյուր աստիճանին, ամեն մեկը, ում տերը ողողել էր այդ հեղուկով, իրեն թափ էր տալիս, ջանալով թրջել նրան, ով իրենից ցած էր կանգնած։ Դժբախտ կնոջը, որ վերջին շարքում նստած էր իր աթոռակին, բոլորից շատ էր բաժին ընկնում։ Ոչ մի կաթիլ զուր չէր կորչում։ Երբ հեղուկի շիթերը հորդացին առաջին անգամ, նա փորձեց վրդովվել։ Բայց ոչինչ չստացվեց։ Զոհին իսկույն ևթ ճանաչեցին։ Նա նման էր այն թռչունին, որը, վախենալով, փետուրները ցցում է և, որպեսզի ավտոմոբիլից փրկվի, նետվում է ուղիղ նրա անիվների տակ։ Այն ժամանակ դա վեր էին ածում զվարճանքի։ Ավտոմոբիլները շշոցում էին։ Նրանք հայտնվում էին բոլոր կողմերից և փետրավոր գնդակը նետում էին իրար։ Կարելի է պատկերացնել, թե հալածատանջ կինը որքան էր ընդունակ աշխատելու գլխով ու ձեռքերով։ Խառնաշփոթության մեջ նա չէր հասցնում հետևել կտրտված ֆրազներին, որոնք թելադրվում էին նրան։ Նա իրեն կորցրնում ու ետ էր ընկնում, այլևս բառերի իմաստը չէր հասկանում, նույնիսկ մոռանում էր ուղղագրությունը, իսկ դա պատվի հարց էր, pudendum[2] բուրժուական հոգեբանության համար։ Դժվար չէ հետևանքը կռահել։ Ոչ ոք չէր խնայում ոչ նրա հասակը, ոչ նրա տառապանքները։ Նա տուն էր դալիս գլխին թափած նկատողություններից հիվանդ և,

---

[1] Յուբյու—ֆրանսիացի դրող Ալֆրեդ Ժարրիի (1873—1907) գրոտեսկային ճատակերգության հերոսը։

[2] Ամենաամոթալի բան (լատ.)։

անկողնու վրա ընկնելով, լալիս էր։ Բայց կոպտությունները, որոնք տարածվում էին նրա գլխավերևում ամբողջ օրվա ընթացքում, շարունակում էին նրան խլացնել նաև գիշերները։ Նրա շունչը վիրավորանքներից կտրվում էր, նա խելագարվում էր, իրեն ոչնչացված էր զգում։ Վերջին հարվածը նրան հասցրել էին այսօր ցերեկը։ Դա Նեղկալի խեղկատակությունն էր։ Յուբյու արքան որոշեց խմբագրությանը զվարճացնել մի դժբախտ այցելուի հաշվին. դա մի ծեր ձախորդ կաթոլիկ քահանա էր, որը նրա մոտ էր եկել զոհաբերություն խնդրելու... Տեսարանը միանգամայն Կարագյոզի[1] ոգով էր, և մենք չենք փորձի այն նկարագրել այստեղ։ Քահանան այնպես փախավ, կարծես հետևից ինքը սատանան էր ընկել։ Հնարավորություն ներկայանալուն պես թռչունը նույնպես թռավ-գնաց։ Նա որոշեց այս կողմերն այլևս չվերադառնալ։

Աննետան լսում էր, ձեռքը տարած թռչունի ցից փետուրներով թևի տակ, և, անձայն շոյելով, ջանում էր հանդարտեցնել նրան։ Երբ նա վերջացրեց, Աննետան հարցրեց.

— Ուրեմն, տեղն հիմա ազա՞տ է։

Տիկինը պապանձվեց.

— Իսկ դուք կուզեի՞ք այն զբաղեցնել։

— Ինչո՞ւ չէ։ Եթե միայն ես ձեր բերնից չեմ խլում ձեր մի կտոր հացը։

— Այդ հացը ես այլևս չեմ ուտելու։

—Իսկ ինձ բախտ է վիճակվել ամեն տեսակի հաց ուտել։ Բոլորին հայտնի է, որ ավելի լավ է բուլկավաճառի ձեռքերին չնայել։

— Ես այդ ձեռքերը տեսել եմ։ Եվ էլ չեմ կարող ուտել։

—Իսկ ես կտեսնեմ։ Եվ կուտեմ։

Չնայած իր բոլոր մռայլ մտքերին, որոնք նրա ճակատն ակոսել էին կնճիռներով, դժբախտ կինը չկարողացավ ծիծաղը զսպել. ակամայից նրան հաղորդվում էր իրեն մարտահրավեր նետած Աննետայի զվարթ տրամադրությունը։

— Դուք լավ ախորժակ ունեք։

---

[1] Կարագյոզ—թուրքական ժողովրդական թատրոնի պերսոնաժ, որը նման է ռուսական Պետրուշկային։

— Ոչինչ ինքս ինձ հետ անել չեմ կարողանում,— ասաց Աննետան։— Ես անմարմին ոգի չեմ։ Նախ և առաջ ոտերն է։ Հոգին դրանից ոչինչ չի կորցնի։ Երաշխավորում եմ։ Հոգիս ես չեմ վաճառում։

Աննետան հարցուփորձով տեղեկացավ. ռոճիկը լավ էր, աշխատանքն՝ ուժերին համապատասխան, դրան ավելացրած նաև այն, որ բախտը բերել էր. գալերայի թիավարներից մեկը, խմբագրության աշխատակիցը, ներկայացավ նրան որպես հին ծանոթի (Աննետան պարել էր նրա հետ այն ժամանակները, երբ սալոններում ֆլիրտ էր անում իր Ռոժեի հետ, որի հետ քիչ էր մնացել ամուսնանա)։ Աննետան չսպասեց մինչև վաղը և անմիջապես զբաղեցրեց դեռ չսառած տեղը։ Նա ինքն իրեն մտածում էր.

«Այ թե հիմար կլինեի, եթե սկսեի տատանվել։ Աշխարհը կապիկներով վանդակ է։ Այդ վանդակում մենք ծընվում ենք, իսկ փախչել չենք կարողանում։ Նրանք բոլորն էլ իրար նման են։ Ես ճանաչում եմ նրանց, նրանց ծամածրությունները նոր բան չկա, և ինձ չեն վախեցնում նրանք։ Իսկ ինչ գլխավոր օրանգուտանգին է վերաբերում... Տեսնե՛նք։ Հետաքրքրակա՛ն է նրա հետ հանդիպել...»։

Այո, հետաքրքրությունը... Եթե Աննետան Եվան լիներ, նա չէր տատանվի և խնձորն ինքը կքաղեր։ Նա տակնահան Ադամին չէր դրդի այդ բանին... «Ես, իհարկե, ռիսկի եմ դիմում։ Եվ ռիսկի եմ դիմում, որպեսզի ավելի լավ իմանամ կյանքը։ Հին բարոյականությունը պատվիրում էր խույս տալ ռիսկից։ Իսկ նորը մեզ ուրիշ բան է սովորեցրել։ ով ոչինչ ռիսկի չի ենթարկում, ոչինչ չի ստանում, նա ինքը ոչինչ է։ Եթե ես չկամ, ուրեմն կլինեմ։ Մի՞թե հետաքրքրքրվող լինելն արատ է։ Հնարավոր է։ Բայց Աննետայի մոտ հետաքրքրությունը համարձակ, անվեհեր արատ էր. այդ հետաքրքրությունն ուղեկցվում էր մարտահրավերով։ Աննետան այդ մարտահրավերը նետում էր այն անհայտ ուժին, որի որոնումներին մեկնում էր։ Նրա հոգին նշանակալից չափով թափառական ասպետի հոգի էր։ Հսկաներ չլինելու պատճառով նա կռվի էր բռնվում կապիկների հետ։ Եվ հետո նա ինքն իր առաջ մի արդարացում ուներ (նիհար Դոն Քիշոտն այդ արդարացումը չուներ)։ Դա նրա հիանալի

ատամներն էին. պետք է ուտել։ «Կապիկնե՛ր, կերակրե՛ք ինձ»։

Նախքան առաջին անգամ խմբագրության շեմն անցնելը, Աննետան վստահ տեսք տվեց իրեն ու իր քայլվածքին։ Նա հիանալի հասկանում էր, որ իր վիճակը թերթում կախված է այն բանից, թե ինքն ինչպես կդնի իրեն, ընդ որում հենց առաջին րոպեից։ Նա հարցերին պատասխանում էր սառը, ստույգ, թեթևակի ժպիտով։ Ոչ մի ավելորդ բառ։ Բայց մի քանի բառով նա թվարկեց իր հանձնարարականներն ու գիտելիքները (միայն նրանք, որոնք հիմա իրեն անհրաժեշտ էին պաշտոն զբաղեցնելու համար. մնացածի մասին ավելի լավ է լռել. դրանց համար տգետը ձեզ շնորհակալություն չի ասի)։ Հետո, ուշադրություն չդարձնելով իր հասցեին արված ոչ հայացքների ու նկատողությունների վրա, ոչ ծաղրական տոնի, որով նրան ուզում էին շփոթի մատնել, նա ձեռնամուխ եղավ աշխատանքին և շատ շուտ հաղթահարեց դժվարությունները։

Նրանք հիմարներ չէին։ Փարիզում մարդիկ սուր հայացք ունեն։ Փարիզեցին շուտ է սովորել շոշափել կանացի կրծքերը և այն, ինչ նրանց տակն է,— կանացի սիրտը։ Աննետան պինդ ստինքներ ուներ և նույնպիսի պինդ սիրտ... «Զգաստ՛...»։ Առանց պայմանավորվելու, լռությամբ նրան ընդունեցին։ Աշխատակիցներն իրենց չզրկեցին մի ամբողջ կողով նողկալի հայհոյանքներ թափելու լրացուցիչ հաճույքից. պետք էր փորձել նրա ականջները, բայց բարի բուրգունդական ականջնե՛րը, որոնց կողքով ոչինչ չէ՛ր անցնում, դրանից ոչ ավելի կարմիր, ոչ ավելի գունատ դարձան. «Դե սկսեք, իմ սիրելի կապիկներ... Դուք այնքան էլ հնաքամիտ չեք։ Էլ ոչինչ դուք ինձ ցո՛ւյց չեք տա։ Այդ դեպքում գլուխս մի ցավեցրեք»։

Աննետան, մտքում ծիծաղելով, հոնքն էլ չշարժեց, իսկ նրա մատները թեև առանց հատուկ եռանդի, շարունակում էին պարել մեքենայի ստեղների վրա։ Աննետան անհրաժեշտ չէր համարում ընդգծել իր ճիգ ու ջանքերը և դրա համար այնպիսի տեսք ընդունել, կարծես կծկվել է։ Վարիչի ծեր օգնականը, որն, ինչպես գայլաձուկ, աչքի պոչով հետևում էր նրան, ստուգեց նրա աշխատանքը և նույնպես ան-

հրաժեշտ չհամարեց մանրամասնությունների մեջ մտնել։ Նա միայն ասաց. «Լավ»։ Բոլորը մտածեցին նույնը։ Բանը վճռված էր։

Մնում էր դեռ ինքը՝ տերը։ Մի քանի օր նա բացակայում էր։ Դա մեկն էր նրա այն խորհրդավոր ճանապարհորդություններից, որոնց ժամանակ նա ճարպիկ գործեր էր կատարում և մշակման էր ենթարկում ամբողջ ժողովուրդներ (իսկ երբեմն էլ կանանց. երբ որևէ կին հրապուրում էր նրան, նա հանգիստը կորցնում էր՝ մինչև նրան չտիրանար. նա դուրս էր գալիս որսի, և ոչինչ նրան հապաղցնել չէր կարելի, քանի դեռ նա չէր հագեցել)։ Այս անգամ նա բացակայեց մոտ երկու շաբաթ։ Աննետան արդեն ամուր նստած էր թամբին։ Նա նույնիսկ հացրեց մոռանալ տիրոջ գոյության մասին։ Վերջապես տերը վերադարձավ, բայց Աննետան այդ իմացավ միայն այն քանից հետո, երբ տերը դուրս եկավ դահլիճից, որտեղ Աննետան աշխատում էր։ Նա ծանր քայլերով անցավ դահլիճի մի ծայրից մյուսը, առանց որևէ բառ արտասանելու, նոթերը կիտած և կատաղությամբ նայելով շուրջը։ Աշխատակիցները տեղներից կանգնում էին, երբ նա անցնում էր նրանց կողքով։ Աննետան իր գործին էր,— նա կարդում էր և տկտկացնում գրամեքենայի ստեղներին, առանց ուշադրությունը շեղելու և չնայելով ոչ աջ, ոչ ձախ։ Ուշադիր հետևելով յուրաքանչյուր բառին, Աննետան մտովի հերթականորեն վերհիշում էր անցյալի որոշ դեպքեր։ Դա Աննետային զվարճություն էր պատճառում, և նա ժպտում էր։ Տիրոջ աչքից Աննետան չվրիպեց։ Նրա ծանր հայացքը սահեց Աննետայի վրայով։ Աննետան չշփոթվեց, բայց դա նրա արժանիքը չէր, որովհետև Աննետան ոչինչ չէր տեսնում։ Եվ միայն այն ժամանակ, երբ տերը դուրս էր գալիս, Աննետան որոշ ուշացումով նկատեց, որ դահլիճում լռություն է։ Նա աչքերը բարձրացրեց ու հարցրեց.

— Ի՞նչ պատահեց։

Բոլորը ծիծաղեցին։

— Նա անցավ։

— Ո՞վ—նա։

Աննետան այնքա՞ն էր հեռու տիրոջը վերաբերող մտքից։ Նա նույնիսկ տեղից թռավ, երբ իմացավ այդ։ Նրան շշնջա-

ցին, որ տերը իրեն զննել է ոտից մինչև գլուխ։ Վարիչի ծեր օգնականը կարգադրեց լռել։ Տերն իր կաբինետի դուռը բաց էր թողել։ Եվ, կարծես, նրա տրամադրությունն այսօր վատ է։ Ոնց որ երևում է, ինչ-որ պատմության մեջ է ընկել և քոթակ կերել։ Հանկարծ մեր գլխին փորձանք չգա։ Լռություն տիրեց։ Լսելի էր միայն, թե ինչպես են տկտկացնում մեքենագրուհիները։ Իսկ դրսից լսվում էր փողոցի աղմուկը։ Հետո կատաղի զանգեր տարածվեցին, և տերն սկսեց բռունցքներով խփել սեղանին։ Աննետան առաջին անգամ լսեց օրանգուտանգի մռնչյունը։ Ծերուկ-օգնականը վազեց կաբինետ։ Նա ոտքը հազիվ էր դրել, երբ այնտեղ մի դղրդյուն բարձրացավ։ Ծերուկի գլխին փոթորիկ պայթեց։ Իսկ դահլիճում բոլորը քթները կախել ու նույնպես իրենց վատ էին զգում։ Տերն անմիջապես, հենց առաջին հայացքից, նկատեց իր բացակայության ժամանակ թույլ տված բոլոր վրիպումները։ Շուտով ծեր օգնականը կաբինետից դուրս թռավ ավելի արագ, քան ներս էր մտել, դուրս թռավ, ինչպես մատների արանքում սեղմած ու բաց թողած կորիզ։ Իսկ նրա հետևում, դռան միջև, իր մարմնով ամբողջովին դուռը ծածկելով, հայտնվեց Տիմոնի հսկայական կերպարանքը։ Ձեռքերում բռնած ձեռագրերի թերթերը, նա կանգնել էր բարձունքում, ուր տանում էին սանդուղքի երեք աստիճանները, և բղավում էր.

— Ապուշնե՛ր։ Առե՛ք։ Ահա ձեզ ձեր հետև սրբելու թղթե՛րը։

Նա շպրտեց թերթերը, և դրանք ցաքուցրիվ եղան։

Բոլորը գլուխները ներս քաշեցին ուսերի մեջ։ Միայն Աննետան էր, որ նայում էր հանգիստ։ Տիմոնի աչքերը նրա վրա շանթեր էին արձակում։ Իսկ Աննետան նրան էր նայում, շարունակելով տկտկացնել գրամեքենան. աշխատանքի վրա գցած հապճեպ մի հայացք, հետո կրկին երեսով դեպի փոթորիկը։ Տիմոնը քիչ մնաց բղավեր.

«Փեղկերդ փակի՛ր»։

Բայց Աննետան չէր փակում։ Տիմոնը լսում էր գրամեքենայի ստեղների համաչափ տկտկոցը։ Կատաղությունից իրեն կորցրած, նա երկու աստիճան ցած իջավ։ Հետո միտքը փոխեց, մեջքը շրջեց և գնաց իր որջը։

Որոշ ժամանակից հետո նորից զանգի ուժեղ զողանջ։ Ինչ-որ աշխատակից սարսափից դողահար, գնաց կաբինետ և վերադարձավ խզբզած թղթերի մի կույտով. «Իր հոդվածն է, մեքենագրե՛լ»։

Տիմոնի կպչուն պրոզան մեքենագրելը Աննետայի՛ն վիճակվեց։ Աչքը մի վայրկյան տեքստին գցելով, Աննետան ցնցվեց և, թեքվելով դեպի վարիչի օգնականը, հարցրեց.

— Լսեք, պետ, լավ կլիներ մի քիչ մաքրել, հը՞։

Պետը տեղից ցատկեց.

— Ինչը՞ մաքրել։

— Կեղտերը։ Մի տեսեք ինչքա՜ն կա։

Պետը ձեռքերն իրար խփեց և խեղդված ձայնով ասաց.

— Դժբա՜խտ կին։ Աստվա՜ծ քեզ ազատի։

Եվ դառը քմծիծաղով ավելացրեց.

— Նրա հոդվածի արժեքը հենց դրանում է։

Եվ հետո մխանգամայն լուրջ.

— Այնպես որ, խնդրում եմ, առանց հիմարությունների։ Դու դրանով մեր բոլորի գլխին խաղ կխաղաս։ Մեքենագրիր, ինչ որ կա։

— Ուղղագրական սխալներո՞վ։

— Բա ի՞նչ, դա քո ի՞նչ գործն է... Լավ, թող այդպես լինի, ուղղիր ամենակդպիտները։ Բայց զգո՛ւյշ։ Որպեսզի նրա աչքով չընկնի։ Նա երբեք դա քեզ չի ների...

— Բայց նա այստեղ թպրտում է բառերի կույտի մեջ, որոնք բացահայտորեն չի հասկանում։ Պիրեյը նրա մոտ ազգանուն է, և ոչ թե քաղաքի անուն...

— Թքա՜ծ։ Դա նրա գործն է։ Իսկ իմ հոգսն այն է, որ գլուխս չցավեցնեն։ Եվ դու էլ քիչ ձանձրացրու ինձ... Մեջ մի ընկիր, երբ քեզ չեն հարցնում... Դե, գեղեցկուհի, մի՛ զայրանա։ Բայց հիշիր. մեքենագրել ճիշտ։ Հասկանալի՞ է։

Աննետան համառ էր։ Ամեն ինչ իր ձևով էր հասկանում։ Նա մեքենագրում էր զզվանքով։ Բառերը յուղոտ էին, նրանք մատներից էին կպչում։ Աննետան ձեռքերը սրբելու ցանկություն էր ունենում։ Տեքստից վատ հոտ էր գալիս։ Աննետան քիթը կնճռոտում՝ էր... Եվ այնուամենայնիվ, դա տղամարդու հոտ էր։ Դա ամուր էր գրած։ Մի քանի հարվածներից որոշ մարդկանց ոսկորները պետք է ճռճռային... Ուժեղ

կենդանի է... Ափսոս, որ ոչ ոք չի համարձակվի ոչ թե տաշել նրան,— այդ մասին խոսք լինել անգամ չի կարող,— այլ գոնե պաշտպանել գայլափոսերից, որոնց մեջ հիմարաբար նա ինքն է ընկնում,— լեզվական, պատմական և բնական գիտությունների վերաբերող հրեշավոր սխալների պատճառով։ Ախր ինչո՞ւ է նա իր քիթը խոթում այդ բոլորի մեջ։ «Բայց ինչո՞ւ ես չհամարձակվեմ...»։ Լռել—կնշանակի նրան վատ ծառայություն մատուցել... Ես մտադրություն չունեմ նստել այստեղ և սարսափից ատամներս չիչխկացնել, ինչպես այս վախկոտները... Ես կհամարձակվեմ... Եվ համարձակվում եմ...»։

Աննետան համարձակվեց։ Նա առանց վախենալու ուղղեց ոչ թե անպատշաճությունները (դա տիրոջ գերքն էր, դրան ձեռք տալ չէր կարելի), այլ սխալները։ Կապիկին թույլատրվում է կապիկ լինել, և ոչ թե էշ։ «Ես քո ականջները կկտրեմ։ Մնացածը՝ քոնն է»։

Վարիչի օգնականը ոչինչ չնկատեց։ Նա համբերություն չունեցավ մեքենագրածը համեմատել Տիմոնի ձեռագրի հետ։ Բայց դրա փոխարեն Տիմոնից ոչինչ չվրիպեց։ Երկար սպասելու կարիք չեղավ։. Հենց որ մեքենագրված էջերը հասցրին նրան, նորից հնչեց կատաղի զանգը։ Օգնականը նորից վարգով իրեն գցեց ցիկլոպի մոտ, մեջքը կատվի նման դուրս ցցելով։ Նա վայրկենապես դուրս թռավ այնտեղից, սարսափից ու կատաղությունից գունաթափված, և տակաստի իր կարճլիկ ու ծուռ ոտքերով նետվեց դեպի Աննետան, ընթացքից բղավելով.

— Անպետքի մեկը։ Չէ որ ես քեզ նախազգուշացրի։ Իսկ հիմա համեցեք, թանկագինս... Նա ցանկանում է քեզ նայել... Այ քեզ փորձանք... Ապա մի սպասիր, տես գլուխդ ինչ է դնելու...

Նա զայրույթից շնչահեղձ էր լինում... Աննետան տեղից կանգնեց, հագի շորն ուղղեց և, ջանալով պահպանել հանգիստ տեսքը, գնաց դեպի որջը (նրա սիրտն, այնուամենայնիվ, թպրտում էր ինչպես թռչունը վանդակում)։ Աննետայի հուզմունքը ոչ ոք չնկատեց։ Դա ամենագլխավորն էր։ Նա աստիճաններով բարձրանում էր առանց շտապելու։ Միայն մի վայրկյան կանգ առավ դռան առաջ—և մտավ։

Տիմոնը նստած էր սեղանի մոտ, ամբողջ կորպուսով թեքված դեպի առաջ և երկու հզոր բռունցքները ձեռագրի վրա դրած։ Նրա աչքերը condottiere[1] Անտոնելլոյի կամ Դուչեի աչքերն էին։ Աննետան մոտեցավ։ Եվ կանգ առավ սեղանից երեք քայլի վրա։

— Ուրեմն, այդ դո՞ւ ես,— ծաղրանքով դիմեց նա Աննետային։— Քեզ ո՞վ է թույլ տվել իմ սպիտակեղենը լվանալ։

—Այդ սպիտակեղենը լվանալուց ավելի մաքուր չի՛ դարձել, հավատացնում եմ ձեզ։ Ես միայն ծակերն եմ կարկատել։

Ահեղ բռունցքները այնպիսի ուժով հարվածեցին սեղանին, որ թանաքի շիթերը, դուրս թռչելով թանաքամանից, թափվեցին Աննետայի շորի վրա։ Եվ, հենվելով բռունցքներին, Տիմոնը տեղից այնպես բարձրացավ, կարծես պատրաստվում էր նետվել Աննետայի վրա։

— Դու, ինչ է, ձե՞ռ ես առնում ինձ։

Աննետան սառը պատասխանեց.

— Ներեցե՛ք, ծծանն ինձ տվեք, խնդրե՛մ։

Տիմոնը ինքնաբերաբար Աննետային մեկնեց ծծանը։ Նրանք այնքան մոտ էին կանգնած իրար, որ Աննետան զգաց իր այտին նրա ցասումնալից շնչառությունը։ Աննետան խոսափում էր նրան նայելուց։ Փորձելով թանաքի բիծը հանել շորի վրայից, Աննետան շատ սառը տոնով ասաց.

— Գիտեք ինչ, մարդ պետք է գիտենա իրեն տիրապետել։

Տիմոնի շունչը կտրվում էր։ Դեռ մի քանի վայրկյան նա շարունակում էր, բռունցքներին հենված, օրորվել, հետո ծանրորեն ընկավ բազկաթոռին։ Աննետան մաքրելը վերջացնում էր։ Տիմոնը հետևում էր նրան։ Վերջապես Աննետան պրես-բյուվարը սեղանին դրեց։

— Ձեր սպիտակեղենի վրա ծակեր կային,— ասաց Աննետան։— Ես մտածեցի, որ ավելի լավ է դրանք կարկատել։ Գուցե ես վարվել եմ անզգույշ։ Դա զուտ կանացի մոլուցք է. երբ կինը ճղված սպիտակեղեն է տեսնում, նա կարկատելու ցանկություն է զգում։ Եթե ես լավ չեմ արել, — ինչ արած,

---

[1] Կոնդոտիեր։

շատ եմ ցավում, այդ դեպքում ազատեք ինձ։ Բայց ի՞նչ միտք ունի ցույց տալ ծառային (Աննետան գլխով արեց խմբագրության կողմը), որ ձեր սպիտակեղենը կեղտոտ է և ճղճղված։

Վերջին բառերն ասելիս Աննետան նայեց ուղիղ նրա դեմքին։ Տիմոնն արդեն բերանը բաց էր արել՝ հայհոյանքներ տեղալու համար, բայց հանկարծ նրա մոայլ ճակատին կնճիռները հարթվեցին, կատաղի բերանը քմծիծաղեց, և, գրեթե ուրախացած, նա ասաց.

—Ապա, լվացարարուհի, նստիր։

— Ձեզ ասում են, իմ մտքով չէր էլ անցնում լվանալ։ Ես վերադարձնում եմ ձեր կապոցը նույն ձևով... մաքուր։

Աննետան նստեց։

— Հասկանում եմ։ Դու ուզում ես ասել, որ ձեռքերդ կեղտոտել ես, դրա հետ գործ ունենալով։

— Մի՛ անհանգստացեք, իմ ձեռքերին հաճախ է վիճակված եղել գործ ունենալ կեղտոտ սպիտակեղենի հետ։ Ոչ, ես զզվողներից չեմ։

—Այդ դեպքում շնորհ արա, ինձ բացատրիր, թե ինչո՞ւ ես քեզ թույլ տվել փոփոխություններ մտցնել իմ տեքստի մեջ։

— Ես իրավունք ունե՞մ բացեիբաց խոսելու։

— Ինձ թվում է, դու արդեն յուրացրել ես այդ իրավունքը։

—Ուրեմն, այսպես, դուք ուժեղ հոդված եք գրել։ Բայց եթե ես տեսնում եմ, որ դուք ինքներդ եք վտանգ սպառնում փչացնել այդ հոդվածի էֆֆեկտը աշակերտական սխալներով, մի՞թե ես ձեզ ծառայություն չեմ մատուցում, դրանք աննկատելիորեն շտկելով։

Տիմոնը մինչև ականջները կարմրեց։

— Այ քեզ դատիարակչուհի,— ասաց նա վիրավորված տոնով,— դու որտե՞ղ ես ռեպետիտորություն արել։

— Վերջին անգամ— ռումինական ճահիճներում։

— Ի՞նչ ես ինձ պատմում։ Ես ծանոթ եմ այդ ճահիճներին։ Ես քիչ սապոգներ չեմ մաշել այնտեղ։

— Իսկ ես քիչ էր մնացել մեռնեի այնտեղ։ Եվ այն ժա-

մանակվանից սկսած ոչ մի կերպ չեմ կարողանում լվացվել-մաքրվել։

— Դու, ինչպես երևում է, ընկած-ելած ես...

— Ինչպես և դուք։ Ինչպես բոլորը այս վերջին տասը տարում։ Բայց ի տարբերություն ձեզ, ես մամուռով չեմ պատվել։

— Ոչինչ, ոչինչ, դու էլ ես պատվել։ Ահա՜ թե ինչ բաշ ունես։

— Առանց դրան չես ապրի։ Մեր օրերում ում գլուխը կամ հոգին ճաղատ է, նա կորած է։

— Դրանցից քչերը չեն դեռ ոտքի տակ ընկած։

— Հավիվ թե դա ձեզ նեղություն է պատճառում։

— Դու ուզում ես ասել, թե ես նրանց վրայով քայլո՞ւմ եմ։ Օհ, նրանք Դանտեի ճահիճներից վատ են։ Դրանց մեջ կարող ես խրվել մինչև փորդ։ Դու այդ չե՞ս նկատել իմ հոդվածում։

— Նկատել եմ։ Ես տեսնում էի ձեր ձեռքերի հետքերը...

— Երբ մարդու միս ես փորփրում, ժամանակ չկա, որ վրադ դուխի ցանես։

— Իսկ դուք լավ եք փորփրում։

— Առաջին հաճոյախոսությունն է, որ ես քեզանից լսում եմ։

— Ինձ վճարում են ոչ թե նրա համար, որ ես ձեզ հաճոյախոսություններ անեմ, այլ նրա համար, որպեսզի ձեզ ծառայեմ։

— Իսկ քո կարծիքով, իմ սպիտակեղենի ծակերը կարկատել նշանակում է ինձ ծառայե՞լ։

—Հասկանալի է։ Իհարկե, ավելի հեշտ կլիներ ձեզ թողնել, որ դուք Փարիզի միջով ման գայիք ձեր ծակ զգեստով։ Սակայն, քանի որ ես ձեզ մոտ ծառայում եմ, ես ծառայում եմ,— լավ լինի թե վատ, բայց բարեխղճորեն։ Եվ ես չեմ ուզում...

— Որ ես Փարիզին ցույց տամ իմ հետո՞ւյքը։ Ախ դու, հիմար աղջիկ, բայց չէ որ իմ արածը հենց դա է։ Եվ ես դրանով հպարտանում եմ։ Քեզ վրա պերճախոսություն վատնել—կնշանակի դատարկ տեղը թուք ծախսել, թե չէ ես քո առաջ Դանտոնի դեր կկատարեի, որն ամբողջ կոկորդով

բղավում է. «Ես նրանց ցույց եմ տալիս մեդուզայի գլուխը...»։ Բայց քեզ հետ դա ավելորդ է։ Նստիր, ռեպետիտորուհի, այս սեղանի առաջ և ցույց տուր ինձ իմ աշակերտական սխալները։

Աննետան բոլորը նրան բացատրեց շատ պարզ ձևով, ընկերաբար, առանց քաշվելու, և նա մեղմաբարո լսում էր Աննետային։ Հետո ասաց.

— Շնորհակալ եմ։ Ես քեզ թողնում եմ։ Դու կհետևես իմ սպիտակեղենին։ Իսկ առայժմ ստացիր վնասների հատուցումը։ Ես իմ թաթերով քո շորի վրա թանաք թափեցի։ Քեզ համար ուրիշը գնիր։

—Ես ոչինչ ուրիշի ձեռքից չեմ վերցնում,— առարկեց Աննետան,— իսկ ինչ շորիս է վերաբերվում, ապա աշխատանքի համար նա դեռ բավական լավն է։ Այսպես նույնիսկ ավելի հարմար է։ Պատեհ առիթի դեպքում կարող եք կրկնել։

Աննետան մնաց աշխատելու որպես Տիմոնի անձնական քարտուղար և մեքենագրուհի։ Նրա սեղանը դրին Տիմոնի կաբինետում, անկյունում։ Դուռը գրեթե ամբողջ ժամանակ բաց էր։ Մարդիկ անընդհատ մտնում ու դուրս էին գալիս։ Տիմոնը ոչ մի րոպե չէր կտրվում իր մեքենայից։ Նա հետևում էր այդ մեքենայի բոլոր պտույտներին, նրա բոլոր ցնցումները հասնում էին այդ Դիոնիսյան ականջին։ Եռուզեռն, այնուամենայնիվ, նրան չէր խանգարում օրական մի հիսուն այցելու ընդունել, միաժամանակ քսան գործ կատարել, հեռախոսով խոսակցություններ վարել, կարգադրություններ անել, հոդվածներ թելադրել և շաղակրատել քարտուղարուհու հետ ինչի մասին պատահի։

Դրանք տարօրինակ զրույցներ էին, հանկարծական և անսպասելի։ Այդտեղ արդեն պետք էր ականջը սուր պահել — իսկույն գնդակը բռնել և անմիջապես ետ ուղարկել։ Աննետայի աչքին ու ձեռքին կարելի էր վստահել. իր ժամանակին նա թենիսի չեմպիոնուհի էր, և նրա որոշ չափով կոշտացած հոդերը շատ շուտ ձեռք բերին նախկին ճկունությունը։ Տիմոնը նրան այդ առիթով հաճոյախոսություններ էր անում, բայց բավական կոպիտ, «նկատի առնելով հասակը» (նա գիտեր, Աննետան քանի տարեկան է. նա այնպիսի կին չէր,

որ դա թաքցնի։ Իրեն Տիմոնին պետք էր այդ սուսերամարտը, այդ արագ հարվածները։ Եվ Աննետան չէր կասկածում, որ, եթե ինքը թուլանա, Տիմոնը հենց նույն օրը նրան դուրս կշպրտի, ինչպես ծեր յաբուի։ Աննետայի կյանքն այնքան էլ խաղաղ կյանք չէր։ Տիմոնը առավոտից իրիկուն նրան լարված վիճակում էր պահում։ Կռահել Տիմոնի մտքերը, իսկույն ևթ հասկանալ դրանք, պարզություն մտցնել դրանց մեջ, բարեվայելուչ տեսք տալ նրա արտահայտություններին, մեքենագրելով դրանք, և մշտապես զգաստ լինել, մշտապես հարձակման սպասել և պատրաստ լինել հակահարված տալու այդ հարձակմանը... Ձեռքը ուղղվում է, ինչպես զսպանակ, և առողջ, ամուր սեղմված բռունցքը ուղղակի հարված է հասցնում նրա կզակին։ Տիմոնը այդպիսի դեպքերում ծիծաղում էր. «Ծուղակ ընկա...»։ Ասենք, ծուղակ էր ընկնում նաև Աննետան։ Երեկոները նա տուն էր վերադառնում ուժասպառված։ Իսկ վաղը նորից նույն բանը։ Նույն բանը նաև վաղը։ Փաստորեն դա օգուտ էր Աննետայի համար։ Մտավոր անընդմեջ լարվածությունը նրա համար գիմնաստիկա էր, որը անվիկներին թույլ չէր տալիս ժանգոտվել և ուղեղը պաշտպանում էր տարիքի հետ եկող խցանումից։ Դրությանվտանգը Աննետայի մեջ սրում էր կյանքի նկատմամբ ունեցած ընկալումն ու ճաշակը։ Աննետայի զգացումները դառնում էին ավելի կենդանի և ավելի վստահ։ Նա դժվարություններից չէր բողոքում։

Վտանգավոր մարդը, որին Աննետան ծառայում էր, վճարում էր նրան։ Ոչ միայն փողով (նա լավ էր վճարում), այլև վստահությամբ։ Շատ շուտով Տիմոնը հասավ վերին աստիճանի անկեղծ խոստովանությունների։ Ասենք, նա Աննետայից նույնպես որոշ խոստովանանքներ դուրս քաշեց, որոնց նկատմամբ Աննետան շատ ժլատ էր։ Եվ ահա թե զարմանալին ինչն է. Աննետան չէր առարկում և նույնիսկ չէր նեղանում, երբ Տիմոնի պահանջները անհամեստ էին լինում։ Եթե մարդ գործ է ունենում այդ տեսակ կենդանու հետ, ոչինչ թաքցնել պետք չէ (բացի, իհարկե, նրանից, ինչը հենց քո մեջ կենդանական էությունն է հանդիսանում,— բացի նրանից, ինչը հենց Աննետայի համար ամենաէականն էր)։ Իսկ մնացյալ բոլորը կարևոր չէ։ Ամաչկոտությունը

Տիմոնի համար դատարկ հնչյուն էր։ Աննետայի և Տիմոնի միջև լիակատար շփոթություն հաստատվեց։

Ամեն մեկի համար, ով նրանց լսում էր,— բոլոր այդ լրագրային ականջների համար, որոնք որսում էի նրանց խոսակցության բեկորները,— Աննետան տիրոջ սիրուհին էր համարվում։ Եվ աշխատակիցները կատաղում էին ու միևնույն ժամանակ հիանում այդ խաբեբայով։

Իսկ Աննետայի համար, ինչպես և Տիմոնի համար, միանգամայն անվիճելի էր, որ հատկապես այդ բանը նրանցից և ոչ մեկի մտքով չի էլ անցնում։ Այդ մասին խոսք անգամ չէր եղել։ «Եվ փա՜ռք աստծո»— մտածում էր Աննետան։ «Հերն էլ անիծած...»— մտածում էր, երևի, Տիմոնը։ Ոչ մեկին, ոչ մյուսին դա չէր գայթակղում։ Տիմոնն ավելի երիտասարդ որսի ետևից էր ընկնում։ Աննետային ձանձրացրել էին սիրահետումները... Ոչ, ոչ, նրանց մտերմացնում էր այն լուռ վստահությունը, որ նրանք հիմք չունեն զգուշանալու միմյանց կենդանական էությունից։ Աննետայի ուժը նրանում էր, որ Տիմոնը նրան չէր դիտում որպես արկածներ որոնող կնոջ, ինչպես մեկին այն մեքենագրուհիներից, որոնք մշտապես տիրոջ հետևից էին ընկնում։ Տիմոնը վրսատահ էր, որ ուզածդ րոպեին, եթե ինքն ավելորդ մի խոսք ասի, Աննետան կարող է վեր կենալ տեղից, մազերը գլխարկի տակ մատներով ուղղել և, գլուխը ետ գցելով, ասել նրան. «Մնաք բարով, տեր»։ Եվ մեկընդմիշտ։ Ոչ մի բան նրան չէր պահում այդտեղ։ Եվ հենց այդ պատճառով էլ Տիմոնն ուզում էր. որ Աննետան մնա։ Մի աշխատակցուհի, որի արժանիքներն ակնհայտ են և որը, իր գինը շատ լավ իմանալով (այլապես Տիմոնը նրան կարհամարհեր), զուգակցում է գործի նկատմամբ ունեցած բարեխիղճ վերաբերմունքը դեպի այդ գործն ունեցած լիակատար անտարբերության հետ (իսկ դա հենց անշահախնդրության գագաթնակետն է),— այդպիսի աշխատողն իրենից մեծ հազվադեպություն էր ներկայացնում, և Տիմոնն այնքան հիմար չէր, որ կորցներ նրան։ Բայց Աննետան,— նրա՞ն ինչն էր պահում։ Մի՞թե միայն տեղն ու ռոճիկը։ Տիմոնն ինքը նույնպես։ Վերջին հաշվով նա Աննետային, այնուամենայնիվ, հետաքրքրում էր։ Նրանք միմյանց նկատմամբ ոչ մի հա-

կում չունեին, ոչինչ նրանց չէր կապում իրար հետ, և այնուամենայնիվ երկուսն էլ զգում էին, որ իրենք ոչ սովորական մարդիկ են։ Նրանք տարբեր հայացքներով էին նայում իրերին, բայց նայում էին ոչ այնպես, ինչպես բոլորն են նայում։ Յուրաքանչյուրն ինքն էր ստեղծում իր «ես»-ը և այդ «ես»-ը ուրիշի հագից չէր հանված. նրանք այդ ձևել էին իրենց սեփական նյութից—ձևել էին այնպիսի մկրատով, որը կոպիտ էր կտրում, բայց կտրում էր ճիշտ՝ իրենց անձնական փորձով։ Ինչքան էլ ուզում է տարբեր լինեին նրանց մոտ և ձևը, և նյութը, Աննետան և Տիմոնը միմյանց մեջ հոգեհարազատություն էին զգում։ Նրանք կես խոսքից հասկանում էին իրար։ Բայց գործածում էին նաև ամբողջական խոսքեր։

Տիմոնին զզվեցրել էր բոլոր նրանց ստորաքարշությունը, ովքեր նրա առաջ մեջք էին ծռում միայն այն պատճառով, որ վախենում էին նրա լուտանքներից, և հետևները դնում էին նրա քացիների տակ։ Վերջապես նա տեսավ իսկական մարդու (և դա կին էր. գերմաներեն մեծ ցեղի երկու ներկայացուցիչն էլ բնորոշվում են մի բառով), վերջապես մարդը ուղիղ ձեր աչքերին է նայում, ձեզ ասում է. «Ոչ», հանգիստ ձեզ ստիպում է մինչև վերջը լսել իր քննադատությունը, հիմնավորված կշտամբանքը, և այդ անելիս պարզ երևում է, որ նա իրավացի է... (ընդունված չէ, որ այդ խոստովանեն, բայց դա կարելի է օգտագործել...)։ Դա հաճելի է։ Դա ամուր հող է։ Դրա մեջ չես թաղվի։ Սարսափելի չէ այդ հողի վրա ոտք դնել։ Կամ էլ գլուխ հենել։ Մեծ գլուխը, որը երբեմն մարդ այնպե՞ս է ուզում հենել։ Բայց դա ցույց չեն տալիս։ Բավական է և այն, որ կարելի է նայել այդ կրծքին և մտածել. «Այդ կուրծքը մարդ է կերակրել։ Նրա մեջ դեռ կաթ կա քաղցածի համար։ Եվ նրա վրա կարող է հանգըստանալ հոգնած մարդը։ Ամենաանփույթ տեսքով և երբեմն էլ ցինիկ քմծիծաղով Տիմոնը նրան պատմում էր իր արկածների մասին։ Նա առանց ամաչելու ներկայացնում էր մերկ Տիմոնին և ցույց էր տալիս նրա «գեղեցիկ հոգին», որն իրականում բավական նողկալի մի բան էր։ Բայց, ինչպես բոլոր հոգիները, դա ծնվողի հոգի էր, և, ինչպես բոլոր հոգիները, նա մի օր լինելու է մեռնողի հոգի։ Իսկական կինը

միշտ էլ կարող է հասկանալ։ Եվ կարեկցել։ Բայց ամբարտավանին նա երբեք այդ չի ասի... Տղամարդը չգիտի, թե ինքն ինչ անի կարեկցանքի հետ, դա հայտնի է։ Կարեկցանքի մեջ միշտ դառնության զգացումի պես մի բան կա։ Բայց այնպիսի դառնություններ են լինում (երբեմն նույնիսկ վիրավորանքներ), որոնց համար հոգուդ խորքում չես վիրավորվում։ Միայն թե պետք է վիրավորանքը հասցնել հըմտորեն և ճիշտ ժամանակին, այնպիսի պահի, երբ, չնայած կամքի բոլոր բողոքներին, մարմինն ապասում է դրան։ Տիմոնը հեշտ էր հաշտվում Աննետայի բերանի անկյուններում հայտնվող որոշ հազիվ նկատելի ծալքերի հետ, երբ Աննետան լսում էր նրան։ Այդ ծալքերում մեկ տասնորդական խղճահարություն կար, նույնքան արհամարհանք և ութ տասնորդական խելացի, նախապաշարմունքից զերծ հետաքրքրություն։ Ամբողջությամբ վերցրած այդ խառնուրդից համակրանք էր ստեղծվում։ Անկախ համակրանք։ Եվ դրանում էր այդ համակրանքի արժեքը... Տիմոնը մի նշանաբան ուներ. «Խփիր և հարվածներ ստացիր։ Բայց երբեք մի զիջիր։ Բարեկամ է, թե թշնամի— ոչ ոքի մի՛ հանձնվիր...»։ Աննետան երբեք չէր հանձնվի։ Տիմոնը դրանում համոզված էր, նա փորձել էր... (Դա նրան չէր խանգարի մի անգամ էլ փորձել...)։

Նրանց միջև համաձայնություն էր հաստատվել, կիսով չափ լուռ, կիսով չափ բարձրաձայն արտահայտված։ Տիմոնը Աննետային վերցրել էր որպես անձնական քարտուղար։ Նա Աննետային սևագիր նամակներ ու հոդվածներ էր թելադրում։ Աննետան դրանք մշակում էր։ Նա իրավունք ուներ Տիմոնի ոճի եղունգները մաքրել, բայց ոչ երբեք կտրել դրանք։ Նա իրավունք ուներ ուղղել որոշ սխալներ, բայց ոչ բոլորը,— չէր կարելի ձեռք տալ այն սխալներին, որոնք նա արել էր դիտավորյալ։ Չ՞է որ պայքարի մեջ չեն մտածում ճշմարտության մասին։ Մտածում են միայն այն մասին, որ տապալեն հակառակորդին։ Եվ Տիմոնն իրեն նեղություն չէր տալիս այդ բոլորը բացատրել քարտուղարուհուն, թող քարտուղարուհին ինքը կռահի նրա մտադրությունները, և որքան կարելի է արագ։ Տիմոնի թանաքը չէր շորանում։ Վառարանից ուղղակի սեղանին էին դնում։ Մատ-

ներդ այրիր։ Եվ զգուշացիր, եթե ձեռքիցդ գցես։ Աննետայի ձեռքերը չէին դողում... Տերը առանց թաքցնելու Աննետային իրազեկ էր դարձնում իր բոլոր խորամանկություններին, իր հոդվածների ծածուկ մտքերին, բացատրում էր նրան իր հայացքները լրագրի և կյանքի վերաբերյալ։ Նա գիտեր, որ Աննետան իրեն հավանություն չի տալիս։ Բայց Աննետան նրան ընդունում էր, ինչպես ընդունում են հանդիսախաղը։ Եվ Տիմոնն ինքն էր վճարում Աննետայի տեղի համար։ Աննետան նրան սուլելու իրավունք չուներ։ Հենց այդպես էլ Տիմոնը նրան ասաց.

— Դու դե՞մ չէիր լինի։ Ես տեսնում եմ, դու ինչպես ես շրթունքներդ դուրս ցցում... Դե լա՜վ։ Սուլիր մի անգամ։ Թույլ եմ տալիս։

Աննետան սուլեց։ Տիմոնը խսկույն նրան ընդհատեց։

— Զայնդ կտրի՞ր։ Իսկ հիմա տկտկացրու այն, ինչ ես ասացի։ Ճշտությամբ։

Եվ Աննետան մեքենագրում էր։ Դա Տիմոնի բռունցքն էր թխկթխկացնում աշխարհի դանգին։ Տիմոնը պետք է խաղում տարվածը ետ բերեր։

Նա զգում էր դրա անհետաձգելի պահանջը։ Այդ պահանջում. էին ստորացուցիչ հիշողությունները նրա մանկության, որն անցել էր ամոթի և աղքատության մեջ։ Տիմոնի մայրը Պերիգորում խորտկարանի աղախին էր, հայրը՝ պատահական անցորդ։ Մթության մեջ նրա մայրը նույնիսկ հոր երեսը չէր տեսել։ Ուժից ընկնելով, ինչպես հալածական կենդանի, այդ աշխատավոր կինը երկար ու համառորեն թաքցնում էր իր հղիությունը, մինչև որ խորտկարանը մաքրելու ժամանակ ուղղակի հատակին ծննդաբերեց։ Նրան երեխայի հետ գտան լճացած արյան մեջ։ Անցանկալի եկվորին ետ ուղարկելը արդեն անհնարին էր։ Անզուսպ ճիչով նա հայտնում էր իր ապրելու անսանձելի ցանկությունը։ Բայց հենց որ մայրն արդեն ի վիճակի դարձավ ոտքի կանգնել, նրանց երկուսին էլ վռնդեցին, և մորը, և որդուն։

Մայրը ոչ ոքի չէր պատմում, թե ինչպես է ապրել դրանից հետո, ասենք, նրա կյանքը ոչ ոքի չէր էլ հետաքրքրում։ Նա ոչ մի բանից չէր հրաժարվում. թեկուզ և դա լիներ

ամենածանր, ամենաստորացուցիչ բանը,— միևնույն է, միայն թե կերակրվեր։ Նա կյանքից կառչում էր մի անբացատրելի ուժով, ինչպես կենդանին, որի մտքով անգամ չի անցնում բաժանվել կյանքից, թեև այդ կյանքը նրան միայն տառապանքներ է պատճառում։ Եվ բացի դրանից, նա էգի կապվածություն ուներ իր ձագուկի հետ, որն այնքան փոքր էր և անօգնական։ Հետո—թող գնա՞, ուր աչքը կտրում է։ Բնությունը թող հոգա նրա մասին։ Այն ժամանակ, երբ փոքրիկ Գելդրին առաջին տարին գնաց վարձվելու աշխատանքի, նա հասցրեց արդեն այնքան շատ բան տեսնել կյանքում, որ անզգայուն էր ուզածդ ստորացման նկատմամբ։ Մոր մտքով չանցավ էլ որդուց թաքցնել իր խայտառակությունը։ Եվ առհասարակ կարո՞ղ էր նա արդյոք որևէ բան որդուց թաքցնել, երբ նրանք ապրում էին կողք-կողքի։ Իր ամբողջ հոգին մայրը զոհ բերեց այդ կենդանական կապվածությանը որդու նկատմամբ, որը մարմին էր իր մարմնից, ինչը, սակայն, նրան չէր խանգարում կոպիտ վարվել որդու հետ։ Կոպիտ վարվել—կնշանակի սիրել .ավելի ուժեղ։ Մեղմ խառնվածք ունեցողներին այդ դուր չի գալիս։ Բայց Տիմոնը ոչ այն ժամանակ, ոչ հետո այդ խառնվածքին չէր պատկանում։ Նա ամեն ինչ հասկանում էր։ Հասկանում էր, որ ինքը երեխա է, որ կանգնած է ամենացածր աստիճանին, որ միակն է, ում վրա մայրը կարող է ոտքերը մաքրել։ Դա ընդունված կարգ էր—մայրն ինքն էր ուրիշների համար աստիճան ծառայում... Բայց չէ՞ որ ինքը կմեծանա՞։ Եվ այն ժամանակ արդեն ի՞նքը ոտքերը կմաքրի այն մարդկանց մեջքին, ովքեր իրենց ամբողջ ծանրությամբ ընկել են նրանց երկոսի վրա։

Բայց դրան հասնելու համար նա մի լավ քրտնեց։ Քիթը շատ հեռուն տանելու հնարավորություն չէր լինում։ Տիմոնն սկսեց մարդկությանը ճանաչել ոտքերից։ Նա մի փոքրիկ կասկածելի հյուրանոցում ծառայում էր որպես մանր հանձնարարություններ կատարող և, չնայած իր անմեղ տեսքին, հիանալի գիտեր աղջիկների բոլոր գաղտնիքներն ու նրանց հաճախորդներին։ Եվ ահա մի գեղեցիկ օր կամ գեղեցիկ ժամ նրան մի երջանիկ դեպք ներկայացավ. նրա ձեռքն ընկան վարկաբեկող թղթեր, որոնք մոռացել էր հենց նոր մեկնած

մի կենվոր։ Մի բոպեում Տիմոնը որոշեց նրանց արժեքը, ծանր ու թեթև արեց բոլոր թեր և դեմ հեռանկարները և վճիռ կայացրեց։ Նա վազեց, կայարանում հասավ այդ մարդուն, և այնտեղ, առերես, առանց ավելորդ խոսք ասելու (ոչ մի շանտաժ։ Բայց մարդն, իհարկե, հասկացավ որ ինքը վատ վիճակի մեջ է ընկել և ավելի լավ է հաշտության գնալ...) մեկնողն իր թղթերը ետ ստացավ, իսկ դրա դիմաց պարտավորվեց անմիջապես փոքրիկ հանցակցին իր մոտ ծառայության ընդունել։ Տղան թերահավատ տղա էր և այդ պատճառով որոշեց նույնիսկ չվերադառնալ հյուրանոց, որպեսզի իր շորերը վերցնի։ Նա և իր նոր տերը առաջին գնացքով մեկնեցին։

Այդ կլորավուն, բարեհոգի Գոդիսսարի[1] արտաքինի տակ թաքնվում էր միջազգային մի բավական տարօրինակ գործերի գծով գործակալ։ Նա մի մետաղագործական ֆիրմայի հրետանային հրանոթների պատվերներ էր տալիս և մշտապես ետ ու առաջ էր անում զինապահեստների և թիրախների միջև, ուրիշ կերպ ասած, ժողովուրդների միջև կամ, ավելի ճիշտ, զինապահեստների և նրանց միջև, ովքեր ժողովուրդներին օգտագործում են իրենց շահերի համար։ Նա հաճախ էր ուղևորվում Բալկաններ և Մերձավոր Արևելք— այն տեղերը, որտեղ մարդկային լեզուն տանջվում է հարևանի արյունը լակելու ցանկությունից։ Բարերարները, որոնք մարդկությանը խաղալիքներ են մատակարարում՝ մահ խաղալու համար, շան հոտառություն ունեն,— նրանք գիտեն ինչպես իրենց համար հաճախորդներ գտնեն, որոնք երազում են այդ խաղալիքները օգտագործել։ Անհրաժեշտության դեպքում բարերարները միաժամանակ մատակարարում են նաև պատերազմի պատճառներ։ Իհարկե, կոպիտ, ամուր կազմվածքով, բայց և այնպես մանր գործակալը չէր նայում այդքան հեռու։ Նրա գործը, պահանջներն ու առաջարկությունները աննկատելի և ծածուկ հանձնելն էր և երկու կողմից միջնորդադրամ ստանալը։ Քաղաքականությունը նրան չէր հետաքրքրում։ Բայց դրա փոխարեն Պերիգորի երիտասարդ խոճկորի դունչը հարմարեցված էր տրյուֆելներ գըտ-

[1] Գոդիսսար—Բալզակի «Մարդկային կատակերգության» հերոսներից մեկը։

նելու համար։ Եվ նա շատ շուտ գլխի ընկավ, որ քաղաքականությունը հենց այն ծառն է, որի շուրջը տրյուֆելներ են աճում։ Նա սկսեց այդ ծառը խնամել։ Իր ուղևորությունների, շոշափումների, խորհրդածությունների և լավատեղյակ ավանտյուրիստների հետ ունեցած ծանոթությունների շնորհիվ (ձեռքը ձեռք է լվանում) նրան հաջողվեց իր համար պարզել ծառի կառուցվածքը սկզբում grosso modo[1], իսկ դրանից հետո նաև ավելի մանրամասն։ Նա սովորեց տարբերել, թե ո՞ր ճյուղերն են գլխավորները, ուր են գնում արմատները, և հասկացավ, որ երբեմն փտած ատամները պահպանելն ավելի խելամիտ է քան նրանց քաշելը, և որ որոշ խոցեր իսկական տրյուֆելներ են՝ խոհանոցից բան հասկացող մարդու համար։ Բավական շուտ նա կռահեց մի ուրիշ բան ևս. որ այնքան էլ մեծ տաղանդի կարիք չկա, որպեսզի մարդ աշխատի, ինչպես նրա տերը, որևէ մի ֆիրմայի համար։ Ինչ ինչո՞ւ չաշխատել երկու ֆիրմայի համար։ Երեքի՞ համար։ Ինչո՞ւ չաշխատել բոլոր ֆիրմաների համար։ Հասկանալի է, բոլորին էլ՝ մինչև վերջինը, խաբելու պայմանով։ Ո՞վ ավելի շատ կխաբի։ Իսկ եթե անգամ ավելի քիչ խաբի—միևնույն է, վերցրո՛ւ, հափռի՛ր, խրիր գրպանն՝ ը՛դ։ Արծաթե սկուտեղում է թե մելքիորե սկուտեղում, միևնույն է, տրյուֆելները հավասարապես լավն են։ Գլխի ընկնելը հեշտ է, որ տրյուֆելների այդպիսի սիրահարը միանգամից չի տիրապետել մի քանի ձիերի վրա միաժամանակ նստելու վտանգավոր արվեստին։ Կարևորն այն է, որ նա այդ արվեստին տիրապետել է։ Նա լայն հետույք ուներ, և, հարմար նստելով, այդ հետույքը պտուտակներով ամրացնում էր թամբին։ Տերը չհասցրեց աչքը թարթել— սա մի հարվածով վերացրեց նրան։ Թե դա ինչպես տեղի ունեցավ, պատմությունը լռում է այդ մասին։ Բայց փաստն այն է, որ մի գեղեցիկ օր, ինչ-որ տեղ Բալկաններում, ծերուկը գործունեության դաշտը լքեց։ Ոչ ոքի մտքով չանցավ էլ նրան փնտրել (ինչի՞ համար)։

Բայց այնքան էլ շատ ժամանակ չանցավ, երբ մեր պերիգորցու հոտն առավ նույն ցեղի մի ուրիշ գաղան, որի

[1] Ընդհանուր գծերով (իտ.)։

թիկունքում կանգնած էին շատ ուրիշները. շագանակագույն մազերով և վճիտ աչքերով մարդը պատկանում էր «Ինտելլիջենս»[1] հզոր ոհմակին, որի խորհրդավոր գործունեությունը ամբողջ երկրագնդում պահպանում է Բրիտանական կայսրության տիրապետությունը (կամ, թերևս, այդ ոհմակի տիրապետությունը, քանի որ նրանք, ովքեր խաղաթղթերը ձեռքներին են պահում, վերջ ի վերջո սկսում են կարծել, որ խաղի տերերն իրենք են)։ Երկու գազանն էլ երկար հոտոտում էին միմյանց և, փշերը ցցելով, լռելյայն խորհրդածում էին, թե ավելի ձեռնտու չէ՞ր լինի արդյոք, եթե մեկը խեղդի մյուսին։ Բայց, ամեն ինչ ծանր ու թեթև անելով, ավելի խոշորն ու միևնույն ժամանակ ավելի փորձվածը տեսավ, որ ավելի օգտավետ կլինի, եթե նա իրեն մոտեցնի այդ կալիբրի Տրուֆալդինոյին[2]։ Եվ նրանք ուղղակի, առանց ակնարկության, մեկը մյուսի առաջ պայմաններ դրեցին։ Տրուֆալդինոյի պայմանները ամենևին էլ դյուրին չէին, բայց մյուսը զուր տեղը ժամանակ չկորցրեց սակարկության համար. ոհմակը վճարում է իսկական գինը և ցանկանում է ձեռքում պահել այն, ինչ գնել է։ Իսկ որպեսզի պերիֆորցուն իր ձեռքում պահի, նրան պետք էր սեղմել։ Գնորդն այդ կապակցությամբ ոչ մի պատրանք չէր ստեղծում իր համար։ Եվ պատրանքներ չթողեց նրան, ում գնել էր։ Գելդրին գիտեր, որ իրեն գնել են ամբողջ եղած-չեղածով։ Նա այնպիսի մարդ չէր, որ դրանից տանջվի,— միայն թե լավ վճարեին, իսկ մնացածը հետո կերևա։ Նա տիրոջը կծառայի այնքան ժամանակ, քանի դեռ ձեռնտու է, իսկ երբ ոչ ձեռնտու դառնա, նա կարող է դուրս պրծնել մամլակներից։ Վտանգը չէր կարող նրան կանգնեցնել (մենք արդեն չենք խոսում—մենք լուրջ մարդիկ ենք—թղթի կտորի վրա դրված ստորագրության մասին...)։

Նրանցից յուրաքանչյուրն հասկանում էր, թե ինչ կարելի է մյուսից պահանջել, և շնորհիվ այդ պարզության, նրանց միջև հաստատվել էին բարի հարաբերություններ։ Իսկ գործարքը երկու կողմերի համար էլ ձեռնտու դուրս եկավ։ Եթե

---

[1] «Ինտելլիջենս սերվիս»—անգլիական հետախուզություն։

[2] Տրուֆալդինո—դիմակների կոմեդիայի պերսոնաժ։

չհաշվենք մի քանի փոքրիկ, երկրորդական, նույնիսկ երրորդական դավաճանություններ, որ թույլ էր տվել պերիգորդին. ժամանակ առ ժամանակ նա իրեն թույլ էր տալիս այդ շռայլությունը, որպեսզի ինքն իրեն ապացուցի իր անկախությունը, և պարզապես՝ որպեսզի վարժություններ կատարի։ Մյոսսը ոչինչ չէր ասում, բայց հասկանալ էր տալիս, որ նկատել է։ Դա կրկնակի խելացի էր. նա սանձերը չէր ձգում, բայց ձեռքից բաց չէր թողնում—իբրև՝ ականջդ սո՞ւր պահի։ Գելդրին հասկանում էր, որ իրեն բարձր են գնահատում։ Եվ լավ են անում. նա իր գինն ավելի լավ գիտեր, քան որևէ մեկը։ Ճիշտ հրահանգավորման և ճիշտ ղեկավարման դեպքում նա ինտրիգների բնագավառում վարպետություն էր ցուցաբերում, որտեղ համարձակությունը զուգակցվում էր խորամանկության հետ։ Իսկ հետո նրա անխոնջ և հմուտ տերերը կծիկը ետ էին տալիս և ժողովուրդներին նրա երկար թելերով խճճում էին։ Տերերը շուտով նկատեցին աչք կապելու նրա առանձնահատուկ հմտությունը (Գալլիայի որդու լավագույն օրգանն այն է, որը բերնում է գտնվում)։ Եվ նրանք վարժություններ անելու հնարավորություն տվեցին նրան, Փարիզում նրա համար գնելով մի մեծ ֆրանսիական լրագիր։ Այն կոչվում էր «Ամենից առաջ Ֆրանսիան»։ Այդտեղ խաբեություն չկար։ Նրանք իսկապես էլ նկատի ունեին նախ և առաջ Ֆրանսիայի կաշին քերթելը։ Տիմոնը (նա այդ ժամանակ հենց նոր էր ձվից դուրս եկել) ցինիկորեն վերնագիր էր առաջարկում. «Հաղթանակը մերը կլինի»։

Եվ եղավ։ Դրա համար շատ ժամանակ չպահանջվեց։ Հենց առաջին անգամից օրգանը, որ գտնվում էր Տիմոնի բերնում, բարձրացավ,— ինչպես Գարգանտյուայի[1] մոտ, Փարիզի Աստվածամոր տաճարի աշտարակներից ավելի վեր։ Նա իր ճամարտակություններով ողողեց բոլոր բերանբացներին և դատարկապորտներին։ Նա ինքն էլ էր եփվել նրանց հյութով և էֆանալի գիտեր ինչ հյութով են նրանք համեմում իրենց տապակածը։ Նրա ուսելիքներից յուրաքանչյուրը կոկորդ էր այրում։ Դրանց վրա նետվեցին։ Նա զսպում էր իրեն շողո-

---

[1] Գարգանտյուա—Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել» գրքի գլխավոր պերսոնաժներից մեկը։

քորթելուց։ Նա հաճախորդներին հիշոցներով էր ընդունում։ Թույլ մարդիկ շոյվում են, երբ նրանց հետ կոպիտ են վարվում, նրանք կոպտությունն ընդունում են որպես հարգանքի տուրք, որն իբր մատուցվում է նրանց արիությանը, և դրանով նրանք վառում են իրենց հանգած մոմի թերայրուկը։ Ամբողջ բանը նրանում է, որ մարդ իմանա չափը, սահմանը, որից այն կողմ դագանակն արդեն չի քորում ավանակի մեջքը, այլ կատաղեցնում է նրան։ Տիմոնը շատ լավ գիտեր այդ սահմանը։ Երբեք, նույնիսկ ամենախանդավառ տարվածության րոպեներին, նա չէր դադարում հետևել մանոմետրին, կամ, եթե ուզում եք, մյն սլաքին, որը թռչում է ցիֆերբլատի վրա, երբ բռունցքով խփում են տոնավաճառային խրտվիլակի գլխին։ Նա զայրույթի մեջ, սպառնալիքների պահին, իր անզուսպ հարձակումների ժամանակ մնում էր սառը։ Դեռ չսկսած, նա արդեն գիտեր. «Մինչև այստեղ։ Կա՞նգ առ։ Ետ դա՜ռձ».— Այդ վարաղը դեռ շատ դաշտեր պետք է ամայացներ... Բացատրվենք. եթե «մինչև այստեղը» տենչալի որսին չէր բերում (դա պատահում էր շատ հազվադեպ. հետապնդվող գազանը միշտ էլ իր մորթուց մի կտոր թողնում էր հետապնդողի երախում. նա նույնիսկ իր մորթու միջից դուրս կթռչեր, եթե կարողանար, միայն թե հետապնդումից գլուխն ազատեր), որսորդը գիտեր, որ իր զոհին կհասնի մյուս անգամ։ Տիմոնը երբեք ոչինչ չէր մոռանում։

Հատկապես նա չէր մոռանում խսկական խաղի մասին— այն խաղի, որը տեղի էր ունենում շիրմայի հետևում, ջրատար խողովակների աղմուկից հեռու. ֆիրմաների մեջ տեղի ունեցող միջազգային խոշոր մարտերի մասին, որտեղ նա պետք է պահպաներ իր ֆիրմայի շահերը։ Խոսքի գերնացիոնալիզմը շահի ինտերնացիոնալիզմի պարտադիր դիմակն էր։ Տիմոնն ու նրա նմանները (նրանք առայժմ դեռ Անգլիայի պերերը չէին... Համբերությո՞ւն։ Մի օր նրանք կդառնա՞ն այդ պերերը) լրիվ թքել էին այն բանի վրա, թե ինչ դրոշի տակ նրանք կկատարեն պողպատի շուկայի շուրջկալը և դա պատերազմի՞ կբերի, թե՞ խաղաղություն։ Դրոշի գույները գործի մեջ ոչ մի դեր չէին խաղում, և գործերը ճարպկորեն սարքվում էին բոլոր գույների դրոշների տակ... Այո, դա սկզբում, մինչև համաշխարհային պատե-

բազմը, որը գաղափարները ոչնչացնում էր նույն չափով, ինչպես և մարդկանց։ Տիմոնը, իր տերերի օրինակով, իր տնտեսության անկյունում ազգային ծաղիկ էր աճեցնում— փշերով վարդ, կարմրած այն արյունից, որը վճարված էր նրա համար։ Եվ այդ հողի վրա նրա և նրա տերերի միջև նույնիսկ երբեմն տարաձայնություններ էին առաջ գալիս... Երկու վարդերի պատերազմ... Երկու կողմն էլ մեկը մյուսին խաբում էր։ Բայց պատերազմը նրանց բոլորին ցույց տվեց, որ նրանք լրիվ հիմար կլինեին, եթե սահմանափակվեին այն բանով, ինչ կարելի է պոկել որևէ մի ժողովրդից։ Չէ՞ որ նրանք հընարավորություն էին ստացել հարստություն դիզել բոլոր ժողովուրդների քայքայումից։ Եթե նրանք երբեմն դեռ որոշ փափկանկատություն էին ցուցաբերում, ապա նոր ֆորմացիայի ավանտյուրիստները հոգացին, որ փափկանկատությանը վերջ տրվի մեկընդմիշտ։ Փոթորկի ուժով դուրս նետված, նրանք երես-դուրս եկան ծովերի հատակից։ Դրանք ծագումով անհայտ մարդիկ էին, նման նրանց, ում պատկերել է Շեքսպիրը. նրանց համար այլևս սուրբ ոչինչ չկար, նրանք տրորում էին բոլորին և ամեն ինչ։ Նրանք, այդ վիժվածքները—լևանտացիները, մալայցիները—ծագել են տարբեր ռասսաների միացումներից, չորս թե հինգ մայր ցամաքների կեղտաջրերի խառնուրդից։ Դժվար էր որոշել, ինչ երկրից են նրանք, ինչ արգանդից են դուրս եկել։ Նրանք իրենք երբեք այդ մասին չէին մտածել և հենց շնորհիվ դրա ավելի վարպետորեն էին լողում ուղածդ ջրում։ Իսկ այ, գիշատիչ-արիստոկրատները, որոնք ցանկանում էին իրենց ծնոտների համար ուտելիք ընտրել միայն պատրաստի բուծարաններում, դժվար էին ապրում։ Նոր գայլաձկները հափռում էին ամեն ինչ։ Կամ վարվիր նրանց նման, կամ քեզ կուլ կտան։ Տիմոնը առանց ճիգերի շարժվեց նրանց հետ համաքայլ։ Նրան ամենից քիչ էր անհանգստացնում ծագման հարցը։ Նրա համար «հայրենիք» բառը միաձուլվում էր «հայր» բառի հետ, իսկ հոր հետ նա պետք է հաշիվներ մաքրեր։ Սակայն բանականությունն ասում էր, որ չի կարելի որևէ ռասսայի, նրա միս ու արյանը չդատկանել։ Շնորհիվ այն կնոջ, որը նրան աշխարհ էր բերել,

և հողին, որն աշխարհ էր բերել և մորը, և իրեն, Տիմոնը պատկանում էր այն ռասսային, որը լցոնված էր կոպիտ, վայրի, գալլական ծաղրի կպչուն տրյուֆելներով։ Այդ պատճառով էլ Տիմոնը սովորաբար պաշտպանվում էր սպանիչ հեգնանքով։ Նա հույս ուներ, որ այդ հեգնանքի ուժով զերծ կպահի իրեն և իր շայկային, ինչպես հաճախ լինում է, կրոնին, բարոյականությանը ուղղված խրատական հորդորներով, բարեպաշտական կոչերով և հասարակությանը վկայակոչելով հիմարացնելու փորձերից, որոնցով տարտյուֆները սովորաբար թաքցնում են իրենց կողոպուտները։ Ծաղրը Տիմոնին անողորմ էր դարձնում դեպի կեղծավորությունը, իսկ ժամանակ առ ժամանակ... այո, այդ ծաղրը նրան լցնում էր կարեկցությամբ (ասենք, արհամարհանքը մշտապես հաղթում էր) դեպի շահագործվող ժողովուրդները, և նա պատրաստ էր լինում նրանց պաշտպանելու, հարձակվելու շահագործողների վրա։ Բայց դա բոնկումներից, բառաժայթքումներից այն կողմ չէր անցնում, որոնք առանձնապես կատաղի էին լինում այն պահերին, երբ գինին ազատ էր արձակում հրաբուխի ծանրության տակ ճնշված տիտաններին, և խառնարանն սկսում էր ծխել։ Տիմոնին լավ հայտնի էր, որ տիտանները հաղթված են. նա չէր պատկանում այն պարզամիտների թվին, որոնք բացականչում են. «Gloria victis»[1]։ Նրան ավելի շատ ձեռ էր տալիս. «Vae victoribus»։[2] Քանի որ ինքը նրանց ճանաչում էր։ Այն ամենը, ինչ դեռ նրա մեջ մնում էր ազնիվ, նա ներդնում էր իր այդ հանցակիցների կամ մրցակիցների նկատմամբ ունեցած գաղտնի, բայց անողորմ, անտակ, անսահման ատելության մեջ։ Բայց հաղթվածները նույնպես ավելի լավը չէին։ Ինքը նրանց նույնպես ճանաչում էր, այդ շահագործվողներին, մարդկանց, որոնց միջև անցել էր նրա ատրացումներով լեցուն մանկությունը։ Նրանց ոտքերը նույնպես թեթև չէին այն մարդկանց համար, ում նրանք տրորում էին։ Ուրեմն, թող նրա՞նց էլ տրորեն։ Ոչ, Տիմոնը իր լայն ուսերը դեմ չի տա, որպեսզի օգնի տապալել հասարա-

---

1 Փա՞ռք հաղթվածներին (լատ.)։

2 Վա՞յ հաղթողներին (լատ.)։

կարգը, թեև ոչ ոք չէր նայում այդ կարգին— այդ անկարգությանը, ավելի ոչնչացնող հայացքով, քան նա։ Բայց այդ հայացքը Տիմոնը չէր կարող թաքցնել նրանցից, ովքեր հենց նրա նման կարողանում էին նայել հոգու գաղտնարանները։ Եվ Տիմոնի տերերը, օգուտ կորզելով նրանից, այնուամենայնիվ աչքերը նրա վրա էին պահում։ Տիմոնը նրանց տագնապ էր ներշնչում։

Սակայն հենց այդ հանգամանքը Աննետայի վրա անդորրող ազդեցություն էր ունենում։ (Բայց մի մտածեք, որ դրանից նա դարձել էր պակաս զգոն, ընդհակառակն...)։ Եվ նա նեղողամտության և հույսի համար որոշ, ճիշտ է թույլ, բայց և այնպես գոնե ինչ-որ հիմք էր գտնում։ Քանի դեռ մարդը ներքնապես մնում է ճշմարտացի և ազատ, ապա, եթե անգամ նա թաղված էլ լինի ոճրագործությունների մեջ, դեռ ամեն ինչ չէ, որ կորած է նրա համար։ Ինչպիսի, թեկուզ ամենատոր, շահ էլ ուզում է ղեկավարի նրա գործողությունները, իր քարայրում նա դեռ կարող է մնալ անշահախնդիր։ Եվ այդ գաղտնի, հեռավոր և միևնույն ժամանակ մարդկային էության հիմքը կազմող անշահախնդրությունը երբեմն միաձուլվում է ամեն ինչի նկատմամբ հետաքրքրության լիակատար բացակայության հետ։ Հենց դա էլ այն անտեսանելի փորձաքարն էր, որով Տիմոնն ու Աննետան անմիջապես, առաջին հայացքից, առանց որևէ բացատրությունների, փորձեցին միմյանց և որի շնորհիվ նրանք հասկացան ու ընդունեցին իրար։ Նրանք կարող էին առանց փոքրագույն հուզմունքի ամեն ինչ տեսնել, ամեն ինչ լսել իրենց մասին, ուրիշների մասին։ Հոգու խորքում նրանք իրենց ոչ մի առավելություն չէին վերագրում։ Նրանք այնքան կեղծավոր չէին, որպեսզի, այդ ամբողջ տականքի նման, մի չափով մոտենային իրենք իրենց, իսկ մյուսով՝ մնացած բոլորին։ Նրանք ըստ արժանվույն գնահատում էին ամբողջ պատկերը և նույն թվում՝ իրենք իրենց։ Ամենակարևորը աչքերն են։ Ասում են, որ ձուկն սկսում է հոտել աչքերից։ Տիմոնի աչքերն առողջ էին։ Առողջ աչքեր ուներ նաև Աննետան։

Տերը այդ տեսակետից չէր սխալվում։ Նա ոչինչ չէր թաքցնում այդ ականջներից, որոնց խեցիները անվրդով ըն-

կարում էին ծովի բոլոր ցնցումները։ Նա դրանց մեջ էր զգում այն ամենը, ինչը նրան ծանրություն էր պատճառում, այն ամենը, ինչ նա տեսնում էր, այն ամենը ինչ նա գիտեր մարդկային կատակերգության մասին, որտեղ ինքը դերասան էր, և թագավոր—ծաղրածուների մասին, որոնք այդ կատակերգությունը դնում էին։ Այդ ականջները նրա անկեզ պահարանն էր։ Նա Աննետային ասում էր.

— Պահպանիր դրամարկղը։

— Գանձապահը դուք եք,— պատասխանեց Աննետան։— Բանալին ձեզ մոտ է։ Կարող եք ստուգել։ Ամեն ինչ տեղում է։

— Եվ ոչինչ չի՞ կորել։ Ոչինչ չի՞ մոռացված։

— Ոչ մի սանտիմ։ Հաշիվը ճիշտ է։

Այո, Աննետան ոչինչ չէր մոռանում այն բանից, ինչ Տիմոնը նրան վստահում էր։ Դա վտանգավոր էր։ Բայց նրանցից ո՞ւմ համար էր ավելի վտանգավոր։ Բարեկամի վիճակը բավական ծանր է դառնում, եթե նրա նկատմամբ ունեցած վստահությունը կորել է, եթե նա կասկածի տակ է գտնվում։ Բավական էր նայել սեղանին դրված այդ բռունցքներին, դահճի բռունցքներին, և ամեն ինչ հասկանալի կդառնար։ Բայց Աննետան նրանց նայում էր անտարբեր հայացքով, նա կարծես դրանց մասին նույնիսկ չէր էլ մտածում։ Իսկ Տիմոնն ամաչում էր, որ մի անգամ իր մեջ կասկածի սաղեր է առկայծել։ Ոչ, դրամարկղից ոչինչ չի կորչի։ Բանալին Տիմոնի գրպանում է։

Բայց անկեզ պահարանը բերներերան լիքն էր։ Շնորհիվ դրան Աննետան տեղեկություններ հավաքեց քաղաքականության բնագավառից։ Նա թափանցեց կուլիսների հետևը։ Հիմա նա կարող էր զարգացնել շվեդական կանցլերի սրախոսությունը, որը կրկնում են պատմության թութակները. կանցլերն ասում էր, թե ինչքա՜ն քիչ խելք է պետք, որպեսզի մարդ աշխարհը ղեկավարի։ Բայց նա նկատի ուներ միայն այն տիկնիկներին, որոնք բեմում են գտնվում։ Իսկ Աննետան տեսնում էր, թե ովքեր են թելերը ձգում։ Իհարկե, թագավորները, պառլամենտները և մինիստրները, բոլոր նրանք, ում իշխանությունը գլխավորողներ են անվանում, ավելին չեն, քան գրամաֆոնային ձայ-

նապնակներով մարիոնետները. նրանք գալյորկայի համար են։ Նրանց ամբողջ իմաստությունը տասը ձիու ուժ էլ չէր տա, որպեսզի շարժման մեջ դրվի պետական վիթխարի մեքենան։ Բայց այդ մասին հոգում են ուրիշները—նրանք, ովքեր կանգնած են վարագույրի հետևը։ Մեքենան շարժվում է նրանց շնորհիվ և ժամհարների շնորհիվ։ Գլխավոր ժամհարները Գործերն են և Դրամը։ Քաղաքականության ժամանակն անցել է։ Հիմա թագավորողը էկոնոմիկան է։ Եվ, իհարկե, չի կարելի ասել, թե այդ էկոնոմիկան շատ խելացի է։ Չէ որ նա ամենևին էլ միշտ չէ, որ հանդես է գալիս մարդկային կերպարանքով։ Ամենից հաճախ դա octopus[1] է, անձև ու անանուն հրեշներ, որոնք հազարավոր ձեռքերով ափլփորում են և խավարում ամեն ինչ բռնում են իրենց կույր շոշափուկներով։ Եվ նրանցից այն քչերը, որոնք սովորաբար հակված չեն լույս աշխարհում երևալու և որոնք այնուամենայնիվ միլիարդների հորձանքում դուրս են գալիս մակերես,— նրանք համարյա բոլորը մեր օրերում արհեստական մթերքներ են. նրանք ոչ արմատ ունեն, ոչ սերմ, ոչ նախնիներ ունեն, ոչ հետնորդներ, ոչ որդիներ ունեն, ոչ կոմպանյոն, ոչ ապագա։ Նրանք՝ իրե՛նք և նրանց գործունեությունը դատապարտված են անհետացման։ Այդ պատճառով էլ նրանց սպասածը մի բան է, թե երբ կգա իրենց գերհզորության ժամը—ընդ որում անսահման հզորության։ Նրանք բռնված են ինչ-որ կատաղությամբ։ Իմաստուն «վաղը» նրանց կողմից հաշվի չի առնվում, այդ «վաղը» չի ապահովում նրանց հավասարակշռությունը և տևական կայունությունը, և նրանք կարծես ասում են. «Ինձանից հետո՝ թեկուզ ջրհեղեղ»։ Բայց այն թագավորը, որն այդ ասել է[2],— այդ ցինիկը և կանխատեսը,— գոնե զգացել է ջրհեղեղի մոտեցումը և թաքուն մի կրքով հաշվել է. «Երբ ջրհեղեղը վրա հասնի, ես արդեն չեմ լինի»։ Իսկ այդ չթագադրված թագավորները տեսնում են միայն իրենց «այսօրը»։ Եվ ոչ ավելի հեռուն։ Նրանք ջրհեղեղի առաջ կբացեին բոլոր ամբարտակները, եթե հաշվի առած լինեին, որ մինչև ջրհե-

---

[1] Սովահրեշ (լատ.)։

[2] Ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս XIV-ը։

ղեղին կեր դառնալը, իրենց կհաջողվի ձեռք գցել այդ հեղեղի բերած բեկորները։ Մի՞թե տասը տարի շարունակ նավթի արքան երկակի խաղ չէր խաղում, ռուսական հեղափոխության դեմ բարձրացնելով ռեակցիայի աշխարհը և միաժամանակ ջանալով դաշնակցության մեջ մտնել նրա հետ՝ ընդդեմ այդ աշխարհի։

Տիմոնը Անն-ետային ցույց էր տալիս, ինչ նոր ուժեր են ղեկավարում ժողովուրդներին։ Անսահման արհամարհանքով էր նա խոսում հին պրոֆեսիոնալ պոլիտիկանների մասին և այն մասին, թե ինչպես են նրանք կուրորեն պտտվում կրքերի, նախապաշարմունքների և մեռած գաղափարների նեղ շրջանակում։ Աննետան նրա հետ համաձայնվում էր։ Նոր տերերը գործում էին հներից ավելի հաջող. նրանք մերժում էին հնացած նացիոնալիզմը, նրանք մի կողմ էին շպրտում այդ նացիոնալիզմի ամբողջ ծանր ու տխմար բագաժը. փառամոլությունը, շարոսթյունը, ատելությունը, գոռոզամբտությունը, որոնք հարյուրամյակներ շարունակ ժառանգաբար անցնում էին սերնդից սերունդ։ Նրանք տեղահան էին անում սահմանային սյուները, նրանք տքնում էին աֆյորանների և շահառության ինտերնացիոնալ ստեղծելու վրա։

Բայց հենց առաջին հայացքից պարզ է դառնում, որ հին, ժանգոտած շան վզակապը նրանք փոխում էին շղթաներով, որոնք շատ ավելի ծանր էին։ Նրանք բանտը դարձրին ավելի ընդարձակ, բայց միայն նրա համար, որպեսզի այդտեղ քշեն միլիոնավոր մարդկանց,— ոչ միայն պրոֆեսիոնալ քաղաքագետների այդ խմբերին, որոնք կռվում էին կատակերգության մեջ դերեր ստանալու համար, այլև ստատիստներին, ֆիգուրանտներին, հանդիսատեսներին, ամբողջ հանդեսասարահը։ Եվ ոչ ոք նրանց ձեռքից չի պրծնի։ Ճիշտ այնպես, ինչպես ապագա պատերազմներում բոլորին էլ բաժին կընկնի. և քաղաքացիական բնակչությանը, և կանանց, և ծերերին, և տկարներին, և երեխաներին, այնպես էլ միջազգային կապիտալիզմի օրինակելի բանտում ամեն մեկն իր համարն է ունենալու, այնտեղ չեն հանդուրժի ոչ մի անկախ մարդու... Օ՜, ինքնըստինքյան հասկանալի է, առանց որևէ բռնության։ Պարզապես մեխանիզմը կհասցվի կատարելագործման այնպիսի աստիճանի, որ յուրաքանչյուրն

ստիպված կլինի կամ ենթարկվել, կամ սովից մեռնել։ Մամուլի և կարծիքների ազատությունը կդառնա անցյալ ժամանակների ուրվականների նման մի բան։ Եվ չի մնա մի երկիր, որտեղ հնարավոր լինի թաքնվել հալածանքներից։ Ցանցը կամաց-կամաց կխճճի ամբողջ հողագունդը։

— Ես չեմ ընկնի նրա մեջ— ասաց Աննետան։— Ավելի շուտ առնետների հետ կփախչեմ։ Կկրծեմ օղակները։

— Իսկ ո՞ւր կգնաս, —հարցրեց Տիմոնը։— Ամեն ինչ ցանցով պատված է։ Գնալու տեղ չկա։

— Կա մահ,— առարկեց Աննետան։

— Դա քեզ ձե՞ռ է տալիս։

— Ո՛չ։

Աննետան կատաղել էր։

Տիմոնը, նրա վրա ծիծաղելով, պնդում էր, որ ցանցն ամուր է։ Ոչ մի ճեղք։ Նա նկատի ուներ որոշ բարոյական սկզբունքներ, որոնք դեռ կաշկանդում էին հին քաղաքական նացիոնալիզմը։ Նոր ինտերնացիոնալը, փողի ինտերնացիոնալը, հին իդեալիստական պոռնիկներին թողնում էր շահագործվող ժողովուրդներին և նրանց, ովքեր քաղաքական տեսակետից դեռ բավականաչափ չէին աճել։ Այդ ինտերնացիոնալը գործեր էր բռնում առանց որևէ բան հաշվի առնելու. և բարեկամների, և թշնամիների հետ։ Նա սպեկուլյացիա էր անում պատերազմով և այս կամ այն ժողովրդի կործանմամբ— և քո, և իմ... Վերցնենք թեկուզ և տորպեդաներ պատրաստող բաժնետիրական ընկերությունը։ Այդտեղ միավորվել էին պատերազմի իշխանները, դիվանագիտության մագնատները, հունգարացիները, գերմանացիները. Թիսմարկը, Հոյոշը, մետալուրգիայի անգլո-սաքսոնական բարոնները. Արմստրոնգը, Ուայտհեդը. վարչության նախագահը ֆրանսիական ադմիրալն էր, իսկ այդ ընկերությունը ամբողջությամբ պատկանում է մի լեհանտացու։ Մի քանի կոնդոտիերներ արդյունաբերությունից են, մի քանի գանգրստերներ՝ ֆինանսական աշխարհից։ Նրանց վզերից կախ են ընկած ոչ թե կախաղանվողի պարանները, ինչպես կսազեր, այլ հին Արևմուտքի բոլոր պատվավոր շքանշանների ժապավենները։ Նրանք իրենց խաղը վարում են ոչ

առանց փայլի, բայց վարում են առանց կողմնացույցի, նրանք խառնվում են անգլիական ու ամերիկյան տրեստների և արժեթղթային կոմպանիաների հետ, որոնց ծանր ձեռքը երկու մայր ցամաքներին էլ ճնշում է։ Այդ պրոկոնսուլների հզորությունը, ինչպես և այդ ավանտյուրիստների խորամանկությունը նրանց սովորական մարդ լինելուն չի խանգարում։ Նրանք այնքան չեն ղեկավարում միավորված կամ հակամարտող վիթխարի ուժերը, որքան իրենք են գտնվում նրանց ու գործող մեխանիզմների իշխանության տակ։ Ահա թե ինչու է տնտեսական ուժերի կույր խաղը դառնում էլ ավելի դժվարին։ Նա ենթարկված է մակընթացության և տեղատվության անողոք հերթափոխությանը և իր հետևից մերթ պատերազմ է բերում, մերթ խաղաղություն, մերթ հարստացում, մերթ սնանկացում։

Տիմոնն Աննետային զարմացնում է այն անողոք պարզությամբ, որով նա շոշափում էր աշխարհի այդ տերերի ընդերքը և հաստատում Դրամի հետ նրանց զուգավորման անպտղությունը։ Տիմոնի մեջ գլխավորապես խոսում էր խաղացողը, որն ամբողջությամբ լցված էր դեպի խաղի անմբտությունն ունեցած արհամարհանքով։ Երբ հավակնում ես գրավել հրամանատարական բարձունքները, պետք է գիտենաս, թե դու ի՞նչ ես ուզում այնտեղ անել։ Իսկ նրանց գլխում ոչինչ չկար, բացի հրամանատարելու ցանկությունից, այսինքն, այդ դրամական տուզերի լեզվով ասած, բացի հարստություն դիզելու ցանկությունից։ Հուսանք, որ մի օր նրանց փորը կճղեն։ Թեև Տիմոնի անձնական շահերը կապված էին նրանց հետ և իր ամբողջ կյանքը նրան Պրոլետարական Հեղափոխության թշնամին էր դարձրել, հոգու խորքում նա ոչ առանց դժգոհ բավարարվածության զգացումի էր նայում, թե ինչպես են ՍՍՀՄ-ում լայն համախմբված, կազմակերպված մասսաները միավորվում, որպեսզի նետվեն գրոհի։ Եվ նա անտառների խորքից գոռում էր նրանց. «Այդպե՞ս։ Խփի՞ր դրանց փորին»։ Բայց դա ցասումի բոպեական պոռթկում էր։ Նա չէ՞ր կարող։ Տիմոնը դեմ էր նրանց։ Նա չէր ուզում նրանց հասկանալ, թեև դրան ընդունակ էր։ Նրա կարգի քի՞չ մարդիկ կային, որոնք այդպես ընդունակ էին գնահատել նրանց ըստ արժանվույն,

ինչպես Տիմոնը։ Եթե նա ծննդով պատկաներ նրանց միջավայրին, կարող էր դառնալ նրանց պարագլուխը։ Գուցե հենց այդպիսի մի միտք էլ անցել էր նրա գլխով։ Բայց կյանքը ուրիշ ձևով էր վճիռ կայացրել, անհաջողությունը տեղի էր ունեցել հենց ծնվելու ժամանակ։ Այդ մասին այլևս չխոսենք։ Նա ուրիշ խաղ էր խաղում։ Իսկ խաղն ինչպիսին էլ ուզում է լինի, պետք է հասցնել մինչև վերջը։

Բայց Տիմոնը հասցրե՞ց արդյոք մինչև վերջը։ Ամբողջ հարցը դրանում էր։ Հարմարվելու իր բնորոշ հատկությամբ Աննետան Տիմոնի մասին ունեցած դատողությունների մեջ, որպես նախադրյալ, ընդունեց նրա սեփական տեսակետը։ Նա դեռ չէր ուզում Տիմոնի հայացքներին հակադրել որևէ ուրիշ սոցիալական կոնցեպցիա. եթե անգամ ենթադրել, որ Տիմոնն այդ թույլ կտար Աննետային, Աննետան ինքն էլ այդ շրջանում դեռ բավական կայուն, բավական որոշակի հայացքներ համաշխարհային տնտեսության վերաբերյալ չուներ։ Նրա ինդիվիդուալիզմը օժտված էր լայն թափով, բայց սահմանափակ մտահորիզոն ուներ, և դեռ առիթ չէր ունեցել դուրս գալու նրա սահմաններից։ Նա լավ գիտեր շրջանագծի կենտրոնը—«ես»-ի բուն խորքերը, և բավական վատ՝ շրջանագիծը։ Տիմոնը լայնացնում էր Աննետայի հորիզոնը։ Ու թեև նրա առաջ բացվում էր քիչ մխիթարական տեսարան, բայց և այնպես նրա հետաքրքրվող, ագահ և կրակոտ միտքը ծիծեռնակի նման ձգտում էր այնտեղ։ Աննետան հին աշխարհ չուներ, որը պետք է պաշտպանել։ Եվ ոչ էլ հին զանգակատուն, որի վրա բույն կա։ Նա ոչինչ չուներ—բացի թևերից և ազատ օդից։ (Եվ, իհարկե, ուներ նաև ձագուկ՝ Մարկը։ Բայց Մարկը նույն ցեղատեսակից էր, ինչ որ մայրը, նա կվարվեր ճիշտ նույն ձևով, ինչպես մայրն էր վարվում)։ Այդ պատճառով էլ տվյալ պահին Աննետան միայն նայում էր։ Իսկ նայելու բան կար։ Ի՞նչ ընդհարումներ։ Գազանների ի՞նչ խաղ։ Իսկ ոմանք դեռ գանգատվում են, թե հիմիկվա ժամանակները ձանձրալի են։ Հիմարնե՞ր։ Դարաշրջանը հագեցվա՞ծ է... Ճիշտ է, այնքան էլ հաճելի չէ։ Մի գլուխ մեկնումեկի կաշին քերթում են, և արյունը գետի նման հոսում է։ Բայց և այնպես ինչքա՞ն է հետաքրքիր։ Մարդ իր սեփական վերքերի մասին մտածե-

լու ժամանակ չունի։ Թերևս, միայն ուրիշների՝։ Գրավիչ տեսարա՞ն է... Այո, դա թատերական ներկայացում չի ձեզ համար... Դեկորացիաները շարժվում են, ինչպես «սուրբ Գրաալի Թափորի ժամանակ»[1]։ Բայց շարժվում են ոչ թե միայն դեկորացիաները։ Շարժման մեջ են իմ աչքերը, շարժման մեջ են իմ ոտքերը, ամբողջ իմ «ես»-ը, ամբողջ աշխարհը։ Ես զգում-եմ, թե ինչպես է երկրի պտույտից առաջացած քամին շրփացնում իմ երեսին։ Ո՞ւր է սլանում երկրագունդը։ Ո՞ւր ենք մենք սլանում։ Չգիտեմ... Բայց ի՜նչ արագություն։ Ի՜նչ լավ է ապրելը, երբ կանգնած ես նավաքթին...

Այդ կինը անմիջապես, առաջին իսկ նայվածքից, և շատ ավելի լավ, քան տղամարդիկ, իր հայացքով ընդգրկեց այն շրջանագիծը, որով պտտվում էր տարերքի կողմից քաշվող ու տարվող մարդկային զանգվածը։ Եվ, չփորձելով տարերքին դիմադրել, նա քնազդորեն ձգտում էր խառնվել նրա հետ։ Դրա համար Աննետան պետք է միախառնվեր այն էներգիայի հետ, որը հենց այդտեղ, իր կողքին էր գտնվում։ Եվ մի կողմ շպրտելով այդ էներգիայի բարոյական կամ անբարոյական հատկությունների մասին ամեն մի դատողություն, Աննետան ուզում էր օգնել այդ էներգիային՝ գործողություն դառնալու համար։ Այդ էներգիան Տիմոնն էր։ Ուրեմն թող հենց Տիմոնն էլ մնա Տիմոն ամբողջությամբ։

Բայց նա այդպիսին չէր... Աննետան շատով այդ նկատեց։ Եվ առաջինը, ում այդ անհանգստություն պատճառեց, դա Աննետան էր։ Տիմոնի իրավասության տակ ծառայանի կար։ Այդ ծառայանին նրա մոտ կապված էր, բայց կապվածություն նրա նկատմամբ չուներ։ Իսկ նրա կողքին կանգնած էին միայն մրցակիցները, որոնք ամենից շատ վախենում էին, չլինի թե Տիմոնը ամբողջությամբ ծավալվի։ Բայց նա ինքը քիչ էր մտածում այդ մասին, եթե չհաշվենք մեկ-մեկ տեղի ունեցող բռնկումները։ Այդ հսկան թունավորվել էր իշխանության թույնով։ Հնարավոր չէ առանց պատժի լինել հաղթանակողը մի աշխարհի, որը մինչև ուղն ու ծոծը վարակից քայքայված է։ Եթե քառասուն տա-

---

[1] Ռ. Վագների «Պարսիֆալ» օպերայից (1879)։

րի շարունակ մարդ կռվի այդ աշխարհի հետ, իրենից անկախ ձեռք կբերի նրանից քրտինք, ոջիլ, տիֆ։ Տիմոնը վայելքների ագահ, խանդավառ որոնող էր։ Նա իրեն զսպել չգիտեր։ Իր տոփանքին, իր քմահաճույքներին, իր ատելությանը նա միշտ պետք է գոհացում տար անմիջապես։ Նա ոչ ուզում և ոչ էլ կարողանում էր իրեն զսպել, ինչպես իրենց զսպում էին մի քանի նշանավոր ավանտյուրիստներ, որոնց հետ նա մրցակցում կամ որոնց ընդօրինակում էր. Բազիլը, Նավթի արքան, արքան լուցկու։ այդ մարդկանց արտասովոր հզորությունը մի տեսակ հավասարակշռում էր նրանց ընտանեկան կյանքի խելամիտ չափավորությամբ, ընտանեկան կյանք, որը նրանք աշխատում էին թաքցնել կողմնակի հայացքից։ Տիմոնը նրանց առնետ էր անվանում, անվանում էր կծծի, շալվար մաշող։ Եվ իսկապես էլ, նրանք բուրժուազիայի մարմնի վրա ավելի շուտ մակաճ էին, չարորակ ուռուցք էին, և ոչ թե նոր մարդիկ։ Իսկ Տիմոնը, որը կարող էր նոր մարդ համարվել, թույլ տվեց, որ իրեն կես ճանապարհին կանգնեցնեն. նա մինչև փորը խճճվել էր ջրիմուռների մեջ և թաղվել երերուն ճահիճում։ Եվ Աննետան կատաղում էր, որովհետև նա տարօրինակության աստիճան շահագրգռված էր այդ մարդու ճակատագրով, թեև, ինքնըստինքյան հասկանալի է, ամենաչնչին իսկ համակրանք չէր զգում դեպի նա։ Աննետան հանգիստ չէր կարողանում նայել, թե ինչպես է անիմաստ կերպով կորչում տարերային ուժը, որը կարողացել էր իր ձեռքը գցել հաղթանակը, բայց հիմա բռունցքի սեղմած մատները թուլացնում է ու բաց թողնում այդ հաղթանակը։ Իսկ Տիմոնը նկատեց այդ, և զվարճանում էր, որ քարտուղարուհին ավելի շատ է նրա ճակատագրով հետաքրքրվում, քան նա ինքը։ Տիմոնը դրա համար շնորհակալ էր Աննետային։ Նա ի դեմս Աննետայի գտել էր մի հասարակություն, որը գնահատում էր նրան, նրա ուժը, և դա նրա համար դառնում էր մի խթան, որն ինքը չուներ։ Բայց բոլորը եկավ չափազանց ուշ։

Այո, Տիմոնն ավելի վատ չգիտեր, քան Աննետան, որ ինքն էր մրցակիցներից ավելի խելացի է։ Նա ավելի հեռատես էր նրանցից, նրա հայացքը ավելի տուր էր, ավելի խոր։

Տիմոնը տեսնում էր նրանց թուղթյունները, նրանց ճիգերի անօգուտ լինելը և դա ամեն ինչ լուսաբանող մի երկու-երեք դիպուկ խոսքով բացում էր Աննետայի առաջ։

— Հետո ի՞նչ։

Տիմոնը նայում էր նրա ջղայնորեն ցնցվող բերանին։

— Ասա՛, ասա՛։ Ես տեսնում եմ, դու քաջերից ես։

— Դուք ինչո՞ւ չեք ուզում ձեր ուսը մի անգամ թափ տալ։

— Նրանց օժանդակելու համա՞ր։

— Նրանց հրելու և ցած գցելու համար։ Որպեսզի դո՛ւք կառուցեք նրանց տեղը։

— Ինձ տեղամաս ցույց տուր։

— Ամբողջ հողագունդը։

— Ճահիճ է։

— Իսկ մի՞թե դուք ձեր ձեռքերով ընդունակ չեք հող լցնել այդ ճահիճը, չորացնել այն, եթե դա պետք է։ Եվ եթե անգամ ամեն ինչ ջրի մեջ լիներ, մի՞թե մարդիկ իրենց կացարանները և նոր կյանքը չէին կառուցի ցցափերանների վրա։

— Իսկ ինչի՞ համար։ Շերեփուկնե՞ր աշխարհ բերել, ինչպես ճահճուտի այն բնակիչները։ Ոչ, ոչ, շերեփուկները բավական են։ Ես չեմ ուզում ավելացնել նրանց թիվը, չեմ ուզում հավերժացնել իմ ցեղը։ Մի կյանքն էլ բավական է։ Չեմ ուզում ամեն ինչ սկզբից սկսել։ Բայց ինչ իմ կյանքին է վերաբերում, ես նրանից կմզեմ բոլոր հյութերը։

— Իսկ հետո՞։

— Իսկ հետո՝ քամակի մեջ։

Աննետան, նոթերը կիտած, զայրացած, շուռ եկավ։

— Հը, լսողությունդ վիրավորեցի՞,— ծաղրանքով հարցրեց Տիմոնը։

— Ոչ։ Պարզապես սիրտս խառնեց։

Աննետան հայացքը սևեռեց ուղիղ նրա դեմքին.

— Արժի իսկապես, որ մարդ դատապարտի ուրիշներին և արհամարհի նրանց այն բանի համար, որ իշխանությունն իրենց ձեռքն են վերցնում, ի վիճակի չլինելով օգտվել նրանից, և նույն ձևով էլ ինքը վարվի։

— Բայց ես որոշ բաներ տեսնում եմ, իսկ նրանք, պայթեն էլ, ոչինչ չեն տեսնի։

— Իսկ ի՞նչ հատկապես։

— Նրանց դատարկությունը։ Եվ իմը։ Եվ քոնը։ Համընդհանուր դատարկությունը։

— Խոսեք ձեր մասին, եթե ուզում եք,— չոր-չոր ասաց Աննետան։— Բայց ոչ իմ մասին։

— Ախ, ահա թե ինչ, —բացականչեց Տիմոնը, ակնհայտ հետաքրքրված։— Դու առանձնահատուկ վիճակի հավակնություն ունես։

—Դա արդեն իմ գործն է։

— Իսկ ինձ թողնում ես իմ վիճակո՞ւմ։

—Այդ դուք ինքներդ եք ուզում։ Ո՞նց չեք ամաչում։ Ձեր ուժը կպատի կռվի բռնվել կյանքի բոլոր վտանգների հետ։ Իսկ դուք խայտառակ կերպով սայթաքում եք, կպչելով դատարկությանը։ Պֆֆ... (Աննետան փչեց)։ Դատարկությունը նույնպիսի թշնամի է, ինչպես մնացած ամեն ինչը։ Նրա վիզն ոլորեք... ծիծաղո՞ւմ եք... Դուք ձեր զենքը այդ դատարկությա՞նն եք հանձնում։ Դուք զզվելի եք ինձ համար։

Տիմոնը, շատ գոհ, աչքը չէր հեռացնում զայրացած կատվից, որը թվում էր, պատրաստ է նրա երեսին թքելու։ Տիմոնը ոտից գլուխ նայեց Աննետային։

— Ափսոս, —ասաց նա,— դու արդեն այն հասակում չես որ ընդունես իմ սերմը։ Եթե՞ոչ ես, ապա, գուցե, այդ սերմը տար այն մարտը, որն այնքան քեզ հրապուրում է։

— Ես ձեր կարիքը չունեմ։ Ես իմ սերմն ունեմ։ Եվ հուսով եմ, որ այդ սերմը պայքարը կհասցնի մինչև վերջը։

— Դու տղա ունես։ Ճիշտ է։ Նրան ինձ մոտ բեր։

— Ոչ։

Աննետան վճռական ցնցեց գլուխը։

— Ես արժանի՞ չեմ,— հեգնեց Տիմոնը։

— Ոչ,— կրկնեց Աննետան։

Տիմոնը փոթկացրեց։

— Դու ինձ դուր ես գալիս, —ասաց նա։— Դու վախկոտներից չես։ Ես կուզեի այդպիսի կին ունենալ։ Բայց ոչ, ուշ է։ Դու գնացքից ուշացել ես։

— Ես ուրիշ ճանապարհով եմ գնում,— ասաց Աննետան։

— Այդ դեպքում միասին գնանք։ Այ կտեսնես. ես դեռ կկռվե՞մ։ Թող Դատարկությունը, անանուն վախկոտը, անցնի, գնա։ Ես ծեծելու եմ նրա գարշելի զավակներին։

Եկավ ծանր աշխատանքի ժամանակը. փոսեր էին փորվում, դրվում էին ականներ, հողապատնեշներ էին կանգնեցվում,— ամեն ինչ սպասում էր, թե փողհարը երբ գրոհի ազդանշան կտա... Տիմոնը, այնուամենայնիվ, իր քարտուղարուհու ասածներից խոցված, նորից դուրս եկավ ասպարեզ և քաջաբար կռվեց իր ուժեղ մրցակիցների հետ... Իսկ Աննետան այդտեղ ի՞նչ գործ ուներ։

Այդ հարցն Աննետան ինքն էր տալիս իրեն այն հազվադեպ րոպեներին, երբ տերը նրան հանգստանալու հնարավորություն էր տալիս։ Բայց այդ րոպեներին Աննետան այնպիսի՞ հոգնածություն էր զգում, նա պետք է կուշտ քներ այնքան անքուն անցկացրած գիշերներից հետո։ Գրողի ծո՞ցը թող գնան մտորումները։ Թողե՞ք ես քնեմ։ Վաղը կխոսենք...

Բայց մյուսը, նա, որով Աննետան այնքան հպարտանում էր Տիմոնի առաջ, Մարկը, չէր ուզում սպասել մինչև վաղը։ Նա մորը թույլ չէր տալիս քնել։ Այն, որ նրա մայրը դարձել է վստահելի անձ Տիմոնի, գայլաձուկ Տիմոնի, բանդիտ Տիմոնի քարտուղարուհին, ապշեցնում էր Մարկին, նրա մեջ կատաղություն նոպա էր առաջացնում։ Մարկն այդ իմացել էր վերջերս—նա Աննետայից առանձին էր ապրում և նեղացած էր մորից։ Տիմոնի հետ ունեցած մոր հարաբերությունների մասին Մարկը իմացել էր ոչ թե աղքատների շրջանում, որտեղ ինքը հարկադրված էր լինում ընկնել մի կտոր հացի հետևից։ Նա այդ իմացավ մի բացառիկ ողբերգական րոպե։

Ինքնասպան եղավ տպագրիչ Մասսոնը, Մարկի ընկերը։ Խեղճին քայքայում էր սիֆիլիսը և հեղձուցիչ գազերից ստացած թունավորումը—երկու դժբախտություն, որ նա բերել էր պատերազմից։ Նրա քայքայված օրգանիզմը ի վիճակի չէր տանելու ներքին կյանքի կատաղի՞ ճնշումը։ Հիասթա-

փումներն ու զայրույթը,— կրակին յուղ էին լցնում։ Մասսոնը արյուն էր թքում, միտինգներում բղավելով մինչև խռպոտվելը։ Նա ճգնում էր աթափեցնել պատերազմի անտարբեր մասնակիցներին, իսկ նրանք վրդովված շրջվում էին Մասսոնից։ Նրանք զայրանում էին Մասսոնի վրա, չէ որ նա այդ մասնակիցներին հիշեցնում էր այն մասին, ինչը նրանցից յուրաքանչյուրը կգերադասեր մոռանալ, և շատերը հայհոյանքի տակ թաքցնում էին իրենց ըմբոստացման զգացումը։ Մասսոնն այդ ժողովներից հեռանում էր ուժասպառված, ցավից շնչահեղձ, անզոր կատաղությունից նրա ուղեղը այրվում էր։ Ի լրումն այդ ամենի, նրան խելագարեցնում էր նաև անքնությունը։ Առավելագույն հստակությամբ կարծես հալյուցինացիայի մեջ, նա տեսնում էր պատերազմի վերադարձը, որն անխուսափելի էին դարձնում կեղծավոր և կողոպտչական հաշտության պայմանագիրը և շարիքը խրախուսող ֆրանսիական ժողովրդի անտարբերությունը։ Նա չէր կարողանում հաշտվել դժոխքը վերակենդանացնելու մտքի հետ, դժոխք, որից նա դուրս էր պրծել ընդամենը երեք տարի առաջ։ Բարոյական դավաճանությունը, որին գնաց նրա ժողովուրդը, նրա գոյությունը զրկում էր ամեն տեսակի իմաստից։ Նա ոչինչ անել չէր կարողանում։ Իսկ եթե անգամ կարողանար, ապա ո՞ւմ համար նա կսկսեր կռվել։ Այդ դավաճանների համար։ Նրանց համար, ովքեր դավաճանել էին իրենց գործի՞ն, իրենց դասակարգի՞ն։ Այդ վախկոտնե՞րի համար։ Մի անգամ գիշերը, երբ Նրան խեղդում էին հազն ու հուսահատությունը, նա հին զինվորական դանակով կտրեց իր կոկորդը։

Մարկը նրան գտավ պառկած ներքնակի վրա, որն արյունից սպունգի նման ուռել էր։ Մասսոնից մնացել էր միայն թաղանթը։ Ջղաձգությունից ծռվել էր նրա բերանը, որը դեռ շարունակում էր նզովել կենդանի մնացածների դավաճանությունը...

Եվ հենց այդ օրն էր, որ Մարկը, իր տնից ոչ այնքան հեռու, հանդիպեց մորը։ Աննետան գալիս էր որդուն այցելության։ Մարկը նրա դեմքին չտեսավ ոչ հոգնածության կնիք, ոչ աչքերի տակի շրջանակներ. նա տեսավ մոր ժը-

պիտը։ Աննետան որդու համար համերգի երկու տոմս էր բերում և նախապես ուրախանում էր, որ Մարկի հետ լավ համերգ է լսելու։ Երջանիկ, արագ քայլելուց հեալով, նա որդուն հաղորդեց այդ մասին։

Մարկը տեղից ցատկեց, ծաղրանքով նայեց մորը և, ձեռքերը խրելով գրպանները, ասաց. «Ո՛չ»։ Աննետան չհասկացավ, թե բանն ինչումն է,— նա կարծեց, թե Մարկը ինչ-որ կապ ունի, որի մասին նա չի ուզում մորը պատմել։ Աննետան զիջողաբար ասաց.

— Եթե դու ուզում ես ընկերներիդդ որևէ մեկի հետ գնալ, երկու տոմսն էլ վերցրու, տղա։ Ես մի ուրիշ անգամ կգնամ։

Մարկը մոր ձեռքից ճանկեց տոմսերը, ճմռթեց և շպրտեց առուն։ Իրեն զսպելով, որպեսզի չբղավի, Մարկը ֆշշացնելով ասաց.

— Ես քեզանից ոչինչ չեմ ուզում։

Աննետայի ժպիտը սառեց, սիրտը ճմլվեց։ Մարկը նրան թույլ չտվեց խոսել.

— Ոչինչ չեմ ուզում, ինչ այդ սրիկայից է գալիս, այդ մարդասպանից... Ես գիտեմ դու ում հացն ես ուտում...

Աննետան արդարանալու փորձ արեց.

— Տղա, մի՛ դատիր, առանց ինձ լսելու... Ես ազնվորեն եմ վաստակում իմ հացը...

Նա քնքշորեն բռնեց որդու ձեռքը։ Մարկը թափով ձեռքը խլեց նրանից։

— Ինձ ձեռք չտա՛ս։

Աննետան նայեց Մարկին, որին ջղային մի դող էր համակել։

—Տղաս, դու խելագարվե՞լ ես։

Մարկը բղավեց (նա նման էր կատաղած շան, որը դունչը ցցած գոմռում է), ճչաց ուղիղ մոր երեսին, որպեսզի անցորդները չլսեն.

—Քո ձեռքերն արյունո՞տ են։

Նա մեջքով շրջվեց դեպի մայրը, մեծ-մեծ քայլերով հեռացավ։

Աննետան, ձեռքերը կախ, քար կտրած մնացել էր կանգնած և նայում էր նրա հետևից։ Ապշահար, նա ջանում էր իր պարզ հայացքով թափանցել ատելության այդ պայթյու-

նի մեջ և այնտեղ նկատում էր fas atgue nefas[1]— տարրերը... Թաքնված խանդ... Նա դժվար էր հասկանում այդ մելոդրամատիկ հարձակումը։ Աննետան նայեց իր ձեռքերին— մեքենագրուհու ձեռքերին. նրանց վրա թանաք էր և ոչ թե արյուն։ Նա չէր տեսել Մասսոնի արյունը, որի մեջ կեղտոտվել էին իր որդու ձեռքերը... Աննետան տխուր ժպտաց, տուները թոթվեց և գնաց...

Եթե Մարկն իմանար, թե մայրն ինչ փոխհարաբերություններ մեջ է Տիմոնի հետ։ Բայց ինչպես բացատրես նրան։ Արդյո՞ք այդ հարաբերությունները բավական պարզ էին Աննետայի համար։ Ի՞նչ էր նա անում այս թիանավում, ծովահենների իր համար խորթ այս պատերազմում, գիշատիչների միջև, որոնք կռվում էին տիրանալու համար երկրին, ջրին և օդին, որոնցով ապրում էին նա, նրա որդին և միլիոնավոր համեստ աշխատավոր մարդիկ։ Աննետան ուզում էր տեսնել։ Նրա աչքերը իրեն գայթակղության մեջ էին գցել, ու թեև նրա համար զզվելի էր, բայց և այնպես նա ներգրավվել էր խաղի մեջ։ Երբ Աննետան մտածում էր այդ մասին (ոչ թե ցերեկը—ցերեկը մտածելու ժամանակ չկար։ Շատ հազվադեպ գիշերները. հոգնությունից նա քնում էր, ինչպես հարբածը։ Ոչ, հազվադեպ, ժամանակ առ ժամանակ, անքուն րոպեներին... Սարսափ, սոսկում... «Ես ի՞նչ եմ անում... Ո՞ւր եմ գնում ես...»), երբ նա մտածում էր այդ մասին, նա ինքն իրեն թվում էր ջունգլիներ մտած հետախույզ։ Հետքագետը համաձայնություն կնքեց խոշոր գազանների հետ և թաքնվում է նրանց թիկունքում։ Նա հետևում է հրեշների մարտերին։ Նրա ճակատագիրը կապված է սոսկալի գազանի ճակատագրի հետ, որն իր համար ճանապարհ է գցում պատի պես կանգնած անտառի միջով, և ոտքերով տրորում է վագրերին ու վիշապներին։ Իսկ Աննետան գազանին բղավում է. «Վտանգը աջից։ Վտանգը ձախից։ Կնճիթդ բարձրացրո՛ւ։ Ճզմի՛ր։ Խփի՛ր»։ Եվ ամեն անգամ նա մի մազաչափ է հեռու լինում այն բանից, որ ծանր թաթը չճզմի իրեն... Վտանգի մշտական զգացումը Աննետային ազատում է նրա սովորական նրբանկատությու-

[1] Թույլատրելիի և անթույլատրելիի (լատ.)։

նից։ Նա միայն մտածում է. «Միայն թե անտառից դուրս գալ...»։ Իսկ այդ Անտառում,— հիմա նա այդ հասկանում է,— խճճվել է ոչ թե միայն նա, այլև ամբողջ Եվրոպան, ամբողջ աշխարհը։ Եվ այն ժամանակ նա կգա փղի հզոր մսեղիքի և ժանիքների ուժը, այն փղի, որի հետևից ինքը քայլում է։ Աննետան ժամանակ չունի նրան դատելու, ինչպես կդատեր, եթե ջունգլիներից դուրս եկած լիներ։ Նա ժամանակ չունի բարոյականության համար։ Նրան չի կարելի ետ ընկնել հակայական ոտքերից։ Անուշադրության կամ թուլության մի վայրկյան—և նա հոշոտված կլինի թափառող գիշատիչների կողմից։ Աննետան քայլում է, քայլում, բայց նա տեսնում է և հիշում։ Նա դեռ հաշիվ կմաքրի իր և աշխարհի հետ։ Հետո...

Նա հենց սկզբից համոզված էր, որ վաղ թե ուշ որդին իրենից բացատրություն կպահանջի։ Եվ պատրաստվում էր դրան։ Աննետան Մարկին չէր ասի (այդպիսի բաները չեն ասում), որ երբ անզոր մարդկանց ամբոխի մեջ, մարդիկ, որոնք միայն կիսով չափ, մեկ հազարերորդականով են մարդիկ, որոնք իրենցից ոչինչ չեն ներկայացնում, ոչինչ չեն անում, ոչինչ չեն կարողանում ուզել և չեն կարողանում գործել, կնոջ բախտը բերում է հանդիպելով ամբողջական ուժի, որը ծնված է բարու և չարի իմացության ծառից, այդ կինը միշտ Կոչ է լսում, հենց այն Կոչը, որից սկսվել է մեծ ճիգը, որից սկսվել է մարդկության պատմությունը։ Նույնիսկ ամենաողջախոհ կինը, նա, որը տալիս է ոչ թե իր մարմինը, այլ հոգին,— նույնիսկ նա էլ է իրեն առաջարկում այն տղամարդուն, որը բեղմնավորում է, որը ուզում է և որը գործում է։ Այդ կինն էլ հույս ունի նրա էներգիան մտցնել որոշակի հունի մեջ, հույս ունի ուղղություն տալ այդ էներգիային... Եվ բացի դրանից—այդ արդեն ավելի համեստ է—այսպիսի զգացում է լինում, լավ աշխատավորուհու զգացում. ուզածդ հանձնարարած գործը պետք է լա՛վ արված լինի, նա հրապուրվում է այդ գործով։ Ձեռքի տակ ունենալ այդպիսի Տիմոն, նրա էներգիան ու նրա հնարավորությունները և ինչ-որ մի անզոր նրբանկատության պատճառով հրաժարվել նրանից—ոչ, այդ դեպքում նա Աննետան չէր լինի։ Լավ աշխատավորուհին աշխատանքը ձեռքից բաց

չի թողնի... Աննետան այդ բոլորը Մարկին չասաց։ Նա հիանալի գիտեր, որ նման բացատրությունները իր որդուն, իր խիստ և անհանդուրժող որդուն ոչինչ չեն բացատրի։ Բայց նա կարող էր Մարկին ասել, թե հատարակությունն ինչ օգուտ կունենա, եթե այդպիսի մարդը, ինչպիսին Տիմոնն է, ուզենա պայքարել, եթե այդպիսի ուժին լավ ուղղություն տրվի։ Աննետան կարող էր որդուն ասել, որ իր ծառայությունը Տիմոնի մոտ, գուցե և, անօգուտ չէ աշխատավոր մասսաների համար, անկախ մտքերի համար... Նա բավական տաք վեճ էր կանխատեսում Մարկի հետ, բայց այդպիսի պայքարն չէր սպասում։ Ինքը Մարկն էլ այդ չէր կանխատեսում։ Նրան պաշարել էին տարերային ուժերը, որոնք թափառում էին նրա շուրջը և նրա հոգու խորքում։ Եվ հիմա նրանք արդեն Մարկին թույլ չէին տալիս վերանայել իր դատավճիռը։

Աննետան նրան սիրալիր մի երկտող գրեց, առանց ակնարկելու նրա կոպտությունը. նա անհանգստանում էր Մարկի առողջության համար և խնդրում էր, որ գա։ Աննետան ուզում էր որդու հետ անկեղծորեն խոսել։ Եվ եթե նրա բացատրությունները որդուն չբավարարեին, Աննետան հանուն նրա կզոհաբերեր Տիմոնի մոտ ունեցած իր դիրքը։ Բայց նա իրեն մեղավոր չէր ճանաչում, ինչպես, հավանական է, Մարկն այդ կպահանջեր իր խստության դեպքում,— Աննետան զղջալու ոչինչ չուներ։ Իսկ Մարկին չէին հետաքրքրում ոչ մոր զղջումը, ոչ արդարությունը, և ոչ էլ նկատառումները... Ո՛չ մի խորամանկություն։ Նա վճռականորեն պահանջում էր, որպեսզի մայրը անմիջապես, առանց ավելորդ խորհրդածությունների, կապերը խզեր մի մարդու հետ, որին ինքն պատում էր,— այն ժամանակ նա՝ Մարկը, կհասկանա, որ մայրն իրենից ներողություն է խնդրում։ Մարկը նրան ուլտիմատում ուղարկեց երեք հրամայական տողով, առանց որևէ սիրալիր խոսքի։ Աննետան կարդաց, հոգոց հանեց և ժպտաց—այս անգամ արդեն խիստ ժպիտով։ Նա նույնպես ուներ իր հպարտությունը։ Նա չէր ենթարկվում ոչ մի պահանջի։ Աննետայից ամեն ինչ կարելի էր ստանալ, եթե միայն դիմեին նրա մտքին կամ սրտին։ Իսկ հրամաններով ոչինչ ստանալ չէր կարելի։ Աննետան

փակեց նամակը և առանց պատասխանի թողեց։ Եվ շարունակում էր իր ճանապարհը ջունգլիներով, մամոնտի հետևից, որը նրա համար կենդանի վահանի դեր էր կատարում... «Երբ դու ուզես ինձ հետ քաղաքավարի խոսել, իմ սիրելի Մարկ, ես կսպասեմ քեզ։ Իսկ ինձ մի՛ սպասիր»։

Մարկը նույնն էր անում. սպասում էր... Երկուսդ էլ կարող եք սպասել։ Դուք երկուսդ էլ հավասարապես համառ գլուխներ ունեք։ Ոչ մեկդ չի ասի. «Ես սխալվել եմ»։

Բայց Տիմոնը չէր սպասում։ Հարկավոր էր նրա հետևից հասնել։ Ժամանակ չկար զուր վիճաբանությունների, խղճի դիմելու համար։ Պետք էր պրկել բոլոր զգացումները՝ ետ չընկնելու համար... Գնա՛նք։ «Ո՞ւր ես ինձ տանում»։— «Գնա՛նք, գնա՛նք։ Հետո՞ կիմանաս...» Բայց մի՞թե ինքը գիտի։ Նույնիսկ եթե չգիտի էլ, նա անսխալ հոտառություն ունի։ Դա միայն բնազդ չէ։ Տիմոնը կյանքի բազմաթիվ դասեր է կուտակել։ Նա դրանք վերցրել է իր անձնական փորձից և գրքերից. նա կարդում էր անհամեմատ ավելի շատ, քան կարելի էր ենթադրել։ Նա գրքերը կուլ էր տալիս։ Բայց ավելի մեծ ագահությամբ նա մարդկանց էր ներծծում իր մեջ։ Նա հասկանում էր նրանց մինչև վերջը։ Առաջին հայացքից նա արդեն գիտեր, թե ամեն մեկն ինչ է իրենից ներկայացնում, գիտեր նրա թուլությունները, նրա հնարավորությունները և այն, թե ինչքանով կարելի էր նրան գնել։ Նա ոչ մի հարգանք չէր տածում դեպի կենդանիները, որոնք զրահ չունեին, թուլամորթ էին, անզեն էին։ Նրա աչքում դրանք ամենաստորին կարգի էակներ էին։ Նա առանց խղճի խայթի ի չարն էր գործադրում դրանց։ Իսկ ինչ առողջներին է վերաբերում, այնպիսիներին, ինչպիսին ինքն է, ապա այդտեղ արդեն դանակներով մենամարտ էր։ Այդպիսիների հետ ամեն ինչ թույլատրելի էր, ուզածդ զենքը։ Եթե միայն ծեր Եվրոպան հասած լիներ (իսկ նրան հոտացնում էին, ինչպես հոնը ծղոտի մեջ), նրանք մի միավորով չէր, որ կարող էին Չիկագոյի գանգստերներից առաջ անցնել։

Բայց Աննետային նա հարգում էր—գլխավորապես այն պատճառով, որ Աննետան նրան անօգուտ խրատներ չէր կարդում։ Տիմոնն զգում էր, որ Աննետան աննկուն է, անմատչելի, և այնուամենայնիվ նախապաշարմունքներից

գերծ է։ Աննետային ոչնչով չէր կարելի շփոթմունքի մեջ գցել։ Նա ամեն ինչի նկատմամբ իր տեսակետն ուներ, և առաջարկություններ թույլ չէր տալիս։ Ընդսմին նա չէր վկայակոչում ինչ-որ սկզբունքներ։ Նա հենակների կարիք չուներ—ոչ բարոյական, ոչ կրոնական։ Նա կանացի աչքեր ուներ, հպարտ ու հանգիստ։ Նրանք չէին թարթում։ Չէին ստում—ոչ իրեն, ոչ նրան, ում մեջ թափանցում էր նրանց հայացքը։ Եվ այն, որ այդ աչքերին խորթ էին պատրանքները, ամենևին չէր խանգարում Աննետային լինել կենսախինդ ու հաստատակամ։ Նա սիրում էր կյանքը, քայց չէր համաձայնվի (Տիմոնը դրանում համոզված էր), որ իր կյանքը թեկուզ և մի ժամով երկարացնեն, եթե դրա համար նա հարկադրված էր լինելու զոհաբերել իր իրավունքները։ («Նրա իրավունքները»։ Տիմոնը ծիծաղում էր. «Ես կարող էի դրանք ճզմել երկու մատով...»։ Բայց նա գիտեր, որ եթե անգամ Աննետան ճզմված լիներ, ապա նրա հպարտ և հանդուգն հայացքը կմնար, և այդ հայացքը մեղվի նման կխայթեր իրեն)։ Պի՞նդ կնիկ է։ Նա պայքարի համար ավելի վատ չէ զինված, քան Տիմոնն ինքը... Բայց Աննետան մտադրություն չուներ կռվելու իր համար, միայն իր համար։ Նա կին էր։ Պայքարով շահագրգռվելու համար նրան տղամարդ էր պետք, որի համար կարող էր կռվել. որդի, սիրեկան կամ, եթե այդպիսիները չկան, տեր։ Տղամարդ, որի հետ նա մի ամբողջություն կկազմեր... Այդպես էր, իրեն բնորոշ կոպտությամբ, դատում Տիմոնը Աննետայի մասին։ Աննետային կվրդովեր նման վիրավորանքը։ Բայց Տիմոնն այստեղ վիրավորական ոչինչ չէր տեսնում։ Նա Աննետային գնահատում էր որձի աչքերով, որի համար կինը արժի այն, ինչ նա արժի միայն տղամարդու համեմատությամբ։ Կինը չի կարող ինքն իրեն գոյություն ունենալ։ Նա ստեղծված է պայքարի համար և այդ պատճառով էլ կարիք է զգում տղամարդու, որը նրան պայքարի կտանի։ Այդպես անվտանգ ածելու շեղբն է փնտրում կոթ և այդ կոթը բռնող ձեռք։ Խորհրդածելով այդ մասին, Տիմոնն ակսում էր էլ ավելի հարգել Աննետային։ Նա ածելու շեղբը գնահատում էր որպես գիտակ։

Միայն այդ պատճառով էր, որ նա Աննետայի հետ վարվում էր հոգատարությամբ։ Տիմոնը բռնակալություն չէր անում։ Աննետայի ներկայությամբ նա ստիպված էր հետևել իր գործողություններին։ Աննետայի ներկայությունը Տիմոնի համար արգելակ էր. այդ ներկայությունը նրան կանգնեցնում էր որոշ վտանգավոր արարքների ուղղակի եզրին։

Սակայն բնությունը կանգ է առնում միայն թռիչք կատարելու համար։ Իսկ եթե այդ թռիչքը կատարում է Տիմոնի բնությունը—ուրեմն, զգուշացի՛ր։

Տիմոնի արատների բավական մեծաթիվ հավաքածուի մեջ էր գտնվում նաև հարբեցողությունը։ Նա անզգայուն էր նրբահամ թույների նկատմամբ։ Նրա համար բնորոշ էր բեռնակրի կոպիտ անչափավորությունը, որը միատեսակ հեշտությամբ է կարողանում և՛ գինին տանել, և՛ տակառը։ Նա երբեք կատարյալ սթափ չէր լինում, և Տիմոնի հանճարը, եթե նրա նկատմամբ կիրառելի է այդ արտահայտությունը, փթթում էր միայն հարբած վիճակում։ Բայց Տիմոնը բավական լավ էր տիրապետում իրեն և գիտեր մինչև ինչ աստիճան, մինչև որ սահմանը ինքը կարող է հասցնել իր տակառում եփ գալը coram populo[1], որպեսզի դա ոչ միայն վնաս չհասցներ նրա դեմագոգիկ ելույթներին, այլև նույնիսկ օգուտ տար նրանց. նա օգուտ էր հանում իր գինու գոլորշիներից, ինչպես նա, ով մեր քմահաճույքներին ծառայեցրեց՝ ջրի գոլորշին։ Բայց ժամանակ առ ժամանակ նա պետք է կաթսան դատարկեր ավելորդ ճնշումից, այլապես այն կարող էր պայթել։ Սովորաբար Տիմոնը դա կատարում էր դռները փակ, հնարավորության սահմաններում Փարիզից դուրս, աչքից հեռու և ծածուկ տեղերում. եթե անգամ որոշ տհաճություններ էին տեղի ունենում, դա կարգավորում էին։

Իր սեփական, դեռ չմոռացված, բալկանյան փորձով Աննետան պատկերացնում էր, թե այնտեղ ի՞նչ է կատարվել։ Դրան ավելանում էր նաև այն, որ տիրոջ բացակայությունների ժամանակ խմբագրության ականջին էին հասնում բավական շատ լուրեր,— ճիշտ է, վախկոտ ու նա-

---

[1] Ժողովրդի ներկայությամբ (լատ.)։

խանձոտ, որոնք ամեն՝ ինչ պատկերում էին չափազանցված ու խեղաթյուրված ձևով։ Տերը վերադառնում էր մռայլ, հեղգացած, ինչպես հենց նոր պատռված ամպը, որը նորից է խիտ գոլորշիների ձևով բարձրանում երկիրն ի վեր։ Աննետան, թշնամանքով, սառը, ինչպես սառույց, հոնքերը կիտում էր, փորձելով իրեն ներկայացնել որպես անտարբեր մեքենա, որը կատարում է այն, ինչ տերը հանձնարարում է։ Տիմոնը հիանալի գիտեր, Աննետան ի՞նչ է մտածում։ Դա նրան զվարճություն էր պատճառում։ Տիմոնը դեմ չէր լինի նրան խոսակցության մեջ քաշել։ Բայց Աննետան իրեն զգույշ էր պահում։ Դուռը բացելն անխելամտություն կլիներ։ Եթե նա նույնիսկ մտներ, ապա դեռ հայտնի չէ, ինչպես դուրս կգար։ Բայց հենց այդ նույն բանն էլ Աննետային դրդում էր։

Մի քանի ամիսների ընթացքում երկուսն էլ փոխադարձ լուռ համաձայնություն էին պահպանում, ըստ որի դուռը նրանց միջև պինդ փակված էր։ Տիմոնը չէր ուզում Աննետային նրա սուր հոտառությամբ մտցնել իր կյանքի այդ քնագավառները, իր որսորդական արգելոցները։ Աննետան նրան նեղություն կտար։ Տիմոնը նրան խնայում էր... Իսկ հետո, կամաց-կամաց հավատ ընծայելով նրան, Տիմոնն սկսեց նրան ավելի քիչ խնայել։ Նրա մեջ ցանկություն առաջացավ անել հենց այն, ինչից ինքը խուսափում էր. Աննետայի քիթը խրել այդ ճահճի մեջ և նայել, թե դեմքը ոնց է ծամռոտվում։ Փաստորեն դա հենց նույն այն տանջալից, անհաղթահարելի տենչանքն էր—ստորացնել այն, ինչ գաղտնաբար հարգում ես և որից դու ինքդ հրաժարվել ես...

Սկզբում Տիմոնն սկսեց հրահրել Աննետային։ Աննետան համառությամբ լռում էր։ Տիմոնը փորձում էր նրա մեջ հետաքրքրություն առաջացնել, շոշափել նրա ինքնասիրությունը։ Նա Աննետային ասում էր.

— Ի՞նչ է, վախենո՞ւմ ես։ Դերադասում ես չտեսնե՞լ։ Դե լսե՞ր կե։ Առաքինությունը շատ ավելի հարմար է... Այդտեղ արդեն գայթակղվելու վտանգ չկա...

— Այդ ինչո՞վ գայթակղվել։ Եվ ումո՞վ,— արհամարհանքով առարկում էր Աննետան։

— Դու չափազանց ինքնավստահ ես։ Այդպիսի ինքնա-

վստահությունը մի կոպեկ էլ չարժի։ Ես կուզենայի քեզ տեսնել, երբ գլուխդ կորցնում ես։

— Դա էլ է եղել։ Բայց, փառք աստծո, ես արդեն դուրս եմ եկել այդ հասակից։ Ես չեմ ուզում վերադառնալ։

— Բայց եթե դու իսկապես ցանկապատի վրայով անցել ես, ինչո՞ւ չնայես, թե ինչ է արվում նրա այն կողմը։ Ինչի՞ց ես վախենում։

Աննետան նրա վրա մռայլ մի հայացք գցեց։

— Դուք ինքներդ գիտեք։

— Հնարավոր է։ Բայց ես կուզեի քեզանից լսել։

— Ես վախենում եմ ձեր նկատմամբ արհամարհանք զգամ։

Տիմոնը կոպիտ քրքջաց։

— Իսկ ես կարծում էի, թե դու ինձ վաղուց ես արհամարհում։

— Այո, բայց ես վախենում եմ արհամարհանք զգալ այն աստիճանի, որ այլևս չկարողանամ տանել։

Աննետան նստել էր, կզակը հենած բռունցքներին։ Նա զվարճացնում էր Տիմոնին... Եվ այնուամենայնիվ Տիմոնը նրան ապտակ տալու ցանկություն զգաց։ Նա տեղից վեր կացավ և սկսեց կաբինետում քայլել, որպեսզի հաղթահարի այդ ցանկությունը։ Նա կանգ առավ Աննետայի առաջ։

— Այսպես, ուրեմն, ես ուզում եմ համոզվել, ինչ աստիճանի... Հաջորդ անգամ, երբ ես գնամ կերուխումի, քեզ հետս կտանեմ։

— Ոչ, ոչ, պետք չէ։ Խնդրում եմ ձեզ... այդպիսի բաներով կատակ չեն անում... Ես ասացի առանց մտածելու, ես ձեզ վիրավորեցի, ներեցեք ինձ...

Տիմոնը քմծիծաղեց, և նրանք ձեռնամուխ եղան աշխատանքի։ Աննետան որոշեց, որ նա մոռացավ։ Բայց մի երկու շաբաթ անց Տիմոնը նրան ասաց.

—Այսօր դու տանը չես քնի։ Ինձ հետ կգաս Լա-Գարեն, ավտոմոբիլով։

Աննետան բողոքեց։ Տիմոնը ոչինչ լսել անգամ չուզեց։

— Տանը քեզ ոչ ոք չի սպասում։ Ես հրամայում եմ։ Դու ինձ պետք ես։

— Դա լուրջ բան է,— ասաց Աննետան։— Լ՛ավ մտածեք։ Դա կարող է շատ թանկ նստել և ձեզ, և ինձ վրա։

— Եվ ի՞նձ,— ծաղրանքով ասաց Տիմոնը։

— Այո, ձեզ վրա նույնպես։ Ես կարծում եմ, դուք այնքան հիմար չեք, որ չնչին բանի պատճառով կորցնեք մի օգնականի, որին դուք վստահում եք։

—Վստահո՞ւմ եմ։ Բայց ես ինչո՞ւ պետք է նրան կորցնեմ։ Եվ հետո, աղավնյակս, եթե դու քեզ անփոխարինելի ես համարում, ապա սխալվում ես։

— Շա՛տ լավ։ Ինչպես ուզո՞ւմ եք։

Աննետան շրթունքները սեղմեց և նորից սկսեց մեքենագրել։ Նա հաստատ որոշեց աշխատանքի վերջում վերջնահաշիվ պահանջել։ Եվ միևնույն ժամանակ ինքնասիրությունը շշնջում էր նրան. «Կնշանակի, դու այնքան էլ համարձակ չես։ Խո՞ւյս ես տալիս։ Ուժ չունե՞ս...»։ Ավելի լավ կլիներ, եթե չլեր։ Ամեն մի կնոջ մեջ սատանա է նստած։ Տիմոնը գիտեր այդ սատանային։ Տիմոնը ոչինչ չէր ասում, միայն նրա աչքերն էին մնազով գրգռում. «Վախենո՞ւմ ես... Խեղճ իմ աղջիկ, այդ ինչի՞ց ես վախենում...»։

Եվ այնուամենայնիվ Աննետան չէր զիջի, եթե երեկոյան, երբ նրանք աշխատանքը վերջացրին, չհայտնվեր մի երիտասարդ կին։ Նա շատ երիտասարդ էր, շատ նուրբ և շատ գեղեցիկ։ Տեսքով դեռ միանգամայն փոքրիկ աղջիկ։ Նա շատ խիստ վեհերում էր։ Աննետան հասկացավ, որ Տիմոնն սպասում էր նրան։ Աղջիկը զարդերի մեջ շողշողում էր, ինչպես հրաշագործ սրբապատկեր, բայց անփորձ էր թվում և ակնհայտորեն ամաչում էր իր գեղեցկությունից ու զգեստի նորությունից։ Տիմոնն Աննետային ասաց.

— Այսօրվա համար բավակա՛ն է։ Պատրաստվի՛ր։

Տիմոնը մի թոպեով դուրս եկավ։ Աննետան վեր կացավ և գլխարկը դրեց։

—Կարող եք ինձ սպասել ինչքան ուզում եք, ես չեմ գա,— բավական բարձրաձայն փնթփնթաց նա։

Հետո արագ-արագ գնաց դեպի ելքը, բայց այդտեղ փոքրիկ այցելուն, որի վրա նա արդեն դադարել էր ուշադրություն դարձնելուց, երկչոտորեն բռնեց Աննետայի ձեռքը և շշնջաց.

— Տիկի՛ն։ Մի՞թե դուք չեք գալու։

Աննետան նայեց նրան։

— Մի՞թե ձեզ համար միևնույն չէ։

Բայց աղջիկը, առանց որևէ բան բացատրելու, սեղմեց Աննետայի ձեռքը.

— Եկե՛ք մեզ հետ։

Աննետան, դեռ մոայլված, սևեռուն հայացքով նայեց այդ աղջկան։ Անսպասելիորեն իրեն ցույց տված վստահությունը առաջացրեց Աննետայի ժպիտը, նա մեղմացավ, ավելի ուշադիր նայեց փոքրիկին և նրա աչքերում համր մի թախանձանք կարդաց։ Եվ այդ պահին, ամբողջովին տրված անհեթեթ զգացումի իշխանությանը, զգացումներ, որոնք շատ բնորոշ էին նրան, Աննետան վայրկենապես իրեն թուխս զգաց և բացեց թևերը։ Դա տևեց ընդամենը մի ակնթարթ։ Բայց հենց այդ ակնթարթին ներս մտավ Տիմոնը։ Նա անմիջապես ամեն ինչ հասկացավ և կատակող-անտարբեր տոնով Աննետային ասաց.

— Սրան պետք է պահպանես։

Աննետան դեռ ոչինչ չէր հասցրել որոշել, երբ արդեն հայտնվեց փողոցում, ավտոմոբիլի բաց դռնակի առաջ։ Իսկ այդ փոքրիկ աղջիկը, որը չճանաչելով Աննետային, վստահեց նրան, օգնություն էր խնդրում... Աննետան նստեց ավտոմոբիլի մեջ։

Նա չէր հիշում, թե ինչ էին խոսում ճանապարհին։ Տիմոնը նստել էր առջևում և ամեն ինչ ծածկել էր իր հակայական կազմվածքով։ Կանայք նստել էին հետևը։ Նրանք իրար հետ չէին խոսում։ Փոքրիկ աղջիկը, ինքն այդ չնկատելով, ձեռքերով ջղաձգորեն կպել էր Աննետայի շորից։ Հանկարծ Տիմոնը հիշեց, որ ինքը ինչ-որ հեռագիր պետք է ուղարկեր, և վարորդին կարգադրեց կանգ առնել փոստային գրասենյակի մոտ։ Աննետան օգտվեց այդ րոպեից, որպեսզի դուրս քաշի իր ուղեկցից որոշ, թեկուզ և կիսատ-պռատ, բացատրություններ։ Աղջիկը իտալուհի էր, բանվորական ընտանիքից, որը ներգաղթել էր կենտրոնական Իտալիայից, Անկոնայից։ Ինչ-որ հրուշակարանում նրան տեսել է կենդանի ապրանքների վաճառքի գծով մի գործակալ։ Գործակալն այդ աղջկանը ներշնչել է, որ նա կարող է գեղեցկության մրցանակաբաշխության մեջ մրցանակ ստա-

նալ,— այդպիսի մրցանակաբաշխություն հաճախ կազմակերպում են խոշոր առևտրականները, կենդանի ապրանքի արքաները։ Մրցանակ աղջիկը չէր ստացել, բայց նրան փոխհատուցել էին մյուզիկ-հոլլի անգաժեմենտով, որտեղից նա ուզեցել է փախչել հենց այն երեկոյան, երբ նա ստիպված է եղել առաջին անգամ մերկ դուրս գալ բեմ և իր վրա զգալ ամբողջ դահլիճի ցանկասեր հայացքները։ Բայց փախչելու փոխարեն, աղջիկն ընկել է կաթվածի նմանվող անզգայության վիճակի մեջ։ Ոչ մի բան նրա վրա չի ազդել—ոչ քրքիջը, ոչ նրա manager[1]-ի կոպտությունը։ Այդ թուխ աղջիկը, որը արձանի նման կանգնած էր մնացել բեմում, գլուխը մի կողմի վրա թեքած, ձեռքերը սեղմած ազդրերին, հանդիսատեսների մեջ ուրախ քրքիջ է առաջացրել—և ուրիշ ոչինչ, բայց Տիմոնի հայացքը կանգ է առել նրա վրա։ Եվ Տիմոնը իր համար զոհ է ընտրել։ Մի քանի շաբաթ շարունակ նրան համոզում էին, վարժեցնում, զարդարում էին հատուկ հաստատությունում, որը կոչվում էր մոդաների արհեստանոց, և պայմանավորված օրը ներկայացրին գնորդին։ Աղջկանը Տիմոնի մասին պատմում էին մի տեսակ շատ խորհրդավոր տեսքով, և հենց այդ մի բանից միայն աղջկա դողն արդեն բռնում էր։ Իսկ մարդակերի արտաքինը աղջկանը պարզապես սպանեց։ Իհարկե, նա չէր կարող չիմանալ, թե ուր է գնում։ Եվ պետք էլ չէ չափազանցել նրա անմեղությունը։ Եթե առաջարկելով իրեն որպես զոհ, նա ստույգ չգիտեր, թե դա ինչպես է կատարվելու, ապա համենայն դեպս նա պատրաստ էր զոհաբերության համար։ Միայն թե դուրս պրծներ աղքատությունից։ Այդ նոր Իֆիգենիան հիանալի գիտեր, որ ստիպված է լինելու վճարել։ Բայց նրա երևակայությունը, փոքրիկ գեղջկուհու երևակայությունը, նրան չէր հուշում, թե հատկապես, ում է ստիպված լինելու վճարել։ Վախից (այդ ժամանակ դատողություններ արդեն չեն անում) նա իրեն գցեց առաջին պատահածի պաշտպանության տակ։ Դա հիմարություն էր, — չէ որ նա Աննետային բոլորովին չէր ճանաչում։ Բայց հալածատանջ կենդանիները հոտառությամբ որսում են

[1] Անտրեպրենյոր (անգլ.)։

խղճահարության ամենաչնչին հատիկը... Այդ բոլորն ավելի հեշտ էր կուտակել, քան հասկանալ. աղջիկը խոսում էր արագ և անկանոն, խառնելով ֆրանսիական բառերը իտալականի հետ։ Աննետան աղջկան պատասխանում էր նրա հարազատ իտալերեն լեզվով և դրանով վերջնականապես նվաճում նրա վստահությունը։ Աղջկա վրա կարծես փչեց հարազատ Ադրիատիկայի բուրմունքը։ Նա համբուրում էր Աննետայի ձեռնափները.

— Bella buona signorina, mi rimetto nelle sue mani, come nelle santissime della Madonna![1]...

Վերադարձավ Տիմոնը։

Երեք ժամ անց, մութ գիշերին, նրանք ժամանեցին դղյակ, որը գտնվում էր անտառում և պատված էր մի քանի կիլոմետր երկարությամբ ձգվող պարսպով։ Այդ տեղի՛ անունը իմանալն անհնարին էր։ Ֆրանսիայում և արտասահմանում Տիմոնն այդպիսի մի քանի տեղեր ուներ, ուր նա գալիս էր որսորդության ու զվարճանքների։ Ժամանածներին իսկույն դիմավորեցին և շրջապատեցին լուռ ծառաները։ Կանանց տարան նրանց համար նախատեսված առանձին ապարտամենտներ, որտեղ նրանք կարող էին իրենց կարգի բերել, հետո եկան նրանց հետևից և հարգալից ուղեկցեցին ներքին հարկի հյուրանոցը, որտեղ ընթրիքի սեղան էր բացած։ Կլոր սեղանի շուրջը տեղավորվեցին տարբեր ազգությունների մոտ քսան հյուրեր՝ տղամարդիկ և կանայք։ Ոչ ոք նրանց չծանոթացրեց միմյանց հետ։ Տղամարդիկ իրար ճանաչում էին։ Իսկ ինչ կանանց էր վերաբերվում, կարևոր չէր, գիտե՞ն նրանք ներկաներին և ներկաները նրանց, թե ոչ։ Ամեն մեկը գիտեր իրեն հասանելիք կնոջը։ Աննետան հիշեց երեք թե չորս մարդու անուն, որոնք խիստ դեմքեր ունեին. նրանց նա տեսել էր Տիմոնի կաբինետում։ Ինքնըստինքյան հասկանալի է, այդ մարդիկ նույնպես Աննետային ճանաչեցին և քիչ զարմացած չէին, նրան այստեղ տեսնելով։ Նրանք չգիտեին, թե Աննետան ինչ հարաբերությունների մեջ է Տիմոնի հետ, և ամեն դեպքի համար

---

[1] Սքանչելի, բարի տիկին, ես ինձ ձեր ձեռքն եմ հանձնում, ինչպես աստվածամոր սուրբ ձեռքը (իտ.)։

հարգանքով էին վերաբերվում նրան, թեև իրենց բավական անհարմար էին զգում։ Աննետան ուշադրության նշաններն ընդունում էր հավուր պատշաճի, իսկ անտակտություն ցուցաբերողներին իրենց տեղն էր դնում։ Նա կարողանում էր իրեն անտարբեր, փոքր-ինչ գոռոզ արտահայտություն տալ և ձևացնել, որ չի լսում։ Մինչդեռ նրա աչքերը զուր ժամանակ չէին վատնում։ Նրա աչքերն ուսումնասիրում էին կերպարանքները և ջանում էին կռահել, թե ինչպես է դասավորվել այս կամ այն կյանքը։ Աննետան հիշում էր, թե Տիմոնն ինչ էր ասում այդ մարդկանց մասին, ինչպես էր ուրվագծում նրանց դիմանկարները, և մտովի կատալոգ էր կազմում։ Աննետան ճանաչեց այն ծերուկին, որի լերկ գանգին կնճիռներ կային։ Թվում էր, նա ծիծաղում է և հետևում շրջապատողներին ոչ միայն բորբոքված կոպեր ունեցող իր փոքրիկ աչքերով, այլև մաշկի բոլոր ծալքերով։ Նիհար, կորացած, մրսկան, նա նման էր պաշտոնն ընդմիշտ թողած մանր բուրժուայի։ Դա ամերիկյան մետաղագործության արքաներից մեկն էր։ Ահա և մի ուրիշը. •բուրժուա, խոշոր բուրժուա, տիպիկ ֆրանսիացի, բռնազբոսիկ, փքունատես, նոտարի կամ պաշտոնաթող մայորի սովորություններով— մետաղագործական գործարանի սեփականատեր, դեպուտատ... Այնուհետև ֆրակ հագած, արևից այրված դեմքով, թիկնեղ մի մարդ՝ հմայիչ ժպիտը դեմքին և պողպատագույն աչքերով։ Առաջին իսկ հայացքից այդ աչքերը Աննետայի աչքերի հետ ուրախ ընկերական ողջույն փոխանակեցին։ Նա ի՞նչ ազգ է։ Նա բոլոր լեզուներով խոսում էր իռլանդական ակցենտով. բաց, առնական, հաճելի երես ուներ... Տիմոնի մի ակնարկով Աննետան նրա մեջ ճանաչեց «Ինտելլիջենս սերվիսի» հռչակավոր գործակալին, որը հայտնվում էր Արևելքում մերթ մի կերպարանքով, մերթ՝ մի ուրիշ և այնտեղ կամ պետություններ էր ստեղծում, կամ՝ կործանում այդ պետությունները... Այդ պատվարժան կոմպանիայում նաև ուրիշ գործակալների պակաս չկար։ Ոմանք զրնգուն անուններ ունեին. օրինակ, նեղ և երկար գանգով, գոռոզ, հարգալից, ցրված, հիանալի շարժուձևերով մի արիստոկրատ։ Մյուսներն ավելի ցածր թռիչքի մարդիկ էին, բայց նրանցից դոլլարի հոտ էր գալիս։ Զինաթափման գծով վերջերս ծնևում

տեղի ունեցած կոնֆերանսում նրանցից մեկը առատորեն դոլլարներով ոռոգեց թերթերը, որոնք զբաղվում էին տագնապ սերմանելով. ամերիկյան ծովակալությունը հանձնարարել էր նրանց օժանդակել ռազմա-ծովային նավատորմիղի ծրագրերի իրականացմանը։ Կարճահասակ գիրուկը, որից ցայտում էր հարավային շատախոսություն և սխտորի ու մեխակի հոտ էր փչում, իր մեջ զուգակցում էր Դոն Քիշոտին ու Սանչո Պանսային։ Նա Աննետայի առաջ հաճոյախոսություններ էր շռայլում, հավատացնում էր նրան իր նվիրվածությունը, իր քրտնած ձեռքերով սեղմում էր նրա ձեռքերը, իր հաստ շրթունքներով չմփոցով պաչում էր Աննետայի ափերը, քծնում էր նրան և վերամբարձորեն, հիացմունքով, համարյա արցունքն աչքերին, կարծիք էր հայտնում Տիմոնի մասին։ Նրա մեջ էրոտիկան խառնվել էր միստիկայի հետ։ Աննետան ճանաչում էր նրան. շանտաժիստ էր, լրագրային ժուլիկ... Դժվար էր ասել, թե հատկապես ո՞ր բոպին է նրա մեջ սրիկայությունն իր տեղը զիջում անկեղծությանը, նա ինքն էլ այդ չգիտեր։ Ինչ-որ անհայտ աստվածային օրենքով բարեհոգությունն ու նողկալիությունը նրա մեջ մշտապես զուգակցվում էին և դրանք իրարից անջատել կարող էր, թերևս, միայն ու միայն Ահեղ դատաստանը։ Իսկ առայժմ այստեղի տերերին, որոնք մրցում էին միմյանց հետ, ձեռնտու էր օգտագործել նրա ընդունակությունները։ Համենայն դեպս դրանցից հրաժարվելը վտանգավոր էր... Ամբողջ հասարակությունը միասին վերցրած առանձնահատուկ վստահություն չէր ներշնչում։ Բայց այսօրվա զվարճանքների նման զվարճանքները նրա համար «աստծո խաղաղություն էր»[1] համարվում։ Տղամարդուն հանգստություն է հարկավոր, նրան անհրաժեշտ է զվարճանալ ուրիշ տղամարդկանց հասարակությամբ, թեկուզ և թշնամիների, բաժանել նրանց հետ սիրային արկածներն ու սխրանքները։ Վերջին հաշվով մի՞թե նրանց գոյության իմաստը հենց մրցակցության մեջ չէ։

---

[1] Եկեղեցական օրենքը XI—XIII դարերում բոլորին պարտադրում էր պատերազմական գործողությունները շաբաթվա վերջին դադարեցնել, հինգշաբթի օրից մինչև կիրակի ներառյալ։

Նրանց համար հաճելի էր մի քանի ժամով զենքը մի կողմ դնել և, հավաքվելով սեղանի շուրջը, միմյանց զննել ափսեների և կանանց մերկ ուսերի վրայով, շարհամարհելով, այնուամենայնիվ, շորերի և ափսեների բովանդակությունը (բացառությամբ ամերիկյան մետաղագործական արքայի, որը տառապում էր ստամոքսի դժվարամարսությամբ—գինին ու կանայք նրա համար, երևում էր, գոյություն չունեին։ Նա խստորեն դիետա էր պահպանում, ծծում էր թերխաշ ձու և վրայից հանքային ջուր էր խմում)։

Մենք կանանց չենք նկարագրում. նրանք ընթրիքի մասն էին կազմում, իսկ ճաշացուցակը մեզ չի հետաքրքրում։ Նրանց միջև կային գեղեցիկները, տգեղները, բայց բոլորն էլ մինչև վերջինը աչքի էին ընկնում նրբաճաշակությամբ, ոչ բոլորն էին երիտասարդ, բայց ամեն մեկն էլ կարող էր ախորժակ գրգռել։ Ոմանք պատկանում էին թատերական աշխարհին, մյուսները՝ գրական աշխարհին։ Ոչ բոլորն էին մասնագիտությամբ ծախու, բայց բոլորն էլ դրա հակումն ունեին։ Անկոնացի երիտասարդ մոնթուհին սեղանի շուրջը թարմ հատապտղի էր նման։ Աննետայի ներկայությունը զարմանք էր առաջացնում։ Ասենք, թվում էր, Տիմոնն ինքն էլ էր մի տեսակ անհարմար զգում. նա արդեն սկսում էր զղջալ, որ Աննետային բերել է։

Բայց Աննետան ինքը լուծեց բոլոր դժվարությունները։ Սիրալիր, արժանապատվությամբ լեցուն, նա սեղանի շուրջը իր վրա վերցրեց տանտիրուհու դերը։ Կարելի էր կարծել, թե դա նրա տունն է։ Եվ Տիմոնը չէր խանգարում նրան։ Աննետան նստել էր Տիմոնի դիմացը, նրա կողքին մի կողմից նստած էր կնճռապատ ծեր պարոնը, որն իր առողջությամբ հափշտակված, Աննետային պատմում էր իր թոռնիկների, բարեգործական ընկերությունների, մանկամսուրների մասին,— իսկական Վենսան դը Պոլ[1], իսկ մյուս կողմից՝ այն գեղեցիկ մարդն էր։ Նա առանց ամաչելու Աննետայի ականջին շշնջում էր, որ այդ բարի ծերուկը իսկական կոկորդիլոս է, և վերազգեստավորման մասին ինչ-

---

[1] Վենսան դը Պոլ (1576—1660)—ֆիլանտրոպ, որին դասել են սրբերի շարքը։

որ ուրախ պատմություն էր պատմում, որը տեղի էր ունեցել իր հետ արաբների մոտ, թե Հնդկաստանում։ Նա, ըստ երևույթին, նուրբ գիտակ էր զգեստների և կոսմետիկայի։ Ինչևիցե, երկու հարևանն էլ Աննետային չէին խանգարում հետևել մյուս հյուրերին։ Աննետան աննկատելի կերպով և զրույցն էր ղեկավարում, և ծառաներին։ Ծառաներն իսկույն գլխի ընկան, որ կարգադրություններ ստանալու համար պետք է դիմել Աննետային և, որ Աննետան այդ կարգադրություններն անելու է լուռ, հայացքով։ Բայց ավելի զարմանալին այն էր, որ հյուրերը ընդունեցին Աննետայի կողմից սահմանված տոնը, թեև ոչ ոքի մտքով չէր էլ անցնի, որ այդ տոն տվողը Աննետան է։ Ժողովին խիստ, ակադեմիական կոռեկտություն հաղորդելու համար չկար միայն երաժշտություն։ Բայց Աննետան գալլական լավ մակարդ ուներ. նա ընդունում էր այդպիսի ազատ ժողովի օրինական իրավունքները և նույնիսկ ինքն էլ էր պատրաստ օգտվելու այդ իրավունքներից, մանավանդ, որ ժողովի մասնակիցն էր։ Նա կարողանում էր հանգիստ, առանձնապես ոչինչ չընդգծելով, իր ջերմ, հաճելի ձայնով որևէ աշխույժ պատմություն պատմել։ Եվ նրան լսող տղամարդկանցից շատերը արամտության մեջ բավական փորձառու էին, որպեսզի գնահատեն այն արտահայտությունների զսպվածությունը, որ նա գտնում էր՝ բավական սայթաքուն սյուժեի համար։ Տիմոնը գաղտնի կերպով շոյված էր իր «ձիուկի» չնախատեսված հաջողությամբ։ Աննետան նրա առջև կանգնեց նոր լույսի տակ, և հիմա Տիմոնը գիտակի աչքով տնտղում էր «պատվարժան տիկնոջը», որն այնքան լավ գիտեր ամեն ինչի չափը և, առանց սահմաններն անցնելու, նուրբ ճաշակ էր դրսևորում և զրույցներում, և ուտելիքի մեջ. պետք է նկատել, որ Աննետան պատշաճը հատուցում էր նաև ուտելիքներին։ Նա չէր վախենում ոչ մի մրցակցությունից և կարողանում էր ճիշտ ժամանակին պահպանել հավասարակշռությունը։ Ավելին. առանց ճիգեր վատնելու, նա ուրիշներին նույնպես հարկադրում էր պահպանել հավասարակշռությունը։

Բայց և այնպես հո դրա համա՞ր չէր, որ նրանք հավաքվել էին այստեղ։ Եվ վերջապես, սեղանի մոտից վեր կենա-

լով, Տիմոնը Աննետային մի կողմ տարավ և պատկառանքով, որն առաջ երբեք չէր դրսևորել, ոչ առանց կոպիտ—և այնուամենայնիվ խիստ հաճելի—կոմպլիմենտների (այդ ո՞ր կինն է, որ զգայուն չէ կոմպլիմենտների նկատմամբ) աղատեց նրան տանտիրուհու դերից, քանի որ երեկոյի շարունակությունը կարող էր դառնալ չափազանց աղմկալի, և առաջարկեց գնալ հանգստանալու նրա համար նախապատրաստված սենյակում։ Աննետան անմիջապես հասկացավ. իրեն ճանապարհ են դնում, որպեսզի ինքը չխանգարի։ Տիմոնը որոշ չափով չափազանցված ընդգծեց, որ այսքան հոգնեցուցիչ օրից հետո Աննետան իրավունք ունի հանգստանալու «ըստ իր հասակի»։ Սակայն այդ ծանրակշիռ քաղաքավարության տակ այնուամենայնիվ թաքնվում էր հոգատար ուշադրություն և նույնիսկ որոշակի հարգանք, որը Տիմոնի համար անսովոր էր։ Աննետան նրա աչքերում կարդաց, որ Տիմոնն ուզում է հեռու պահել նրան այն բանից, ինչը պատշաճ չէ, որ Աննետան տեսնի։ Դրա համար Աննետան երախտապարտ էր Տիմոնին։ Մանավանդ, որ Տիմոնի նախնական նպատակը, երբ Աննետային այստեղ էր բերում, հենց այն էր, որ ստիպի նրան տեսնելու մի բան, ինչն Աննետայի համար զզվելի էր... Ճիշտ է, այդտեղ էր այն փոքրիկ աղջիկը, որին Աննետան մտադիր էր պահպանել։ Բայց (եկեք նրա միամտությունն այնքան էլ չչափազանցենք) նա հասկանում էր, թե ինչքան է ծիծաղելի այդպիսի դերը. այստեղ են գալիս ոչ թե նրա համար, որ պահպանեն աղջիկներին։ Եվ Տիմոնը, անձնատուր լինելով, կարծես թե Աննետային ասում էր. «Ների՛ր։ Քո տեղն այստեղ չէ։ Դու ճիշտ էիր»։ Հո չէր կարող Աննետան այդպիսի պահին Տիմոնին պատասխանել. «Ոչ, ես մնում եմ, որպեսզի փրկեմ առաքինությունը...»։ Ո՞ւմ։ Այդ աղջիկների՞։ Այն ժամանակ նա միայն մի ճանապարհ ուներ—դեպի Փրկության բանակը... Աննետան ծիծաղեց և ուրախ ասաց.

— Շնորհակալ եմ, տեր, որ դուք ինձ պահակետից վերցնում եք։ Նշանաբառը հանձնում եմ ձեզ։

— Ո՞ր։

— «Պայծառ գլուխ»։

— «Պայծառ գլո՞ւխ»։ Այո, դու պայծառ գլուխ ունես։ Գնա քնիր։

Նրանք հրաժեշտ տվին իրար սրտագին։ Նախքան հյուրասրահից դուրս գնալը Աննետան խղճի մաքրության համար աչքերով փնտրեց փոքրիկ փտալուհուն և, վերջապես, նրան տեսավ մի խմբի մեջ, որտեղ ծիծաղում էին և ծխում։ Փտալուհին գինովցած էր (երկու մատնոց գինուց նրա գլուխը պտտվում էր) և նույնիսկ չնկատեց էլ, երբ Աննետան գնաց։

Դռների մեջ Աննետան հանդիպեց ծեր ամերիկացուն։ Նրան նույնպես չէր հետաքրքրում երեկոյի շարունակությունը. Աննետայի նման նա նույնպես առաքինաբար գնում էր քնելու։ Նա Աննետային կարեկցելով և հավանություն տվող հայացքով գլխով արեց։ Աննետան գնաց երկրորդ հարկում առանձնացրած իր սենյակը, որը գտնվում էր տան ամենահեռավոր և խաղաղ վերջնամասում և որի լուսամուտները նայում էին զբոսայգուն։ Նա հոգնած էր, և նրա համար հաճելի էր փռվել սառը սավանների վրա։ Ավելի շուտ նա գոհ էր իր անցկացրած երեկոյից։ Խաղը զերծ չէր վտանգներից, և իր հասակի համար նա այդ խաղից վատ գլուխ չհանեց... «Իր հասակի համա՞ր...»։ Հենց այդ հասակն էլ օգնեց նրան։ Բայց խաղն ինչո՞վ կվերջանա մյուսների համար։ Ասում են, ով տարվում է, հենց նա էլ շահո՞ղ է դուրս գալիս։ «Ա՜յդ էր պակաս։ Չարժե մտածել այդ հիմարությունների մասին...»։ Նա մահճակալի մոտ դրված գրքերի պահարանից վերցրեց ձեռն ընկած առաջին նրբագեղ կազմով հատորյակը, թերթեց, ժպտաց, սկսեց երազել և այդպես էլ, գիրքը ձեռքին, քնեց...

Անցավ մի ժամ, գուցե երկու,— Աննետան չշարժվեց։ Երբ նա կրկին իր երազի խորքից դուրս լողաց դեպի մակերես (դեռ գիշեր էր, անլուսին, բայց պայծառ ամառային գիշեր), նա այնպիսի զգացում ուներ, կարծես լսում է ինչ-որ մեկի հեռավոր կանչը և սեփական խղճի ձայնը։ Փափուկ անկողինը շշնջում էր նրան. «Հանգիստ, պառկիր, հանգիստ պառկիր»։ Բայց աղոտ տագնապը այնուամենայնիվ գնալով աճում էր։ Աննետան արմունկների վրա փոքրինչ բարձրացավ... Տագնապը գալիս էր ոչ միայն ներսից։ Աղմուկը լսվում էր գիշերային խավարի միջից, առկայծում

էին հազիվ նշմարելի փոքրիկ լույսեր։ Աննետան լսողությունը լարեց։ Նրան շատ ժամանակ պետք չեղավ՝ այդ բոլորը հասկանալու համար... «Պայծա՜ռ գլուխ։ Նրանք այդ կորցրել են...»։ Աննետան թոթվեց ուսերը և նորից սուզվեց նիրհի մեջ... Սակայն նրանք չափը լրի՜վ կորցրել են։ Զբոսայգուց մոնչոցի ձայն էր գալիս։ Եվ շների համաձայն հաչոց։ Աննետան տեղից ելավ և բացեց լուսամուտը... Նրա սենյակը գտնվում էր գլխավոր շենքի և ձախ կողակառույցի միջև կազմվող անկյունում, այնպես որ գլխավոր շենքը ծածկում էր այգին։ Այնուամենայնիվ ծառերի միջով նա կարող էր տեսնել այգում արագ շարժվող լույսերի ցոլքը։ Նա լսում էր որսորդական եղջյուրի ականջ ծակող ձայները և շների ավելի ուավելի սաստկացող հաչոցները... Եվ աղեկտուր ճիչերը... Աննետան շտապ հագնվեց, դուրս եկավ սենյակից և սկսեց միջանցքում փնտրել լուսամուտ, որտեղից կարելի էր ամեն ինչ տեսնել... Գլխավոր սանդուղքի մոտ նա գտավ պատշգամբի դուռը, այդտեղից դուրս նայեց, և նրան թվաց, թե ինքը երազ է տեսնում։

Ջահերով որսահալածներ։ Հաչող շներ, որոնք իրենց վզակապերով այնպես են գալարվում, կարծես պարում էին սուրբ Վիտտի պարը։ Եվ շներից մարգագետնով փախչողները մերկ կանայք են... Դիանայի որսն է... Բայց այստեղ որտում էին հենց Դիանային... Բարձրաձայն քրքիջի և շեփորների ոռնոցի տակ ծառերի հետևից դուրս եկան կարմիր զգեստ հագած չորս որսորդ։ Նրանք իրենց ուսերին տանում էին մերկ հավերժահարսի, որը, խփված եղնիկի նման, ձեռքերից ու ոտքերից կապված էր ձողին։ Հավերժահարսի գլուխը կախ էր ընկել, և, ճիշտն ասած, նրա արձակած աղաղակները պատշաճ չէին աստվածային ծագում ունեցող անձնավորությանը։ Դա Իորդանսի ճաշակի խոշոր կազմվածքով աղջիկ էր։ Նա շնչահեղձ էր լինում և կատաղությունից թքում էր։ Զվարճացող հանդիսատեսների խումբը հրճվում էր այդ տեսարանով։ Նրանք բռնում էին հավերժահարսի կողերից և պատասխանում էին նրան նույնպես ոչ չափազանց նրբակիրթ խոսքերով...

Պատշգամբից տեսնելով այդ գիշերային որսը, Աննետան մտածեց.

«Ապուշնե՞ր։ Ահա թե նրանք ի՞նչ են հնարել... Մի տես ի՞նչ տականքներն են։ Խելքներին Բորջա խաղալ է փչել... Ինչպի՞սի ոչնչություններ։ Գլուխները լցրել են էժանագին վեպերով և ոգևորվել... Նրանց պոեզիան—հայրիկ Դյուման է և Օկտավ Ֆեյեն... Հիմարնե՞ր»։ «Նելի աշտարակի»[1] վերջին ռոմանտիկնե՞րը...

Այդ մարդկանց հիմարության մասին խորհրդածությունները դեռ չէին հասցրել մեղմացնել Աննետայի արհամարհանքը, երբ մարգագետին դուրս բերին մի նոր զոհի, և ահա հենց նա էլ լուրջ էր ընդունում «Նելի աշտարակը»... Դա Ադրիատիկայի ափերից երիտասարդ ջրահարսն էր։ Սարսափից կիսամեռ, երեսը ձեռքերով ծածկած, նա ի ցույց էր դնում իր քնքուշ ու նուրբ մերկությունը։ Աննետան հիանալի հասկանում էր, որ դաժան խաղը այնուամենայնիվ միայն խաղ է, որ գլմռացող շներին բաց չեն թողնի և որ Դիանայի որսի հավերժահարսերը միայն սարսափ կապրեն (ամոթն ու խայտառակությունը հաշվի չէին առնվում. դրա համար վճարված էր...)։ Բայց դա էլ էր չափազանց շատ սոսկումից կուչ եկած ու դողահար, հազիվ ոտքերի վրա կանգնող աղջկա համար, որի շուրջը ցատկոտում էին շները և հռհռում էին գազանացած, հարբած տղամարդիկ։ Աննետան զայրույթից սկսեց դողալ, տեսնելով, թե ինչպես Տիմոնը իր լայն թաթով շրպացրեց սաքսոնական ճենապակե այդ արձանիկի կլորիկ հետույքին և փողհարեց նրա ականջին.

— Փախի՛ր։ Թե չէ հետույքդ շներին քնթրիք կդառնա։

Աննետան է՛լ չմտածեց։ Ուշադրություն չդարձնելով այն բանին, որ նա իր սենյակից դուրս էր եկել բոբիկ, Աննետան արագ-արագ իջավ սանդուղքով և դուրս վազեց դեպի այն հրապարակը, որտեղ կանգնած էին հյուրերը, հենց այն րոպեին, երբ հմայված դիտողների ցնծագին ճիչերի տակ ահաբեկված աղջիկը խելագար ցատկոցներով սլացավ մարգագետնով։ Իսկ Տիմոնը իր հսկայական շանը բռնել էր վզակապից և, ըստ երևույթին, պատրաստվում էր բաց թողնել։ Աննետան գիտեր այդ շանը, գիտեր, որ այդ շնից

---

[1] «Նելի աշտարակը»—XIX դարի ֆրանսիացի գրողներ Դյուման-որդու և Դայյարդեի սենտիմենտալ պիեսը։

ոչ մի վտանգ չկա. դա մի մեծ, բայց անչար որձ շուն էր, նա հարձակվում էր բոլորի վրա, թեև չէր կծում։ Բայց եղնիկը, որը փախուստով պետք է փրկվեր, այդ չգիտեր։ Աննետան կատաղորեն իրեն ճանապարհ էր բացում զարմացած հյուրերի միջով և, հանկարծ կանգնելով Տիմոնի առաջ, ձեռքը գցեց նրա ֆրակի ծալվածքին։

— Բավակա՞ն է։ Տիմոն, դու հարբա՞ծ ես։

Տիմոնը նրա վրա շռեց իր սարսափելի աչքերը և, շանը բաց թողնելով, որը նետվեց որսի հետևից, բռունցքով խփեց Աննետայի բերանին։ Աննետան օրորվեց, բայց չնահանջեց, և հանկարծ վրա հասնող լռության մեջ պարզ ու հստակ ասաց.

— Հարբած վիճակում դու սրիկա ես դառնում։

Աննետայի բերանից արյուն էր հոսում։ Տիմոնը մի անգամ էլ ետ տարավ իր սարսափելի բռունցքը, որպեսզի խփի։ Բայց տեսավ Աննետայի բերանը։ Բռունցքը կախ ընկավ։ Իսկ հետևից վայրկենապես ցատկեց «Ինտելլիջենսի» գեղեցիկ տղամարդը, բռնեց Տիմոնի ձեռքը և սեղմեց, ինչպես մամլակի տակ։ Տիմոնը կանգնել էր համր ու քարացած։ Մարգագետնում աղջիկը ոռնում էր և օգնության կանչում։ Հսկայական շունը հասավ նրան, առջևի թաթերով խփեց կրծքին, ցած գցեց աղջկանը և գետնին գլորեց, ինչպես գնդակ։ Դրանից չափազանց գոհ շունը ուրախ թռչկոտում էր, լեզուն դուրս էր հանում և հաչում... Աննետան, նետելով Տիմոնին վերջին մարտահրավերը, մեջքով շրջվեց դեպի նա և վազեց փոքրիկ իտալուհու մոտ։ Աղջիկն ընկած էր գետնին։ Նրան ազատելը դժվար չէր. շունը չէր խանգարում—նա կատարյալ ցնծությունից թռչկոտում էր և սպասում գովասանքի։ Աղջկան հանգստացնելն ավելի դժվար էր։ Վախից նա իրեն արդեն մեռած էր համարում։ Աննետան նրան բարձրացրեց, մաքրեց ձեռքերով ու իր բլուզով նրա երիտասարդ՝ արցունքներից, գիշերային շաղից և հաղթողի փսլինքներից թաց մարմինը։ Իրեն սեղմված մերկ, դողացող աղջկանը փաթաթելով թիկնոցի մեջ, ինքն էլ կիսամերկ Աննետան նրան տարավ տուն։ Հրապարակը գրեթե դատարկվել էր։ Տիմոնն ինչ-որ կարգադրություններ արեց և անհետացավ։ Մնում էին միայն մի քանի ծառաներ։ Նրանք շտապողաբար Աննետայի համար

ճանապարհ էին բացում։ Եվ մեկ էլ նախասրահում էր, որ հյուրերից մի քանիսը հեռվից, բայց հետաքրքրությամբ, նայում էին Յունոնայի արտասավոր վերադարձին, որը անցնում էր նրանց կողքով բերանն արյունոտված և հպարտորեն վեր պահած գլխով, չարժանացնելով նրանց իր հայացքին։ Նա տգնում էր փոքրիկ թռչնակին, որը ծվարել էր նրա թևի տակ։ Մեր, վարժեցված ծառան, որին ոչ մի բան, ըստ երևույթին, չէր զարմացնում, հարգանքով Աննետային լիֆտով ուղեկցեց մինչև իր սենյակը։ Աղջիկը նրան աղաչում էր իրեն մենակ չթողնել, Աննետան նրան դրեց իր անկողինը։ Եվ միայն այդ ժամանակ, երբ նա համբուրեց աղջկան և նրա ճակատին կարմիր բիծ նկատեց, Աննետան գլխի ընկավ, որ իր բերնից արյուն է հոսում։ Նա լվացվեց և հայելու մեջ նայեց իրեն. նրա սքանչելի ատամներից մեկը, ժանիքը, ջարդվել էր։ Մարտական վե՞րք։ Դեռ բախտը բերել էր, որ մյուս ատամները պահպանվել էին։ Բայց թշնամին փախավ։ Աննետան պառկեց քնելու։ Նրա համար դա քուն էր՝ մարտի դաշտում։ Նա մեկնվեց աղջկա կողքին, որը, մի կուշտ լաց լինելուց հետո, քնել էր անհանգիստ քնով։ Բայց Աննետան աչք չփակեց։ Նա բերանում ծակող ցավ էր զգում, նրա աչքերը պեծին էին տալիս։ Աննետան բավական ժամանակ ուներ՝ վաղվա գործողությունների պլանը վերլուծելու համար։

Վաղվա օրն տկավեց։ Բացվեց լույսը։ Դեռ ժամը վեցը չկար, երբ Աննետան վեր կացավ, հագնվեց, զանգահարեց, կարգադրություններ արեց, ապա արթնացրեց իր ուղեկցուհուն, որը բարձից գլուխը կտրել չէր կարողանում։

— Վե՞ր կաց։ Ավտոմոբիլի մեջ քունդ կառնես...

Նա համարյա ստիպված եղավ աղջկան հագցնել։ Աննետան նրան քարշ տվեց իր հետևից։ Յածում, դռան մոտ, նրանց սպասում էր Տիմոնի հզոր ավտոմոբիլը։ Աննետան կարգադրություններ էր անում և գործում, ինչպես տիրուհի։ Եվ, չգիտես, այն պատճառով, որ նրա տոնը պատկառանք էր ազդում, թե, ավելի շուտ, այն պատճառով, որ Տիմոնն ինքն էր այդպես պատվիրել, նրան ենթարկվում էին այն ձևով, ինչպես եթե նա իսկապես էլ տիրուհի լիներ։ Աղջիկը, որի խելքը դեռ գլուխը չէր եկել գիշերային սարսափ-

ներից ու խմած գինուց, համարյա անմիջապես քնեց։ Աննետան նրա գլուխն ավելի հարմար դրեց բարձին, իսկ ինքը մի տեսակ կիսաքուն վիճակում, հոգնած աչքերով նայում էր, թե ինչպես է նրա առաջ, ասես կինոյում, տարածվում ճերմակ ճանապարհը, ինչպես են երևում ու չքանում ցանկապատերը, դաշտերը, քաղաքները, ծխի ամպերը— և իր սեփական կյանքի ճակատամարտերը։ Փարիզում նա վերջապես արթնացած իր խնամարկյալին տեղ հասցրեց, իսկ այնուհետև տուն գնաց հանգստանալու,— նա միանգամայն արժանի էր այդ հանգստին։

Աննետան քնեց ծանր, հաճախակի ընդհատվող քնով, նրա բերանի տնքացող ցավի միջով իրեն զգացնել էր տալիս միայն ու միայն մի հստակորեն գիտակցված միտք. «Տիմոնի հետ ամեն ինչ վերջացված է...»։ Եվ այնուամենայնիվ նա ամենաչնչին շափով անգամ չզարմացավ, երբ երեկոյան կողմը, վերջապես հանգիստ քնելուց հետո—հանկարծ զանգի ձայնը արթնացրեց նրան։ Աննետան ենթադրություններ չարեց, թե այդ ո՞վ կարող էր գալ։ Բայց, բացելով դուռը, միանգամայն բնական համարեց իր դեմ տեսնելով Տիմոնի հզոր կերպարանքը։ Նրանք ողջույնի ոչ մի խոսք չփոխանակեցին։ Աննետան ձեռքի շարժումով ցույց տվեց. «Ներս եկեք»— և անցավ առաջ։ Տիմոնը գնաց նրա հետևից—կողքանց, որովհետև միջանցքը նեղ էր։ Աննետան շտապ կարգի բերեց անկողինը։ Բայց ոչ մի անգամ հայելու մեջ իրեն չնայեց։ Նա միայն խալաթի փեշերը իրար վրա քաշեց, ցույց տվեց Տիմոնին աթոռը, իսկ ինքը լուռ նստեց պատուհանի մոտ դրված բազկաթոռին. Աննետան սպասում էր։ Ոչ մի բան Տիմոնի դեմքին չէր մատնում նրա մտադրությունը։ Տիմոնը մռայլ էր և նոթերը կիտած։ Նա գիտեր, թե ինքն ինչ պետք է ասի, ինչ է ուզում ասել։ Նա ներողություն խնդրելու մտադրություն չուներ։ Բայց երբ տեսավ այդ խիստ աչքերը և ջարդված բերանը, ամեն ինչ մոռացավ, ինչի համար եկել էր։ Նա տեսնում էր միայն այդ բերանը։ Եվ անհարմարությամբ, պարզապես, որպեսզի որևէ բան ասած լինի, հարցրեց, թե Աննետան ինչպես է զգում իրեն։ Աննետան պատասխանեց շատ սառը. «Լավ», իրեն նեղություն չտալով որևէ այլ բան ավելացնելու։ Եվ

քանի որ Տիմոնը դեռ չէր կարողանում իր հայացքը կտրել նրա բերանից, Աննետան ասաց.

— Հիանալի՜ աշխատանք է... Դուք գո՞հ եք։

Եվ ցույց տվեց ջարդված ատամը։

Տիմոնը կատաղությամբ սեղմեց ատամները և հայհոյեց ինքն իրեն.

— Սրիկա՜։

Աննետան շարունակում էր նրան աչքերով չափել։

— Հայհոյի՜ր ինձ,— ասաց Տիմոնը։

— Դա ավելորդ է։ Չէ՞ որ դուք ինքներդ էլ եք ձեզ հայհոյում,— արհամարհանքով պատասխանեց Աննետան։

— Ես ի՞նչ կարող եմ անել... Վճարե՞մ քեզ ատամիդ համար։ Դա բավական չի... Եթե ես կարողանա՜յի դա փոխարինել իմ սեփական շնային ատամներից որևէ մեկով...

— Ոչ,— առարկեց Աննետան,— շների մասին չխոսենք։

Տիմոնը շփոթվեց, աթոռի վրա սկսեց շարժվել։

— Ի՞նչ ես ուզում։ Վնասների փոխհատուցո՞ւմ։

— Ավելի լավ կլիներ նախ և առաջ ինձանից ներողություն խնդրեիք։

Տիմոնը ներողություն խնդրելու սովորություն չուներ։ Պետք է կամ ճզմել, կամ ճզմվել։ Ներողություն խնդրել կամ ներել—այդ բոլորը բիրժայում շրջանառություն չունի, դա կորցրած ժամանակ է։ Տիմոնն ավելի բնական կհամարեր, եթե Աննետան էլ իր հերթին տեղահան աներ նրա ատամը։ Նկատելով Տիմոնի տատանումը, Աննետան ասաց.

— Պետք չէ այդ անել, եթե դա ձեր մտքով չի անցել։ Դա ինձ պետք չէ։ Եվ ես գերադասում եմ ձեզ նախապես ասել, որ դա ոչինչ չէր փոխի իմ վճռի մեջ։

— Ի՞նչ վճիռ։

— Ձեզ հետ այլևս գործ չունենալ։

Տիմոնն սկսեց շարժել իր սոսկալի հոնքերը։ Նրա դեմքից, նրա ջղաձգորեն սեղմված բռունցքներից երևում էր, թե ինչ պայքար է տեղի ունենում նրա մեջ։ Վերջապես նա ասաց.

—Ես քեզ չեմ ստիպի... Իհարկե, եթե ես կարողանա՜յի... (Տիմոնի ձեռքերը նորից սկսեցին շարժվել։ Աննետա-

յին նա մի ակնթարթ ներկայացավ որպես Աշուրբանիպալ, և տեսավ, թե նա ինչպես է ծանր կրունկով ջարդում իր ողնաշարը...)։ Բայց և այնպես, եթե ես քեզ հարցնեի...

Տիմոնը քիչ մնաց ասեր. «Ինչքա՞ն ես ուզում»։ Բայց բնազդը նախազգուշացրեց նրան, որ այսպիսի բոպեին փողի մասին խոսք բացելը, կնշանակեր գործը որոշակիորեն հասցնել խզման։ Նա ասաց— և ինքն էլ զարմացավ, լսելով այդ բառերը։

— Եթե ես քեզ խնդրեի... Եթե ես...

Աննետան նստել էր ոտը ոտին գցած, մտացրիվ, գոռոզ։ Տիմոնը մի բոպեաչափ նայում էր, թե ինչպես է նա օրորում իր բոբիկ ոտը, որը կիսով չափ դուրս էր եկել տնային կոշկի միջից։ Եվ հանկարծ կռացավ, բռնեց այդ բոբիկ ոտքը և իր հաստ շրթունքներով կպավ նրանից։

Աննետան նույնպես երկար չմտածեց։ Եվ չթաքցրեց իր զզվանքը։ Կոպտորեն, զայրույթով բռնված, ոտքը ետ քաշեց այն դնչից, որն իրեն թույլ էր տվել, թեկուզ և հարգանքով, տիրանալ նրան, և ոտքով ուժեղ հարվածեց Տիմոնի շրթունքին։ Աննետան կատաղած էր։ Տիմոնը նույնպես։ Նա մռնչաց։

— Ուրեմն, դու այդքան նողկո՞ւմ ես ինձանից։

Աննետան ֆշշացրեց։

— Այո՛։

Ախ, ի՜նչ բավականությամբ նա Աննետային փոշի կդարձներ... Բայց իրեն զսպեց։ Խոնարհելով իր հսկայական պարտված գլուխը, Տիմոնն ասաց.

— Ների՛ր։

Այն անգամ Աշուրբանիպալի դերում Աննետան իրեն տեսավ։ Հիմա արդեն նա ինքն էր ոտքով տրորում նեգրական չնչին արքայի ածիլած գլուխը։ Այդ տեսարանը վայրկենապես անցավ... Սակայն դա այնքան էր հստակ, կարծես այդ բոլորը տեղի ունեցավ իրականում։ Աննետայի մարմնով բավականության մի դող անցավ։ Հետո, խաղաղվելով, նա ասաց.

— Պատիվները ձեզ մատուցվեցին ոտքով... Որսը վերջացավ... Այսպես, ուրեմն, Տիմոն, վերջացնենք այս ամբողջ պատմությունը։

Տիմոնը գլուխը բարձրացրեց (այդ նեղվյալ կինը նրան շփոթեցնում էր...) և տեսավ Աննետայի բերանը, տեսավ վերքը, որին լուսավորում էր նրա խիստ ժպիտը... Բայց ջարդված կամուրջը վերականգնված էր։ Տիմոնն անցավ այդ կամրջով։

— Վերջացնե՞նք։ Քեզ խոնքի վրա եմ բռնում։

— Իսկ ես ոչ մի խոսք դեռ չեմ ասել։ Ես դեռ չեմ դրել իմ պայմանները։

— Բայց դու չես գնում,— ասաց Տիմոնը վստահորեն։

— Ես դեռ ոչինչ չեմ ասել։

— Դու ասում ես, պայմանն՞ր ունես։ Ես ընդունում եմ այդ պայմանները։ Կնշանակի, դու չես գնում։

— Ես մնում եմ,— ուսերը թոթվելով, ասաց Աննետան,— քանի դեռ չեն վերջացել ընթացիկ գործերը։

— Հիանալի՞ է,— ասաց Տիմոնը։— Դա դեռ վաղը չի լինելու։

Աննետան զզջաց, որ անզգույշ խոսքեր դուրս թռան իր բերնից։ Տիմոնն այդ նկատեց և մեծահոգություն ցուցաբերեց.

— Ես հակառակ քո կամքին քեզ չեմ պահի։ Եթե դու երեկվա տեսարանից հետո ատելությամբ ես լցվել իմ դեմ,— ես այդ հասկանում եմ,— գնա՛։ Դու ինձ պետք ես, դու ինձ համար շատ ավելին ես, քան քարտուղարուհին,— դու իմ սանձն ես։ Ճիշտ է, այնքան էլ հաճելի չէ սանձել մի այնպիսի կենդանու, ինչպիսին ես եմ։ Ես այդ ընդունում եմ։ Դու իրավունք ունես ասել. «Ինձ այսքանը բավական է...»։ Դու ազատ ես, Աննետա։ Ես արժանի չեմ քեզ։

Աննետան հուզված էր։

— Ես մնում եմ, Տիմոն,— ասաց Աննետան։— Ինչ արած, ավելի վատ քեզ համար։ Եվ մեր երկուսի համար։ Կամ լիամը կշարդվի, կամ՝ ատամները։

— Թող հաջո՛ղդ անգամ դրանք իմը լինեն։

Խմբագրությունում Աննետայի վիճակն արտաքնապես չփոխվեց։ Նա առաջվա նման նստում էր իր սեղանի մոտ, որը գտնվում էր Տիմոնի մեծ գրասեղանի կողքին։ Բայց շատ շուտ բոլորը նկատեցին, որ տիրող տոնը փոխվել է, որ

նա Աննետայի նկատմամբ դարձել է ուշադիր։ Իհարկե, Աննետայի ուռած շրթունքները գրավեցին համընդհանուր ուշադրությունը, շատ խոսակցությունների առիթ տվեցին այն մասին, թե ինչ է տեղի ունեցել գիշերը դղյակում։ Շրջում էին ամենաֆանտաստիկ լուրերը։ Այդ լուրերը բավական հակասական էին, բայց անտարակույս հաստատված էր համարվում այն, որ հաղթողը կին էր եղել... Այ թե կնիկ է հա։ Եվ ինչքա՞ն հմուտ էր թաքցնում նա իր խաղը... Աննետան առաջվա պես գիտեր, թե իր տեղը որտեղ է, նույնքան ուշադիր ու եռանդով էր կատարում տիրոջ բոլոր կարգադրությունները, երբեք ուրիշների ներկայությամբ իր կարծիքը, ինչի մասին էլ ուզում է լիներ, չէր հայտնում նրան, թեթև Տիմոնն ինքը չէր հարցնում և մարդկանց ներկայությամբ շարունակում էր Տիմոնին «դուք»-ով կոչել։ Բայց հայտնի դարձավ, որ, դուռը փակվելուն պես, Աննետան անցնում էր «դու»-ի, նրանց միջև վեճեր էին տեղի ունենում, և Տիմոնը—մի բան, որ ամենադժվարն էր այդպիսի բռնակալի համար—նրան լսում էր առանց ընդհատելու։ Աշխատակիցները նողկալի սրախոսություններով վրեժ էին լուծում Աննետայից այդ գաղտնի իշխանության համար, թեև ավելի շուտ պետք է ուրախանային, քանի որ նա Տիմոնի վրա բարերար ազդեցություն էր ունենում։ Աննետան մանրամասնություններ չգիտեր, բայց նա լավ գիտեր մարդկային անբարյացակամությունը և ամեն ինչ գլխի էր ընկնում։ Նա հասավ բարեհոգի արհամարհանքի այն աստիճանին, երբ մարդ անտարբեր է դառնում նման բաների նկատմամբ։ Տիմոնի աչքում դա Աննետայի վերջին արժանիքը չէր, քանի որ Տիմոնի սեփական արհամարհանքը ոչ թե բարեհոգի, այլ ոչնչացնող արհամարհանք էր։ Գաղտնիքը նրանում էր, որ Աննետան չէր ջանում օգտագործել իր վիճակը սեփական շահերի համար,— նա իր սրտին մոտ էր ընդունում Տիմոնի շահերը։

Շահերը թե՞ «շահը»։ (Կլասիցիզմի դարաշրջանում վերամբարձորեն կասեին. «Փառքը»...)։ Այո, նա կուզեր, որ դատարկ տեղը կուտակված այդ ուժը գոնե իր համար ավազների վրա բարձրացող բուրգ կանգնեցներ։ Նա կուզեր, որ հատկապես դրա վրա օգտագործեր իր ազդեցու-

թյունը, որից նա հիմա (արդյո՞ք երկար ժամանակով) օգտվում էր։ Եվ Աննետան ինքն իրեն նշեց այն ճանապարհը, որով չանում էր ուղղություն տալ Տիմոնին։ Մշտապես գտնվելով ինտրիգների կենտրոնում, որոնք հյուսում էին արդյունաբերական և գործարարական աշխարհի ավազակաբարոնները, Աննետան սովորեց մի կերպ գլուխ հանել քաղաքականությունից։ Իսկ բնազդը նրան ստիպում էր,— ճիշտ է, անգիտակցաբար,— հակվել դեպի այն կուսակցությունների կողմը, որոնք իրենց խնդիրն էին դարձրել շահագործվողների պաշտպանությունն ու աղատագրումը։ ՍՍՀՄ-ը, որին այդքան բամբասում էին—և հայտնի չէ, ավելի շատ ո՞վ. անգիտակ տուրիստներ՝ արդյոք, որոնք, երկու շաբաթ պտույտ տալով երկրում, թղթի վրա էին անցկացնում իրենց մանկական թոթովանքը, թե՞ պրոֆեսիոնալ ստախոսները՝ իրենց թունոտ գրչածայրերով, —Աննետայի համար մնում էր հանելուկ, բայց մի հանելուկ, որը հրապուրում է։ Նա պարզորոշ զգում էր, որ հենց այնտեղ է գտնվում Ռեակցիայի հրեշավոր լեռնաբեկորի անհրաժեշտ հակակշիռը, որի ծանրության տակ ճրթճրթում էին Արևմուտքի ոսկորները։ Եվ, դեռ չունենալով հաստատ ուղղակի մտադրություն, Աննետան այնուամենայնիվ աշխատում էր քաշել Տիմոնի վճռական ծանրությունը դեպի հենց այդ նժարը։ Տիմոնը տեսնո՞ւմ էր արդյոք այդ։ Հնարավոր է։ Նա, թերևս, Աննետայից ավելի լավ էր հասկանում այն, ինչը շոշափելով փնտրում էր Աննետայի միտքը, և գիտեր, թե մինչև որ սահմանները այդ միտքը կարող է հասնել։ Բայց Տիմոնը նրան չէր հրում և ձևացնում էր, որ իբր ոչինչ գլխի չի ընկնում։ Նա ծիծաղելով Աննետային ասում էր.

— Դու կարծես փղի վրա բազմած անասնավար լինես։ Դու ուզում ես նրան վարժեցնել։ Բայց ի՞նչ ես ուզում նրան սովորեցնել։ Գոնե դու ինքդ գիտե՞ս այդ։ Դու ուզում ես ինձ փողոցներով ման ածել, որպեսզի ամեն տեսակի տխմարները խմբով հետևիցս ընկնեն և հիացմունքով բղավե՞ն։ Զարժի, ես դրանից մինչև կոկորդս կուշտ եմ։ Դու ուզում ես ինձ պետությա՞ն պատվար դարձնել։ Դու ուզում ես, որ ես կառուցե՞մ։ Ի՞նչ։ Հաղթական կամա՞ր։ Եվ նրա տակով անցնեմ, ինչպես այն ճստլիկ Նապոլեո՞նը։ Մենք կա-

ուզում ենք միայն գերեզմաններ։ Իսկ ես չեմ ուզում գերեզմանում պառկել։ Քանի դեռ ես կենդանի եմ, ինձ անհրաժեշտ է շարժվել լայնարձակության մեջ։ Ես թափառում եմ անտառում, ես գնում եմ դեպի աջ, դեպի ձախ, ես կործանում եմ այն ամենը, ինչ արգելք է հանդիսանում իմ ճանապարհին։ Կռացի՛ր։ Պահպանիր գլո՛խդ։

— Նույնիսկ եթե դու ստեղծված ես միայն կործանելու համար, ապա, Տիմոն, գոնե կործանիր խելքով։ Եվ ոչ թե հենց այնպես, ճանապարհ բացիր։ Հասի՛ր մինչև վերջը։ Դու անընդհատ նույն տեղում ես դոփում։ Բայց դու սի՛րտ արա։ Առա՛ջ անցիր։

—Իսկ ո՞ւր «առաջ»։

— Դու ինձանից լավ գիտես։ Մի՛ ձևացրու։ Դու տեսնում ես, որ մեծ մենամարտ է սկսվել։ Դու ո՞ւմ կողմն ես։

—Ես ինքս իմ կողմն եմ։

— Դա այնքան էլ շատ չէ։ Բայց ծայրահեղ դեպքում, Տիմոն, թող քո այդ «ես»-ը ամբողջական լինի։ Թող «այո» լինի, թող լինի «ոչ», բայց ոչ կիսով չափ։

— Խաղը խաղ է։ Ամեն ինչ կախված է հաջողությունից։

— Ես խաղում եմ հաջողության հույսով։ Եթե ես քո տեղը լինեի, կնստեի կանաչ սեղանի մոտ։

— Այո, ես քեզ պատկերացնում եմ Մոնակոյում, կանաչ սեղանի մոտ։ Փքվող ռունգներով... Դու խաղաթղթի վրա կդնեիր ամեն ինչ, մինչև վերջին շապիկդ։

— Ես հենց չեմ խաղում այն պատճառով, որ ինձ գիտեմ։ Ես ոչ թե շապիկս կդնեի խաղաթղթի վրա, այլ կյանքս։

— Դու կյանքդ արդեն դրել ես, աղավնյակս։ Դու չես էլ մտածել այդ մասին։ Բայց քանի որ ինձ հետ ես գործ ունել, ուրեմն, կյանքդ դրել ես խաղաթղթի վրա։ Կամ դեռ կդնես։ Ես հետևում եմ քեզ։

—Ես մի անգամ չէ, որ կյանքս ռիսկի եմ ենթարկել։ Ոչի՞նչ։ Ես միշտ շահում եմ...

— Բոլոր խաղացողներն այդպես են մտածում։

— Իսկ մի՞թե դու խաղացող չես։ Դու հենց նոր ասացիր։

— Դու միայն քո մորթին ես վտանգի ենթարկում։ Դա

քո իրավունքն է։ Այդ մորթին միայն քեզ է պատկանում։

— Իսկ դո՞ւ ում ես պատկանում։

—Ես մենակ չեմ խաղում։ Ինչ խաղ էլ ուզում է լինի, այնտեղ պետք է հաշվի նստել ոչ միայն հակառակորդի հետ (դա միայն հաճո՞ւյք է), այլև պարտնյորի։ Բարդ բան է...

— Դա հենց՝ այն է, ինչ դու անվանում ես ազատ լինել և քայլել անտառով։

— Այն է, ինչ ես անտառ եմ անվանում։

— Կորատիր այդ անտառը։

— Դու դատում ես, ինչպես կին։ Ես կարող եմ միայն մի քիչ մաքրել իմ շուրջը գտնվող տարածությունը։ Իսկ անտառով պատվել է ամբողջ աշխարհը։ Մեզ բոլորիս անտառն է կաշկանդում... Ասենք, դա ինձ համար վերջ ի վերջո կարևոր էլ չէ։

—Իսկ ինձ համար կարևոր է։ Եթե նա ինձ կաշկանդեր, ես կհրդեհեի այն։

— Եվ ինքդ էլ հետը կայրվեիր...

— Թող այդպես լինի։ Միայն թե նա այրվեր։

— Եվ կեցցե՞ Հեղափոխությո՞ւնը... Չլինի՞ դու պատրաստվում ես Մոսկվա գնալ... Կարմիր անտառը լա՞վ է վառվում... Եվ ես չեմ ասում, թե նրանք ճիշտ չեն վարվում։ Ասում են, հրդեհից հետո հողն ավելի բերրի է դառնում... Բայց այն հողը ես արդեն չեմ տեսնի։ Ես այս հողում եմ գտնվում։ Եվ այստեղ էլ մնում եմ։

Ոչ, հեշտ չէր նրան դուրս քաշել հին աշխարհի սոցիալական թփուտներից։ Նա ուզում էր ձեռք գցել ավելի շատ, և նա շատ գործ ուներ... Եվ նա մեծ կտոր ձեռք գցեց։ Բայց ստիպված եղավ մեծ կտորներ զիջել նաև հարստություն դիզող մյուս ասպետներին (ձեռքը ձեռք է լվանում)։ Մենամարտն ինքը նրանց միմյանց էր դամում։ Սեպը՝ սեպին։ Աննետան տեսավ, որ կարելի է պատկանել աշխարհի տերերի թվին և լինել ավելի քիչ ազատ քան աղքատը, որը ոչինչ չունի։ Եթե միայն այդ աղքատը հոգի ունի կամ (իսկ դա միևնույն բանն է) մտածում է, որ ունի։ Բայց այդպիսիները հազվադեպ են։ Մեծամասնությունը զուրկ է հոգուց կամ (իսկ դա միևնույն բանն է) օժտված է այդ հոգով, բայց դա չգիտի։ Աննետան գտնվում էր հոգու իշխանության

տակ (ինչպես երբեմն ասում են. ամուսնու իշխանության տակ)։ Ոչ թե նրա համար, որ նա այդ հոգու հետ կապում էր անդրշիրիմյան կյանքի հարցը, այն աշխարհում ապահովություն ունենալու հարցը։ Եթե մարդ իսկապես հոգի ունի, նա չի դողում այդ հոգու վրա, ինչպես նողկալի սեփականատերը, որը վախենում է, թե իրեն կթալանեն։ «Ե՛ս չեմ իմ հոգուն տիրապետում։ Այդ հոգին ի՛նքն է ինձ տիրապետում»։ Տիմոնը կարող էր Աննետային առարկել. «Ուրեմն, դո՛ւ էլ ազատ չես...»։ Ճիշտ է։ Մեղանից ո՞վ է ազատ։ Մենք բոլորս շախմատի տախտակի վրա ընդամենը ֆիգուրաներ ենք։ Իսկ ո՞վ է մեզնով խաղում։

Ոչ բոլոր ֆիգուրաներն են միանման արժեքավոր։ Աննետան թագուհի էր այն շախմատային տախտակին, որտեղ Տիմոնը թնդանոթ էր։ Նա ազդում էր խաղի ընթացքի վրա։ Նրա ազդեցության տակ այդ մինոտավրը դառնում էր ավելի մարդկային, նա դառնում էր ընդունակ,— թեկուզ և ժամանակ առ ժամանակ,— մեծահոգի խոյանքների համար, իսկ դա արդեն քիչ չէր... Իհարկե, Տիմոնը երբեք զերծ չէր այդ ունակությունից,— մեկ-մեկ նա իրեն թույլ էր տալիս այդպիսի շռայլություն։ Բայց իր մեծահոգի խոյանքներին նա նայում էր ինչպես հիվանդությանը, և նրանից բուժվում էր ցինիզմով, ինչպես խինինով են բուժվում։ Նրա մեջ խառնված էին սրիկան և հերոսը, և դժվար է ասել, թե նրանցից որն էր երեսի կողմը, որը՝ հակառակ, քանի որ նա կարող էր ցանկացած լոպեին շրջվել թե՛ մեկ, թե՛ մյուս կողմի վրա։ Մի խոսքով, մինչև Աննետան, մինչև այն պահը, երբ Աննետան նրան իր բուռը հավաքեց, նա հաճույքով էր ի ցույց դնում իր նողկալի կողմերը։ Աննետան կարողացավ նրան ստիպել դրսևորելու նաև իր «եսի» լավագույն կողմերը։ Առանց մեծ ջանքերի նա հասավ այն բանին, որ Տիմոնն սկսեց լայն օգնություն ցույց տալ հասարակական օգտավետ շատ ձեռնարկումների, ոչ այնքան բարեգործական (Տիմոնը դրանց չէր վստահում), որքան պրոֆեսիոնալ և լուսավորչական։ Ինչ վերաբերում է մասնավոր բարեգործությանը, ապա նա Աննետային հնարավորություն տվեց գործելու ըստ իր սեփական հայեցողության։ Ճիշտ է, Աննետան նրան լրիվ հաշիվ էր տալիս, բայց Տիմոնը նրա հաշվե-

տրվությունները աչքի էր անցկացնում շատ թռուցիկ, և Աննետան գիտեր, որ դրա համար նրանից կպչելու կարիք չկա։ Այդպիսի օգնություն ստացողներից առաջինը Ադրիատիկի փոքրիկ եղնիկն էր, նրան ետ տարան Ֆրանսիայի հարավում գտնվող իր հարազատ փոքրիկ քաղաքը և բնակեցրին այնտեղ։ Նա ամուսնացավ և հիմա կերակրում էր իր ձագուկին, որը, նրա կրծքին քնելով, ժամանակ առ ժամանակ վեր էր թռչում. գուցե նա լսում էր, ինչպես են անտառի թավուտում հաչում շները...

Բայց Աննետայի Տիմոնին ցույց տված ամենամեծ ծառայությունն այն էր, որ նա Տիմոնին ստիպեց կարգ ու կանոն մտցնել իր գործունեության մեջ, ետ վարժեցրեց որևէ բան անելուց հենց միայն այն պատճառով, որ խելքին այդպես է փչել։ Աննետան Տիմոնի համար նպատակ էր նշում և, երբ նա այդ նպատակին հասնում էր, ցույց էր տալիս հաջորդը։ Ընդամենը Աննետան Տիմոնին սովորեցրեց դատարկ բաների վրա ժամանակ չկորցնել և խփված նապաստակին ուրիշներին չթողնել։ Իհարկե, նա Տիմոնին ուղղում էր դեպի այն կողմը, որ կողմն ինքն էր հակվում, —և ամենամիս ավելի ու ավելի գիտակցորեն. դեպի միջազգային սոցիալական վերափոխման կողմը, որը տեղի էր ունենում, ինչպես ցիկլոնի կենտրոն, ՍՍՀՄ-ի շուրջը։ Եվ արդեն մի քանի ամսվա ընթացքում արդյունքներն այնքան ակնառու էին, որ Տիմոնի պարտնյորները անհանգստացան։ Նրանց մեծ ժամանակ պետք չեղավ, որպեսզի տեսնեն, թե քամին որտեղից է փչում։ Աննետային սկսեցին տարօրինակ ուշադրություն ցույց տալ այն մարդիկ, որոնք չանում էին թափանցել Տիմոնի գաղտնի պլանների մեջ և որոնք շահագրգռված էին նրա անկանոն ապրելակերպի համար։ Նրանք չէին կասկածում, որ, եթե իրենց կոմպանիոնը և դաշնակիցը հնարավորություն ունենար, մեծ ուրախությամբ կոլորեր նրանցից յուրաքանչյուրի վիզը։ Նրանց սարսափ էր ազդում Տիմոնի խելքը։ Նրանք շատ ավելի հանգիստ կապրեին, եթե նա գոնե իր եռանդի կեսը քամուն տար։ Նրանք, ճիշտ է, քողարկված արտահայտություններով, բայց և այնպես Աննետային հասկանալ տվին, որ եթե նա այդ մասին հոգա, ապա նրանք վարձահատույց կլինեն։ Բայց այդ կինը պա-

տասխանում էր այնպիսի սառը հեգնանքով, որ նրանք կորցրին դրան հետամուտ լինելու ամեն մի ցանկություն։ Տիմոնը սրտանց ծիծաղում էր, երբ այդ մասին իմացավ։ Եվ փղի աչքերում բոցավառվեց վրեժխնդրության կրակը։ Աննետան օգտվեց այդ կատաղությունից՝ նրան կրկնակի ուժով առաջ մղելու համար։ Եվ թափ առած, նա իր մրցակիցների քթի տակից ճանկեց մի սքանչելի գործ, որը նրանք արդեն իրենցն էին համարում։

— Դու վտանգավոր ես դառնում,— ասում էր Տիմոնն Աննետային։— Նրանք քեզ կփախցնեն՝ քո նվիրվածությունը կոտրելու համար։ Քեզ պահպանելու համար ստիպված եմ ամուսնանալ քեզ հետ։

— Դա ինձ կորցնելու ամենաճիշտ ձևն է,— առարկեց Աննետան։— Միայն թե ոչ դա, Տիմոն։

— Օ, ես դրան չեմ ձգտում,— թեթևակի ծաղրելով ասաց Տիմոնը։— Բայց դու կարող ես վստահ լինել, որ նրանք քեզ ոչնչացնելու համար ոչ մի բանի առաջ կանգ չեն առնի։ Եթե դա Չիկագոյում լիներ (իսկ Չիկագոյի բարքերը մեզ մոտ կարմատավորվեն տասը տարուց ոչ շուտ), նրանք այդ արդեն արած կլինեին։

Նա Տիմոնին չուզեց ասել, որ բանը հենց դեպի այդ է գնում։ Վերջերս Աննետան Սան-Ֆրանցիսկոյից մի տուփ խուրմա էր ստացել։ Ուղարկողի անունը նրան անծանոթ էր։ Խուրման այն աստիճանի լավն էր, որ նրա մոտ ուտելու ցանկություն առաջացավ։ Բայց Աննետայի մեջ գլուխ բարձրացրեց կասկածը... Նա խուրմայով տուփը տարավ բակտերիոլոգիական լաբորատորիա անալիզի։ Լաբորատորիան պատկանում էր մի լեհ բակտերիոլոգ կնոջ, որը մեկ-մեկ Տիմոնի թերթում հոդվածներ էր տպագրում։ Անալիզը խուրմայի մեջ հայտնաբերեց դատուրին[1]։ Աննետան տուփը շպրտեց, Տիմոնին առանց որևէ բառ ասելու։ Եկավ նաև Թուրքիայից մի տուփ խավիար, բայց այստեղ Աննետան նույնիսկ կարևոր չհամարեց անալիզի դիմել։ Դրանից հետո առաքումները դադարեցին։ Մտահղացումը անհաջողություն ունեցավ։ Աննետան զգուշացավ և անվերջ նայում էր, թե որտեղից, որ անկյու-

---

[1] Դատուրին—Բելլադոննայի ալկոլոիդ, թույն։

նից կարող է նորից վտանգ գալ։ Տիմոնը նույնպես տխսեց զգուշանալ, թեև Աննետան ոչինչ չէր ասում։ Նրանցից ոչ մեկը անհրաժեշտ չէր համարում մյուսին անհանգստացնել։ Բայց նրանց զգոնությունն արթնացված էր, ընդհանուր վտանգը, միմյանց նկատմամբ ունեցած թաքուն հոգսերը մտերմացնում էին նրանց։

Վոգեզի մեկնելու ժամանակ, երբ նրանք ընթրիքից հետո դուրս էին գալիս ռեստորանից, Տիմոնի վարորդը, որը նրան նվիրված և երկար տարիներ նրա մոտ ծառայած մարդ էր, հանկարծ հիվանդացավ մի տարօրինակ տանջալից հիվանդությամբ։ Օգուտ չկար որոշել, թե ինչն էր դրա պատճառը։ Մնում էր միայն հիվանդի հոգսերը հանձնարարել բժշկին։ Եվ քանի որ Տիմոնին անհրաժեշտ էր ինչ էլ ուզում է լինի վերադառնալ Փարիզ, նա իրեն ցույց տված տեղում մի ուրիշ վարորդ գտավ։ Բայց, ուշադիր զննելով, Տիմոնը նրա նկատմամբ անվստահություն զգաց և հրաժարվեց նրա ծառայություններից։ Տիմոնը շատ հանգամանորեն զննեց ավտոմոբիլը և տեսավ, որ նրա շատ կարևոր պտուտակներից մեկը ջարդվել է։ Այդ ժամանակ նա գտավ գյուղում եղած միակ ավտոմոբիլը, նրա դիմաց այնպիսի գին առաջարկեց, որը բացառում էր մերժելու ամեն հնարավորություն, և Աննետայի հետ մեկնեց, բայց արդեն ուրիշ ճանապարհով։ Ճանապարհին նրանք խոսեցին վերջին ամիսներին ունեցած որոշ դիտողությունների շուրջ։ Այդ ժամանակից ի վեր Տիմոնը իր խորհրդավոր ճանապարհորդություններից առաջ ոչ ոքի, բացի Աննետայից, չէր վստահում ավտոմոբիլի ստուգումը։ Նա Աննետային մեքենա վարել սովորեցրեց, որպեսզի անհրաժեշտության դեպքում վերջինս կարողանա իրեն փոխարինել։

Տիմոնը տեսնում էր, որ իր գլխին սպառնալիքները խրտանում են, և դա բորբոքում էր նրա պլեբեյական կատաղությունը։ Նա պատասխանում էր հարձակումով։ Իր հակառակորդների տակը փորում էր։ Վայրի չարախնդությամբ նա մերկացնում էր նավթի-արքայի՝ ինչպես ինքն էր կոչում սեր Հենրի Բատավսկուն[1], քաղաքական ու ֆինանսական

[1] Նկատի է առնված նավթային մագնատ Հենրի Դետերդինգը։

մեքենայությունները։ (Դա դեռ ամենասիրալիր անվանումն էր—սովորաբար նա ուրիշ արտահայտությունների էր դիմում)։ Օրըստօրե նա ավելի ու ավելի էր ներգրավվում հակասովետական կոալիցիայի դեմ պայքարի մեջ։ Դա չէր բացասում կոմունիզմի նկատմամբ ունեցած նրա անբարյացակամությունը, բայց նա ատում էր և արհամարհում նրա հակառակորդներին։ Հիմա նա արդեն ուրիշ ընտրություն չուներ։ Կենաց ու մահու պայքար էր։ Նա զգում էր, որ նրանք իրեն շրջապատել են լրտեսներով, ոստիկաններով, և ինքն էլ էր շրջապատում նրանց իր գործակալներով, ընդ որում հաճախ այդ գործակալները ծառայում էին երկու կողմին էլ։ Վերջին տասնհինգ տարիներին քաղաքականությունը և աֆերաները այնքան սերտ էին միահյուսվել պետական ու մասնավոր ոստիկանության հետ, որ բոլոր այդ գազանները վերջ ի վերջո մի ամբողջ միասնություն կազմեցին։ Եվ արդեն հնարավոր չէր գլուխ հանել, թե ով է ում իր ձեռքին պահում։ Ավելի հաճախ նրանց ճիգերը ի չիք էր դարձնում փոխադարձ շանտաժը։ Եվ դա լավ էր։ Մի՞թե մեր պետություններում չկան ոստիկանության խռովարար պրեֆեկտներ, որոնք ոչ ոքից ու ոչնչից չեն վախենում, քանի որ իրենց տրամադրության տակ գաղտնի փաստաթղթեր ունեն և կարող են վարկաբեկել բոլոր կուսակցությունների քաղաքական գործիչներին։ Մի՞թե. այդ սրիկաներն իրենք շանտաժիստին չեն պահում կախաղանափայտի տակ տարուբերվող օղակում... Այդպիսով, թշնամիներն իրար հետ մտնում են ամենազարմանալի գաղտնի միություններ մեջ։ Բայց Տիմոնի համար նման միություններ հետաքրքրություն ունենալուց։ Նա պատռեց այդ «թղթի կտորները»։ Նա ինքն իրեն դուրս դրեց ջունգլիների օրենքից։ Բրիտանական տրեստը, որը հոգում էր Տիմոնի ծախսերը, ճակատագրի քմահաճույքին թողեց նրա լրագիրը։ Տիմոնն իսկույն ևեթ այդ լրագիրը հանձնեց թշնամական բանակին—ամերիկյան խոշոր մի տրեստի, որը նրան բարձրացրեց նախկին մակարդակին։ Տիմոնն սկսեց քանդել իր երևակվա դաշնակիցների տակը։ Բայց այդ ձեռնարկումը կործանարար դուրս եկավ։ Նոր դաշնակիցները դրանից օգտվում էին միայն իրենց նպատակի համար։ Տիմոնը ճզմվելու վտանգի էր են-

թարկվում երկու թշնամական լագերների միջև։ Նա Փարիզում արդեն իրեն հանգիստ չէր զգում և մի նոր ձեռնարկություն գլուխ բերեց—մի լայնածավալ արդյունաբերական կարտել, որը պետք է պայքար տաներ անգլո-սաքսոնական գործարարների հեգեմոնիայի դեմ։ Գործը պահանջում էր արտասահման տեղափոխվել։

Դա լարված աշխատանքի ամիսներ էին։ Աննետան այդ աշխատանքի մեջ շատ գործնական մասնակցություն էր ունենում։ Նա ժամանակ չուներ մտածելու թերթերի թշնամական ելույթների մասին, որոնք կամաց-կամաց նրան կրակի տակ էին առնում։ Տիմոնն Աննետայի համար ավելի շատ էր անհանգստանում, քան Աննետան ինքը, և փոթորկվում էր։ Նա ավազակներին հարգանք ներշնչելու իր ձևերն ուներ։ Բայց Աննետան ոչ մի հիմք չէր տեսնում Տիմոնի վարձկաններին ավելի բարձր դասել, քան նրա թշնամիների վարձկաններին. «Կապուլետտի... Մոնտե՞կկի...»։ Եվ մեկը, և մյուսը—բանդիտներ են։

— Հաճույք պատճառիր ինձ, Տիմոն, ազատիր ինձ քո ավազակների խնամակալությունից։

— Դու գերադասում ես, որ վրադ կեղտաջրե՞ր լցնեն։

— Թող ասեն, ինչ ուզում են։

Եվ Աննետան ուսերը թոթվում էր։ Նրա ինչ գործն էր հասարակական կարծիքը... Ասենք, ոչ, նա խոցելի մի տեղ ուներ—իր աքիլլեսյան գարշապարը. ի՞նչ կսկսի նրա մասին մտածել իր որդին։ Եվ իր տղայի պատճառով նրա համար այդ ատելի հասարակական կարծիքը ուժ էր ձեռք բերում։ Գարշահոտությունը կարող էր հասնել Մարկին։ Նա պետք է պահպաներ մեծ զգուշություն, որպեսզի ոչ մի առիթ չտար մտածելու, թե, իբր, Տիմոնի մոտ ունեցած ծառայությունից նա ինչ-որ անպատշաճ օգուտներ է դուրս կորզում։ Ու թեև Մարկն այլևս նրա մոտ չէր գալիս և ոչինչ իմանալ չէր կարող, բայց և այնպես այն միտքը, թե ինքը կարող է որդուն խաբել, Աննետային սարսափեցնում էր, և նա հրաժարվում էր ամեն տեսակի նվերներից, որոնք նրան առաջարկում էր Տիմոնը, թեև դրանք բնական էր համարում, և ինքն ազնվորեն արժանի էր դրանց։ Եվ իսկապես էլ, ի՞նչ առանձին մի բան կար դրա մեջ։ Մի՞թե Աննետայի թափած ջանքերն

ու դրանց հետ կապված վտանգները հարյուրապատիկ չէին փոխհատուցում դրանք։ Պե՞տք է արդյոք ասել, որ նա ամենից շատ ափսոսում էր այն զգեստները, որոնցից նա մի երկու անգամ հրաժարվել էր։ Ո՞ւմ էր պետք նրա հրաժարվելը։ Եթե բանը վերաբերվեր միայն ու միայն իրեն, Աննետան ազատություն կտար շար լեզուներին։ Բայց մի օր, ընդամենը մեն մի անգամ, նա ընդունեց մի հասարակ, գեղեցիկ, լավ կարած շոր, որը իրեն դուր էր գալիս, և պե՞տք էր, որ հենց այդ օրը նա հանդիպեր Մարկին։ Եվ ի՞նչ հայացքով էր Մարկը ոտից գլուխ նայում նրան։ Այդ հայացքից Աննետան ամբողջ մարմնով կարմրեց։ Նա աճապարեց տուն, որպեսզի որքան կարելի է շուտ վրայից գցի այդ չարաբաստիկ շորը, կախեց պահարանում և այլևս երբեք չհագավ։ (Երբեմն նա այնուամենայնիվ բացում էր պահարանը, որպեսզի նայի այդ շորին—քնքշորեն ու վշտացած)։ Բայց չարիքն արդեն տեղի էր ունեցել։ Խանդոտ որդին չէր մոռանում։ Աննետան կատեգորիկ կերպով Տիմոնին արգելեց իրեն որևէ նվեր տալը։ Նա իրեն դատապարտեց համեստ մի կյանքի, ինչպիսին վարում էր նաև առաջ, միևնույն նեղ բնակարանում։ Նա շատ հստակ պատկերացնում էր, թե ինչ ինկվիզիտորական հայացքով Մարկը կսկսեր ամեն ինչ տնտղել, եթե իր մոտ գար։ Աննետան Տիմոնից չէր թաքցնում իր «զսպվածության» պատճառը, որն իր սրտով էլ չէր (նա չէր հրաժարվի որոշ կոմֆորտից. հիսուն տարեկանում դա ավելի լավ ես գնահատում, քան երիտասարդ տարիներին)։ Իսկ Տիմոնը ծիծաղում էր նրա վրա։

— Սատանան տանի,— բացականչում էր նա։— Դու երևի ավելի քիչ ձևեր թափեիր, եթե մտադրված լիներիր ամուսնանալ կոտոշներ դնել։

Աննետան պատասխանում էր նույն տոնով.

— Ի՞նչ խոսք։ Ինքնըստինքյան հասկանալի է։ Ամուսինը վերցնում է այն, ինչ իրեն տալիս են։ Այն, ինչ աստված է տալիս, նա կարող է նաև ետ վերցնել։ Բայց ինչն ինքը աստված էլ չի կարող, դա որդուց կտրվելն է։ Որդին դուրս է եկել իր տնից, և այդ տունը պատկանում է որդուն։ Նա

պարտավոր է իր որդուն հաշիվ տալ։ Իսկ ես պարտավոր եմ հաշիվ տալ իմ որդուն։ Ամուսինն ընդամենը կենվոր է։ Իսկ իմ տան տերը որդիս է։

— Իսկ նա ի՞նչ է անում այդ տան համար։ Ո՛չ մի բան։ Ես կառավարում եմ քո տունը, ես այն դարձնում եմ եկամտաբեր։

Աննետան հայացքով չափեց նրան.

— Ես եկամտաբեր տուն չեմ... Մի՛ հոգա իմ տան մասին։ Բանալին ինձ մոտ է, և ինձ մոտ էլ կմնա... Իմ բարեկամ Տիմոն, ես շատ շնորհակալ եմ քեզ, բայց արի քո տնով զբաղվենք։ Դու ինձ վճարում ես, որպեսզի ես այդ տունը կառավարեմ։ Արի զուր խոսակցության համար ժամանակ չվատնենք։

Պատահում էր—մի քանի օրվա, իսկ երբեմն էլ գիշերվա լարված աշխատանքից հետո— Տիմոնն ստիպում էր Աննետային գոնե մի քիչ հանգստանալ։ Նա Աննետային ասում էր.

— Բանը նրանով կվերջանա, որ դու ինձ կստիպես հարգել մարդկությանը։

Աննետան պատասխանեց.

— Մարդկությունը հարգանքի կարիք չի զգում։ Նրան օդ է պետք և հաց։ Աշխատիր շնչել այդ մարդկությանը։ Դուք այնքա՞ն եք ծանր, այնքա՞ն եք ծանր, Տիմոն։ Հնարավոր չէ շնչել։ Ձեր ինչի՞ն է պետք այդքան հողը։ Մի փոսը հերիք է, գերեզմանոցում։

Տիմոնը որոշեց հիմնավորվել Բրյուսելում, որտեղից նա հաճախակի պետք է մեկներ Գերմանիա, Լոնդոն և այլն։ Աննետան ոչ առանց տատանման համաձայնեց մեկնել նրա հետ։ Նրան կոտրելու համար Տիմոնը զոհաբերեց իր ամբողջ հպարտությունը։ Աննետան նրան արդեն տեսել էր ծանր րոպեներին (գուցե, այդ րոպեները լավագույններից էին), երբ Տիմոնին համակում էր ամեն ինչ ջարդելու, ամեն ինչ խորտակելու, իր գլխին տունը կործանելու մռայլ ցանկությունը, որպեսզի իր հետ ավերակների տակ մեռնեին նաև մարդիկ։ Հոգնությունը, զզվանքը, որոշ անձնական գառնություններ, որոնց մասին նա չէր խոսում... ինքնասպանու-

թյուն էր գործել մի կին, գեղեցիկ, երիտասարդ փարեզյան մի դերասանուհի։ Տիմոնը հրապուրվել էր այդ կնոջով, ուզեցել էր տիրանալ նրան, նրան գնել էր և իր յախտայով տարել ծովային զբոսանքի։ Բայց մի անգամ, այնպիսի մի օր, երբ տիրոջ ճնշումն անչափ ծանր էր եղել, նա իրեն գցել էր ջուրը և խեղդվել, որպեսզի նրանից ազատվի... Այդ աննկուն մարդը մինչև հոգու խորքը ցնցված էր։ Նա, որ առանց զղջման ստվերի անցել էր այնքան կործանումների վրայով, այս անգամ, չգիտես ինչու, չէր կարողանում ազատվել խղճի կշտամբանքներից։ Գուցե, հարվածը եղել էր հոգեկան թուլության պահին։ Գուցե, նա չափազանց խո՞րն էր բռնված իր կրքով, մինչդեռ դա համարում էր միայն էպիզոդ և այդ պատճառով չէր պաշտպանում, և նրա անկրկնելի արժեքը հասկացավ այն բանից հետո միայն, երբ ինքն ամեն ինչ կործանե՞ց։ Նա այդ խոստովանեց միայն Աննետային։ Այնուհետև հաջորդեցին ուրիշ խոստովանություններ, դրանք Աննետայի համար բացեցին այն բոլոր ողորմելի, բոլոր լավագույն, բոլոր մարդկային հատկությունները, որոնք թաքնված էին այդ ցիկլոպի մեջ։ Տիմոնից խոստովանանք ընդունելով, Աննետան նրա հանդեպ իր վրա էր վերցնում որոշ պարտականություններ։ Բայց միևնույն ժամանակ նա ստանում էր նաև իրավունքներ։ Տիմոնը լռելյայն ընդունում էր այդ իրավունքները։ Ողջամտությունն Աննետային թույլ չէր տալիս չարաշահել դրանք։ Նա իրեն այդ իրավունքը չէր էլ վերապահում, բայց նա դրանցից օգտվում էր սոսկ նրա համար, որպեսզի Տիմոնի գործունեությունը ուղղի այն ճանապարհով, որը սոցիալական տեսակետից համարում էր ամենաճիշտը։ Սակայն, ինչքան էլ ուզում է փափուկ լիներ Աննետայի ձեռքի ճնշումը, դա չէր վրիպում Տիմոնից և նույնիսկ դուր էր գալիս նրան,— Տիմոնը Աննետային չէր խանգարում. դա ամենևին էլ չէր հակասում Տիմոնի ամենազաղտնի ցանկությանը։ Տիմոնը միայն հավատ չուներ, որպեսզի նույն բանն ուզեր ինքը։ Աննետան հավատում էր, և դա Տիմոնի համար տհաճություն չէր։ Դա որոշ չափով թարմացնում էր նրան, որին տանջում էր սեփական, աննպատակ վատնվող կամքի ապարդյուն լինելու այրող գիտակցությունը։ Նա

միանգամայն կարող էր Աննետային բավականություն պատճառել և վարվել այնպես, ինչպես կվարվեր, եթե ինքն էլ հավատալիս լիներ։

Կամաց-կամաց Տիմոնը քաշվում էր խաղի մեջ։ Կապիտալիստական ամրոցում նա դառնում էր այն բանակը, որն անցնում է թշնամու կողմը,— նման այն բարբարոսին, որը մտնում է հռոմեական լեգիոնները և պատրաստվում է դարբասները բացել թշնամու առաջ։ Այժմ, իրեն նեղություն չտալով թաքցնել այդ, նա հակադրվում էր իմպերիալիստական կոալիցիայի դեմ, որը, հնարավորություն չունենալով ինտերվենցիա կազմակերպել— ջանում էր տնտեսական բլոկադայով խեղդել ՍՍՀՄ-ը։ Տիմոնը խափանում էր նրանց բլոկադան, Ռուսաստանի հետ առևտրական պայմանագրեր կնքելով,— իհարկե, ոչ նրա գեղեցիկ աչքերի համար. նա այդ պայմանագրերից քիչ օգուտ չէր կորզում։ Իր հակառակորդներին Տիմոնը հասցնում էր հուսահատության։ Զցանկանալով Տիմոնին զիջել, նրանք նույնպես համաձայնություն էին գալիս պրոլետարական աշխարհի հետ, ինչքան էլ որ ուզում էին ոչնչացնել նրան։ Նրանց փախուստները դեպի թշնամու կողմը երերում էին կոալիցիան։ Տիմոնի շուրջը ատելությունն սկսում էր խտանալ։ Նրա ողնաշարն ուզում էին ջարդել։ Տիմոնն այդ գիտեր։ Եվ արդեն, իհարկե, այդպիսի րոպեին, երբ Տիմոնը պատրաստվում էր նետվել մարտահնոցը, երբ նա պողպատյա կարտել էր ուզում կազմակերպել, մի մարտական մեխանիզմ, որի օգնությամբ ուզում էր կործանել ամենահզոր անգլո-սաքսոնական մեխանիզմի տիրապետությունը,— այդպիսի պահին Աննետան չէր կարող նրան թողնել։ Աննետան միակ մտերիմ մարդն էր, որին Տիմոնը կարող էր վստահել։

Աննետայի համար դժվար էր որոշում կայացնելը։ Նա այլևս չէր ուզում որդուց հեռու գնալ։ Թեև ներքին օտարությունը արտաքնապես դեռ մնում էր նրանց միջև, այնուամենայնիվ, երկուսն էլ բավական ժամանակ ունեին, որպեսզի ամեն ինչի մասին մտածեն ինչպես պետքն է և նույնիսկ ասեն. «Mea culpa»[1]։ Աննետան պատրաստ էր Մարկին

[1] Իմ մեղքն է (լատ.)։

ազատել առաջին քայլից։ Բայց շորի հետ տեղի ունեցած պատմությունից հետո նոթոտ հիմարը չէր դադարում իր խցում փքվել։ Մի՞թե նրանք հենց այդպես էլ կբաժանվեն իրարից, առանց այդ հիմար թյուրիմացությունը ցրելու։ Անցնում էր ժամանակը, անցնում էր կյանքը, իսկ հետո ինքդ էլ կդնաս ընդմիշտ... Մի առավոտյան Աննետան Մարկին գրեց.

«Իմ սիրելի տղա, ես մի քանի ամսով մեկնում եմ Փարիզից։ Այս անգամ ես այնքան էլ հեռու չեմ լինի։ Ոչ ավելի հեռու, քան եղել ենք այս ամբողջ տարին։ Բայց ես այլևս չեմ կարողանում ոչ դնալ, ոչ էլ մնալ, առանց քեզ գրկելու։ Չէի՞ր երևա արդյոք, դնչիկդ տեսնեի։ Եթե դու համարում ես, որ ես ինչ-որ բանով մեղավոր եմ (կարծում եմ, դու սխալվում ես, բայց չեմ պնդում այդ), ապա ներիր ինձ։ Բայց, կներես, թե չես ների, միևնույն է արի, համբուրիր ինձ»։

Մարկը դեռ չէր հասցրել ստանալ այդ նամակը, երբ մի այլ առիթով նրանք հանդիպեցին։ Անցնելով սուրբ Եփեստոսի եկեղեցու կողքով, Մարկը կարդաց, որ այդտեղ կատարելու են Ցեղար Ֆրանկի «Երանության պատվիրանները»։ Նա վառվում էր երաժշտություն լսելու ցանկությամբ։ Դա տառապյալ հոգու ծարավ էր։ Էժան տեղերը տանող մուտքի մոտ մարդկային բազմություն էր կուտակված։ Օգտվելով հրմշտոցից, Մարկն անտոմս ներս խցկվեց։ Նրա հետևից ձայն էին տալիս, բայց նա խցկվեց առաջ և անհետացավ բազմության մեջ,— հիմա արդեն մյուսներն էին ճեղքում ամբարտակը, իսկ նրան մոռացել էին։ Հարյուրավոր ունկընդիրների հետ միասին նա սուզվեց թախծոտ երաժշտության լիճը, որը մանկան նման մաքուր էր, և խմաստուն, ինչպես ծերունու աչքերը։ Եվ հանգչող օրվա անարև լույսը երերում էր, ինչպես ջրերի վրայով ընթացող Քրիստոսը։ Մարկին այդ երաժշտությունը՝ գրեթե անծանոթ էր, դա չափազանց հեռու էր ժամանակակից երիտասարդությունից։ Բայց Մարկի սիրտը ճշմարտացի էր, հոտառությունը բավական ճիշտ, և նա նույնիսկ ավելի սուր կերպով կարող էր ըմբռնել իր համար օտար հոգու զեղեցկությունը, դրալ,

որ իր սեփական հոգին հույսերի կարիք է զգում, զգում է թեկուզ և տառապանքների կարիք, որոնք վեհացնում էին անցած դարը, որ զարդարված էր նույն այն փշե պսակով, որով պսակադրվել էր նրա աստվածը։ Եվ Մարկը ոչ առանց նախանձի էր մտածում. «Երանելի է վիշտը, եթե իր մեջ կրում է բաղձալի բերկրանք...»։ Երգչախումբը երգում էր. «Երանելի են ողբեցյալները, զի կսփոփեն նոքա...»։

Եվ հանկարծ, ինչքան էլ նա իրեն զսպում էր, արցունքը ժայթքեց նրա աչքերից։ Նա երեսով շրջվեց դեպի սյունը, որի մոտ կանգնած էր, և աչքերը ձեռքով փակեց։ Ոչ ոքի մտքով չէր էլ անցնի ծիծաղել՝ Մարկին այդ բոպեին տեսնելիս, բայց գոռոզը զայրանում էր ինքն իր վրա։ Նա հեծկլտում էր, ֆսֆսացնում և մատներով սրբում արցունքները —նա ամաչում էր այդ արցունքներից... Եվ այդ բոպեին, շտկվելով, նա իրենից մի քանի քայլի վրա սյան մյուս կողմում, անձրևից հետո իր պարզած աչքերով տեսավ նույնպիսի ցող, նույնպիսի արցունքներ. այդ արցունքները հոսում էին նրա մոր երեսով... Աննետան այստեղ էր։ Նա Մարկին չէր տեսել... Մարկը թաքնվեց և սյան հետևից նայում էր մորը, ուսումնասիրում էր նրան, որսում էր նրա երեսին արտացոլվող ամեն մի ապրումը...

Իսկ Աննետայի սրտում այդ երաժշտությունն արթնացնում էր բոլորովին ուրիշ զգացումներ, քան Մարկի սրտում։ Աննետան վերածնվում էր—Աննետան ինքը և նրա ամբողջ անցած կյանքը։ Ամեն մի չմեռնող երկ ստեղծված է իր ժամանակի բուն էությունից։ Արվեստագետը մենակ չէր, երբ ստեղծում էր այդ երկը։ Նա այդ երկի մեջ դրել էր բոլոր տառապանքները, ամբողջ սերը, իր ժամանակակիցների ամբողջ սերնդի բոլոր երազանքները։ Եվ Աննետան նույնպես այդ երաժշտության մեջ էր դրել իր արյունը։ Նա այդ երաժշտության մեջ տեսնում էր ինքն իրեն, ինչպես դիմանկարում, որը համեմատում են ծերացած, իր վրա երկար տարիների հիասթափության կնիքը կրող դեմքի հետ։ Աննետան այդ երաժշտության մեջ տեսնում էր արդարության նկատմամբ հավատը կորցրած մարդու վշտի վայնասունը և Գատավորի սփոփող ձայնը։ Նա հիշեց, որ մի ժամանակ այդ հնչյուններն ինքը լսել է Ստրասբուրգում, որն այն ժա-

մանակ գերմանական քաղաք էր,— պատերազմից ինը տարի առաջ։ Այն ժամանակ գերմանացիները, արբեցած հպարտությամբ, հաղթանակող, դեռ չէին հասկանում ոտնահարված արդարության այդ երգը։ Աննետան, մոռացության մատնված այդ խոշոր շիկահեր մարդկանց բազմության մեջ, որոնք հարբած էին հաղթանակի խնդությամբ, մտածում էր.

«Մենք նրանք ենք, ում դուք հաղթեցիք,— մենք հասկանում ենք, մենք խորամուխ ենք լինում այդ սրբազան խոսքերի մեջ։ Եվ դրա միջոցով մենք, պարտվածներս, դառնում ենք ձեզ հաղթողներ։ Մեզ վիճակվեց լավագույն բախտը...»։

Իսկ հիմա դրությունը փոխվել է։ Նախկինում անարդարությունից տառապած ժողովուրդը, Աննետայի ժողովուրդը, հիմա ինքն էր անարդարություն թույլ տալիս։ Եվ «երանության պատվիրանները», հուսահատության և սփոփանքի այդ երգը, այլևս արդեն այդ ժողովրդին չէին վերաբերվում։ Պարտվածների Քրիստոսը անցել էր մյուս ափը։ Ավա՜ղ։ Մարդիկ միայն այն չափով են զգայուն դեպի արդարությունը, ինչ չափով որ այն համընկնում է իրենց շահերի հետ։ Աննետան մեծացել էր այն սերնդի միջավայրում, որը դաստիարակվել էր «Gloria victis!»[1] մեծահոգի լոզունգով։ Եվ նա հոգու ցավով էր նայում, թե ինչպես է իր շոր էգոիզմի խորքում նրա ժողովուրդը, նրա հաղթանակող ժողովուրդը, քնաղդով ընդունում գալլական զորավար Բրեննի[2] լոզունգը։ Ճակատագրի անտեսանելի անիվը պտտվում էր, պտտվում էր, և կարող էին նորից վերադառնալ մռայլ օրերը... Աննետային խոցում էին յոթ սրեր. հիշողությունները, ուխտադրժությունը, ամոթը, խղճի խայթը, դաժան ծաղրը, քավության սայսապը, որը ավելի ու ավելի էր մոտենում, և հնազանդ հրաժարումը կյանքից։ Իսկ նրա որդին թաքնվում էր սյան հետևում և վայրկենապես բռնում էր նրա ամեն մի միտքը։ Նա ընկալում էր դրանք, միաձուլվում էր դրանց հետ։ Այն ամենը, ինչ մորից էր սկիզբ առ-

---

[1] Փառք հաղթվածներին (լատ.)։

[2] Նկատի են առնված գալլերի առասպելական առաջնորդ Բրեննի խոսքերը. «Vae victis»— վա՛յ հաղթվածներին (լատ.)։

նում, Մարկին թվում էր իրենը, հարազատը,— նա դրանում համոզված էր։ Մարկը նույն դառնությունն էր զգում, ինչ որ Աննետան—և միևնույն ակնթարթում, և Մարկը գիտեր, ինչո՞ւ են հոսում այդ արցունքները, քանի որ ինքն արցունքները թաքցնում էր... Հանկարծ փոթորկալից պոռթկումը նրան մղեց դեպի մայրը։ Նա դժվարությամբ անցավ հասարակության միջով և, թիկունքից մոտենալով, բռնեց մոր ձեռքը։ Աննետան ցնցվեց և, շրջվելով, տեսավ որդու դեմքը, որն իր կղակով կպչում էր համարյա նրա ուսին։ Աննետան համբուրեց Մարկին միայն իր շնորհակալ աչքերով, նրանք եղբայրական հայացքներ փոխանակեցին և, իրար ձեռք բռնած, առանց շարժվելու, օրատորիան լսեցին մինչև վերջը։

Նրանց ձեռքերն անջատվեցին միայն այն ժամանակ, երբ եկեղեցուց դուրս եկան։ Բայց նրանց սրտերն արդեն չէին անջատվում։ Ոչ մի խոսք չասվեց անցյալի մասին, ոչ մի բացատրություն չհետևեց, ոչ մի հանդիմանություն, ոչ մի խնդրանք՝ ներման համար. երկուսն էլ շնչեցին հինը և խաչ դրին նրա վրա։ Նրանք խոսում էին այն մասին, ինչ հենց նոր զգում էին,— հաղթանակի դառնության մասին... Ախ, եթե պարտված գերմանացիները գլխի ընկնեին այդ, եթե նրանք կռահեին, որ քաղաքական գործիչները Ֆրանսիայի բերանը փակել են, որ նրան պղծել են իրենց անարդարությամբ, իրենց կեղծավորությամբ, իրենց գիշատչությամբ, քաղաքական գործիչներ, որոնք օրենքներ են հրապարակում, քողարկվելով նրա անվան տակ։ Բայց այդպիսին է վիճակը հետպատերազմյան դարաշրջանում բոլոր ժողովուրդների մոտ։ Եվ նրանցից գրեթե ոչ մեկը ուժ չունի հակահարված տալու։ Նա նման է ավազի, որի մեջ սուզվում են բոլոր բարի մտադրությունները։ Մարկն ասաց.

— Ամեն մի նոր քայլով ավելի ու ավելի խորն ենք թաղվում։ Մեզ կլանում է ճահիճը։

Աննետան ձեռքը դրեց Մարկի ուսին և ասաց.

— Իսկ մենք կձգտենք դեպի վեր և կփրկվենք։ Եթե մեր ոտքները թաղվել են, կազատենք գլուխներս ու կրծքներս։ Ազատվելը ամբողջ մի կյանքի գործ է։ Եվ ավարտվելու է միայն մահվան հետ։ Մեծամասնությունը—կենդանի դիակներ են. նրանք գերեզմանային որդերին թույլ են տալիս

ծծելու իրենց արյունը։ Իսկ մենք, մենք դուրս կպրծնենք, մենք չենք թողնի, որ ճահճային տզրուկները մեզ լափեն... (Աննետան մտաբերեց ռումինական ճահիճները)։ Վարվիր ինձ նման։ Երբեք մի՛ հոգնիր։ Եվ օգնիր դուրս գալու նրանց, ովքեր թաղվել են։

Մարկն զգում էր, թե ինչպես է ճահճային տիղմը բարձրանում մինչև կուրծքը։ Եթե դա փողոցում չլիներ, նա երեխայի նման ձեռքերով կգրկեր մոր վիզը։ Աննետայի ներկայությունը քաջալերում էր նրան։ Եվ Մարկը նայում էր Աննետային սիրով, նա հպարտանում էր նրանով, ինչ մայրն ասաց։ Ինչպե՞ս կարող էր Մարկը կասկածել մորը։ Նա հենվել էր Աննետայի թևին։ Նա չէր ամաչում։ Չէ որ դա այնքա՜ն հաճելի էր—նրա վրա հենվել ամբողջ ծանրությամբ։

Եվ հենց այդտեղ Աննետան նրան ասաց, որ ինքը որոշ ժամանակով պետք է Փարիզից մեկնի։ Մարկը այրող մի ափսոսանք զգաց, մանկական մի սարսափ։ Աննետան նկատեց, թե ինչպես Մարկը ցնցվեց, և ասաց.

— Ես քեզ պե՞տք եմ։ Դու ուզում ես, որ ես մնամ։

Բայց հպարտությունն անմիջապես Մարկին ստիպեց զգաստանալ։ Նա պատասխանեց.

— Ես կարող եմ մենակ մնալ։ Չէ՞ որ դու էլ էիր մենակ։

Մարկը մտածում էր երկարատև պայքարի մասին, որ մայրն ստիպված էր տանել, այն մասին, թե նա ինչպիսի աղքատության մեջ էր այն ժամանակ Փարիզում։ Աննետան ժպտաց։

— Ես մենակ չէի, չէ՞ որ այն ժամանակ դու իմ գրկին էիր։

Մարկը նույնպես ժպտաց և ասաց.

— Ես հուսով եմ, որ մի օր այդ պարտքի տակից դուրս կգամ։

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՔԱՄԻՆ

Հենց այդ ժամանակ Սիլվիան հիշեց իր քրոջ որդուն։ Շահի և վայելքների հետևից ընկնելու նրա կատաղի վազքը վերջացավ։ Միանգամից—կարծես քամին քշեց տարավ։ Գործերի անհաջողությունն ու քայքայված առողջությունը վճռականորեն նրան հիշեցնում էին, որ խելքի գալու ժամանակն է։ «Ի՞նչ օգուտ վազելուց։ Պետք է ժամանակին կանգ առնել իմանա...»։ Նա շատ համեղ բաներ է կերել, շատ համեղ բաներ է խմել։ Իսկ հիմա արյունը գլուխն էր տալիս։ Հանկարծ նրան համակում էր կատաղի զայրույթը կամ կատաղի ծիծաղը... Այդպիսի մի նոպայից հետո հրավիրովի ընթրիքի ժամանակ նա քիչ մնաց կաթված ստանար։ Սիլվիան ամեն ինչ հիանալի հասկանում էր, նա գերազանց տեսնում էր ինքն իրեն, առանց չափազանցումների։ Նույնիսկ ցասումի րոպեներին, երբ նա դադարում էր իրեն տիրապետելուց, Սիլվիան ասում էր.

«Առանց հիմարությունների։ Քեզ հանգիստ պահիր...»։

Բայց հանգիստ պահել չէր լինում։ Երակներն ուռչում էին վզին ու քունքերին, և Սիլվիան սկսում էր անհեթեթություններ դուրս տալ... Ստոպ... Մի անգամ գիշերը նա, վերջապես, որոշում կայացրեց, և ձեռնարկությունը լիկվիդացվեց, մենատունը վաճառվեց, ամեն ինչ վերածվեց դրամի։ Նրա հիմար Գի Կոկին պղպջակի նման պայթեց ճգնաժամերից մեկի ժամանակ, ճգնաժամեր, որոնք թափվում էին և՛ բանկերի և՛ կառավարության գլխին միաժամանակ։ Ժամանակն այնպիսին էր, երբ պարֆյումերներին ուտում էր քաղաքականության մեջ դեր խաղալու փառամոլական ցանկությունը։ Այդ պատճառով էլ նրանք պետության ծախսերը հոգում էին, ինչպես իրենց վրա են վերցնում դուրս ընկած

աղջկա կերակրելու հոգսը։ Բայց, գրպանը դնելով այն, ինչ հասնում էր նրանց, պարոնայք մինիստրները նրանց խաբում էին ամենալկտի ձևով... Այդպես էլ նրան պե՞տք էր։ Դա չէր, որ անհանգստացնում էր Սիլվիայի քունը... Իսկ նրա քունը իսկապես էլ անհանգիստ էր, ամբողջ մեքենան հանգստի կարիք էր զգում, դա պետք էր ամբողջապես քանդել և յուղել... Սիլվիան լուծողական ընդունեց, կպցրեց մանանեխի սպեղանիներ, տզրուկներ։ Եվ սկսեց ապրել խաղաղ, բուրժուական, ընտանեկան կյանքով։

Իսկ ընտանիք նա ուներ։ Նա այդ ընտանիքն ստացել էր պատրաստի վիճակում և ձևակերպել էր որպես որդեգրություն։ Երեք երեխա՝ տասնչորսից տասնյոթ տարեկան։ Մայրը, Պերպետյու Պասսերոն (նա իր բելվիլյան հսկայական քիթը զարդարում էր Կարմենն անունով—մի անուն, որի հետ մշտապես հառնում է մաղերի մեջ նռան ծաղիկ դրած կնոջ կերպարը, և դա նրան սաղում էր ինչպես էշին կանացի ծղոտյա գլխարկը), Սիլվիայի աշխատանքային ուրկածների հին ընկերուհիներից էր։ Նրա հետ կապված էին երիտասարդական հիշողությունները, կյանքի հետ ունեցած առաջին մարտերը, դժվարին սկիզբը։ Քսանհինգ տարվա բարեկամական հավատարմությունը... Սիլվիան իր հին շներին չէր մոռանում, եթե անգամ դա հարթ սանրված, մի քիչ խելագար, անդյուրաշարժ, թանձրամիտ և ձանձրույթ պատճառող շուն էր, ինչպիսին Պերպետյուն է, որին Սիլվիան բոունցքներով քոթակում էր, իսկ նա նվիրվածությամբ լիզում էր վերջինիս այտը։ Պերպետյուն հիմարագույն ձևով ամուսնացավ, բայց ամուսնուց ստված նրան ազատեց, իսկ իր խելացնոր բնավորությունից ազատվել նա այդպես էլ չկարողացավ։ Ամուսինը, որ կնամոլ էր ու հարբեցող, պատերազմից չվերադարձավ։ Կարմենը շտապեց նրան ուրիշով փոխարինել։ Նա օժտված չէր Սիլվիայի վտանգավոր դատողականությամբ, բայց ընդօրինակում էր նրա ֆանտազիաները և ավերիչ օրինակը։ Նա դարձավ իր սիրեկանների որսը։ Նրանցից մեկը, որ խաղացող էր, Կարմենին կողոպտեց մինչև վերջին թելը և այն օրին հասցրեց (հասցրեց առանց հարկադրելու, իսկ դա հատուկ արվեստ է), որ Կարմենն սկսեց իրեն վաճառել, որպեսզի նրան կերակրի։ Մնացյալ

ամեն ինչում դա բարի, աշխատող և մշտապես կենսախնդությունից հարբած վիճակում գտնվող կին էր։ Երբեք, նույնիսկ ամենադժվար ժամանակ, նա չէր կորցնում իր ոգու ֆատալիստորեն բարի տրամադրությունը։ Իսկ երբ եկավ կյանքից նրա հեռանալու ժամանակը, նա հանգիստ մեռավ մի հիանալի, գթասիրտ քահանայի ձեռքերի վրա, սակայն չկարողացավ անկեղծորեն զղջալ իր մեղքերի համար։ Նա հենց այդպես անկեղծորեն էլ ասաց քահանային, իսկ քահանան ձևացրեց, թե չի լսում։ Բայց դրա փոխարեն Կարմենը հնազանդորեն քահանայի հետևից քրթմնջում էր «Meaculpa», «որպեսզի նրան բավականություն պատճառի», ինչպես ինքն արտահայտվեց։ Կարմենը գիտեր, որ մահանում է, բայց դա Նրան չէր հուզում։ Եվ, միայն երեխաներին հիշելիս էր, որ նա լաց եղավ։ Սակայն Կարմենը մխիթարվում էր նրանով, որ նա այդ երեխաներին թողնում է Սիլվիայի խնամքի տակ։ Եվ մինչև վերջին րոպեն նա Սիլվիայի հետ զրուցում էր։ Նրանք խոսում էին այն մասին, որ կյանքն այնուամենայնիվ լավ բան է (չնայած նրա բոլոր նողկալի կողմերին), խոսում էին այն մասին, թե որքան հաճելի բան է աշխատանքը, խոսում էին նաև սիրեկանների մասին։

Իր երեք երեխաներին նա քնքուշ անուններ դրեց. Բեռնադետտա, Կոլոմբ և Անժ։ Նրանցից ամեն մեկն իր ձևով էր ընկալում մոր անփույթ կյանքը, որը նրանք չափազանց շուտ տեսան իր ամբողջ մերկությամբ։ Երկու կրտսերները՝ Անժը և Կոլոմբը, երկվորյակ էին։ Երբ մայրը մեռավ, նրանք տասներեք-տասնչորս տարեկան էին։ Բեռնադետտան տասնվեց էր։ Անժը, որ հնազանդ, ջանասեր, ընտանիքին կապված մի երեխա էր, հետաքրքրություն էր ցուցաբերում դեպի կրոնն ու միստիկան, և հոգևորականությունը նրան իր ցանցը գցեց,— Անժը վաղ հասակից պատրաստվում էր քահանայի կարգ ընդունել։ Նա ազդեցություն էր գործում իր համածին քրոջ՝ գորովաշարժորեն հիմար, զգայական,իշուկի հիանալի աչքերով, թխահեր Կոլոմբի վրա։ Եղբայր ու քույր ապրում էին իրենց առանձնահատուկ կյանքով։ Նրանք միմյանց սիրում էին աստծո մեջ։ Բարեպաշտ Անժը իր Կոլոմբ քրոջ մեջ սիրում էր հենց աստծուն։ Սակայն Կոլոմբի բնազդը, որը նրան ամբողջ կյանքում չէր

լքում, արդեն հուշում էր նրան, որ աստծուն սիրելու համար, պետք է սիրել տղային, քանի որ դա նրա պատկերն է և նմանությունը։ Ավագ քույրը ծաղրական անտարբերությամբ նայում էր այդ ողջախոհ, հրապուրող, միանգամայն անմեղ խորհրդավորությանը։ Բեռնադետտան ստեղծված էր միայնակության համար։ Նա իր կյա՛նքն ուներ, և միայն իր։ Ոչ ոքի նա հաղորդակից չէր դարձնում այդ կյանքին։ Ասենք, ինքն էլ շատ խորամուխ չէր լինում նրա մեջ։ Նա չէր ուզում իրեն շատ լավ ճանաչել։ Եվ ոչ ոք աշխարհում նրան չէր հասկանում։ Բեռնադետտան ինքնամփոփ էր։ Նրան այդպիսին էր դարձրել շփումը Փարիզի այն շրջանների հետ, որոնք 1919—1920 թվերին համատարած ու անսանձ խրախճանքներում տոնում էին պատերազմի վերջը։ Նա կուշտ նայել էր այդ խելագար թռչնակներին, որոնք կրակի վրա այրում էին իրենց, և բնազդը պահպանում էր նրան կրակից։ Բեռնադետտան բարոյական տեսակետից ուրիշներին չէր դատապարտում։ Բարոյականությունը նրա մոտ ամենավերջին տեղում էր։ Նրա համար դա կարդի, խելամտության, մաքրության հարց էր, հատկապես արտաքին մաքրության, մարմնական և ամբողջ կենսական առօրյայի մաքրության... Ախր նա անչափ շատ էր տառապել իր մոր անփույթ ու թեթևաբարո կյանքից։ Այդ պատճառով էլ, խորապես հավատացյալ չլինելով, նա այնուամենայնիվ կրոնից վերցրել էր նրա արտաքին ղարհը։ Բեռնադետտան կրոնի մեջ մի ինչ-որ զսպող ուժ էր տեսնում, որը նրան անհրաժեշտ էր՝ կործանարար փորձություններից իրեն պատնեշելու համար, փորձություններ, որոնց միջով անցել էր իր մայրը։ Չմտածել ոչ մի այնպիսի բանի մասին, ինչի առաջ անխոհեմություն կլիներ բացել իր սեփական կյանքը տանող մուտքը—այդպիսին էր փրկության կանոնը, որը նա մշակել էր իր համար։ Այդ կանոնն ամենևին նրան չէր խանգարում (ընդհակառակն) իր աշխարհին վերաբերվել պաղ և դառը զգացումով, իսկ այդ աշխարհը նեղ էր, հասարակ և համաչափ, ինչպիսին որ լինում է Մեն թաղամասում ապրող համեստ քաղքենու փոքրիկ աշխարհը։ Եվ նրա կրքերի վրա դա նույնպես չէր անդրադառնում։ Իր կյանքի այդ կողմը նա կողպած էր պահում, իսկ բանալիները թաքցնում էր։ Դրամապանակն ամուր

սեղմված էր նրա չոր ձեռքում։ Նա ամենևին զերծ չէր քնքուշ, նույնիսկ շատ կրակոտ, զգացմունքներ տածելու ունակությունից։ Բայց ամենամոտ մարդկանց ևս նա ուշադրություն էր նվիրում լոկ այնքանով, որքանով նրանց կյանքերը հաղորդակցվում էին իր կյանքի հետ։ Մնացածը նրան քիչ էր հուզում. կրտսեր քրոջ և եղբոր միստիկական խաղերը, Սիլվիայի խենթ քմայքները, Մարկի հոգևոր կյանքը, որին Սիլվիան (մենք դեռ կվերադառնանք դրան) կեռիկին էր գցել, նրա քթի առաջ կարթն այս ու այն կողմ տանելով։ Բեռնադետտան նրանց մտածելակերպի հետ որևէ վեճի մեջ մտնելու ոչ մի ցանկություն չուներ։ Այստեղ նա իր քիթը չէր խոթում, թեև այդ փոքրիկ, սրածայր, կեռիկ քիթը, որը նման էր ճուռակի կտուցի, կարող էր, եթե միայն ուզեր, շատ արագ ամեն ինչ հոտոտել։ Բայց ամեն մարդ իր հոգսն ունի։ Նա ամբողջովին իրենով էր զբաղված։ Ասենք, նրա խելքը լավ էր կտրում, որ շատ ավելի պատշաճ է չափից դուրս հետաքրքրություն չցուցաբերել սեփական անձի նկատմամբ։ Մարդկանց առաջ պետք է ձևացնել, որ քեզ հետաքրքրողը իրենք են։ Նույնիսկ Սիլվիան էր թույլ տվել, որ իրեն մոլորության մեջ գցեն, համենայն դեպս գոնե այն բանում, ինչը անձամբ իրեն էր վերաբերում։ Իսկ ինչ ուրիշներին էր վերաբերում, ապա Սիլվիան բարյացակամ նայում էր, թե իր սանը ինչպես է ճարպկորեն ձգում նրանց թելերից։ (Սիլվիան չէր սիրում պարզամիտներին, որոնք հեշտությամբ խաբվում էին— և ինքը խաբվեց)։ Բեռնադետտան իսկույն հասկացավ, որն է Սիլվիայի թույլ կողմը։ Նա Սիլվիայի հետ թունոտ նկատողություններ էր փոխանակում, համաչափելով ընդ որում, նրանց թունոտությունը։ Սիլվիայի թաքնված զգացումների հետ այն մարդու նկատմամբ, ում վերաբերում էին այդ նկատողությունները։ Իսկ Սիլվիայի համար նա պահպանում էր նիհար կատվի իր քնքշանքները, որը ձեռքին ափսե բռնած տիրոջ հոտերին է քսմսվում։ Ամեն ինչ չէր, որ կեղծ էր նրա մլավոցների մեջ, նրա դուրս գցած մեջքում. նիհար կատուն սիրում էր այն ձեռքը, որն ափսե էր բռնել։ Տասնվեց տարեկան հասակում Բեռնադետտան պատրաստ էր իր իդեալը դարձնել «Հազար ու

մի դիշերվա» սուլթանուհուն, ինչպիսին Սիլվիան էր ներկայանում փարիզյան երիտասարդ դերձակուհիներին։ Եթե նա նույնիսկ տվյալներ չուներ Սիլվիայի քմահաճույքներն ու վայելքները ընդօրինակելու համար. այնուամենայնիվ, նա իրեն միանգամայն լիաուժ էր համարում վերցնել նրա քսակը։ Եվ Բեռնադետտան երախտապարտ էր Սիլվիային, որ սա նրա համար այդպիսի մի քսակ էր լցրել։ Սիլվիան չէր թաքցնում որ ինքը պատրաստվում է նրան դարձնել իր գլխավոր ժառանգորդը, քանի որ Աննետան ու Մարկը համառորեն հրաժարվում էին նրանից որևէ բան ստանալ։ Իսկ Սիլվիան ոչ պակաս համառությամբ էր ուզում դրան հասնել և վերջ ի վերջո գտավ, թե ինչպես Մարկին ստիպի, որ նա փողն ընդունի. փողը դնի Բեռնադետտայի անկողնու մեջ։ Սիլվիան մտադիր էր ամուսնացնել այդ երիտասարդներին։ Բայց նա հիմարություն ունեցավ (այդպիսի գործերում ամենախելացի կանայք հիմարանում են) նրանց այդ հասկանալ տալ։ Սառը Բեռնադետտան սկսեց չոր ջափի նման այրվել։ Մարկը արհամարհանքով շրջվեց։ Գուցե (ո՞վ գիտի), նա դեռ գնահատեր մուսկատ խաղողը, եթե այդ ի՛նքը գտած լիներ։ Բայց նրան վրդովեց այն, որ որոշում են իր փոխարեն, որոշում են առանց հարցնելու։ Հենց դա բավական էր, որպեսզի աղվեսը ոտքը դնի խաղողի թփին։ Մարկն սկսեց նկատել լոկ այն, ինչն իրեն զայրացնում էր Բեռնադետտայի արտաքին և ներքին կերպարանքում։

Մինչդեռ նա զուրկ չէր հրապույրից։ Նա նիհար էր, բայց նուրբ և լավ կազմվածք ուներ, գուցե չափից ավելի թուխ էր, բայց հաճելի էր։ (Նիհարությունը որոշ իմաստով ցանկասիրության մայրն է)։ Իսկ գլխավորն այն է, որ նա աչքի էր ընկնում իր թերություններն օգտագործելու կուտ փարիզյան կարողությամբ։ Մի քիչ կոսմետիկա, հասարակ շոր, բայց մեծ ճաշակով կարված, անթերի գծեր... Իսկ դա Սիլվիայի աչքում վերջին արժանիք չէր։ Բեռնադետտան նման կլիներ Տանագրայի արձանիկի, եթե չլիներ նրա փոքրիկ գլուխը, որը մանրարազեի գլուխ էր հիշեցնում։ Բայց նույնիսկ այդ կլորիկ գլուխը, որի մեջ համառ ինչ-որ բան կար, չէր փչացնում ընդհանուր տպավորությունը. հենց գլուխն էլ ոճավոր էր և ամբողջ փոքրիկ իրի ոճով։ Երբ Բեռնադետտան

այդ ուզում էր (բայց դա լինում էր միայն այն ժամանակ, երբ նրան նայում էր Մարկը), նրա կապտավուն-սև աչքերը բացվառվում էին, լցվում քնքշությամբ, նրանց մեջ փայլատակում էր կենդանի խելքը, նրանց գրավիչ հայացքը կարող էր կյանքի կոչել հանգուցյալին։ Բայց Մարկի վրա այդ աչքերը հակառակ ազդեցությունն էին գործում. Մարկը ծառս էր լինում։ Եվ որքան ավելի ուժգին էին, իր կամքին հակառակ, այդ աչքերը հուզում Մարկին, այնքան ավելի բուռն կատաղությամբ էր նա դուրս քաշում խայթը։

Սիլվիան չէր կարողանում հասկանալ, թե ինչու է քրոջ տղան մերժում այն երջանկությունը, որն ինքը առաջարկում էր նրան, այդ նուրբ և ամուր փարիզյան արտադրանքը (այդ բաները նա լա՜վ էր հասկանում)։ Ոչ թե որևէ էժանագին բան է, այլ լավորակ ապրանք, և՛ երկար դիմացող. ավելի շուտ մարդը կմաշվի, քան այդ ապրանքը։ Ազնիվ աղջիկ է, աշխատասեր, խելքը գլխին, օժտված է (բացի օժիտից) սուր, պայծառ, գործնական խելքով։ Եվ, բացի այդ ամենից, նա այդ խղճուկ կապիկին անաղարտ սիրտ ու կուսություն էր բերում, սիրո մեջ անփորձ մի սիրտ, որն այրվելու էր միայն Մարկի համար... Այ քեզ կապիկ... Բեռնադետտան Սիլվիային խոստովանեց ամեն ինչ։ Ու թեև Սիլվիան հոգու խորքում հիացած էր, այնուամենայնիվ նա մրրթմրրթում ու աղջկան ամոթանք էր տալիս, որ վերջինս ցանկությամբ է բռնվել այդպիսի գարշելի, այդպիսի տգեղ, հիմար և հպարտ տղայի նկատմամբ, որն աղքատ է, ինչպես Հոբը, և փնթփնթան է Հոբի նման։ (Բեռնադետտան նույն կարծիքին էր և հենց դրա համար նրան ավելի շատ էր սիրում)։ Սիլվիան համոզում էր Բեռնադետտային, որ Մարկն արժանի չէ նրան, որ Մարկի համար մեծ պատիվ կլիներ, եթե Բեռնադետտան ամուսնանար նրա հետ... Սակայն, եթե Բեռնադետտան նրան բռներ խոսքի վրա և սկսեր այդ բոլորը կրկնել որպես իր սեփական կարծիք, Սիլվիան նրա գլխին շան լափ կթափեր։ Սիլվիան Բեռնադետտային կասեր, որ նա արժանի չէ արձակել իր քրոջ որդու կոշիկի փոկը։ Սիլվիան անսահման հպարտանում էր նրանով։ Նա հաշվում էր, որ Մարկի վրա լուտանք թափել կարող է միայն ինքը, որովհետև ինքն է նրան հագցրել առաջին վարտիքը, երբ

Մարկը դեռ փոքր էր, և ինքն էլ հանել է նրա վրայից։ Մարկը ամբողջովին նրան էր պատկանում, ոտից մինչև գլուխ։ Բայց, սատանան տանի, ինչո՞ւ էր այդ կենդանին հրաժարվում պառկել այն անկողնու մեջ, որը Սիրվիան էր պատրաստել նրա համար։ Սկզբում նա Բեռնադետտային ամոթանք էր տալիս Մարկի նկատմամբ ունեցած սիրո համար, հետո սկսեց ամոթանք տալ այն բանի համար, որ նա չի կարողանում իրեն սիրելու ստիպել։ Եվ Բեռնադետտայի ինքնասիրության համար այդ կշտամբանքն ավելի զգալի էր։ Նրանք մտածում էին, թե ինչպես հրապուրեն այդ հիմարին։ Եվ քանի որ նպատակը բարի էր, ապա բոլոր միջոցներն էլ ընդունելի էին. մարդ կարող է նույնիսկ իր մտքերը ներքին, ինչպես ներկում են կանացի երեսը։ Սիլվիան ներշնչել էր Բեռնադետտային, որ ձկնիկին կարելի է կեռիկին գցել, միայն հետաքրքրություն ցուցաբերելով Մարկի մտավոր կյանքի, նրա քաղաքական հայացքների նկատմամբ։ (Խեղճը թեթևակիորեն խելքը թոցրել էր, բայց բոլոր տղամարդիկ շատ թե քիչ այդպես են...)։ Բեռնադետտան բարեխղճորեն աշխատում էր այդ խրատներից օգուտ քաղել։ Բայց նրա գովելի ճիգերը հանգեցրին այն բանին, որ առանց այդ էլ ոչ լավ վիճակը դարձավ միանգամայն վատ։ Հնարավոր չէ, որ մարդ իր համար մտավոր գեղեցկություն ստեղծի այնպես, ինչպես արտաքին հրապույր է ստեղծում։ Քաղքենին այնքան էլ հիմար աղջիկ չէր, բայց դա միայն իր բնական սահմաններում։ Հենց որ անցնում էր այդ սահմանները, նա դառնում էր ճոռոմախոս և սկսում էր անմտորեն կրկնել թերանացի արած ճշմարտությունները. մանրաբազեն դառնում էր թութակ։ Մարկն այնքան քաղաքավարի չէր, որ թաքցներ իր տպավորությունները։ Մահու չափ վիրավորված, Բեռնադետտան որոշեց այլևս չպաշտպանել առաջավոր դիրքերը։ Նա դրոշի ծոցն ուղարկեց,— մտքում, իհարկե,— Սիլվիային ու նրա խրատները և նահանջեց դեպի նախկին սահմանները։ Եվ ճիշտ վարվեց։ Բայց պայքարում նշանակություն չունի՝ դու արդարացի ես, թե ոչ. պայքարում հաղթանակ է պետք։ Հաղթանակ նա չտարավ։

Նա այլևս արդեն Մարկի համար պատարագ չէր կատարում, Բեռնադետտան հնարավորություն էր տվել, որ Մարկն

ինքը պատարագ մատուցի նրա համար (ինչպես ուզում է լինի, նրա համար միևնույն է)։ Իսկ աղջիկը կհետևի փոքրիկ եկեղեցուն, կհսկի, որ այնտեղ կարգ ու կանոն լինի, փոշին կարբի։ Մարկին՝ ամբիոնն ու բեմը։ Բեռնադետտային՝ սուրբ ջրի հոգսը։ Մի՞թե դա չէր կարող ամեն ինչ կազմակերպել փոխադարձ բավականության համար։ Մարկն, ինչ մտքով անցնում էր, ազատորեն կարող էր ասել և մտածել։ Բեռնադետտան կզբաղվեր կյանքի նյութական կողմով։ Դա այնքան էլ քիչ բան չէ։ Բեռնադետտայի համար այդքանը միանգամայն հերիք էր, եթե նա ամուսին ունենար։ Մնացածը նրան չէր հետաքրքրում։

Բայց միակ բանը, որ Մարկին հետաքրքրում էր, դա հենց «մնացածն» էր։ Իհարկե, պայմանով, որ նաև աղջիկ լինի գրկում—գեղեցիկ թե տգեղ, բայց որն իրեն դուր կգար։ Բեռնադետտան նրան դուր չէր գալիս։ Եվ նյութական ապահովությունը, որը Բեռնադետտան առաջարկում էր նրան, Մարկը կոպեկի տեղ չէր դնում։ Ավելին, Մարկն տպսեց զգուշանալ, նրա մեջ կասկածներ առաջացան։ Այնպիսի երիտասարդի համար, ինչպիսին Մարկն էր, նյութական լրիվ ապահովությունը կնշանակեր ամեն ինչ վերջացնել, առանց որևէ բան սկսելու։ Մարկն ընկել էր այն բանի հետևից, ինչը նրանից սահել-անցել էր և ինչը բռնելը վտանգավոր էր։ Իսկ այնպիսի աղջկա բարեհաջողությունը, ինչպիսին Բեռնադետտան է, ձեռք էր բերվում շատ էժան գնով։ Մտավոր պահանջների սահմանափակությունը նրան ստիպել էր, դեռ քսան տարեկան չդառած, պարսպել իր պարտեզը, —ավելի քիչ, քան պարտեզը. քաղքենիական տան առաջ գտնվող բակը, և չմտածել այն մասին, թե ինչ է տեղի ունենում նրա թաղամասի սահմաններից դուրս... Այդպես, Կոմունայի դարաշրջանում Կասսետ փողոցի մանր բուրժուաները չգիտեին, որ մյուս թաղամասերում մարտեր են գնում և, որ այնտեղ կրակոցներ կան... Մարկն, ընդհակառակը, նեղս էր քաշում վառոդի հոտը և զգում էր քաղաքի բոլոր անկյուններում թափած արյունը։ Նա լսում էր, թե իր ոտքերի տակ ինչպես է փլվում մտքի աշխարհը։ Նա հարկադրված էր ապրել մինչև կոկորդը թաղված հեղափոխությունների մեջ, որոնք բռնկվում էին ամբողջ երկրագնդով մեկ, հարկադրված էր

ներկա գտնվել հրեշավոր ծննդաբերություններին և օգնել նրանց... Բեռնադետտան, իհարկե, գիտեր, աշխարհում ինչ ցնցումներ են տեղի ունենում։ Ուզածդ փարիզեցի աղջիկը դրանց մասին կարդում է իր լրագրում՝ քաղաքային մանր նորություններից, պատահարներից, ֆելիետոնից, մոդաների բաժնից, սպորտից ու հայտարարություններից հետո, եթե, իհարկե, նա ժամանակ է ունենում։ Ամենից առաջ գործն է. մենք զվարճանքի համար չենք ապրում։ «Թող տղամարդիկ ամբողջ ժամերով վիճեն, թե ինչ է կատարվում Չինաստանում կամ այդ բոլշևիկների մոտ, որոնք մեզանից գողացել են մեր ռուսական ակցիաները»։ Իսկ մեզ հարկավոր է մեր աշխատանքով զբաղվել, մեր հաշիվներով, մեր խոհանոցով, մեր անկողնով և հետևել, որ բնակարանը մաքուր լինի և հավաքած։ Իսկ աշխարհում տեղի ունեցող ամեն տեսակի խենթություններ մասին մտածել անգամ չարժի. դրանք ինչպես գալիս, այնպես էլ գնում են... Բոլոր տեսությունները Բեռնադետտան հիմարություն էր համարում։ Նա բավարարվում էր այն բարոյական ու սոցիալական պայմանականություններով, որոնք մշակել, ստուգել, իրենց աշխատանքով զոդել և պահպանել են բուրժուայի կայուն սերունդները։ Կրոնն այստեղ զբաղեցրել է իր տեղը— ոչ պահանջկոտ կաթոլիկական կրոնը, հավատով կամ առանց հավատի, բայց գործնական և բծախնդիր։ Նա օժանդակել է կարգ ու կանոնին, նա նաև ամրապնդել է այդ կարգ ու կանոնը։ Դրանով Բեռնադետտան տարբերվում է անհավատավոր Սիլվիայից։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում իրեն զսպել հատկապես երիտասարդ կյուրեների հասցեին արվող թունոտ կատակներից,— նա այդ կյուրեներին «առնետի ճտեր» էր անվանում, բայց Բեռնադետտային նա չէր խանդարում։ Ներողամտորեն ծիծաղելով նրա վրա, Սիլվիան ատամների արանքից մրթմրթում էր, որ կնոջ կողմից կեղծ բարեպաշտության ոչ մեծ դողան «ընդհանրապես» ամուսնու համար ընտանեկան երջանկության ավելորդ գրավական է հանդիսանում։

«Ընդհանրապես» ոչ բոլորովին էր այդպես... Տեսքից հավասարակշռված, սառը և լրջամիտ Բեռնադետտան, որն իր մեջ, թվում էր, ոչ մի անսպասելի բաներ չէր թաքցնում,

յուրաքանչյուր ամիս տարօրինակ խուճապ էր ապրում, որը մի ամբողջ շաբաթ էր տևում։ Նրա բնավորությունը փոխվում էր։ Նա ամեն ինչ տեսնում և ամեն ինչ լսում էր ուրիշ աչքերով և ուրիշ ականջներով։ Նա դադարում էր ղեկը տիրապետելուց։ Իսկ չէ՞ որ ճանապարհին փոսեր կան ու ծառեր։ Թվում էր, մեքենան ահա ուր որ է մի բանի կզարնվի... Քանի որ այդ վտանգը դառել է խրոնիկական, Բեռնադետտան սովորել էր կանխատեսել նրա մերձենալը և այնպես էր տեղը հարմարեցնում, որ այդ ժամանակ որքան կարելի է հեռու քաշվի մի կողմ։ Նա սովորել էր իրեն տիրապետել, և դա օգնում էր նրան ամեն ինչ թաքցնել։ Բայց հենց այդ ժամերին էին դարանամուտ լինում նրան ու թափառում նրա մեջ ատելությունն ու սերը, ցանկությունը, նախանձն ու խանդը, մարմնի և հոգու բոլոր պոռթկումները, անհագ և անսանձ խառնվածքի բոլոր ամենաստոր մտադրությունները։ Նա միշտ ամենաանմբռնելի արարքներից մի մազաչափ էր հեռու գտնվում։ Բայց կռահել այդ կարելի էր միայն վարդագույն ալիքներից, որոնք հանկարծակի ողողում էին նրա պարանոցը և, ետ քաշվելով, այտերին կանաչավուն գունատություն էին թողնում։ Նա դողում էր, նա իր բերանը ճղում էր լկամներով, նա մոտենում էր ուշագնացության և իրեն տիրապետում լոկ վերջին ակնթարթին։ Փաստորեն բոլոր այդ վտանգներն ու տառապանքները հանգում էին մի բանի— ցանկասիրության։ Նա այդ ոչ ոքի չէր վստահում։

Մարկը ոչ մի բան գլխի չէր ընկնում։ Եվ—ո՞վ գիտի— գուցե, եթե նա իմանար, ապա կկսեր հետաքրքրվել այդ աղջկանով։ Մարկը նրանցից էր, ով բնազդով և ամենաանհեթեթ ձևով ձգտում է դեպի ամեն մի վտանգավորը, մթինը, դեպի մռայլ անդունդը. տաք գիշերը խոստանում է հարբեցողություններ, որոնց արժեքազրկում է գորշ օրը։ Այդպիսի մարդիկ կյանքում ամենից շատ վախենում են միապաղաղությունից։ Այդ տեսակետից նա, իր չար բախտից, իսկական Աննետայի որդին էր։ Աննետան մի անգամ չէր, որ ստիպված էր եղել դրա համար վճարել, և ամենից շատ նրան տանջում էր այն, որ դեռ վճարելու է նաև իր որդին... Եթե Նույնիսկ Մարկը նկատած լիներ, թե ինչ անձև, ինչ

ստորաքարշ կյանք է զեռում Բեռնադետտայի մեջ, ջրափոսի հատակում (այդ կյանքը զեռում է մեզնից ամեն մեկի խորքում), Մարկը նույնիսկ այդ ժամանակ էլ նրա նկատմամբ կցուցաբերեր ոչ ավելի շատ ուշադրություն, քան ցուցաբերում էր այդ ջրափոսի հարթ մակերեսի,— ձանձրալի, քաղքենու պաղ կյանքի նկատմամբ։

Սիլվիայի լրջմտությունն ավելի քիչ էր, քան Բեռնադետտայինը, որը Սիլվիային աղաչում էր չխառնվել։ Այդ պատճառով էլ նա հաստատամտորեն, բայց ապարդյուն քրոջ որդուն նկարագրում էր կնոջ արժանիքները, որը իմաստուն խնայողությամբ կվարեր տնային կյանքի խիստ սահմանափակ բնագավառը և հաճույքով նրան տան օջախի սահմաններից դուրս լիակատար ազատություն կտար։ Բայց մեր դարաշրջանի համար տանտիրոջ ընտանեկան իդեալը արդեն չի սազում, քանի որ այդ տանտերը թանկարժեք իրերը պահում է բանկում, իսկ տոկոսները և կնոջը ստանում է կտրոններով։ Մեր դարաշրջանը չի կարող տանը փակվել, նրան պետք են մշտական տեղափոխություններ,— վերադարձել է Wanderer[1]-ի դարը։ Ընդունա՞կ է արդյոք կինը դառնալ «թափառականի» ուղեկիցը և բաժանել նրա հետ կյանքի մշտական անկայունությունը, ամենօրյա ֆիզիկական ու բարոյական անկարգավորվածությունը։ Ահա թե ինչում էր հարցը... Եթե Մարկին տային Բեռնադետտային, Բեռնադետտան կհառաչեր, բայց և հաստատ կպատասխաներ, որ ինքը պատրաստ է հրաժարվել տան օջախից. Բեռնադետտան սիրո՞ւմ էր Մարկին։

— Այո, ես այդպես եմ ուզում,— կասեր Բեռնադետտան։— Ուրեմն, կարող եմ։

Եվ նա կկարողանար, կկարողանար գոնե որոշ ժամանակի ընթացքում։ Բեռնադետտան համարձակ էր։ Իր ուզած, իր սիրած բանի համար նա կգնար ուզածդ վտանգին։ Բայց ինչքան էլ ուզում է այդ «այո՛ն» անկեղծ լիներ, նրա հետևից կգնար միայն մարմինը. հոգին՝ ոչ։ Խոստումի կատարումն ընկած կլիներ նրա հնարավորության սահմաններից դուրս։

---

[1] Թափառաշրջիկ (գերմ.)։ Նկատի ունի Գյոթեի «Վիլհելմ Մայստերի թափառումի տարիները»։

Նա իզուր կջանար. եթե նա դուրս գար իր կեղևից, կկործանվեր։ Եվ անխուսափելիորեն կդիմադրեր (դա նրա իրավունքն էր)։ Նա ամուսնու ոտքերին կապած քար կհանդիսանար և ամուսնուն ետ կքաշեր։ Եվ վերջին հաշվով կանացի ինտերցիայի սոսկալի ուժը կկոտրեր տղամարդու թափը, եթե, լեռն ի վեր բարձրանալիս, այդ տղամարդը ստիպված լիներ քարշ տալ իր ոտքերին կապած ծանրությունը։

Մարկի բնազդն ավելի իմաստուն դուրս եկավ, քան Սիլվիայի բոլոր հաշիվները, որը մտադրվել էր քրոջ տղայի երջանկությունը կառուցել հակառակ այդ տղայի ցանկության։ Սիլվիան դեմ չէր ոտնակապ դցել Մարկին, որպեսզի նա որևէ տեղ իր վիզը չկոտրի։ Երկու կանայք էլ, որոնցից մեկը շատ փորձված էր, իսկ մյուսը ամենևին փորձ չուներ, լուռ և գաղտնի դավադրության մեջ մտան։ Իր կասկածամիտ քթով Մարկն այդ զգում էր։ Եվ այդ օրից ի վեր նա դադարեց տանել Բեռնադետտային։ Որքան շատ էր Սիլվիան նրան գովաբանում, այնքան կոպիտ էր Մարկը պատասխանում նրան։ Երկու կողմից էլ բանն այնքան հեռու գնաց, որ մի անգամ, կաթվածային փոթորիկի պահին, ամբողջովին կարմրատակած և համարելով, որ գործը փչացավ, Սիլվիան դուռը շրխկացրեց ուղղակի Մարկի քթի առաջ և, ֆուրիայի նման դուրս գցելով իրեն, շպրտեց նրա երեսին.

— Կորիր գրողի ծոցը, քրջոտ։ Գնա սովից սատկի՛ր։

Եվ երիտասարդ քրջո՛տը գնաց սովից սատկելու։

Իսկ Բեռնադետտան այդպես էլ մնաց շիկացած ածուխների վրա,— հերոսաբար, սառը դեմքով, բայց թաքցնելով իր մեջ կրակն ու կատաղությունը։

Մի անգամ, երբ Մարկի գրպանում ընդամենը մի քանի ֆրանկ էր մնացել ապրուստի համար, նա մտավ սրճարան, որպեսզի «խմելու տա» դրանք։ Իհարկե, համեստ շափով։ Նա չէր կարող ազատություն տալ իր խենթությանը, միջոցներ չկային... Բայց երբ նա խոնջացած էր լինում, ինչպես այդ առավոտ, երբ նա զզվանք էր զգում ամեն ինչի նկատմամբ, երբ ախորժակ չէր ունենում, նա չէր կարող գնալ ռեստորան, ուտել այնտեղ վատ միս, մանավանդ շատ վատ պատրաստած. դրանից նրա սիրտն սկսում էր խառնել։ Նա գերադա-

սում էր մի դավաթ սև սուրճն ու մի ըմպանակ խաղողի օղին, դա մի տեսակ քաջալերում էր, ճիշտ է, ի վնաս ստամոքսի։ Սրճարանում նա գտնում էր ևս մի գրգռիչ միջոց. լրագրեր։ Եվ ահա մի թերթի առաջին էջում նա հանկարծ տեսավ ինչ-որ մեկի ակնհայտորեն աղավաղված դիմանկարը։ Բայց նա վայրկենապես ճանաչեց այդ նեղ, կնճիռներով ակոսված ճակատը, աչքերի վրա կախված ծանր ծալքերը, մոլեգնած զորիլլայի դեմքը... Սիմոնը... Սիմոն Բուշարը... Դա նա՛ էր։ Նրա գլխավերևը, ինչպես մսի խանութի վաճառասեղանի վերևում, տերերը կախել էին մեծախոստում ռեկլամ.

«Սպանություն էքսպրեսում։ Բանդիտ ձերբակալված է...»։

Մարկը չնկատեց, ինչպես շրջեց բաժակը։ Նա կարդում էր, առանց տեսնելու, թե ինչ է կարդում։ Նա երկրորդ անգամ էլ կարդաց, ջանալով լավ մարսել ամեն մի բառը։ Փաստը կասկածի ոչ մի տեղ չէր թողնում։ Փարիզից Վենտիմիլիա մեկնող էքսպրեսում, Դիժոնի և Մակոնի միջև, գիշերը քնած ժամանակ խեղդել են ննջավագոնի մի ուղևորի։ Մարդասպանը, որին տեսել են այն պահին, երբ նա կուպեից դուրս գալիս է եղել, ընթացքի ժամանակ թռել է գնացքից և ընկել հողաթմբին, որտեղ և նրան գտել են։ Նրա երեսը ջարդված է եղել, ազդրը՝ կոտրված։ Սպանվածը Փարիզի նշանավոր ֆինանսիստ է, մի շարք բաժնետիրական կոմպանիաների վարչության անդամ։ Մարդասպանը իր նախկին համոզմունքներին դավաճանած ինտելիգենտ է, անարխիստ, կոմունիստ... Բուրժուական մամուլը մինչև հիմա անարխիստներին կոմունիստներից չի տարբերում... (Նա ուզում է ավելի հիմար երևալ, քան իրականում է. նրա համար ձեռնտու է դրանց շփոթելը)։ Եվ անպայման իհարկե, «այդ գործում զգացվում է Մոսկվայի ձեռքը...»։

Մարկը ցնցված էր։ Նա հեռացավ, կիսատ թողնելով սուրճը։ Նա իրեն հաշիվ չէր տալիս, թե ինչ է անում, և զբոսայգում անընդհատ ինքն իրեն կրկնում էր. «Սիմո՛ն... Սիմո՛ն»...— չնկատելով անցորդներին, որոնց չէր կպչում միայն այն պատճառով, որ ղեկավարվում էր լուսնոտի

բնազդով։ Նա աղոտ կերպով մտաբերում էր այն օրերը, որոնք անց էր կացրել Բուշարի հետ, և, անգիտակցորեն նրա համար արդարացում փնտրելով, ինչպես եթե նրան դատարանը հարցաքննելիս լիներ, Մարկը հիշեց գլխավորապես առաջին օրերը, նրանց ծանոթության առաջին շրջանը, երբ Բուշարը հենց նոր էր եկել գավառից,— անտաշ, ազնիվ, անաղարտ և կարծր, ինչպես կայծքարը։ Մարկը նրա մեջ այն ժամանակ զգաց պերշերոնյան հովատակի բարեխղճություն, որը երբեք չի դավաճանում. հզոր վիզ, ամուր կոճեր,— լավ բեղմնավորող։ Ինչքա՜ն անճարակ էր Մարկն իրեն զգում նրա կողքին, ինչքա՜ն թույլ, ինչքա՜ն անպաշտպան ամեն տեսակի նեխման դեմ, որոնք գոյություն ունեն մեծ քաղաքներում։ Եթե «Մակբեթի» վհուկները նրանց ասեին. «Ձեր երկուսից մեկը գլուխը դնելու է կառափնարանին»— Մարկը վախվորած իր ջղային ձեռքերն խկույն կգցեր վզին։ Նա այնքա՜ն վստահ էր Սիմոնի վրա և այնքա՜ն անվստահ իր վրա։ Ի՞նչ արեց Սիմոնը։ Ինչպե՞ս վարվեցին նրա հետ։ Ո՞վ արեց։ Բոլո՜ր։ Այս ամբողջ սարսափելի հետապատերազմյան աշխարհը։ Եվ մենք առաջինը...

Մարկի հայացքը դեմ առավ Վերոն—Կոկարի ծանր աչքերին։ Վերջինս նստել էր ինչ-որ սրճարանի պատշգամբում և քմծիծաղ տվեց, նկատելով Մարկին։ Իսկ Մարկը սեղանների արանքներով մոտենում էր նրան և, առանց նստելու, ճնշված ձայնով ասաց.

— Վերոն, դու գիտե՞ս։

Շարունակելով քմծիծաղը, Վերոնը պատասխանեց.

— Գիտեմ։ Այդ ապուշը բռնվել է։ Ես այդպես էլ կարծում էի։ Նրա արյունը բաց կթողնեն...

Մարկի աչքերի առաջ ամեն ինչ լղոզվեց։ Սիմոնի արյունը շղարշեց նրա հայացքը։ Նա նետվեց Վերոնի վրա, բռնեց նրա հաստ վիզը և, պատին սեղմելով, բղավեց.

— Մարդասպա՜ն... Այդ դու, դու ես նրան սպանել...

Վերոն-Կոկարը կատաղեց։ Նա դուրս պրծավ և սկսեց իր հսկայական բռունցքներով հարվածել Մարկի կրծքին, հետո նրան շպրտեց սեղանի վրա, և Մարկը նստեց ափսեների ու գարեջրի գավաթների վրա։ Հաճախորդներն աղմկելով սկսեցին բողոքել, և անկոչ հյուրը խկույն ևեթ հեռացվեց։

Մայթից, որտեղ արդեն սկսել էր ժողովուրդ հավաքվել, Մարկը նորից տեսավ Վերոնին։ Նա աչքերը չուած, բռունցքները թափ էր տալիս և Մարկին բղավում։

— Տես հա՜, սրիկա, մեկ էլ ձեռքս չընկնես։ Թե չէ ես քեզ քարշ կտամ ուղիղ ոստիկանություն...

Երկու ոստիկան անցնում էին զբոսայգով։ Կատաղությունից Մարկի ոտքերը դողում էին։ Նա իրենց միջև կանգնած մարդկանց գլխավերևով սևեռուն նայեց Վերոնին և ասաց.

— Ավանա՜կ։ Կնշանակի դո՞ւ էլ ես ոստիկանությունում ծառայում։ Դրանից այն կողմ գնալու տեղ չկա։

Վերոնը մոնչաց և սկսեց բոլորին այս ու այն կողմ հրել, որպեսզի հարձակվի Մարկի վրա։ Իսկ Մարկը, ձեռքերը կրծքին խաչած, նրան էր սպասում։ Բայց այդ ժամանակ գործին կանացի ձեռք խառնվեց։ Մի պոռնիկ կին, որը Մարկին ճանաչում էր, նրան քաշեց տարավ։

— Դու խելագարվե՞լ ես, սիրելիս։— ասաց կինը։— Դու ի՞նչ գործ ունես այստեղ։ Չէ՞ որ քեզ ջարդուփշուր կանեն։

Նա Մարկին բաց թողեց միայն այն ժամանակ, երբ նրանք թեքվեցին անկյունադարձի մյուս կողմը։ Մարկը ոչինչ չէր լսում այն ամենից, ինչ կինն ասում էր նրան։ Միայն ավելի ուշ, երբ երկու փողոց անցել էին, Մարկը հիշեց այդ հոգնած, այտուցված կոպերը և արնագույն կարմիր ներկած բարակ շրթունքները, որոնք եղբայրաբար ժպտացին Մարկին բաժանվելիս։ Նա մտածեց.

«Եթե այս բարի տամարիտուհին հանդիպած լիներ Սիմոնին, նա, հավանաբար, փրկված կլիներ»։

Մարկը զուր էր ճգնում հիշել նրա անունը։ Բուշարի ողբերգության այրող միտքը խավարեցրել էր այդ աղջկա կերպարն ու նրա անունը։ Մարկը դեռ շարունակում էր կրկնել. «Սիմոն... Սիմոն...»։ Իսկ Վերոնի ծաղրը նրա մեջ բարձրացնում էր կատաղի մի զայրույթ։ Նա իրեն ասում էր.

«Այդ սրիկան, ահա՜ թե ով նրան շեղեց ճանապարհից։ Նա թունավորեց Սիմոնին ալկոհոլով։ Նա պատվաստեց Սիմոնի մեջ ոսկու և կանանց ծարավ։ Այդպես բիբլիական աղվեսների պոչերին էին կապում բոցկլտացող ջահերը... Հետո նա լքեց Սիմոնին, որը տանջանքներից խելագարվել

էր, թողեց, որ գնա, ուր ուզում է,— դաշտերը, արտերը հրդեհելու։ Իսկ հիմա նա, այդ անզգամը, գործ չունի ոչ պատժի, ոչ հրդեհի հետ—նա ձեռքերն է շփում...»։

Եվ նրա սեփական երկար ձեռքերը նույնպես սպանելու ցանկությունից սկսեցին քոր գալ... Բայց նա նկատեց, որ նայում են իրեն, վիթխարի ճիգ գործադրեց իր վրա, եղունգները մխրճեց ափերի մեջ և, անմիջապես դառնալով սառնարյուն, սկսեց կազմել գործողությունների պլան։

Չէր կարելի թույլ տալ, որ Բուշարը կործանվի առանց որևէ օգնության։ Պետք էր բոլոր ընկերների հավաք շեփորել... Բոլոր ընկերների։ Իսկ ո՞ւր են նրանք։ Եվ արդյո՞ք նրանք մնացել են որպես ընկերներ... Ժան-Կազիմիրը ծառայում էր Պրագայում, նա դեսպանության երկրորդ քարտուղարն էր։ Ադոլֆ Շևալիեն, մինիստրներից մեկի անձնական քարտուղարը, մշտապես ուղևորությունների մեջ է և բանկետներում... Նրանց շա՞տ պետք է Բուշարը։ Բայց նրանց պետք է ստիպել։ Որտե՞ղ կգտնես նրանց։ Ժան-Կազիմիրի մասին մտածել անգամ միտք չուներ։ Մարկը փոստային գրասենյակում նրան մի անկապ ու հանդուգն բացիկ խրզբզեց, որը կարող էր միայն վիրավորել։ Երբ նա բացիկը փոստարկղ գցեց, նորից ետ վերցնելու ցանկություն զգաց։ Ո՞ւշ է... Ուշ է թե ուշ չէ, Ժան-Կազիմիրի վրա հույս դնել չի կարելի... Նա երեկո չի փչացնի խեղդվողի փրկելու համար։ Մարկն սկսեց Շևալիեի հետևից ընկնել։ Ճիշտ է, նա առանձնակի համակրանք չէր դրսևորում Բուշարի նկատմամբ, բայց միշտ ընդունում էր, գոնե սկզբունքորեն, ընկերության զգացումը։ Գուցե այդ զգացումը հուշի նրան, որ ավելի լավ է վե՞րջ տալ այդ սկանդալային գործին։ Բացի դրանից, մինիստրների կանանց միջոցով նա կարող է թափանցել ամեն տեղ... Մարկը վազեց Գրենել փողոցի վրա գտնվող մինիստրությունը։ Այնտեղ նրան հրեցին, ինչպես բիլյարդի գնդակ, և նա գլորվեց Բուլոնյան անտառի նրբանցքը, Շևալիեի մոտ, նրա շքեղ բնակարանը։ Բայց տանը չգտավ։ Այն ժամանակ նա նետվեց Արդարադատության պալատը և այնտեղ գտավ, վերջապես, իր Շևալիեին։ Վերջինս նստել էր կարևոր խորհրդակցության, շրջապատված ճամարտակող պատմուճաններով։ Մի քանի ռեպորտյոր-

ներ, հուսալով օգուտ քաղել, լսում էին նրանց, վեր ձգելով ժանդոտ տառեխների իրենց գլուխները։ Շեալիեն, ճառն առանց ընդհատելու, ձեռքով Մարկին հովանավորական նշան արեց, իսկ հետո, տիրադը վերջացնելով, նրան տարավ. քայլերը լայն-լայն գցելով, մի ականջը նրա կողմը պահած, սարսափելի զործարարական տեսքով նա հարցրեց.

— Ի՞նչ կա, բարեկամս։ Ի՞նչ ես ուզում ինձ պատմել։

Բայց հազիվ էր Մարկն սկսել խոսքը, Շեալիեն ասաց.

— Ների՛ր։

Եվ մոտեցավ սեղմելու կողքով անցնող փաստաբանի ձեռքը։ Մարկն սպասում էր։ Շեալիեն չէր շտապում վերադառնալ։ Մարկն սպասում էր։ Շեալիեն հասկացավ, որ այդ անասունն սպասելու է մինչև երեկո։ Նա վերադարձավ, բայց հենց որ Մարկը նորից խնդրանքով դիմեց նրան, ընդհատեց նրան, լայն, պաթետիկ շարժում անելով և կարծես թե ասելով. «Ա՜յ քեզ դժբախտություն»։ Բայց այդ շարժումը միանգամայն կարող էր նշանակել նաև ուրիշ բան. «Ինչքա՜ն ես ինձ ձանձրացրել»։

— Այո, այո,— ասաց նա։— Ցավալի է։ Բայց մենք ի՞նչ կարող ենք անել... Հիմա խոսքը օրենքին է պատկանում...

Նա հանդիսավորությամբ վեր նետեց կղակը, ժպտաց աջ կողմին, ժպտաց՝ ձախին և մրթմրթաց.

— Ես շտապում եմ... Ների՛ր... Հա՛, ինչպե՞ս է առողջությունդ։ Ես քեզ իմաց կտամ, որևէ կերպ մոտ օրերս, միասին կնախաճաշենք... Մնաս բարով, թանկագինս։

Եվ նա փախավ։

Մարկը տեղում քարացավ։ Պատասխանելու բան չկար։ Ամեն մի կենդանի հավատարիմ է մնում իր էությանը։ Շունը միշտ շուն է։ Կատուն՝ կատու։ Գայլը գայլ է։ Ես գայլ եմ, իսկ ի՞նչ եմ ես անում այստեղ...

Մարկը տուն գնաց... Բայց նա չէր կարող մնալ ինքն իր հետ միայնակ, երբ նրա հոգու վրա այդպիսի ծանրություն էր ընկած։ Ջնայած հոգնածությանը, նա պատճառ էր փընտրում, որ հետաձգի իր սենյակը վերադառնալու ժամանակը։ Նա կառչեց Ռյուշի մասին մտքից։ Մարկը վաղուց էր արդեն

դադարել նրա հետ հանդիպելուց։ Նրանց միջև սառույց էր գոյացել։ Հետաքրքիր է, որ սառնությունն սկսեց այն գիշերից անմիջապես հետո, երբ Ռյուշը օգնեց նրան և երբ նրանք, իրար ձեռք բռնած, պառկել էին յուրաքանչյուրն իր անկողնում։ Նրանք խուսափում էին միմյանցից։ Պատահական հանդիպումների ժամանակ Ռյուշը ձևացնում էր, թե ինքը չի նկատում Մարկին, և կամ Ռյուշի մոտ թշնամական ժպիտ էր հայտնվում։ Մարկը ոչինչ չէր հասկանում, բայց չէր ցանում պարզել, թե բանն ինչ է։

Իսկ հիմա նրան պետք էր կին, ընկեր, որի սրտին (թեկուզ թշնամական) կարող էր փոխանցել այն, ինչն իրեն ճնշում էր։ Կինը միշտ կին է—մայր, քույր։ Ինչքան էլ սառը լինի կնոջ գլուխը, միևնույն է, սիրտը տաք է, և այդ սիրտը թրթռում է տղամարդու բոլոր կրքերով, այդ սիրտը կարեկցում է։ Միշտ կարելի է գլուխը հենել կնոջ ուսին, երբ ծանր է լինում տանել այդ գլուխը։ Կինը բույն է։

Մարկը բարձրացավ վիթխարի Վալ-դը-Գրասի տակ գտնվող անտրեսոլը և բախեց դուռը։

— Մտե՛ք։

Ուշ էր։ Սենյակը սուզված էր խավարի մեջ։ Հենրիետտան, ոտքերը ձգած, պառկել էր սենյակի խորքում, որմնախորշում, նրա կարճ յուքկան քշտվել էր, քերծեի ոտքերի պես երկար ոտքերը բացվել էին։ Մի ոտքը կախվել էր ալկովի աստիճանին։ Հենրիետտան ոչ մի շարժում չարեց՝ ոտքը ծածկելու համար։ Մարկը դանդաղ մոտենում էր, Հենրիետտան նայում էր նրան անտարբեր աչքերով։ Եվ մինչ Մարկի լայնացած բիբերը կհասցնեին վարժվել մթությանը, նա որսաց յուրօրինակ մի հոտ և ճռճռաց լսեց. Հենրիետտան պատրաստվում էր օպիում ծխել։ Մարկը ժամանակ չվատնեց այդ առիթով վեճի համար։ Նրան հարկավոր էր նախ և առաջ դուրս թափել այն, ինչ իր հոգում էր։ Մարկն անընդհատ խոսում ու խոսում էր, թեև Հենրիետտան հարցուփորձ չէր անում։ Մարկը պատմեց Բուշարի, Վերոնի, Շալիեի մասին, օրվա ընթացքում իր ապրած տագնապների մասին, իր վրդովմունքի մասին, իր վշտի, իր սարսափի մասին։ Մարկը նրանից ոչ թե խորհուրդ էր

սպասում (ասենք, ո՞վ գիտի։ Որպես դատախազի աղջիկ, նա, թերևս, ուրիշներից ավելի լավ էր հասկանում, ինչով այդ բոլորը կարող է վերջանալ), այլ գոնե հասարակ մի խոսք, կարեկցանքի մի ճիչ, նույնիսկ ավելի փոքր բան—նրա ձեռքը, որը խավարի մեջ կգտներ Մարկինը և կսեղմեր, կարծես ասելով. «Սիրելիս»...

Հենրիետտան ոչ մի բան չասաց, ոչինչ չարեց, նա լսում էր, սպասում։ Մարկը նույնպես սպասում էր։ Ոչինչ դուրս չեկավ։ Հիմա Մարկը նրան տեսնում էր պարզ,— Հենրիետտան պառկել էր մեջքի վրա, ամբողջ հասակով մեկ ձգվել, նրա գլուխը փորից ավելի ցածր էր, մի ձեռքը և մի ոտքը կախված էին։ Նա պառկել էր անշարժ, անամոթ, անտարբեր, սառը հայացքը պլշած Մարկի վրա։ Եվ այդ հայացքում Մարկը կարդաց այն, ինչ մշտապես կասկածում էր, բայց ինչին միշտ հրաժարվում էր հավատալ, հատկապես այդպիսի ողբերգական վախճանի առաջ. դա զուտ կանացի հակակրանք էր Բուշարի նկատմամբ, լուռ, խոր, անգութ, ներողամտություն չճանաչող։ Հենրիետտան միշտ ատում էր նրան։

Մարկի շունչը կտրվում էր... նրա առաջ պառկած կնոջ բարակ շրթունքները, որոնց վրայից կարմիր դիծ էր անցնում, սառնությամբ բացվեցին և առաջարկեցին Մարկին.

— Ծխամորճ ուզո՞ւմ ես։ Չէ՞։ Ուրեմն, գնա՛։

Մարկը գնաց, առանց որևէ խոսք ասելու։ Նա իր հետևից լսեց, թե ինչպես բոթիկ ոտքերի տակ ճռճռաց պարկետը և երկու անգամ դռան մեջ չխկաց բանալին։

Վերադառնալով տուն և հանրագումարի բերելով անցածգնացած օրը, Մարկն արդեն ինքն էլ չգիտեր, թե այդ երեքից ում է ամենից շատ ատում. Վերոնին, Շեալիեին, թե՞ Ռյուշին... Միայն ավելի ուշ, երբ արդեն խոր գիշեր էր, նա տեսավ Ռյուշի դեմքը, որն անընդհատ ճգնում էր հիշել, որպեսզի է՛լ ավելի խիստ ատի նրան։ Այդ դեմքը Մարկին մի տեսակ տանջված թվաց։ Երբ Մարկը նրա մոտ էր, նա տեսնում էր միայն Ռյուշի դաժան հայացքը, նրա չար ատելությունը... Հիմա Մարկը տեսնում էր նրա դեմքը։ Ռյուշը նույնպես դժբախտ էր... Ավելի՛ վատ։ Ավելի՛ լավ։

Հետագա օրերին Մարկն ապրում էր մոլեգնության վի-

ճակում, որը նրան ոչ մի դրպեւ բաց չէր թողնում։ Նա իրեն ստիպում էր աշխատել—ինչ կարող ես անել, պետք է։ Եվ նա աշխատում էր, բայց մեքենաբար։ Նա վերագնահատում էր արժեքները, և դա կլանում էր նրան, ինչպես սեեռուն միտք։ Նա ոչինչ ձեռնարկել չէր կարողանում։ Միակ թեթևացումն այն կլիներ, որ մորը նամակ գրեր։ Բայց մայրն ի՞նչ խորհուրդ կարող էր նրան տալ։ Նրանք սովոր էին միմյանց պատմել իրենց դառնությունները։ Այդ տեսակետից նրանց միջև փոխադարձ և լուռ պայմանավորվածություն կար։ Մարկը հպարտության և երտխտիքի հորդացում զգաց, երբ Աննետան առաջինը նրան գրեց այն, ինչի մասին մայրը սովորաբար տեղյակ չի պահում որդուն,— գրանք շիտակ, ճշմարտացի և դաժան խոսքեր էին իր կյանքի վերաբերյալ և իր դժվարությունների մասին, ինչպես որ ընկերն է գրում ընկերոջը։ Մարկը նրան չասաց, ինքն ինչքան էր հուզվել։ Նա մորը վճարեց նույնը, սկսեց նրա հետ մրցել անկեղծության մեջ։ Մարկի կողմից անկեղծությունը շատ հեռու էր գնում։ Աննետան երբեմն ապշում էր, բայց նա նույնպես դա ցույց չէր տալիս։ Աննետան հասկանում էր, որ դա անամոթություն չէ, այլ թեթևություն զգալու պահանջ։ Մարկը մոր առաջ բացում էր իր ամբողջ սիրտը, մինչև հատակը։ Եվ չէր կարելի նրան կասկածել իր արատները Ժան-Ժակի[1] ոգով ի ցույց դնելու անառողջ ցանկության մեջ։ Կարելի էր կռահել, որ նա կարմրում է, որ նա ինքն իրեն ասում է. «Մայրս ինձ կարհամարհի... Էհ, ինչ արած, թող արհամարհի... Ես պարտավոր եմ...»։ Բայց դրա փոխարեն հիմա երկուսն էլ համոզված էին—ոչ մեկը չի ժխտի այն, ինչ խոստովանում է մյուսը. «Իմը քոնն է։ Քոնը իմն է...»։ Կյանքի քառասում արյան ընդհանրություն ունենալը մե՞ծ երջանկություն է։ Մի անգամ չէ, որ այդ ընդհանրությունը փրկել է Մարկին և Աննետային։ Երբ հոգնածությունից ու զզվանքից արյունը հորդում է դեպի սիրտը, կափյուռները ռիթմիկորեն կծկվում ու բացվում են, քշելով այդ արյունը դեպի զարկերակները։ Նույնիսկ այնքան էլ կարևոր չէ, որ անպայման պատասխան գա։ Բավական է միայն դիմել, և

---

[1] Նկատի ունի Ժան-Ժակ Ռուսսոյի «Խոստովանանքը»։

արդեն լսում ես սրտի պատասխան բաբախյունը։ Մարկը մորը նամակ գրելուց հետո թեթևություն զգաց միայն մի գիշեր։

Իսկ վեց օր անց նա քիչ չզարմացավ, երբ նրա մոտ եկավ Ժան-Կազիմիրը։ Ահա թե ում էր, որ նա բոլորովին չէր սպասում։

— Դու ստացա՞ր...— փնթփնթաց Մարկը։

— Ես ստացա քո նամակը,— ասաց Ժան-Կազիմիրը։— Ես պետք է դա իմանայի թերթերից։ Բայց դու լավ ես արել, որ գրել ես ինձ։ Ես չգիտեմ ոնց, դա բաց եմ թողել։

— Իսկ որտեղի՞ց ես գալիս։

— Պրագայից, իհարկե։ Ես ինքնաթիռով եմ եկել, Ստրասբուրգով։ Արդեն երեք օր է, ինչ այստեղ եմ։ Ես ավելի շուտ չեմ անցել քեզ մոտ, որովհետև խոկույն ձեռնամուխ եղա մի բանի, որը հետաձգել չէր կարելի։ Դու չե՞ս նեղանում։

— Ժա՜ն-Կազիմիր։

Մարկը գրկեց նրան։

— Եվ, կարծում եմ, ես զուր տեղը ժամանակ չեմ կորցրել,— շարունակեց նա։— Բայց ճիշտն ասեմ քեզ. վախենում եմ, որ մենք ոչինչ անել չկարողանանք։

— Մենք պետք է անենք այն ամենը, ինչ կարող ենք։

— Ես էլ եմ այդպես կարծում։ Բայց մենք կարող ենք այնքա՞ն քիչ բան։ Դու արդեն գիտես, ինչ կարելի է սպասել բարեկամներից։

— Քեզ ո՞վ ասաց։

— Ես եղել եմ նրանց բոլորի մոտ։ Եվ ամենուրեք քո հետքն եմ գտել։

Մարկն սկսեց զայրույթով խոսել նրանց մասին։

— Նրանք այնպիսին են, ինչպիսին որ կան,— առարկեց Ժան-Կազիմիրը։— Դու դեռ պատրանքնե՞ր ես ստեղծում քեզ համար։

— Ես ոչ մի պատրանք չունեմ։ Եվ դեռ հույս ունեի, որ տղամարդկանց վերաբերյալ սխալվում եմ։ Բայց նրանք ավելի վատն են, քան ես կարծում էի։ Իսկ ամենավատը կանայք են։

Մարկի մի քանի խիստ և դառը խոսքերը ցույց տվին, որ նա չի մոռացել, թե ինչ անողոք, ինչ սոսկալի ատելություն է նա տեսել և զգացել Ռյուշի լռության մեջ։

— Այո։ Բայց, գուցե, նա հիմքե՞ր ունի այդպիսի ատելության համար,— հարցրեց Ժան-Կազիմիրը։

Մարկն ապշած էր։

— Ի՞նչ։ Ի՞նչ հիմքեր։ Սիմոնին ատելո՞ւ։

— Ատելու Սիմոնին կամ մի որևէ ուրիշի,— քեզ, ինձ, դա կարևոր չէ։ Նա ատում է մեկին կամ բոլոր տղամարդկանց ընդհանրապես... Դու լա՞վ ես նրան նայել։ Ռյուշի դեմքին գրած է, որ նա ինչ-որ հիմքեր ունի։

Մարկն ապշած էր այդ մարդու խորաթափանցությամբ, մարդ, որը միշտ սահում էր մակերեսով և, թվում էր, ոչ մի բանի վրա կանգ չէր առնում։ Նա վայրկենապես տեսավ Ռյուշի տանջալից դեմքը, նայեց նրա ամենախորքը և մտածեց. «Բայց իսկապե՞ս...»։

— Իսկ, քո կարծիքով, դա ինչ հիմքե՞ր են,— հարցրեց նա։

Միայն շրթունքների շարժումով Ժան-Կազիմիրը խոսքը փոխեց.

— Ես ոչինչ չգիտեմ։ Ես ժամանակ չունեմ Ռյուշի մասին մտածելու։ Ամեն մեկը մի օր ցանցի մեջ է ընկնում։ Ըստ երևույթին, նա էլ է ինչ-որ տեղ փետուրները կորցրել։ Դա իր գործն է։ Դո՞ւրս կպրծնի։ Փետուրներով թե անփետուր, կանայք միշտ դուրս են պրծնում։ Ավելի լավ է արի մեր գործով զբաղվենք։

— Դու նրանց նկատմամբ դաժանացել ես,— ասաց Մարկը։— Մինչդեռ մի ժամանակ քո մասին ասում էին, որ դու նրանց ցեղից ես։

— Հենց դրա համար։ Մենք խաբում էինք իրար։ Ես նրանց ճանաչում եմ։ Նրանք խաբում էին ինձ։ Ես էլ նրանց էի խաբում։ Բայց մենք բոլորս էլ ողջ և առողջ ենք... Ավելի լավ է եկեք մեր հիմարի մասին մտածենք, քանի դեռ նրա վիզը չեն կոտրել... Այ, օրինակ, դու ասում ես, որ ես կանանց ցեղից եմ։ Ուրեմն, բնական կլիներ, որ ես տղամարդկանցով հետաքրքրվեի, հետաքրքրվեի քեզ կամ Սիմոնի նման ապուշներով... Մի՛ վիճիր։ Դու նույնն

Ես, ինչ որ նա էր, ավելի նուրբ ցեղից ես, բայց նույնքան ամբողջական և նույնքան սահմանափակ։ Իսկ երբ դուք եք ընկնում, ոչ թե ձեր փետուրներն եք կորցնում, այլ ձեր գլուխները։ Ես խղճում եմ ձեզ։ Ձեզ մարդ արհամարհում է, բայց, դուցե, հենց այդ պատճառով էլ, սիրում է։

Մարկը բավականությամբ նրան կապտակեր։ Նա ինքն իրեն ֆշշացրեց. «Քա՛ծ...»։

Բայց նույն վայրկյանին թուքը կուլ տվեց. «Ոչ, այդ կինն իրավացի է...»։ Մարկը հիշեց, որ ով էլ ուզում է լինի Ժան-Կազիմիրը,— կին թե տղամարդ,— այնուամենայնիվ, առանց մի որոպե տատանվելու, Պրագայից թռել-եկել էր, որպեսզի փորձանքի մեջ ընկած բարեկամին օգնի։ Եվ հենց այդ ժամանակ Մարկը հանդգնեց այն կատաղի հայացքը, որն ուզում էր հառել երկիմաստորեն ժպտացող ծաղրասեր երիտասարդի վրա, և ասաց.

— Բավական է դատարկ խոսենք։ Գործի անցնենք։

— Իսկ գործը,— հանգիստ հայտարարեց Ժան-Կազիմիրը,— նրանումն է, որ ես տեսել եմ Սիմոնին... Այո, դրա համար ես ստիպված էի բախել տարբեր դռներ (և միշտ չէ, որ օգուտը լինում է ամենաբարձր դռները բախելուց), բայց, այնուամենայնիվ, իմ առաջ բանտի դռները բացեցին, ավելի ճիշտ, բանտային հիվանդանոցի դռները։ Այնտեղ նրան կտոր-կտոր կպցնում են, որպեսզի նա մեծ օրը լավ վիճակում լինի։ Ես փորձեցի խոսել նրա հետ։ Բայց առաջին իսկ խոսքից նա սկսեց իմ գլխին անեծքներ թափել։ Վիրակապի տակից երևում է միայն նրա դնչի կեսը և մի աչքը։ Ոնգեղջյուրի աչքը։ Փոքրիկ, խիստ, ներս ընկած։ Եվ կոպը ամուր, ինչպես եղջյուրը։ Բայց այդ աչքը իսկույն ամեն ինչ տեսավ, և ոնգեղջյուրը նետվեց ինձ վրա։ Նա բոլորին ոտքերի տակ տրորում էր,— ինձ, քեզ, Վերոնին, բոլոր բարեկամներին։ Նա մեզանից ոչ մեկին տեսնել չի ուզում։ Ես ստիպված եղա հեռանալ։

Մարկի սիրտը կծկվեց։ Նա հարցրեց.

— Ինձ նույնպե՞ս։ Նա իմ անունը տվե՞ց։

— Տվեց։ Մի՛ վշտանա։ Դու ընդհանուր կույտի մեջ ես։ Կենդանի մնացածների։ Իսկ նա... նրա ճակատին արդեն կնիք է դրված, մահվան կնիք։

— Մի՞թե նրան ոչ մի կերպ չի կարելի փրկել։

— Հազիվ թե։ Ես տեսել եմ նրա փաստաբանին և էլի որոշ մարդկանց։ Ես փորձում էի նրանց տրամադրել Սիմոնի օգտին։ Բայց ի՞նչ կարելի է անել, եթե այդ կենդանին չի ուզում, որ իրեն փրկեն։ Նույնիսկ իր դատապաշտպանի հետ էլ չի ուզում խոսել և նախազգուշացրեց, որ նրան հայհոյելու է դատարանում...

Հետաքննությունը տևեց ոչ երկար։ Գործը պարզ էր։ Հերքելու բան չկար, և մեղադրյալը ոչինչ չէր էլ հերքում։ Ժան-Կազիմիրը դարձյալ Պրագայից եկավ, որպեսզի ներկա լինի դատին։ Թեև նրանց ելույթի անօգուտ լինելը ակնհայտ էր, այնուամենայնիվ երկու ընկերն էլ իրենց պարտքն էին համարում դատարանում վկայի ցուցմունքներ տալ։ Մարկի համար դա ծանր պարտք էր։ Հրապարակով ելույթ ունենալը նրա համար անտանելի բան էր։ Նա գիտեր, որ միշտ այդպիսի դեպքերում տանուլ է տալիս։ Նրան կաշկանդում էին մարդախուսությունն ու հպարտությունը։ Եվ սարսափեցնում էր այն միտքը, որ ինքն այս մեռյալ իրադրության մեջ երես առ երես կհանդիպի հին ընկերոջ հետ, և նա, գուցե, սկսի վիրավորել ու կշտամբել իրեն։ Նա ուզում էր փախչել կամ երեխայի նման փակել աչքերն ու ականջները խցանել, մինչև որ «ամեն ինչ վերջանա...»։ Բայց որքան շատ էր մեծանում նրա սարսափը, այնքան նա ավելի համարձակ էր դառնում։ Նա զայրանում էր իր վրա. «Գնա՛, վախկոտ...»։ Եվ նա գնաց։

Նրա շուրջն ամեն ինչ կարծես պարուրված լիներ մշուշով, նա ոչինչ չէր տեսնում, չէր հասկանում, ինչպես մտավ արմկոտ Արդարադատության պալատը, ինչպես ընկավ վկաների սենյակը։ Իսկ Ժան-Կազիմիրն իրեն միանգամայն ազատ էր զգում, առաջնորդելով Մարկին և ընթացքի ժամանակ մերթ մեկի, մերթ մյուսի հետ ողջույններ կամ կատակներ փոխանակելով։ Սակայն Բուշարի հանդիպմանը նա սպասում էր նույնպիսի հուզմունքով, ինչպես և Մարկը։ Նրանց կանչեցին բավական շուտ։ Պաշտպանության կողմից վկաներ քիչ կային։ Երբ Մարկին մտցրին մահվան փեթակը, նա ատամները սեղմեց և պրկեց ոտքերի մկանները,— նրա ոտքերը կարծես թեփով լցված լինեին։ «Չնա-

գել,— կրկնում էր նա ինքն իրեն։— Հատկապես նրան։ Ստեսնել նրան...»։ Եվ նա անմիջապես տեսավ հենց նրան։ Եվ հենց որ տեսավ՝ վերջացավ։ Նա արդեն չէր կարողանում աչքերը հեռացնել։ Նախագահի դրգռված ձայնը նրան հիշեցրեց, որ իրեն են դիմում։ Մարկը մտավ վկայի իր դերի մեջ, սակայն նրա շփոթմունքն այնքան էր մեծ, որ նա չէր կարողանում հիշել սեփական անունը։ Նրա հետևից ծիծաղի ձայն լսվեց։ Նախագահը ծիծաղողներին կարգի հրավիրեց։ Նա ուզում էր Մարկին աշխուժացնել։ Եվ կամաց-կամաց Մարկը տիրապետեց իրեն։ Նա ամաչում էր այն մտքից, որ իրեն կասկածեցին վախկոտության մեջ։ Իսկ չէ՞ որ նրա շունչը կտրվում էր այն մռութի պատճառով, որը սևեռուն իրեն էր նայում, այդ ծանոթ դեմքի պատճառով, բայց այդ դեմքը ճակատագրի հարվածների տակ այնպես էր փոխվել (ներառյալ ոստիկանատանը տված ծեծը), որ Մարկը կկասկածեր, եթե չհանդիպեր ռնգեղջյուրի կատաղի աչքին։ (Ժան-Կազիմիրը ճիշտ նկատեց նմանությունը։ Բայց ռնգեղջյուրը միայն մի աչք ուներ—նա կուրացել էր)։ Նրանց հայացքները հանդիպեցին։ Մարկը նկատեց, որ Բուշարը կտրուկ շարժումով փորձում է տեղից կանգնել, բայց ոստիկանները իսկույն ևեթ նրան նորից նստեցրին, և Մարկը որսաց ցասման հեղեղը, առաջին շիթը, որը ժայթքեց միայնակ աչքից։ Մարկն աչքերը կախեց։ Նա ցնցված էր։ Նրան թվում էր, որ մեղավորն ինքն է և հիմա Բուշարի ձայնը կճզմի իրեն։ Նա չէր տեսնում երկրորդ շիթը։ Կատաղի հայացքը հանկարծակի փափկեց, և Սիմոնի աչքում արդեն ոչինչ չմնաց, բացի սրտագին և կոպիտ արհամարհանքից։ Բայց Մարկն ամեն րոպե սպասում էր, որ նրա ցուցմունքը որևէ արարքով կընդհատվի։ Եվ նրան ժամանակ էր պետք, որպեսզի ընտելանա։ Նա երեխայի պես շփոթվում էր, բայց կամաց-կամաց նրա վախն անցավ։ Դրա փոխարեն հիմա նրան վիրավորում էր այն խլացրած ծիծաղը, որով հասարակությունը դիմավորում է նրա անճարակ թոթովանքը։ Իսկ նախագահը իր հեգնանքով ավելի շատ օժանդակում էր լսողներին, քան դատապարտում։ Վերջապես Մարկը ծառս եղավ։ Եվ ինչպես դա տեղի է ունենում վեհերոտ մարդկանց հետ, երբ արյունը նրանց գլուխն է խփում, վայրկենապես

սկսեց կրակ ժայթքել։ Մի թափով նա թռավ զգուշության բոլոր պատնեշների վրայով։ Նա ոչ միայն պաշտպանական ճառ արտասանեց (որը նրանից չէին պահանջում), այլ գրգռող և խիստ ու գովասանական խոսք՝ Սիմոնի հասցեին։ Նրան կանգնեցնելու առաջին փորձերի ժամանակ Մարկը փետուրները ցցեց, ինչպես երիտասարդ աքլոր, և սկսեց հարձակվել հասարակական կարգի վրա։ Չոր և փծու միջամտությամբ դատախազը նրա հախից եկավ ու նստեցրեց տեղը։ Աքլորը իրեն կորցրեց, նրան ստիպեցին իր խոսքերը ետ վերցնել։ Դեռ թռիչք չարած, նա կտրած թևերով ընկավ ջրափոսի մեջ ու սկսեց թպրտալ։ Եվ վկայի կցկտուր ցուցմունքը անցավ առանց որևէ փայլի։ Մարկը վերադառնում էր ոչնչացված և նորից Սիմոնի վրա գցեց ամոթով լեցուն իր հայացքը։ Սիմոնի աչքը նրան էր նայում և ծաղրանքով և քնքշաբար։ Նա կարծես ասում էր. «Խե՜ղճ տղա...»։ Մարկը շփոթված էր և հուզված։ Նա համարձակորեն Սիմոնին գլխով արեց։ Սիմոնը պատասխանեց հովանավորող և մտերմական շարժումով. նա բարձրացրեց ձեռքը և Մարկին հրաժեշտի ողջույն ուղարկեց։

Մարկի տրամադրությունն այնքան էր ընկել, որ հետո նույնիսկ չհետաքրքրվեց, թե գործն ինչպես ընթացավ, ինչպես ընդունեց Պոլիֆեմը[1] Ժան-Կազիմիրին։ Հին ատելությունը զենքը ցած չէր դրել։ Հերմաֆրոդիտի նուրբ երեսը նկատելուն պես Սիմոնը նետվեց առաջ և սկսեց հաչել։ Նա խայտառակում էր իր նախկին բարեկամին, ցեխ էր շպրտում նրա վրա։ Պաշտպանն ամբողջ ուժով փորձում էր նրա բերանը փակել։ Նախագահը որոտալից ձայնով նախազգուշացնում էր, որ կհրամայի նրան դուրս հանել, եթե նա վկաներին վիրավորի։ Իսկ Սիմոնը լկտիաբար պատասխանում էր, որ արգելում է իրեն պաշտպանել։ Բոլոր վկաներին նա անվանում էր «Փորի վրա սողացող շներ», իսկ Ժան-Կազիմիրին— «քած՝ »։ Վերջապես, հաջողվեց նրան լռեցնել։ Նա սկսեց լուռ լսել, բայց շարունակում էր քմծիծաղել։ Ժան-Կազիմիրը գունատվել էր։ Նա իրեն պահում էր ամբարտավան և ցուցմունքները տալիս էր հստակ, սառը,

[1] Պոլիֆեմ—միաչքանի հսկա, որ նկարագրված է Հոմերոսի «Ոդիսականում»։

գաղարներով։ Նա խաղում էր անտարբեր օբյեկտիվություն, որի նախապես հաշված բոլոր գծիկները կարող էին մեղադրյալի օգտին ծառայել։ Եվ միևնույն ժամանակ նա նվաստացնում էր Սիմոնին, ներկայացնում էր նրան որպես գյուղացի, որը շեղվել է ճիշտ ճանապարհից, նրան դիտում էր որպես ազնիվ և հիմար դեմոկրատական պատրանքի զոհ, դեմոկրատական պատրանք, որը կոպտացած հողագործին կտրում է հերկից և մեր դպրոցում նրա վրա է դնում ուժից վեր և վտանգավոր մտավոր աշխատանքը։ Ժան-Կազիմիրն ասաց, որ Բարրեսի «առանց արմատի մարդիկ» նշանավոր արտահայտությունը հնացել է և պետք է փոխարինվի ուրիշով. «շավղից դուրս գցված մարդիկ» արտահայտությամբ և որ անկարգության մեջ մեղավորը սիստեմն է, և ոչ թե գործիքները, որոնց նա փչացրել է։ Այդպիսի հարցադրումը շոյում էր դահլիճում նստած բուրժուաների թաքնված փառամոլությունը. նրանց համար հաճելի էր in petto[1] համարել, որ քաղաքակրթված բանականության կրող լինելը նրանց արտոնությունն է։ Ցուցմունքներ տալով, Ժան-Կազիմիրը ժամանակ առ ժամանակ իր պաղ և խելացի աչքերը պտտում էր դատական դահլիճում, անշտապ և անտարբեր հայացքով սահում էր մոնչացող Սիմոնի կատաղությունից ուռած դեմքի վրայով, ինչպես որևէ անշունչ առարկայի, և, անցնելով ուրիշ առարկաների, քանդում էր իր կարճ և անթերի կառուցած ֆռազների կծիկը։ Նախագահի գովասանքն ու լուռ, բայց ակնհայտ համընդհանուր համակրանքի ալիքը նշեցին նրա ելույթի ավարտը։

Այդ ժամանակ տեղի ունեցավ մի տպավորիչ տեսարան։ Խոսք խնդրեց մեղադրյալի հայրը։ Նա դատարան էր կանչված Կոսսից, բայց նրան ճանաչողները չէին կարծում, որ նման, ոչ մի շահույթ չխոստացող գործի համար այդ ռամիկը կկտրվի իր քարքարոտ դաշտերից։ Նա իսկապես էլ ուղևորության հարցը վճռել էր ամենավերջին րոպեին։ Բնական է, բոլորն ապասում էին, որ նա որդուն կպաշտպանի։ Բայց դահլիճը սարսռեց ավելի շուտ, քան ծերուկը կհասցներ գոնե մի խոսք ասել։ Երկուսն

[1] Հոգու խորքում (իտ.)։

էլ—հայր ու որդի—ծռմռված դեմքերով կանգնել էին դիմ դիմաց, իրենց սարսափելի աչքերը չռած։ Դահլիճով մեկ անցավ ատելության շունչը։ Գերեզմանային լռության մեջ ծերուկը ձեռքը բարձրացրեց, երդվեց և սկսեց խոսել։

Իր որդու նման, դա մի ամրակազմ, ծանրամարմին մարդ էր, որին կարծես կացնով էին կերտել։ Հաստ իրանը նստած էր կոճղերի պես կարճ վերջավորությունների վրա։ Ամեն կողմից մի ձեռք էր ամրացված—իսկական աքցաններ։ Ոտքեր չեն երևում—դրանք կարծես հատակին են ամրացված։ Ոչ ոքի մտքով չէր էլ անցնում զննել նրա դեմքը։ Այդ դեմքը նույն վերջավորությունն էր, ինչպես և մյուս չորսը։ Ժայռաբեկորը բղավում էր (խռպոտվածությունն ու սանձվող կատաղությունը նրան խանգարում էին նորմալ ձայնով խոսել)։

— Պարոնայք դատավորներ, ես չեմ եկել, որ ձեզանից գթություն խնդրեմ այս մարդու համար։ Ես եկել եմ, որ ձեզ ասեմ. «Վրե՛ժ լուծեք նրանից ինձ համար»։ Այն օրից, ինչ նա դուրս է եկել իր հանգուցյալ մոր արգանդից, մայր, որը մեռել է սրա պատճառով, այս մարդը կարծես իմ աչքի փուշը լինի։ Ես ոչ մի բան նրանից չեմ տեսել, բացի անախորժություններից։ Նա դոռոզ է, նա չցանկացավ ձեռքերով աշխատել, նա արհամարհում էր գյուղացու աշխատանքը։ Նրան ավելի շատ դուր էր գալիս վե՛ր ընկնել նստարանների վրա և ոչինչ չանել, միայն ուղեղը լցնել անիծյալ գրքերով, որոնց մեջ լիքը ամեն տեսակի փտած բաներ են։ Այդ գրքերն են նրան սովորեցրել վիրավորել այն ամենը, ինչ արժանի է հարգանքի։ Ես չեմ հասկանում, թե դուք ինչ եք մտածում, պարոնայք փարիզեցիներ, երբ, ա՛յ, այս տեսակ թունավորում եք մեր ջահել տղաներին։ Եթե ինձ իրավունք տային, ես այդ բոլոր գրքերը արտաքնոցը կլցնեի, իսկ նրանց բոլոր գրածները հետև սրբելու կօգտագործեի։ Ես ինձ մխիթարում էի, անվերջ մտածում, թե մի օր այդ անպետքությունը նրան օգուտ կբերի։ Նա պարծենում էր, թե պատրաստվում է ինչ-որ մինիստր դառնալ։ Բայց ահա տեսեք, թե ինչ դարձավ. կախելու մարդ։ Ինձ կասեն. մեկից մյուսը՝ ճամփան շատ կարճ է,— հնարավոր

է։ Բայց նա թաղվեց մնաց կես ճամփին։ Ամո՜ւր բոնեք նրան։ Նա մեզ պետք չի։ Նա շատ է մեր արյունը պղտորել։ Մեր ընտանիքում մի մարդ չկա, ասենք, գյուղում էլ հետը, որից նա փորձ արած չլինի փող պոկել։ Ի՞նչ ասես, որ այդ սրիկան չէր անում՝ բարի մարդկանցից փող պոկելու համար։ Հենց միայն դրա համար նրան պետք էր տաժանակրության քշեին։ Միայն ինձ էր, որ չկարողացավ քաշել։ Ես դրան ճանաչում եմ։ Ինձ չես խաբի։

Սիմոնը բացեց իր հսկայական բերանը և բղավեց.

— Ո՜չ, քեզ խաբե՞լ են... Ծե՞ր կոտոշավոր...

Դահլիճը ցնցվեց ջղային ծիծաղի պայթյունից։ Ծիծաղը լարվածությունը թուլացրեց։ Թիրախը ծերուկն էր։ Թիրախը նշեց «կպածը»։ Զուր էր ծերուկը աղաղակում և կորցնում համբերությունը։ Դրանով նա միայն ապացուցում էր, որ հարվածը դիպուկ է։ Սկսվեց փոխադարձ հայհոյանքը, և, մինչ նախագահին հաջողվեց լռություն հաստատել, բացվեց գյուղական տրագիկոմեդիան,— երկրորդ անգամ ամուսնացած ծեր Թեղեի և Իպպոլիտի կատաղի ընդհարումը։ Խաբեբան կեղտոտեց նրա բույնը, և—որ ավելի վատ էր, Ֆեդրան, ըստ երևույթին, նրանն ոչ միայն թույլ էր տվել մտնել հայրական անկողնու, այլև հայրական քսակի մեջ։ Ծերուկը ոչ մի կերպ չէր ուզում դա ընդունել։ Այն միտքը, թե իրեն թալանել են, նրան ավելի՜ էր կատաղեցնում, քան կնոջ դավաճանությունը։ Բայց նա անճարպկորեն փորձում էր դրանք ժխտել։ Իսկ գողն իրենն էր պնդում։

Այդ բոպեից բոլորի համար պարզ դարձավ, որ հայրն իր որդուն դահճի ձեռքը կտա։ Բոլորն սպասում էին...

Երկար սպասելու կարիք չեղավ։ Երբ խոսքը նորից տրվեց ծերունուն, նա բոունցքները թափահարեց.

— Էլ չեմ պատասխանի նրա ասած նողկանքներին։ Բավական է, զզվացրեց։ Ես այդ սրիկայի երեսը տեսնել չեմ ուզում։ Նա մեզ բոլորիս խայտառակել է։ Թող ասված ինձ ների, որ ես դրան ստեղծել եմ։ Պարոնայք դատավորներ, հիմա նա ձեզ է պատկանում։ Կատարեցե՞ք ձեր պարտքը։ Ես իմը կատարեցի։ Ազատեցե՞ք ինձ նրանից։

Նա վերջին անգամ կտրուկ մի շարժումով դարձավ դեպի որդին, գլուխը կախ գցեց և կատաղությամբ նայեց նրան։

Հետո թքեց իր ոտքերի առաջ և մանրավարդ, պոզերն առաջ տնկած, շարժվեց դեպի ելքը։ Ձայների աղմուկի մեջ լսելի էր, թե ինչպես դատախազը նրան «հռոմեացի» կոչեց, հետո լսվեց Սիմոնի մոնչյունը. նա ծիծաղից խեղդվում էր։ Հետո վեճ սկսվեց նրա և նախագահի միջև։ Սիմոնն ուզում էր զայրույթը թափել հոր վրա։ Նա ասում էր, որ երբ ինքը ծանր կարիքի մեջ էր, հայրն ավելի շուտ կթողներ որդին սատկի, քան իր խոզը։ Այդ կծծի մարդը իր անհոգի վերաբերմունքով նրան հասցրեց հանցագործության։ Հորից վրեժ լուծելու համար Սիմոնը մերկացրեց այն խարդախությունները, որոնց հայրը դիմում էր, որպեսզի քիչ հարկ վճարի, և առանց խղճի խայթի նկարագրեց հին ֆաբլիոնների ոգով մի զվարճալի տեսարան, որը նրանք երկուսով, ինքն ու խորթ մայրը, խաղացել էին։ Հասարակությունը հաճույքով էր լսում։ Բայց դրան խառնվեց դատարանը. պառաքինության բացակայության պատճառով (այստեղ այդպիսի բան գտնելը դժվար կլիներ) նա իր վահանով ծածկեց օրենքների ժողովածուն։ Դիվոտը դեռ չէր հանդարտվում. նա ձեռ էր առնում նախագահին և կքոթակեր իր փաստաբանին, եթե ձեռքի շղթաները նրան չխանգարեին։ Այդ կռվշտոցին վերջ տալու համար հարկադրված եղան նրան դատարանի դահլիճից դուրս տանել։

Դատախազի և դատապաշտպանի ճառերը արդեն հետաքրքրություն չէին ներկայացնում։ Դատավճիռը հայտարարելու ժամանակ մեղադրյալին նորից բերին դահլիճ։ Ոչ ոք չէր կասկածում, ինչ դատավճիռ է կայացվելու։ Ս՚իաձայն. «Այո, մեղավոր է», «Մաքուր խղճով և համոզմունքով»։ Առանց մեղքը մեղմացնող հանգամանքների։ Մահապատիժ։

Սիմոնը կարմրել էր, բայց դատավճիռը լսեց անտարբերությամբ։ Նա սևեռեց իր միակ փայլատակող աչքը դատավորների վրա, մոլեգնորեն նայեց բոլորին, և այնուհետև ասաց.

— Ես միայն մի բան եմ ափսոսում. ցավում եմ, որ Ֆրանսիայում չկա մի տասը ինձ նման մարդ, որպեսզի ձեր փորը թափի։

Նրան քարշ տվին դատական դահլիճից, իսկ նա ոռնում էր։

— Մարդասպաննե՞ր... Վերցրե՞ք իմ գլուխը։ Տարեք լափեք։

Հասարակությունը ոռնում էր նրա հետ միասին։ Նա կարծես խելագարված լիներ։ Երբեք նա այդպես տարված չէր եղել ներկայացումով։ Ահա նա, իսկական «ժողովրդական թատրոնը», որին այդպես ձգտո՞ւմ են։ Այստեղ գոնե իսկապես սպանում են։ Շները չէին սխալվում. նրանք արյան հոտ էին առնում։ Նրանք հաչում էին։ Որոշ էգեր քիչ էր մնացել ջղացնցում ստանային։ Փլվեցին դասակարգային պատնեշները։ Բոլորը եղբայրանում են։ Մարկը մեռելի պես գունատվել էր։ Ժան-Կազիմիրը նրան տարավ։ Հանկարծ նրանից կպավ Բետը։ Նա անճանաչելի էր, սարսափելի գրգռված, ծիծաղում էր, լալիս և անկապ բառերի հեղեղ էր ժայթքում։ Ժան-Կազիմիրը հետևում էր նրան և, երբ Բետը իրեն վատ զգաց, բռնեց նրան։ Ժան-Կազիմիրը Բետին նստեցրեց սանդուղքի վրա։ Նա նորից ձեռք բերեց այն մի քիչը, որը նրա գիտակցությանն էր փոխարինում։ Բայց նրա սիրտը խառնեց։ Մարկի հետ համարյա նույն բանն էր կատարվում։ Վերջապես, նրանց հաջողվեց Բետին սանդուղքից իջեցնել։ Բայց ներքևում, անկյունում, Բետն սկսեց սիրտ թափել։ Ժան-Կազիմիրը եղբայրաբար բռնում էր նրա գլուխը։ Նա ուզում էր Բետին ուղեկցել, բայց չէր կարողանում ոչ նրա՛ն թողնել, ոչ Մարկի՛ն։ Նա երկուսին էլ տաքսի նստեցրեց և վարորդին տվեց Բետի հասցեն։ Բայց Բետը անտպասելի ուժով դիմադրեց. նա պահանջում էր, որ իրեն տանեն Ռյուշի մոտ։ Ճանապարհին նա նորից սկսեց փսխել։ Ժան-Կազիմիրը նրան օգնեց բարձրանալ Ռյուշի մոտ։ Հետո նա ցած իջավ և Մարկին տարավ իր մոտ հյուրանոց։ Մարկն այն աստիճանի ջարդված էր, որ չէր դիմադրում։ Նա չէր կարողանում բերանը բացել։ Նրա սիրտը մարում էր։ Նա չգիտեր, ինչպես հայտնվեց Ժան-Կազիմիրի տենյակում, շեզլոնգի մեջ։

— Ոտքերդ մեկնի՛ր։ Պառկիր մի քիչ,— առաջարկեց նրան Ժան-Կազիմիրը։

Մարկն ամաչեց։ Նա բռնազբոսիկ դաժանությամբ ասաց.

— Շա՜տ լավ խաղացին նրանք։ Նայելու շատ բան կար։

Բայց Ժան-Կազիմիրին դրանով չէիր խաբի։ Նա շատ զգայուն էր՝ այդ թեմայով խոսակցությունը շարունակելու համար։ Տեսնելով, թե ինչպես է սուրճը եռում, նա Մարկի ուշադրությունը դարձրեց ճանապարհորդական գեղեցիկ արճամանի վրա։ Եվ երբ նրանք ներս էին քաշում սուրճի գավաթներից բարձրացող բուրմունքը, Ժան-Կազիմիրը առլեկինի իր ժպիտով հարցրեց.

— Դու Բետին լա՞վ նայեցիր։

— Խե՜ղճ աղջիկ։ Չգիտեմ ինչու, մի տեսակ վատ տեսք ունի։ Նիհարել է։

— Միայն թե ոչ փորը։

Մարկը զարմացավ... Նա միայն նոր հասկացավ... Այլևս նրանք այդ օրը Սիմոնի մասին չխոսեցին։

Երկու օր անց, երեկոյան, Մարկի մոտ մի երիտասարդ եկավ։ Նրա տգեղ, անբարետես, քաղցած դեմքը Մարկին ծանոթ թվաց։ Մարկն, այնուամենայնիվ, չհասցրեց մտաքերել, թե ով է նա, երբ այցելուն ներկայացավ. Սիմոնի փաստաբանը։ Նա խոսելու մեծ վարպետ չէր, և նրա խոսքերում համակրանք առաջացնող ոչինչ չէր զգացվում։ Բայց նա խորապես հուզված էր։ Նա հաղորդեց, որ իր պաշտպանյալը հրաժարվեց ներման խնդրանքն ստորագրելուց, և անխուսափելի վախճանը ահա ուր որ է պետք է վրա հասնի։ Նրան առաջարկել են հայտնել վերջին կամքը, բայց ապարդյուն։ Սակայն, երբ նա՝ փաստաբանը, հեռանում էր Սիմոնից, վերջինս ձայն է տվել նրան և ասել, որ ինքը կուզեր Մարկին տեսնել։

Մարկը դա ամենևին չէր ուզի։ Սարսափը գնդի նման դեմ առավ նրա կոկորդին։ Ճնշված ձայնով Մարկն ասաց.

— Շատ լավ։ Ես կգնամ նրա մոտ, եթե դա հնարավոր է։

Փաստաբանն ասաց, որ ինքն արդեն թույլտվություն է ստացել և եթե Մարկը համաձայն է, ապա կարելի է հենց հիմա բանտ գնալ. ներքևում տաքսի է սպասում։ Հետաձգել վաղվան չի կարելի։

Մարկը վեր կացավ տեղից.

— Այդ դեպքում գնանք։

Փաստաբանը տեսնում էր, որ Մարկը հուզվում է, և հաս-

կանում էր նրան։ Խոսքերը շփոթելով, փաստաբանը հավատացնում էր Մարկին, որ Սիմոնը իրեն կարեկցանք է ներշնչում։ Նա նախապես գիտեր, որ գործը չի շահելու Ընդորում, հենց դրա համար էլ այդ գործը տվել էին իրեն, և նա այդ ընդունել էր. նա հասկանում էր, թե ինչ ծանր վիճակում է գտնվում երիտասարդ գյուղացի տղան, որն ընկել էր հետպատերազմյան Փարիզի այլասերված մթնոլորտը, հասկանում էր, թե ինչ հուսահատության կարող է հասցնել նրան կարիքը, վայելքների ծարավը հագեցնելու անհնարինությունը, մերձավորների դաժան անտարբերությունը։ Փաստաբանը խոսում էր խորապես դառնացած, բայց դա անզորության դառնություն էր։ Նա ի ծնե պատկանում էր պարտվածներին։ Վստահել նրան իր ճակատագիրը վտանգավոր գործ էր։ Մարկը, ցրված լսելով նրան, բնազդորեն նրանից մի կողմ քաշվեց։

Բանտում համապատասխան կարգադրություն էր արված։ Նրանց ներս թողին։ Բանտասենյակի առաջ փաստաբանը սեղմեց Մարկի ձեռքը և թողեց նրան։ Մարկը ներս մտավ, ինչպես գերեզման։

Վերևից, վանդակապատ լուսամուտի փայլատ ապակու միջով ընկնում էր անկենդան սպիտակ լույսը։ Ոչ մի ստվեր։ Ստվերը կյանքն էր։

Հանգուցյալը կանգնած էր անկյունում։ Նա մոտեցավ Մարկին։ Մարկը շեմին քարացավ և, իրենից սնկախ ետ-ետ գնալով, դեմ առավ դռանը, որն արդեն փակվել էր։ Սիմոնը տեսավ նրա դեմքի սարսափը և քմծիծաղեց.

— Վախենո՞ւմ ես։ Ոչինչ, մեր տղա, հանգստացիր։ Չէ որ քո կաշին չեն քերթելու... Դու բախտավոր ես, քո կաշին վրադ կմնա։

Մարկը կարմրեց։ Նա ամոթով ու ցավով ասաց.

— Սիմոն, դու կարծում ես, ես այդքան թա՞նկ եմ դնահատում իմ կաշին։ Տեր իմ աստված, ի՞նչ արժի այդ կաշին...

Բարեհոգի տոնով Սիմոնը պատասխանեց.

— Թանկ չարժի, բայց և այնպես պահպանիր։ Նա քեզ սազում է։

Սիմոնը կանգնած էր Մարկի առաջ, ոտքերը լայն դրած և ձեռքերը տարուբերելով։ Մարկը մինչև հիմա դեռ չէր

համարձակվել նայել նրա երեսին, բայց, վերջապես, աչքերը բարձրացրեց, տեսավ նրա խուզած գլուխն ու հսկայական դեմքը, որը անչար ժպտում էր իրեն։ Բուռն զգացումը հրեց նրան դեպի Սիմոնը։ Ձեռքերը, որոնք երկչոտորեն թաքնվում էին հետևում, ձգվեցին առաջ, և Սիմոնը բռնեց դրանք։

— Ես քեզ նողկալի՞ գործի առաջ կանգնեցրի... Ի՞նչ, փոքրիկս... Ես գիտեի։ Ես դա դիտավորյալ արի... Ես ինքս ինձ հետ գրազ էի բռնում, որ դու չես գա։ Ես գլուխս գրավ դրի... Իսկ դու եկար։ Ես տարվեցի։ Ինչ արած, դա էլ է շահում...

— Սիմոն,— ասաց Մարկը դեռ դողացող ձայնով,— ինչո՞վ կարող եմ օգնել քեզ։

— Ոչ մի բանով։ Նրանով, որ եկար։ Դու ինձ ապացուցեցիր, որ այս բորդելում, որը կյանք է կոչվում և որից ես շուտով կհեռանամ, կա, այնուամենայնիվ, մի փոքրիկ տղա, որը ոչ բոլորովին է դեռ վաճառվել, որը չի հրաժարվում ինքն իրենից, որը չի հրաժարվում ինձանից... Կարող ես դողալ... Այո, դու դողում ես... ինչպես դատարանում... Դու քեզ այնքան էլ լավ չէիր պահում։ Քեզ վախեցրին։ Դու սարսափել էիր, և շտապեցիր ներողություն խնդրել։ Դու քո բոլոր խոսքերը ետ վերցրիր... Կարևոր չէ, այնուամենայնիվ դու ասացիր... Դու մենակ դուրս եկար գայլերի, կզաքիսների[1] և խոզերի դեմ... Իսկ դա այնքանէ էլ վատ չէ փոքրիկ տղայի համար։ Ես քեզ շնորհակալ էի։ Քո փորոտիքում ավելի շատ աղնվություն կա, քան ամբողջ նախարի։

Մարկն ավելի նվաստացած էր, քան շոյված։ Նա փոքրինչ ետ քաշվեց, պատրաստ ծառս լինելու, և դառնությամբ ասաց.

— Դու ինձ աղնվության պատե՞նտ ես տալիս։ Շնորհակալ եմ...

— Դու, երևի, համարում ես, որ ես իրավունք չունե՞մ այդպիսի պատենտներ տալու։ Սխալվում ես, սիրելիս։ Ես գիտեմ, ինչ բան է աղնվությունը... Երբ ես ասում եմ. «աղնիվ», ես նկատի չունեմ կոտրած ոչխարին։ Թող քո ամ-

---

1 Ֆրանսիայում դատավորները սպիտակ կզաքիսների մորթով զարդարած պատմուճան են կրում։

բողջ բուրդը արյամբ ու թարախով պատված լինի,— միևնույն է դու ազնիվ ես, եթե չես փախչում, եթե վախկոտի նման չես ասում. «Այդ ես չեմ», եթե նրանց մոթին թքում ես. «Ես եմ։ Me, me! adsum qui feci![1], եթե դու պատրաստ ես պատասխան տալու քո կատարածի համար...

— Իսկ դու պատրա՞ստ ես,— հարցրեց Մարկը։

— Ես պատրա՞ստ եմ։ Եվ եթե կարելի լիներ ամեն ինչ սկսել սկզբից, ես կանեի նույն բանը... Միայն ավելի լավ։

Մարկը չէր ուզում վիճել։

— Ինչո՞ւ, —փնթփնթաց Մարկը։

— Իսկ ինչո՞ւ ապրել։— Ապրել նշանակում է կամ սպանել, կամ սպանվել։

— Ո՛չ,— բղավեց Մարկը և մանկան պես ձեռքերը առաջ նետեց, կարծես պաշտպանվելով։

Սիմոնը կարեկցանքի ժպիտով նրան նայեց։

— Էխ, կաթնակեր հորթ։ Դու անընդհատ ուզում ես մորդ ծծես... Հերիք է։ Չէ՞ որ ճակատիդ եղջյուրներ են դուրս գալիս։

— Կրկեսի հրապարակում ցուլը միշտ դատապարտված է նախապես...

— Հետո ի՞նչ։ Աշխատիր, որ գոնե տեսարանը գեղեցիկ լինի։ Եվ մատադորի փորը թափիր... Ես ապուշի նման պոզերով խճճվել եմ ձիերի փորոտիքում... Դու այդ կանես ավելի լավ, քան ես։

— Դու հենց դրա համա՞ր ես ինձ կանչել, որ այդ ասես։

— Իսկ դրա մեջ ի՞նչ կա,— ասաց ցիկլոպը, ամբողջ հասակով մեկ ձգվելով։— Դա հասարակությանը թողած իմ կտակն է։

— Դու հասարակությանը հրե՞շ ես կտակում։

Միակ աչքը բռնկվեց աշխույժ հրով և փափկեց։ Սիմոնը ծանր ձեռքերով սեղմեց իր երիտասարդ բարեկամի նիհար ձեռքերը։

— Խե՜ղճ փոքրիկ հրեշ։ Նա վախենում է իր ստվերից... Էհ, ոչինչ, ես քեզ գիտեմ, դու պայքարելու ես... Ուզես-

---

[1] Ես եմ, ես եմ այդ արել (լատ.)։ Բանաստեղծական տող Վերգիլիոսի «Էնեիդայից»։

չուզես... Ով ցուլ է ծնվել, ցուլ էլ կմեռնի։ Չեն կտրի նրա... Բայց դա քո գործն է։ Ես դրանով չեմ զբաղվելու... Ահա թե ես ինչի համար եմ քեզ կանչել, տղաս (այսպիսի բոպեին ես քեզ չեմ ստի). կարելի է ունենալ աղաղած կաշի և բռունցքից ամուր սիրտ, կարելի է ատել մարդկանց և ափսոսալ, որ չհաջողվեց պայթեցնել դրանց այդ ամբողջ դուքանը, բայց և այնպես, երբ պատրաստվում ես անհետանալ, երբեմն զգում ես, թե ոտքերդ ինչպես են թուլանում, լեզուդ, ցուլի չորացած լեզուդ, ուղղակի քոր է գալիս մի անգամ էլ, մեն միայն մի անգամ էլ մի ուրիշ ցլիկի մազերը լիզելու ցանկությունից...

Նա հայացքը գցեց Մարկի վրա, և Մարկը թաքնվելու ցանկություն ունեցավ։ Սիմոնն զգում էր, ինչպես են դողում նրա ձեռքերը։ Նա Մարկին կոպտավուն քնքշությամբ շշնջաց.

— Ինձ համբուրելը քեզ համար շա՞տ դժվար կլիներ։

Մարկը, կիսամեռ, համբուրեց նրան։

— Շնորհակալ եմ։ Գնա,— ասաց Սիմոնը։— Ես միայն քեզ եմ սիրել։

Մարկը չէր կարողանում դուռը գտնել։ Սիմոնը եղբայրական հոգատարությամբ ուղեկցեց նրան։ Մարկն ուժ չուներ շրջվելու և «Մնա՞ս բարյավ» ասելու մի մարդու, որը մահվան էր դատապարտված։

Հաջորդ առավոտյան գլուխն ընկավ։

Բոլոր այդ օրերին Մարկը նամակներում իր մտքերը մորն էր հաղորդում ավելի անկեղծ, քան երբևէ։ Մտերիմ սրտերի համար անջատումն ամենամեծ բարերարությունն է. այդ անջատումը նրանց ազատում է ամաչկոտությունից, ջարդում է նրանց միջև գտնվող բոլոր պատնեշները։

Տարօրինակ նամակագրություն էր դա։ Ոչ ոքի մտքով չէր անցնի, թե մոր և որդու նամակագրություն է։ Նրանք երկուսն էլ զգում էին, որ հասարակության սահմաններից դուրս են կանգնած։ Հոգու խորքում նրանք ոչ միայն ազատ էին այդ հասարակության նախապաշարմունքներից, նրա պայմանական բարոյականությունից և օրենքներից,— մեր օրերում դրան հանգել էին հազարավոր տղամարդիկ ու

կանայք։ Անսխալ բնազդը նրանց օգնել էր մշակել իրենց համար սեփական օրենքներ, միության ու միասնության սեփական բարոյական դաշինք, դաշինք մոր և նրա ձագուկի միջև, կնքված ջունգլիներում և թելադրված հենց բնության կողմից։ Այդ ձագուկի մեծանալու հետ փոխվում էին նրանց հարաբերությունները, մայրը աննկատելիորեն փոխվում-դառնում էր պարզապես ավագ և ավելի մտերիմ։ Չէ որ նրանք հիմա միևնույն ափին էին, և ջրի հոսանքը այլևս նրանց չի բաժանի. նրանք կողք-կողքի խմում են այդ հոսանքից։ Մեկը մյուսին տալիս է իր ձեռք բերածը—ջունգլիներից ստացած կյանքի փորձը։ Նրանք դա բաժանում են իրար մեջ—և նորը, և հինը։ Եվ չի կարելի ասել, թե ամենահին փորձը երիտասարդի համար հնացած է թվում, չի կարելի ասել, թե ավագը էական չի համարում կրտսերի վերջին փորձը։

Մարկը ամեն ինչ գրեց նրան այն դրամայի մասին, որի հետ կյանքը նրան հանդիպեցրել էր այնքան մոտիկից, որ գիլյոտինի դանակը, ընկնելով, կարծես, սուլել էր ուղղակի նրա ականջի մոտ։ Նա գրում էր, որ եթե դանակը չի ընկել իր վզին, ապա դա պարզապես պատահականություն է։ Սիմոնը կարող էր լինել Մարկը, իսկ Մարկը՝ Սիմոնը։ Հուսահատությունը, խելահեղությունը, ոճիրը ապրում են մեզանից ամեն մեկի մեջ։ Մեկին հաջողվում է դիմադրել, մյուսը տապալվում է,— ո՞վ կարող է ասել ինչու։ «Այդ նա էր, բայց կարող էի լինել ես։ Ես ոչ ոքի դատապարտելու իրավունք չունեմ...»։

Նրան չի զարմացնում Աննետայի պատասխանը.

«Ոչ, ոչ դու, ոչ ես,— մենք իրավունք չունենք դատապարտելու այդ դժբախտին...»։

Աննետան Սիմոնի մասին գրում է այն մարդու կարեկցանքով, որը ամեն ինչ հասկացել է։ Սակայն նա ավելացնում է (և Մարկի սիրտը վեր է թռչում)։

«Բայց դա ճիշտ չէ, սիրելիս, որ նա կարող էր լինել դու, դու կարող էիր լինել նա։ Դու՝ միայն դու ես, իմ պտուղը... Այդ պտուղը կարելի է պոկել ծառից։ Բայց նա որդնած լինել չի կարող... Հանցագործությունն ու խայտառակությունը ապրում են,— այո, այո, ես այդ գիտեմ,— և քո մեջ, և իմ

մեջ։ Բայց նրանք երբեք մեզ վրա իշխանություն չեն նվաճի։ Ինչքան էլ դու այդ ուզես... (Իսկ դու ուզել ես... Դու այդ մասին ինձ չես ասել, բայց ես գլխի եմ ընկնում... Ասենք, ի՞նչ գիտես. գուցե, ես ի՞նքս էլ եմ ուզել..) Բայց փառք աստծո, հանցագործությունն ու խայտառակությունը իրենք են շրջվում մեզանից»։

Մարկը տաքանում է։ Նա դողում է... «Դու էլ էիր ուզում...»։ Եվ մայրը, նա նույնպես «ուզում էր»... Նա ուղղակի հենց այդպես էլ որդուն գրում է... Մի շարժումով Աննետան սրբեց որդու գաղտնի սարսափը։ Եթե նա գտնվել է նույն անդունդների եզրին և այնուամենայնիվ կարողացել է դիմանալ, Մարկը, որ տղամարդ է, կարող է ու կարող դիմանալ։ Սակայն, որպեսզի նրան փորձի, Մարկն իր անկեղծության մեջ ավելի հեռուն է գնում, քան երբևէ։ Նա նկարագրում է մորը այն խելահեղությունը, որը երբեմն երիտասարդները իրենց մեջ են կրում և որից նա հանկարծ սթափվեց, շնչակտուր, ջղաձգաբար շարժելով մատները այն րոպեին, երբ նա գտնվում էր սրիկայության եզրին։ «Ես ինչ գրեցի նրան...»,— մտածում է Մարկը։ Բայց մայրը նրան պատասխանում է.

«Դու գտնվում էիր եզրին։ Դու տեսար անդունդը։ Դա լավ է։ Հիմա քեզ հանկարծակիի չեն բերի։ Ես հենց նրա համար եմ ստեղծել Մարկին, որ նա հանդգնի։ Բայց ես նրան ստեղծել եմ նաև նրա համար, որ նա կարողանա դիմադրել։ Հանդգնիր։ Ես էլ եմ ռիսկի դիմում, ես էլ եմ հանդգնել։ Բոլորին չէ վիճակված կործանվել»։

Եվ ավելացրեց իր անբոնազբոսիկ, լուրջ և հեգնական ժպիտով.

«Ես քսան անգամ փորձել եմ։ Ինձ այդ երբեք չի հաջողվել։ Ինձանից հմուտ չես լինի։ Հաշտվենք, տղաս, և համբուրիր ինձ»։

Հասնելով այդ տողերին, Մարկն ուրախությունից դողաց։ Հատակը նրա ոտքերի տակ երերում էր։ Սիգարետի ծխի հետ միասին նա բաց թողեց հոգու խորքում թաքցրածը, որից նա միշտ ամաչում էր։

«Գնա՛ ուրի՛շ թոքեր»։

Այդ օրը փողոցներում նա շնչում էր նույն աղտոտված

•ոդը։ Բայց նա ծաղրանքով ու մարտակոչով ինքն իրեն ասում էր.

«Ես իմ սեփական օդն էլ ունեմ։ Իմ ոտքերի տակ ամուր հող կա։ Իմ երակներում իմ մոր, իմ Ռիվիերի արյունն է»։

Բայց գետը ոսկեբեր[1] չէր։ Եվ այն ձմեռ կյանքը նույնպես ծանր էր։ Մարկը ոչ մի բանում հաջողություն չուներ, ասենք, առողջությունը նույնպես տեղի էր տվել, զրկանքները թողել էին իրենց հետքը։ Մարկը չէր ուզում օգնության դիմել մորը, և նույնիսկ, երբ Աննետան նրան փող առաջարկեց, Մարկը հիմար ինքնասիրության պատճառով հրաժարվեց։ Ամենից առաջ նա կասկածում էր, թե մայրը իրեն զրկում է ամենաանհրաժեշտ բաներից։ Երկրորդը, այդ հիմար աքլորը անհնար էր համարում կնոջից փող ընդունելը... Մի՞թե մայրը կին է... Այո, նրա համար կին է... Մարկը շատ չոր հրաժարվեց. «Մտքովդ չանցնի՛ համառել»։ Աննետան չէր էլ համառում... Ինչքա՜ն հիմար են այդ տղամարդիկ... Աննետան շատ ուրախ էր, որ Մարկը տղամարդ է։

Նա Աննետայից փող չվերցրեց, բայց կառչեց նրա մրտքերից։ Առանց այդ մտքերի Մարկն իրեն շատ միայնակ կզգար այն սարսափելի ձմռանը և ցրտից կմեռներ։ Նա տաքանում էր այդ մտքերից, ինչպես խարույկի կողքին, որ ոչ ոք չի տեսնում, որը, ինչպես նա էր կարծում, չի տեսնում ինքն՝ Աննետան։ Բայց մայրը նրա հետ կապված էր գաղտնի թելերով։ Եվ Աննետան չէր կարող չտեսնել, որ Մարկի որոշ խիստ և զուսպ խոսքերում փայլփլում է, ինչպես քարածուխի մեջ, թաքնված կրակը։ Աննետան աղոտ կերպով զգի՛ի էր ընկնում, որ ինքը որդու համար դարձել է մոլորության և մաքուր, գրեթե կրոնական երկրպագության առարկա։ Նա համարում էր այդ անհեթեթություն, բայց հոգու խորքում որդու նկատմամբ հնազանդ երախտագիտություն էր զգում։ Մարտիկներին պետք է լինում սիրո և հարգանքի պատրանք... «Non sum digna[2]. Բայց և այնպես ես երախտապարտ եմ քեզ, իմ փոքրիկ ասպետ...»։

---

[1] Բնագրում բառախաղ է. Ռիվիեր ֆրանսերեն գետ է նշանակում։
[2] Ես արժանի չեմ (լատ.)։

Այդ ոչ սովորական, չարտահայտված հոգեկան մտերմությունը երիտասարդ զինվորին օգնում էր կարիքի և միայնության մեջ մնալ մութ և սառը ջրերի մակերեսին և չխեղդվել... Բայց Մարկի ոտքերը մրսում էին։ Մի անգամ ուշ գիշերին նա քայլում էր փողոցով ու ցրտից դոփդոփում, և հանկարծ մշուշի միջից, վատ լուսավորված մայթի անկյունում, նկատեց կարծես ծանոթ մի կերպարանք։ Մարկը շատ արագ մի կողմ քաշվեց, որպեսզի աննկատելիորեն զննի այդ կերպարանքը։ Նա չէր սխալվել. դա նա էր, Ռյուշը։ Հենվելով թերթի փակ կրպակին, այնպես, որ նրա վրա շընկնի էլեկտրական լապտերի լույսը,— այդ կերպարանքը, ըստ երևույթին, ինչ-որ մեկին էր հետևում, որը պետք է դուրս գար դիմացի տան դռնից։ Նա սեղմվել էր կրպակին և իր թաքստոցից մի քիչ առաջ էր խոնարհվել։ Մարկը զարմացած կանգ առավ մի քանի քայլի վրա և թաքնվեց։ Փողոցում մարդ չկար։ Ժամացույցը ցույց էր տալիս մեկը։ Ռյուշը չէր շարժվում։ Նրա հայացքը գամված էր փակ դռանը...։ Վերջապես դուռը ծերպ եղավ։ Ռյուշը. քիչ-էր մնացել դուրս թռչի իր թաքստոցից։ Նրա աջ ձեռքը դուրս լողաց խավարի միջից և մեկնվեց առաջ, բայց Ռյուշն անմիջապես ձեռքը ետ քաշեց. տանից դուրս եկած մարդը նա չէր, ում ինքն սպասում էր... Ռյուշը նորից սսկվեց, ականջ դնելով անծանոթի հեռացող ոտնաձայներին։ Մարկը նույնպես սսկվեց։ Բայց նա ձեռքը տեսավ և հասկացավ ամեն ինչ։ Նա գողեգող մոտեցավ կրպակին, շրջանցեց այն և բռնեց Ռյուշի ձեռքը։ Նա վախվորած վեր թռավ, հետո կատաղությամբ բռնված սկսեց լռելյայն պաշտպանվել, եղունգները խրելով Մարկի մարմինը։ Մարկը ոլորեց նրա ձեռքերը և վերջապես խլեց ատրճանակը։ Մարկը նրան սեղմել էր պատին, բայց Ռյուշը մոլեգնած էր, նա կռացավ և սկսեց կծել Մարկի ձեռքը, իսկ Մարկը շշնջում էր ուղղակի նրա ծոծրակին

— Ռյո՛ւշ։ Այդ ե՛ս եմ, Մա՛րկը։ Ռյուշ, սիրելիս, մի՛ վախենա... Դե, տուր ատրճանակը։

Կարճ, բայց կատաղի պայքարից հետո դիվոտած աղջիկն իրեն համարեց պարտված, հանձնվեց, և պոռթկա-

ցին հեկեկանքները։ Ռյուշը ողողված էր արցունքներով, իսկ Մարկը, իր կրծքին սեղմելով աղջկա թաց բերանը, շշնջում էր.

— Դե բավակա՞ն է, վե՛րջ տուր։

Մարկը բռնեց նրա կզակը և իր թաշկինակը չգտնելով, այտերն ու քիթը դայակի նման սրբեց մատներով. Ռյուշն արդեն կոտրված էր և չէր խանգարում նրան։ Մարկը նրա ճակատին քաշեց աղջկա կասկայաձև գլխարկը, որը մի կողմի վրա էր թեքվել, կարգի բերեց նրա կոճակներն արձակված վերարկուն և, համոզվելով, որ նա այլևս չի դիմադրում, ձեռքը խրեց նրա արմնկի տակ, ամուր սեղմեց այն և քարշ տվեց նրան իր հետևից։ Ռյուշը գնում էր ինչպես լուսնոտը... Ո՞ւր էին նրանք գնում։ Չգիտեին։ Ռյուշն այդ մասին չէր էլ մտածում։ Ուր Մարկն էր գնում, այնտեղ էլ՝ նա։ Ռյուշն անցնում էր փողոցները, առանց նայելու, հնազանդորեն թեքվում էր աջ, ձախ։ Նրա ի՞նչ գործն էր։ Նա իրեն գետի հատակին էլ ոչ ավելի լավ և ոչ ավելի վատ կզգար։ Մարկը խոսում էր մեքենայորեն։ Ոչ ինքը, ոչ Ռյուշը չէին լսում, թե նա ի՞նչ է ասում։ Մարկն անընդհատ մտածում էր. «Ես ի՞նչ անեմ սրան...»։ Նրան իր տո՞ւն տանի։ Նրան իր տանը մենակ այդ վիճակում թողնելը անմարդկային կլիներ և անզգուշություն։ Մարկի ոտքերն իրենք բերին նրան Կյուժաս փողոցը, այն հյուրանոցի մոտ, որտեղ նա ապրում էր։ Ուղղակի դռան մոտ Մարկն ասաց.

— Բարձրացիր։

Եվ բարձրաձայն մտածեց.

— Ամեն մարդ իր հերթն ունի։

Հիմա Ռյուշին էին հասցրել հուսահատության, Մարկի հերթն էր եկել նրան ապաստան տալու։ Ռյուշը նրան ոչինչ չասաց, ոչ մի շարժումով ոչ մերժում, ոչ համաձայնություն չարտահայտեց։ Ռյուշը սանդուղքով վեր բարձրացավ։

Նրանք մտան խղճուկ, կեղտոտ, չհավաքված սենյակը, և Մարկն ամաչեց, որ Ռյուշը այդ բոլորը տեսնում է... Բայց Ռյուշը ոչինչ չէր տեսնում — նա, կարծես քարացած, կանգնել էր։ Մարկը նրան նստեցրեց մահճակալին։ Ռյուշն անում էր բոլոր այն շարժումները, որոնք Մարկն ստիպում էր անել, բայց անում էր առանց գիտակցելու։ Ռյուշի

թևերը կախվել էին, ինչպես պարան։ Մարկը հոնքերն էր կիտում, շրթունքները կծում և, վերջապես, վճռեց։ Նա հանեց Ռյուշի գլխարկը, արձակեց վերարկուի կոճակները, քանդեց կոշիկների քուղերը և պառկեցրեց մահճակալին։ Հիմա վրա հասավ Ռյուշի ռեակցիան, ներվերը չդիմացան, նրա ամբողջ մարմինը դողից ցնցվում էր։ Մարկը շշնջաց.

— Վերմակի տակ մտիր։ Արի, փոքրիկս, ես քեզ օգնեմ։

Մարկը նրան բարձրացրեց, որպեսզի անկողինը բացի։ Ռյուշը լթույլ տվեց, որ Մարկը նրա շորերը հանի—նրա աչքերը բաց էին, բայց նայում էր ոչինչ չտեսնող հայացքով։ Ռյուշի նիհար ուսերը չէին զգում Մարկի անվարժ մատների հպումը, որոնք հանում էին նրա շորերը։ Մարկը նրան ծածկեց իր ճամպրուկում եղած բոլոր ծանր ու տաք զգեստներով։ Եվ մինչ սպիրտայրոցի վրա խմելիք էր տաքանում, Մարկը նստել էր մահճակալի մոտ և, ձեռքերը վերմակի տակ տանելով, տաքացնում էր նրա սառած ոտքերը։ Երկուսն էլ տանջված էին, երկուսն էլ անշարժ։ Մարկն իր թմրած վիճակից դուրս եկավ, հենց որ թեյնիկից կրակին թափված ջուրն սկսեց թշթշալ։ Մարկը տեղից վեր կացավ, գրոգ պատրաստեց և բարձրացրեց Հենրիետտայի գլուխը, որպեսզի նրան ստիպի մի քանի կում խմել։ Սկզբում հեղուկը թափվեց Ռյուշի բերանից և կզակի վրայով հոսեց վզի երկարությամբ։ Տաք գրոգն աղջկա ուշը տեղը բերեց։ Նա նայեց Մարկին և, վերջապես, տեսավ նրան։ Ռյուշը նայեց Մարկի անհանգստացած աչքերին, նկատեց նրա ձեռքին տաք հեղուկով բաժակը,— Մարկն այդ ժամանակ անվարժ մի շարժումով փորձում էր Ռյուշի բերանը մի գդալ գրոգ լցնել։ Ռյուշը բացեց բերանը և երեխայի նման կուլ տվեց։ Նրա այտերին թեթևակի կարմրություն հայտնվեց։ Ձեռքի թույլ շարժումով Հենրիետտան գդալը մի կողմ հրեց։ Մարկը թեթևացած հետևում էր, թե ինչպես է աղջիկը կյանքի վերադառնում։ Նա ամուր սեղմեց Ռյուշի քունքերը և ասաց.

— Իսկ հիմա քնիր։ Հո չե՞ս մրսում։

Համարյա հենց այդ նույն րոպեին Մարկը նկատեց, որ աղջկա գլուխը դրված է կեղտոտ երեսով բարձի վրա, և նա

իրեն սոսկալի անհարմար զգաց։ Բայց իր շփոթմունքը թաքցնելու փոխարեն ասաց.

— Ների՛ր։

Եվ գնաց մաքուր սրբիչ բերելու, որ դնի նրա գլխատակը։ Մարկի միամիտ շփոթմունքը Ռյուշին կյանքի կոչեց։ Բարձրացնելով սրբիչի ծայրը, Ռյուշը նույնիսկ ժպտաց, քաշեց այն, գցեց հատակին, այտը սեղմեց բարձին և փակեց աչքերը։

Մարկը մի րոպե ևս սպասեց, ապա տեսնելով, որ Ռյուշը հանդարտվեց, մի կերպ տեղավորվեց երկու աթոռի վրա և լույսը հանգցրեց։

Խավարում լսվեց Ռյուշի ձայնը։

— Իսկ դո՞։ Բա դու՞ որտեղ ես քնելու։

— Մի՛ անհանգստացիր։ Ես հիանալի տեղավորվել եմ։

— Դու աթոռին չես կարող քնել։

— Սա առաջին անգամը չէ։

— Գոնե աթոռը մահճակալին մոտեցրու։ Թե չէ ցած կգլորվես։

Մարկը տեղավորվեց մահճակալի կողքին դրված երկու աթոռների վրա, ոտքերով դեպի Ռյուշի գլուխը և իր գլուխը հենելով համարյա Ռյուշի ոտքերին։

— Ոտքերս բռնիր,— ասաց Ռյուշը,— այդպես լավ է։

Մարկը կրկին սկսեց տաքացնել Ռյուշի ոտքերը։ Քիչ անց Ռյուշն ասաց.

— Դու լավն ես։

— Չգիտեմ... Չեմ կարծում...

— Երբ ես ասում եմ «լավն ես», քեզ համեմատում եմ...

— Ո՞ւմ հետ։

— Ուրիշ որձ շների հետ...

— Բայց չէ որ ես էլ եմ որձ շուն...

— Իսկ ես քաջ եմ։

— Այո, այսօր դու քաջ էիր։

— Բայց և այնպես չկարողացա նրա փորը կրծել։

Ռյուշն սկսեց ոտքերով խփել անկողնուն։

— Լավ, լավ, բավական է։ Ոտքերդ մի թափահարիր։ Դուրս չես թռչի։

Մարկը պինդ սեղմեց նրա ոտքերի կոճերը։

— Լսիր, Մարկ, ես ուզում եմ, որ դու ամեն ինչ իմանաս, եթե ճակատագրին պետք էր, որ դու իմ ոստայնի մեջ ընկնես...

— Ես ոչինչ իմանալու պետք չունեմ... Եվ ի՞նչ կա իմանալու։ Խաբված սիրո որևէ հիմար պատմություն, եթե միայն դա կարելի է սեր կոչել...

— Այո՛։ Ես դա հենց այդպես էլ կոչում եմ։ Իսկ ինձ համար ի՞նչ նշանակություն ունի, դա այդպե՞ս է կոչվում, թե՞ ուրիշ կերպ։ Նա ուզում էր ինձ, ես էլ ուզում էի նրան։ Նա ինձ վերցրեց, ես էլ վերցրի նրան։ Իսկ հիմա նա ինձ լքում է, ես նրան ձանձրացրել եմ։ Նա ուզում է ուրիշ կին, նա ուրիշ կնոջ է վերցնում։ Ես ուզում եմ նրան սպանել...

Մարկը մրթմրթաց.

— Ոյուշ, այդ հիմարություններին վե՞րջ է տրված։ Դա այլևս չի՞ կրկնվի։

Ոյուշը թուքը կուլ տվեց և, մի քանի անգամ խոր շունչ քաշելով, ասաց.

— Իհարկե։ Այո։ Այդպես ստացվեց։ Այդպիսի բաները երկու անգամ չեն անում... Բայց ես պետք է քեզ բոլորը պատմեմ, որպեսզի հոգիս թեթևացնեմ, որպեսզի վրեժ լուծեմ։

— Սիրելիս, դրանք ինձ զզվացրել են, քո այդ պատմությունները։ Լռի՛ր... Եվ հետո ես այլևս չեմ կարող, ես քնել եմ ուզում։ Ես մեռնում եմ...

Ոյուշը ջղայնացած ծիծաղեց.

— Հետո ի՞նչ... Մեռի՛ր... Բայց միայն լսիր մինչև վերջը... Ինձ դա չի հետաքրքրում, որ քեզ համար զզվելի է։ Ինձ համար էլ է զզվելի... Եվ դեռ այդտեղ էլ ես քեզ կգերազանցեմ... (Ոյուշը բռնեց Մարկի ականջներից և սկսեց նրա քիթը սավանի վրայով այս ու այն կողմ տանել)։ Դու իմ նյութաանդրենդյան շունն ես։ Դու ջրից հանեցիր ինձ—իմ կամքին հակառակ, բայց հանեցիր... Եվ որպես փոխանակ քո գլխին։ Հիմա դու պետք է փրկությունը ավարտին հասցնես, դու պետք է իմ վշտի ամբողջ բաժակը խմես։

— Լավ,— հնազանդորեն ասաց Մարկը։

Եվ նույն բոպեին քնեց։ Իսկ Ռյուշը, անկողնում նստած, խոնարհված նրա վրա, ցասումով և անկեղծորեն ասում էր նրան իր պատմությունը։ Մարկի ուշադրությունը գրավելու համար Ռյուշը ժամանակ առ ժամանակ իր դողդողացող մատները խրում էր նրա մազերի մեջ և ցնցում գլուխը։ Բայց քունն ավելի ուժեղ էր։ Մարկը Ռյուշի խոսքերի հեղեղն ընդունում էր միայն որպես անհանգիստ օրորոցային... Մարկը ներազում տեսնում էր գիշերը ծովի վրա... Եվ վերջին քանը, որ դեռ պահպանվում էր նրա գիտակցության մեջ, դա ոտքերն էին, որոնք Մարկը սեղմում էր և որոնք շարժվում էին, շարժվում էին և գալարվում, ինչպես ձեռքերը, քանի դեռ Ռյուշը խոսում էր...

Թեև Ռյուշը գիտեր, որ Մարկը վաղուց արդեն ոչինչ չի լսում, բայց և այնպես իր պատմությունն արեց մինչև վերջը։ Եվ միայն այդ ժամանակ, մի կուշտ խոսելուց և իրեն դատարկելուց հետո, կանգ առավ։ Երբ ջրաղացը հանկարծ լռեց, Մարկը քնի մեջ սկսեց շարժվել։ Աթոռը, որի վրա դրված էին նրա ոտքերը, շուռ եկավ։ Ռյուշը Մարկին գոտուց բռնելով պահեց և, երկու ձեռքով գրկելով նրա ազդրերը, քնած վիճակում նրան քաշեց մահճակալի մեջ, իր կողքը։ Մարկի շորերը հագին էր, բայց կոշիկները՝ հանած։ Ռյուշը նրա բոբիկ ոտքերը դրեց բարձին, իր այտի կողքը, իսկ նրա գլուխը՝ իր ոտքերի մոտ։ Եվ նույնպես քնեց։ Այդպես անցկացրին նրանք գիշերը կողք-կողքի,— Ռյուշը՝ վերմակի տակ, Մարկը՝ վերմակի վրա։ Երկուսն էլ հոգնածությունից ուժասպառվել էին։ Նրանք քնել էին, ինչպես կարողանում են քնել միայն այդ հասակում,— յոթ ժամ շարունակ, առանց շարժվելու։ Առավոտյան մոտ ժամը տասնմեկին նրանք արթնացան,— երկուսն էլ միաժամանակ և նույն դիրքով, ինչպես պառկել էին։

Մարկն ապշել էր։ Մի թափով նա նստեց մահճակալի վրա և, տեսնելով, որ Ռյուշի այտը սեղմված է իր ոտքերին, ոտքերն արագ իրեն քաշեց և մրթմրթաց։

— Ների՛ր ինձ, ների՛ր...

Ռյուշը քրքջաց և վրա թափեց.

— Շնորհակալություն։

Եվ նույնպես նստեց կրունկների վրա, ինչպես Մարկը։

Այդպես նրանք նստել էին մահճակալին, ինչպես չինական արձանիկներ, և նայում էին իրար։

— Ես ամաչում եմ քո առաջ,— ասաց Մարկը։

Ռյուշը քիթը քսեց Մարկի քթին։

— Ամաչում ես, ամաչիր, ամաչում ես, ամաչիր, հիմար տղա... Ավելի լավ բարձ ես դեռ երբեք չեմ ունեցել... Ինչքա՜ն լավ եմ քնել։ Ես լվացվեցի, ես ազատվեցի ամեն տեսակի աղբից, որը ինձ թունավորում էր։ Դու, իհարկե, ոչինչ չես լսել և ոչինչ չես հիշում այն ամենից, ինչ ես գիշերը թափում էի քո գլխին...

Մարկը փորձեց մտաբերել.

— Ոչ մի բան։

— Կարևոր չէ։ Ես քեզ ամեն ինչ ասացի։ Ինչպես ուզում ես, բարեկամս, բայց մի օր դու բոլորը կմտաբերես, կտորներով։ Չէ՞ որ ես ուղղակի քո ականջին էի ասում, ես բոլորը փչեցի-լցրի ուղեղիդ մեջ։

— Լա՜վ նվեր է։

— Բա ի՞նչ։ Միայն այն ժամանակ ես թեթևանում, երբ քո ծանրությունը ուրիշի վրա ես դնում։

— Եվ դու թեթևացա՞ր։

— Ես լրիվ թեթևացա։ Ստամոքսս դատարկ է։ Սիրտս ազատ է։ Ես մաքուր եմ և թարմ։

— Դե լավ, որ այդպես է։ Ես լռում եմ։

— Եվ շատ լավ ես անում։ Եթե դու հիմա համարձակվեիր որևէ բան ակնարկել, որ կապված է այս գիշերվա հետ, ես կսկսեի ամեն ինչ ժխտել։ Ես ժխտում եմ... Միայն համարձակվի... Ոչինչ չկար, ոչ մի բան։

Ռյուշը ձեռ էր առնում Մարկին։ Մարկը միայն բերանը բաց, նայում էր այդ ինքնավստահ, ծիծաղող, հանգստացած դեմքին, որի վրա գիշերային ջղաձգումները ոչ մի հետք չէին թողել։

— Սատանայի կնանիք, —ասաց Մարկը։— Նրանք յոթ հոգի ունեն և յոթ երես։

— Դա դեռ շատ քիչ է,— նկատեց Ռյուշը։

Նա ձեռքերով սեղմեց Մարկի դեմքը և այտը ճմկթեց.

— Դու իմ սքանչելի՜ տղա... Իմ փոքրի՜կ տղա... Ինչքա՜ն ես նիհար... Որքա՜ն եմ ես քեզ շնորհակալ.. Դու չես

կարող պատկերացնել... Նույնիսկ չփորձես էլ։ Թող ավելի լավ է միայն ես իմանամ այդ։

— Ես նույնպես դա հիանալի գիտեմ։

— Ասացե՞ք խնդրեմ... Ի՞նչ լպիրշն է։ Հիմար պարծենկո՞տն է։ Հիմա կսկսի պահանջել, որ ես ընդունեմ նրա ծառայությունները... Դեռ, մեկ էլ տեսար, կպահանջի, որ ես նրան վճարեմ...

— Իհա՞րկե, կպահանջեմ։ Վճարի՞։

— Վաշխառու... Ասա, ինչքան։

— Խոստացիր ինձ երբեք այլևս այդ չանել։

— Ես քեզանից թույլտվություն եմ հարցնելու։

— Իսկ եթե ես թույլ չտա՞մ։

— Ես կենթարկվեմ։

Հանկարծ կատակից հետո հաջորդեց հաստատուն, լուրջ տոնը և բաց հայացքը որն ասում էր.

«Կատակները բավական են»։

— Լավ,— ասաց Մարկը։— Հիշիր, դու ինչ խոստացար։ Նրանք իրար ձեռք բռնեցին։

— Իսկ հիմա,— ասաց Ռյուշը, ոտքերը վերմակի տակից հանելով,— արի ուտենք։ Ես սոսկալի սովածացել եմ...

Եվ Ռյուշը թռավ հատակին...

Մարկը դժվար վիճակում էր։ Նրա քսակը դատարկ էր։ Ռյուշը դա գլխի էր ընկնում։ Նա լկտիաբար հայտարարեց.

— Ես քեզ պահելու հաշիվն ինձ վրա եմ վերցնում։ Ես կվճարեմ։

Մարկը եռանդուն կերպով առարկեց։

— Սիրելիս, դու պետք է ենթարկվես։ Թե չէ մեր դաշինքը հող ու մոխիր կդառնա։ Ես նորից մարդասպան կդառնամ։

Մարկն իր ասածն էր պնդում։

— Բերանդ փակիր։ Կբացես, երբ առջևդ ափսե լինի գրած։

— Ռյուշ, դու ինձ նվաստացնել ես ուզում։

— Իհարկե, դա շատ օգտակար է քո առողջության համար։ Չէ որ դու զոռոզությունից տրաքում ես։ Ուրեմն, այդ զոռոզությունը պետք է կոտրել։ Բա ո՞նց դու ինձ լվացիր։

Ամեն մարդ իր հերթն ունի... Բայց ասա, խնդրեմ, ճի՞շտ է, որ մինչև հիմա երբեք կինը քո փոխարեն չի վճարել։

— Իհարկե, չի վճարել։

— Ուրեմն, հիանալի է։ Իսկ ես քո փոխարեն վճարելու եմ։

Ռյուշը ձեռքերը շփեց, նա պտույտ կատարեց, թևանցուկ արեց նրան և ճմկթեց, երբ սանդուղքով ցած էին իջնում։ Վերջապես նրանք դուրս եկան փողոց։

Ուսանողական ռեստորանում նրանք միս կերան արյունաթաթախ։ Բացի նրանից, ինչ նշված էր ընդհանուր կերակրացանկում, Ռյուշը պահանջեց պիրոգ, յուղոտ բրի պանիր և մի շիշ Բոնի հին գինի։ Ռյուշի աչքերում շողշողում էր խորամանկ ծաղրը։ Նրան հակառակվելը վտանգավոր բան կլիներ։ Մարկը հնազանդվեց։ Նա Ռյուշին թույլ տվեց անելու այն ամենը, ինչ նա կուզի, և դրանից գոհ էր։ Մարկի գիտակցությունը ծանրացել էր։ Այդ գիտակցությունը լռում էր, ինչպես պահապան շունը, որին չափից ավելի շատ են կերակրել։ Այնուամենայնիվ լավ էր գոնե մի անգամ շատ կուշտ ուտել։

Ռեստորանից Մարկը պետք է գնար աշխատանքի։ Ռյուշը նրան ասաց.

— Ապա քո բանալին ինձ տուր։

Երեկոյան Մարկը Ռյուշին գտավ իր սենյակում։ Նա կարկատում էր Մարկի շապիկներն ու գուլպաները։ Ռյուշն այն ամենը, ինչ նրա արկղների և ճամպրուկի մեջ էր գտնվում, դուրս էր թափել։ Թղթերն ու իրերը լցված էին մահճակալին, երկու աթոռներին, հատակին։ Եվ բոլորը չէր, որ մաքուր էր, ամենևին ոչ բոլորը։ Մարկը սովորաբար կեղտոտ սպիտակեղենը խրում էր պատի պահարանի անկյունը։ Ռյուշն ինչ կա չկա հանում էր, ջոկչկում, հաշվում, նորից նայում և որոշ բաներ նույնիսկ լգանում լվանում էր։ Լուսամուտի առաջ կապած պարանի վրա չորանում էին տակի փոխնորդներն ու թաշկինակները։

Մարկը պատրաստ էր ամոթից գետինը մտնել։ Նա բոլորովին չէր սիրում որևէ մեկին ցույց տալ իր ցավերն ու աղքատի սպիտակեղենը։ Նա ընկավ մահճակալին և ձեռքով փակեց աչքերը։

— Պետք չէ, պետք չէ, պետք չէ, —կրկնում էր նա աղիաղորմ տոնով։

Աղջկա ձայնը բարեհոգորեն արտասանեց.

— Թող, խնդրում եմ... Դա այնքա՞ն բնական է...

— Այդ ցնցոտիները...— տնքաց Մարկը։

— Հենց այդպես որ կա։ Դրանք արդեն վաղուց էին իմ կարիքն զգում։

— Ո՛չ։ Պետք չէ, որ դու քշչես այդ կեղտը։

— Դու, երևի, կարծում ես, թե ես դրան սովոր չեմ։ Կին լինել և այդպիսի բաներ չտեսնե՞լ։

— Դա լավ չէ։ Ոչ, ոչ։ Դու իրավունք չունեիր...

— Ես ինքս եմ ինձ համար իրավունք վերցնում։ Այսօրվա գիշերից հետո ինձ անհրաժեշտ է նորից քեզ հաղթել... Եվ ահա ես հաղթեցի։ Իսկ ես այսօր լավ աշխատեցի... Ախր ասացի. «Ես քեզ կմաքրեմ»... Ահա և մաքրեցի... Փնթի՛...

Մարկը ծիծաղեց։ Նրա շոնչն ամոթից կտրվում էր։ Ռյուշը մի կողմ գցեց աշխատանքը, հասավ Մարկի հետևից և բռնեց նրա ձեռքը։

— Իմ սիրելի տղա... Դրա համար ես քեզ ավելի շատ եմ սիրում...

Մարկը շարունակում էր երեսը շրջել։ Ռյուշը բռնեց նրա կզակից.

— Անխե՛լք... Չէ՞ որ մենք ընկերներ ենք, դժբախտության ընկերներ...

— Խոզության ընկերներ,— ասաց Մարկը, մրթմրթալով ու ծիծաղելով։ Բայց նա հուզված էր։

— Ինչը կարող է ավելի լավ լինել։

Մարկը Ռյուշին օգնեց հավաքել սպիտակեղենը։ Օրը հանգչում էր։ Ստիպված եղան լույսը վառել։

— Այսօրվա համար բավական է,— ասաց Ռյուշը։— Այստեղ դեռ մի օրվա աշխատանք կա։ Ես վաղը կգամ։

— Ոնց թե։ Դու գնո՞ւմ ես,— հարցրեց Մարկը։

— Իհարկե։ Գնում եմ տուն։

Ռյուշը նկատեց, որ Մարկը նեղացած է։

— Այո, բարեկամս։ Այս գիշեր սքանչելի արկած տեղի ունեցավ, բայց դրա կրկնելը վտանգավոր բան կլիներ։

Մարկը շփոթահար տենք ուներ։ Ռյուշը ծիծաղեց։

— Քո կարծիքով այդպե՞ս չէ։ Եթե մի անգամ ինչ-որ հրաշքով ամեն ինչ հաջողությամբ վերջացավ, ապա կրկնելը կնշանակեր սատանային փորձության ենթարկել։

— Բայց չէ որ սատանան հենց այդ մասին էլ երազում է, որպեսզի նրան փորձության ենթարկեն։

— Այն էլ ո՞նց է երազում... Սատանուհին նո՞ւյնպես։

— Կնշանակի՞...

— Կնշանակի, ոչ։

— Դու ճիշտ ես։ Այն, ինչ եղավ,— անչափ լավ էր։

Ռյուշը նայում էր հայելուն, որը կախված էր լուսամուտին, և մատով մազերը գլխարկի տակ տանում։ Իր թիկունքում նա տեսավ Մարկին.

— Այնուամենայնիվ դու բարի տղա ես։

— Դու էլ չար չես։

— Իմ սիրեկանների համար ես չարից ավելին եմ, հավատացնում եմ քեզ։

Ռյուշը կրակոտ շրջվեց։

— Է, իսկ մենք, —հարցրեց Մարկը։

— Իսկ մե՞նք։ Իսկապես որ... Ինչքա՜ն լավ է, որ մենք սիրեկաններ չենք... Եվ, խնդրում եմ, առանց քաղաքավարի ծամածռությունների։

— Քաղաքավարությունն ի՞նչ գործ ունի այստեղ։

— Իհարկե, ստախոսի մեկը... Կրկնիր հետևիցս. «Ինչքա՜ն լավ է...»։

Մարկը նրան պարզեց երկու ձեռքերը։ Ռյուշը բռնեց դրանք։

— Ինչքա՜ն լավ է, որ դու դու ես, իսկ ես ես եմ, և որ մենք իրար ձեռք ենք բռնել։

Եվ—շարաճճիորեն.

— Մենք իրար ոտք արդեն բռնել ենք։

— Դու իմ վրայով ես անցել, ես՝ քո վրայով։ Եթե մենք ոչ բարեկամներ ենք և ոչ էլ սիրեկաններ, Ռյուշ, ապա ի՞նչ ենք իրար համար։

— Մենք իրար համար ամուր հող ենք։ Մեզ ճահիճը ներս էր ծծում, բայց մենք դուրս քաշեցինք մեր ոտքերը և նորից հաստատուն հողի վրա ենք գտնվում։ Հիմա կարելի

է ճամփան շարունակել։ Գնալուց առաջ— մի անգամը հաշիվ չէ—կարելի է նաև համբուրվել։

Եվ նրանք երեխայի նման շլմփոցով համբուրեցին իրար։

— Բայց դու դեռ կգա՞ս,— հարցրեց Մարկը։

— Բա ո՞նց։ Քրջոտ։ Չէ՞ որ քո ամբողջ քրջերն ինձ մոտ են... Եվ հետո այսօր ոչ մի բանի մասին չհասցրինք խոսել։ Վաղը կխոսենք։

Բայց վաղը վիճակված չէր խոսել։ Մարկն աշխատանքի տեղն ուշացավ։ Երբ նա տուն եկավ, Ռյուշն այլևս չկար։ Նա գտավ միայն խնամքով դարսված սպիտակեղենը, իսկ սեղանին մի զույգ գուլպա կար երկու ի ցույց դրված ծակերով, որոնց մեջ ամենաքիչը վեց մատ կարելի էր խրել։ Դա մի լպիրշ այցետոմս էր, որն ասում էր. «Վաղը կտեսնվենք»։

Նրանք տեսնվեցին։ Շաբաթ օր էր։ Օրվա ամբողջ երկրորդ կեսը խոսակցության համար նրանց տրամադրության տակ էր։ Ռյուշը նստել էր մահճակալի վրա։ Մարկը հեծել էր աթոռին։ Նրանք, մոռանալով ծխել, սիգարետով այրում էին իրենց մատները։ Մտերիմ մթնոլորտն ստեղծվել էր ինքն իրեն։ Ռյուշն ազատվում էր իր գաղտնիքներից։ Նրա բոլոր այդ սիրեկանները դատարկ բաներ էին։ Նա ոչ ոք չուներ, բացի մեկից, որին դարանակալում էր այն գիշեր։ Ռյուշը ծիծաղում էր իր վրա և ջինծու ցինիզմով խոստովանում, որ թեև Փարիզում իրեն միանգամայն ազատ էր պահում և հաճախ էր իր մեղքով ընկել վտանգավոր դրության մեջ, բայց և այնպես չի կարողացել վճռական քայլ անել. ֆիզիկական ցզվանքի նման մի բան վերջին րոպեին ետ է պահել նրան։

— Ի միջի այլոց,— ասում էր Ռյուշը,— ես առողջ և ամբողջական խառնվածք ունեցող մարդ եմ, ես պահանջներ ունեմ, և չեմ վախենում այդ պահանջները բավարարելուց։ Դրանում ես համոզվեցի, երբ այն ապուշի հետ էի... Բայց ինչու պետք է այնպես լիներ, որ դա կատարվեր հենց նրա, այդ անատունի, այդ ձիու հետ (ես ինչպես կուզեի ճիպոտը խարդել նրա մեջքին...), և ոչ թե մի ուրիշի, որն իմ սրտով է... օրինակ, քեզ հետ...

Մարկը չէր ընդհատում նրան։ Հետո ասաց.

— Փաստորեն դու ազնիվ ֆրանսուհի ես, իսկ քեզ ստիպում ես խաղալ մի դեր, որի համար դու ընտելացած չես։ Եվ այդ բոլորը համառությամբ պատճառով, ի հեճուկս քո ծերունիների։ Իսկ քո տեղը ավելի շուտ նրանց կողքին է, գավառում։ (Ոյուշն սկսեց բողոք բարձրացնել)։ Դու նրա համար չես ստեղծված, որ ատրճանակը ձեռքիդ գիշերները սիրեկանների դարանակալես։ Դու պետք է լավ ամուսին ունենաս, մեկին՝ ամբողջ կյանքիդ ընթացքում, և բարեխղճորեն նրա հետ երեխաներ շինես, մի ամբողջ բազմություն... Ես նույնիսկ պատկերացնում եմ, թե ինչպես ես դու նրանց կուրծք տալիս...

— Իսկ ես կուրծք չունեմ։ Ձեռք տուր, տես։

— Ոչինչ, փոքրիկ կովերը ամենալավ կաթն են տալիս։

— Ես նույնիսկ կով չեմ։ Պարզապես դաշտում վազվզող լղար այծ եմ։ Եվ դու երևակայում ես, նա թույլ կտա, որ իրեն ցանկապատի՞ն կապեն ամբողջ կյանքի ընթացքում։

— Եթե դու ցանկություն ունենաս, մտովի կարող ես մնալ նույն այծը և թռչկոտել, կծել ու խոտ պոճոկել ուրիշի ցանկապատի մոտ։ Մտովի դու տատն անգամ կխաբես ամուսնուդ։ Աստվա՞ծ իմ, ես նույնիսկ դժբախտություն չեմ տեսնում այն բանում, եթե դու իսկապես էլ մի երկու-երեք անգամ նրան կոտոշներ դնես։ Մի երկու-երեք անգամը ամբողջ կյանքում—դատարկ բան է...

— Ես կուզեի քեզ տեսնել այդպիսի ամուսնու դերում, ավազակ։

— Ո՛չ, ոչ, խոսքն իմ մասին չէ։

— Բայց ասա ինձ, Մարկ, ասա անկեղծորեն. այն օրից, ինչ մենք իրար ճանաչում ենք, դու երբեք այդ մասին չե՞ս մտածել։

— Ինչի՞ մասին։

— Այն մասին, որ ես քեզ կոտոշներ եմ դրել։

— Ոչ, իսկապես որ չէ։ Իսկ դու մտածե՞լ ես։

— Այ հենց հիմա փորձում եմ... Եվ չեմ կարողանում։

— Մենք ստեղծված չենք մի լծվածքում գնալու համար։

— Բայց և այնպես մենք այնքա՞ն լավ ենք հասկանում միմյանց։ Դու միակ մարդն ես, որը կարողանում է թափանցել

իմ էությանս մեջ, իսկ ես էլ՝ քո... Հենց ամբողջ բանը դրանում է։ Միանում են միայն նրանք, ովքեր իրարից ոչինչ չգիտեն։

— Իրար տրվելու համար գիշեր է պետք։

— Դու այդ գիշերը կունենաս, դու ինքդ ես քեզ համար գիշեր ստեղծում։ Ես համոզված եմ, որ դու այնպիսի կնոջ ցանց կընկնես, որը քեզ ավելի շատ վնաս կտա, քան ուրիշ որևէ մեկը։ Դու չես ուզի ամբողջական, հանգիստ կնոջ որին կարելի է վստահել։ Քեզ համար դա շատ պարզ կլիներ։

— Թերևս դու իրավացի ես։

— Մեզանից յուրաքանչյուրը մյուսի ճակատագիրն ավելի լավ գիտի, գիտի, թե մյուսը հատկապես ինչ պետք է անի իր բարօրության համար։ Իսկ այդ մյուսն, իհարկե, ոչինչ չի անի։

— Կնշանակի, համաձայնվիր, ես այնքան էլ վատ չեմ հասկացել, դու ի՞նչ պետք է լինեիր և ի՞նչ դարձար։

— Ինչ չդարձա։ Այո, դու դա ճիշտ ասացիր. կյանքը, որ ես վարում եմ Փարիզում, սպանում է ինձ։ Ես Ռյուշն եմ, ես փեթակ եմ, ինձ գորշ երկինք է հարկավոր իմ Լուարայի վերևում։ Իսկ այդ հսկայական մրջնանոցները, նրանց թունոտ սունկերը, նրանց թունավորված մտքերը— այդ բոլորը լցնում է ինձ զզվանքով ու տարտափով։ Ես կուզեի այդ բոլորն այրել։ Գազեր բաց կթողնեի— և այդ նողկանքը կատարելապես կոչնչանար։

— Որ այդպես է, գնա՛։ Գնա՛։ Վերադարձիր քո դաշտերը։

— Չեմ կարող։

— Ինչո՞ւ։

— Մերուկի պատճառով։ Հիմա դա ինքնասիրության հարց է։

— Դու կարծում ես, նրա համար քի՞չ է այն դասը, որը քեզնից է ստացել։ Կարծում ես նրա խելքը տեղը չի՞ եկել։

— Օ, ես արդեն նրանից չեմ վախենում։ Նա հիվանդ է։ Իրեն հնազանդ կպահեր։ Նա միայն մի բանից կվախենար— չլինի թե հանկարծ ես գնամ։

— Այդ դեպքում էլ ի՞նչն է խանգարում։

— Նա պետք է առաջին քայլն անի։

— Որպեսզի նա՞ քեզանից ներողություն խնդրի։

— Որպեսզի նա մեկնի երկու մատը։

— Իսկ եթե նա այդ չանի, ուրեմն, դո՞ւ էլ տեղիցդ չես շարժվելու։

— Ոչ, իհարկե, ոչ։

— Էշի գլուխ։

— Այծի գլուխ...

Մարկը նորից սկսեց նրան խրատել։ Ռյուշը լուռ լսում էր և համարում էր in petto, որ նա իրավացի է։ Բայց աղջիկը հաստատ որոշել էր իր սխալը չընդունել։

Որպեսզի խոսակցության նյութը փոխի (թեև Ռյուշը դեռ փորձում էր որսալ նրա մտքերի ընթացքը), նա խոսք բացեց Բետի մասին։ Վերջինիս հղիությունը քիչ էր մնացել ողբերգությամբ ավարտվի։ Խելագար քաղքենին զուր էր փորձում ամեն ինչ ժխտել։ Հղիությունը նկատելի էր, ինչպես քիթը դեմքի վրա, իսկ նա ոչ կարողացել էր հաշտվել դրա հետ, ոչ ազատվել դրանից։ Բայց այդտեղ օգնեց դրժբախտությունը. նա տանդուղքից ցած ընկավ, և դա նրան ազատեց։ Սակայն նա քիչ էր մնացել կյանքով հատուցեր դրա համար.

— Իսկ ո՞վ է այդ սրիկան,— հարցրեց Մարկը։

— Բետն ինքն էլ դա չգիտի։ Նա բարի, թույլ, պարզ և հիմար աղջիկ է,— նրանք էլ ոնց ուզել, այնպես էլ հետը վարվել են։

— Ո՞վ։

— Բոլորը։ Վերոնը, Սիմոնը, Շեալիեն, ամբողջ խումբը։ Բացի քեզանից։

— Իմ խե՜ղճ Ռյուշ։ Ես հասկանում եմ քո ատելությունը։

— Ոչ, ատելը սխալ է։ Պետք է իմանալ, որ ջունգլիներում միայն մի օրենք է թագավորում. ուրիշներից ուժեղ լինել։ Վայ նրան, ով թույլ տա իրեն խաբեն։

— Հո չի կարելի միշտ պաշտպանվել։

— Այդ դեպքում հարձակվիր։ Ուրիշ ընտրություն չկա։

— Իսկ ե՛ս ու դու՝ ի՞նչ, Ռյուշ։

Ռյուշը նրա առաջ չոքեց և այտով սեղմվեց Մարկի ձեռքին.

— Խաղաղություն աստծո։

Մարկը փաղաքշանքով շոյեց նրա գլուխը։

— Ինչ արած, պետք է դա օգտագործել։ Փախիր, Ռյուշ։ Փախիր ջունգլիներից։ Թե չէ ոսկորներդ այստեղ կթողնես, սպիտակ ոսկորիկներդ։ Բայց ափսոս։ Դու շատ ավելի թանկ արժես, քան կարծում ես։ Դու անընդհատ աշխատում ես ինձ հակառակն համոզել։ Բայց ես քեզ չեմ հավատում...

Ռյուշը համբուրեց Մարկի ափերը։

— Բայց այս ի՞նչ է տեղի ունենում մեր բոլորի հետ։ Մենք կարծես բոլորս էլ խելագարվել ենք...

— Ամեն ինչ խառնվել է։ Պատերազմն է, պատերազմներն են մեր ժամանակի վայրենությունը։ Նրանք ավերել են բոլոր հին բները։ Ահա թե ինչու են մրջյունները խելագարվել։ Բայց դու կարող ես նորից քեզ համար բույն շինել։ Դա ամենաճիշտ բանն է։ Ես համոզված եմ, որ դու այդ բնում չես նստի։ Բայց բույն քեզ պետք է։ Որպեսզի նորից շինել, պետք է սկսել սկզբից։ Շինիր քո բշիջը, քո խորիսխները, իսկ հետո նաև քո փեթակը։

Ռյուշը ելավ, հառաչեց, ուղղեց մազերը, սուլեց, ճմկոտաց և ասաց.

— Տեր Մարկ, հարկ էր, որ դու քարոզիչ լիներիր...

Նա քրքջաց Մարկի երեսին, քաշեց նրա քիթը և գնաց...

Ռյուշն այդպես ոչինչ էլ չկառուցեց, միայն զուր կորցրեց ժամանակը։ Մի օր նա նորից հայտնվեց։ Նրա ձեռքին սպիտակ ձեռնոցներ էին։

— Ներողություն մեռավ։ Դու իրավացի էիր։ Ես անչափ երկար սպասեցի։ Հիմա գնում եմ։ Շատ ուշ է...

Ռյուշը խոսում էր հանգիստ։ Եվ այնուամենայնիվ նրա տոնի մեջ զղջումի թախիծ ու դառնություն էր զգացվում։

— Անցածը չես վերադարձնի,— ասաց Մարկը, սեղմելով նրա ձեռքը։— Նայիր առջևդ, իմ սիրելի Ռյուշ։

— Այո՛։ Էհ, ինչ կա որ, քո Ռյուշը փեթակ կշինի։ Կփորձի այդ... Ես քեզ համար եմ անհանգստանում, տղաս, չէ՞ որ դու մնում ես... Գոնե ինձ խոստացիր, որ երբևէ դու այցելություն կգաս։

— Ո՞ւմ։
— Իմ փեթակին։ Ինձ։ Իմ ընտանիքին։ Իմ տուն։
— Խոստանում եմ, Ռյուշ։ Մեղր շինիր։
Նրանք ամուր գրկախառնվեցին։

Մարկը նորից էր գցված մի տակառի մեջ, որտեղ անընդմեջ խմորում էր տեղի ունենում։ Այդ ժամանակը նրա երիտասարդական կատաղության շրջան էր, երբ «արցունքների փոթորիկում ուզում է թափվել լցված սիրտը, բայց դրանով նա է՛լ ավելի է լցվում ամպրոպներով, և ամեն ինչ քո մեջ զրնգում է, դողում, թրթռում...»։ Մարկը հազորդակցվում էր այն տարերային ուժերին, որոնց մասին իր «Թափառաշրջիկի երգը փոթորիկի ժամանակ[1]» բանաստեղծության մեջ բացականչում էր երիտասարդ, մազերը հողմերին տված, ֆրանկֆուրտյան Պրոմեթևսը։ Ավա՜ղ, Մարկը օժտված չէր նրա հիանալի բանաստեղծական շնորհքով։ Էլ ավելի քիչ նա ուներ երիտասարդ հարուստ բուրժուայի նրա առավելությունները, որին ծանոթ է միայն հոգևոր քաղցը, բայց չի պատկերացնում, թե ինչ բան է դատարկ ստամոքսը, մի կտոր հացի համար կատարվող հյուծող աշխատանքը։ Մարկն զգում էր, որ նա լցված է իլլուստացող ուժով, նա զգում էր իր միախառնվելը բնության հետ, որ միասնական է իր բարության և չարության մեջ.

Քանի որ դու կյանքում չես լքում, Հանճար,
Ոչ անձրևը, ոչ մրրիկը դժնի
Սիրտը սարսափով չեն պատի նրա։
Ում որ դու կյանքում չես լքում, Հանճար,
Նա անձրևաբեր թթխպերի դեմ մութ,
Նա կարկուտի խենթ փոթորկի առաջ
Երգն իր կերգի,
Ինչպես արտույտը,
Ինչպես դու—վերում,
Ում որ դու կյանքում չես լքում, Հանճար։

1 Գյոթեի բանաստեղծությունը։

Հանճար—դեռ չէր լքել նրան... Նա կատաղի թափահարում էր թևերը։ Բայց (բավական է ստեք, պոետներ) արտույտը ճախրում և երգում է փարթամությամբ լոկ այն պատճառով, որ հարթել է ներքևում գողացած հատիկներից։ Դու, Պրոմեթևս Մայնի ափերից, դու երբեք դրանց կարիքը չես ունեցել։ Բայց Մարկին, ինչպես Փարիզի ճնճղուկներին, վիճակված էր իր հատիկները փնտրել ձիու թրիքի մեջ։ (Ասենք, այդ թրիքն էլ է գնալով դառնում ավելի ու ավելի հազվադեպ. քաղաքից ավտոմոբիլի բենզինի հոտ է գալիս)։

Մարկն անխելամիտ կերպով իրեն վատնում էր, նա այրում էր իրեն, նրա երիտասարդ օրգանիզմը ոչ պահանջված չափ սնունդ էր ստանում, ոչ անհրաժեշտ հանգիստ։ Մեծ դժվարությամբ նրան հաջողվեց գտնել ռադիոընդունիչների վաճառքի և տեղադրման գծով գործակալի ժամանավոր, վատ վճարվող և ձանձրալի պաշտոնը։ (Ինչպես նրա հասակի բոլոր երիտասարդները, նույնիսկ տեխնիկական գիտությունների համար ամենաքիչ ընդունակները, նա տարբեր մեխանիզմներից վատ չէր գլուխ հանում։ Եվ այսպես, Մարկն ընկավ այն մարդկանց թվի մեջ, ովքեր նոր մարդկությանը սնելու համար հոգևոր ապուր պատրաստող մեքենան են պտտում։ Այդ մեքենան մարդու գլուխ ցցնում է մի խառնուրդով, որը բաղկացած է աղմուկից, երաժշտական ձայներից, ֆշշոցից, ճռռոցից, բզզոցից, էլեկտրական պարպումներից, ականջի թմբկաթաղանթ պայթեցնող սուլոցից,—բոլոր այդ բաբելոնական խառնաշփոթությունից։ Քարոզները, դեղագործների և տրիբունների ռեկլամները, խեղկատակային և քաղաքական մուշտարի կանչողների տոնավաճառային բացականչությունները, ջազը և եկեղեցական երգեցողությունը, մոդայիկ պարերն ու սիմֆոնիաները—այդ բոլորը դիզվում է մեկը մյուսի վրա, երկու, երեք, հինգ հարկ, կորնետ-ա-պիստոնների և եղջյուրների պարադը («Ախ, ինչքա՞ն եմ ես սիրում զինվորականներին») Բեթհովենի Իններորդ սիմֆոնիայի կողքին, նախընտրական կամպանիան Դեբյուսսիի եղանակով և հզոր կոկորդը տուլուզացի կոմիվոյաժորի, որն իր vocifero[1]-ով մրցում է որևէ

[1] Բարձրաձայնությամբ (իտ.)։

միլանյան տենորի հետ... Դա տարբեր երկարության ալիքների վրա հնչող բանդագուշանք էր։ Այդ մեքենան Եվրոպայի քարտեզը դարձրել էր գլուխկոտրուկ. բոլոր լեզուները և բոլոր ռասսաները լցված են իրար վրա, խառնված են և գրանակված ու դարձրած մի ընդհանուր խառնուրդ, և դրան անուն կարելի է գտնել միայն Կապառնաումում։ Բայց պետք է նաև մտածել (չկա չարիք առանց բարիքի) աղքատ, ծեր, լքյալ, տանը գամված Շուլթերի հալյուցինացիաների հասնող էքստազի մասին, երբ աշխարհի անտահմանությունից դեպի նրանց մահճակալները թռչում աստվածային բանբերները...

Մարկն ատիպված էր լինում ամբողջ օրն զբաղվել այդ էոլյան տկճորներով։ Աշխատանքից հետո նա հոգնածությունից, ականջներում հնչող աղմուկից սկսում էր ջերմել։ Թվում էր, երիտասարդ Զիգֆրիդի նրա լսողության համար լսելի էին դառնում անտառի բոլոր ցնցումները։ Բայց դրանք Զիլի ափերին գտնվող այն գեղեցիկ թարմ անտառները չէին, որտեղ հանգստանում էր Վագների մարգարեական ականջը։ Մարկը լսում էր բեռնատար մեքենայի ձայնը, որը երկաթե քառակող սյուներ էր տանում, ծանր տրամվայների տակ շարժվող ռելսերի թխթխկոցը, ամեն բան, ինչ նրան շրջապատում էր, ամեն բան, ինչի նա հպվում էր, այդ բոլորը ձայներ էին արձակում, նույնիսկ այն թերթը, որ նա ճմռթում էր իր մատներով։ Նա տեղից թռչում էր, երբ զնգզնգում էին ապակիները։ Անգամ օդը աղմուկով էր լցնում նրա ականջները... Նա կորցրեց հանգիստը... Եվ չկա այնպիսի մի անկյուն, որտեղ կարելի լիներ տուզվել անէության մեջ... Ահա այդ հենց նրանք են, երկնքի այն ձայները, որ խոստանում էին մեզ երաժշտությունից այնքան քիչ բան հասկացող Հունաստանի և Հռոմի մեծ ստախոսները, որոնց ականջները բուրդ էր խրած (նրանք ոչինչ չէին լսում)։ Ողորմա՞ծ ատված։ Ո՞վ մեզ կվերադարձնի անտորը, առանց աղմուկի մահը, հանգիստ գերեզմանը։

Ի լրումն այդ ամենի, Մարկը նաև տարվել էր եթերով— նրան սովորեցրել էր մի անձնավորություն— և դա վերջնականապես խախտեց նրա առողջությունը։ Նա ջղաձգություններ էր ունենում և մղձավանջներ։ Նրա սրված գիտակցությունը խախ-

մրվում էր, նա կորցնում էր իր հենակետը, նա կորցնում էր իր «եսը», նորից էր կտոր-կտոր գտնում այդ եսը, և դրանք նրա առաջ սլանում էին գլխապտույտ մրրիկում։ Ասենք, դա եվրոպական գիտակցության ընդհանուր հիվանդություն էր, —պատերազմական տարիների անսահման, անզուսպ և անպտուղ լարվածության հետևանքը,— և մտավորականները կատարելագործում էին այդ, ինչպես կատարելագործում են գիտակցության բոլոր հիվանդությունները։ (Եվ արդյո՞ք հիվանդություն չի համարվում հենց ինքը գիտակցությունը)։ Այդ հիվանդությունը հանդիպում էր ամենուրեք—Հյուսիսային ծովերից մինչև Աֆրիկայի ծովերը, Ջոյսի մոտ, Պրուստի մոտ, Պիրանդելլոյի մոտ, բոլորի մոտ, ովքեր կարողանում են դուրսով նվագել և ստիպում են քաղքենի ազնվականներին, մտավորական-դուրսպրծոսկներին պարել իրենց դուդուկի տակ։ Զարմանալին այն չէր, որ նրանք հիվանդանում էին այդ հիվանդությամբ, այլ այն, որ մտածողության պրոֆեսիոնալները, պրոֆեսորներն ու քննադատները, սահմանափակվում էին նրանով, որ արձանագրում էին նրա հայտնվելու բուն փաստը։ Ցույց տալու համար, որ իրե՞նք էլ չեն ետ ընկել դարից, նրանք նույնիսկ սկսեցին խնկարկել այդ հիվանդությունը, չնայած պարտավոր էին կռվել նրա դեմ, պարտավոր էին փրկել եվրոպական մտածողության առողջությունը,— հենց դրանում էլ նրանց գոյության ամբողջ իմաստն էր։ Մարկին այնքան էլ չէին հմայում ոչ թավշե աչքերով ֆրանսո-սեմիտական հերմաֆրոդիտի նևրասթենիկ անորիզմը, ոչ իռլանդացու անդամալուծական անամոթությունը։ Մարկի աչքում ավելի մեծ հմայք ուներ մի ուրիշ հիվանդություն. անհատականության քայքայումը, ինչպես որ այդ ցույց է տրված հալյուցինացիաների ենթակա սիցիլիացի Պիրանդելլոյի մոտ։ Պիրանդելլոյի մոտ այդ պրոցեսն ուղեկցվում է հզոր պայթյուններով, որոնք քայքայում են առաջացնում և միախառնվում նրա հետ։ Մարկին դա իր ոգով ավելի մոտ էր։ Բայց եթե նման զառանցանքը վտանգավոր չէ գրողի համար, որը կարող է դրանից ազատվել,— հատկապես եթե գրողը հասունացած է,— ապա երիտասարդի համար, որը դեռ նոր է

ձևավորվել, ապրում է մշտական տենդի մեջ, աշխատանքից հյուծված լինելու, վատ սնունդի և հոգեկան տառապանքների պատճառով թույլ առողջության տեր է, այդ զառանցանքն իր մեջ մահացու վտանգ է թաքցնում։

Անվեհեր պատանին կռվում էր ամբողջ ուժով, առանց զիջություն հայցելու, օգնություն չխնդրելով։ Շունչը կտրվելով, բռունցքները սեղմած, անդունդի վրա կախվելով, նա տեսնում էր գերեզմանի խորքում պառկած աշխարհի սարսափելի քայքայումը։ Նա զգում էր նեխման հոտը, որ տարածում էր քաղաքակրթության դիակը։ Սրբազան սարսափից ու շնչահեղձությունից նա քիչ էր մնացել ընկնի այդ գերեզմանի մեջ։ Նրան ցնցեցին հզոր պայթյունները, և կույր ու բոցավառ հավատով նա սպասում էր, երբ քայքայվող դիակի բերանից կաճի ուղիղ ու կանաչ մի ցողուն, որն իր մեջ նոր կյանքի, եկող նոր աշխարհի հատիկներն է կրում։ Իսկ՝ այդ աշխարհն անպայման կգա։ Նա պետք է գա...

«Ես իմ որովայնում զգում եմ նրա այրոցը։ Կամ ես կմեռնեմ, կամ նրան կյանք կտամ։ Նույնիսկ եթե ես մեռնեմ էլ, միևնույն է նրան կյանք կտամ։ Նա կստեղծվի և կսկսի բխել, ինչպես աղբյուրը... Նա հենց ես եմ, կենդանի թե մեռած, նյութի հեղեղ, վերածնված հոգու հեղեղ, հավիտենական Վերածնունդ...»։

Փոքրիկ հյուրանոցը Լատինական թաղամասում ապրում էր, ինչպես տենդի մեջ։ Գիշերները՝ հյուրանոցը լցվում էր ճանճի բզզոցով։ Տանն ամեն ինչ լսելի էր, վերևից մինչև ներքև. ինչպես են շփշփում դռները, ինչպես են ճռճռում հատակներն ու մահճակալները, ինչպես են հիմար-հիմար քրքջում հարբած աղջիկները, ինչպես են կռվում ու համբուրվում ներքնակների վրա։ Կարծես այդ ամենում ինքդ ես մասնակցում, և բոլորն՝ են, կարծես, մասնակցում քո փոխարեն։ Կարելի էր խեղդվել այդ բոլոր մարմինների քրտինքի մեջ։ Սավանների վրա չոր տեղ չկար։ Ամբողջ նախիրը դրանց վրա թավալ էր տվել...

Մարկին այդ հյուրանոցն էին քշել կարիքը, հոգնածությունը, զզվանքը։ Լինում են րոպեներ, երբ զզվանքն այն

աստիճանի սուր է, որ քեզ՝ ամբողջովին կլանում է։ Այդ ժամանակ արդեն չես նայում, թե ինչն է ավելի շատ հոտ արձակում, ինչն՝ ավելի քիչ. ամեն ինչից հոտ է գալիս... Մարկը սենյակ վարձեց այն անկյունում, որը սանդուղքից հեռու էր ընկած, միջանցքի նախավերջին սենյակն էր,— այնտեղ՝ քիչ աղմուկ էր հասնում, բայց օդ ու լույսը նույնպես քիչ էր։ Լուսամուտի ապակիները դեղնել էին։ Պատուհանը նայում էր փոքրիկ բակի կեղտոտ պատին, որտեղ արևի շող անգամ չէր ընկնում։ Սիրտ խառնող գարշահոտության մուտքը փակելու համար լուսամուտները համարյա երբեք բաց չէին անում... Միջանցքի վերջին սենյակը, որ Մարկինի կողքին էր, զբաղեցնում էր մի լռակյաց անձնավորություն։ Նա նույնպես օրերով տանը չէր լինում։ Գալիս էր շատ ուշ, փակվում էր ներսում, աշխատում էր, կարդում էր մինչև ուշ գիշեր և համարյա չէր քնում,— ինչպես Մարկը։ (Թերթիկի նման բարալիկ միջնորմի միջով Մարկը որսում էր նրա ամեն մի շարժումը)։ Այդ անձնավորությունը ոչ մի աղմուկ չէր հանում։ Մարկն այդպես էլ չէր իմանա, թե նա ինչ ձայն ունի, բայց վերջինս երազում խոսում էր, տնքում և նույնիսկ գոռգոռում։ Դա կանացի ձայն էր— թեթև, ընդհատուն, տարբեր տեսակի ողորմագին ու ցասումնալից ելևէջներով։ Սկզբնական շրջանում, երբ նրան արթնացրեց անհասկանալի լեզվով ասված խոսքերի հեղեղը, Մարկը կարծեց, թե նա մենակ չէ, և զայրացած պատը ծեծեց։ Այդ ժամանակ նա լռեց, և Մարկը լսում էր, թե նա ինչպես է դեռ երկար ժամանակ շուռումուռ գալիս անկողնում, նույնպես անքնությունից տառապելով։ Մարկը զղջաց իր կոպտության համար, քանի որ հիանալի գիտեր, թե ինչ է նշանակում աշխատավորի համար մի քանի ժամվա քունը, և չէր կարող խղճի խայթ չզգալ, որ ինքը խանգարեց ուրիշի քունը։ Նա պատկերացնում էր (և ոչ առանց հիմքի), թե ինչպես է այդ կինը, որի մենախոսությունը նա հենց նոր ընդհատեց, ջղաձիգ ճիգեր գործադրում, որպեսզի նորից չսկսի խոսել։ Եվ իսկապես էլ. օտարերկրուհուն վիրավորել էր կոպտորեն արթնացնելը, մթության մեջ նրա այտերը վառվում էին։ Ոչ թե այն պատճառով, որ նրա համար տհաճ էր հարևաններին անհանգստացնելը,— նա

կատարյալ արհամարհանք էր զգում իրեն շրջապատող ամեն ինչի նկատմամբ։ Ոչ, նա զայրանում էր այն բանի համար, որ քնի մեջ իրեն մատնեց։ Եվ մինչև առավոտ նա դիտավորյալ չքնեց։

Ժամանակի ընթացքում նրանք ընտելացան միմյանց։ Մարկը սարսռում էր իրեն լռությամբ հանդուրժել գիշերային խոսքերի այդ հեղեղները, և վերջ ի վերջո դրանք նույնիսկ իր համար դարձան հաճելի։ Ձայնը գեղեցիկ էր, խիստ, խլացնող, մերթ կոպիտ, մերթ թախծոտ։ Մարկի գումն սկսեց շարժվել։ Մի հոգի, ևս ուժերից վեր ծանրություն էր տանում։ Նա չգիտեր, որ իր հարևանուհու համար ինքը նույն կարգի երևույթ էր։ Հարևանուհին պատի հետևում նույնպես լսում էր, թե Մարկն ինչպես է քնի մեջ խոսում ու շուռումուռ գալիս։ Բայց նա Մարկին չէր արթնացնում, իսկ Մարկը, արթնանալով, արդեն ոչինչ չէր հիշում։ Տանը շատերն էին խոսում, քնի մեջ շուռումուռ էին գալիս և խռխռոցով ինչ-որ անհասկանալի խոսքեր դուրս ժայթքում։ Բոլոր այդ հոգնած մարմինները, որոնք եփվում էին մոռացության կաթսայում, ծանր էին մարսում իրենց այլասերված, խայտառակված, սրախողողված, ագահ և տանջահար հոգիները, ինչ-որ մեկին աղերսում էին խնայելու համար կամ հաչում էին երազում իրենց տեսած որսի վրա։

Մարկի օրգանիզմը հյուծված էր, և գիշերային զառանցանքը նրա մոտ խրոնիկ ձև ընդունեց։ Աղքատություն, թերասնում, կյանք անառողջ բնակարանում, հոգնեցուցիչ աշխատանք, տանջալից և անհագ ցանկություններ, իր ընդերքներում զգացվող ջերմություն և մաքերի մեջ եղած կրակ։ Մարկն անընդմեջ հուսահատ ճիգեր էր գործադրում, որպեսզի զսպի իր հոգեկան քաոսը, բայց դրանք անում էր անապատում, ամեն տեսակի մարդկային էակից հեռու։ Այդ զարհուրելի մենակությունը նրան հանձնում էր այրող տենդի իշխանությանը, և այդ տենդը նրա մարմնից ու նրա ուղեղից ծծում էր բոլոր հյութերը։ Մարկը մոռացավ, ինչպես են քնում։ Նա սկսեց չարաշահել նարկոտիկները։ Եվ հիմա հենց որ սուզվում էր քնի մեջ, սկսում էր զառանցանքը։ Գիտակցության առկայծումի րոպեներին Մարկը տեսնում էր, որ ինքը ցած է գլորվում, և ամբողջ ուժով աշխա-

տում էր դուրս պրծնել։ Նա արթնանում էր իրեն կորցրած, մահու չափ հոգնած, սիրտ խառնելու զգացումով, հետապնդվելով լսողության հալյուցինացիաներից։ Ամեն ինչ նրա շուրջն աղմկում էր, աղմկում էին ամենաանչնչան առարկաները՝ հենց որ Մարկը հպվում էր նրանց,— մահճակալի երկաթե ձողերը, լուսամուտը, բարձը։ Նրա տենդագին կերպով լարված լսողությունը որսում էր օդի հազիվ լսելի տատանումները և անսահմանորեն դրանք ուժեղացնում։ Մարկը տագնապով ինքն իրեն ասում էր. «Ես խելագարվում եմ»։ Նա մի քանի գիշեր իրար հետևից պայքարում էր, իսկ ցերեկը, երբ ջերմությունն ընկնում էր, թուլացած և կատարելապես ուժասպառ մնում էր մարտադաշտում ընկած։ Մարկը նաև այդ գիշերը չէր հանձնվում։ Նա տեղից ցատկեց ու բացականչեց. «Ոչ»։ Նա եղունգներով էր պոկում թշնամուն իր քունքերից ու ծոծրակից...

Դուռը բացվեց։ Մարկին հպվեցին կանացի ձեռքեր։ Սկզբում նա զարմացավ, հետո ջղայնացած թափ տվեց իրեն։ Բայց կինը նրա ձեռքերն այնպես էր բռնել, կարծես դրանք մամլակի մեջ լինեին։ Մարկը կատաղեց։ Նա կռացավ և կծեց այդ կնոջը։ Մարկի ատամները խրվեցին կնոջ ձեռքի մեջ, բութ մատից փոքր-ինչ վեր։ Բայց մյուս ձեռքն ազատվեց և խփեց նրա կզակի տակին։ Մարկն ատամները թուլացրեց և, խլացած, ընկավ բարձին։ Նրա վրա խոնարհվեց երիտասարդ մի կին։ Ծունկը հենելով ներքնակի կողին, որպեսզի հավասարակշռությունը չկորցնի, այդ կինը ձեռքերով գրկեց նրա վիզը և երգաձայն ասաց.

— Հանգստացի՛ր, տղաս...

Կինը շեկ բծերով շագանակագույն աչքեր ուներ։ Մարկը հիպնոսված նման սևեռվել ու նայում էր այդ շեկ բծերին։ Հետո նրա թափառող հայացքն ընկավ այն ձեռքի վրա, որն իր դեմքի կողքին էր։ Ձեռքն այդ փոքրիկ էր, մկանուտ. ոսկեգույն-թուխ մաշկի վրա, ցուցամատից մի քիչ վերև սպիի մի գունատ շերտ կար։ Մարկի բորբոքված հոտառությունը ագահությամբ ու զզվանքով որսում էր այդ մաշկի ծծմբային հոտը։ Մարկը վերջին ճիգը գործադրեց՝ դուրս պրծնելու համար, և ամբողջովին պրկվեց, բայց կինը նրան ամուր էր բռնել։ Նրա դեմքը լցվել էր արյունով, նա

գացեց բերանը և, ինչպես ավազին ընկած ձուկ, որոշ ժամանակ օդ էր որսում, հուսահատությամբ և աղերսանքով լեցուն հայացքը գցելով շեկ կայծերին։ Հետո գիտակցությունը կորցրեց։

Մարկը պառկած էր տակլոր, տակնուվրա եղած կեղտոտ անկողնու լայնքին, նրա ոտի մեկը կախվել էր հատակին։

Անհրավեր հյուրը ձեռքերը խրեց Մարկի ծնկների և նիհար գոտկատեղի տակ և, անօգնական երիտասարդ մարմինը դնելով կեղտոտ սավանների վրա, զննեց նրան և շոշափեց ճակատը։ Հետո գնաց իր սենյակը, բարձ բերեց՝ Մարկի գլխատակը դնելու համար, և մնաց նրա կողքին։

Միջահասակ, ավելի շուտ կարճահասակ այդ կինը տեսքից թույլ էր երևում, սակայն այդ տպավորությունը խաբուսիկ էր։ Նիհար, բայց ամուր կազմվածքով, ուժեղ մարմին ուներ։ Կուրծքը տափակ էր, ազդրերը լայն, ձեռքերը՝ մկանուտ։ Նրա դեմքը գունատ էր, լայն, կլոր և այտոսկրոտ, իսկ արտահայտությունը նման էր մի կատվի արտահայտության, որը երբեք ձեռնատուն չի դառնա։ Աչքերը վճիտ էին— նրանք վճիտ էին մնում նույնիսկ այն ժամանակ, երբ ինքը հոգեկան խառնվք էր ապրում. այդ աչքերում կայծքար կար։ Թեթևակիորեն ուռած ներքին շրթունքով ուժեղ կամք արտահայտող բերանը մոայլ մի ծալք ուներ (նա այդ շրթունքը կրծոտելու սովորություն ուներ) և այդ ծալքում դառնագին հիշողությունների մի ստվեր կար ու մի անողոքություն։ Այդ կնոջից հրապուրող, տագնապող և կապող մի ուժ էր ժայթքում։ Այդ ուժին առանձնապես վստահել չէր կարելի։ Նա անկման շրջաններ էր ունենում։ (Դա փոփոխական խառնվածքի տեր կին էր...)։

Այդ կինը ռուս վտարանդի էր։ Երկու տարի առաջ, երբ ճակատագիրը նրան Փարիզ էր նետել, նա քսան տարեկան էր։ Հեղափոխության սկզբում-լրացել էր նրա տասնվեց տարին։ Տասնյոթ և քսան տարիների միջև նա քսան կյանք էր ապրել, իսկ ինչքա՞ն մահեր։ Նրան քշել էին քաղաքացիական պատերազմի ալիքները։ Տասնութ տարեկանում նա արդեն մայր էր դարձել։ Ուկրաինայում, Մախնոյի բանդայի Եկատերինոսլավի վրա կատարած հարձակման ժամանակ,

նրա երեխային, նրա փոքրիկ տղային, սպանել էին իր կրծքի վրա։ Տանինը՝ տարեկանում նա Վրանգելի նահանջող բանակի հետ ընկել էր Թուրքիա, որտեղ ճաշակել էր փախուստի բոլոր սարսափները, բոլոր դաժանություններն ու՝ ամբողջ խայտառակությունն այն առ ու ծախի, որը հյուրասեր Եվրոպան առաջարկում՝ էր մարդկային այդ նախիրներին. ռեակցիան սկզբում օգտագործեց նրանց, հրեց նրանց դեպի անդունդը, իսկ հետո լքեց։ Այդ կինը ճանաչեց ատելության հիստերիան, որն ուզում է վրեժ լուծել և իր հերթին՝ ստիպել, որ տառապեն։ Դաժանությունները նրա վրա սարսուռ էին ազդում, նա մոլուցքով էր բռնվում դրանք տեսնելիս և նողկանքով էր լցվում բոլոր նրանց նկատմամբ, ովքեր այդ կատարում էին, անկախ նրանից, դա թշնամին էր թե՝ իր սեփական բանակի մարդը։ Նա ճանաչեց ծայրահեղությունները, դեպի որոնք կնոջը մղում է տառապանքներից ու կրքի տենդից մաշված մարմինը։ Նա ճաշակեց իր աշխարհի և իր կործանված կյանքի նկատմամբ ունեցած նողկանքի ժամերը։ Նրան թվում էր, թե կյանքն այս ձևով շարունակելն անհնարին է։ Եվ, ինչն արդեն անհասկանալի էր,— ճանաչեց և լիակատար մոռացությունը այն բանի, ինչ տեսել՝ու տարել էր, և անողոք վերադարձը դեպի նախկինը։ Սարսափելի տարիները նրա համար անցան որպես գլուխ պատեցնող հորձանուտ, որից նրա գիտակցությունը գրեթե ոչինչ՝ չէր պահպանել։ Ցերեկը դատարկություն էր, մերկ տեղ։ Հատուցումը տեղի էր ունենում գիշերները։ Անցյալն ընդամենը երազ էր, հալյուցինացիա։ Նա տարակուսանքով իրենից մի կողմ էր շպրտում այդ անցյալը. «Այդ ո՞վ է...»։ Նա իր հետևում այնքա՜ն էր իրենից «ես»— եր թողել, մաշված, խայտառակված, խեղդված... Դրանց վրայով՝ քայլում էր նրա նոր «ես»-ը։ Ինչքան էլ ուզում է նա թքեր կյանքի վրա, այնուամենայնիվ կյանքը ապրում էր նրա մեջ և ուզում էր ապրել... Հիմա նա ամրակազմ՝ քսաներկու տարեկան կին էր։

Նրա հայրը Կազանի համալսարանի պրոֆեսոր էր, նա իրավունքի պատմության դասընթացն էր կարդում։ Դա խոշոր և պատկառելի ներկայացուցիչն էր հին ինտելիգեն-

ցիայի, որը Հեղափոխության համար ասիճան ծառայեց, բայց Հեղափոխությունը շուտով լոք տվեց նրա վրայով, ջարդեց և հրեց նրան ամենակատաղի ռեակցիային ընդառաջ։ Այդ ինտելիգենցիան դեսուդեն էր նետվում, ինչպես խելագարված կողմնացույցի սլաք, և մի քանի շաբաթվա ընթացքում Կերենսկու մոտից ցատկեց Դենիկինի մոտ, սոցիալիստ-հեղափոխականների մոտից անցավ ամոթալի համաձայնության սպիտակ հակահեղափոխության հետ։ Նա շունչ առնելու և խելքը գլուխը հավաքելու ժամանակ չուներ։ Փոթորիկը կուրացրել էր նրան, նա սարսափից ու կատաղությունից գլուխը կորցրել էր և հանկարծ զարմանքով տեսավ, որ գտնվում է այն մարդկանց միջև, ում մշտապես արհամարհում էր, ում նայում էր, ինչպես ներբաններին կպած ցեխի։ Նա իրեն խայտառակված զգաց, բայց արդեն ուշ էր, դուրս պրծնել նա այլևս չէր կարող,— նա զոդակցված էր արյունով, նույնիսկ նրա լեզուն էր կապված։ Ուրիշ ելք չէր մնում, բացի հատակն իջնելուց, որպեսզի մարդ այլևս ոչինչ չտեսնի և չլսի, որպեսզի մարդ մեռնի։ Ֆյոդոր Վոլկովի բախտը բերեց։ Նա մեռավ իր դժվարին ճանապարհի ամենասկզբում։ (Խաչ հանելը գոյություն ունի ոչ միայն արդարակյացների համար. Քրիստոսի կողքին խաչել էին նաև երկու մոլորյալների)։ Նրան բռնել էին փախուստի փորձ անելու պահին, նա թողեց, որ իրեն սպանեն, չարտաբերելով ոչ մի խոսք, ոչինչ չներելով ոչ բարեկամներին, ոչ թշնամիներին, ոչ իրեն, սեղմելով ատամները և աշխարհը նզովելով... Վերջապես գիշե՞ր...

Դեռ կրտսեր եղբայր էլ կար, մոտ տասնչորս-տասնհինգ տարեկան մի տղա։ Նա պաշտում էր Ասյային[1], նրա հետ քաժանում էր սիրո և ստեղծագործության մասին ունեցած երազանքները։ Շեփորի առաջին կանչով նա գրեթե անզեն գիմնազիստների խմբի հետ—նույնպիսի խելագարների, ինչպիսին ինքն էր,— գնաց բոլշևիկների հետ կռվելու։ Բոլոր այդ տղաները սպանվեցին։

Ասյան մենակ մնաց փախուստի ճանապարհներին։ Ամեն

---

1 Անաստասիային։ Ռ. Ռ.։

մի կանգառ նրա համար նշանավորվում էր տարապանքներով և խայտառակությամբ։ Մի անգամ չէր, որ Ասյային վիճակվել էր կրակել, և նա կյանքը վտանգի էր ենթարկում ամեն անգամ, երբ խելագար վազքը կանգ էր առնում։ Բայց ապրելու կատաղի ցանկությունը, որ բնորոշ է ամեն մի երիտասարդ էակի, տենդագին գրգռվածությունը, որը նա պահպանում է ուղեղում, նրա աչքերը պատում էին կարմիր շղարշով և խթանները մխրճում կողերը։ Նա այդ գիտեր։ Նա այդ ուզում էր։ Նա խեղդվում էր իր իսկ նկատմամբ ունեցած զզվանքից ու արհամարհանքից։ Եվ քանի որ որևէ բանով պետք էր սնվել ապրելու համար, նա սնվում էր արհամարհանքով։

Նրան հաջողվեց, վերջապես, հասնել մինչև Արևմուտքի ապաստարանը, մինչև ժայռերի միջև ընկած ավազոտ ափը—Փարիզը։ Այդ աղմկոտ ափում նավաբեկության մեղավորները կողոպտեցին տուժածների վերջին բեկորները։ Օվկիանի դուրս շպրտած ծովախեցգետինները ընկնում էին միևնույն զամբյուղի մեջ և լափում էին իրար։ Փարիզում Ասյան մի կողմ քաշվեց։ Հենց առաջին շփման ժամանակ վտարանդիների հետ, որոնք Հեղափոխության սկզբից այստեղ ճամբար էին դրել, Ասյան սառնություն զգաց և ամփոփվեց. նրանք իրեն ավելի շատ էին օտար, քան ինքն՝ օտարությունը։ Նրանք կապը կորցրին կյանքի հետ։ Նրանք ոչինչ արդեն չէին հասկանում։ Նրանք շարունակում էին ճամարտակել, վիճել, հրամայել, չնկատելով այն, որ իրենք մեռած են։ Նրանց հանդիպելիս Ասյան ամեն անգամ նողկանքով ետ էր քաշվում. «Նրանք մեռելներ են... մեռելներ... Ինչպե՞ս չեն նրանք այդ զգում»։ Բայց նրանք այդ զգում էին—և անհույս հուսաբեկության ջղաձգություններով մեջ թպրտում էին։ Նրանք ոռնում էին, նրանք աղերսում էին աստծուն, սատանային, թագավորին, մահին։ Նրանք ցանկանում էին իրենց մերձավորների մահը, իրենց թշնամիների մահը, ամբողջ մարդկության մահը։ Եթե Եվրոպան, եթե աշխարհը չի ուզում նրանց փրկել, թող Եվրոպան ու աշխարհը մեռնեն իրենց հետ միասին։ Արյունալի խելագարությունը համակել էր այդ ուղեղներին, որոնք սուզվել էին միստիկայի զառանցանքի և ալկոհոլի զառանցանքի մեջ...

Ասյան փախչում էր նրանցից, նա ատում էր նրանց շաղակրատանքները, նրանց մոլուցքը, նրանց դատարկությունը։ Ասյան ուտում էր այն ամենը, ինչ նրան հիշեցնում էր անցյալը, և փախչում էր։ Նա թաղվում էր մենակության մեջ, ինչպես անտակ ջրանցքում,— մեծ քաղաքում մենակությունը առանձնապես սարսափելի է։ Այդ քաղաքն ավելի չէր հասկանում ռուսներին, որոնց ապաստան էր տվել, քան ռուսները,— ասենք, ինքը նույնպես, —հասկանում էին այդ քաղաքին։ Նրանք ապրում էին այդ քաղաքում և արհամարհում էին նրան։ Ասյան ողջերից հեռու էր պահում իրեն։ Նա զգում էր, որ պատկանում է ջրասույզ եղած աշխարհին։

Բայց կործանվել նա չէր կարող։ Նա ստեղծված էր մի նյութից, որը քայքայման չէր ենթարկվում,— փոխվել կարող է միայն ձևը։ Ինչպես ստորջրյա թագավորության էակներն են հարմարվում ամեն տեսակի ճնշման, այդպես էլ Ասյան կարող էր առանց աչքերի տեսնել և շնչել առանց թոքերի։ Ոչ մի բան չէր կարող նրան ստիպել ժամանակից շուտ գնալ, չէր կարող ստիպել նույնիսկ նրա սեփական կամքը։

Երկու տարի Ասյան ապրեց համարյա լիակատար մենակության մեջ, առանց միջոցների, պատահական և անհասկանալի վաստակներով։ Լինում էին օրեր, երբ նա միայն խնձոր էր ուտում, բայց օրեր էին լինում, երբ ոչինչ էլ չէր ուտում. և կամ թե չէ, երբ, պատահած, նրա բախտը բերում էր որևէ բան վաստակել, նա մի թափով երիտասարդ էգ գայլի ագահությամբ ուտում էր այն բոլորը, ինչը կարող էր մոտ երեք օր բավարարել. նա կազակի ստամոքս ուներ—այդ ստամոքսը ձգում կամ թուլացնում են այն քանից ելնելով, թե արդյոք այն լցնելու որևէ բան կա՞, թե ոչ։ Կանոնավոր աշխատանքի Ասյան ընդունակ չէր։ Մի թափով նա կարող էր այնպիսի աշխատանք կատարել, որի համար մի քանի մարդ էր պահանջվում։ Ոչ մի աշխատանք նրան չէր վախեցնում. նա լվանում էր սրճարանի թքոտած հատակը, օրը տասնչորս ժամ շարունակ անց էր կացնում իր ճկուն պողպատյա ոտքերի վրա, երբ տնտեսվարուհի էր աշխատում մի տան կամ երբ ցրիչ էր աշխատում և

ճղճղված, թաց կոշիկներով Փարիզի մի ծայրից մյուսն էր վազում, քարշ տալով սրա կամ նրա գնումները, և փաթեթների թելերը մատները կտրում էին։ Պատահում էր, որ այդպիսի աշխատանքից հետո տուն գալով, Ասյան այլևս չէր պառկում քնելու. նա մինչև արևածագ կարդում էր, փոս ընկած աթոռին նստած, առանց շոր հանելու, որից շան հոտ էր գալիս։ Նա հանում-գցում էր միայն կոշիկները և իր ուռած ոտքերը դնում էր հատակի սառը սալաքարերին... Բայց լինում էր նաև այնպես, որ նա հանկարծ, առանց որևէ բացատրությունների, աշխատանքը թողնում էր ու ամբողջ օրն անցկացնում անկողնու մեջ, մեջքի վրա պառկած, ոտքերը իրար խաչած, ծնկները տնկած վերև, երազում էր և ոչ մի բանի մասին չէր մտածում կամ մտածում էր ամեն ինչի մասին, հոնքերը կիտելով ու սիգարետի մոխիրը թափ տալով ուղղակի սավանի վրա... Երբեմն նրան հանկարծ համակում էր մարդկային մյուս էակների հետ խառնվելու այրող պահանջը։ Նա առանց նպատակի ամբողջ գիշերներ թափառում էր, մտնում էր ուր պատահի, որտեղ աղմուկ կա,— գինետները, պարասրահները,— բայց ինչպես վայրիացած շուն, որն ամեն ինչ հոտոտում է, հայտնվում ու նորից անհետանում խավարի մեջ։ Նա զերծ էր ամեն տեսակի կոկետությունից,— միայն գույներն էին, որոնց նկատմամբ նա վայրենի փնոջ մոլություն ուներ։ Տղամարդու մեջ դա երբեք ծաղրանքի ժպիտ չէր առաջացնի։ Նրա դեմքի արտահայտությունը, նրա շարժումները—ամեն ինչ յուրատեսակ էր։ Նրա հայտնվելը երբեք աննկատ չէր մնում։ Մյուս կանայք ուռում էին, համարում էին, որ նա գեղեցիկ չէ, մանրամասը քննադատության էին ենթարկում նրան։ Ոչինչ չէր օգնում։ Նրանք գիտեին, չկար մի տղամարդ, որ չցնցվեր նրա հայտնվելիս, և համբերությունները կորցնում էին։ Եթե նա ուզենար, կարող էր ապրել՝ իրեն վաճառելով։ Չէ՞ որ ոչ մի նախապաշարմունք չէր զսպում այդ նիհար, տաք, քաղցած մարմնին, որին կյանքն արդեն, թվում էր, ոչ մի բան այլևս տվորեցնել չէր կարող։ Բայց ոչ մի անգամ նա այդ մարմինը վաճառքի չհանեց։ Ասենք; առանց փողի նույնպես նա մարմինը ոչ ոքի չէր տալիս։ Անցյալի նկատմամբ ունեցած համր սարսափը և

վայրի զայրույթն այն մտքից, թե ինչեր է տարել այդ մարմինը։ Տառապանքը և կատաղի բունտը իր էության դեմ։ Քավության չարտահայտված ծարավը, չապաքինվող վերքը հպարտ և առողջ, անարժան կյանքից վիրավորված էակի մարմնի վրա։ Այդ վերքի հետևանքները մարդուն մոտեցնում են կրոնական ինքնահրաժարման։ Նա ինքն իրեն պատժում է կրած տառապանքների և խայտառակության համար։ Փարիզի իր սարսափելի միայնության երկու տարիների ընթացքում Ասյան իրեն հարկադրում էր ճգնավորական ողջախոհության։ Աշխարհում ոչինչ նրան չէր կարող ստիպել խախտել այդ անձայն երդումը։ Նույնիսկ ջղակծկումներն ստամոքսի, որին մի գիշեր չէր, որ տանջում էին սովի պատճառած տառապանքները։ Ընդհակառակն։ Որքան ավելի ուժեղ էր նրան սեղմում կարիքը, այնքան ավելի համառ էր նա իրեն զրահապատում ինքնահրաժարմամբ։ Ասյային պաշտպանում էր պարտված կնոջ դառնացած հպարտությունը, որի մեջ ոչինչ այլևս չի մնացել, բացի հպարտությունից, և որը պահպանում է այդ վերջին գրավականը, որպեսզի երկու թիակներով գետնին չկպչի։ Եվ նա երդվեց ձեռքից բաց չթողնել այդ գրավականը նույնիսկ ամենածայրահեղ կարիքի դեպքում, թեև նրա մեջ չէր տեսնում այն արժեքը, որը նրան վերադարձնում էր հին բարոյականությունը։ Ասյայի համար դա իր անկախության վերջին մնացորդների սիմվոլն էր։ Դա կորցնելու տագնապալի սարսափից այդ անհավատացյալը իրեն կյանքի դատապարտեց ջրից ու սիրուց զուրկ ինչ-որ Թեբեում, ինչպես քրիստոնեության արշալույսին վարվում էին առաջին դաժան ու համառ ճգնավորները։

Քաղցը հագեցնելու համար Ասյան Ersatz[1] էր գտնում։ Նա դրանով հագեցնում էր քաղցի հատուկ տեսակը—հոգևոր քաղցը, որի նոպաները ժամանակ առ ժամանակ նրան տանջում էին ոչ պակաս դաժանությամբ։ Եվ, հագեցնելով այն, խլացնում էր մարմնական քաղցը։ Նա ամբողջ ժամեր անց էր կացնում «Օդեոնի» կամարաշարքի տակ և այնտեղ թերթերը չկտրած գրքեր էր կարդում, որոնք դրված

---

1 Փոխանություն, սուրոգատ, էրզաց (դերմ.)։

էին լինում գրախանութների առաջ գտնվող վաճառասեղան-ներին։ Փչում էին սառը ձմեռային քամիները, և փաթաթված վաճառողները, որոնք ցրտից ոտքերով դոփում էին, չէին խանգարում նրան։ Նրանք արդեն ճանաչում էին Ասյային, — նայելով նրան, վաճառողները մի տեսակ տաքանում էին։ Կարդալով գիրքը, նա նորից էր այն դնում փաթեթի մեջ և խնամքով տեղադրում։ Բայց նա թևքի մեջ թաքցրած հերակալ ուներ, որով կտրտում էր գրքի թերթերը, երբ վաճառողը երեսը մի կողմ էր դարձնում։ Այդպես նա սկզբից մինչև վերջը շատ գրքեր կարդաց, այդ թվում նաև գիտական և մի քանի բրոշյուր Մարքսից։ Թափառումների երեք տարիների ընթացքում, քշված Հեղափոխության կողմից, նա Մարքսի մասին լսել էր միայն նրա կատաղի զրպարտիչներից և նրան պատկերացնում էր վիշապի յոթ գլուխներից մեկի ձևով։ Հիմա նա ամբողջ օրերը անց էր կացնում Մարքս կարդալով, ագահորեն էջը էջի ետևից կլանելով։ Նա վախենում էր գիրքը գողանալ, ինչպես պոմիդոր ու կարտոֆիլ էր գողանում մանրավաճառ կրպակներում։ Մերկ տղան, որի անկնողնու մոտ Ասյան նստել էր հիմա հյուրանոցում, իր մտքով չէր էլ անցկացնում, որ հենց այդ կնոջ ձեռքը նա մի անգամ բռնեց Կոմարտեն փողոցում դրված վաճառասեղանի մոտ։ Ասյան չէր էլ ամաչի թոցնել իր ուզած գիրքը, եթե չվախենար, որ մյուս անգամ արդեն չի կարող մոտենալ գրավաճառի մսուրին։ Նա ընդունակ էր իր կարդացած գրքից մեկ կամ երկու թերթ պոկել։ Նա պատկանում էր այն վտանգավոր բարբարոսների թվին (բոլոր կանայք էլ, մեկը մի քիչ պակաս, մեկը մի քիչ ավել, բարբարոսներ են), որոնք, ձգտելով տիրանալ գիտելիքների որևէ ամենաանշան պաշարին, ընդունակ են փչացնել գրաղարանից վերցրած արժեքավոր գիրքը,— փչացնել առանց երկար մտածելու. «Իսկ ի՞նչ կա դրա մեջ։ Գրքերը հենց նրա համար են, որ ես կուլ տամ...»։ Բայց Ասյան պետք է մտածեր նաև վաղվա մթերքի մասին—գրավաճառի սեղանից եկող փշրանքների մասին,— և զգուշությունը նրան հուշում էր իր թերթած գրքերի հետ վարվել ոչ պակաս խնամքով, քան ինքը՝ գրավաճառը։ Նրանք միմյանց վերաբերվում էին փոխադարձ վստահությամբ։

Այնուհետև դատարկ ստամոքսով և կշտացած ուղեղով նա տուն էր գնում՝ սնունդը մարսելու։ Ստամոքսի քաղցից առաջացած ցավերը խլացնելու համար նա ծծում էր հացի մի չոր կտոր և նախորդ օրը կերած նարնջի կորիզները։

Հերոսաբար քաղցած մնալու երկու տարվա այդ ռեժիմի ընթացքում, որը խախտվել էր լոկ մի քանի պատահական հաջողություններով, երբ նա կուշտ ուտելու հնարավորություն էր ունեցել, Ասյան ոչ միայն չմեռավ,— նա իր համար նոր կյանք ստեղծեց։ Նա օժտված էր առեղծվածային ճկունությամբ, որ յուրահատուկ է սլավոններին, որոնք հարյուրամյակների ընթացքում սովորել էին ամեն ինչ տանել ու չմեռնել։ Եվ, բացի դրանից, նա վերածնվելու հիանալի ունակություն ուներ—մի շնորհք, որ տրված է ընտրյալ հոգիներին։ (Երբ ես ասում եմ. «հոգիներին», ես ասում եմ «մարմիններին»։ Մարմիններ կան, որոնց ոչ տարիները, ոչ մահն ինքը կարծես չեն դիպչում— ոչ մի վերք, ոչ մի բիծ նրանց վրա հետք չեն թողնում։ Թաղանթը մաշվում է, պատռվում է և ընկնում, և հանդես է գալիս նորը, թարմը)։ Կանացի հոգին ֆիլմ է։ Հոգիները նման են կերպարների, միմյանց փոխարինում են և շարժվում (ավելի ճիշտ, նրանց շարժում են)։ Հոգիները հազվադեպ չէ, որ օտար են լինում իրար։ Նույնիսկ ամենակայուն խառնվածքները, նույնիսկ այնպիսիները, ինչպիսին Աննետան է, մի անգամ չէ, որ իրենց մեջ տեսել են կադրերի այդ առկայծումը։ Բայց դեռ երբեք այնպիսի կնոջ մոտ, ինչպիսին Աննետան է, հոգիների փոփոխումներն այդքան հանկարծակի տեղի չեն ունեցել։ Այդ փոփոխումներն առհասարակ հազվադեպ էին տեղի ունենում Արևմուտքի կանանց մոտ։ Ասյայի մոտ թագավորող հոգու լիակատար խավարումը վրա էր հասնում մի վայրկյանում. նա ամեն ինչ մոռանում էր։ Եվ հայտնվում էր նոր հոգի, նոր կամք։ Նրան այդ ամենևին չէր զարմացնում—նա մի ակնթարթում իրեն նույնացնում էր նրանց հետ։ Նրանք Ասյային էին պատկանում, Ասյան խավարման ամբողջ ընթացքում պատկանում էր նրանց։ Հետո նա անմիջապես, առանց որևէ հարվածների և ամենևին չզարմանալով, իր մոտ հայտնաբերում էր նրան, առաջինին, հոգուն, որին գցել էր։ Դա մշտական վտանգ էր։ Բայց այդտեղ

կային նաև վստահություն և անդորր։ Քանի որ առաջին հոգին վերադառնում էր։ (Դրանում կարելի էր չկասկածել)։ Եվ իր խավարման ընթացքում Ասյան ուժ և թարմություն էր հավաքում,— նա կարծես ելնում էր խոր քնից...

Այդպես, առանց կապերի, առանց կյանքում տեղ ունենալու, առանց աստծուն հավատալու, առանց պատրանքների, առանց այն ամենի, ինչն ապրելու ուժ է տալիս, Ասյան ապրում էր և չէր հանձնվում։ Ամեն առավոտ աղեղը շատ ձիգ լարում էին նորից և պատրաստում որսի։ Կյանքի փորձությունները, ինչքան էլ ուզում է ծանր լինեին դրանք մարմնի և հոգու համար, նրա մարմնի վրա չթողին, այնուամենայնիվ թարախակալող վերքեր և ոչ էլ ամայացրին հոգին։ Նա շատ առողջ էակ էր։ Խելքով նա ամեն ինչ ավերում էր, ամեն ինչ պայթեցնում էր։ Իզուր. բնազդը ավերակների տակից դուրս էր հանում երիտասարդ ապագան։ Նրա հանդգնության չափ համարձակ քննադատությունը և վայրենավարի առողջ նատուրան, որն առանց մոլորվելու կողմնակի ճանապարհներում, միշտ գնում էր դեպի նպատակը, քիչ առ քիչ աղջկանը մոտեցրին նոր Ռուսաստանի հասկանալուն։ Սկզբում նա ինքն այդ անում էր անգիտակցորեն։ Իսկ հետո մտածեց. «Բանն ինչո՞ւմն է։ Ես գնում եմ իմ ճանապարհով։ Շները, որ շներ են, նրանք էլ իրավունք ունեն ճանապարհով գնալու...»։ Երբ Ասյան հանդիպում էր այնպիսի մարդկանց, ովքեր այնտեղից էին գալիս,— նա հանդիպեց ինստիտուտի ընկերուհուն, որը Կոմունիստական կուսակցության մեջ էր մտել և սովետական դեսպանությունում մեքենագրուհի էր աշխատում,— իսկույն զգում էր հարազատ հողը, հայրենիքի ոգին։ Պարտվածի հպարտությունը թույլ չէր տալիս նրան այդ խոստովանել։ Բայց խոստովանում էր նա այդ, թե չէր խոստովանում, միևնույն է, փաստը փաստ էր մնում. այդ վտարանդի կինը հեղափոխական Ռուսաստանի ռուս կնոջ աչքերով տեսնում էր վտարանդի տղամարդկանց, և Արևմուտքը, և ամբողջ բարոյական ու սոցիալական աշխարհն ընդհանրապես։ Ամենից շատ Ասյային խանգարում էր հարել հեղափոխական Ռուսաստանին նրա ինդիվիդուալիստական հպարտությունը, որը տարագրության և միայնության մեջ ավելի ուժեղ էր աճել։

Կյանքն ինքն էր նրա վրա դրել այդ անջնջելի հետքը, բայց հոգու խորքում նա անսահմանորեն ուզում էր միաձուլվել Ռուսաստանի այդ համախմբված մարդկային զանգվածների հետ։ Այստեղից էլ առաջանում էին հայրենիքի կարոտի տենդագին, ճնշող նոպաները։

Այստեղից՝ էլ այն օրերը, որոնց մասին ես արդեն ասել եմ, —օրեր, երբ նա ժամերով պառկում էր կատարելապես ուժասպառված։ Հենց այդ ժամանակ էլ սկսեց կամաց-կամաց նրա գիտակցության մեջ թափանցել միջնորմի հետևում գտնվող անտեսանելի կյանքը։ Ասյան պառկած էր կաթվածահարային անշարժության մեջ, բայց ճեղքի միջով նրա սուր լսողությունը վիթխարի միջատի շոշափուկների նման սկսեց տողալ դեպի Մարկի սենյակը։ Ասյան հետաքրքրում էր այդ սենյակը, պրպտում էր բոլոր անկյունները, և աստիճանաբար իր երևակայության մեջ վերաստեղծում էր և որջը, և որջի գազանին։ Իսկ գազանը, այսինքն՝ Մարկը, հարևան սենյակում անխախտ լռությունից խաբնված, չէր ենթադրում, որ իր բոլոր շարժումները շոշափվում են, և իրեն ազատություն էր տալիս։ Անաչք, բայց կառչուն շոշափուկները նրան խուզարկում էին վերից վար։ Մարկը միշտ գտնվում էր գրգռված վիճակում և բարձրաձայն ինքն իր հետ խոսում էր ոչ միայն երազում։ Երբ նա ենթադրում էր, որ ոչ ոք իրեն չի լսում, նա չէր սանձում իր փոթորկումը։ Այդպիսի րոպեներին նրանից դուրս էին պրծնում ինչ-որ մեկին ուղղված խոսքեր—խոսքեր, որոնք լցված էին ատելությամբ, նախադասության բեկորները հառնում էին խավարի միջից, ինչպես ալիքների բաշեր, որոնք արևի տակ փայլատակում են (դա Հակովբի զրույցն էր հրեշտակի հետ)։ Տագնապահույզ լսողությունը որոտի նման սուզվում էր բառերի արևային փրփուրի մեջ և թափանցում հոգու խորքը։ Սկզբում Ասյան ականջ էր դնում սոսկ ձայնի երանգին և պատկերացնում էր բերանը, ինչպես բուրմունքով կարելի է պատկերացնել պտուղը։ Այնուհետև նա մթության մեջ փորձում էր պատկերացնել ամբողջ մարմինը։ Նա հոտոտում էր այն։ Ոչ թե տենչանքից, այլ էգի կենդանական բնազդի շնորհիվ և անգործության հետևանքով։ Վերջապես ուսումնասիրությունը ավարտված էր։ Կողքին ապրող էակին Ասյան

գիտեր այդեն հոտով, համով և լսողությամբ։ Այդ ժամանակ նրա մեջ ցանկություն առաջացավ առանց շտապելու ստուգել de visu[1] այն կերպարը, որին ինքն ստեղծել էր։ Ասյան նրան չէր փնտրում, բայց մի անգամ երեկոյան հանդիպեց նրան սանդուղքի վրա և աշխատեց մնալ աննկատելի։ Ասյան նրան տեսավ և անմիջապես ճանաչեց Կոմարտեն փողոցի գործակատարին, որն իրեն բռնել էր գողություն անելիս։ Նա հիշեց գայլի փոսը, ուր ինքն ընկավ, և այն ձեռքը, որն իրեն բաց թողեց։ (Այդ րոպեին, խոնարհվելով Մարկի վրա, որը տենդից վառվում էր, Ասյան նայում էր այդ ձեռքին, այդ գեղեցիկ երիտասարդ ձեռքին՝ երկար մատներով, որոնք այն ժամանակ աքցանի նման բռնել էին իրեն և քնքշանքով շոյում էին)։ Ինչ մնացածին է վերաբերվում, ապա իրական կերպարը նրան չթվաց չափազանց հեռու այն կերպարից, ինչպիսին նա պատկերացրել էր իրեն։ Այդպիսի դեպքերում իրականը ակնթարթորեն փոխարինում է երևակայականին, և երևակայությունը չի կարող պատկերացնել, թե երբևէ նրան այլ կերպ է տեսել։

Համենայն դեպս, այդ օրվանից հարևանը Ասյայի համար ավելի մեծ հետաքրքրություն ձեռք բերեց, և Ասյան սկսեց հետևել նրա ճակատագրին է՛լ ավելի լարված հայացքով, ավելի ճիշտ՝ լսողությամբ։ Ասյային զարմացնում էր այդ պատանի բնավորության լրջությունը, իսկ անձնական փորձը նրան օգնեց տեսնելու իր սեփական միայնությանը նմանվող այդ ոչ մարդկային միայնության բոլոր նվիրական անկյունները և բոլոր տառապանքները, որոնց դիմադրում էր Մարկի ստոիկական հպարտությունը։ Հիմա, երբ Ասյան երբեմն իրեն հարկադրում էր չքնել, որպեսզի երազում իր գաղտնիքները չմատնի, նա հետևում էր ուրիշի երազի գաղտնիքներին և անընդհատ սաստկացող տենդի հորդացումներին։ Ասյան տեսնում էր, որ անխուսափելի ցավը գալիս է երիտասարդ էակի վրա, որ այդ ցավը ճախրում է նրա գլխավերևում, ինչպես ցինը, և շրջանները

---

[1] Իր (սեփական) աչքերով (լատ.)։

գնալով ավելի ու ավելի են նեղանում։ Ասյան գիտեր, որ կգա ժամը և ինքը սիտպված կլինի խառնվել դրան։

Վրա հասավ այդ ժամը։ Ասյան եկավ։

Նա շատ հիվանդություններ էր տեսել ելքի դաժան ժամանակները, երբ նրան պտույտ էր տալիս ջախջախված և փախչող բանակի հորձանուտը։ Նրան վիճակվել էր վիրավորներից շատերի հոգսը տանել, հաճախ նա այնպիսի միջոցներից էր օգտվում, որոնց ներկայացնում էր երջանիկ առիթը, ավելի ճիշտ դժբախտ դեպքը, ամենագարշելի դեպքը։ Նա գիտեր խեղանդամ մարմինների բոլոր դառնություններն ու ամբողջ ամոթը,— ոչ մի տառապանք արդեն չէր կարող նրան հանկարծակի բերել։ Նա անհրաժեշտ չէր համարում բժիշկ հրավիրել։ Նա որոշեց, որ ինքը գլուխ կհանի։ Մարկը նույնպիսի հաջողությամբ կապաքինվի կամ նրա ձեռքերին կմեռնի, ինչպես որ կմեռներ բժշկի ձեռքերին։ Նա ուրիշների մասին դատում էր իրենով և հանգեց այն մտքին, որ պետք է նախ և առաջ նրան փրկել հիվանդանոցից, իսկ հիվանդանոցն առաջին բանն է, որ բժիշկը կհանձնարարեր... Ոչ, եթե բանն արդեն մեռնելուն է հասել, ապա պետք է մեռնել մենակ։ Դա վերջին շռայլությունն է։

Ասյան օգտագործեց ուժեղ ներգործություն ունեցող և ուշադրությունը ցրող դեղամիջոցներ. ազդերին մանանեխի սպեղանի և գլխին՝ սառույց։ Նա խնամում էր Մարկին, կերակրում էր, լվացվեցնում։ Ոչ մի բան նրա մեջ զզվանք չէր առաջացնում։ Սենյակը կեղտոտ էր, օդը՝ հեղձուկ։ Լուսամուտը բացվում էր բակի վրա և դեմ առնում պատին։ Բորից քարքայված պատը այնքան մոտ էր, որ եթե մարդ լուսամուտից մեկնվեր, կարող էր ձեռքով կպչել նրան։ Անկյունային սենյակում, որտեղ Ասյան էր ապրում, լուսամուտը փողոցին էր նայում։ Ասյան բացեց—դուռը չարդեց, որը երկու սենյակներն իրար էր միացնում, և հիվանդին փոխադրեց իր մոտ։ Մարկը նրանից բույով էր։ Նրա երկար, նիհար ոտքերը կախվել էին, ձեռքի մեկը քարշ էր գալիս գետնին։ Նա նման էր երիտասարդ Քրիստոսին, որի մարմինը դագաղ են դնում։ Ասյան նրան տանում էր կռացած,

լայն-լայն դնելով իր ուժեղ ոտքերը, դուրս ցցելով ներքին շրթունքը, ատամները սեղմած, հոնքերը կիտած և աչքերն առանց հեռացնելու իրեն հավատ ընծայող մարմնից։ Մայրական ինչ-որ բան արթնացավ նրա դատարկ կրծքում, որի մեջ, այն բանից հետո, երբ նրանից պոկեցին սպանված երեխայի փոքրիկ բերանը, ցամաքեց մարդկային քնքշության կաթը։ Ջորացած աղբյուրը նորից էր կենդանանում։ Հիվանդը գիտակցությունը կորցրել էր։ Ասյան նրան դրեց իր անկողինը։ Գիշերը, գիտակցության պայծառացման պահին, Մարկը բացեց աչքերը և խեղդվողի նման գոռաց. «Մամա»։— Նա տեսավ, որ ինքն ուրիշի սենյակում է գտնվում և իր վրա խոնարհվել են գեղեցիկ շրթունքներ, որոնցից սփոփանք էր երևում։ Այդ շրթունքները կարեկցությամբ Մարկին ասացին. «Ասա, տղաս...»,— և համբուրեց տղայի չոր շրթունքները։

Ասյան կարգի բերեց չհավաքված սենյակը։ Մի քանի շաբաթվա ընթացքում, որոնք նախորդել էին Մարկի հիվանդությանը, այնտեղ շատ կեղտ էր գոյացել, բոլոր անկյուններում թղթի կտորներ էին թափված։ Իր գիշերային հերթապահությունների ժամանակ Ասյան դրանք հավաքում էր և կարգի բերում։ Դրանց միջև շատ նամակներ կային։ Ասյան ընթերցեց դրանք։ Նրա անկողնում պառկած մարդը Ասյայի որսն էր,— թող ժամանակավոր որսը լիներ, բայց չէ որ ուշադրության արժանանում է միայն իսկական որսն. դրանից առաջ ինչ էր և ինչ է լինելու դրանից հետո—դա նշանակություն չունի։ Այն ամենը, ինչ գերուն էր պատկանում, որսի մի մասն էր կազմում։

Նամակներից շատերը «մամայից» էին։ Վստահ, պարզ ձեռագրից, որն առաջ էր թռչում, ինչպես իր ուղին իմացող թռչունը,— թևերի լայն և համաչափ թափահարումներով,— պատկերանում և տպավորվում էր Ասյայի աչքերի խորքում Աննետայի կրքոտ կերպարը։ Ամեն մի էջի հետ, որ շրջում էին այդ զավթիչ կնոջ մատները, հպարտ ու քնքուշ այդ կերպարը դառնում էր ավելի ու ավելի պայծառ։ Շուտով երկու կինն էլ կանգնել էին դեմ առ դեմ և հայացքով չափում էին իրար։ Նրանք ոչինչ միմյանց չասացին, Ասյան նամակները ցած դրեց և սկսեց հոտոտել

անծանոթուհուն։ Նա ծանրութեթև էր անում անծանոթուհու սիրո ուժը և մարտական ուժը—կենսական ուժը։ Ասյան այդ բաներից լավ էր գլուխ հանում։ Եվ չսխալվեց։ Կողքի սենյակում պառկած մարդը նրա համար թանկ էր դառնում այն պատճառով, որ ծնվել էր այդ կնոջից։

Մոր նամակներով Ասյան պատկերացնում էր որդու նամակները։ Նա թափանցում էր՝ այդ մռայլ, մշտապես պայքարող սրտի ամենամեկուսի անկյունները, ջանում էր իր համար պարզել կատաղության պոռթկումները, որոնք նրա մեջ առաջացնում էին ամբողջ աշխարհը և Մարկն ինքը, նրա բնական մաքրությունը և նրա հանապազօրյա կյանքի կեղտը, որից իր՝ Մարկի սիրտը խառնում էր, նրա թուլություններն ու նրա պարտությունները, որոնք Մարկին դարձնում էին Ասյայի համար ավելի մտերիմ, ավելի մարդկային... Եվ Մարկի լիակատար անկեղծությունը մոր հետ, որը զուտ տղամարդկային հասկացությամբ բացում էր մարդու առաջ նրա էությունը և հանգստացնում էր նրան։ Ասյայի մեջ այդ կնոջ նկատմամբ խանդի մի զգացում շարժվեց։ Եվ դա նրա համար առաջին նշանն էր, որ ինքը սիրեց։

Ասյան հասկացավ այդ նշանը։ Նրանից ոչ մի բան անկատ չէր մնում, ինչը որ աղջկա գաղտնապահ, ինքնամփոփ բնավորությունը փորձում էր հենց իրենից թաքցնել։ Ասյան ուսերը թոթվեց։ Մահճակալի առաջ կանգնած, նա Մարկին էր նայում։ Հիվանդությունը դեռ շարունակում էր նրան պահել մամլակների մեջ։ Չնայած ամբողջ խնամքին, Մարկը ոչ թե դեպի լավն էր գնում, այլ դեպի վատը։ Սպառնում էր ճակատագրական վախճանը։ Ասյայի ձեռքը շոյեց Մարկի վառվող ճակատը, հետո, վերմակի տակ, զգույշ շարժումով սեղմեց նրա ոտքերը։ Փոքր-ինչ մտածելով, Ասյան հայացքը գցեց սեղանին դրված նամակներին, դուրս եկավ տանից և մորը հեռագիր ուղարկեց։

Աննետան Տիմոնի հետ Անգլիայում էր։ Երբ նրան հանձնեցին կարճ, դաժան և անստորագիր հեռագիրը, նա տեղում երերաց։ Տիմոնը նրա ձեռքից առավ այդ թերթիկը և կարդաց։ (Աննետան խոսելու ուժ չուներ)։ Եվ այդ դաժան մարդը, որը հոնքն անգամ չէր շարժի, եթե աչքի առաջ մի

ամբողջ ժողովուրդ կործանվեր, հանդես բերեց անսպասելի մի բարիություն։ Աննետան կորցրեց իրեն։ Նա վերաբկուն ուսերին գցեց և ուզեց վազել մոտակա կայարանը, մոռանալով ամեն ինչ—փող, անձնագիր, իրեր։ Տիմոնը բռնեց նրան և հոգատարությամբ նստեցրեց։

— Հանգստացի՛ր, բարեկամս։ Գլուխդ մի՛ կորցնի։ Պատրաստվիր ճանապարհ ընկնելու, բայց հանգիստ։ Չորս ժամ էլ չի տևի, դու տղայիդ կտեսնես։

Տիմոնը զանգեց օդանավակայան և կարգադրեց, որ անմիջապես թռիչքի պատրաստեն իր ինքնաթիռը։ Նա Աննետային ուղեկցում էր ավտոմոբիլով։ Ճանապարհին Տիմոնը նրան հանգստացնում էր՝ կոպիտ բարեհոգությամբ, որը Աննետային չէր հանգստացնում, բայց հուզում էր։ Բաժանվելիս Տիմոնն հուզվել էր ավելի շատ, քան կուզեր ցույց տալ։

— Դու նրան կփրկես,— համոզում էր Տիմոնը։— Բայց հետո վերադարձիր։ Կարո՞ղ եմ արդյոք դիմանալ մինչև այդ։

— Քեզ ոչինչ չի սպառնում...— ասաց Աննետան (Տիմոնի խոսքերը վախեցրին նրան, բայց սարսափը հեռու էր գտնվում, Աննետան մտածում էր ուրիշ բանի մասին)։

— Ես ինքս եմ ինձ սպառնալու...— առարկեց Տիմոնը,— հենց որ մենակ մնամ։ Դու այդ հիանալի գիտես։ Եթե դու չլիներիր, մի՞թե ես կարող էի դիմանալ մինչև այսօր։

Նկատելով, որ Աննետայի մտքերն արդեն հեռու են, Տիմոնն ասաց.

— Է, շնորհակալություն քեզ։ Դու շատ ավելին արիր, քան ես կարող էի սպասել։ Եվ ոչ մի բան մի հիշիր, ինչն ինձ արատավորում է քո աչքում։

— Ես հիշում եմ միայն մեր բարեկամությունը։ Այդ բարեկամության ձեռքերը միշտ մաքուր են եղել։

— Ուրեմն, տուր ինձ քո ձեռքերը։

Նրանք փոխադարձաբար իրար ձեռք սեղմեցին... Մոտորը սկսեց հոնդալ։ Աննետան նայեց Տիմոնին. ատլետի դեմք, որի վրա քանդակագործն աշխատել էր ոչ թե հատիչով, այլ բռունցքներով, կոպիտ կրքերի կնիքով (և ազնիվ,

և ստոր—այդտեղ ամեն ինչ կար), ցուլի ճակատով և ծանր աչքերով, որոնց համառ հայացքը, ինչպես սպունգ, իր մեջ էր ծծում Աննետայի կերպարը։ Նա իր դեմքը մոտեցրեց Տիմոնին և ասաց.

— Արի համբուրվենք...

Սենյակի դուռը բաց էր։ Ասյան ամենևին չէր անհանգստանում, թե որևէ մեկը կարող է ներս մտնել։ Նա գողանալու ոչինչ չուներ։ Իր հարևաններին նա բանի տեղ չէր դնում։ Բայց երբ ներս մտավ մայրը (նա առաջին իսկ հայացքից ճանաչեց Աննետային), Ասյան զարմացած էր. նա այդքան շուտ չէր սպասում Աննետային։ Նրանք ոչ մի խոսք չփոխանակեցին։ Աննետան ուղղակի գնաց մինչև անկողինը, նույնիսկ առանց վերարկուն հանելու, և նետվեց դեպի որդին։ Բայց այնպես, ինչպես այդ կարողանում է անել միայն մայրը. նա որդուն գրկեց ամբողջ կրքով և միաժամանակ այնքան քնքշորեն, որ նրա հպումը նման էր թեթև սյուքի, որը փաղաքշում է մարգագետնի խանձված խոտը։ Հիվանդի կրակի պես վառվող մարմինը թեթևություն զգաց։ Շուրթերը շարժվեցին։ Նա հառաչեց։ Աննետան բարձրացրեց որդու տաքության մեջ վառվող գլուխը, և ապա նորից զգուշորեն իջեցրեց բարձին։ Շուռ գալով, որպեսզի վերարկուն հանի, նա տեսավ այն կնոջը, որը շարունակում էր կանգնած մնալ, իր տեղը չզիջելու վճռականությամբ լեցուն։ Արագ, ուղիղ և մռայլ հայացքները խաչաձևվեցին։ Աննետան հարցրեց.

— Այդ դո՞ւք եք ինձ հեռագրել։

Ասյան, առանց տեղից շարժվելու, պատասխանեց.

— Այո, ես։

Աննետան ձեռքը պարզեց նրան։ Ասյան սեղմեց այդ ձեռքը։ Երկուսի ձեռքերում էլ ջերմություն չկար։ Նրանք պայման էին կապում։ Աննետան մտավ հարևան սենյակը, գլխի շարժումով առաջարկելով Ասյային հետևել իրեն, և խնդրեց.

— Պատմեցեք։

Իհարկե, մայրն իր իրավունքներն ունի։ Բայց Նրանք

բախվեցին այն իրավունքների հետ, որոնք Ասյան յուրացրել էր։ Ասյային նույնպես վրդովել էր այն չգիտակցված հրամայականը, որն այդ ձայնի և շարժման մեջ էր գտնվում։ Դրան հաջորդեց մի քանի վայրկյան համար պայքար՝ այդ երկու հաստատակամ կանանց միջև։ Նրանք, թերևս, իրենք էլ այդ չէին գիտակցում, բայց ամեն մեկը լարվեց, ինչպես ձին, որի սանձերը՝ ուժգնորեն ձգել են։ Այնուհետև ձիերից մեկը տեղի տվեց։ Ասյան սկսեց խոսել։ Նա համառոտ նկարագրեց հիվանդության ընթացքը։ Զասաց, թե ինքն ինչ հարաբերությունների մեջ է Մարկի հետ։ Բայց նրան աղոտ մի բավականություն էր պատճառում հաղորդել այդ վնասը, որ ինքը նրա որդուն իր անկողնում է պառկեցրել։ Մինչ նա խոսում էր, Աննետան շտապ մի հայացք գցեց երկու սենյակներին։ Նա չէր կասկածում, որ այդ կինը Մարկի սիրուհին է։ Աննետան նախապաշարմունքներից զերծ էր, և Ասյան նույն րոպեին դադարեց նրա համար օտար լինելուց։ Աննետան հանկարծ սկսեց այդ աղջկա հետ իրեն անկաշկանդ պահել։ Ասյան չէր հասկանում, բանն ինչումն է։ Նրան նայող խիստ աչքերը մեղմացան, իսկ նա շարունակում էր իրեն սառը և ինքնամփոփ պահել։

Երկու կինն էլ հիմա չէին ջանում ավելի լավ հասկանալ միմյանց։ Հարկավոր էր փրկել մարդուն։ Եվ դրա համար նրանք միավորվեցին։ Ծուրաքանչյուրը որոշեց մյուսի հետ փոխանակել իր փորձը։ Աննետային ապշեցնում էր Ասյայի վստահությունը։ Ասյան ամեն ինչ անում էր սառը ճշգրտությամբ, արագ, առանց երկար ու բարակ մտածելու։ Ոչ մի ավելորդ, ոչ մի սխալ շարժում։ Մոր ներկայությամբ Ասյան այնպես էր գործ անում, կարծես այստեղ ինքը մենակ էր, ամենևին չէր քաշվում։ Նա այդ խղճուկ և անզոր մարմնի հետ այնպես էր վարվում, կարծես սանիտար լիներ,— որը հիվանդին նայում է իր սեփականության նման։ Աննետան մի տեսակ շփոթված էր և միևնույն ժամանակ գերված։ Այն, ինչ Ասյան անում էր, Աննետային անմարդկային էր թվում, բայց նա չէր կարող չտեսնել, որ դա ճիշտ է և օգտակար։ Նա զգում էր Ասյայի առավելությունը և, իրենից անկախ, ենթարկվում էր նրան, երբ վերջինս կարճ, ընդհատ հրամայում էր.

—Ոտքը բռնեք։ Գոտկատեղից բարձրացրեք։ Ի՞նչ եք անում, չե՞ք տեսնում, ինչ է։

Աննետան նույնպես կարողանում էր հիվանդներին խնամել (այդ ո՞ր կինն էր, որ Եվրոպայում դա չսովորեց պատերազմի տարիներին), բայց ձեռքերը մատնում էին նրա հուզմունքը, երբ նա որդուն էր դիպչում։ Աննետան հիանում էր Ասյայի բոլոր շարժումների սառնասիրտ ճշգրտությամբ։ Այդ սառնասրտությունը նրան զարմացնում էր մանավանդ այն պատճառով, որ նա շատ շուտ նկատեց, թե ինչ կրքեր և ինչ կատաղի ուժ էին իրենց կնիքը թողել Ասյայի դեմքին։ Շնորհիվ կայծակի բռնկումներին, որոնք անցնում էին այդ դեմքի վրայով, Աննետան ավելի լավ հասկացավ, քան ինքն Ասյան, և ավելի շուտ, քան Ասյան ինքն այդ խոստովանեց, որ երիտասարդ կինը տիրացել է նրա որդուն։

Նրանք իրար մեջ բաժանեցին գիշերային հերթապահությունները։ Ամեն մեկը հերթով նստում էր Մարկի անկողնու մոտ, իսկ հետո հանգստանում էր։ Ասյան բոլոր նախորդ գիշերները չէր քնել և իսկույն մեռածի պես ընկավ։ Աննետան ժամանակ ուներ շատ բաների մասին մտածելու, քանի դեռ ականջ էր դնում երկու էակների տենդագին շնչառությանը։ Նրանցից մեկը շնչում էր անհամաչափ և ընդհատուն, մյուսը՝ շտապողաբար և խիստ. այդպես ուտում է այն մարդը, որն շտապում է որքան կարելի է շուտ ուտի իր բաժինը։ Եվ իսկապես էլ, հենց որ հասավ հերթափոխության ժամանակը, Ասյան վայրկենապես արթնացավ։ Նա եկավ Մարկի գլխավերևը տեղն զբաղեցնելու համար և Աննետային ստիպեց մտնել անկողին, որն իր ցնորական տեսիլքներով լեցուն քնից հետո դեռ տաք էր։

Անցան մի քանի տագնապալից օրեր—և Մարկի գիտակցությունը տեղը եկավ։ Նրա աչքերը, որոնք դեռ մշուշված էին, պայծառացան և կանգ առան մոր քնքուշ դեմքի վրա։ Մարկը ժպտաց, և Աննետայի համար դա խնդություն էր։ Բայց Մարկի հայացքը շոշափում էր շուրջը գտնվող ամեն ինչ, և Աննետայի թիկունքում հանդիպեց Ասյայի կիտած հոնքերին ու փայլատակող աչքերին։ Հայացքն անշարժացավ, զարմացած, հարցական, և աշխատում էր ինչ-որ

բան հասկանալ։ Նա վերադարձավ դեպի մոր աչքերը, և Աննետան այդ աչքերում տարակուսանք կարդաց։ Ասյան կանգնել էր նրա թիկունքում և լուռ էր... Կնշանակի, նրանք նույնիսկ իրար չե՞ն ճանաչում։ Աննետան լուռ հետևում էր։ Ասյայի թերահավատ ինքնամփոփությունը ոչ մի հարցուփորձ թույլ չէր տալիս։ Նա շարունակում էր Մարկին բարձերի վրա տեղից-տեղ դնել, շուռումուռ տալ, կարգադրություններ անել նրան, ինչպես եթե նրա նկատմամբ ամեն կարգի իրավունքներ ունենար։ Իսկ Մարկը լուռ ենթարկվում էր և չէր համարձակվում որևէ բան հարցնել. նրան կարծես կախարդած լիներ օտար կնոջ անբացատրելի ներկայությունը։ Մարկը ճգնում էր գտնել լուծումը և դիմում էր պայծառացման բոպեներին, ինչպիսիները որ լինում էին նրա մոտ զառանցանքի ժամանակ։ Նա տարօրինակ վախ էր զգում, որ եթե ինքն ակի հարցուփորձ անել, տեսիլքը կչքվի։ Երկար, ապարդյուն ճիգերից հետո նա հետքը գտավ։ Լույսի շողը թափանցեց խավարի մեջ։ Բայց և այնպես նա պետք է հավաստիանար։ Բայց մոր ներկայությունը ամաչեցնում էր։ Վերջապես նա մի բոպե ժամանակ գտավ, երբ մայրը հեռացավ և Ասյան խոնարհվեց նրա վրա։ Մարկը շշնջաց.

— Դուք իմ հարևանուհի՞ն եք։ Իմ կողքի՞ն եք ապրում։

— Դուք եք իմ կողքին ապրում,— պատասխանեց Ասյան։— Հիմա դուք ինձ մոտ եք։

Մարկը դա չէր նկատել... Նա հայացքով ընդգրկեց սենյակը։ Գլուխը տաք մի հոսանք լցվեց, ճակատը վարդագունեց։ Ասյան նրան շոյեց իր ամուր ձեռքով։

— Դե լավ։ Հանգիստ պառկիր։ Դու ժամանակ կունենաս մտածելու։

Դեռ շարունակելով խոնարհված մնալ նրա վրա, մի տեսակ կարծես բարձը փոփոխացնելու համար, Ասյան մի քանի առարկություն չվերցնող խոսքով բացատրեց Մարկին տեղի ունեցածը.

—Այս սենյակում ավելի շատ օդ կա։ Ե՛ս եմ քեզ այստեղ փոխադրել։ Իսկ հիմա լռի՛ր... էլ ուրիշ ոչ մի բանի մասին մի՛ մտածիր։

Ասյան խոսում էր կիսաձայն և արագ։ Բայց Աննետան

լսեց որդու հետ «դու»-ով խոսելու տիրական եղանակը, որը իր գերող անսպասելիությամբ կարծես կախարդում էր Մարկին և նրան բարձին գամում։ Եվ երբ, շրջվելով, Ասյայի հայացքը հանդիպեց մյուս կնոջ աչքերին, նա այդ աչքերում ամեն ինչ կարդաց։ Է՜հ, ինչ ուզում է թող մտածի։ Ինքը թաքցնելու բան չուներ։ Բայց Ասյայի մոտ բացատրություններ տալու մտադրություն չկար։ Եվ Աննետան հարգում էր նրա լռությունը, սպասում էր, թե անծանոթուհին ե՞րբ խոսելու ցանկություն կունենա։

Այդպես էլ նրանք ապրում էին երեքով, մեկը մյուսի առաջ չբացելով սիրտը և մեկը մյուսին հետևելով։ Մարկն աստիճանաբար ուսումնասիրում էր անծանոթ կնոջը, և աստիճանաբար Մարկին համակում էր անբացատրելի հակումը դեպի այդ կինը։ Նրա ամեն մի գիծը առանձին վերցրած խորթ էր Մարկի համար, թվում էր գրեթե թշնամական։ Իսկ բոլորն իրար հետ միասին ներկայացնում էր իրենից մի ցանց և անողոքաբար, օղակն օղակի հետևից, ձգվում էր նրա գլխավերևում, նրա կամքի վրա։ Դա Մարկին զայրացնում էր, նա համառորեն ճգնում էր հասկանալ բանն ինչումն է, գումարում էր իր բոլոր քննադատական դիտողությունները, բայց գումարը տարբերվում էր գումարելիներից։ Նա նկատում էր, որ ինքը չի ուզում ոչ մի մանրամասնություն քողարկել, չի ուզում որևէ բան փոխել։ Ամեն մի մանրամասնություն ցանցի մեջ անհրաժեշտ օղակ էր։ Բանն այն էր, որ այդ կինը նրանցից չէր, ում սիրում են նրանց բերանը, քիթը, կուրծքը իրենց դուր գալու համար։ Նրան կարելի էր սիրել կամ ատել այն բանի համար, որ նա այդպիսին է, ինչպիսին որ կա, միակն է և անկրկնելին, որը շնորհիվ իր կենսական ուժի հաստատում է իրեն ու իր «ես»։ Եվ նրա ամեն մի գիծը, գեղեցիկ թե տգեղ, —գուցե, հատկապես, տգեղ,— գրավում էր շատ ավելի ուժեղ հենց այն պատճառով, որ դա բնորոշ էր միայն ու միայն նրան. «Դու այդ դու ես... Եվ ուրիշ ոչ ոք...»։

Լուռ ու փոխադարձ համաձայնությամբ Մարկը հազվադեպ էր դիմում անմիջականորեն նրան։ Եվ երբեք չէր համարձակվում Ասյային «դու» ասել, ինչպես հանդուգն անամոթությամբ (նույնիսկ կարելի է ասել որոշ մարտա-

հրավերով) շարունակում էր անել ինքն Ասյան։ Աննետան օգնում էր նրանց, որ մեկը մյուսին ճանաչեն։ Նրանք երկուսն էլ բավական սուր լսողություն ունեին հարևան սենյակից լսելու համար, թե ինչ է խոսում Աննետայի հետ մենակ մնացած մյուսը։ Բայց Ասյան այդ գիտեր և հետևում էր իրեն։ Նա խուսափում էր Աննետայի իրեն՝ Ասյային, ավելի մոտիկից ճանաչելու համբերատար փորձերից, և խուսափում էր բավական վարպետորեն, առանց կոպտությունների. նրան գերում էին Աննետայի ազնիվ աչքերն ու սրտագին վերաբերմունքը։ Նրա խուսափումները նուրբ էին,— մի վայրկյան դրանք կարծես ինչ-որ հեռաստան էին բացում, բայց այդ բոլորը, նախքան որևէ բան որսալը, նույն բոպեին ցնդում էր, և նա դառնում էր միայն էլ ավելի առեղծվածային։ Բայց երիտասարդ ունկնդրի հիասթափությունը փոխհատուցվում էր այն բավականությամբ, որը նրան պատճառում էր համաչափ ու երգեցիկ ձայնը։ Դա շատ ավելի գեղեցիկ և քաղցր էր, քան ամենագեղեցիկ մարմինը։ Մարկը փակում էր աչքերը և հիանում Ասյայի ձայնով, ինչպես եթե դա զգար շուրթերին կամ ձեռքին։ Այդ ձայնը ջերմ էր, հագեցած էր հեշտանքով։ Իսկ հետո Մարկին «դու» ասող կինը մոտենում էր նրա մահճակալին և նրան այս ու այն կողմ էր շրջում իր քնքուշ ձեռքերով, որոնք Մարկի մեջ կրակ էին վառում։ Այդ ժամանակ Մարկը մեջքով շրջվում էր դեպի Ասյան, որպեսզի խուսափի այդ տիրական բերանը բացելու և նրան տիրանալու գայթակղությունից...

Երբ Մարկը մոր հետ մենակ էր մնում, իրեն ձևացնելը դառնում էր շատ ավելի դժվար։ Նրան բարեհոգորեն մատնում էին վերականգնված առողջությունն ու ցանկությունը, որ արթնացել էր երիտասարդ մարմնում ուժերի հորդման հետ միասին։ Գուցե նա գաղտնաբար նույնիսկ գոհ էր, որ մոր թիկունքից իրեն են տևեվում անծանոթ կնոջ աչքեր, չնայած, թվում էր, թե նա խոսում է միայն մոր հետ։ Աննետան այդ հարցում ամենևին չէր մոլորվում։ Լիակատար վստահությունը, որը նրա նկատմամբ կարծես թե որդին է ցուցաբերում, նրան վերաբերվում էր լոկ կիսով չափ. «Ախ դու խորամանակ... Ահա ես քեզ հիմա կհամբուրեմ մեր

երկուսի փոխարեն... Բայց դա քեզ ձեռ չի տալիս...»։

Մարկը խոսում էր իր մասին, իր մասին, իր մասին... Նա գլուխը չէր գովում։ Նա և վատն էր ասում, և լավը։ Բայց նա խոսում էր ագահ և անհագուրդ կրքով։ Իսկ կրքով խոսել սեփական անձի մասին նշանակում է խորամանկել։ Կարող ես ասել. «թեր», կարող ես խոսել «դեմ»,— միևնույն է քեզ ես վերցնում ամբողջ լույսն ու ամբողջ օդը։ Դու լափում ես ուրիշին։ Կամ նրան ասում ես. «Ինձ կեր» (որը միևնույն բանն է)։ Չցանկանալով կամ չկարողանալով խոստովանել այդ, Մարկն ագահությամբ, միամիտորեն առաջարկում էր իրեն անծանոթ կնոջ համառորեն փակած շուրթերին. «Բացվե՛ք։ Կերե՛ք»։ Իսկ այդ բերանը քաղցած էր և ոչ մի կտոր չէր թողնում։

Անծանոթն ատամներով պատռում էր ու ծամում, ինչպես նոր բացած բողբոջը, այդ բոցավառ, կատաղի հոգին, որը և դառն էր, և քնքուշ։ Հոգին թարմ էր և առողջ։ Բուռն անկեղծությամբ, որը երկու կնոջն էլ հուզում էր և ժպիտ առաջացնում նրանց դեմքին («խե՜ղճ շնիկ»), Մարկն ի ցույց էր դնում և դատապարտում իր դեռ չծաղկած, անկանոն և հակասություններով լեցուն կյանքը։ Բայց այդ կյանքում արատավոր ոչինչ չկար։ Կեղտը կպել էր միայն մազերին («Գնանք, ես քեզ լվանամ...»)։ Իսկ մարմինը մաքուր էր, ինչպես նորածնինը։ Առողջացումը դրան նպաստում էր. չէ որ դա երկրորդ ծնունդն է... Գաղտնամիտ Ասյան նստել էր հարևան սենյակում և դողում էր։ Այդ անամոթ մարմնին հպվելու անհաղթահարելի ցանկությունը այրում էր նրա ձեռքերը։ Ողջախոհ և համարձակ պատանու մեջ Ասյան սիրում էր լեռնային հոսանքի մաքրությունը և անսպասելի հակասությունները։ Ասյան ինքն էլ էր խճճվել բանականության հակասությունների մեջ և, էլ ավելի շատ, բնազդների հակասություններում, որոնք միմյանց միջև վիճարկում են մարդուն և սպառնում են դրդել նրան դեպի ամենավտանգավոր արարքները։ Բայց նա ընտելացել էր դրան և կարողանում էր հարմարվել—այդպիսին էր նրա բնավորությունը։ Իսկ Մարկը կատաղիորեն փորձում էր դուրս պրծնել հակասություններից և միայն խիստ ջարդվածքներ էր ստանում։ Ասյայի դաժան անտարբերությունը բացատրվում

էր իր և կյանքի նկատմամբ ունեցած արհամարհանքով, արհամարհանքով դեպի զգացածի խելացնորությունը, որն իր կնիքն է դրել նրա վրա։ Հիմա նա կլանված էր այդ պատանու ողբերգական լրջությամբ։ Նա ուզում էր օրոր ասել իր կրծքի վրա պատանուն, այդ մեծ խենթուկին, որն անհեթեթության չափ անզուսպ էր ու ճշմարտացի և որին կարելի էր սիրել հենց իր անհեթեթության համար։

Եվ նա Ասյայի համար դարձավ է՛լ ավելի մտերիմ, որովհետև նրանց երկուսի համար էլ բնորոշ էր հոգեկան անջատվածությունը, որովհետև նրանցից ամեն մեկը կտրվել էր իր միջավայրից, գիտակցելով այդ միջավայրի անուղղելի մոլորությունները ու դատարկությունը։ Ասյան այրել էր իր և ռուսական վտարանդիների լագերի միջև եղած կամուրջները։ Բայց նա չէր կարող անցնել ուրիշ լագեր. այդ լագերն սպանել էր Ասյայի մերձավորներին, նա հետապնդում էր Ասյային և վիրավորում, և Ասյան ատում էր այդ լագերին իր ստորացված հպարտության ամբողջ կրակով։ Ճիշտ նույն ձևով էլ Մարկն էր կատաղությամբ ժխտում ժամանակակից ֆրանսիական երիտասարդության տարբեր շարժումները, ասենք հենց երիտասարդությանն էլ հետը. նա տեսնում էր այդ երիտասարդության տխմարությունը, թեթևամտությունը, էգոիզմը, կարիերիզմը։ Ամեն ինչ այդ երիտասարդության մեջ Մարկին թվում էր միամիտ, ցինիկ կամ կեղծավոր. նրա արվեստը կեղծ է,— մտածում էր Մարկը,— մտքերը կեղծ են, արարքները կեղծ են, կեղծ է նրա քաղաքականությունը, կեղծ է «ինտելեկտուալիզմը», կեղծ է «ռեալիզմը», կեղծ է «եվրոպեիզմը»։ Դրանք բոլորը դիմակներ են, այդ բոլորը սերվիլիզմի կեղծիք է («Ինտելլիջենս սերվիս») անզորության և շահատենչության կեղծիք...

Մարկը սխալվում էր, սխալվում էր շարաչար, և դա նրան ապացուցելու անհրաժեշտություն չկար. նա ինքն էլ այդ գիտեր։ Բայց նա ուզում էր անարդարացի լինել։ Նա չափազանց շատ էր տառապել այդ ամենից, նա ինքը նույնպես հաղորդակից էր եղել դրան։ Նա ուզում էր վրեժ լուծել, ուզում էր իր մարմնից քերել-թափել այդ ամբողջ կեղտը։ Աննետան չէր փորձում վիճել նրա հետ։ Նա ասում էր.

— Դա քո անպետք արյունն է գնում։ Անուշ լինի քեզ... Սրիր ատամներդ։ Կարող ես դրանք սրել թեկուզ և ինձ վրա, եթե այդքան ուզում ես։ Չէ որ դու արդեն կծել ես իմ կուրծքը։

Ասյան չէր հրաժարվի զգալ Մարկի ատամները նաև իր կրծքի վրա։ Նրան դուր էին գալիս այդ դաժան երիտասարդ ատամները։ Նրանք կարողանում էին ատել ու սիրել, ինչպես և իր սեփական ատամները։ Մարկի անարդարացիությունը, որը նա ընդունակ էր համարել արդարացի, իր համար ավելի մոտիկ էր ու հարազատ, քան այդ կապիկների էկվիլիբրիստիկան, որոնք, փողի և հաջողության հետևից ընկած, պար են գալիս մետաղալարի վրա։ Հաճախ չես տեսնի ֆրանսիացու նման գազան, որը վրեժխնդրական անամոթությամբ կմերկացներ իր մայր Ֆրանսիայի կեղծավորությունը։ (Ո՛չ։ Ոչ թե հարազատ մայր, այլ խորթ մայր...)։ Իհարկե, ֆրանսիացիները (ինչպես և մյուս ժողովուրդները) միշտ պարծենում էին նրանով, որ միայն իրենք են կարողանում դատապարտել մերձավորին, այն ժամանակ, երբ մյուս ժողովուրդները իրենցով միայն պարծենալ գիտեն։ Բայց երբ ֆրանսիացիները (ինչպես և մյուս ժողովուրդները) իրենց են վերագրում իրենք իրենց քննադատելու վտանգավոր արտոնությունը,— ապա դա նրանց անուղղակիորեն իրենց մեծարելու ձևն է։ Եվ նրանց քննադատությունը շատ հեռու չի գնում։ Նրանք այդ քննադատությունը պարուրում են բուրվառների ծխով։ Եվ քննադատությունից հետո նրանցից հաճելի հոտ է գալիս, քանի որ, դատապարտելով ուրիշներին, նրանք իրենց համար բացառություն են անում... Իսկ Մարկն իր համար բացառություն չէր անում։ Մարկն ամբողջ ուժով խարազանում էր ոչ միայն իր հայրենակիցներին, այլև ինքն իրեն։ Ասյան, ինչպես բոլոր սլավոնները, բուռն կրքոտությամբ իրեն ինքնավերլուծման էր ենթարկում, որը պատռում էր վերջին ծածկույթները (խոստովանանքը մի մոլուցք է, որն այդ ժողովրդի ամենաշնորհալի ներկայացուցիչների մոտ բարոյական զգացումի հաշվին հոգեբանական հոտառություն է զարգացնում)։ Ասյան գիտակի աչքերով գնահատում էր այդ ինքնամերկացումը, այդ մերկ հոգին, այդ ազատամտու-

թյունը։ Ասյան այն զգացումն ուներ, թե Մարկն իր հոգին մերկացնում է հանուն նրա։ Դա այդպես էլ կար։ Աղոտ կենդանական բնազդը Մարկին դրդում էր իրեն ցույց տալ այն կնոջը, որին ինքը ցանկանում էր։ «Ահա և ես մերկ եմ։ Իսկ հիմա էլ դու քեզ ցույց տուր...»։

Ասյան լսում էր այդ կոչը։ Պատասխանելու, բացվելու և Մարկին «առ, վերցրու» գոռալու ցանկությունը տաք ալիքների նման հոսում էր Ասյայի վրա։

Նա Մարկին շատ ավելի մոտիկից գիտեր, քան Մարկը նրան։ Մարկի մեջ արդեն ոչ մի այնպիսի բան չէր մնում, որ Ասյայի աչքերից ծածկված մնար։ Այդ աչքերում տպավորված էր Մարկի մարմնի յուրաքանչյուր մասնիկը։ Եվ հիմա, երբ մարմինը լցվում էր վերակենդանացող կյանքով, կյանքը հոսում էր նաև դեպի այն դրոշմը, որն Ասյան իր մեջ էր կրում։ Դրոշմն այրում էր նրան։ Գերին նրան գերի էր վերցնում։ Նա սկսում էր նեղել Ասյային...

Տղամարդը և կինը—երկու երեխաները—հետևում էին միմյանց, և յուրաքանչյուրը որսում էր մյուսի հազիվ նշմարելի շարժումները։ Իսկ հիմա երկուսն էլ համրացել էին (Մարկը լռում էր, սպասելով իր կոչի պատասխանին)։ Նրանք լսում էին, թե ինչպես է բարձրանում իրենց մեջ ցանկությունը։ Եվ ապաքինվողի սրված լսողությունը լսում էր, ինչպես է այդ ցանկությունը բարձրանում կնոջ մեջ։ Բայց որքան ավելի վեր էր այն բարձրանում, այնքան ավելի մռայլ ու ինքնամփոփ էր դառնում Ասյան։

Եվ ահա եկավ մի երեկո, երբ տղամարդը, վերջապես, համակվեց այն համոզմամբ, որ կինը կհայտնի իր գաղտնիքը։ Նա պտտվում էր տղամարդու շուրջը, գալիս էր մոտ, հետո հեռանում էր,— աղջամուղջը լցվում էր սենյակը, Աննետան տանը չէր, նրանք երկուսով մենակ էին։ Կինը տատանվում էր, հետո սիրտ արեց, արագ մոտեցավ և կռացավ,— ինչպես որ արել էր շատ անգամ,— որպեսզի վերմակն ուղղի։ Բայց այս անգամ Ասյան համոզված էր, որ իր ձեռքերը կփաթաթվեն Մարկին և բերանը ճուտակի նման կխոյանա նրա բերանի վրա։ Այդ բերանն ամբողջապես պրոկվել էր, պատրաստվել հարձակման, նա, կծելու պատրաստ, սպասում էր...

Հանկարծ Ասյան շտկվեց, ետ գնաց դեպի պատը, հենվեց նրան և սառնությամբ հայտարարեց.

— Դուք առողջ եք։ Ժամանակն է, որ մենք բաժանվենք ու գնանք մեր սենյակները։

Մարկը հուսալքված էր։ Նա այնքան էր ցնցված, որ մի բոպե ոչինչ ասել չկարողացավ։ Բայց կատաղությունը նրան վերադարձրեց խոսելու ձիրքը։ Նա ոտքերը կախեց մահճակալից և ճնշված ձայնով ասաց.

— Այս բոպեին։

Ասյան ուսերը թոթվեց և, տեղից շարժվելով, ասաց.

— Կարելի է և վաղը։

— Իսկ ինչո՞ւ հետաձգել։

Ասյան Մարկին պահելու համար ոչ մի շարժում չարեց։ Մարկն արդեն դոփում էր հատակին, հետևից քարշ տալով սավանները և կատաղությունից ոտքերը խճճելով նրանց մեջ։ Ներս մտավ Աննետան։ Նա զարմացած էր։

— Սա վճռված բան է,— ասաց Մարկը։

Ասյայի անթափանցելի լռությունը հաստատում էր Մարկի խոսքերը։ Աննետան համառել չուզեց, —նա դեմքերը կարողանում էր կարդալ։ Աննետան միայն ասաց.

— Շատ լավ։ Դա դժվար չէ։ Միայն պետք է անկողինը տեղափոխել։

— Ինչո՞ւ, —նկատեց Ասյան։— Ի՞նչ տարբերություն։ Մենք այդպիսի նրբություններից ետ ենք վարժվել։

Մարկը, որ ամբողջապես շիկացել էր, ուրախ էր այդպիսի պատասխանի համար։ Նա արդեն մյուս սենյակում էր գտնվում։ Այնուհետև, քիչ մտածելուց հետո, որոշեց, որ Ասյայի անտարբերությունը ավելի վիրավորական է։ Եվ նա մեջքով շրջվեց դեպի այդ երկու կինը։

Աննետան այդ խոսքակռվին նայում էր ժպիտով։ Ասյային, որը դեռ նոթերը կիտած կանգնել էր պատի մոտ, Աննետան ասաց.

— Մենք անամոթաբար չարաշահել ենք ձեր հյուրասիրությունը։ Ներեցեք մեզ։ Ոչ մի սիրով ես չեմ կարող վարձահատույց լինել ձեզ այն բանի դիմաց, ինչ դուք արել եք իմ որդու համար...

— Ես ոչինչ էլ չեմ արել,— մրթմրթաց Ասյան։ Նրան

շատ խորը հուզեցին այդ խոսքերը, նույնիսկ ինքը՝ ձայնն Աննետայի։

— Դուք նրան փրկել եք,— ասաց Աննետան։

Նա գիրկը բացեց։ Ասյան նետվեց դեպի նա և ճակատը սեղմեց մոր կրծքին։ Հնարավոր չէր բարձրացնել այդ համառ ճակատը։ Աննետային մնում էր միայն համբուրել նրա մազերը։

— Հիմա,— ասաց նա,— մենք կխոսենք, թե ինչպես անենք, որ ավելի լավ դասավորենք։ Այս հատունացած տղան արդեն կարող է դուրս գալ, և, ես կարծում եմ, նա պետք է ուրիշ, ավելի առողջ բնակարան գտնի։

— Ես էլ եմ այդպես կարծում,— ասաց Ասյան։

— Դեռ ժամանակ կա,— մրթմրթաց Մարկը։

— Ինչո՞ւ հետաձգել,— ասաց Ասյան, շրթունքները սեղմելով։

Մարկը կատաղել էր. նա նկատեց, որ Ասյան իրեն առարկում է հենց իր՝ Մարկի սեփական խոսքերով։

— Շատ լավ,— ասաց Մարկը։— Այդ դեպքում՝ վաղը։

— Ինձ փնտրելու ժամանակ տուր,— ասաց Աննետան։

— Նույնիսկ պետք չէ փնտրել,— նկատեց Ասյան։— Եթե ուզում եք, ես կարող եմ ձեզ Շատիլյոն փողոցի վրա մի բնակարան ցույց տալ, որը մի քանի օր առաջ իմ ծանոթ կանանցից մեկն է ազատել։

— Հենց վաղը եկեք կտեսնենք,— ասաց Աննետան։

Նա ձեռքը պարզեց Ասյային։ Ասյան վերադարձավ իր սենյակը և փակվեց։ Աննետան, որդու վրա կարեկցական ու ծաղրական մի հայացք գցելով, նրան բարի գիշեր մաղթեց։ Նա ձևացրեց, թե չի նկատում Մարկի վատ տրամադրությունը։ Գնաց իր սենյակը, որը վարձված էր նույն հյուրանոցում, երկու հարկ ներքևում։

Մարկը մնաց մենակ։ Նա խաղաղվելու համար բավական ժամանակ ուներ։ Նա նույնիսկ ժամանակ ունեցավ վատնելու ամեն տեսակի հպարտությունը և պահպանելու միայն վիշտը։ Բայց ցանկությունը չէր լքում նրան։ Նա անհանգիստ այս ու այն կողմ էր ընկնում, անտանելի մի ծարավ զգաց։ Աղբյուրը հենց այդտեղ էր, կողքին,— ընդամենը պատի հետևում։ Իսկ պատը անպետք սվաղից

էր, մռայլ թյուրիմացությունից։ Բայց վաղը նրանց միջև ընկած է լինելու ամբողջ քաղաքը։ Նա իրեն մտածելու հնարավորություն չտվեց։ Նրա ձեռքը բախեց պատը։ Մարկն այդ հազիվ էր արել, երբ արդեն սկսեց զղջալ։ Նա ուզում էր գոռալ. «Զգա՛ք»։ Բայց գոռալու կարիք չեղավ. Ասյան չեկավ։ Պատի հետևում ոչ մի շարժում չտվեց։ Մարկը, շփոթահար, վրդովված, իր ձեռքերն էր կրծոտում... Նա սպասում էր... Մոտենում էր դիշերը։ Գիշերն եկավ։ Տանիքների վրա տարածվեց ժամացույցի հարվածների Սորբոնից եկող հնչեղ ձայնը. ժամացույցը խփում էր ժամը տասնմեկը, տասներկուսը։ Մարկը տանջվում էր։ Նա պառկած էր երեսով դեպի պատը, վերմակի տակ կուչ եկած, ծնկները կծկած ու քաշած իրեն, —ինչպես գունդ ու կծիկ եկած շունը։ Նա ի՞նչ էր ուզում։ Կոպտորեն տիրանա՞լ... Ոչ։ Նա չէր կարող ասել, թե ինչ է ուզում... Այդ կնոջը, այն, ինչ նա պահում է իր կրծքում, այն, ինչ նա թաքցնում է, այն, ինչ Մարկը զգում է այդ կյանքի մեջ, այդ հոգում,— նրա ամբողջ վատը, նրա ամբողջ լավը։ Մարկն ուզում էր բոլորը։ Նրան պետք էր այդ հոսանքը, որպեսզի դա խառնի իր հոսանքի հետ։ Այդ հոսանքն ի՞նչ է տանում իր ջրերում։ Մարկն այդ չգիտի։ Նրան այդ ջրերը պետք են։ Նրան պետք է ամեն ինչ... Եվ որպեսզի այդ բոլորն ունենա, անհրաժեշտ է կոպտորեն տիրանալ։ Դա միակ ճանապարհն է։ Բայց ամբողջ արյունն այդ տղայի մեջ կապստամբեր, եթե դուք նրան ասեիք, որ նա հենց այդ է ուզում։ Նա կբղավեր. «Ո՛չ»—և միանգամայն անկեղծ կլիներ։ Նա նման էր դեպի գետը սլացող առվակի։ Նա չի ձգտում դեպի գետը, նա ձգտում է դեպի ծով։ Եվ նրան պետք է արյան այդ ներարկումը, որպեսզի ավազներում չխլանա ու կանգ առնի... Մարկի բերանն Ասյայի արյունն իր մեջ ներծծելու ծարավի է... Հանկարծ այդ չորացած բերանը կպավ միջնորմին։ Նա շշնջաց.

— Ա՛սյա...

Ամենանուրբ լսողությունը չէր կարող որսալ այդ շշնջյունը։ Անցավ մի քանի րոպե։ Նա բարձրաձայն կրկնեց.

— Ա՛սյա...

Գերեզմանային լռություն։ Մարկն Ասյային տանել չի

կարողանում։ Նա ատելությունից խեղդվում է։ Ընկնում է անկողնու վրա, և նրա ձեռքերը վզին փնտրում են անտեսանելի այն օղակը, որը խեղդում է նրան... Եվ հանկարծ շնչառությունը վերականգնվում է, հորդում է օդը։ Դեռ չլսած, նա տեսնում է...

Դուռը բացվեց, կինը ներս մտավ։

Մարկի սենյակից հեռանալով, Ասյան իր սենյակում նստեց մահճակալին, անշարժ ու լուռ, կատարյալ մթության մեջ։ Նա բոլորը լսել էր,— սկսած պատին հասցրած առաջին հարվածից, որից նրա հոգում զայրույթ բռնկվեց, և վերջացրած առաջին, հաղիվ որսալի շշնջոցով, երբ նա հորդող քնքշությունից քիչ մնաց գիտակցությունը կորցներ։ Խիստ հարվածները հետևում էին մեկը մյուսին, և Ասյան գրեթե միաժամանակ և սառույց էր, և բոց, արյուն և ամենակատարյալ անզգայություն... Ասյան որոշեց չշարժվել... Բայց ինչո՞ւ։ Ի՞նչ արժե նրա համար այդ տղամարդուն վերցընելը, եթե ինքը նրան ուզում է։ Ասյան այնքա՞ն շատերին է վերցրել... Բայց այս մեկին—ոչ։ Ասյան տարված էր այս մեկով։ Եվ այդ չէր ուզում։ Նա չէր ուզում այլևս տրվել պատրանքներին... Եվ քանի որ նա իսկապես սիրում էր (Ասյան միայն չէր ուզում այդ խոստովանել), ապա անհանգստանում էր ոչ միայն իր համար, Ասյան անհանգստանում էր նաև Մարկի համար, նա վախենում էր Մարկին չարիք պատճառել։ Նա գիտեր (այս մեկը նա խոստովանում էր), որ ինքը չի պատկանում անշառ էակների թվին։ Ով իրեն վերցընի, կվերցնի և հոգին, տանջահար, տվայտանքի ենթարկված, քաղցած հոգին, նրա խոնջացած, այրվող ոտքերը, որոնք մինչև վերջին շունչը չեն դադարի քայլելուց,— կվերցնի նրա անցյալը, կվերցնի նրա ապագան... Դա չափազանց շատ էր չամրացած և կրակոտ պատանու համար, որին նա ամբողջ ժամանակ տեսնում էր և գրկում, մթության մեջ նստած... Նա շոշափում էր Մարկի թույլ ոսկորները։ Նա այդ ոսկորներն իր ձեռքերի մեջ էր զգում և վախենում էր, որ ահա ուր որ է հիմա դրանք կճրթճրթան... Նա ետ էր տանում ձեռքը, բայց ձեռքը նորից էր վերադառնում։ Նա չէր կարողանում կտրվել...

Ասյան ասում էր. «Ո՛չ», ետ էր հրում Մարկին և այնու-

ամենայնիվ փնտրում էր այնքան ժամանակ, մինչև որ, վերջապես, ձեռքերն ու ոտքերը սենյակից դուրս չտարան Ասյային։ Նա ոտաբոբիկ հայտնվեց Մարկի շեմին, վրդովված ու զայրացած իր նկատմամբ ունեցած բռնությունից, ատելով նրան, ով իրեն ատում էր, պատրաստ կատաղությամբ բղավել նրա երեսին.

«Ինչ եք ուզում ինձանից»։

Ասյան վազեց դեպի Մարկը և բախվեց նրան...

Հիմա նրանց մարմինների թուլացած հանգույցը բացվել էր։ Բայց հոգիները նրանց մնում էին կապված։ Միմյանց սեղմվելով, նրանք զգում էին, թե ինչպես է լցվում նրանց մեջ միևնույն արյունը, ինչպես է այդ արյունը ամբողջ մարմնով մեկ տարածում իր հանգիստ ջերմությունը, իր ոսկե ալիքները։ Եվ Մարկը, հարբած իր որսով, գրկում էր նրան, ծիծաղում էր և ասում.

— Դու իմն ես, դու իմն ես... Հիմա. դու իմն ես...

Բայց Ասյան լուռ մտածում էր. «Ես քոնը չեմ։ Ես իմը չեմ, ես ոչ մեկինը չեմ»։

Եվ այնուամենայնիվ նա Մարկին սեղմում էր իր գըրկում... Բարակ ողնաշարը, նուրբ դաստակաները... Թվում էր, թե Ասյան կարող է դրանք կոտրել... Քնքշությունը եզրեեզր լցրել էր Ասյային։ Նա արագ մի շարժումով կռացավ և ծածկեց դրանք համբույրներով։

Մարկը հառաչեց, իր երկար դողդողացող մատները սահեցնելով նրա վառվող դեմքի վրայով, —Ասյան ագահորեն դրանք բռնում էր բերանով։ Իսկ Մարկը շնորհակալությամբ համակված խոսում էր, խոսում, գեղգեղում, ինչպես թռչունը, բացում էր ամբողջ հոգին՝ միամիտ ու անկապ խոսքերով, թափում էր այն ամենը, ինչը նրա մեջ ամենախորքում էր, կատարյալ անկեղծությամբ պատմում էր իր միայնակության մասին, իր «ես» նվիրական գաղտնիքների և ճակատագրի մասին,— դրանք տալիս էր անտեսանելի կնոջը, իսկ այդ կինը լսում էր, երեսը թաքցնելով Մարկի կրծքին։ Այդ կինը նրան լսում էր քնքշանքով, դառնացած և ծաղրանքով։ Մարկն իրեն հանձնում էր Ասյային, մտածելով, որ ինքը ծանոթ է նրան։ Մինչդեռ ինքը ոչինչ չգի-

տեր նրա մասին, նրա կյանքի մասին, նրա սպիների և չհարթվող հետքերի մասին, որոնք Ասյայի վրա թողել էր անցյալը, այն մասին, թե ինչպիսի գանձեր են պահպանվել ճահճի հատակին, ոչինչ չգիտեր այդ կնոջ հոգեկան խորության մասին... Եթե Մարկը կարողանար լսել նրա խոստովանանքը, նա կասեր.

«Քո հոգու խորքը ես գիտեմ շատ ավելի լավ, քան դու ինքդ... Ես չեմ կարող հաշվել, թե քանի օր ու գիշերներ են անցել քո գլխավերևով, ես չգիտեմ քո մակերեսը, բայց խորքին հպվել եմ ես»։

Ոնց իմանաս, նրանցից ո՞վ էր իրավացի։ Սիրո խթանը խոր է մխրճվում, նա գիտակցությունից այն կողմ է անցնում։ Բայց այդ խթանը կույր է։ Նա ինչ-որ բանի է հպվում, ինչ-որ բանից է կպչում ինքն էլ չգիտի ինչից,— նա ոչինչ չի տեսնում։

Եվ այնուամենայնիվ, նա բռնում է... Երբ դեղին լուսամուտները ցերեկային լույս թափանցեց, այսօր առանձնապես դեղին (դրսում անձրև էր գալիս), Ասյան խոնարհվեց իր երիտասարդ բարեկամի վրա, առավոտվա դեմ Մարկը, վերջապես, քնեց։ Իսկ Ասյան ամբողջ գիշերն աչքը չփակեց... Նա նայում էր Մարկի հոգնած դեմքին, նրա երջանիկ բերանին, նրա ճկուն և անօգնական մարմնին։ Նրանց ոտքերը միահյուսվեցին, և Ասյան չէր կարողանում դուրս պրծնել։

«Որտե՞ղ է իմը։ Որտե՞ղ է նրանը,— մտածեց Ասյան։— Մենք հիմա խառնվել ենք...»։

Խոնջանքից ու կրքից ցանկությունը բռնկվեց Ասյայի մեջ նոր ուժով... Բայց նա տիրապետեց իրեն. «Ոչ, պետք չէ։ Նա ինձ հետ ի՞նչ պետք է անի։ Եվ ես ի՞նչ եմ անելու նրա հետ։ Թող ամեն մարդ իրենը ետ վերցնի...»։

Ասյան դուրս պրծավ։ Դա դժվար էր։ Մարկն աչքերը բացեց։ Այդ հայացքից Ասյան քիչ մնաց շրմփար անկողնու վրա։ Բայց իրեն հաղթահարեց։ Նա համբույրներով փակեց Մարկի աչքերը.

— Քնի՛ր... Ինձ հարկավոր է մի րոպեով դուրս գալ։ Բայց ես քեզ չեմ լքում։ Ես քեզ տանում եմ ինձ հետ և ինձ թողնում եմ այստեղ...

Մարկն անչափ թույլ էր և, ոչինչ չպատասխանելով Աս-

յային, նորից խորասուզվեց քնի մեջ... Ասյան անհետացավ։ Նա ճիշտ էր ասում. Մարկի մի մասնիկը ներաճել էր Ասյայի սրտում, և նա իր հետ տանում էր այդ մասնիկը։ Փախչելն ուշ էր։

Ասյան բախեց Աննետայի դուռը.

— Ես ձեզ ազատ բնակարանի մասին էի ասում։ Ուզում եմ այդ ցույց տալ։ Եկեք գնանք։

Աննետան, արդեն հագնված, իրերը դասավորում էր ճամպրուկի մեջ, պատրաստվելով մեկնելու։ Նա դեմքով շրջվեց Ասյայի կողմը։ Մի հայացք բավական էր նրան, որպեսզի զգա, թե ինչ բոցաշունչ մրրիկներ են փոթորկվում այդ կրծքի մեջ։ Դա արդեն երեկվա հյուսիսային պաղեցնող քամին չէր։ Փոթորիկը չէր հանդարտվել, բայց մրրիկը փոխել էր ուղղությունը։

— Գնանք,— ասաց Աննետան։

Ասյան չլսեց, որ այդ կնոջ կրծքում նույնպես փոթորիկ կա—վշտի փոթորիկ։ Ասյայի բոցավառ աչքերը սահեցին բաց հեռագրի վրայով.

„Timon dead“[1]։

Արագ կարդացած բառերը իսկույն ևեթ ջնջվեցին հիշողությունից։ Իր ի՞նչ գործն է... Նրանք դուրս գնացին։

Սկզբում նրանք քայլում էին, կարճ ու դատարկ դիտողություններ փոխանակելով անձրևի մասին, որը դեռ շարունակում էր թափվել։ Այնուհետև, կտրել-անցնելով Լյուքսեմբուրգյան այգին, աբբա էպե փողոցի վանդակապատ դարբասից մինչև Վավեն փողոցը, նրանք լուռ էին։ Փոքրիկ կանաչ մարգագետինների վրա թափվում էր սառն անձրևը։ Հանկարծ Ասյան կանգ առավ, վերցրեց աթոռը և Աննետային ասաց.

— Նստեցեք։ Ես ուզում եմ ձեզ հետ խոսել։

Բարակ, համառ, թափանցող անձրև էր մաղում։ Ոչ մի անցորդ չկար։ Նրանք գտնվում էին բարձրադիր քարակերտ այծիկով հովվուհու կողքին։ Աննետան չառարկեց։ Նա նստեց աթոռին, որի վրայից ջուրը կաթկթում էր։ Ասյան տեղավորվեց կողքին։ Աննետայի հագին անջրանցիկ վերարկու էր, Ասյայի վրա գցած էր կարմիր գույնի հա-

[1] Տիմոնը մահացավ (անգլ.)։

սարակ և խիստ մաշված մի շալ, որով նա փորձ էլ չէր անում ուսերը ծածկել, իսկ հագին կիսաբրդյա գորշագույն բաց կրծքով մի շոր, որն անձրևից իսկույն թրջվել էր։ Աննետան կռացավ, որպեսզի Ասյային հովանոցով պաշտպանի։

— Ինձ համար մի անհանգստացեք,— ասաց Ասյան։— Ես այսպիսի բաներ չէ, որ տեսել եմ։ Եվ շորս նույնպես...

Աննետան այնուամենայնիվ շարունակում էր նրան պաշտպանել անձրևից։ Եվ, մինչ Ասյան պատմում էր, նրանք երկուսն էլ, միանման հափշտակված, ավելի ու ավելի էին մոտենում իրար և շուտով, վերջապես, նրանց գլուխներն սկսեցին իրար կպչել։

Ասյան սկսեց ex abrupto[1].

— Ահա արդեն հինգ տարի է, ինչ ինձ քշում են Եվրոպայի բոլոր գետերի ջրերը։ Ես չեմ վախենում մի ավելորդ անգամ թրջվելուց։ Ես լավ եմ ուսումնասիրել տիզմի և մրի այդ հոտը, որոնցով ներծծված են ձեր անձրևները։ Մեծ քաղաքների ջուրը չի լվանում—կեղտոտում է։ Բայց ես արդեն հարկադրված չեմ լինում պահպանել իմ կնգումի մորթին։ Նա վաղուց է կեղտակոլոլ եղել։ Նրա վրայից ամեն տեսակի նախիրների հոտ է գալիս։ Զգո՞ւմ եք... (Ասյան նրա քթին մոտեցրեց իր շալը)։ Այս շալը քարշ է եկել Ռակրաինայի կպչուն ցեխերի միջով, նրա սարսափելի շուկաներում, հետո հայտնվել է այստեղ և սկսել է ծածկվել ձեր սարսափելի անտարբերության փոշով։

— Ի՞մ,— շշնջաց Աննետան։

— Ձեր Արևմուտքի։

— Ես ոչինչ սեփական չունեմ, բացի իմ անձից,— առարկեց Աննետան։

— Դուք երջանիկ եք,— ասաց Ասյան։— Ես նույնիսկ դա էլ երբեք չեմ ունեցել... Ինձ լսեցեք։ Ինձ հարկավոր է խոսել... Եթե դուք զզվեք կամ ձանձրանաք լսելուց, կգնաք... Ես ձեզ չեմ պահի։ Ես երբեք ուժով ոչ ոքի չեմ պահում... Բայց փորձեք...

Աննետան լուռ զննում էր երիտասարդ կնոջ պրոֆիլը, նրա ուռուցիկ ճակատը։ Իսկ նա, գլուխն անձրևի տակ պահելով ու հոնքերը կիտած, հեռուն էր հառել իր մռայլ և չտեսնող հայացքը։ Նա ամբողջովին իր մտքերի հետ էր, սուզվել էր իր հիշողությունների մութ զնդանը։

[1] Միանգամից, առանց նախաբանի (լատ.)։

— Դուք ավելի, քան երկու անգամ, մեծ եք ինձանից,— ասաց Ասյան։— Բայց մեր երկուսից ես ավելի ծեր եմ։ Ամեն ինչ իմ գլխով արդեն անցել է։

— Ես մայր եմ,— մեղմորեն ասաց Աննետան։

— Ես էլ եմ մայր եղել,— խուլ ձայնով պատասխանեց նրան Ասյան։ Աննետան ցնցվեց։

— Ձեր երեխան այլևս չկա՞,— շշնջաց զգուշաբար Աննետան։

— Նրանք այդ երեխային սպանեցին իմ կրծքին։

Աննետան իր մեջ խեղդեց ճիչը։ Ասյան նայում էր իր շալի վրայի բծին.

— Ահա, ահա ձեզ։ Տեսե՛ք... Մտածեցե՛ք... Նրանք գառնուկի նման մորթեցին երեխային...

Աննետան, կարծես պապանձված, բնազդաբար ձեռքը դրեց Ասյայի ուսին։

— Իմ խե՜ղճ...— վերջապես շշնջաց նա։

Ասյան ոտն ազատեց և շոր-շոր ասաց.

— Թողե՛ք ինձ... Կարեկցանքի ժամանակ չէ... Գուցե ես ինքս էլ նույնն անեի, ինչ-որ նրանք։

— Ո՛չ, —բացականչեց Աննետան։

— Իսկ ես ուզում էի, —շարունակում էր Ասյան։— Ես դրանից հետո երդվեցի նրանց բոլոր երեխաներին սպանել, ով էլ որ ձեռքս ընկնի... Բայց չկարողացա... Եվ երբ մի մարդ ուզում էր... վրեժ լուծել իմ փոխարեն... ես քիչ մնաց նրան սպանեի։

Ասյան լռեց։ Մի քանի բոպե միայն լսվում էր, թե ինչպես է բարակ անձրևը թափվում, թափվում, թափվում։ Աննետան ձեռքը դրեց Ասյայի ծնկին։

— Ասացեք։

— Ինչո՞ւ ինձ ընդհատեցիք։

Եվ շարունակեց.

— Ես ծնված չեմ այսպիսի ժամանակների համար։ Պետք էր հարմարվել։ Ժամանակը եկավ։ Այդ ժամանակն ինձ կոտրեց։ Ոչ միայն ինձ։ Այնտեղ ինձ նման հազարները կային. մենք պառկած էինք աղջկական անկողիններում, իսկ մեզանից բաց թողին ամբողջ արյունը... Կգա նաև Արևմուտքի աղջիկների հերթը... Մեր սրտի ամբողջ արյունը,

մեր երազանքների ամբողջ արյունը քամեցին մեր միջից։ Շատերը չդիմացան։ Ես մնացի։ Ինչո՞ւ։ Չգիտեմ։ Իսկ դուք գիտե՞ք... Եթե մեկն ու մեկը ինձ ասեր, երբ ես մահամերձ պառկած էի, որ ես կապրեմ մինչև այսօր, ես իմ հոգին կթքեի նրա երեսին։ Ես կճչայի նրան. «Ո՛չ...»։ Բայց ահա ես ապրեցի... Եվ ապրում եմ... Եվ ուզո՞ւմ եմ ապրել... Մի՞թե դա սարսափելի բան չէ։ Ի՞նչ են ուզում մեզնից։ Ո՞վ է մեզ ուզում, երբ մենք ինքներս, մենք ինքներս մեզ չենք ուզում։

— Մեր ճակատագիրը,— ասաց Աննետան։— Մեր հոգիների ճակատագիրը։ Նրանք պետք է երկար ճանապարհ կտրեն։ Դա ինձ ծանոթ է։ Կանանց ճակատագիրը, որոնք իրավունք չունեն հասնելու մահվանը, մինչև չանցնեն սիրո, հուսահատության և խայտառակության եռակի խորհրդավորությունը։ Ասա՛։

Ասյան պատմեց անդորրավետ տանն անցկացրած իր քնքուշ ու խաղաղ մանկությունը։ Դա մի պատմություն էր այն մասին, թե ինչպես է երբեմն անսպասելի և դաժան վերջանում կյանքի քաղցրությունը... Բարեհոգությունը, անկայունությունը, տարընթացությունը... ճահճային շուշանների բուրմունքը։ Քաղցր-մեղցր, թեև անկեղծ սիրո հեղեղները,— որը կոպեկ էլ չարժի,— ինչ-որ անորոշ մարդկության նկատմամբ ունեցած սիրո, հոգեկան սառնության և գաղտնի ինքնահիացման հեղեղները։ Իսկ միևնույն ժամանակ գիտակցության որդը կրծում է հասունացած ճյուղից պոկվելու պատրաստ պտուղը։ Մարդու ուժեր չեն ներում՝ շար լինելու համար։ Հենց միայն դաժանության մասին ունեցած միտքը մարդու մեջ ջղաձգություն էր առաջացնում։ Մարդիկ երանությամբ էին շնչում մառաններում հոտող գեղեցիկ խնձորների ծանր, թուլացնող, հեղձուկ և սրտախառնուկ առաջացնող հոտը։ Հղփացած գուրմանները իրենց տոլստոյականներ էին կոչում, որը նրանց չէր խանգարում ըմբոշխնել Սկրյաբինին և հերմաֆրոդիտ Նիժինսկու էլաստիկ ամտրաշանները։ Սակայն նրանք ընդունում էին նաև Ստրավինսկու կոպիտ բացախոսությունները, որոնք դուր էին գալիս, ինչպես դուր է գալիս համեմունքը... Բռնկվեց պատերազմը։ Բայց նա դեռ ծավալվում էր այնտեղ... Եվ այդ այնտեղը այնքա՞ն էր հեռու։ Ինչպես դեկորացիան բեմի

խորքում։ Պատերազմը ևս մի տեսակ համեմունք էր։ Եվ տասնհինգ տարեկան դեռահաս աղջիկը նայում էր, թե ինչպես են բացվում իր կրծքի ծաղիկները, և ավանջ էր դնում իր փոքրիկ պուրակում սիրո անվստահ երգին։ Էգոիստական պաստորալը շարունակվում էր։ Ընտանիքը փոխադրվեց գյուղ, և կյանքն այնտեղ անցավ անվիշտ ու անզբրկանք։ Մեծ անմշակ այգում լիքը մորի էր, հաղարջ և մոլախոտ։ Երկու երեխա, քույր և եղբայր, արևածաղիկ էին շրթում և բաժանում միմյանց հետ իրենց դիտողություններն ու երազանքները։ Նրանք սիրտ խառնելու չափ պիրոժոկներ էին ուտում և Բլոկի ու Բալմոնտի ոտանավորներ։ Այն ժամանակ մոդա էր էսթետիզմով տարվելը, որը համեմվում էր մի քանի պտղունց թեոսոֆիայով, և ժողովրդին խոսքով երկրպագություն մատուցելը։ Նարոդնիկությունը[1] անորոշ կարեկցանք է և թուլամորթ իդիլիական հավատ աղքատ, խավարամիտ, անլվա ժողովրդի նկատմամբ, որն անհասանելի իմաստության և բարության գանձեր է թաքցնում, և այդ գանձերը նիրհում են նրա մեջ, ինչպես ջուրն է նիրհում սառույցի տակ։ Ասյայի հոր կրոնը կաբինետային իդեալիզմն էր—բարի բնության հավատը, մարդկության առաջադիմության հավատը, որն անշեղորեն ընթանում է իր ճանապարհով, իրադարձությունների իմաստուն հավատը, նույնիսկ պատերազմի և պարտության իմաստության հավատը, որոնցից հետո ինքն իրեն կգա ոսկեդարը «սուրբ Ռուսիան», ինչպես նրան հասկանում էր ռուսական բուրժուազիայի լուսավորված և լիբերալ խավը նրա բարի հանճարի՝ Կորոլենկոյի գլխավորությամբ, որին նկատի էին ունենում որպես ապագայի իդեալական Ռեսպուբլիկայի նախագահ... Նույնիսկ մեծ հոկտեմբերյան գրոհի նախօրեին Պետրոգրադում չէին հասկանում, որ դրությունը լուրջ է։ Այնպես էին վստահ իրենց ուժերին, որ նույնիսկ ինքնապաշտպանության նախազգուշական միջոցներ ձեռք չառան։ Եվ արքենացան պարտված, չհասցնելով մարտի բռնվել... Աշխարհի դեմքը փոխակերպվել էր։

1 Նարոդնիկությունն իրենից ներկայացնում էր ռուսական ինտելիգենցիայի լայն նախահեղափոխական շարժում, ինտելիգենցիա, որը «գնում էր ժողովրդի մեջ»— Ռ. Ռ.։

Կարծես ստորգետնյա հարվածը ցնցել էր ամբողջ երկիրը, մի ծայրից մինչև մյուսը։ Ամեն ինչ փլվեց։ Վիթխարի օդային զանգվածների տեղաշարժը ցրիվ էր տվել հազարավոր բներ։ Խելագար թռչունների երամները սլանում էին իրենք էլ չիմանալով, թե ուր, ընկնում էին և միմյանց գտնում փախչող բանակների հորձանուտում։ Կյանքից վայրկենապես պատռել էին բոլոր ջածկույթները, բոլորը մինչև վերջը։ Եվ այդ ժամանակ մարդիկ զարմանքով տեսան, ինչքան թանձրացած չարություն և ատելություն է կուտակվել ժողովրդի սրտում, որը դեռ երեկ բարի էր թվում և գանգատվում իր բախտից։ Տեսան գազանին, տեսան նրա խելագար աչքերը, տեսան արյունոտ դունչը, զգացին նրա մահաբեր շունչը, նրա տուփանքը... Սառան, որին սովոր էին վստահել, որի աչքի առաջ մեծացել էին երեխաները, որը խոնարհ և բարեհոգի հոգատարությամբ խնամում էր նրանց, հանկարծ դարձավ վտանգավոր, ինչպես վայրի գազանը. նա փորձում էր բռնաբարել տիրոջ դստերը... Եվ ահա սկսվեց փախուստը՝ Կերենսկու կողմնակիցների հետ միասին, իսկ նրանք արդեն խառնվել էին սպիտակների հետ։ Եվ յուրայինների մեջ, իր սեփական լագերում, ևս նույն բնազդնե ի ժայթքումն էր։ Ընկավ պաշտպանության վերջին գիծը. խելագարությունը համակում էր երիտասարդ աղջկան։ Գազանը շնչում էր ուղղակի մարդկանց երեսին։ Մարդիկ դառնում էին նրան նման...

— Ես էլ էի գազան։ Եվ, ինչն ամենից սոսկալի է, ես գազան դառա առանց որևէ ճիգի։ Միանգամից... Նշանակո՞ւմ է այդ արդյոք, որ ես միշտ գազան եմ եղել, որ զոռով մեր դեմքին քաշած կուլտուրականության դիմակը նեղում էր մեզ և, որ մեր ձեռքերը քոր էին գալիս՝ այդ դիմակը մեր վրայից պատռելու համար։ Հայրս սարսափով էր նայում ինձ... Չէ որ ծերունիները չեն կարողանում իրենց մաշկը փոխել։ Քանի նա կենդանի էր, ես դեռ մի կերպ ինձ զսպում էի։ Էն էլ, վա՜յ էդ զսպելուն։ Նա մեռավ, երբ ես արդեն հղի էի։ Նրա բախտից էր, որ դա այդպես էլ չիմացավ... Հորս հետ միասին ես թաղեցի այն աղջկան, որը ես առաջ էի։ Այդ աղջկան հորս հետ գցեցի ճանապարհին և գնացի։ Ես նրան կորցրի, ես կորցրի ամեն ինչ, նույնիսկ

անունս, նույնիսկ իմ անձի զգացողությունը։ Երկու ամբողջ տարի ես ապրում էի առանց անունի, ինչպես խելագարը, որը վազում է նախորի հետևից, իսկ նախիրը սլանում էր խելագար վազքով... Դեռ այսօր էլ, նույնիսկ հենց հիմա իմ աչքերը լիքը փոշի է։ Ի՞նչ ասես, որ չեմ տեսել։ Ի՞նչ ասես, որ չեմ արել։ Ինչե՞ր ասես, որ չեմ տարել։

— Դժբա՞խտ աղջիկ։ Բավակա՞ն է,— ասաց Աննետան, ձեռքով սեղմելով Ասյայի ծունկը։— Քշփորելու կարիք չկա...

— Իսկ ես ուզո՞ւմ եմ,— ասաց Ասյան։— Ես ինձ չեմ խնայի։ Արդեն ասել եմ. եթե ձեզ այդ հոտը դուր չի գալիս, — գնացե՛ք։

Նա չէր խնայում Աննետային։ Չէր խնայում իրեն։ Նա պատմեց սարսափելի փախուստի, այդ անսանձելի ցած գլորվելու, բոլոր թռիչքների և տապալումների մասին։ Նա բաց չթողեց ոչ մի ստորացում և ընդամենը չէր ցուցաբերում ոչ ափսոսանք, ոչ ամոթ։ Նրա պատմությունն ստույգ էր, արագ և չոր։ Նա գլուխը պահում էր ուղիղ, նայում էր խիստ հայացքով, իսկ նրա արցունքներին փոխարինում էր այտերի վրայով հոսող անձրևը։ Աննետան կլանված էր։ Նա լսում էր շունչը պահած։ Ապրիլյան այդ առավոտ, որին անընդմեջ անձրևը ակվարիում էր դարձրել, նրա աչքի առաջ ծավալվում էր փախուստի ցնորական պատկերը, և նա խոնարհվում էր այդ անգութ, անվեհեր և սեղմ խոստովանանքի անզիջող ուժի առաջ, խոստովանանք, որում ոչ անկեղծ զղջում կար, ոչ շինծու։ Աննետան այնքան էր հմայված կերպարների կախարդական ուժով, որ նույնիսկ չէր էլ մտածում նրանց բարոյական իմաստի մասին։ Բաբախող արտով նա հետևում էր դիվային սրսին և ինքն էլ չգիտեր, թե այդ կճատաքիթ պրոֆիլը, որից նա աչքը չէր հեռացնում, սկյութական Դիանայի՞ն է պատկանում, թե՞ այն կենդանուն, որին հետապնդում էր ինքը՝ Դիանան։ Իսկ հովանոցի վրայից, որի կոթը Աննետան մեքենայաբար բռնել էր, ջուրը թափվում էր իր ոտքերին։

Այդու պահակն անցավ նրանց կողքով և նայեց այդ երկու կանանց, բայց կանայք նրան չնկատեցին։ Մի քանի քայլ անելով, նա շրջվեց, մի անգամ էլ նայեց կանանց,

նրանց անշարժ կեցվածքներին, ուսերը թոթվեց ու գնաց։ Քի՞չ գժեր կան աշխարհում։ Փարիզում նրանց ընտելացել են...

Ասյան պատմում էր հիմա տարագրության կյանքի մասին, խայտառակության և անարգանքի մասին, ստրկական, ապանիչ աշխատանքի մասին, որն այնքան մարդկանց է կործանել, որոնք վտարանդության մեջ էլ էին պահպանել իրենց հպարտությունը, կամ հասցրել նրանց խելագարության։ Բայց փորձությունները նրա հոգին կոփեցին միայն։ Նրան փրկեցին հպարտության և արհամարհանքի վայրի պոռթկումը, մռայլ միայնակությունը, որի մեջ նա իրեն զնդանել էր, անկեղծությունը, որ նրան այցելել էր այդ սարսափելի շրջանում, երբ նա կամավոր կերպով խզեց իր բոլոր կապերը կյանքի և մարդկանց հետ, իր միայնակ ու կորած «ես»-ի հիացական հատատատումը, այդ անհայտ «ես»-ի անըմբռնելի ուժը, «ես»-ը, որը աշխարհին մարտահրավեր նետեց և հանձնվելու մտադրություն չուներ։ Երկարամյա կատաղի պայքարը, որում նրան հաջողվեց պաշտպանվել ոչ միայն կողմնակի մարդկանցից, այլև իրենից, իր սեփական թակարդներից և հոգեկան փոթորիկներից։ Աննետան Ասյայի մեջ հսկայական ուժ էր գուշակում, ուժ, որը ոչ կողմնացույց ուներ, ոչ ծանրության կենտրոն, ուժ, որը միայնակ ճգնում էր՝ այդ կենտրոնը գտնելու համար, և չէր գտնում։ Նա իր համար ուղղություն էր փնտրում, կյանքի իմաստը փնտրում էր ծանր, անկույս հանապազօրյա աշխատանքում, որը լի էր ամենանողկալի նվաստացումներով, տոմի սարսափներում—և այդ բոլորը գերադատում էր այն ապուրից, որն ինքը կարող էր ստանալ, եթե համաձայնվեր ենթարկվել որևէ կուսակցության կամ որևէ մի մարդու։ Աննետան ճանաչում էր անողոք հպարտության այդ մաքուր ալմաստը, դեպի անկախությունն ունեցած այն անսանձելի ձգտումը, որոնք փրկել էին իրեն։ Նա խսկույն ևեթ իր փորձված աչքով դրանք ճանաչեց կանացի հոգու քառսում, հոգի, որին ամայացրել էր կատակլիզմը։ Եվ այն ամենի միջև, ինչ որ կար օտարամուտ այդ հոգում, նա կարողացավ նկատել բարոյական և հոգևոր ուժերի այն կուտակումները, որոնք թաղված էին մի ամբողջ աշխարհի ավերակների տակ։ Աննետան դրանց ավելի լավ էր տեսնում, քան

Ասյան, որովհետև Ասյան իր խոստովանանքային մոլության ժամանակ ինքն իր դեմ գազազել էր։ Նա խոսում էր, խոսում,— Աննետան լսում էր, լսում էր ու մտածում... Ինչքա՞ն երկար դա շարունակվեց... Մի ժա՞մ։ Ավելի՞ շատ... Երկու նախադասությունների միջև ընկած ժամանակամիջոցում ցրիվ եկան, ինչպես պղնձե սկահին գցած մի բուռ կոտորահատ, փոքրիկ լիցեյից տարածվող ժամացույցի հարվածները... Ասյան կանգ առավ, մտքի թելը կորցրեց, ձեռքը քսեց թաց ճակատին... Նա դուրս եկավ անդունդից և արդեն չէր հասկանում, թե ինքն ինչ էր անում այնտեղ, ինչի համար նա այդ բոլորը պատմեց...

— Դուք ի՞նչ եք այստեղ նստել ու ինձ լսում...— կոպտորեն հարցրեց նա։

Աննետան չհասցրեց պատասխանել։ Հիշողությունները շարունակում էին դուրս լողալ։

— Ես արդեն մի քանի տարի է, ինչ դրան չեմ դիպել... Այդ ի՞նչ է պատահել ինձ այսօր։ Այս ի՞նչ արեցի ես...

Ասյան հառաչեց և մեքենաբար անձրևից թրջված մազերը մզեց, նույնիսկ չնկատելով, որ ջուրը շիթերով հոսեց մեջքն ի վար։

— Ախ հա՜...— ասաց նա։— Հիմա դուք գիտեք, ես ով եմ։ Վերցրեք ձեր տղային և տարեք։

— Լավ,— ասաց Աննետան։ Չէ որ մենք սենյակ ենք փնտրում նրա համար։

— Բայց հենց այս րոպեին։ Որպեսզի նա ինձ այլևս չտեսնի, և որպեսզի ես էլ նրան չտեսնեմ։

— Դա վտանգավո՞ր է։

— Ես սիրում եմ նրան։

— Իսկ նա սիրո՞ւմ է ձեզ։

Ասյան ուսերը թոթվեց.

— Եթե ես սիրում եմ, ուրեմն ինձ էլ են սիրում։

— Ես ի՞նչ կարող եմ անել, եթե նա ձեզ սիրում է։

— Դուք շատ բան կարող եք անել։ Դուք միակն եք, որ ազդեցություն ունեք նրա վրա։ Ես նրան գիտեմ։ Ես ձեզ էլ գիտեմ։ Ես գիտեմ, ինչն է ձեզ կապում։ Ձեր հարաբերություններն ավելի մտերիմ և ավելի խորն են, քան սովորական մոր և որդու հարաբերությունները։

—Դուք ի՞նչ գիտեք։

— Ես կարդացել եմ ձեր նամակները։

Աննետայի շունչը կտրվեց։

Բայց Ասյայի մտքով չանցավ էլ ներողություն խնդրել։

— Ես անչափ երկար տապասեցի։ Ես ուզում էի նրան երեկ երեկոյան հեռացնել։ Պարզվեց, որ ուշ է։ Հիմա դժբախտությունն արդեն կատարված է։

— Դժբախտությո՞ւնը։

— Մարկը, երևի, ասեր բախտավորություն... Ես նույնպես այդպես կասեի, եթե ինքս ինձ լսեի, եթե ես չիմանայի այն, ինչ գիտեմ, այն, ինչ կատարվելու է։ Այնպես որ, նրան տարեք, քանի դեռ ուշ չէ։ Բայց շտապե՛ք։ Վաղը ես արդեն իմ գործողությունների համար պատասխանատու չեմ... Ես նրան կխլեմ ձեզանից, և նա դժբախտ կլինի։ Ես այդ չեմ ուզում։ Բայց դա անխուսափելի է։

— Իսկ դո՞ւք,— հարցրեց Աննետան։

— Ե՞ս։ Ես ի՞նչ։

— Ինչո՞ւմ է ձեր երջանկությունը։ Ինչո՞ւմ է ձեր դժբախտությունը։

— Դա ձեզ ի՞նչ։

— Ես ձեզ խնդրում եմ պատասխանեք։

— Դա կարևոր չէ։

— Դուք ասացիք, որ նրան սիրում եք։

— Իհա՛րկե։ Այլապես ես ինչո՞ւ պետք է նրա մասին ձեզ հետ խոսեի։

— Իսկ դա ի՞նչ է, դուք մի՞շտ եք ձեզանից քշում նրանց, ում սիրում եք։

— Ես մինչև նա ոչ ոքի չեմ սիրել... Այո, իհարկե, այն բոլորից հետո, ինչ ես ձեզ իմ մասին ասացի, դուք կթոթափեք ձեր ուսերը։ Ես էլ եմ ուսերս թոթվում... Եվ բավական է։ Դա գործին չի վերաբերվում... Ձեզ համար դա նշանակություն չունի։

— Ո՞վ գիտի,— նկատեց Աննետան։

Նա նայեց Ասյային։ Ասյան մինչև ականջները թրջվել էր։ Շորը սպունգի նման ուռել էր և կպել մարմնից։ Նրա տեսքն այնպիսին էր, կարծես լողանալուց հետո խալաթ էր հագել ու նստել։ Ասյան գունաթափված էր։ Նա նստել էր, ատամները սեղմած, գոնատ, կուզումած։

Աննետան տեղից վեր կացավ։

— Դե լավ, տուն գնանք։ Այդ բոլորի մասին ինձ մոտ տանը կխոսենք։

Աննետան իր անջրանցիկ վերարկուով ծածկեց Ասյայի ուսերն ու տարավ նրան։ Ասյան փորձում էր դիմադրել, բայց ուժերի մեծ վատնումը թուլացրել էր նրան։

Հարկ չկա մտածելու, թե Մարկի հետ հարաբերությունները խզելու նրա մտադրությունը բացատրվում էր Մարկին իրենից փրկելու Ասյայի անշահախնդիր, սիրով ներշնչված ցանկությամբ։ Ասյայի նման կնոջ ամենահրաբորբոք սերը չի կարող անշահախնդիր լինել։ Նա իսկապես էլ ուզում էր Մարկին փրկել, և այդտեղ նա չէր կեղծում։ Ասյան ինքը նույնպես ապշած էր իր ինքնահրաժարումից. չէ որ դա նշանակում էր սիրուն դավաճանել։ Բայց նախ և առաջ նա մտածում էր, որ ինքը փրկվի։ Նրան անհասկանալի էր թվում, թե այդ ինքն ինչպե՞ս կարող էր նորից տրվել կրքին. չէ որ նա երդվել էր երբեք այլևս չընկնել այն անիվի տակ, որն իր վրայով անցել էր։ Կրքի հետ ունեցած նախկին բախումներից նրա մեջ մնացել էին սարսափ ու սոսկում, որոնք ստրկության այդ տեսակի նկատմամբ հասնում էին ատելության։ Բայց արդյո՞ք այդքան ուժեղ էին եղել բախումները կրքի հետ, եթե նրանք հիշողություններ չէին թողել գլխապտույտի մասին։ Կիրքը նորից էր գայթակղում նրան։ Նա գիտակցում էր անդունդի ամբողջ վտանգը, զգում էր, թե ինչքան է ուժեղ նրա ձգողականությունը։ Այդ անդունդը Մարկն էր։ Մարկը կլանել էր Ասյային ամբողջությամբ. նրա ամբողջ մարմինը, որը հուրհրում էր ջահի նման, նրա ամբողջ հոգին, որ այրվում էր քնքշությունից, սիրելի տղայի նկատմամբ ունեցած կարեկցանքից, մայրական գաղտնի զգացմունքից, իր գերազանցության զգացումից, որն ուրիշ մարդու նկատմամբ իշխանություն էր տալիս, և հնազանդությունից, որն աղերսում է հովանավորության համար։ Իսկ այդ գիշերից հետո Ասյան ինքն այլևս ի վիճակի չէր կտրվել նրանից։ Նրա ուժը հազիվ բավարարեց Աննետային օգնության դիմելու համար։ Բայց ուժերի այդ լարումը փտտրեց նրան։ Աննետան, նրա ձեռքը բռնելով, քաշեց-տարավ հյուրանոց։ Ճանապարհին Ասյան մի բռնկում ևս ունե-

ցավ։ Զբոսայգում, այնտեղ, ուր ամենից շատ էին հրմշտում իրար, Ասյան հանկարծ կանգ առավ ու կանգնեցրեց Աննետային։

— Ազատեցե՛ք ինձ ձեր որդուց։ Տարե՛ք նրան,— գլուխ գրուված ճչաց նա։

— Իսկ եթե դուք հետո գաք և խլեք նրան, ես ի՞նչ անեմ այն ժամանակ,— հարցրեց Աննետան։

— Դա իմ գործը չէ։ Արեք ամեն ինչ, որպեսզի ես չկարողանամ նրան խլել։

Աննետան զգում էր, թե ինչ ջղաձգությամբ է ցնցվում Ասյայի ուսը, ինչպես է փշաքաղվում նրա ազդրը։ Հանկարծ ներվային լարվածությունը թուլացավ, և Աննետան ստիպված եղավ իր հետևից քարշ տալ թաց, ծանր, բայց հնազանդ մի հակ։ Նրանք մտան հյուրանոց։ Աննետան առաջարկեց Ասյային գնալ շորերը փոխել։ Բայց Ասյայի սենյակի դուռը ներսից փակ էր։

Իր սենյակն ընկնելու համար Ասյան պետք է անցներ Մարկի սենյակի միջով, իսկ նա այդ տեսքով չէր ուզում երևալ Մարկի աչքին։ Աննետան նրան տարավ իր մոտ, իսկ ինքը գնաց նրա սենյակը՝ սպիտակեղենի փոխնորդ վերցնելու։ Ասյան փորձում էր Աննետային չթողնել այդ, և Աննետայի մեջ կասկած առաջացավ, թե գոյություն ո՞ւնի արդյոք սպիտակեղենի այդ փոխնորդը։ Նա որդու սենյակի միջով անցավ ոտքերի ծայրերի վրա։ Մարկը դեռ երանությամբ քնած էր։ Աննետան մի ակնթարթ կանգ առավ, որպեսզի նրան նայի։ Ըստ երևույթին, Մարկը Ասյայի գնալուց հետո դեռ տեղից չէր շարժվել։ Աննետան, առանց աղմուկ հանելու, Ասյայի սենյակում հետազոտում էր խոնավությունից բորբոսնած պատի պահարանը։ Խղճուկ քուրջ ու փալասները, որոնք նա գտավ այնտեղ, ակամայից Աննետայի մեջ կարեկցանքի զգացում առաջացրին։ Բայց դրանց համեմատական մաքրությունը վկայում էր այն ջանքերի մասին, որոնք Ասյան գործադրում էր՝ կեղտի մեջ չխեղդվելու համար։ Աննետայի համար դա ծանոթ բան էր։

Վերադառնալով, նա Ասյային գտավ նույն տեղում։ Ասյան պատին հենված կանգնած էր։ Նրա ոտքերի մոտ մի փոքրիկ լիճ էր գոյացել։ Աննետան բռնեց նրա ուսից և սկսեց վրայից հանել մարմնից կպած շորը։ Ուշքի գալով, Ասյան

կոպիտ մի շարժում արեց, փորձելով դուրս պրծնել նրա ձեռքից։ Բայց Աննետան նրան բռնել էր պինդ.

— Հանգիստ կանգնեք... Ձեր ձեռքը բարձրացրեք։ Այդպե՞ս։ Շուտ արեք...

— Դատարկ բան է...— մրթմրթում էր Ասյան։— Ինչքա՞ն է պատահել, որ այսպիսի անձրևի տակ քնել եմ։

Աննետան խոսք բացեց այն մասին, թե Մարկն ինչպես է քնած, և Ասյայի անհնազանդ մարմինը մի ակնթարթում անշարժացավ։ Ժանգակեր հայելու մեջ Աննետան տեսավ Ասյայի ժպիտի արտացոլումը և նրան պատասխանեց ժպիտով։ Մարկը նրանց ընդհանուր երեխան էր։ Դրանում երկու կիները էլ նույն կարծիքին էին...

Աննետայի հմուտ ձեռքերը Ասյայի շորերը ոտից գլուխ արագ-արագ հանեցին։ Ուժեղ, ճկուն մարմինը, որը չէր համապատասխանում կլասիկ գեղեցկության պահանջներին, ստեղծված էր քայլելու, պայքարելու, սիրելու, երեխաներ ծնելու համար։ Հոդերն ամուր էին։ Մաշկը շատ թուխ էր, մաքուր, պիրկ, հին ոսկու նման փայլփլող։ Ջրից նա շողշողում էր... Աննետան սրբեց նրան։ Ասյան չէր դիմադրում։ Նա այլևս թաքցնելու ոչինչ չուներ։ Ամեն ինչ ցույց տվեց. և այն, ինչ ներսում էր, և այն, ինչ դրսից էր։ Մինչդեռ Աննետայի և Ասյայի միջև այսպիսի խոսակցություն էր գնում.

— Դուք Մարկին ինչի՞ համար եք սիրում։

— Սիրում եմ, որովհետև սիրում եմ։

— Ինչի՞ համար եք սիրում։

Ասյան հասկացավ.

— Ինչի համա՞ր եմ սիրում։ Ինչպես եմ սիրո՞ւմ... Սիրում եմ, ինչպես ընդհանրապես սիրում են,— քաղցից։ Բայց դա ոչ միայն մարմնական քաղց է։ Այդպիսի քաղցը կարելի է բթացնել։ Եվ ես դա մի անգամ չէ, որ բթացրել եմ... Բայց կա ուրիշ քաղց։ Այդ քաղցը չի կարելի ոչ բթացնել, ոչ խաբել։ Ես ճշմարտության, մաքրության քաղց եմ զգում։ Իսկ ձեր որդին ճշմարտացի է, նա իր մտքերում մաքուր է։ Նա մաքուր է, ինչպես դուք... Այո, ես գիտեմ, ինչ եմ ասում։ Եվ դուք նույնպես գիտեք... Միթե՞ կարելի է սխալվել այն բանից հետո, երբ վեց տարի թպրտացել ես ժա-

մանակակից հոգեկան նեխածության մեջ։ Եվ եթե հանկարծ քո առաջ դուրս է լողում մի մաքուր հոգի, ինչպե՞ս կարելի է չնետվել նրա վրա։

— Իմ որդին ձեզանից ավելի անմեղ չէ, հազիվ թե նա ավելի քիչ փչացած լինի, քան դուք։ Նա շատ սխալներ է թույլ տվել։ Դեռ այսօր էլ... Ի դժբախտություն նրա, ես նրան օժտել եմ անհանգիստ բնավորությամբ։ Ես հավատում եմ նրա բնածին ազնվությանը և կամքին, հավատում եմ, որ մի օր նա հոգեկան ներդաշնակության կհասնի, բայց նա հեշտությամբ չի հասնի դրան, և ոչ էլ դա վաղը կլինի...

— Գիտեմ, գիտեմ։ Բայց ես ի՞նչ կարող էի անել այդ ներդաշնակության հետ։ Այո, նա դրա կարիքն զգում է։ Եվ փա՜ռք աստծու։ Ես ձեր որդուն տեսել եմ մերկ,— այնպես, ինչպես դուք եք հիմա ինձ տեսնում,— մերկ մարմնապես և մերկ հոգեպես։ Այն ժամանակից ի վեր, ինչ ես հետևում եմ նրան, ասենք նաև հիվանդության ժամանակ, նա, կարծեմ, ամեն ինչ իմ դեմ արդեն բացել է... Ոչ, ձեր գառնուկն անբիծ չէ։ Ես այդ գիտեմ... Այլապես ես նրան այդպես չէի սիրի։ Ես չեմ սիրում,— ասենք, դուք էլ չեք սիրում,— ճերմակ մկկացող գառներին, որոնց դնչից կախված է կաթի կաթիլը։ Մարդ չէ նա (դուք լինեք, ես լինեմ, նա լինի), ով չի կռվել կյանքի հետ և նրա գրկում իր բրդից փնջեր չի թողել։ Պետք է, մարդ պետք է և՛ կեղտերի, և՛ փշերի միջով անցնի։ Դուք անցել եք։ Մարկն անցել է։ Բայց նա չի թաղվել։ Նրա խառնվածքն առողջ է։ Եվ ճշմարտացի։ Նա անկեղծ է ատելության մեջ։ Նա անկեղծ է սիրո մեջ։ Նրա մեջ շատ առողջ վիշտ կա, փտածությունը չի դիպչի նրան...

— Նա նույնն է, ինչ և դուք։

Ասյան վայրկենապես լռեց։ Նա շփոթահար նայում էր Աննետային, Աննետան նայում էր նրան։ Երկու կինն էլ լուռ զննում էին միմյանց։ Աննետան, ըստ երևույթին, ուզում էր ինչ-որ բան ասել։ Ասյան հազիվ նկատելի մի շարժում արեց՝ նրան կանգնեցնելու համար։

— Ես,— կշռադատելով ամեն մի բառը, վճռականությամբ սկսեց խոսել Աննետան։— Ես ձեզ չեմ բաժանի։

Հիմա փորձում էր խոսել Ասյան։ Բայց Աննետան ձեռքի շարժումով հարկադրեց նրան լռել։

— Ես գիտեմ, ինչ ռիսկի եմ դիմում։ Ես կրկնակի եմ դիմում ռիսկի։ Հիմա ես երկու պարտք ունեմ մեկի փոխարեն։ Դուք։ Նա։ Ես նրանց վերցնում եմ ինձ վրա։ Ես երկուսին էլ ձեզ եմ վստահում։ Մնացեք միասին։

Ասյան հուզմունքից քարացել էր, նա լսում էր և չէր հասկանում... Այն բանի իմաստը, ինչ Աննետան ասաց, նրա գիտակցության մեջ էր թափանցում կաթիլ առ կաթիլ, և այդ կաթիլները քարանում էին, ինչպես ստալակտիտներ... Նորից նրա դողը բռնեց։ Ասյան դեռ շարունակում էր մնալ մերկ կանգնած, և Աննետան մայրական հոգատար շարժումներով նրան հագցնում էր շապիկը։ Ասյան գլուխը կախեց, շրջվեց դեպի պատը, ճակատը հպեց նրան և, երեսը ձեռքերի մեջ առնելով, մանկան պես լաց եղավ։

Աննետան նրան պատկեցրեց մահճակալին և նրա մերկ ոտքերը ծածկեց իր վերարկուով։ Ասյան ոչ մի կերպ չէր կարողանում տաքանալ։

— Դուք մրսել եք... — ասաց Աննետան։

— Չէ, սա մրսածություն չէ,— առարկեց Ասյան։— Թույլ տվեք ինձ ես մի քիչ մնալ ձեզ մոտ։

— Այդ դեպքում վերմակով ծածկվեք։

Ասյան բռնել էր նրա ձեռքերը։ Աննետան նստեց նրա կողքին։

— Լսեք ինձ մինչև վերջը։ Այսօր ես գնում եմ։ Հանկարծամահ է եղել մի մարդ, իմ տերը, իմ բարեկամը,— ես նրա գնականն էի։ Ես վերադառնում եմ իմ նախկին տեղը։ Մի քանի շաբաթ կմնամ այնտեղ։ Մարկին ես թողնում եմ ձեր խնամքին։ Եվ ձեզ էլ՝ նրա։ Երկուսդ էլ մտածեք... Դուք ինձ հասկանո՞ւմ եք, աղջիկս։ Չե՞ք սխալվում արդյոք։ Ես ձեզ ասում եմ. մտածեցեք։ Մնացեք միասին, բայց լավ մտածեք, նախքան վերջնականապես կապվելը։ Պաշտպանեք ձեր ազատությունը։ Եվ պաշտպանեք նրա ազատությունը, եթե նա ինքն այդ չկարողանա։ Բարեխղճորեն քննեք, տեսեք ինչ է ձեր ուզածը։ Քիչ ժամանակ չի պահանջվի մինչև որ ձեզանից ամեն մեկը կարողանա, վերջապես, նայել հոգու ամենախորքը—ոչ թե ուրիշի հոգու, այլ իր սեփական։ Մի շտապեք։ Եվ անկեղծ եղեք...

— Ես անկեղծ եմ, և անկեղծ եմ լինելու,— ասաց Աս-

յան։— Հասկացա ձեզ։ Ես չեմ սխալվել. դուք գիտեք սիրել։ Ուրեմն, հասկացեք. հենց այն պատճառով, որ ես նրան սիրում եմ, վախենում եմ՝ նրան խաբել, խաբել ինձ... Բայց եթե նա ինձ սիրում է և սխալվում, ապա ես ուժ կունենա՞մ արդյոք՝ նրա աչքերը բացելու համար... Գուցե, ավելի՞ խելամիտ կլիներ, եթե մենք, այնուամենայնիվ, բաժանվեինք իրարից...

— Իսկ եթե ես ձեզ բռնե՞մ խոսքի վրա,— հարցրեց Աննետան։

— Ոչ, ոչ... Պետք չէ... Ես արդեն չէի կարող... Հիմա արդեն ուշ է։

Սակայն բոպեական մտմտանքից հետո Ասյան ամաչեց իր թուլությունից և ավելացրեց.

— Բայց ես բոլորը նրան կպատմեմ։ Նա այդ բոլորը կիմանա։

Աննետան տխուր ժպտաց.

— Ոչ, աղջիկս։ Խորհուրդ չեմ տալիս։

Ասյան տեղից ցատկեց, վերմակը վրայից մի կողմ շպրտեց, նստեց մահճակալին և աչքերը հառեց Աննետային։

— Ինչպե՞ս։ Դուք խորհուրդ չեք տալիս ինձ նրան ասել ամբողջ ճշմարտությունը։

— Այո։ Մոր շուրթերին դա տարօրինակ է հնչում, թի՞շտ է։

— Ձեր շուրթերին դա տարօրինակ է հնչում։

— Շնորհակալ եմ։ Այո, ես կարծում եմ, որ ես արդարամիտ մարդ եմ, և միշտ եմ եղել արդարամիտ, հատկապես, երբ դա ինձ ձեռնտու չի եղել։ Հենց այդ պատճառով եմ ես ինձ իրավունք վերապահում ձեզ այդպիսի խորհուրդ տալ։ Դուք ուզում եք Մարկին պատմել ձեր ամբողջ անցյալը...

— Պատմել, թե ես ինչպիսին եմ,— վրա բերեց Ասյան։

— Ինչպիսի՞ն- եք։ Իսկ ի՞նչ կլինի, եթե դուք անցել եք այդ բոլորի միջով և մնացել եք մաքուր, նույն ձևով, ինչպես ձեր ոտքերը, որոնք քայլել են ճանապարհների ցեխերով և հիմա մաքրվել են։ Բայց ենթադրենք։ Ես էլ չեմ մոռացել այն կեղտերը, որոնց միջով անցել են ոտքերս։ Ես չեմ հրաժարվում նրանից, ինչպիսին եղել եմ։ Եվ չեմ սիրում նրանց, ովքեր ասում են. «Ես չեմ ճանաչում այդ մարդուն»,— երբ նրանց մոտ տհաճ հիշողություններ են

դուրս լողում իրենց մասին։ Բայց դուք ճանաչում եք այդ մարդուն, այդպես է ձեզ թելադրում ձեր խիղճը։ Դուք պարտավոր չեք այդ մասին տեղյակ պահել ուրիշներին։

— Ուրիշներին՝ ոչ,— ասաց Ասյան։— Բայց նրան...

— Գոնե եթե այնպես լիներ,— ասաց Աննետան նուրբ մի ժպիտով, որի մեջ դառն հեգնանքի մի մասնիկ կար,— գոնե եթե այնպես լիներ, որ բացելով նրա առաջ այդ բոլորը, դուք նրան ձեզանից հեռացնելու ռիսկին դիմեիք։ Բայց եթե նա ձեզ սիրում է,— իսկ դուք դրանում համոզված եք, նույնիսկ համոզված եք չափից ավելի,— դուք նրան չեք հեռացնի, դուք նրան միայն ցավ կպատճառեք։ Եվ այդ ցավը, —որն, իհարկե, շատ զգալի կլինի,— միայն էլ ավելի ամուր նրան կկապի ձեզ հետ և մեկընդմիշտ կմնա նրա մեջ։ Մարկը չի դադարի ձեզ սիրելուց։ Նա կասի. «Ես ամեն ինչ մոռացել եմ»։ Եվ ոչինչ չի մոռանա։ Կանցնի մի տարի, երկու, տասը տարի, վերքը կբացվի և կսկսի թարախակալել։ Դուք այն ժամանակ արդեն չեք կարող հիշել, ով էր այն կինը, որը մահերի մեջ էր ապրում և տառապանքներից ուժասպառվել էր, որը, գլուխը կորցրած, տրվում էր գիշերային խավարում, միայն թե մեկն ու մեկին կառչի ու չընկնի,— միայն թե կառչի կյանքին։ Դուք այդ կնոջն արդեն կմոռանաք։ Բայց նա, Մարկը, նա այդ կնոջը կտեսնի բվի աչքերով։ Սերն այդ աչքերը խանդի մոտից վերցնում է վարձույթով։ Եվ դուք այդ կնոջը նույնպես կտեսնեք—Մարկի աչքերում։ Մարկը ամբողջ կյանքում ձեզ կգամի այդ անցյալին, թեև դուք այդ անցյալը մի կողմ եք նետել, ինչպես հին շրջազգեստ,— այնպես, ինչպես մենք բոլորս ենք մեր վրայից նետում մեր անցյալը։ Նրանք ուզում են, որ մենք պահպանենք մեր հին, փտած հոգիները, որոնցից մենք, փառք աստծո, ազատվել ենք, որովհետև վերանորոգվել ենք։ Տղամարդիկ ի վիճակի չեն հասկանալու, իմ սիրելի աղջիկ, թե ինչ ուժ է մեր մեջ ապրում, իսկ այդ ուժը մեզ ստիպում է մշտապես երիտասարդանալ։

Աննետան խոսում էր առանց ձայնը բարձրացնելու, բայց նրա այդ հանգստության մեջ մի դառնություն կա։ Ասյան լռում էր, նրանից չհեռացնելով իր զարմացած աչքերը։ Աննետան խոսում էր, առանց Ասյային նայելու,— և արդեն

ոչ թե նրա համար, այլ իր համար, բայց հանկարծ հիշեց նրան և շրջվեց։ Նրանք բազմանշանակ ժպիտ փոխանակեցին։

— La donna émobile[1]։ — Ահա թե ինչպես են նրանք դատում մեր մասին։ Ահա թե ինչ կասեին նրանք, եթե ինձ լսեին։ Այն իրականը, որ կա իսկական կնոջ մեջ, չի փոխվում,— ահա թե ինչը նրանք չեն կարողանում հասկանալ։ Մեր վերաբերածից ոչ մի բան չի կորչում, եթե այն մեր կյանքը անել է։ Նա դառնում է մեր արյան մասնիկը, իսկ մենք մեր միջից դուրս ենք շպրտում միայն անօգուտն ու անմաքուրը...

— Ես չէի սպասում, թե ձեր մեջ դաշնակցի կգտնեմ,— ասաց Ասյան։

— Ես երբեք դաշնակից չեմ ունեցել,— նկատեց Աննետան։— Այդ պատճառով էլ ես կարեկցում եմ նրանց, ովքեր դաշնակիցներ չունեն։

— Ուրեմն, դուք իմ դաշնակիցը եղեք։ Ես դա չեմ չարաշահի։ Եվ ձեզ խնդրում եմ ինձ օգնեք,— ոչ ի վնաս Մարկի, այլ հանուն նրա։ Եթե դուք չեք ուզում, որ ես բոլորը պատմեմ նրան,— իսկ ես զգում եմ, որ դուք իրավացի եք, միայն թե չեմ երաշխավորում, որ կարող եմ լռել,— ես ձեզ եմ հանձնում, հանձնում եմ ձեր ձեռքն այն ամենը, ինչը ինձ ճնշում է։ Այսօր ես ձեզ հաղորդեցի ամենածանր բանը։ Բայց որոշ բաներ դեռ մնացին։ Ես բոլորը ձեզ կտամ։ Դուք իրավունք ունեք ցանկացած ժամանակ այդ օգտագործել իմ դեմ և հանուն ձեր որդու։ Ես ձեզ չեմ մերկացնի։

Աննետայի աչքերում փայլատակեց խորամանկ մի կրակ.

— Շատ լավ։ Բայց հիմա արդեն զգույշ եղեք։ Դուք իմ ձեռքին եք։

— Ուրեմն, պահեք ինձ, բաց չթողնեք։ Ես հենց այդ էլ ուզում եմ։ Իմ դատավորը եղեք։ Ուրիշ ոչ մի բանով ես չեմ կարող վճարել ձեզ այն ամենի համար, ինչ դուք տվիք ինձ։

— Իսկ ես ձեզ ի՞նչ եմ տվել։

— Մի ձևացրեք, թե չեք հասկանում։ Դուք ամեն ինչ հիանալի հասկացաք... Այն, ինչ դուք տվիք ինձ, դեռ ոչ ոք ինձ չի տվել... Ոչ թե սեր, սեր ես ունեի, ունեմ և դեռ կու-

[1] Կինը փոփոխական է (իտ.)։

նենամ... Դուք ինձ տվիք շատ ավելի մեծ մի բան. վստահություն։ Դուք հավատացիք ինձ։ Իսկ դուք հասկանում եք, թե դա ինչ է նշանակում։ Դուք ինձ վերադարձրիք իմ հավատն իմ նկատմամբ,— եթե միայն այդ հավատը երբևէ ես ունեցել եմ... Հիմա ես հավատում եմ, հավատում եմ ինքս ինձ։ Շնորհակալ եմ։ Ես վերածնվում եմ...

Ասյան ցատկեց մահճակալից և, ծնկի գալով, սկսեց բուռը համբուրել Աննետայի ծնկները։

— Եվ ես ձեզ խոսք եմ տալիս,— շարունակում էր նա,— որ կհրաժարվեմ Մարկի հետ ամուսնանալուց։ Ես նրան կստիպեմ ազատ մնալ, նույնքան ազատ, ինչպիսին ես եմ...

Աննետան բարձրացրեց նրան թևատակերից և, ոտքի կանգնեցնելով, ծաղրական ժպիտով ասաց.

— Խոստանալը հեշտ է։ Բայց կատարե՞լը...

Աննետան համբուրեց նրան, շոշափեց նրա ուսերն ու կուրծքը և ասաց.

— Հիմա դու չորացար... Հագնվիր... Մարկը մեզ է սպասում։

Ասյան հաստատ վճռեց Մարկի հետ չամուսնանալ։ Բանն Աննետային տված խոսքի տերը լինելը չէր։ Այդպիսին էր Ասյայի անդրդվելի կամքը, նրա ամբողջ խառնվածքը ընդդիմանում էր զույգ լծվածքին. «Ես սիրում եմ, ես սիրում եմ քեզ, այսօր ես քեզ կտամ իմ կյանքը, իմ մահը, բայց իմ վաղը ես քեզ չեմ տա։ Ինձ չի կարելի կապել...»։

Աննետան իր համար պատրանքներ կառուցելու Ասյայի հիմքերը չուներ, և այդ պատճառով նա Ասյայից ավելի լավ էր հասկանում, թե այդ բոլորն ինչով կարող է վերջանալ։

Երկու սիրահարներն էլ բարեխղճորեն կրկնում էին. «Մենք իրար սիրում ենք, բայց մնում ենք ազատ»։ Եվ միևնույն ժամանակ նրանք անում էին այն, ինչ կարող էին անել՝ իրենց ազատությունը վատնելու համար։ Ամեն մեկը համառորեն ձգտում էր կապել և ուրիշներին, և ինքն իրեն։

Հետաքննությունն Աննետային Լոնդոնում երեք շաբաթ պահեց։ Տիմոնը Լոնդոնից Բրյուսել թռչելու ժամանակ մահացել էր առեղծվածային հանգամանքներում. նա ինքնաթիռից ընկել էր։ Սպանությո՞ւն էր դա, թե՞ ինքնասպանություն։ Խորհրդավոր ձեռքը առևանգել էր բոլոր թղթերը,

որոնք կարող էին օգնել գաղտնիքը բացելու համար։ Այդ երեք շաբաթվա ընթացքում Աննետան կլանված էր մեռնողի նկատմամբ իր պարտականություններով, կարգի բերելով այն, ինչն սկսել էր ավերվել առանց տիրոջ։ Նրան տանջում էր խղճի խայթը. եթե Աննետան չմեկներ, եթե Տիմոնը միայնակ չլիներ, գուցե նա չմեռներ... Այդ մտքերը տանջում էին Աննետային, բայց նա դրանք ոչ ոքի չէր հայտնում։ Վերադառնալով Փարիզ, Աննետան տեսավ, որ Մարկն ու Ասյան խճճվել են կրքի մեջ, որն օրըստօրե նրանց շուրջն իր ոստայնն էր հյուսում։ Բայց հիմա ի՞նչ կարելի էր անել։ Բաժանե՞լ նրանց։ Չափազանց ուշ է։ Նախազգուշացնե՞լ նրանց վտանգների մասին։ Նրանք այդ վտանգները տեսնում էին։ Եվ այն, որ այդ երեխաների մասին գիտեր ինքը— և, գուցե, միայն ու միայն ինքը,— ցանցի մեջ էր գցում նաև իրեն։ Իր խոստովանանքում, անզսպելի ինչպես հեղեղը, Ասյան Աննետայի առաջ բացել էր բոլորը,— ոչ միայն ամենավատը, այլև լավը, հազվագյուտը, թաքնվածը,— այն, ինչը հպարտ կինը մեծ դժվարությամբ է խոստովանում,— և այդ բոլորով նա հեղեղեց մոր սիրտը։ Աննետան կարողացավ անմիջապես, գիտակի հայացքով, զննել այդ վայրենի կնոջը իր ամբողջ մերկությամբ, հասկանալ այն դաժան կյանքը, որին նա այնքան վճռականությամբ դատապարտել էր իրեն տարագրության մեջ, նրա միայնակությունը, աղքատությունը, որն Ասյան ընդունել էր առանց տատանումների, նրա անվիճելի ճշմարտությունը, նրա ազնվությունը իր իսկ նկատմամբ։ Ոչ մի բան Աննետային չէր կարող ավելի ուժեղ դեպի նա տրամադրել։ Այդ ոչ հեշտ տրվող առաքինության կողքին «մաքրությունը» այդ բառի բուրժուական հասկացությամբ նրան ներկայանում էր որպես երկրորդական մի բան։ Եթե Ասյան տրվում էր կրքի խաբեություններին, եթե նույնիսկ դա կարող էր նրա հետ պատահել նաև հետագայում, ապա այդ բոլորը սոսկ քամու պոռթկումներ են, քամու, որը սլանում է մակերեսով, չկրչելով Ասյայի արդարամիտ և հավատարիմ հոգու ամբողջությանը։ Ասյայի անցյալի վրա Աննետան խաչ էր դրել... (Բայց նա գիտեր, որ իր որդին խաչ չէր դնի։ Եվ վտանգներից մեկը հենց դա էր)։

Վտանգներ, իհարկե, շատ կային, նույնիսկ չափազանց շատ, և դրանք բոլորը չէին, որ Ասյայից էին ելնում։ Մարկը նույնպես իր մեջ վտանգներ էր թաքցնում, թեև, ասենք, ուրիշ կարգի։ Աննետան կվախենար միամիտ և անփորձ աղջկան (ինչպես Ասյան էր ասում, ինքը դրան չհավատալով) հանձնել Մարկի ձեռքը։ Մարկը իրեն իր ձեռքում պահել չգիտեր, նա պահանջվածի չափ հավասարակշռություն, զգուշություն, արդարամտության զգացում չուներ, նա չուներ բարություն և իսկական մարդկայնություն։ Այդ բոլորն Աննետան տեսնում էր։ Նա ճանաչում էր իր որդուն։ Մարկը չափազանց երիտասարդ էր, և նրա վրա ազդել էր անչափ վաղաժամ, ոչ լիարժեք, բայց դաժան կենսափորձը։ Նա կարող է դառնալ ավելի լավ և իսկական լավը կլինի հետագայում, զգալիորեն ուշ,— քառասուն տարեկանում։ Այն ժամանակ նա, թերևս, ընդունակ կլինի հասկանալ երիտասարդ կնոջը և ղեկավարել նրան։ Իսկ հիմա նրանք կարող են միայն իրար խելագարեցնել, նրանք կտանջեն միմյանց և, մեկ էլ տեսար, նույնիսկ կործանեցին իրար... Մինչդեռ Մարկին չէր կարելի միայնակ մնալ։ Տևական միայնակությունը, որն անցնում էր թունավորված միջավայրի դեմ տարվող կատաղի պայքարում, հակաբնական էր, և միայն նրա երիտասարդ ու ջլատված ուժերը բավական չէին այդպիսի պայքարի համար։ Նրան օգնական կին էր պետք, ընկերուհի, որ պայքարում արդեն կոփված լիներ, ավագ քույր, մասամբ մայր, մասամբ եղբայր, որը կկարողանար բուժել նրա վերքերը և անհրաժեշտության դեպքում կռվել նրա կողքին։ Ասյան կարո՞ղ էր այդպիսի կին լինել։ Կարող էր։ Իսկ ձեռից կգա՞ր։ Այդ մեկը կասկած էր առաջացնում։ Ասենք, ինչպե՞ս էլ կարելի է երիտասարդ կնոջից պահանջել սիրո անշահախնդրություն, երբ տղամարդն անշահախնդիր չէ և երբ անշահախնդրությունը կարող է մշուշված լինել կրքով։ (Կիրքն ուղղակի անշահախնդրության հակառակն է. կիրքն ուրիշին այնպես է տնօրինում, ինչպես ինքն իրեն)։ Միայն տարիներն ու ծանր փորձությունները կարող են այդ սովորեցնել նրանց, ովքեր ընդունակ են սովորելու։ Ուրեմն, ինչո՞ւ այդ երկուսը չսովորեն։ Իր որդուն Աննետան հավատում էր։ Իսկ այն կնո՞ջը։ Իսկ նրա՞ն ինչու չհավատալ։ Ասյան նվա-

ճել էր Աննետայի վստահության իրավունքը։ Թեկուզ և նրանով— և նույնիսկ գլխավորապես նրանով,— որ իր մասին պատմեց այն բոլորը, ինչն ընդունակ էր նրան վանել։ Համենայն դեպս, նա ռիսկի էր գնում բացեիբաց, ամեն ինչ մերկացված էր, ոչ մի բան քողարկված չէր կոպեկի արժեք ունեցող առաքինություններով, ինչպես կանանցից ու աղջիկներից շատերինը, որոնց մարմանդ լճափոսում հայտնի չէ, թե ինչեր են թաքնված։ Եվ այն, ինչ նրա մեջ կար վտանգավոր, փոխհատուցվում էր նշանակալից արժանիքներով—նույնպես բաց և մերկ։ Եթե ռիսկի պետք է դիմել, ուրեմն պետք է դիմել ռիսկի։ Եթե Աննետան Մարկի տեղը լիներ, նա կիմանար, թե նախապատվությունն ինչին տալ։ Հետևաբար, նա կարող էր կանխատեսել Մարկի ընտրությունը։ Եվ անբարեխղճություն կլիներ դատապարտել այդ ընտրությունը։ Եթե մայրն անգամ ուզեր պաշտպանել որդուն իր կանխատեսած տառապանքներից, միևնույն է նա չէր կարող պաշտպանել որդուն նրա խուճապահար հոգուց և ճակատագրից, որն ինքն էր նախապատրաստել նրա համար... Այսպես, ուրեմն, իմ սիրելի երեխաներ, ընդառաջ գնացեք ձեր ճակատագրին։ Չարժի նրա առաջը կտրելու փորձ անել։ Խելամիտ և ճիշտ կլինի ձեռք պարզել նրան, կոչ անել նրա ամենաազնիվ ուժերին, հավատալ նրանց և ասել. «Ես հավատում եմ քեզ։ Եվ իմ հավատը քեզ պարտավորեցնում է»։ Այդ պատճառով էլ Աննետան միայն լուռ ժպտաց և նայեց Ասյայի աչքերի խորքը, երբ վերջինս նրա մոտ եկավ հուզված և հուզմունքից մի տեսակ կոպիտ, մարտահրավեր նետելով, բայց միևնույն ժամանակ խնդրելով· Աննետայի համաձայնությունը կամ ներումը, հաղորդեց նրան այն, ինչ Աննետան մի քանի շաբաթ սրդեն սպասում էր.

— Ես իմ խոսքը ետ եմ վերցնում... Ոչ։ Ես այն ետ չեմ վերցնում, ես ոչինչ չեմ խոստացել... Ինձ պետք է ձեր որդին։ Ես նրան պետք եմ։ Մենք ամուսնանում ենք...

Ասյան պատասխանի էր սպասում— և խոսում էր ինքը։ Նա չէր կարողանում տանել Աննետայի տագնապալից լռությունը։ Ասյան ասաց, որ վճիռը կայացված է, որ այդ վճռի դեմ չի կարելի առաջ քաշել այնպիսի մի բան, որի մասին ինքը տեղյակ չլինի, որ նրանց միությունը չի լինելու խաղաղ և, որ նա այդ հիանալի հասկանում է, որ նրանք

տանջելու են միմյանց և, որ նա Մարկին կդարձնի դըժ-
բախտ... Այո, հնարավոր է։ Նույնիսկ հավանական է։ Բայց
նա արդեն այլ կերպ չի կարող։ Կնշանակի ճակատագիր է...
(Ասյան վերջին բոպեին ամեն ինչ ճակատագրի վրա էր գցում,
երբ նրա ուժերը դիմադրության համար սպառվում էին)։ Եվ
հիմա նա եկել էր այդ ասելու Աննետային և հնարավորու-
թյուն տալու նրան խանգարելու իրենց վճիռը, քանզի գիտեր,
որ Աննետան միևնույն է արդեն ոչինչ անել չի կարող։

— Ինչո՞ւ դուք ոչինչ չեք ասում։

— Ի՞նչ եք ուզում ինձնից այն բոլորից հետո, ինչ դուք
նոր ասացիք։ Ձեզ պետք է Մարկը։ Դուք պետք եք Մարկին։
Էլ ի՞նչ եք ուզում։

— Ինձ դուք եք պետք։ Ինձ պետք է, որ դուք ասեք «այո»։

— Եթե ես ասեի «ոչ», դուք դա հաշվի չէիք առնի։ Դուք
ջանք չէիք թափի, որ դա ինձնից թաքցնեք։ Եթե ես «ոչ»
ասեմ—կեռիկն ավելի խորը կխրվի ձեր մարմնի մեջ։ Որով-
հետև դուք կեռիկը կուլ եք տվել։ Հիմա արդեն ոչինչ անել
չես կարող, դուք իմ խեղճ քարթակներ։ Ձեզ մնում է միայն
խայծն ուտել։ Այդ խայծը հավասարապես բաղկացած է
նրանից, ինչը ձեզ բաժանում է, և նրանից, ինչը ձեր երկուսի
մեջ ընդհանուր է. ձեր բնավորության տարբերություններից,
ձեր ցեղերից (դրա մեջ խայծն իր բաժինն ունի)։ Եվ դուք
դեռ կզգաք, թե կեռիկն ինչպես է ճղելու ձեր կոկորդը։ Բե-
ռնես, ավելի խելամիտ կլիներ դրանից չկախվել, չպատա-
ռոտել սեփական ընդերքը։ Ձեր ինչի՞ն է պետք ամուսնու-
թյունը։ Առանց դրան դուք միայն ավելի շատ կսիրեիք
իրար... Բայց արվածն, արված է։ Վերափոխել այդ— կնշանա-
կի, պատառոտել ձեր ընդերքը։ Ասենք, իմն էլ հետը։ Ես
ձեզ որևէ բան կասեմ, թե չեմ ասի—արդյունքը միևնույնն
է։ Այնպես որ, սիրելիներս, սիրեք իրար։ Եվ ձեր ձևով, և
ոչ թե այնպես, ինչպես ես։ Ես գիտեմ, որ դուք երկուսով էլ
շատ ավելի լավն եք, քան կարելի է դատել ձեր արարքնե-
ներից։ Ձեզանից ամեն մեկն առանձին վերցրած թույլ է,
շատ է թույլ... Աշխատեք, որ ձեր թուլությունները ուժ դառ-
նան։ Ես քեզ վստահելով տալիս եմ իմ որդու ձեռքը։ Եվ քեզ
ես վստահում եմ իմ որդուն, աղջիկս։

Ասյան շուրթերով հպվեց Աննետայի ուսին և ուսերեն
միայն մի բառ ասաց...— Մամա...

Երկուսն էլ քարացան, այտերով սեղմված միմյանց։ Իր մտքի ամբողջ պարզությամբ և բարեխղճորեն ինքն իրեն ճանաչելու ամբողջ կարողությամբ (կարողությամբ, սակայն, որը բնավորության գրոհի առաջ անզոր է) Ասյան մտածում էր Աննետայի խոսքերի շուրջ։ Ընդունում էր, որ նա իրավացի է, որ իսկապես ամուսնական կապերով իրեն կաշկանդելն անմտություն է, երբ այդ ամուսնությունն համարում ես իր դարն ապրած մի բան։ Եթե անգամ նա որոշ ժամանակից ի վեր դառած չլիներ առանց սողնակի մի դուռ, և ապահարզանն այդքան հեշտությամբ չբացեր այդ դուռը, եթե, ինչպես հնում էր, ամուսնությունը մնար ինչպես մի վանդակ, որից դուրս գալու ելք չկա,— կարծում եմ, Ասյան ու Մարկը, միևնույն է կձգտեին ընկնել այդ վանդակի մեջ։ Սիրո մեջ լինում են այնպիսի բոպեներ, երբ մարդ երազում է ցմահ բանտարկություն։ Մարդն օրվան ասում է. «Դու երբեք չես վերջանա...»։ Խելագարություն կլիներ բռնադատել բնությունը...

Աննետան այդ գիտեր։ Նա լսում էր, ինչպես է իրեն սեղմված Ասյայի քունքում զարկահոսում արյունը, և հասկանում էր, թե ինչ է կատարվում նրա գլխում։ Համաձայնություն տալով այն բանին, ինչին ինքը խանգարել չէր կարող, Աննետան նշանակալից չափով և իր հասակի պատճառով—ենթարկվում էր ճակատագրին։ Նա ենթարկվում էր նաև այն հզոր խոյանքներին, որոնք տանում են մեզ, իսկ իրենք չքանում են, խուսափելով մեր բանականությունից։ Բայց այդ բոլորից զատ այստեղ կար նաև խորհրդավոր թափանցում Մարկի ճակատագրի մեջ։ Շնորհիվ Տիմոնի հետ ունեցած մտերմության, Աննետան կարողացավ հասկանալ քաղաքական իրադրությունը, կարողացավ հասկանալ նաև մեծ Ընդհարման անխուսափելիությունը։ Եվ հիմա նա աղոտ կերպով նշմարում էր իր որդու տեղը մարտիկների առաջավոր շարքերում—բարիկադի մյուս կողմը։ Աննետան աղոտ կերպով դա կանխազգում էր ավելի շուտ, քան Մարկն ու Ասյան կարողացան հստակությամբ գլուխ հանել դրանից (նրանք անչափ տարված էին իրենց կրքով)։ Աննետան առաջ էր անցել նրանցից և սպասում էր։ Ամեն ինչ դեռ մշուշի մեջ էր, բայց նա սպասում էր, որ շնորհիվ Ասյայի ու Մարկի միության իր ճակատագիրը որոշակի կդառնա։ Աննետան զգում էր, որ այդ միությունը, ինչպիսի փորձություններ ու

ընտանեկան անհաջողություններ էլ, որ Մարկին սպասեին, նպաստելու է նրանց առաջընթացին։ Ուրեմն, թող և փորձություններ լինեն և անհաջողություններ։ Առաջ։

Սիրահարվածները նայում էին իրար, և նրանց հայացքները նման էին ջրավազանի, որի մեջ շատրվանի շիթերն են թափվում։ Նրանցից յուրաքանչյուրն ամայացնում էր իրեն, որպեսզի ընդունի մյուսի շիթերը։ Խնդությունը հեղեղել էր նրանցից յուրաքանչյուրին, նրանցից ամեն մեկը լցված էր մյուսով։ Յուրաքանչյուրն ինքն իրեն նորից գտնելու համար, մյուսին սեղմում էր իր գրկում։ Նրանք ասում էին.

— Դու պատկանում ես ինձ։ Ես պատկանում եմ քեզ։ Ինձ մի վերադարձրու ինձ։ Ես քեզ չեմ վերադարձնի քեզ... Ախ, ինչ լավ է, որ մենք փոխանակվեցինք։ Եվ ինչպես եմ հիմա սիրում կյանքը, երբ կյանքը դա քո կյանքն է։ Նա իմն է։ Ինչպես պետք է այն պահպանեմ։

Խեղճ երեխաներ։ Մինչև հիմա նրանցից յուրաքանչյուրը ստիպված էր փրկել միայն իրեն... Եվ դա այնքան էլ քիչ չէր։ Ինչպիսի մարտեր ունեցան և ինչքան թանկ վճարեցին նրանք այն բանի համար, որպեսզի դուրս գան կործանվող աշխարհի փլատակների տակից... Բայց արժե՞ր արդյոք այդպես կռվել, անցնել այնքան ինքնահրաժարումների միջով, այնքան ստորացումների միջով, այդպիսի խայտառակության միջով և ամեն օր սկսել սկզբից միայն ու միայն հանուն իր «ես»ի, հանուն այդ ողորմելի «ես»ի, այդ թշվառ, խայտառակված, հուրհրատող, փշրված, հոգնությունից ուժասպառված «ես»ի, որն իշխում է ձեզ վրա, հետապնդում է ձեզ և որին դուք չեք սիրում... Իսկ հիմա՞։ Կարո՞ղ է արդյոք լինել ավելի հիացական զգացում, ավելի արբեցուցիչ, կարո՞ղ է արդյոք արյունը հորդել ավելի ուժեղ, քան այժմ, երբ մարդ իրեն ասում է. «Փրկիր մյուսին... Նա իմն է...»։ Արդյոք նա՞ է ինձ պատկանում, թե՞ ես նրան։ Ե՞ս եմ արդյոք սեփականացրել նրան, թե՞ նա ինձ։ Ինձ չի՞ խաբում կիրքը, որը չի ցանկանում ընդունել իր էգոիզմը։ Այսպես, թե այնպես, դա ընդլայնված էգոիզմն է, դա ինդիվիդուալիզմ է երկուսով։ Ելք է բացվում դեպի ծովը։ Բայց այդ ելքը բացվում է ծովածոցի խորքից։ Պետք է, որ սիրո մակույկը թողնի ծովածոցը...

Իսկ սիրո մակույկը չի ուզում գնալ դեպի բաց ծովը։

Ուժեղ հողմը հանկարծ դադարեց, ծովածոցում հանգիստ է։ Մակույկը օրորվում է իր ոսկեղեն ջրափոսում։

Իսկ որտեղի՞ց փրկություն կգա։ Քամու ո՞ր անսպասելի պոռթկումից, ո՞ր ջրապտույտից, որի կենտրոնը անցնելու է սիրո միջով։ Կարիք կլինի՞ արդյոք, որ պայքարը բորբոքվի իրենց՝ սիրահարների միջև։ Ատելության կարիք կլինի՞ արդյոք այն բանի համար, որպեսզի սերը սթափվի, նորից ուշքեն նրա առագաստները, և մակույկը սլանա դեպի ծովի հեռուները։ Առաջ, անողոք հեծյալ, որ թամբել ես կյանքը։ Խթանիր նրա կողերը։ Խթանիր այս երեխաների կողերը։ Աշխարհը շարժվում է առաջ միայն այն ժամանակ, երբ խթանում ես նրան։ Պետք է շարժվել։ Եթե կանգ առար, կընկնես... Ոչ, դու չես ընկնի։ Քեզ տառապանքները կբարձրացնեն։

Դա տառապող մի աշխարհ էր։ Ամբողջ ժողովուրդներ էին կործանվում կեղեքումից ու աղքատությունից։ Սարսափելի սովը լափում էր Պովոլժիեի ժողովուրդներին։ Հռոմի վրա բարձրացել են սև լիկտորների սակյուրն ու ճիպոտները։ Հունգարիայի և Բալկանների բանտերից լսվում են խոշտանգվողների խեղդված աղաղակները։ Ազատության հին երկրներ—Ֆրանսիան, Անգլիան, Ամերիկան—թույլ են տալիս բռնադատել ազատությունը և օգնում են բռնացողներին։ Գերմանիան սպանել է իր «նախակարապետներին»։ Եվ կեչիների անտառում, Մոսկվայի մոտ, մարում է Լենինի պայծառ հայացքը, մթնում է նրա գիտակցությունը։ Հեղափոխությունը կորցնում է իր ղեկավարին։ Թվում է, թե գիշեր է իջնում Եվրոպայի վրա։

Արդ, ինչ են այդ երկու երեխայի ճակատագրերը, նրանց խնդությունը, վիշտը։ Ի՞նչ նշանակություն ունեն ծովում երկու կաթիլ ջրի ճակատագրերը, որոնք միախառնվել են իրար։ Ականջ դիր նրանց։ Դու կլսես ծովի շառաչը։ Ամբողջ ծովը բովանդակված է ամեն մի կաթիլի մեջ։ Այդ կաթիլի մեջ արտացոլվում են ծովի բոլոր հուզումները։ Եթե միայն կաթիլներից յուրաքանչյուրը կամենար, կարողանար լսել... Մոտ արի, կռացիր։ Ականջդ դիր խոնավ խեցուն, որը ես ափից եմ գտել։ Ամբողջ աշխարհ է նրա մեջ ողբում։ Մի ամբողջ աշխարհ է նրա մեջ մահանում...

Բա՛յց ես արդեն լսում եմ նրա մեջ և նոր ծնվողի առաջին ճիչը։

ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ

Հմայված հոգին

Հատոր երրորդ

Ромен Роллан

ОЧАРОВАННАЯ ДУША

Том третий

(На армянском языке)

Издательство «Советакан грох», ул. Теряна, 91
Ереван, 1977

Խմբագիր՝ Գ. Պ. Սարգսյան
Նկարիչ՝ Վ. Ք. Մանդակունի
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Ս. Խաչատրյան
Վերատեսող սրբագրիչ՝ Ս. Մ. Բալաբյան

ИБ—472

Հանձնված է շարվածքի 4/X 1977 թ.։
Ստորագրված է տպագրության 13/III 1978 թ.։
Թուղթ՝ տպագրական № 2, 84×108 1/32, տպագր. 11,75 մամ.=19,74 պայմ. մամ., հրատ. 17,3 մամ.։
Պատվեր՝ 1082։ Տպաքանակ՝ 20.000 Գինը 1 ռ. 50կ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. 65։

Типография № 1, Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной тортовли, Ереван ул Алавердяна, 65.